Ա. ՆԱՐԵԱՆ

# ԴՐՈՒԱԳՆԵՐ
# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

1917

«ՀՈՐԻԶՈՆ» ՏՊԱՐԱՆ

ԲԱՔՈՒ

HAGOPIAN J.
7 Bd GUIZEL - LA VISTE
13015 MARSEILLE
Tél. 60.07.61



Ա. ՆՈՐԵԱՆ

# ԴՐԱՄԱԳՆԵՐ
# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

Ա. ՏԱՄՆԱՄԵԱԿ

MASSIS BOOK STORE
137½ EAST 27th ST.
NEW YORK, U.S.A.
H. MAMASIAN

1917
«ՀԱՑՐԵՆԻՔ» ՏՊԱՐԱՆ
ԲՕՍՏՈՆ



ԶԱԻԱՐԵԱՆ, ՔՐԻՍՏԱՓՈՐ, ՌՈՍՏՈՄ

# ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ


1) Յառաջաբան— Ա— ԺԴ էջ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Յեղափոխական Մտքեր —

1· Իրական քաղաքականութիւն 15–20
2· Ժողովրդապետական սկզբունք 21–24
3· Թրքո–Քրտական կնճիռ 24–28
4· Գաղթականական հոսանք 28–32
5· Ներքին Զարիք 32–42
6· Դիւանագիտութիւն 42–48
7· Յեղափոխական կռիւ 48–81

Յեղափոխական Դէպքեր—

1· Կուկունեանի արշաւանքը 82–92
2· Արաբօի կռիւը 101–104
3· Կարաքիլիսէի կռիւը 104–106
4· Հայդուկային խմբի կռիւը 106–110
5· Դերեկի կռիւը 110–116
6· Ահաբեկումներ 116–127
7· Զխուրի կռիւը 128–130
8· Արշաւան դիւղի կռիւը 130–132
9· Քէօփրիւ–Քէօյի կռիւը 132–133
10· Սիւրմէնէի կռիւը 134–138
11· Սահմանապահ զօրքի հետ ընդհարում 138–139
12· Սարա–Բողազքեասեանի կռիւը 139–149
13· Ս· Խաչ վանքի կռիւը 150–152
14· Զալաթիոյ դիմադրութիւնը 152–154
15· Դէլի–Բաբայի կռիւը 155–158
16· Պօլսում կախաղաններ 158–159
17· Վանի ինքնապաշտպանութիւնը 159–167
18· Շատախի կռիւը 167–172

Յեղափոխական Դէմքեր


1. *Մարգար վարժապետ* 174–177
2. *Աւետիս Մալօյեան* 177–179
3. *Աբրօ* 179–184
4. *Զաթօ–Շէրօ* 184–187
5. *Մարտիրոս Բապուճեան* 187–190
6. *Պեսօ* 190–195


## *ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ*

Յեղափոխական Մտքեր


1. *Յուսադրիչ խօսքեր* 197–200
2. *Ներքին տրամադրութիւններ* 200–214
3. *Հայ–Թրքական յարաբերութիւններ* 214–221
4. *Արտաքին պայմաններ* 222–231
5. *Յեղափոխական դործելակերպ* 231–239


Յեղափոխական Դէպքեր


1. *Բանկ Օտտօմանի դրաւումը* 240–259
2. *Սամաթիացիներու կռիւը* 259–265
3. *Վանայ երկրորդ կռիւը* 265–271
4. *Հայդուկային կռիւ՝ Հայոց Ձորում* 271–277
5. *Ախոռկայ կռիւը* 278–281
6. *Սղոլրդի կռիւը* 281–284
7. *Սպահան լճի կռիւը* 284–294
8. *Խանասօրայ արշաւանքը* 294–324
9. *Թեղուտի կռիւը* 324–326
10. *Ռումբերը Պօլսում* 326–330
11. *Ֆաթսաւինի կռիւները* 330–347
12. *Բաբչէնի կռիւը* 348–352
13. *Ցրօնք գիւղի կռիւը* 352–357

14. Պաղր–Դաղի կռիւը 357–360
15. Կէլիէ–Գուզանի կռիւը 360–362
16. Խաստուբի կռիւը 362–371
17. Սպղան դիւղի կռիւը 371–373
18. Ապաղայի կռիւը 373–376

Ցեղափոխական Դէմքեր

1. Արտաշէս Մխսաքեան 379–382
2. Արտաշէս Անդրէասեան 358–387
3. Խաչիկ Գնունի 389–397
4. Բարկէն–Սիւնի 399–404
5. Մարօ (Մարիամ Մակարեան) 407–410
6. Եգիպտացի (Արտաշէս Դեւեան) 413–416
7. Սաղաթէլ Խան Զօհրաբեան 419–421
8. Խան (Կարապետ Դաւթեան) 423–424
9. Կարօ (Արխատակէս Զօրեան) 427–431
10. Կրետացի (Աստուած. Մխրզայեան) 433–436
11. Զաւէն (Յակոբ Գարակէօզեան) 439–442
12. Վազգէն (Տիգրան Տէրօեան) 445–450
13. Մինքօ (Մինքայէլ Ազիզ Մելիքեան) 453–454
14. Արշակ Զալկատարեան 457–
15. Թոխալ–Տէրտէր 458–461
16. Գուրգէն (Բաղդասար Մալեանց) 463–467
17. Արամ–Արամեան 469–477
18. Ալբիւր–Սերոբ 479–492

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լույս ընծայելով «Դրամներ Հ. Ց. Դ. Գործունէութիւնից» աշխատութեան Ա. հատորը, ես պարտք եմ համարում մի քանի անհրաժեշտ բացատրութիւններ տալ յարգելի հասարակութեան:

Համեւրոպական ահեղ պատերազմն իր ալիքները զարնեց նաեւ Տաճկաստանին, որը կուրօրէն, անկամ հետեւողականութեամբ նետուեցաւ ահռելի փոթորկի մէջ: Հայաստանն եղաւ արիւնահեղ կռիւնեւրի թատերաբեմ, ուր երկու զարաւոր թշնամիներ՝ Ռուսաստանն ու Թուրքիան, վճռական հարուածի պատրաստուեցան: Հայ ժողովուրդը, որ հինգ երկար ու ճիգ զարեր տանջուել էր թիւրք կառավարութեան չղթաների տակ, այս վերջին կռւին իր համակրութիւնն ցոյց տուեց Դաշնակից պետութիւններին, առաուրեան եւ Ռուսաստանին:

Եւ ահա կազմակերպուեցան կամաւորական խմբերը: Իրար յետեւից նշանաւոր հայ խմբապետներ, որոնք տասնեակ տարիների ընթացքում հայդուկային կռիւներ են մղել, անցան այդ խմբերի գլուխը եւ

ծայր տեց մի անասելի ոգեւորութիւն՝ Կովկասից մինչեւ Բալկաններ, Ամերիկայից մինչեւ Եգիպտոս: Ընդհանուր այդ խանդավառութեան ժամանակ ես միտք յղացայ ուսումնասիրել Հայ Մարտական կազմակերպութիւնները ամենակենսունակի եւ վերջին 25 տարւայ ընթացքում հայ իրականութեան մէջ խոշոր եւ առաջնակարգ դեր խաղացող Հ. Յ. Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնը: Սկզբնական ծրագիրս էր համառօտակի, ընդհանուր գծերով ներկայացնել «Հայրենիք» Թերթի ասւղ էջերում, թէ ինչպէս Հ. Յ. Դաշնակցութիւնը, 90-ական թուականներից, իր մարտական գործունէութիւնը զարգացնելով, դաստիարակելով մի յեղափոխական սերունդ, աստիճանաբար հայ հասարակութեան հասցրել է ներկայ ոգեւորւած հեւքին եւ համաղգային խմբերին: Ես մտադրութիւն եմ ունեցել ուրւագրծել այն ճանապարհը,, որով անցել է ներկայի հայ կամաւորութիւնը:

Աշխատանքս սկսել եմ Ամերիկայում, 1915 թուականի վեց ուսարի վերջերին:

Աստիճանաբար իմ առաջ նոր հորիզոններ բացւեցան: Ես իմ ձեռքի տակ ունեցայ բաւականաչափ նիւթ: Մի քանի տեղերից էլ՝ նամակներով թէ անձամբ դիմումներ էին կատարւած՝ աւելի ընդարձակելու եւ մշակելու յօդւածաշարքս՝ հրատարակութեան տալու համար: Ես միշտ խուսափում էի խոստանալուց եւ կամ առ առաւելն մերժում էի՝ իմ ուժերից վեր համարելով նման խոշոր աշխատանք:

Նկատելով միաժամանակ, որ հայ հասարակութիւնը եւ մանաւանդ յեղափոխական շարքերը անծանօթ են իրենց նախնիքների դաղտիա-

րական գործունէութեան, որ նրանք բացի մի քանի նշանաւոր դէպքերից եւ այն էլ վերջիններիս անուններից, ուրիշ շատ բան չեն յիշում, վճռեցի մի հատորի մէջ ամփոփել համառօտ, թէեւ թերի, ուրուագիծն այն կուսակցութեան, որ այնքան նշանակալից պատմութիւն ունի:

Այս աւտիճանաբար, մօտիկուց ծանօթանալով «Դրօշակ»ի 92 թուից սկսած բոլոր համարների հետ՝ առանց բացառութեան, մի ժամանակ քրքրելով այն ժամանակւայ առաջնորդող մտքերը, կարեւոր, քաղաքական նշանակութիւն ունեցող յօդուածները, եւ զգացի գործնականապէս, որ այդ հատաքածոն եւ Հ. Յ. Դաշնակցութեան այդ պաշտօնական օրգանը մի լուրջ, եւ բաղմակողմանի աղբիւր է, անդին գանձ՝ ծանօթանալու համար մեր վերջին 25–30 տարւայ յեղափոխական պատմութեան հետ, և վճռեցի աշխատութիւնս ընդլայնել:

Վերջապէս պարտաւոր եմ յիշատակել նաեւ, որ մեր իրականութեան մէջ ո՛չ թէ միայն պակաս են նման բովանդակութեամբ գրքեր, այլ և որ ամենակարեւոր հասարակական–յեղափոխական գործիչներն իրար յետեւից գերեզման են իջնում, առանց որեւէ օրագիր, յուշատետր թողնելու, նրանք իրենց հետ տանում են բաղմաթիւ փաստեր, իրողութիւններ, տպաւորութիւններ, նրանց հետ անհետանում են և մեր մօտիկ անցեալի պատմութեան մանրամասնութիւնները, որոնց անհրաժեշտ է օր առաջ վերկել:

Եւ այսպէս, համառօտակն շարժումը եւ նրա հետ կապւած Հայ մարտակութեան պատմութիւնը, վերջին տասնամեակների յեղափոխական մտքերի, գործողութիւնների եւ անհատների վերաբեր-

եալ զասաւորուած եւ ամփոփուած հրատարակութեան պակասը եւ այն, որ իմ այս աշխատանքը առիթ կը հանդիսանայ և կամ չատ երկրորդական հիմունք, որի վրայ հնարաւոր կը լինի աշխատել եւ լրացնել այն պատմութիւնը, որի անունն է Հայ Ազատագրութեան Պատմութիւն, ստիպեցին ինձ առանձին գրքով լոյս ընծայել զայն:

Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնն անհրաժեշտ էր որոշ շրջանների վերածել եւ ըստ այնմ զատ–զատ ուսումնասիրութեան ենթարկել: Իմ բաժանումների ժամանակ ես միշտ զգուշացել եմ, որ նախ՝ Դաշնակցութիւնից 2–3 տարի առաջ ծնունդ առած Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը չմոռանալ, եւ երկրորդ՝ աշխատել որոշ կանոնաւորութիւն մտցնել և մանաւանդ յաջորդականութիւն թուականների մէջ: Եթէ անգամ ընդհանուր Հայ Յեղափոխութեան պատմութիւնն էլ գրուէր, այնուամենայնիւ բաժանումները, շրջանները նոյնն են մնում, որի համար էլ գործն աւելի է դիւրանում:

Առաջին շրջան.— Յեղափոխական նախապատրաստական խմորումներ— որ սկսում է 80–ական թըւականներից եւ վերջանում է 94–95–ի կոտորածների ժամանակ եղած դիմադրութիւններով եւ Վանի առաջին եւ նշանաւոր համադործակից ինքնապաշտպանութեամբ: Այդ ժամանակաշրջանի մէջ են ե՛ւ Խրիմեանը, Արծրունին, ե՛ւ Րաֆֆին, ե՛ւ Փորթուգալեանը, ե՛ւ Հնչակ. կուսակցութիւնն ու իր կազմակերպած ցոյցերը, Հ. Յ. Դաշնակցութեան առաջացումը, Սասունի եւ Զէյթունի ապստամբութիւն–

ները, Բօղազ-Քեասանը, Շատախի կռիւները, Արբօի ընդհարումները, զինակիր խմբերի յաճախակի զինադրութիւնները, ահաբեկումները, եւայլն, եւայլն:

Այդ բոլորի մէջ կայ յեղափոխական կայծ, բըռընկում, կամ երբեմնակի եւ աննշան կազմակերպուած կռիւներ, կամ մի քանի անվեհեր անհատների՝ Մուրադի, Աղասու, Ապահի, Տամատեանի, Հրայրի ղեկավարած շարժումները, երբ նրանք օգտուել են լեռնական եւ առնական սասունցիների եւ զէյթունցիների բնիկ տրամադրութիւններից եւ ապըստամբական դրօշ բարձրացրել: Չեմ ուրանում, այլ երախտագիտաբար շեշտում եմ, որ դրանք ունեցել են իրենց քաղաքական եւ մանաւանդ ու գլխաւորապէս ներքին պրօպագանդայի նշանակութիւնը, բայց այդ բոլորը չէին կրում լուրջ կազմակերպուած բնաւորութիւն եւ որ կարեւորն է՝ յատուկ սիստեմա ու յաջորդականութիւն չունէին, որոնք այնքան անհրաժեշտ են կանոնաւոր յեղափոխական շարժման համար:

Բացի մի քանի կռիւներից, որոնց ծրագիրն առաջուց մշակուած է եղել, մինչեւ 96 թուականը եղած բոլոր միւս դէպքերը կրում էին պատահական եւ գլխաւորապէս ինքնապաշտպանական բնոյթ: Դրանց մեծ մասը, մասնաւորում եմ խօսքս Դաշնակցութեան պատմութեան համար, զինակիր խմբերի ընդհարումներն էին, որոնք տեղի էին ունենում յակամայից եւ շատ անգամ ընդհանուր գործին վնաս հասցնում: Այսպէս ուրեմն, մինչեւ 96 թուականը, մինչեւ Բանկ Օտտօմանի կազմակերպուած ցոյցի օրը, մեր յեղափոխութիւնն իր մանկական հասակն էր

տպրում՝ կազմակերպելով եւ պաշտպանելով: Եւ հէնց ամենադժուարին աշխատանքը, թափառական և հալածական կեանքը, հիմնաւորումը և ներքին ու արտաքին յարձակումներից պաշտպանելն այդ շրջանի յեղափոխական գործիչների վրայ էին ընկնում և բնական է, որ այսօր մենք նրանց անունն ու յիշատակը, աշխատանքն ու գործունէութիւնը յիշենք ամենամեծ յարգանքով ու խորին ակնածութեամբ:

Երկրորդ շրջան.— 94-95-ի արիւնալից կոտորածները մտայնի եւ հոգեկան մեծ յեղաշրջում առաջացրին հայ իրականութեան մէջ: Շատերն սկսեցին վերագնահատել անցեալ քայլերը, ծրագիրները եւ գտնել այդ զարհուրելի ոճիրի պատճառները: Բացարձակապէս թիւրք կառավարութեան մեղադրողներ շատ քիչ կային: Ոմանք դատապարտում էին եւրոպական դիւանագիտութեան եւ նրա խաղերը, համարելով նրա դէպի հայկական կոտորածները ունեցած անտարբեր վերաբերմունքը ոճրամիտ, դատապարտելի: Մի քանիսն էլ աշխատում էին յանցաւոր գտնել Ռուսիայի եւ Անգլիայի մրցակցութիւնը, որից և բղխեց թիւրք կառավարութեան անպատասխանատուութիւնը:

Արտաքին պատճառները այնքան երկար չքննարկեցան և կամ աւելի շուտ ուժեղներին հանդիման թողեցին եւ սկսեցին յանցաւորներ որոնել մեր իրականութեան մէջ: Այդ ժամանակ է լինում, որ ազատական, հոգեւորական եւ հակայեղափոխական տարրերը միասնաբար ոճրակոծում են յեղափոխական ամբոխները, նրանց գործելակերպը համարելով կոտորածների պատճառ, ազգակործան եւայլն: Այդ

ժամանակ է լինում, որ Հնչակեան շարքերում ծայր են տալիս ներքին խռովութիւնները՝ իրենց կենտրոնի դէմ, երբ եւ տիրում է յուսալքում, անգործունէութիւն ու բարոյալքում:

Նախկին յեղափոխականներն իրենք են սկսում քննադատութիւնները, փոխադարձ յարձակումներն առաւելագոյն թեւին են հասնում, շատերը երես են դարձնում թէ՛ իրենց պատկանած գործից եւ թէ՛ սիրած, պաշտած գաղափարից:

Եւ այսպէս յեղափոխական գաղափարն ապրում էր իր վտ···նգի, այլեկոծութեան շրջանը: Պետական շրջաններն համարում էին այդ «վտանգն» իսպառ վերացած, հայ բուրժուաները ծափահարում էին, որ կարողացան թուլացնել «ազգակործանների» շարքերը, իսկ յեղափոխական շարքերի մէջ գտնուած կեղտոտ ու Թուլամորթ տարրերը հրճւում էին, որ իրենց քննադատութիւնները որոշ արդիւնք էին տալիս, յեղափոխութիւնը մեռնում էր...

Եւ սակայն, այդ խաւարի, յուսահատութեան միջից երեւում են որոշ անհատներ, որոնք աննկուն կամքով և խոր հաւատքով վճռում են սկսած գործը շարունակել, պրօպագանդ մղել, յուսադրել հասարակութեան եւ այդ բոլորի համար գետին պատրաստել մի ցնցող, տպաւորիչ եւ խիզախ ձեռնարկով, որպիսին հանդիսացաւ Բանկ-Օտտոմանը:

Փոխւում է գործելակերպը: Պաշտպանողականից անցնում են յարձակողականի, որ իր սկզբնական շրջանում մեծ յաջողութիւններ է երեւան հանում եւ որ մի անգամից մաքրում է յուսահատութիւնն ու նոր յոյս ներշնչում հայ հասարակութեան:

Հ. Յ. Դաշնակցութիւնն այդ ժամանակւանից

մնում է միայնակ: Նա է հանդիսանում յեղափոխական ասպարէզի գլխաւոր դերակատարը, որ եւ իր վրայ դրած պարտականութիւնը կատարում է բարեխղճօրէն:

Բանկ Օտտոմանով բացւեցաւ յարձակողական շրջանը, որ անընդհատօրէն շարունակւեց մինչեւ 99-ի դեկտեմբերը: Զորս տարւայ ընթացքում, չը հաշւելով տասնեակներով ահաբեկումները, երար յետեւից պայթեցան սամաթիացիների կռիւը, Խանասորայ արշաւանքը, Վանայ երկրորդ կռիւը, Սողահան լճի, Աւերակ ջրաղացի կռիւները, Բաբչէնի և Ցրօնքի դիմադրութիւնները, որոնք վերջացան Խասաուրի պատմական կռւով: Զորս տարւայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան հայդուկային խմբերը 16 կռիւ են ունեցել՝ կազմակերպւած եւ յաջողակ: Այդ բոլորը ցոյց են տալիս, որ մեր իրականութեան մէջ միայնակ մնացած, բայց միշտ հալածւած յեղափոխական կազմակերպութիւնը, դեռ իր հնգամեայ գոյութիւնից յետոյ, իր դերադ·յն ուժերը լարելով, կարողացաւ ապահովել յ՚ղ· նախկին շարժումն ու միանգամայն ցրել հակառակորդների ուրախութիւնը: Եւ շարունակական այդ կռիւները, ճիշդ է, խլեցին ամենամաքուր, գոհաբերող և գաղափարական տարրերին՝ Բաբկէն-Սիւնի, Եգիպտացի, Վազգէն, Կարօ, Գուրգէն, Արամեան, Աղբիւր-Սերոբ, բայց եւ այնպէս հնարաւոր արեցին ապահովել ազատագրական շարժումը: Առաջին տասնամեակում Դաշնակցութիւնը, որպէս քաղաքական-յեղափոխական կուսակցութիւն, քըննութիւն տւեց եւ հասարակական կեանքը ղեկավարելու իրաւունքն ստացաւ այն ժամանակ, երբ մեր

իրականութեան մէջ գոյութիւն ունեցող միւս հոսանքներն ու կուսակցութիւնները, անկարող լինելով դիմանալ քննութեան, վռնտուել էին դպրոցից և կամ գործ–ընկերութեան ո՛չ մի նշան չէին ցոյց տալիս:

Երրորդ շրջան·— 900–ական թուականներից յետոյ մթնոլորտն էլէքտրականացած էր՝ արտասահմանի, սահմանագլխի հայաշատ կենտրոններում: Բաւականաչափ դաստիարակուած սերունդ կար, խանդավառ տրամադրութիւններ էին ստեղծուած, զոհաբերութեան ատելիճանը զարդացած էր և սկսուել էր մրջիւնի աշխատանք՝ Հայրենիքի և Ազգի ազատագրութեան համար: Դաշնակցութիւնն ղեկաց և հասկացաւ այդ տրամադրութիւնները և այդ է պատճառը, որ չաշխատեց հայդուկային կռիւների ուղղութեամբ առաջնորդել, այլ կանխամտածուած և ծրագրուած կենտրոնական ահաբեկումով և պատրաստուած ապստամբութեամբ: Դրանք էին՝ Սուլթանի դէմ մահափորձը և Սասունի ապստամբութիւնը, որոնց իրագործման մեծապէս խանգարեցին՝ հայ եկեղեցական կալուածների դրաւումը և Ք. Միքայէլեանի մահը: Բայց թողնենք այդ հարցը վերլուծելու դրքի երկրորդ հատորի մէջ:

Չորրորդ շրջան·— 905 թ·–ի Հայ–Թաթարական ընդհարումներին էր, երբ մարտական կուռող ուժերը կարողացան պաշտպան հանդիսանալ հայութեան երկրորդ մեծ հատուածին, և երբ առաջին անգամ լինելով կանոնաւոր կերպով կազմակերպուած ինքնապաշտպանական խմբեր գոյութիւն ունեցան իրենց սպայակոյտով, շտաբով և որ գլխաւորն է զինուորնե-

րը ամսական որոշ գումար ստացան իբրեւ ապրուստի վարձ: Դրանց թւին արդէն հազարների էր հասնում, որոնք ո՛չ թէ միայն մի որոշ կուսակցութեան մարդիկ էին, այլ և ուրիշ կուսակցականներ և բազմաթիւ չէզոքներ: Այստեղ է որ իրաւամբ կարելի է ասել թէ մենք անցնում ենք ժողովրդական բանակի շրջանը, որ իր թերի կողմերով միասին, խոշոր յառաջդիմական քայլ էր: Այս շրջանի մէջ պիտի մտցնել և բանւորական գործադուլները, տարածուած միութիւնները եւ ապա Պարսկաստանի յեղափոխական շարժման մէջ գործօն եւ առաջնակարգ մասնակցութիւնը: Զերկարենք: Իր ժամանակին պիտի հանդիպենք նորից այդ հարցերին:

Ամփոփենք: 90–ական թւականներից Հ. Յ. Դաշնակցութիւնը, պաշտպանողական – կազմակերպական շրջանից անցաւ 96-ի կազմակերպուած յարձակողական ու անընդհատ կռիւների շրջանին: Ապա աստիճանաբար լայնացնելով իր գործունէութեան սահմանները կազմակերպում է ապստամբական ձեռնարկներ եւ Կովկասում էլ՝ կալւածների առման ժամանակ՝ ժողովրդական դիմադրութիւն, որից շատ դիւրին չէ լինում ընկրկել ժողովրդական բանակի հասկացողութիւնը:

Այս բոլորի մանրամասնաբար վերլուծումից յետոյ միայն պարզ կը լինի թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը իր սեփական կուսակցական դրօշակով դուրս չեկաւ համաշխարհային պատերազմի ժամանակ ռուս–տաճկական ճակատի վրայ, այլ իր սկզբունքային գործնական համաձայնութիւնը տւեց՝ ունենալ Հայկական կամաւորական խմբեր և անոնց ղեկավարող Ազգային Բիւրո և Ազգային գերագոյն դրօ-

ցակ: Իւրաքանչիւր շրջան ներկայացնելու ժամանակ ես յատկապէս ուշադրութիւն եմ դարձրել երեք կարեւոր կէտի վրայ:

Ա.— Յեղափոխական մտքեր, որոնց մէջ գլխաւորապէս ամփոփուած են այն հարցերը, որ այդ ժամանակաշրջանում զբաղեցրել են թէ հայ Հասարակութեան և թէ Հ. Յ. Դաշնակցութեան: Յեղափոխական պրօպագանդան է այդ, որ երիտասարդներին մարտի հրաւէր էր կարդում, իսկ միւսներին՝ պարտաճանաչութիւն: Դժուար էր, անպայման, կարճ ժամանակուայ ընթացքում, առանց բազմաթիւ շրջանների մարմինների արձանագրութիւններն ու հրատարակութիւնները, մանաւանդ շատ պայմանագրութիւններ, որոնք արխիւում են պահւում, քննելու՝ որոշ եզրակացութեան գալ. բայց այդքանն էլ ատխպողական էր, մանաւանդ որ «Դրօշակ»ը կուսակցութեան պաշտօնական բերանն էր հանդիսանում:

Բ.— Յեղափոխական դէպքեր, որոնց վերաբերեալ պարտաւոր եմ չեշտել, որ շատ քիչ եւ ընդհ. բան է գրուած: Այս մասի աղքատութեան գլխաւոր պատճառն այն է, որ մարտական շատ ուժեր գերեզման են իջել՝ իրենց հետ տանելով բազմաթիւ կռիւների մանրամասնութիւններ եւ այն, որ Երկրի մարմինների պաշտօնական զեկուցագրերը դեռ ծածկուած են փոշու մէջ եւ ազատ օրերի են սպասում, հրապարակւելու եւ կամ վստահելի, անաչառ պատմագրի ձեռքն յանձնւելու:

Գ.— Յեղափոխական դէմքեր.— Նոյնը կարելի է ասել եւ այս կէտի վերաբերեալ, որ մենք շատ քիչ տեղեկութիւն ունենք ժողովրդի ծոցից ելած, առանց յուշատետրի նահատակուած եւ անգրագէտ ծնողներից ծնուած այն հերոսների մասին, որոնք մեր ապագայ պատմութեան թանկագին դէմքերը պիտի հանդիսանան: Մենք պարտաւոր ենք մանրամասն տեղեկութիւններ հաւաքել նրանց ընտանիքի, գիւղի կամ քաղաքի հասարակութեան, ուսման եւ շրջապատի, նրանց բնաւորութեան եւ հոգու արտայայտութեան, ընկերական եւ բարեկամական կապերի մասին, որպէսզի լրիւ կենսագրականներով կարողանանք պարզել թէ՝ ովքե՞ր են եղել Հայ Ազատագրութեան համար արիւն թափողները:

Մի քանի խօսք էլ աւելորդ չէր լինի յիշատակել աղբիւրների մասին — թէ ո՞ր գրքերից եւ կամ ժողովածուներից եմ օգտուել: Գլխաւոր եւ համարեա միակ առաջնորդող գիրքը «Դրօշակ»-ի 92 թւից ընկլուած հաւաքածուն է եղել, որտեղից գլխաւորապէս օգտուել եմ դէպքերի եւ դէմքերի վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելով:

Հայ ժողովրդի քաղաքական տրամադրութիւնները ուսումնասիրելու համար օգտուել եմ «Արմէնիա»-ի հաւաքածուներից, 96-ից սկսած մինչեւ 900 թուականը, ապա Ք. Միքայէլեանի «Յեղափոխականի Մտքեր» գրքից գլխաւորապէս օգտուել եմ հակայեղափոխականների եւ մանաւանդ կտորածները յեղափոխական շարժումներին վերագրողների դէմ գրուած գլուխներից, հայ-քրդական կնճռի էջերից եւայլն:

Դիւանագիտական հարցերի համար՝ «Դրօշակ»ի

արտաքին տեսութիւններից և Էտուառ Տռիօ-ի «Արեւելեան Հարցը և Հայկական Հարցը» գրքից:

Ահաբեկումների եւ առ հասարակ յեղափոխական տակտիկայի վերաբերեալ խնդիրներու համար ի նկատի եմ առել նաեւ սոց. յեղափոխականների V-րդ համագումարի մէջ տեռորի շուրջ եղած վիճաբանութիւնները:

Սպահան լճի կռուի մանրամասնութիւններն հաղորդել է ինձ՝ կռւին մասնակցող Սահակ Աւետիսեանը: Աւերակ Ջրաղացի եւ Թաթաւինայի կռիւները գրի է առել ընկեր Հայաստանցին՝ ականատեսի պատմածի հիման վրայ:

Արտաշէս Մխաքեանի մանրամասն կենսագրականը յանձնել է ինձ Ամերիկայում գտնուած իր եղբայրը՝ Միքայէլ Մխաքեանը:

Գուրգէնի վերաբերեալ որոշ լուրեր հաւաքել եմ մշեցիներից, որոնք նրան կը ճանաչեն:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, այնքան էլ հաստատուն, անվիճելի աղբիւրներ չեմ ունեցել իմ ձեռքի տակ, բայց եղածն էլ բաւական էր կարգի բերելու, դասաւորելու եւ մի ամփոփ պատկեր ներկայացնելու Հ. Յ. Դաշնակցութեան առաջին տասնամեակի գործունէութեան:

Մի քանի խօսք էլ լեզուի մասին: Երկուսից աւելի տարի ապրելով եւ գործելով տաճկահայ շրջաններում եւ ենթարկուելով շրջապատի ազդեցութեան, իմ լեզուի մէջ առաջ է եկել խառնուրդ, որի չակելն այնքան էլ նպատակայարմար չդատեցի: Թւում է թէ իմ այդ քայլով ես մեղանչած չեմ լինի հայ լեզուի օրէնքների դէմ:

Ես ոեւէ ջանք չեմ խնայել՝ յատուկ ուշադրու-

թիւն դարձնելու դէպքերի յաջորդականութեան, ամիսների, թուականների ճշդութեան վրայ, համաբերելով այդ ամենանկարեւոր պահանջներից մէկը:

Եւ այսպէս, ներկայացնելով իմ այս համեստ աշխատանքը ընթերցող հասարակութեան եւ դնելով այն հայ գրական աշխարհի քննադատութեան առաջ, ես պատրաստ եմ ուրախութեամբ ընդունելու իւրաքանչիւր մի դիտողութիւն, եթէ այն նպատակ ունի չափելու, լրացնելու Հայ Ցեղափոխութեան պատմութեան այս նախափորձը:

Ա. ՆՈՐԵԱՆ

916, 12 Սեպտեմբերի,
Նիագարա–Ֆօլս.

Յ. Գ.— Պարտք եմ համարում խնդրելու, որ «դէպքերի» եւ կամ «դէմքերի» վերաբերեալ լրացուցիչ տեղեկութիւններ և կենսագրականներ ունեցողները բարի լինեն ուղարկելու ինձ՝ «Հայրենիք»ի հասցէով:

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ Ա.

### ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Իրական բաղաբականութիւն.— ժողովրդապետական սկզբունք.— Թրքո–Քրդական կնճիռ.— Գաղթականական հոսանք.— Ներքին Զարիֆ՝ *հոգեւորականներ, հարուստներ եւ մատնիչներ*.— Դիւանագիտութիւն.— Յեղափոխական կուիւ:

I.— Իրական բաղաբականութիւն.— Հ. Յ. *Դաշնակցութիւնը, իր սկզբնաւորութեան չրջանէն մինչեւ ներկայ օրերը, հետեւել է մի քաղաքականութեան, որ յենուած է եղել չրջապատող եւ իրական պայմաններուն վրայ:* Տեղը եւ ժամանակը *ունեցել են իրենց կարեւորագոյն նշանակութիւնը՝ հասարակական եւ յեղափոխական գործունէութեան ընթացքում:*

*Նախ՝ նա աշխատել է մանրամասն ուսումնասիրութեան ենթարկել, վերլուծել այս կամ այն երեւոյթը եւ ապա միայն համապատասխան միջոցներ ձեռք առնել: Այդ դիտաւորութեամբ է, որ «Դրօ–*

չակ»-ի 92 թուականի փետրուարի համարի մէջ, նա փորձում է վերլուծել Տաճկահայաստանի այն ժամանակուայ պայմանները եւ գալիս է հետեւեալ ընդհանուր եզրակացութիւններին.—

1) Քիւրդ ցեղերը մնացել են իրենց հովւական եւ խաշնարածական կեանքում, նրանք վարում են թափառական կեանք, քաջութիւնն ու վրէժխնդրութիւնը որպէս սրբագործուած սկզբունք են ընդունում. իսկ Հայ ժողովուրդը հողագործ է և նստակեաց, ապրում է իր քրտինքով. և երկու տարբեր պայմանների մէջ ապրող հարեւան ժողովուրդներն անդադար կռիւներ կ'ունենան, յաճախակի սպանութիւններ, թալաններ և սրածութիւններ կը լինին. մինչև որ քրդական ցեղերի թափառական կեանքը չը վերացւի, որ պահանջ է վերջին դարի լուսաւորութեան, որի համար էլ ինչպէս «Դրօշակ»ի թիւ 1-ի մէջ չեշտուած է, «կռիւը ո՛չ միայն ազգային կռիւ է, այլ եւ եւրոպական քաղաքակրթութեան եւ մարդկային իրաւունքների դատ»:

2) Տաճիկ կառավարութիւնը, դարերի իր քաղաքականութեամբ, չկարողացաւ ստեղծել մի պետութիւն, որին հաւատարիմ մնային բոլոր հպատակ և քրիստոնեայ ազգութիւնները, շնորհիւ իր բարբարոս և վայրենական բնազդներին, իր յետամնաց և տգէտ ղեկավարներին ու այն ձգտման, որով աշխատում էր երկրում մի տիրապետող տարր տեսնել՝ ուղղափառ մուսուլմանութիւնը. իսկ միւսներին եւ մանաւանդ դեավուրներին՝ աշխատող, ենթակայ եւ հլու-հնազանդ:

Տգէտ մահմեդականութեան գերակշռութիւնը, բնականաբար, անկարող էին տանել կուլտուրապէս

աւելի բարձր եւ յառաջադէմ քրիստոնեայ ազգութիւնները:

3) Հարկեր.— Պետական եկամուտի մեծ աղբիւրը, համարեա հարկերն են: Այդ դժբաղդութիւնից ազատ են՝ մօլլաները, քահանաները, զինուորական դասը, Պօլսոյ բնակիչների մի մասը եւ այդ բոլոր ծանրութիւնն էլ ընկնում է աղքատ և աշխատաւոր ժողովրդի վրայ, որ հապիւ է կարողանում իր գոյութիւնը քարշ տալ: Քրդական թափառական ցեղերը, ապաստանած լեռներն ու դեռ բնական անտեսութեան սահմաններում, հարկ վճարելու եւ ո՛չ մի տրամադրութիւն չեն ցոյց տալ: Թիւրք ժողովուրդն էլ՝ ծոյլ եւ ճեղկ, աղքատ ու նեղւած, որ հարկերը կանոնաւոր կերպով չի վճարել եւ կամ վճարած դէպքում՝ մինչ հայերից է «պարտք» ցըրել: Իրար յետեւից բալկանեան աշխատասէր ազատուն քրիստոնեայ ժողովուրդներն էլ՝ ազատութիւն ձեռք բերելով, ազատւում են միաժամանակ թիւրք կառավարութեան հարկ տալուց եւ վերջապէս հարկերի հաւաքելու սիստեմը, այսինքն աղքատ ժողովրդի ինչքը աճուրդի դնել եւ վաճառել զանազան հարուստների, որոնք հարստանալու տենչով են բռնւած, քամում է խեղճ ժողովրդի արիւն-քրտինքը եւ եուապատիկ, բազմապատիկ հաւաքում: Այդ բոլոր ծանրութիւնն ընկնում քրիստոնեաների եւ մասնաւորապէս հայ աշխատաւոր ժողովրդի վրայ:

4) Առանձնաշնորհումներ.— Եւրոպական մեծ պետութիւններից եւ ո՛չ մէկը տասնեակ տարիների ընթացքում ուժ չարեց տիրապետելու և վերջնական նպէս դրուելու Տաճկաստանը՝ թէ քաղաքական և

թէ անտեսական ազատութիւն տալու համար ճնշուած ժողովրդներին և մխանգամից զարձնելու այն՝ իրենց առեւտրական շուկան: Սրանցից իւրաքանչիւրը բարւոք համարից «խաղաղ նուաճումներ» կատարել, դիւանագիտական զգուշութեամբ մօտենալ Աբեւելեան կնճիռներին և իրենց վաճառականների ու արդիւնաբերողների համար որոշ իրաւունքներ, առանձնաշնորհումներ ստանալ: Եւրոպական կապիտալը, ներս մտնելով Տաճկաստան, օգուտից պատեհութիւնից և խոշոր տնտեսական ծանրութիւն դրեց աշխատաւոր ժողովրդի վրայ:

5) Այդ բոլորից զուրս՝ հայը, իր երկրի մէջ, անպաշտպան էր թէ՛ պառավարութեան, թէ՛ արդարադատութեան եւ թէ՛ դիւանագիտութեան կողմից: Նա միայնակ իր բաղդին էր ձգւած: Լինելով անդէն եւ անկազմակերպ՝ նա մշտապէս ենթակայ էր սովալլուկ քիւրդերի եւ թիւրքերի յարձակումներին, որոնք պաշտպանւում եւ հովանաւորւում էին կառավարութեան կողմից: Պարբերական հալածանքներն ու բանտերը, կախաղանները ու առեւանդումները, սպանութիւնները ու կոտորածները ըստեղծել էին մի սոսկալի դրութիւն, անելանելի քաղաքական կացութիւն:

Տիրում էր մի տոտիճանական հիւծում եւ ոչնչացնում մի հին ազգութեան, քաղաքակրթած մի ժողովրդի, որի առաջը պէտք էր առնել՝ ինչ գնով էլ լինէր:

6) Քաղաքական եւ տնտեսական գործօններից զուրս՝ պէտք է հաշուի առնել և կրօնական ազդեցութիւնները: Ճիշդ է, հին ժամանակներում, երբ դեռ կրօնական կրքերն աւելի բորբոքւած էին, հալածանք-

*ների եւ կոտորածների պատճառը, որոշ դէպքերում, կարելի էր համարել կրօնական անտագօնիզմը: Ժխտել, սակայն, չի կարելի, որ այդ երկու վարդապետութիւնները՝ Քրիստոնէութիւն եւ Մահմեդականութիւն հարեւանի հանգամանքով իրար հետ ապրել չեն կարող եւ բնական է, որ յաճախակի կռիւներ եւ սպանութիւններ տեղի ունենան: Վերջին տասնեակ տարիների ընթացքում եւ մասնաւորապէս հայկական շրջաններում, կրօնական ֆակտորը պատճառներից անցել է առիթի և կամ պրօպագանդայի դերին: Բաւական է յիշել, որ հայկական կոտորածների ժամանակ* բացառապէս *եւ* միայն *հայերին էին կոտորում եւ ձեռք չէին տալիս Եւրոպացիներին, յոյներին եւ ուրիշներին: Կրօնը հանդիսացել էր որպէս միջոց, բայց իր այդ շրջանի մէջ էլ խոշոր դեր է խաղացել:*

*Այսպէս ուրեմն, հայ ժողովուրդը, երկար ժամանակից ի վեր գտնւել է քաղաքական հալածանքների եւ իրաւազրկութեան մէջ, տնտեսական ճնշող եւ քայքայիչ պայմանների ու կրօնական սասանալիքների ու վտանգների տակ:*

*Եւ բնական է, որ բուն երկրում, տիրել է աղքատութիւն, սով, գաղթականութիւն, աճեցողութեան պակաս, արդիւնաբերական յետամնացութիւն, կուլտուրական քարացած շրջան. ճանապարհների հաղորդակցութեան պակաս եւ, կոտորածների պարբերաբար կրկնւելով՝ հայ ցեղի բնաջնջման ծրագրի իրագործում:*

*Այս բոլորի հիման վրայ Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմել է իր մինիմում ծրագիրը, մօտաւոր նպատակակէտը, ուր պիտի անմիջապէս հասնել. և տաս-*

ջաղրել է հետեւեալ պահանջները :

ա) Քաղաքական ազատութիւն :

բ) Ազգութիւնների եւ դաւանութիւնների ազատութիւն :

գ) Ընտրողական լայն սկզբունք, առանց որեւէ ցենզի, որ սկսած կառավարչական քովանդակ դործողութիւններից դէպի առաւել նեղ դաւառականն ու համայնականը պիտի առանայ առաւելադոյն լայն ծաւալ :

դ) Անձի եւ գոյքի ապահովութիւն :

ե) Մօսքի, խղճի, մամուլի եւ այլ ռամկավար ազատութիւններ :

զ) Գիւղացու ազատութիւն՝ հող չունեցողներին հող տալ, տուրքերը քաժանել ըստ կարողութեան եւ եկամտի, տեղի եւ ժամանակի համապատասխան դիւրորդրութիւն :

է) Զարդացնել ուսումը՝ պարտադիր ընելով դայն և տարածելով դպրոցները :

ը) Զարդացնել արդիւնաբերութիւնն ու արտահանութիւնը :

թ) Ոչ տալ դիւղացու համայնական սկզբունքներին եւ մի շարք այլ կարեւոր, անհրաժեշտ պահանջներ :

Ուսումնասիրելով հայկական իրականութիւնը եւ այն չրջապատող պայմանները, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր օրգանի միջոցով, դտնում է երեք կարեւորագոյն հիւանդութիւն՝ քաղաքական ճնշում, տնտեսական անհաւասարութիւն եւ կրօնական հալածանք :

Վերջ տալու համար այդպիսի անօրինալ դրութեան, նա առաջարկում է՝ տապալել բռնակալու-

*թիւնը եւ ստեղծել քաղաքական ազատութիւն. վերացնել անարդար հարկային սիստեմն ու տնտեսական լայն ու ազատ զարգացման պայմաններ ստեղծել, ու խղճի, խօսքի ազատութիւն հռչակել — ազատութիւնները, որոնք կարեւորագոյն պայմաններ են մի պետութեան եւ կամ ազգութիւնների խաղաղ ու կուլտուրական յառաջդիմութեան:*

II— ժողովրդապետական սկզբունք.— *Երկրորդ կարեւոր տեսակէտը, որի պաշտպան Հանդիսացաւ Հ. Ց. Դաշնակցութիւնը, այն էր, որ Հայկական իրականութեան մէջ Հայ Հոգեւորականութիւնն ու Հարուստ դասակարգը բոլորովին առանձնացած դիրք բռնելով եւ հետու մնալով Ազատագրական չարժումից,* ժողովուրդն իւիքը պիտի հանդիսանայ շարժման ղեկավարը:

*Բացի ծրագրային այն կէտից, որ ժողովուրդն ինքն է երկրին քաղաքական եւ իրաւական տէրը, որ միապետութիւնը պիտի տապալւի, որ մի դասակարգի՝ փոքրաթիւ անդամներով սիրապետութիւնը պիտի վերացւի եւ ամէն ինչ ժողովրդի եւ նորա քւէի կամքին պիտի թողնւի, կայ մի կարեւոր ըսկզբունք—* վեհապետը՝ իւիքը ժողովուրդն է, ամէն ինչ ժողովրդով եւ ժողովրդի համար:

*Ո՛չ մի պետութեան չեղափոխական չարժման մէջ Հարուստները այնքան անտարբեր չեն գտնւել որքան մեր մէջ, եւ Հոգեւորականները այնքան Հալածող՝ որքան մերը: Իրականութիւնն անժխտելի է: Մինչդեռ յունական ապստամբութեան ժամանակ տասից աւելի յոյն միլիոնատէրեր իրենց ամբողջ Հարստութիւնը նւիրեցին եւ չարժման մէջ մտան ու ամբողջ*

թափով մասնակցեցան, մեր հարուստները նոտած Պօլսում, տիրանալով վաճառականութեան, եւ վայելելով որոշ ազատութիւն, մոռացել էին դաւառում տառապող հայութեան: Շատ դէպքերում էլ իրենք էին չարիքի անմիջական պատճառը՝ դիխաւորապէս հարկերը հաւաքելու ժամանակ: Նոյն դիրքի մէջ էր և հոգեւորականների մեծ մասը: Այսպիսի դրութեան մէջ, հասկանալի է, յեղափոխական չարժումը մեծապէս վնասուում է և կրում աւելի դժուարին բնոյթ՝ որևւած լինելով դրամատիրական դասի օժանդակութիւնից:

Սակայն դորա փոխարէն յեղափոխութիւնն աւելի դեմօկրատիկ է դառնում, ժողովրդականանում թէ՛ իր մարքերով, թէ՛ հերոսներով եւ թէ՛ կազմակերպութեամբ:

«Պետութեան եւ ժողովրդի անհաւասար կուի մէջ», եզրակացնում է «Դրօշակ»-ի 94-ի թիւ 9-ի առաջնորդողը, «կառավարութեան կողմն են՝ ֆիզիքական ուժը, լրտեսներ, մատնիչներ եւ նոյնիսկ բանտերում՝ տանջանքներից ատիպուած դաւաճանութիւն անող յեղափոխականներ, որոնց անունով դեռ երէկ ժողովուրդը երգում էր, երգում էր, իսկ այսօր անունք թուլատիրա ընկած և յաւէտ արհամարհուած են: Ժողովուրդն այդ ուժի դիմաց ունի իր արդար պահանջները, յեղափոխական ուժը, բարոյական դիտակցութիւնը և բոլոր ճնշուած ազգութիւնների անցեալ պատմութիւնը:

«Իրաւունքը ժողովրդինն է, ուժը նրա կողմն է եւ վաղ թէ ուշ ինքը յաղթանակող պիտի լինի այդ անհաւասար կուի մէջ»

Հայ կեանքի մէջ դաւանները, ուր կենտրոնա-

դած է աչխատասէր հայութիւնը, որ կազմում է բուն ժողովուրդը, առանձնապած դիրք են գրաւել եւ չատ քչերն են ուշադրութիւն դարձրել այդ դժնդակ պայմանների վրայ: Պրօպագանդ է եղել Պօլսում եւ այլ կենտրոններում, ցոյցեր են կազմակերպել՝ Պօլսում եւ ո՛չ մի դէպքում դեկավարող շրջանները չեն աչխատել յեղափոխել հայ ժողովրդի հոգեբանութիւնը, դէպքերը փոխադրել բուն երկիր, որպէսզի հնարաւոր լինի անսպառ ուժեր արտադրել եւ մի անգամ բռնկւող կռիւը՝ տարածել ու խորացնել:

Ո՛չ ոք կամ չա՛տ քչերն են ուշադրութիւն դարձրել ժողովրդի, Հէնչէի «մեծ չիմար»ի վրայ, որին որքան ծեծես՝ կը լռէ, բայց որ բարկացաւ և բռդոքեց՝ դահեր կը փչրէ:

Ահա այդ յաւիտենական հրաբուխն էր, որ մինչեւ այդ՝ լուռ էր կամ ճանապարհ էր փնտռում պայթելու, երբ յեղափոխական ոգեչունչ պրօպագանդայի ազդեցութեան չնորհիւ, ժայթքեց եւ անսպառ կայծեր արձակել ու դեռ չարունակում է չանթել:

Ահա այդ կարեւոր ուժն էր, որին այնքան խնամքով մօտեցաւ Դաչնակցութիւնը եւ որ իր հերոսների եւ մարտական ու մտաւոր դեկավարների գլխաւոր աշխուժը կազմեց, որի համար էլ 26 տարուայ իր գոյութեան ընթացքում կարողացաւ՝ իր թերութիւններով հանդերձ, սիրելի դառնալ հայ ժողովրդին եւ նրա ճնշամասնութեան վստահութիւնը վայելել:

Գուցէ եւ այդ էր պատճառը, որ այն ժամանակ եւ այսօր էլ, բուրժուական եւ յեղափոխական խաւերը հեռու են փախչում յեղափոխութիւնից եւ նզովում դեկավարներին, բայց և փաստ է, որ մի քանի

*տասնեակ տարիների ընթացքում՝ հայկական բոլոր շարժումներն, առանց բացառութեան, դեմօկրատիկ բնոյթ են կրել եւ շարունակում են իրենց բարձրութեան վրայ կանգնած մնալ:*

III— Թրքօ-քրդական կռիւ.— *Հայկական յեղափոխութիւնը բացառիկ պայմանների մէջ է առաջ եկել եւ իր գոյութեան ընթացքում, բացի դիւանագիտական եւ զուտ ազգային ներքին խոչնդոտներից, գտնուել է Թրքական եւ քրդական ժողովուրդների հակակրանքի հանդէպ: Բալկանեան փոքրիկ ազգութիւններն աւելի բախտաւոր էին, նրանք հարեւաններ չունէին, որոնք արինարբու եւ թալանող լինէին, անգիտակից եւ ստրկամիտ, ինչպիսին են քրդական ցեղերն ու թիւրք ժողովուրդը:*

*Յունական ապստամբութեան ժամանակ խառնակութիւններ էին տեղի ունենում և՛ Սերբիայում, և՛ Ռումանիայում եւ այդ բոլորը 24 ժամից յետոյ Եւրոպայի հասարակական կարծիքն էին վրդովում և պետութիւնների ուշադրութիւնն իրենց վրայ հրաւիրում:*

*Մենք հարիւրաւոր տարիների ընթացքում ապրել ենք քիւրդերի հետ եւ նրանցով շրջապատուած. կենակցել ենք թիւրք ժողովրդի հետ, որոնց սովորութիւններից շատերն ենք ընդօրինակել եւ որոնք ապրել են մեր հաշւին, աշխատեցրել են մեզ, ծծել են մեր արիւնը, հարստացել են մեր դրամներով եւ ապրանքներով, հնձել են մեր արտերը, հաւաքել են մեր ցորենները, գրաւել են մեր տներն ու բռնաբարել մեր աղջիկները: Բնական է, որ իւրաքանչիւր մի նոր շարժում, և մանաւանդ ազատագրական բնոյթ*

կրող, բացի այն որ կառավարութեան ուժին էր հանդիսում, միաժամանակ եւ տեղական ժողովուրդների չահերին դպչէր, դէխաւորապէս ազանների, բէկերի. եւ այդ պատճառով էլ չա՛տ դըժուար էր համագործակցութեան եղր գտնել:

Ժողովուրդներն յանցաւոր չեն իրենց կառավարութեան գործած ոճիրների համար. բայց նըրանք պատասխանատու են այն չափով, որ չափով չեն կարողացել տապալել տիրող կարգերն ու պետութեան ղեկն իրենց ձեռքն առնել: Դորա պատճառներն էլ երկրի տնտեսական պայմանների յետամընացութիւնն ու կուլտուրական պայմանների յառաջդիմութեան պակասն են, որոնց դէխաւոր յանցաւորը նորից երկրի տիրապետող դասն է, կառավարութիւնն է:

Հ. Ց. Դաշնակցութիւնն ղղում էր այդ դժուարին կացութիւնը եւ գիտէր իւրաքանչիւր մի քայլի անգործնականութիւնը եւ այն, որ իր բոլոր ձեռնարկները պիտի հանդիպէին քար անտարբերութեան. բայց եւ այնպէս, որպէս սկզբունք, ընդունեց հարեւան ժողովուրդների հետ համագործակցութեան եւ համերաշխ մտածողութեան տեսակէտը: Մի քանի յօդւածների և թռուցիկների մէջ, ուղղած քիւրդ ժողովրդին, նա չեշտել է, որ «տաճիկ կառավարութեան ներկայացուցիչները բռնաբարում են և քիւրդ կանանց, ձերբակալում են ու բանտ նետում դիւնւորական եւ քաղաքային բժշկական դպրոցների շատ աշակերտներին, թունաւորում են նշանաւոր քիւրդ աշակերտներին, որով եւ քրդութիւնը հակառակ պիտի լինի թիւրք կառավարութեան»:

Քրդերը միշտ գործիք են եղել կառավարութեան

*ձորքում, հետապնդել են զէնք տեղափոխող խմբերին, խոչընդոտ են հանդիսացել հայդուկային խմբերի առաջխաղացման եւ յաճախակի ընդհարումներ են ունեցել, կոտորածների ժամանակ պետական պաշտօնեաների հրամաններն իրագործողն ու իրենց կեանքով այդ վատթար տիպերին պաշտպանողներն են եղել:*

*Շա՛տ ենք վնասել քրդութիւնից՝ թէ՛ խաղաղ եւ թէ՛ զինուած շարժումների ժամանակ: Միաժամանակ երկու թշնամու դէմ կռուել անկարելի էր, մանաւանդ որ զգում ես թէ՛ ժողովուրդը յանցաւոր չէ եւ որ քո կռիւը բացառապէս կառավարութեան դէմ է ուղղուած եւ ոչ թէ աշխատաւորութեան եւ գիւղացիութեան:*

*Ահա եւ Թիւրք ամբոխը: Նա նոյնպէս հալածուած է եւ իրաւազուրկ, աղքատ է եւ տգէտ, ճնշուած է եւ ազատութեան կարօտ, ինչպէս միւս հպատակ ազգութիւնները, բայց միշտ պատրաստ հող է ներկայացնում սուլթանական կառավարութեան դաւերի համար:*

*Կոտորածների ժամանակ մահմեդական ամբոխն այն ժամանակ է յարձակում գործել, կողոպտել, թալանել, երբ զինուորներն արդէն ճանապարհը հարթել են և ո՛չ մի վտանգ չի մնացել հայերի կողմից:*

95 *թուականի կոտորածների ժամանակ, Բաբերդում կոտորած չսկսուեցաւ, մինչեւ Երզնկայից կանոնաւոր զօրք չեկաւ: Էրզրում, Տրապիզոն, սկզբնական օրերում, սեպտեմբերի* 22, 23*-ին, հայերը դիմադրեցին եւ յետ քշեցին Թիւրք ամբոխը, մինչեւ որ նոյն ամսի* 26*-ին զօրքը վրայ հասաւ եւ հնարաւորութիւն ստեղծեց ամբոխի համար՝ իր լիակատար*

*մասնակցութիւնը բերելու:*

*Այս դերապոյն դժուարութեան առաջ Հ. Յ. Դաշնակցութիւնը միայն մի տեսակէտ կարող էր պաշտպանել՝ համերաշխ դործակցութիւն հարեւան ժողովուրդների հետ, չխուսափելով եւ մտերմութիւն քիւրդերի եւ թիւրքերի հետ, յեղափոխական պրօպագանդա նրանց վիճակից չրջաններում եւ համագործակցութիւն այն փոքրաթիւ յեղափոխական տարրերի հետ, որոնք բուն էին դրել արտաահմանի զանազան քաղաքներում:*

*Կռիւ երկու ճակատի վրայ անկարելի էր եւ անիմաստ — կռի՛ւ ուժեղ, կազմակերպւած կառավարութեան դէմ եւ առանց այն էլ դրդուած եւ անկազմակերպ ու միշտ հպատակ ժողովուրդների դէմ: Այդ անկարելի էր եւ այն պատճառով, որ յեղափոխական կուսակցութիւնները ժողովուրդների դէմ չէր որ կռիւ էին յայտարարել, այլ նրանց համար եւ նրանց միջոցով:*

*Ի հարկէ չէր մոռացւած, որ արեւելքի ժողովուրդները, լինելով բարոյական ո՛չ մի ուժի նշանակութիւն չտուող, միայն կոպիտ ուժի առաջ էին խոնարհւում եւ այդ էր պատճառը, որ շատ յաճախ հայդուկները անխնայ էին վարւում, սպանում շատ շատերին, որպէսզի կարողանան որոշ չափով վախ տպդել: Նրանք սակայն, հաւատարիմ մնացին իրենց դաշնակցական կոչման եւ ո՛չ մի վնաս չհասցրին թոյլ, անպաշտպան գիւղացիութեան եւ առանձնապէս կանանց եւ երեխաներին:*

*«Բոլոր ժողովուրդները», եղրակացնում է «Դրօշակ»-ի 96-ի թիւ 11-ի առաջնորդողը, «տանջւած են եւ հաւասարապէս հալածւած, որի պատճառով էլ*

նրանք եղբայրներ են եւ նրանց ազատելու միջոցը մէկ պիտի լինի՝ յեղափոխութիւնը, և նպատակը՝ ժողովրդական-ռամկավարական կառավարութիւն»: Ճնշուած ազգութիւնների եւ ժողովուրդների հետ համագործակցութիւն, նրանց իրաւունքների պաշտպանութիւն, խուսափել անզէն ժողովուրդին վնասելուց և կռի՛ւ միայն կառավարութեան զինուած հորդաների դէմ:

**IV— Գաղթականական խնդիր.—** Գաղթականական հարցն հայկական իրականութեան մէջ եղել է մէկն այն խնդիրներից, որ անցանկալի է եղել, բայց որի առաջն առնել անկարելի էր:

Սուլթանական կառավարութիւնը, Բալկանեան փոքր ազգութիւնների ազատագրութիւնից յետոյ, իր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց Փոքր-Ասիայի վրայ եւ աշխատեց իրեն համար հաստատուն բնակարան պատրաստել: Այդ նպատակով նա կամ պիտի ձուլէր հայերին եւ կամ կոտորէր, որպէսզի հնարաւորութիւն ունենար այդ գիտակից եւ յեղափոխական տարրից ազատուելու: Ձուլել անկարող էր, որովհետեւ հայ ժողովուրդը կուլտուրապէս աւելի բարձր, ազգովին աւելի յառաջադէմ եւ կրօնքով էլ աւելի ժամանակակից էր, քան թրքութիւնը: Ձուլել անկարող էր, որովհետեւ տնտեսապէս, զարգացած, առեւտրական ասպարէզի մէջ յաջող, մաքուր ապրուստի սովոր եւ դպրոցների համար կեանքը զոհող հայութիւնը չէր կարող ընկնել մինչեւ տգէտ, յետամնաց եւ կեղտոտ թիւրքի աստիճանին: Կառավարութիւնն էլ զգում էր այդ միջոցի աննպատակայարմարութիւնը եւ այդ է պատճառը, որ որոնում էր

եւ որոճում բնաջնջման նոր ծրագիրներ:

Եւ դրանք երկուս էին՝ կոտորած եւ գաղթականութիւն: Ամէն տարի, պարբերաբար, կոտորած սարքել չէր կարող, նամանաւանդ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը եւ դրանից առել խարտեանող հասարակութեան կարծիքը կար: Երկրորդ ճանապարհն առել «օրինական եւ խաղաղ» էր համարւում եւ այդ է պատճառը, որ հարկերն օր ըստ օրէ ծանրանում էին, ապա կառավարութիւնը ցորենը գնում էր աժան գնով և լեցնում ամբարներն ու արհեստական կերպով սով ստեղծում, որից եւ հայ գիւղացիութիւնն ստիպւած էր պարտքերի տակ ընկնել, հողերը ծախել, անասուններըը վաճառքի հանել եւ վերջ ի վերջոյ պանդխտութեան ցուպը ձեռք առնել:

Սովը եւ գաղթականութիւնը ո՛չ թէ արդիւնք էին տնտեսական ճգնաժամի եւ կամ բնութեան անընդհատ պայմանների, այլ յատուկ դիտաւորութեամբ և քաղաքական նպատակով ստեղծւած միջոցներ էին՝ հայութիւնը բնաջնջելու եւ կամ հեռացընելու համար: Սովը, գաղթը, բաղաքական միջոցներ էին:

Կառավարութիւնը անկարող լինելով կռւել ծայր ուռղ տեղափոխական չարժման դէմ, որոշում է սովի միջոցով հակատեղափոխական չարժում ստեղծել եւ ցոյց տալ ժողովրդին, որ «քանի ֆիդայիներ չկային երկրում, փառք Ալլահին, ամէն ինչ լաւ էր, առատ էր և ապահովութիւն, հանդստութիւն կար. իսկ երբ դրանք երեւացին՝ աշխարհը փոխւեց եւ պայմանները վատթարացան»: Ուրեմն, եզրակացնում էին նրանք, կռւեցէք յեղափոխականների դէմ,

մի՛ ընդունէք նրանց ձեր մէջ եւ օգնեցէք կառավարութեան՝ պատժելու այդ «չար» տիպերին:

Կառավարութիւնը սովը եւ գաղթը դարձրել էր հակայեղափոխական պրօպագանդայի միջոց:

Գաղթականութիւնը, բայց վերոյիշեալներից, նպատակայարմար ձեւ է համարել և ան հայերի հողերը գրաւելու և բաժաններու ուղղափառ, հաւատացեալ մուսուլմաններին, որով ռուս-տաճկական սահմանագլուխը, ազատելով վտանգաւոր տարրերից, ապահով և ամուր դիրք կը ստանայ ու բնական պատնէշ՝ ռուսական յառաջխաղացման ժամանակ:

Այդ թիւրք կառավարութեան վաղուցուայ երազն էր, հաստատուած դերմանական «քաղաքագէտների եւ տնտեսագէտների» կողմից, որոնց նպատակն էր է՛ւ ռուս–տաճկական սահմանն ամրացնել եւ միաժամանակ Միջագետքի անապատները ոռոգել՝ աշխատասէր եւ ուշիմ հայերի միջոցով:

Գաղթականութիւնը, սակայն, դէպի հարաւ չընդնաց, այլ դէպի հիւսիս եւ արեւմուտք, դէպի անապատները չընթացաւ հայը՝ ճշակելու խոպան դաշտերը, այլ դէպի քաղաքակրթուած երկիրներ՝ ազատութիւնն աւելի սիրելու եւ յեղափոխական դաղափարին աւելի ամուր փարելու համար:

Սովը եւ գաղթը դարձրել էին հողերը սեփականացնելու միջոց:

Դաշնակցութիւնը, որպէս յեղափոխական կուսակցութիւն, չէր կարող ուշադրութեան չառնել այդ խոշոր երեւոյթը, գաղթականութիւնը, որ դարձ էր ածւում որպէս քաղաքական միջոց եւ բնական է, իր շեփորը պիտի հնչեցնէր՝ նրա առաջն առնելու հա

մաբ: Գաղթում էին դվխաւորապէս երիտասարդները, աշխատաւորները, որոնք պիտի հանդիսանային կռուող, դիմադրող տարրերը, որոնք յեղափոխական ոգին պիտի ընդդրկէին և աշխատէին աւելի լայն ծաւալ տալ նրան: Որքան էլ դժուարին լինէր բուն երկրի մէջ ապրելը, անհնար լինէր կրելու անպատմելի տանջանքները ու հալածանքները, սովի ճշտական ուրուականը, այնուամենայնիւ պարզ էր, որ երկիրն առանց հայութեան թողնել չէր կարելի:

Ինչո՞ւ են գաղթում. հարց է տալիս «Դրօշակ»ը, 94 թուի 7-րդ համարում, երբ երկիրը ճոխ, բարեբեր է, շկայ գեղջ կեանք, հարուստ բնութիւն է և կան առատ հանքեր: Ինչո՞ւ պիտի գաղթի, երբ մեր երկիրն իրաւամբ Արեւելքի Շվէյցարիա են հաշուում և ուր կարելի կը լինէր անապատ հարստութիւն դիզել:

«Գաղթում են» պատասխանում է, «որովհետեւ անտեսական աննպաստ պայմաններ են տիրապետում, աշխատանքի և կեանքի ապահովութիւն չը կայ, աշխատավարձը դիւղացուն չի մնում, անապատ եւ ծանր հարկեր կան. քիւրդեր, թիւրքեր եւ կառավարական պաշտօնեաներ ապրում են հայ ժողովրդի հաշուին. որովհետեւ քաղաքական կեանքը անտանելի է եւ բռնակալական կարգերում գարգացնալ՝ անկարելի»:

«Այդ բոլորի հանդէպ», շեշտում է Թերթը, «ոչ թէ պիտի գաղթել, վաթանն անտէր թողնել եւ կամ թուրք կառավարութեան ձեռին ծրագիրներն իրագործելու համար յարմար դետին պատրաստել, այլ մնալ երկրում, տանջուել, չարչարուել եւ մխիթարնակ կազմակերպուել ու պինուել՝ տապալելու բռնա-

կալութիւնն ու նորա փլատակների վրայ Ազատութեան դրօշը պարզելու:

«Հեռանալով, գաղթելով իւրաքանչիւրը իր կաշին, իր կեանքը ազատած կը լինի եւ մասամբ էլ տնտեսապէս բարւոքած իր վիճակը, բայց հայրենիքն ու ազգութիւնը կը վնասուին դրանից:

Սովից եւ Գաղթից չպիտի փախչել, այլ պիտի աշխատել դրանց դէմ կռուել»:

V— Ներքին Զարկ.— Հայ Յեղափոխական շարժումը շատ դժուարին եւ նմանը չունեցող պայմանների տակ առաջ եկաւ ու իր գործը շարունակեց: Բացի այն, որ երեք պետութեան մէջ բաժանուած էր եւ տարբեր քաղաքականութիւնների ու վերաբերմունքի էր հանդիպում. բացի Թիւրք կառավարութեան եւ Թիւրք ու քիւրդ ժողովուրդների դէմ կռուելուց. բացի դիւանագիտական անորոշ, խաբուսիկ եւ տատանուող քաղաքականութիւնից եւ բացի այն, որ Եւրոպայից շա՜տ հեռու լինելով իր ձայնը, բողոքը ուշ էր հասնում ու վրդովում հասարակական կարծիքը, այն իր ճանապարհին ունէր եւ ներքին, ազգային կեանքում գործող խոչնդոտներ, որոնք աւելի մեծ վնաս էին հասցնում քան արտաքին հանգամանքները:

Մեր կեանքի մէջ տարապայման դրութիւն է եղել, որի մէջ շատ դժուար է եղել որոշ դրական գործ կատարել:

Մենք շրջապատուած ենք եղել անթիւ թշնամիներով և միաժամանակ մեր մարմնի վրայ ունեցել ենք տզրուկներ, որոնք հայ են եղել և Հայութեան արիւնն են ծծել, աշխատելով միշտ «իրենց հաւատարիմ հը-

*ւածել յեղափոխական գործիչներին :*

*Դրանք երեք կարգի են բաժանուում՝* հոգեւորականներ, հարուստներ և մատնիչներ :

ա) Հոգեւորականներ, *որոնք պաշտօնի պլուխ անցնելով՝ ամէն չաբաթ կառավարութեան դուռը գնալով եւ սիրալիր ու ժպտալից ընդունելութիւն գտնելով, և որոնք հակայեղափոխական լինելով եւ յետադիմական բանակին պատկանելով՝ կարողացել են մեծապէս վնասել յեղափոխական գործին եւ իրենց որոշ ու կեղտոտ դերը կատարել : Ահա ճեզ Ա-շըգեան պատրիարքը, որ փոխանակ իր ժողովրդի իրաւունքներն ու պատիւը պաշտպանելու, մաքառելու նրա ազատութեան եւ դոյութեան համար՝ ինչպէս չատ չատերն իր խաւից, թուրքիկներ և յարատարարութիւններ է հանում, ցրում ժողովրդի մէջ եւ զգուշացնում, որ հեռու մնան «որոմներից» (յեղափոխականներից) եւ միաժամանակ պատւիրում է պաւառներին իր ներկայացուցիչներին՝ ամէն ջանք չխնայել և պայքարել յեղափոխութեան ծաւալման դէմ : Հոգեւորականութիւնը, պաշտամունք գարձնելով միապետական սկզբունքը, ինքն էլ որպէս խաւ լինելով ո՛չ արտադրող ու ժողովրդի հաշւին ապրող, միաժամանակ մեչտ լաւ ու քաղցր ընդունելութիւն գտնելով բարձր շրջաններից, իր որոշ «աշխատանքներին» համար վարձատրութիւն եւ չքանչաններ ստանալով, բնական է որ չէր կարող ժողովրդի դիտակցութեան եւ ազատութեան կողմնակից լինել :*

*Եթէ մենք իրաւունք եւ հիմք չունենանք ամբողջ հոգեւորականութեան եւ նոյնիսկ նորա մեծամասնութեան մեղադրելու, բայց համարձակօրէն կարող*

*ենք ասել, որ 90-ական թուականներուն պաշտօնեայ հոգեւորականներուն մեծ մասը կառավարական դիմումներուն պաշտպան էին եւ կամ, աւելի ճիշդ արտայայտուած լինելու համար, հակայեղափոխական բանակին մէջ էին:*

*Տգէտ եւ հասարակ դիւղացիութիւնը, որ այն ժամանակ եկեղեցու եւ աղօթքի ազդեցութեան տակ էր գտնւում եւ հաւատում էր թէ քահանաներն ու վարդապետներն են այն առաջնորդները, որոնք դէպի երկինք պիտի տանեն քրիստոնեաներին եւ հաւատացողներին, մշտապէս գտնւում էին նրանց քարոզների ազդեցութեան տակ: Նրանք էլ քարոզում էին յեղափոխականներին չհաւատալ:*

*Քարոզում էին. որովհետեւ հաւատում էին թէ վախից ստիպւած էին, այդ այլ խնդիր է, բայց փաստն այն է, որ հայ հոգեւորականութեան որոշ մասը, Հայկական Սպառազրութեան շարժման մէջ ո՛չ մի կերպ չէզոք, հեռու չմնաց, մի կողմ չքաշւեց, այլ եւ ակտիւ կռիւ մղեց՝ քարոզներով, կոնդակներով եւ մատնութիւններով:*

Բ) *Հարուստներ.— Մեր կեանքի մէջ հայ հարուստները շատ բացասական դեր են խաղացել: Ճիշդ է եղել են տիպեր, որոնք իրենց դրամը, ունեցւածքը կտակել են եկեղեցու, ուսումնարանների եւ բարեգործական նպատակների, բայց այդ եղել է պատահական եւ մեկին միւքրամատնութեան մէջ: Նրանք եւ ո՛չ մի դրական քայլ չեն արել քաղաքական ասպարէզում եւ շատ անգամ, աւելի ճիշդ՝ միշտ, հակառակ են ընթացել ու կռիւ յայտարարել յեղափոխական շարժումների դէմ: Այդ կողմից հոգեւորականներն աւելի մատնակցութիւն են բերել, որ-*

*տաղրել են չատ նչանաւոր եւ ղեկավարող անհատները, որոնք իրենց տեմպով յեղափոխական բանակին աւելի են մօտեցել:*

*Կենտրոնացած լինելով դլխաւորապէս Պօլսում եւ իրենց ձեռքն ունենալով տղդային–հասարակական դործունէութեան ղեկը, միաժամանակ հեռու լինելով բուն երկրի ցաւերից, տառապանքներից եւ չունենալով տղդային–քաղաքական խղճալ, նրանք մի չատ աշխատել են բարեկամ լինել թիւրք կառավարութեան հետ եւ օդտուել նրանից:*

*Պատահական մարդիկ են եղել դրանք, որոնք բազդի բերմամբ կարողացել են հարստութեան տիրանալ, մեծ մասամբ տգէտ եւ քաղաքական հասունութիւնից ու եւրոպական կրթութիւնից զուրկ մարդիկ են եղել, որոնք մի նպատակ են ունեցել — հաւատարիմ մնալ կառավարութեան և հարստանալ:*

*Պօլսոյ մէջ նրանք երեւելի ամէրաններ, էֆէնդիներ են եղել, պալատական սեղանաւորներ, զանազան վաչանների բարեկամներ, նրանց համար թանկագին քարերի և արդ ու զարդի վաճառականներ, ունեցել են նչանաւոր խանութներ եւ լաւ առեւտուր. համարեա մի չատ կառավարութեան հայթայթել են անհրաժեչտ ապրանքներ, զօրաբաժնի պէտքերը հոգալու համար յաճախակի կապալառու լինելու յարմարաւոր թեկնածուներ են եղել, դաւառներում հարկեր հաւաքելու եւ գնելու համար մի չատ բարեկամներ են որոնել եւ դրաւենեակներ են ունեցել, դաւառական կառավարիչների համար փոխառու դրամարկղներ են եղել եւ առ հասարակ կառավարութեան և նորա ներկայացուցիչների հետ առեւ-*

տըրական, գործի կամ շահի որոշ կապեր են ունեցել:

Պօլիսն աւելի ազատ, ապահով քաղաք է եղել, ուր ճնշումներն էլ այնքան զգալի ու տեսանելի չեն եղել հարուստ դասակարգի համար: Նրանք ապրել են եւրոպական ճոխութեան մէջ, դեսպանների մշտական հսկողութեան տակ, թատրոններում եւ խնճոյքներում. եւ շատ բնական է չէին կարող կամ աւելի շուտ չէին ցանկանում ըմբռնել հայ ժողովրդի ցաւը:

Բռնութի՜ւն... այդ բոլորը սուտ է, յերիւրանք է — գոռում էին նրանք — այդ բոլորը ինչ որ խելացնոր երիտասարդների եւ անմիտ յեղափոխականների գործն է, որոնց ո՛չ մի հաւատք չպիտի ունենալ, բացատրում էին նրանք:

Նրանց հիմնական տեսակէտն այն է եղել, որ ամէն ինչ խաղաղ է, լաւ է, որ հայութիւնը երախտապարտ պիտի մնայ սուլթանական բարեխնամ կառավարութեան եւ, որ գլխաւորն է, պիտի աշխատէ «լինել խոհեմ, հեռատես եւ հաւատարիմ»: Ճի՛շդ է, իրենք երբ խոհեմ են եւ հաւատարիմ՝ լաւ վարձատրւում են եւ շքանշաններ ստանում, իսկ երբ հայութիւնն է խոհեմ՝ նորից կոտորւում է... Ճի՛շդ է, իրենք ապահով են և թւում է թէ՝ եթէ ազգն էլ իրենց պէս լինի՝ ապահով կը լինի: Ամէն բան իրենց արշինով են չափում:

Իրենց կեանքում սով, գաղթ, հալածանք, բանտ չեն տեսել. իրենց կանանց եւ աղջիկներին չեն բռնաբարել, իրենց հարստութիւնն ապահովաբար ո՛չ մի վտանգի չի ենթարկել եւ կեանքերնին էլ շռայլութեան մէջ են անցկացրել, և երբ նրանց պատմում են չարչարանքների, տանջանքների, բանտերի, աք-

*սորանքների, սովամահութեան եւ այլ նման անտանելի երեւոյթների մասին, նրանք ապշահար բացականչում են.*

*— Զէ՛, ճանըմ, այդ բոլորը ճիշդ չեն:*

*Դրանք նմանւում են այն հարուստ տիկնոջ, որ տասնեակ տարիներով փողոցով չի քայլել, ոտով գրօսանքի չի ելել, միշտ քնքշանքի, զեղխութեան եւ առատութեան մէջ է ապրել ու գոհ վիճակ ունեցել:*

*Մի օր նա ցանկութիւն է յայտնում դուրս ելնելու եւ պտտելու, ժողովրդի կեանքին ծանօթանալու: Նրան ընկերակցում են երկու աղախիններ: Երկար պտտելուց յետոյ, նա աղքատների թաղն է մըտնում, ուր տիրում է թշուառութիւն, հիւանդութիւն եւ կեղտոտութիւն:*

*Մի տան մօտ նա պատահում է 7–8 տարեկան աղջկայ դիակի, որի վրայ էին հաւաքւել ծնողներն ու բարեկամները: Սովի տարի է լինում: Իւրաքանչիւր օր տասնեակներով են մեռնում:*

*Եւ տիկինը, որի սիրտն արդէն նուաղել էր, հարց է տալիս իր աղախիններին՝ թէ ինչի՞ց է մեռել փոքրիկ աղջիկը:*

*Նրանք հետաքրքրւում են եւ պատասխանում տիկնոջ, որ 3–4 օր հաց չի կերել երեխան ու մեռել է սովից:*

*— Մի՞թէ սովից էլ են մեռնում մարդիկ, զարմանալով հարց է տալիս տիկինը:*

*Այսպէս են եղել եւ մեր հարուստները: Նրանք չեն կարողացել պատկերացնել հայ ժողովրդի տանջանքը, իսկ շատերն էլ հեռու են փախել այդ ցաւի մասին խօսելուց: Նրանք միշտ թաքնւել են բարե-*

գործնեքի դիմակի տակ. ունել են մի քանի հազարներ, որպէսզի մի քանի տասը հազար անգամ իրենց անունը յիշուի թերթերում, յատուկ պատգամաւորութիւններ գնան եւ կաթողիկոսներից, պատրիարքներից կոնդակ առանան: Նրանք միշտ մի բան են պնդել, որ հայ ժողովրդին քաղաքական ազատութիւնը այնքան կարեւոր չէ, որքան «հաց» ունենալը, որը ձեռք կը բերուի, երբ հաւատարմութիւն լինի եւ աշխատանք:

Նրանք պարզ պատկերացնում են, որ ցեղափոխական չարժումն իրենց վնաս է, որովհետեւ կառավարութիւնը հալածանք կը սկսի հայերի դէմ, ապստամբեանի եւ իրենց դէմ, կառավարութիւնը կասկածով կը վերաբերուի ու իրենց պաշտօններից, շահի աղբիւրներից կը զրկէ, որ եթէ ժողովուրդն ազատուի, իրենք չեն կարող հայութեան անունից խօսել, բանակցել եւ ներկայացնել կառավարութեան, եւ որ առ հասարակ հաճելի չեն նման խմորումները. այդ է պատճառը, որ բոլոր հայաչատ կենտրոնների բուրժուա հայերը՝ վաճառականներ, խալիչիներ, կապալառուներ, պաշտօնեաներ եւայլն ո՛չ մխայն հետու չեն մնացել, չեն ժանդակել ցեղափոխական չարժման, այլ եւ ակտիւ կռիւ են մղել՝ հանդիսանալով կառավարութեան ձեռքում որպէս խաղալիք:

Նրանք զրամ չէին տալիս եւ զրանով զրկում էին ցեղափոխութեան կարեւոր նեցուկից. նրանք երկպառակութիւն էին սերմանում ազատամիտ տարրերի մէջ. նրանք միշտ ընդդիմութեան մէջ էին պահում Հոգեւորականութեան եւ ցեղափոխականներին. նրանք զանազան խաղաղարար յանձնախմբի անդամ-

*ներ էին լինում եւ միջնորդ՝ կառավարութեան եւ հայ ժողովրդի միջեւ եւ չէին մոռանում հիմնել բարեգործական հիմնարկութիւններ՝ հակակշռելու յեղափոխական կազմակերպութիւններին, և ամէն անգամ էլ թուրքակէս պէս կրկնում էին, թէ յեղափոխութիւնը ազգի տունը քանդեց, կոտորածների պատճառ դարձաւ, ահագին վնաս տւեց եւ ապա ուրեմն պէտք է երես դարձնել նրանից եւ կռիւ մղել նրա դէմ: Այդ բաւական չէր: Նրանք ամէն կերպ աշխատում էին աջակցել կառավարութեան՝ յեղափոխականներին որսալու համար եւ շատ անգամ էլ արդարացնում էին կառավարական պաշտօնեաների խստութիւնները ու գազանութիւնները:*

*Նրանցից շատ-շատերը արժանացել են մեծ պաշտօնների, նախարարութեան աստիճանի և ո՛չ մէկը ո՛չ մի դրական բայլ չի տեսել բարելաւելու իր հայրենակիցների դրութիւնը:*

*Նրանք պաշտօններ ստացան եւ չքանչանների արժանացան հազարաւոր հայերի դիակներ ոտի տակ տալով եւ կամ անարդարութիւնը պաշտպանելով: Ո՛չ մի յոյս չի եղել դրանցից, համաձայնութեան ո՛չ մի եզր անկարելի է եղել գտնել, և այդ է պատճառը որ Հ. Յ. Դաշնակցութիւնը հաւատար չափով կռիւ է յայտարարել եւ այդ ոխերի դէմ՝ համարելով նրանց աւելի վտանգաւոր թշնամիներ Ազգային Ապստամբութեան:*

Գ) Մատնութիւններ.— *Հայ ժողովրդի մարմնի վրայ գտնուած խոցը աւելի շատ կորստաբեր է եղել քան արտաքին հարուածները: Հէնց յեղափոխական գործունէութեան սկզբնական շրջանում՝ բազ-*

մաթիւ թրքական լրտեսներէն կողքին մի առանձին վոհմակ էլ է երեան գալիս՝ բաղկացած բացառապէս հայերից: Սրանք, ծանօթ լինելով ժողովրդի հոգեբանութեան, հնարաւորութիւն ունենալով ամէն մի խաւի եւ շրջանի մէջ մտնելու, կաշառուած լինելով եւ կամ ուղղակի ոճիկ ստանալով կառավարութիւնից, ամէն կերպ աշխատում են յեղափոխական գաղտնիքներ դուրս տանել, որպէս նշանաւոր գործիչներին, մատնել գէնքի պահեստները եւ հետապնդել հայդուկային խմբերին

Սրանք ամէն տեղ էին. եկեղեցիներում՝ պատարագի ժամանակ. հոգեհանգիստների եւ ցոյցերի ընթացքում, հարսանիքներում եւ կեր ու խումի մէջ. պանդուխտ հայրենակիցների՝ մշեցիների, վանեցիների իջեւանած պանդոկներում, ուր երբեմն իրր հոգեւորական էին երեւում, երբեմն կառավարութեան պաշտօնեայ, իսկ շատ յաճախ էլ որպէս յեղափոխական գործիչ: Սրանք իրենց աշխատը հասցրել էին կատարելագործութեան եւ չէին տրտնջում, երբ մի քանի անգամ էլ, թէեւ կարճատեւ, բանտ էին նետուում. սրանք վնտռում էին պահեստները, որսկանների պէս հետապնդում էին նշանաւոր յեղափոխականներին, որոնց գլուխը հազարներով էր գնահատած կառավարութեան կողմից: Դուք կը պատահէք սրանց թիւրք գինուորների հետ՝ կռւելիս հայդուկների դէմ, թունաւորելիս յեղափոխական գործիչներին եւ խոստովանեցնող պաշտօնեաների հետ միասին բանտարկեալների խցում:

Սրանք ամէն տեղ էին եւ սողունների պէս քարշ էին գալիս մեծ պաշտօնեաների յետեւից ու միշտ նը-

*բանց դարշապարներին վարած՝ իրենց պոյուխները քարշ տալիս:*

*Հասարակութեան բոլոր խաւերն էլ իրենց ներկայացուցիչներն են ունեցել այդ որջում — հոգեւորականներ, հարուստներ, դիւղի ռէյսներ, դիւղացիներ, վաճառականներ, հին յեղափոխականներ եւ բազմաթիւ այլ բաղդախնդիրներ:*

*Քանի նրանք հեռացել են կենտրոնական քաղաքներից եւ խուսափել իշխանութեան անմիջական հսկողութիւնից եւ քանի մօտեցել են յետ ընկած դիւղերին՝ աւելի անտանելի, կեղեքիչ, բռնակալ են դարձել եւ մի-մի պատուհաս եղել առանց այն էլ աղքատ եւ յուսահատ հասարակութեան գլխին:*

*Իրենց շրջաններում նրանք մի-մի իշխաններ են եղել, որոնց հրամանները օրէնք են եղել, իսկ չը հպատակողները՝ վտանգաւոր յեղափոխականներ անուանուել ու դէպի բանտ առաջնորդուել:*

*Դրանք մի կողմից խոչընդոտ են հանդիսացել յեղափոխական շարժման ծաւալման, միւս կողմից էլ՝ անբարոյականացում են մտցրել հասարակական լայն խաւերի ու յեղափոխական շարքերի մէջ, երբ սխալած եւս եղել չա՞տ մեծ զգուշութեամբ մօտենալ դէպքերին եւ դէմքերին:*

*Բացի այն, որ նրանք բանտ են առաջնորդել չատ յեղափոխականների, մի ժամանակ եւ չատերն էլ գոհ են գնացել նրանց ահաբեկման ենթարկելու ժամանակ: Բացի այն, որ նրանք մատնել են դէնքեր եւ պահեստներ, նրանց վրայ ահագին գումարներ են ծախսուած՝ չէզոքացնելու եւ կամ մէջ տեղից վերցնելու այդ տիպերին:*

*Դրանք, այդ երիտասարդ եւ ճարպիկ տիպերը,*

փոխանակ միանալու յեղափոխական շարքերին եւ փոխանակ իրենց կեանքը վտանգի ենթարկելու՝ հայրենիքի եւ ազգի գերագոյն շահերի համար, ընդհակառակը մեծ ծառայութիւն են մատուցել թիւրք կառավարութեան:

Եւ այսպէս մատնութիւնները ժողովրդի մէջ առաջ են բերել բարոյալքում, յուսահատութիւն եւ վախ, ապա խլել են յեղափոխական նշանաւոր ահաբեկիչներ և ուժ, ու վերջապէս նիւթական խոշոր վնաս են հասցրել Ազատագրական չարժման:

Եւ այսպէս հայկական իրականութեան մէջ յեղափոխական նախնական շրջաններում, հոդեւորականները, հարուստներն ու մատնիչները կազմել են այն խորհրդաւոր եւ ուժեղ որոգայթը, որի մէջ ցանկացել են ձգել յեղափոխութեան եւ մի անդամից փորել նորա գերեզմանը· բայց անօգուտ:

Հ. Ց. Դաշնակցութիւնը, վերլուծելով այդ երեք ֆակտորները, պարզաբանելով մանրամասնօրէն Ներքին Զարիքի վնասակար կողմերը եւ միշտ երեւան հանելով նրանց ազդադաւ գործունէութիւնը, խիղախօրէն ընդառաջ է գնացել եւ այդ վտանգին, չի յուսահատւել եւ աստիճանաբար պայքարելով ու կուելով՝ Հայկական Ազատագրութեան դրօշն է բարձր պահել:

VI— Դիւանագիտութիւն·— Հայկական Հարցի դժուարին լուծման եւ յեղափոխական չարժման անընդհատ ընթացքի մէջ դիւանագիտութիւնն իր խոշոր դերն է խաղացել: Եւրոպական մեծ պետութիւնները մինչ բալկանեան փոքր ազգութիւնների ազատագրութեան գործում պարզ եւ

որոշակի դեր ունէին, Հայկական Խնդրում տատանւող եւ փոփոխական գտնւեցան: Նրանց համար պարզ էր եւ ճանապարհն էլ յայտնի, որ յոյների անկախութիւնից յետոյ պիտի գար Սերբիան, ապա Ռումանիան եւ Բուլգարիան: Նրանք այդ ժողովուրդներին եւրոպացիների անբաժան մասերն էին համարում, իսկ Բալկանները՝ Եւրոպայի բաղկացուցիչ մասը եւ այդ է պատճառներից մէկը, որ նրանք՝ Թիւրքիան Ասիա քշելու եւ Եւրոպայից հեռացնելու ծրագիրն այնքան արագօրէն իրագործեցին: Բացի այդ՝ բալկանեան ազգութիւնները աւելի առնականօրէն կազմակերպւած լինելով, միշտ հնարաւորութիւն ունենալով իրենց ցաւերը յայտնելու, անմիջապէս շրջապատւած լինելով քրիստոնեայ ազգութիւններով եւ լինելով սլաւոնական մեծ ցեղին պատկանող, կարողացան շատ շուտով ձեռք բերել իրենց ազատութիւնը: Հայկական Հարցի մէջ դիւանագիտութեան խաղացած դերը եղել է երկդիմի և խիստ անպատւաբեր:

Եղել են դէպքեր, երբ ռուսական կառավարութիւնն ու դիւանագիտութիւնն են ժպտացել մեզ, յոյս տւել որ շուտով կ'ազատւենք և պաշտպան հանդիսացել՝ արգիլելով ճնշումներ, հալածանքներ. եղել են եւ ժամանակներ, երբ ռուսական ցարը, հայկական կոտորածներից յետոյ իր նուէրն է ուղարկել սուլթանին՝ որպէս բարեկամական նշան: Շրջաններ են գտնւել, երբ Անգլիան իրաւամբ հետաքրքրւել է հայերի ազատութեամբ, միջամտել է նրանց համար եւ երբեմն էլ սպառնալիքներ է կարդացել, բայց չը պիտի մոռանանք նաեւ, որ լորդ Սալզպիրին յայտարարել է նաեւ, որ անգլիական նաւատորմը չի կա-

րոյ Տաւրոսի բարձունքներն ի վեր մագլցել:

Անգլիա եւ Ռուսիա, ահա երկու մեծ պետութիւններ, որոնք մեր ժողովուրդի սրտում որպէս բարեկամ որոչ տեղ են դրաւել, բայց որոնք իրենց անմիտ մրցակցութեամբ պատճառ են հանդիսացել հայ ժողովուրդի անլուր տառապանքներին: Ահա դրանք, այդ երկու ուժեղ տէրերը եւ պետութիւնները, որ հարեւան են իրար Պարսկաստանի, Ասպանիստանի կողմից, որոնցից մէկը հարաւի պաշտպանների հինաւուրց տէրն է, իսկ միւսն անդադար դէպի հարաւ է արշաւում, որոնցից մէկը ծովերի հսկան է, իսկ միւսը՝ ցամաքի, եւ այդ երկու ուժերը մրցելով եւ փոխադարձաբար անվստահութիւն ցոյց տալով եւ խուսափելով զէնքի ոյժի դիմել՝ իրենց տիրապետութեան սահմանները վճռելու համար, վճռեցին բարեկամանալ սուլթանի հետ եւ անուշ ու քաղցր ժպիտներով իրենց սպրեցութիւնն ապահովել:

Ահա նրանք, Զէյթունի ապստամբութիւնից յետոյ, «մինչեորդի» դերի մէջ, որ փոխանակ պատժելու անմեղ եւ քրիստոնեայ ժողովրդին սրախողխող անող թիւրք պաշտօնեաներին, աշխատում են հաշտեցնել ժողովրդին՝ կառավարութեան հետ եւ պատմաններ են առաջարկում՝ դինամիտի լինել, ապստամբութիւնը դեկավարողներին չանձնել կառավարութեան, իրենց քանդած զօրանոցները վերանորոգել եւայլն: Ահա դրանց միջամտութիւնը:

Ահա նրանք, 95 թւի կոտորածի ժամանակ, երբ ո՛չ մէկը իր խրոխտ ձայնը չբարձրացրեց. եւ լռեցին, լռեցին ամարդօրէն ու նոյնիսկ... անուղղակի թոյլատրեցին:

95–ի կոտորածների ժամանակ, երբ Տրապիզոնի

*հայութիւնը դիմեց ռուս հիւպատոսին եւ օգնութիւն ապերաեց, նա ցինիկօրէն պատասխանեց. «Դուք արժանի էք»: Կարնոյ մէջ կոտորածն սկսւում է ռուս հիւպատոսի Եաքիր-փաչային այցելելուց մի քանի րոպէ յետոյ, իսկ Վանի հիւպատոսն ասել է. «Երբ ձեր պետութեան մէջ հայերն այսպէս ոչնչացրէին՝ ձեզ աւելի խիստ կը վարուէինք»: Նոյն այդ ժամանակները, երբ Կովկասում գտնուած փոքրաթիւ ցեղափոխականները, լսելով իրենց հայրենակիցների անլուր տանջանքները, վճռում են օգնութեան հասնել, ռուս կառավարութեան կողմից հալածանքի են ենթարկւում, ձերբակալւում եւ իրենց նպատակի կիսատ-մնատ մնում:*

*Ահա եւ Անգլիան: Նորա դիւանագիտական ներկայացուցիչներն էլ բացատական դեր են խաղացել եւ անչուչտ այդ արդիւնք է կառավարութեան վարած ընդհանուր քաղաքականութեան:*

*Վանի 96 թուի կռւի ժամանակ անգլիական հիւպատոսն ու միսիոնար Ռէյնօլտսը բացարձակապէս պաշտպանեցին կառավարութեան, դնելով հայերին դուրս հանել ուին քաղաքից եւ հնարաւորութիւն ստեղծեցին վայրենի զազաններին համար կոտորելու, թալանելու եւ բռնաբարելու: Այդ սարսափներից յետոյ նրանք, «քաղաքակրթուած Եւրոպայի այդ երկու ներկայացուցիչները», համերաշխութիւն կազմել ուին, թէ հայերն իրենք են մեղաւոր:*

*Դիւանագիտութեան տատանուող դիրքի պատճառները մանրամասնօրէն վերլուծելու կարիք չկայ, որովհետեւ մարդկային մտածողութեան եւ գործողութեան այդ ճիւղի էութիւնը տատանումն ու չարաւեւ փոփոխութիւնն իսկ է:*

*Ընդունած այդ բոլոր եւ այլ նման փաստերին, մի բան պարզ էր, որ Հայկական Հարցի եւ այլ հարցերի տէրը մեծ պետութիւններն էին: Սրանք են, որ տալիս են ազատութիւն եւ անօրինում են ազգութիւնների բաղդը. սրանք են որ ընտրութիւններ են անում և աւելի ընդունակներին առաջ քաշում և սրանք են, որ իրենց շահերի պաշտպանութեան համար այս ու այն ազգութիւններին ստրկութիւնից դուրս են հանում եւ իրենց համար բնական պատուար կանդնեցնում: Սրանք են, որ ոտի տակ են տալիս թոյլերին, անպօրներին և իրենց ուշադրութիւնն են դարձնում միայն նրանք, ովքեր իրենց ազատութեան համար կուել, արիւն թափել պիտեն եւ վերջապէս սրանք են, որ իրենք ուժեղ լինելով՝ միաժամանակ եւ ուժն են դնահատում:*

*Հ. Յ. Դաշնակցութիւնը, բնականաբար չէր կարող անտեսել դիւանագիտութեան պէս մի կարեւոր ուժ և իր դիրքը սկզբից և եթ որոշեց՝ բացասական: «Հայկական Հարցով», գրուած է «Դրօշակ»ի 95—ի թիւ 8-ի մէջ, «բաւականաչափ հետաքրքրուում են Ռուսիան եւ Անգլիան ո՛չ թէ մարդասիրութիւնից դրդուած, այլ իրենց շահերից: Սրանք եւ ուրիշներն ուախութեամբ զոհ կը տան մի քանի ազգութիւնների շահեր, զանց կ՝առնեն նրանց պահանջները — միայն թէ՝ statu-quo-ն պահպանւի: Հայկական յեղափոխութիւնն ապառնում է Փոքր-Ասիայի քաղաքական ֆիզիօնօմիային, որի համար էլ պետութիւնները ձեռք են առել Հայկական բարենորոգումները»:*

*Ապա մի չարք խմբագրականներով ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր մի նոր երկիր եւրոպական դիպլօմատիայի համար հանդիսանում է նոր չուկայ՝*

իր պետութեան մէջ գտնուած ապրանքները արտահանելու համար, և այդ է պատճառներից մէկը, որ նրանք այնքան անտարբեր են դառնում դէպի մի ազգութեան անպատմելի տանջանքները: «Տաճկաստանը, նաեւ Հայաստանը հանդիսանում են նման չուկաներից, ուր պետութիւնների չահերը խաչաձեւում են, որի համար էլ բաւականաչափ պղտոր են վարւում, որ չիցէ թէ համաշխարհային պատերազմ առաջ գայ»:

Այս տողերը գրելու ժամանակ այդ դուշակուած համաշխարհային պատերազմն արդէն իրականութիւն է ուղիղ 20 տարի այդ թւականից յետոյ, եւ ռուսական բանակն էլ յաղթականօրէն արշաւում է Հայաստան՝ գրաւելով Էրզրումն ու Տրապիզոնը, իսկ Ֆրանսիացում Վ. Էրտէօնը՝ ամիսներով քաջարար դիմադրում է գերման բանակների գերեզման հանդիսանալով:

Եւրոպական պետութիւնները, ճիշդ է, միշտ միջամտում էին եւ մեայն միջամտում: Նրանք ո՛չ մի ակտիւ, դրական միջոցի չէին դիմում: Նրանք զգուշանում էին այդ հնոցը հրահրելուց, վախենալով բռնկումից: Եւ այդ էր պատճառը, որ դիւանագիտութիւնը միշտ մշակում էր հայերի համար «բարենորոգումներ», բայց ո՛չ մի անգամ նա չիրագործեց բարենորոգում:

Եւ իրաւունք ունէր «Դէյլի-Նիւզ»ի թղթակիցը բնորոշելու, որ հայկական այդ ըէֆօրմները «գրուած թղթի կտորը չեն արժում», այնքան անհիմն, անհաւատալի եւ որ գլխաւորն է արժանի էին:

Ունենալով բացասական վերաբերմունք հանդէպ պաշտօնական դիւանագիտութեան, Դաշնակ-

*ցութիւնը, սակայն, չէր մոռացել որ անդին մի խոշոր ուժ կայ, որին պէտք ապաւինել — այդ հասարակական կարծիքն է, ժողովուրդների խիղճն է, ընտրողների ձայնն է, որ այնքան մեծ նշանակութիւն ունին: Բայց այդ բոլորից դուրս առաւել իրական արժէք ունի եւրոպական հասարակութեան եւ դիւանագիտութեան աչքում մի ժողովրդի ապրելու խոր գիտակցութիւնը, իր իրաւունքների պաշտպանութիւնը, իր պատւի եւ ազատութեան համար զոհւելը եւ այն, որ խնդրողին, աղաչողին եւ աղերսողին չեն տալ, այլ կ'աշխատեն կառավարել, իսկ դիմադրողին եւ իր ազատութեան համար նահատակներ տուող ժողովրդին ի նկատի կ'առնեն եւ կ'աշխատեն, եթէ ոչ յարգանքից, գոնէ իրենց շահի տեսակէտից նպատակայարմար ձեւով օգտագործել:*

*Դիւանագիտութեան աչքում նորից նշանակութիւն ունեցողը կազմակերպուած կռիւն է, ապստամբական շարժումներն են, որոնք Դաշնակցութեան յեղափոխական գործելակերպի գլխաւոր առանցքն են կազմել:*

VII— Յեղափոխական կռիւ. — ***Մինչեւ*** *90-ական թւականները, հայկական իրականութեան մէջ կային հոսանքներ, որոնց նպատակն էր ազատել Հայաստանը՝ պրոպագանդայի, դիմումների միջոցով՝* գրելով, *բացատրելով եւ հասկացնելով, որ* 20-*րդ դարում արդէն ուտոպիայի շարքումն էր դասւում եւ անհիմն գործունէութիւն համարւում:*

*Ոմանք էլ դրութիւնից անցան* քարոզների, *հիմնեցին որոշ թերթեր, բազմաթիւ դպրոցների մէջ աշխատեցին կրթել սերունդն այդ ուղղութեամբ եւ հրապարակով էլ սկսեցին խարազանել, քննադատել*

*կառավարութեան պակասները: Աստիճանաբար զարգանալով, այդ հոսանքից ոմանք նպատակայարմար դատեցին գործի անցնել եւ ահա կազմակերպւեցան Պօլսոյ եւ Կարնոյ ցոյցերը, երբ եւ յեղափոխական ճառեր արտասանւեցան, թռուցիկներ ցրւեցան եւ եղան վիրաւորներ, ձերբակալւածներ, որոնք անշուշտ իրենց որոշ նշանակութիւնն ունեցան հասարակութեան հոգեբանութեան վրայ:*

*Այդ բոլորից յետոյ, բուն Երկրի մէջ, զանազան վայրերում, ըմբոստ տիպեր երեւան եկան, որոնք իրենց չորս կողմն հաւաքելով մի քանի խիզախ երիտասարդներ, թափառական եղան ու սկսեցին հարւածել կառավարութեան ու պաշտպանել թշւառ հայ գիւղացիութեան: Ահա ձեզ Ալաշկերտի շրջանում* Յարութիւն աղան, *որ 91 թւի սեպտեմբեր 14-ին մի խոշոր ընդհարում է ունենում 4–500 հոգուց բաղկացած քրդական հրոսակախմբի հետ, եւ մի ամբողջ օր կռւելով կարողանում է փախուստի մատնել թշնամուն: Երբ խմբապետը վիրաւորւում է, նա դեռ շարունակում է յոյս ներշնչել կռւողներին եւ հրաման տալով գոչում է. «Կռւեցէք ցմահ, ցմահ տղերք. ինձ մի նայէք, որ ես վիրաւորւած եմ»:*

*Ահա եւ Կարնոյ շրջանում, Թորթում գաւառի Լինկաւ եւ Նիխաղ գիւղերի մօտ Շամիլ անունով հրոսապետը իր կարիճ ընկերներով շրջապատում է 25 տաճիկ ճանապարհորդների՝ թալանում, կողոպտում, սպանում եւ դրանով սարսափ տարածում շրջակայ գիւղացիների վրայ: Նա ձեռք չի տալիս կանանց եւ երեխաներին, ինչպէս եւ հայ ազգաբնակութեան: Նոյն ինքնաբոյս, դաժան պայմաններից առաջ եկած ընտանիքին էր պատկանում եւ Մը-*

*հոյ դաշտի ալիզոնացի Լեւոնը, որ 92ի սեպտեմբեր ամսում օրը-ցերեկով սպանում է մատնիչ Կրպօին եւ լեռները բարձրանում։*

*Այդ ցրւած ուժերը պէտք էր կենտրոնացնել, բոլոր անհատական ջանքերը կազմակերպել, ճանապարհ բաց անել խիզախ եւ ըմբոստ ոգիների համար ու միեւնոյն ժամուն կարգ ու կանոն, ոգեւորութիւն եւ որոշ նպատակ մտցնել գործի մէջ։ Այդ կարող էին անել քաղաքական կուսակցութիւնները։ Եւ ահա ասպարէզի վրայ երեւում է Հնչակեան կուսակցութիւնը, որ մի ատ ժամանակ կարողանում է իր չուրջը համախմբել բաւական թւով երիտասարդներ եւ ունենալ մի քանի տասնեակ մասնաճիւղեր։ Բայց... պակասում էր գործունէութեան յստակ ծրագիրը. պա հանջ էր զգացւում գործողութիւնները կենտրոնացընել բուն երկրի մէջ եւ հեռու մնալ կենտրոններից, ապա բոլոր հրամանները Լօնդօնից չպիտի գային, այլ յայն իրաւասութիւն պիտի տրւէր տեղական մարմիններին, եւ որ գլխաւորն էր՝ կռիւը, ահաբեկումները եւ ապստամբութիւնը որպէս սխեմա պէտք էր ընդունել եւ ո՛չ որպէս պատահական երեւոյթ։*

*Եւ այսպէս, հայ հասարակութեան որոշ մասը Հայ Ազատագրութեան բերեց իր գլխէը, ոմանք՝ քա րոզները, մի քանիսը՝ բողոքներ և ցոյցեր, ապա եւ բեւան են դալիս պատահական դիմադրութիւններ ու ընդհարումներ, մինչեւ որ 90-ական թւականներին երեւում է Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը սկսում է կռիւն ու 26 տարւայ ընթացքում վարում անընդհատ, անվհատ եւ խիզախօրէն։*

*Մենք տեսանք, որ իր սկզբնաւորութեան նախ-*

նական չրջանում, Դաշնակցութիւնն իր օրգանի մէջոցով երեւան էր հանել այն դժուարութիւնները, որոնց պէտք էր յաղթահարել, մէջ տեղից վերացնել եւ որոնց վրայ ահագին եռանդ պիտի թափէր:

Մի կողմից նա պիտի աշխատէր համերաշխ գործակցութիւն փնտռել թիւրք եւ քիւրդ ժողովուրդների հետ, ապա բոլոր այն յեղափոխական տարրերի հետ, որոնք միտք ունէին կռւելու սուլթանական բռնակալութեան դէմ եւ այդ պատճառով նա ուրախութեամբ էր ձեռք մեկնում հայկական եւ թիւրքական, արաբական, մակեդոնական յեղափոխական տարրերին. իսկ միւս կողմից նա պարտաւորւած էր դդում կռիւ մղել կառավարութեան, քիւրդ հօրդաների, թիւրք ժողովրդի չկամութեան, դիւանագիտական հակառակ որամադրութիւնների դէմ՝ արտաքին աշխարհում, և ներքին կեանքի մէջ՝ հայ ժողովրդի ստրկական հոգեբանութեան, հոգեւորականների, հարուստների եւ մատնիչների դէմ:

Համերաշխութիւն եւ կռիւ, ահա այն երկու կարեւոր սկզբունքները, որոնք Դաշնակցութեան գործունէութեան առանցքն են կազմել, որոնք նորա շարքերի հոգեբանութեան ծանրութեան կենտրոնն են եղել եւ որոնց նա փարել է, չատ անգամ այնքան վնասակար ոգեւորութեամբ:

Համերաշխութիւն եւ կռիւ, ահա այն երկու արտայայտիչ եւ բնութագծող երեւոյթները, որոնք ո՛չ թէ Դաշնակցութեան, այլ եւ ամբողջ հայ ժողովրդի հոգեկան անհրաժեշտ ատրիբուտներն են կազմել՝ իր ստրկական դրութեան ամբողջ ընթացքում:

Այդպէս ենք եղել ազգովին, երբ մենք ցանկացել ենք զոյութեան տանելի եղր գտնել թիւրք կառավարութեան, ռուս պետութեան հետ, աշխատել ենք դիջել, դիջել եւ նոյնիսկ մինչեւ չգոյութեան աստիճանի հասնել, միայն խաղաղ և ազատ թողնեն մեզ, եւ երբ այդ չի յաջողւել, երբ հալածել են եւ տանջել, երեւան ենք հանել կուի բնազդի ու ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը եւ տալով բանակնաչափ զոհեր, կարողացել ենք, յամենայն դէպս, պահպանել մեր գոյութիւնը:

Այդպէս է եղել եւ մեր իրականութիւնը, որ երկուութեան է եղել բաժանուած, որի մի մասը քարոզել է խաղաղութիւն, հպատակութիւն և զգուշութիւն. իսկ միւս մասը՝ կուիւ, դիմադրութիւն, յարձակում եւ ինքնապաշտպանութիւն:

Այդպէս են եղել եւ յեղափոխական կուսակցութիւնները՝ կուիւ, դիմադրութիւն, զրաւումներ անելով, և երբ նկատել են հաչտութեան ձեռք՝ խոկոյն ընդառաջ են գնացել, լիովին հաւատալով հակառակորդի անկեղծութեան:

Այս երկուութիւնը մեզ շա՛տ վնաս հասցրեց, բայց եւ դուցէ որոշ ծառայութիւն մատուցեց՝ մեր ազգային գոյութիւնը պահպանելու:

Ամբողջական կուիւը կարող էր մեզ ոչնչացնել եւ աւերակի վերածել մեր երկիրը, իսկ ամբողջական համերաշխութիւնը, ենթարկումը, կարող էր ճուլել եւ կամ ազգային իդէալից զրկել մեզ:

Այդ դեռ որոշ հիւսօթէզ է, որ կարիք ունի լուրջ, պատմական ուսումնասիրութեան եւ ամենայն ուրախութեամբ թողնելով հոգեբանական այդ պրօբ-

լեմը, կ՚անցնենք Դաշնակցութեան յեղափոխական տակտիկային:

Իր ծրագիրները իրագործելու համար եւ դրած նպատակներին հասնելու դիտաւորութեամբ, Հ. Յ. Դաշնակցութիւնն ընդունեց յեղափոխական գործելակերպը՝ Զէնք եւ կռիւ:

Աւելի լայնօրէն բացատրելու համար այդ կարեւորագոյն տեսակէտը, ստիպուած ենք ստորաբաժանումներ անել եւ մանրամասն քննութեան ենթարկել, որովհետեւ կռիւը իր գործունէութեան դիմաւոր եւ չարունակական մասն է կազմել ու յեղափոխական մտածողութեան անհրաժեշտ յենարանը:

Կռիւը, որպէս յեղափոխական գործելակերպ, հետեւեալ մասերն է ունեցել՝ մտաւոր-հոգեկան, ինքնապաշտպանութիւն, ահաբեկումներ եւ զինուորական ձեռնարկներ:

Մտաւոր-հոգեկան.— Դարերի ընթացքում մեր ապրած ստրկական կեանքը մեր մէջ է պահել եւ մենք աւելի թեթեւ արուեստների յետեւից էինք ընկած՝ քան լուրջ մտաւոր աշխատանքի: Բռնակալական կառավարութիւններն էլ՝ հիւսիսից եւ հարաւից չրջապատելով՝ հնարաւորութիւն չեն տուել ազատ զարգանալու, դպրոցներ ունենալու, թերթեր հրատարակելու, եւ այդ է պատճառներից մէկը, որ ազգի մեծամասնութիւնը չկարողացաւ ըմբռնել, իւրացնել յեղափոխական տեսակէտը, չնայած այդ այնքան սովորական էր ազատատրուած փոքրիկ ազգութիւնների կեանքում:

Պէտք է ճանաչել այդ մտածողութիւնը եւ այդ էր պատճառը, որ արտասահմանում հիմնուեցաւ «Դրօշակ» թերթը, որ այնքան խոշոր դեր է խաղացել

վերջին մի քանի տասնամեակի ընթացքում: Բացի այդ եղան եւ մի քանի փոքրիկ հրատարակութիւններ՝ թարգմանութիւններ բալկանեան ազատագրական չարժման պատմութիւնից, յեղափոխական թըռուցիկներ, որոնք սկզբնական շրջանում այնքան էլ խոշոր դեր չեն խաղացել:

Գլխաւորը բնթանցի պրօպագանդան էր, կենդանի, սահուն խօսքը, որ հնչում էր Վասպուրականի եւ Մուշի խրճիթներում, դպրոցի չորս պատերի մէջ, բազմաթիւ երեկոյթներում եւ համախըմբումներում — կնունքի, հարսանիքի և զանազան ցաւրճութիւնների ժամանակ:

Ահա ձեզ աշակերտական, ուսանողական խըմբեր, որոնք չաբաթական մի անգամ նիստ են ունենում, կարդում են Րաֆֆու, Ահարոնեանի գրուածքները, հետաքրքրութեամբ ունկնդրում են «Դրօշակ»-ի յեղափոխական մտքերին ու վիճաբանութեան միջոցով վերլուծում այդ բոլորը, հակակշռում հին հասկացողութիւններին եւ ահա պայքարը պատրաստ է՝ հօր եւ որդիների միջեւ, սկսւում է ծաւալւել այդ չարժումը, խրամատան աւելի լայնանում է եւ նոր սերունդը կարողանում է ունենալ եւ նոր գաղափարներ, գործունէութեան նոր եղանակներ:

Ահա ձեզ յեղափոխական ուսուցիչները՝ Պետոն, Մարգար վարժապետը, որոնք աղքատի ցնցոտիներում պտտում են հայ գեղջուկի տներն ու քարոզում, հասկացնում, հոդ պատրաստում, ըմբոստութիւն սերմանում...

Ահա ձեզ Զաւարեանը Տրապիզոնի շրջանում, ուսուցչի պաշտօնով, որ իր չորս կողմն էր հաւա-

քել ծաղիկ երիտասարդութեան եւ նրանց նոր հո-
րիզոններ էր բաց անում:

Ահա ձեզ յեղափոխական գործիչ Ֆ. Միքայէլեա-
նը, Բալախանու նաւթարդիւնաբերողական շրջան-
ներում, ուր զանազան վայրերից գարնային երի-
տասարդներ էին հաւաքւել՝ բաղդ որոնելու, աշխա-
տանք վնտռելու. ահա նա, ծխի եւ մթի մէջ նստած,
քարոզում է ազատութեան եւ ըմբոստութեան դաղա-
փարները, դուրս է հանում ապագայ հերոսներին,
ցոյց է տալիս նրանց նոր ճանապարհ, Գարնան եր-
գած Ազատութեան ճանապարհը... Եւ այսպէս վե-
րեւից մինչեւ ներքեւ, քաղաքներից մինչեւ դիւղ,
մտաւորականից աշխատաւոր, միեւնոյն մտածողու-
թեամբ են տարւում, մտքի նոր կապակցութիւններ
են երեւան գալիս եւ մինչեւ այդ ստրկական կեանքը
փոխւում է պայքարի, կռւի, ըմբոստութեան եւ
վերջնական նպատակով՝ ազատութեան:

Մարդիկ սկսում են այլ, նոր բանի մասին մտա-
ծել: Դաշնակցութեան նախնական պրօպագանդայի
գլխաւոր եւ դրական յատկութիւններից մէկն էլ
այն է լինում, որ նրա հիմնադիր-առաջնորդները
հրամաններ չեն արձակում եւ կամ կենտրոններից ե-
լեքտրական կոճակները սեղմելով՝ շարժումներ ըս-
տեղծում, այլ իրենք որպէս հասարակ, հետեւակ
գործիչներ ամենից առաջ են նետւում վտանգի գիր-
կըն ու իրենց օրինակով ոգեւորութիւն ներշնչում:

Մինչեւ այդ յեղափոխական ընտանիքում երե-
ւում էին վատ նախանշաններ՝ յեղափոխական պրո-
ֆէսիոնալ գործիչներ եւ նրանց հետեւող ու նրանց
ծրագիրներն միայն իրագործող բանակներ: Այդ-
պէս չեղաւ Դաշնակցութեան շարքերում, ուր մեծից

մինչեւ փոքր զոհաբերութիւնը, զաղափարի համար նահատակութիւնը դարձել էին պարտադիր և աճիւրաժեստ, որով նա կարողացաւ գրաւել հասարակութեան համակրութիւնը: Եւ իրօք, միայն յեղափոխական պրօպագանդայով եւ կենդանի գործով, օրինակով կարելի կը լինէր փոխոխութեան ենթարկել հայ ժողովրդի հոգեբանութիւնը: Դարերից ի վեր ստրկական պայմաններում եւ ունենալով մէկից աւելի տիրապետողներ, հայ ժողովուրդը կարողացել է յարմարուել տիրող հանգամանքներին եւ ձգակել մի հոգեբանութիւն, որ կարելի է անուանել՝ ստրկական, ենթարկուող, քծնող եւ վախ պարունակող:

Գուցէ այլ կերպ վարուել չէր կարող, եւ նա պարտաւոր էր՝ իր կեանքը եւ գոյքը պաշտպանելու համար ամէն ներելի եւ աններելի միջոցի դիմել, նոյնիսկ հարեւանի դժբաղդութեան պատճառ դառնալ. չգիտենք: Բայց փաստ է, որ հայութեան մէջ պատկառում էին պատուի պաշտպանութեան, արիւնակցին օգնելու եւ թշնամուն դիմադրելու մարդկային հոգուն յատուկ զգացումները:

Ստեղծուել էր մի զգուելի, անտանելի կացութիւն, երբ եղբայրը եղբօր դէմ սիրտ դաւէր, հայրը իր որդու կորստեան պատճառ սիրտ դառնար՝ ապրելու, իր գոյութիւնը քարշ տալու համար: Այդ պատճառով էլ տարածուել էին անձնապաշտութեան, դաւերի, մատնութիւնների, կրօնափոխութիւնների եւ վոխադարձ կասկածի, անվստահութեան դէպքերը: Հայ ժողովրդի հոգեբանութիւնը անբարոյ կանացման էր ենթարկուած: Շատ անգամ օրը ցոլքերով գիւղից փախցնում էին երիտասարդ աղջիկ-

*ներ, հարսներ եւ* մէկը *չէր գտնում՝ իր կեանքը վտանգի ենթարկելու, զոհելու եւ խեղճերի պատիւը փրկելու։*

*Բացակայում էր գաղափարականութիւնը, անձնազոհութիւնը, փոխադարձ պաշտպանութիւնը, ազգային ընդհանուր իդէալը եւ այդ էր պատճառը, որ առաջին յեղափոխականներից յետոյ եւ գլխաւորապէս Դաշնակցութեան գաղափարապաշտ շարքերի անդուլ աշխատանքների շնորհիւ, հայ ժողովուրդը՝ թէ՛ Երկրում եւ թէ՛ Ռուսաստանում սկսում է* զգալ, *հաւատալ, որ նոր մարդիկ են երեւան եկել, նոր բաներ են քարոզում, և որոնք «մեզ պէս չեն»։*

*Եւ երբ առաջին յեղափոխական խմբերն սկսեցին երեւալ, երբ մի քանի գիւղերում զինակիր խմբերն սկսեցին պաշտպանել գիւղացիութեան եւ երբ կախաղանների վրայ պաշտելի յեղափոխականներ ճօճացին, իսկ բանտերը լեցուեցան բանտարկեալներով, հայ հասարակութիւնը փսփսաց, որ «ինչ որ մարդիկ են երեւան եկել, որոնք* իրենց կեանքը *ազգի համար են զոհում եւ հայութեան համար նահատակւում»... Եւ զգացին նրանք, կառավարութեան հարուածների տակ ընկճուած եւ իրենց մարմինը միայն իրենց համար գործ ածող մարդիկ, որ չպէտք է միայն անասնական կեանք անցկացնել, այլ եւ իր կեանքը պէտք է զոհել ուրիշի, հարեւանի, ճնշուածի, ազգութեան եւ ազատութեան համար։*

*Զգաց այդ մեծ համրը եւ կամաց-կամաց շարժուեց, ասպարէզ նետեց իր ծոցից ելած հերոսներ, գիւղական մաքուր, հաւատացող տիպեր, որոնք յեղափոխական հոսանքը յորդացնելով՝ կարողացան*

*կարմել ազգային մեծ չարժումը, որ մեր վերջին տարիներուն միակ պատմութիւնն է:*

*Եւ այսպէս, չնորհիւ անձնուրաց գործիչներուն եւ ղեկավարներուն, չնորհիւ անդուլ ջանքերուն եւ խիզախ գործունէութեան՝ հայ հասարակութիւնը մտաւոր-հոգեկան աշխարհում վերազարթնումի շրջան է ապրում՝ ու խոշոր, զգալի փոփոխութեան ենթարկուում:*

Ինքնապաշտպանութիւն.— *Յեղափոխական պրօպագանդայի երկրորդ կարեւոր կէտը ինքնապաշտպանութիւնն է, որ մեզ համար է հանել, չեփորել է Յ. Յ. Դաշնակցութիւնը: Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է պաշտպանել հակառակորդից, իւրաքանչիւր տուն՝ թշնամուց, իւրաքանչիւր գիւղ՝ աւազակներից, յափշտակիչներից եւ ամէն ազգութիւն՝ բռնութիւնից, ճնշումներից եւ կառավարութեան հալածանքներից: Դա բնական օրէնք է եւ անվիճելի, սակայն անըմբռնելի եւ անկարելի՝ հայ հասարակութեան համար:*

*Պէտք էր սովորեցնել գիւղացիութեան եւ ցոյց տալ, որ այն ժամանակ, երբ քիւրդերն յարձակում են գործում յափշտակելու եւ զգում են որ ո՛չ մի դիմադրութիւն չկայ, աւելի սանձարձակ են դառնում ու լրբօրէն պահանջկոտ. իսկ երբ նրանք տեսնում են որ ամենափոքրիկ դիմադրութիւնը կայ՝ չետ են կենում իրենց դիտաւորութիւնից՝ մի աւելի յարմար ժամանակի թողնելով իրենց ծրագրած արշաւանքը:*

*Մենք շրջապատուած ենք եղել վայրենի եւ թափառական ցեղերով, որոնց օրէնքն իրենց սուրն է. և մի պետութեան հպատակութեան տակ ենք դառնալ,*

որ մինչ խրախուսել է քրիստոնեաների ջարդը, հա-
յածանքը եւ ունեցել ենք Եւրոպայում այնպիսի
«պաշտպաններ», որոնք գործ անելուց աւելի խոս-
տումներ են տւել ու իրար դէմ մրցել: Բնական է, որ
նման պայմաններում, հայ ժողովուրդն իր ազատու-
թիւնը միայն իր ձեռքով պիտի ստանար:

Ի՞նչ էր պէտք: Ցեղափոխական Թուրքիկ խմբե-
րը եւ կամ հայդուկների ընդհարումը բաւական չէ-
ին, այլ անհրաժեշտ էր կռիւը, պաշտպանութիւնը
մասնաւորից ընդհանրացնել, ժողովրդականացնել,
երբ եւ դանկալի արդիւնքները կը տային: Այդ նպա-
տակին հասնելու համար չպէտք էր ամբողջ ժողո-
վուրդը յեղափոխական խմբերի վերածել, այլ ան-
հրաժեշտ էր ինքնապաշտպանութեան բնազդն
արթնացնել եւ գործնականացնել այդ գաղափարը:

Այդ դիտաւորութեամբ՝ յատուկ չրջուն գործիչ-
ներ են եղել, զինակիր խմբեր են երեւան եկել, ո-
րոնց պարտաւորութիւնը պէտք է լինէր զէնք հայ-
թայթել եւ ժողովրդին բաժանել՝ հնարաւորութիւն
ստեղծելով վտանգի րոպէներում պաշտպանելու եւ
թշնամուն ցոյց տալու, որ արթնացում է տիրում
հայութեան մէջ եւ որ հայերը նախկին սարուկները
չեն:

Դժբարին գործ էր այդ, պղում էին յեղափոխա-
կան նախակարապետները: Նրանք իրենց գործու-
նէութեան առաջին չրջանում հանդիպեցին ժողովրդի
դի չկամութեան, վախկոտութեան եւ կասկածին:
Ապա իրար յետեւից երեւան եկան դրամական մի-
ջոցների պակասը, զէնք տեղափոխելու դժոխային
պայմանները, երկու տիրապետող եւ բռնակալ կա-
ռավարութիւնների հետապնդումներն ու դաչնը՝

հայ յեղափոխութեան դէմ եւ ի վերջոյ մատնութիւնները, լրտեսները, քրդական դիմադրութիւնները եւ դանազան խաւերի ու դասերի դիտակցական ու ծրագրուած ընդդիմութիւնները:

Պէտք էր յաղթահարել այս բոլորը: Նախնական, նոր և անկազմակերպ ուժերով անկարելի էր եւ մնում էր միայն մի ճանապարհ՝ սեփական օրինակի եւ կռւի:

Վասպուրականի եւ Մուշի շրջաններում, ուր դիւտուրապէս կենտրոնացած են եղել յեղափոխական գործողութիւնները, կազմւած են եղել տեղական ուժերից թոռւցիկ խմբեր, որոնց պարտաւորութիւնն է եղել շրջակայ գիւղերին օգնութեան հասնել՝ քրդական եւ թրքական յարձակումներից պաշտպանելու համար:

Երբ մի քանի նման յաջող դիմադրութիւններ են տեղի ունեցել, այն ժամանակ կամաց-կամաց ժողովուրդն սկսել է հասկանալ դէնքի եւ դիմադրութեան անհրաժեշտութիւնը:

Նրանց հասկացրել են, որ միմիանակ աստիճանաբար հիւծւելու, տանջւելու, աշխատելու՝ բէկերի եւ աղաների համար, ամուսնանալու քրդերի կրքերին բաւարարութիւն տալու և կամ թէ աղքատանալով կամաց-կամաց գերեզման իջնելու, աւելի լաւ է կռւել, վրէժ լուծել, արիւն թափել, պատիւը, ազատութիւնը պաշտպանել եւ ապա մեռնել: Այդ հրաւէրին սկզբում արձագանգ տւին շատ քչերը, միայն անհատները, որոնց յետեւից երեւան եկան խմբեր եւ ապա գիւղեր, համայնքներ: Ինքնապաշտպանութեան բնազդը երեւան եկաւ գիւղացիական շրջաններում և դրան որպէս արդիւնք՝ 95—96 թւի

*կառորածներէն ժամանակ տեսանք հարիւրաւոր գիւղեր ազատուած՝ ինքնապաշտպանութեան շնորհիւ։*

*Ինքնապաշտպանութիւնը ո՛չ միայն կարեւոր էր քրդական յարձակումներէն պաշտպանուելու համար, այլ անհրաժեշտ պայման էր՝ յեղափոխական մեծ շարժումներէն ժամանակ։*

*Իւրաքանչիւր մի ապստամբական շարժման եւ կամ ահաբեկման ժամանակ, երբ կառավարութիւնն հնարաւորութիւն չի ունենում ձերբակալելու «խռովարար»ներին եւ պատժելու, նա իր կատաղութիւնը թափում է խեղճ, անպաշտպան գիւղացիութեան վրայ։*

*Քանաձ գիւղացիութիւնը նման դէպքերում, կարող է դիմադրել, ուժ ցոյց տալ կառավարութեան, որով վերջինս աւելի չափոթ դրութեան մէջ կը ընկնի, իսկ ժողովուրդն աւելի քիչ վնաս տալով՝ չուտ կը յեղափոխականանայ։*

*Գիւղերի պինման եւ ընդդիմութեան ժամանակ կառավարութիւնը ստիպուած կը լինի իր ուժերը բաժանել, ցրել զանազան կողմեր եւ այդպիսով յեղափոխական ուժերը կարող կը լինին իրենց որոշեալ նպատակին հասնել։*

*Բացի այդ, երբ ժողովրդի դիմադրութիւն լինի, այդ արդէն չի նկատուի միայն խռովարարների եւ կամ եկուորների գործ, այլ բուն ժողովրդական շարժում, դժգոհութիւն, որ իր բարոյական մեծ նշանակութիւնն ունի. իսկ եւրոպական հասարակական կարծիքով՝ դատապարտելի քայլ չի նկատուի։*

*Այդ ուղղութեամբ խոշոր աշխատանք է թափուած եւ եռանդ ցոյցնուած, եղել են յատուկ ուսումնասիրութիւններ եւ հրատարակութիւններ, իսկ յե-*

*դափոխական դրականութեան մէջ՝ մտածողութեան կարեւոր կնճիռներից մէկն է եղել:*

*Ժողովրդական ինքնապաշտպանութիւնը, որ այնքան չուտ ծագում առաւ եւ այնքան ուշ զարգացաւ, կարող ենք գոհունակութեամբ չեշտել, որ իրեն նպաստող, ոգն տուղ եւ առաջնորդող ճանապարհներ է ունեցել՝ ահաբեկումներն ու կազմակերպւած, զինւած հայդուկային խմբերի կռիւները:*

Ահաբեկումներ.— *Յեղափոխական կուսակցութիւնները իրենց գործունէութեան ընթացքում հանդիպում են բազմաթիւ խոչընդոտների, որոնց վերացրնելն անհրաժեշտ է նկատւում՝ գործի յաջողութեան տեսակէտից: Իրենք լինելով հակառակ սպանութիւնների, արեան եւ զոհերի, ստիպւած են, սակայն, նոյն միջոցներին դիմել: Բռնութիւնը կարելի է տապալել միայն կազմակերպւած ուժով եւ այդ է պատճառը, որ բոլոր ազատագրական շարժումների ժամանակ ահաբեկումներն ու զինւած ապստամբութիւնները իրենց խոշոր դերն են խաղացել:*

*Հայկական իրականութեան մէջ եղել են, ճիշդ է, հոսանքներ, որոնք կուի այդ միջոցները որդեգրել են եւ ծրագրում որոշ էջ յատկացրել, բայց ո՛չ մէկը այն սխատեմայի չի վերածել, իւրացրել, ինչպէս Հ. Ց. Դաշնակցութիւնը եւ իր կազմակերպւած շարքերը:*

*Անհրաժե՞շտ էին ահաբեկումները, եւ ի՞նչ նպատակի սիտի ծառայէին:*

*Բռնակալ կառավարութիւնը, հպատակ եւ ազատութիւն պահանջող ազգութիւններին ճնշելու համար իր տրամադրութեան տակ ունի զօրք, դրամ,*

բանտեր, կախաղան, աքսորավայրեր, ոստիկան-
ներ, լրտեսներ եւ ամէն ինչ: Այդ բոլոր միջոցներով
նա ցանց է պատում, որսում երկրի յեղափոխական
տարրերին եւ ապա անհետացնելով՝ խեղդում շար-
ժումը:

Պէտք է նոյն միջոցներով էլ կռուել կառավա-
րութեան և իր պաշտօնեաների դէմ, վախ ազդել նը-
րանց վրայ, հալածել եւ տապալել լրտեսներին,
գրաւել զանազան հիմնարկութիւններ եւ ցոյց տալ
որոշ ուժ, որից պատկառէին եւ ի նկատի առնէն: Այդ
միջոցներից մէկը տեռօրն է, ահաբեկումը, որ հաւա-
սարապէս ուղղուած է երկու թշնամու դէմ՝ արտա-
քին եւ ներքին:

Արտաքին թշնամին կառավարութիւնն է՝ իր
հիմնարկութիւններով, պաշտօնեաներով եւ լրտես-
ներով: Նրանք, երբ նկատում են որ ամէն գաղտնու-
թիւն կատարելուց, անմեղ արիւն թափելուց եւ հա-
զարաւոր դիակներ փռելուց յետոյ անպատիժ են մը-
նում և նոյնիսկ շքանշանների արժանանում՝ բարձր
իշխանութեան կողմից, աւելի համարձակ եւ սան-
ձարձակ են դառնում եւ առաւել խստաբարոյ եւ
գազանավայել միջոցների դիմում՝ յեղափոխութիւ-
նը ճնշելու:

Իսկ երբ այդ բոլորից յետոյ անյայտ եւ գաղտ-
նի մարդիկ, անձնուրացութեան գեղեցիկ օրինա-
կով, վերջ են տալիս նման տիպերին, այն առեն ի-
րենց փոխարինող նորերն աւելի զգոյշ, բարեհամ-
բոյր եւ խաղաղասէր են լինում:

Երբ միաժամանակ քաղաքի զանազան կենտրոն-
ներում եւ կամ բազմաթիւ գիւղերում իրար յետե-
ւից գերեզման են ուղարկւում լրտեսներ եւ կեղե-

*քիչներ, այն ժամանակ կառավարութիւնն զգում է, որ իր գոյութիւնը վտանգւած է, որ իր դէմ կռւող ուժ կայ. իսկ ժողովուրդը ուրախանում է, որ իրեն պաշտպանող աներեւոյթ, բայց հարազատ անհատներ են երեւան եկել:*

*Փոխ հատուցման գաղափարն է այդ, որ այնքան կարեւոր դեր է խաղում քաղաքական բնոյթ կրող կռիւների ընթացքում:*

*Ահաբեկումները, ուրեմն, պատժելով կառավարութեան յանցապարտ ներկայացուցիչներին, մի կողմից վախ են ազդում, սարսափեցնում են, իսկ միւս կողմից՝* դաստիարակում ուրիշին *եւ միւսներին:*

*Արտաքին տեսքը իր գործողութեան ուղղութեամբ երկու մասի է բաժանւում՝* երկրորդական *եւ կենտրոնական:*

*Երկրորդական ահաբեկումների տակ մենք պէտք է հասկանանք տեղական, լոկալ բնաւորութիւն կրող եւ երկրորդական պաշտօնեաների մահափորձերը: Գիւղերում, քաղաքներում եւ այլ շրջաններում կատարւած դէպքերը միայն տեղական բնաւորութիւն են կրում եւ ազդում իր շրջանի հասարակութեան վրայ: Դրանց անուններն իրենց սահմաններից դուրս չեն ելնում եւ մեծամասնութեան էլ անծանօթ մնում: Դրանց գործադրողները տեղական մարմիններն են եւ դրանց թիւը հարիւրներով կարելի է հաշւել: Դրանք անհրաժեշտ են՝ ճանապարհ հարթելու եւ կազմակերպական չարքերն ուժեղացրնելու համար:*

*Դրանց շրջանակը կազմում են գիւղապետը, լրտեսները, ոստիկանները, մատնիչները, զաւառա-*

պետները եւ զանազան գիւղական պաշտօնեաները։

Եթէ սխալները, թիւրիմացութիւնները պատահէն, միայն այդ շրջանների ահաբեկումների մէջ կը լինին։ Եթէ որոչ անարդար, չստուգած եւ միայն կասկածով կատարուած դէպքեր լինին՝ միայն երկրորդական ահաբեկումների շրջանակում կը լինին։ Փակագծի մէջ չեշտենք, որ սխալ դէպքեր, արդար զոհեր կարող են պատահել և այդ այն ժամանակ վնասակար է և արժանի վերացման, երբ չարունակական է, կրկնուող և սիստեմայի վերածուած։ Իսկ երբ դէպքեր յանկամայից բացառութիւններ են, դրանք անխուսափելի են եւ ո՛չ դատապարտելի։

Գծելով երկրորդական տեռօրի շրջանակը, ես կարող եմ ասել, որ արդէն յայտնի են կենտրոնական տեռօրի ենթակաները։

Նշանաւոր վալիներ, որոնց գազանութիւնները յայտնի են ո՛չ միայն իրանց վիլայէթի մէջ, այլ եւ մի ւս բոլոր վիլայէթներում, Պօլսում և հայկական այլ շրջաններում ,որոնք իրենց խստութեամբ եւ կոտորածներ սարքելու ընդունակութեամբ վազում են իւրաքանչիւր մի հայաչատ շրջան՝ խեղդելու եւ ճնշելու սպառամբական չարժումները, եւ որոնք նոյնիսկ կարողացել են անուն վաստակել եւրոպական մամուլում եւ հասարակութեան մէջ։

Նախարարներ, որոնք աչքի են զարնւում իրենց հայատեացութեամբ եւ անազորոյն մտածողութեամբ, որոնք տարիներ չարունակ հակահայկական հալածանքների կենտրոնական դերակատարներն են հանդիսանում, որոնք կառավարում են բոլոր կոտորածներն ու հալածանքները եւ որոնց արիւնկզակ

*ուղեղը վարակում է իր շրջապատն ու ստեղծում իր նման բորենի կամակատարներ՝ շրջաններում, եւ վերջապէս, որոնց միայն անունը սարսափ է ազդում ժողովրդի վրայ։*

Սուլթաններ, *որոնք ստորագրում են կոտորածների հրամաններ, որոնք տասնեակ տարիների ընթացքում հետապնդում են ոչնչացման ծրագիրը եւ որոնց խորհրդաւոր մենակեցութիւնն ու անձեռնմըխելիութիւնը՝ կրօնական ազդեցութիւն ունի հաւատացեալների վրայ, եւ որոնք մարմնացնում են իշխանութեան եւ օրէնքի հասկացողութիւնը։*

*Նշանաւոր* պետական հիմնարկութիւններ, ուր *կենտրոնացած են կառավարութեան բազմաթիւ պաշտօնեաներ եւ դօկումաններ, ուր ամփոփուած են որոշ ծրագիրներ եւ տեղաւորուած՝ հարստութիւն, դրամ, անհրաժեշտ թղթեր եւ որոնք ժողովրդի աչքում* անհասանելի *են ու* անմերձանալի*։ Ահա դրանք են այն շրջանակները, ուր մուտք է գործում կենտրոնական տեռորը։*

*Արտաքին ահաբեկումների կողքին մենք պարտաւոր ենք շեշտել եւ ներքին պատիժները, որոնք կենտրոնացած են մի ազգի ներքին կեանքում։*

*Դրսի հակառակորդները մեզ համար պարզ են, նրանք արդէն մեր թշնամիների շարքումն են եւ առաջին իսկ հայեացքից նրանց ճանաչում ենք մենք եւ գիտենք թէ ո՞վքեր են եւ ո՞ւր են։ Ներքին թշնամին՝ դժուար է գտնել եւ իմանալ, որովհետեւ նա քո բանակի մէջ է, քո թիկունքում, քո տան անդամներից եւ շատ անգամ աւելի «սրտցաւ» ազգային կարիքների հանդէպ։ Նրանք բարեկամ են՝ երբ խօսում են, ե՛ւ թշնամի՝ երբ գործում են։ Նրանք գրաւուած*

են մատնութիւններով, դաւեր լարելով, հակայեղափոխական պրոպագանդ մղելով եւ աւելի դժուար է նրանց գտնել, որսալ: Միւս կողմից՝ նրանք վարակում են հասարակութեան իրենց ախտաւոր յատկութիւններով, անբարոյականացնում են աղքատ դասակարգին՝ ցոյց տալով նրանց դրամ աշխատելու կեղտոտ ճանապարհը եւ դժուարացնում են յեղափոխական գործունէութիւնը, որովհետեւ շարքերն սկսում են աւելի նօսրանալ եւ իրար կասկածանքով վերաբերուել, մանաւանդ՝ երբ նման մի տիպ իրենց միջից է ելնում:

Դպրոցը, քարոզը, խրատները, բարոյական պատիժները, յորդորները դրականապէս ո՛չ մի նշանակութիւն չունին նրանց համար, այլ միայն մահուան պատիժը վերջնականապէս կարող է արմատախիլ անել եւ կամ նուազեցնել նրանց:

Ներքին տեռորը մի խստագոյն անհրաժեշտութիւն է եւ ո՛չ մէկ յեղափոխական կուսակցութիւն չի կարող հրաժարուել մաքրագործող այդ միջոցից:

Վերլուծելով ահաբեկումների տեսակները, այժմ անհրաժեշտ է ընդգծել նրա ազդեցութիւնը:

Ահաբեկումը յեղափոխական կռուի կարեւորագոյն միջոցներից մէկն է եւ ուղղուած է գլխաւորապէս կառավարութեան պաշտօնէութեան եւ Ներքին Զարիքի դէմ: Բացի այն որ շատ տիպեր մէջ տեղից վերանալով, զանազան շրջանակներ աւելի նօրմալ վիճակի մէջ են ընկնում. բացի այն, որ դրանով դաստիարակւում են պաշտօնեաները, որոնք աշխատում են աւելի զգոյշ լինել, եւ բացի այն, որ հարւածւում ու տապալւում են պետութեան վնասակար սիստեմայի տաղանդաւոր ներկայացուցիչները, ո–

րոնց բացակայութեամբ թուլացում եւ քայքայում առաջ կը գայ, ահաբեկումներն ունին եւ յեղափոխական դաստիարակութեան նշանակութիւն, այն՝ պրօպագանդայի իւրայատուկ ձեւ է:

Ահաբեկչական գործողութիւնները խոր տպաւորութիւն են թողնում թմրած ժողովրդի վրայ, որի համար զանազան պաշտօնեաններ անհասանելի են եւ անպատժելի: «Հսկայ համրը» կարողանում է կամաց-կամաց ըմբռնել, որ նրանք էլ կարող են պատժուել, եթէ միայն կամք լինի եւ տրամադրութիւն, որ նրանք էլ նոյն մսից եւ ոսկրից են եւ տաք գնդակը կարող է եւ նրանց դէպի մահ առաջնորդել: Եւ որովհետեւ դարերի ընթացքում իր սրտի մէջ կուտակել էր բարկութիւն, կատաղութիւն՝ հանդէպ պաշտօնեաների, որոնց կարելի է պատժի ենթարկել, ահա սկսում են երեւան գալ, ծնուել խիզախ տիպեր, անվեհեր հոգիներ, որոնք յեղափոխական ասպարէզը նետուելով՝ ստուարացնում են շարքերը:

«Իւրաքանչիւր մի ժողովրդի երկրի մէջ, ասում է ռուս նշանաւոր յեղափոխական Գարդենինը, բաւականին խոր, թաքնուած, պօտենցիալ անբաւականութիւն կայ: Եւ որպէսզի այդ թաքնուած դժգոհութիւնը երեւան հանուի, դուրս բերւի, այդ պօտենցիալ եռանդը վերափոխել կինետիկ եռանդի, դորա համար ռուսական կեանքում (ես կ'աւելացնէի իւրաքանչիւր ստրուկ ժողովրդի կեանքում.—Ա. Նոր.) պրօպագանդայից եւ մտքերի պատրաստութիւնից դուրս՝ պակասում է մի ինչ որ այլ բան— պակասում է իրական օրինակը, որ գործով աւելի քան խօսքով ազատում է այդ թաքնուած եռանդը»:

Հայ ժողովուրդը, դարերի ընթացքում իր մէջ

պարպացրել է տուրկական հոգեբանութիւն, ընկել է կամազուրկ դրութեան մէջ եւ նրան այդ դրութիւնից հանելու համար, ճիշդ է, դպրոցները, ուսումը, պարպացումը իրենց խոշոր նշանակութիւնն ունին, բայց դրանք չարունակական են եւ ո՛չ անմիջական: Այդ դրութիւնից հանելու համար իրեն ճնշող ուժի դէմ մի այլ ուժ երեւան պիտի բերել՝ կլանող, խորհրդաւոր եւ վախ ազդող: Միայն նման դէպքերում նորա հոգեբանութիւնը կարող է անմիջական յեղաշրջման ենթարկուել եւ դրական որոշ արդիւնքներ տալ: Երբ նա լսում է եւ կամ տեսնում թէ՝ ի՛նչպէս «ամենաուժեղ, անյաղթելի եւ սուրբանի սիրելի վալին» տապալւում է, պզում է որ մի այլ ուժ կայ, որին անտեղեակ է եղել եւ վնտռում է ու գտնում:

Մասսայական հոգեբանութեան արտայայտիչ կողմերից մէկն է այդ եւ մենք ամենայն իրաւամբ կարող ենք չեշտել, որ եթէ վերջին երեսուն տարւայ ընթացքում յեղափոխական ահաբեկումները եւ շարժումները չլինէին, հայ ժողովուրդը դեռ երկար պիտի սպասէր՝ ազգային վերազարթնումի համար:

Բացի այդ բոլոր վերոյիշեալներից, ահաբեկումները անհրաժեշտ նախապատրաստողներ են աւելի մեծ յեղափոխական շարժումների համար: Նրանք ճանապարհ հարթողներ են. նրանք ուժեր երեւան հանող են եւ հասարակութեան տրամադրութիւնները պատրաստողներ:

Ամփոփելով ահաբեկման շուրջ արտայայտած մտքերը, մենք կարող ենք եզրակացնել, որ այդ՝ յեղափոխական կուռ միջոցներից մէկն է, յեղափոխական դաստիարակութեան, նորա թաքնւած ուժերը երեւան հանելու, տրամադրութիւնները պատրաս-

տելու եւ շարքերը խտացնելու անհրաժեշտ պայմաններից մէկն է:

Իր բոլոր պակասութիւններով հանդերձ տեսորը յեղափոխութեան գործելակերպի, տաքտիկայի անբաժան եւ երկարատեւ մասերից է եւ Հ. Ց. Դաշնակութիւնը չէր կարող անտեսել այն:

Ապստամբական ձեռնարկներ.— Յեղափոխական գործելակերպի այս աստիճանը բարդ եւ բազմակողմանի աշխատանքի անհրաժեշտութիւնն ունի: Այդ այն գործողութիւններից չէ, որոնք իրագործւում են սկզբից եւ եթ, անմիջապէս: Դորա համար պէտք են պատրաստութիւններ եւ որ գլխաւորն է, քաղաքական նպատակայարմար կօնիւնկտուրա, հեռանկար: Յեղափոխական պրօպագանդան, ինքնապաշտպանութիւնը եւ ահաբեկումներն աւելի դիւրին են եւ իրագործելի, քան ապստամբական ձեռնարկները. դրանք նախապատրաստող են, տրամադրութիւններ բարձրացնող՝ աւելի լայն եւ ծաւալուած ժողովրդական շարժումների համար: Ի՞նչ է ապստամբական ձեռնարկը: Ահաբեկչական մի դէպք կարո՞ղ է համարուել ապստամբութեան եւ կամ շարժման մի որեւէ մասը թէ ոչ:

Ապստամբել նշանակում է ընդվզել, գլուխ բարձրացնել, բողոքել տիրող կարգերի դէմ, աշխատել տապալել այն, կանխօրօք պատրաստուած, կազմակերպուած միջոցներով: Պատահական քաղաքացիների մի քանի ցոյցերը եւ կամ պաշտօնեաների սպանութիւնը մասնակի բնոյթ կրող ընդվզումներ են, աւելի տեղական, անհատական բնոյթ կրող՝ քան ընդհանրական:

Ահաբեկչական մի որեւէ ակտ, որ կատարուած է

քաղաքական հողի վրայ, ապստամբութիւն է այն մարդով, որ ուղղուած է տիրող կարգերի դէմ եւ նպատակ ունի տապալելու նորա որեւէ ֆունկցիան՝ պաշտօնէութիւնը:

Ահաբեկչական գործողութիւնը ապստամբութիւն չէ, որովհետեւ այն լայն, ծաւալուած եւ յստակ պատրաստութիւններ չունեցող երեւոյթ է եւ անմիջական արդիւնքը՝ կառավարութիւնը դիմողութեան բերելու եւ կամ՝ եւրոպական միջամտութիւնը հրաւիրելու ուժը չունի:

Ահաբեկումներ կարելի է կատարել հասարակութեան իւրաքանչիւր տրամադրութեան ժամանակ, բայց ապստամբութեան ժամանակ՝ ժողովրդի համակրութիւնն ապահովուած պիտի լինի:

Ահաբեկումներ կարելի է ամէն ամիս, շաբաթ եւ կամ օր կատարել, իսկ ապստամբական ձեռնարկների համար անհրաժեշտ են՝ ժամանակ, աշխատանք եւ կանխապատրաստութիւններ:

Եթէ այսպէս շարունակելու լինենք համեմատութեան դնել, տարբերութիւնները գտնել, մենք շատ հեռու կ'ելթանք: Մեր նպատակն էր ցոյց տալ եւ բացատրել, որ ապստամբական ձեռնարկները աւելի լայն, խոր բնաւորութիւն են կրում, մօտակայ, որոց նպատակ ունին եւ ժամանակի ու պատրաստութեան՝ կարիք:

Մինչեւ այդ պէտք է ժողովրդի հոգեբանութիւնը փոփոխութեան ենթարկել, յեղափոխականօրէն տրամադրել եւ համակրութիւնն ապահովել: Այդ նպատակին հասնելու համար շարքերը պիտի ստուարացնել, պրօպագանդան ուժեղացնել եւ ահաբեկումները բազմացնել: Երբ այդ բոլորն իրենց կարգին

*չարժման մէջ են, երբ որոշ չափով հողը պատրաստ է, անհրաժեշտ է նմանապէս* որոնել *քաղաքական նպատակայարմար տրամադրութիւններ եւ կոմբինացիաներ, որ նման ձեռնարկները կարողանան դըրական արդիւնք տալ: Իսկ եթէ դրանցից որեւէ մէկը պակասում է, յամենայն դէպս այդ ժողովրդի համակրութիւնը չպիտի լինի:*

*Ապստամբական ձեռնարկների համար միւս միջոցերից աւելի անհրաժեշտ են՝* մարդ, դրամ *եւ* զէնք: *Մարդ գտնելու միջոցն աւելի դիւրին է, քան զէնքի, պարզ այն պատճառաբանութեամբ, որ մեր դաժան իրականութիւնն ինքն է արտադրում բազմաթիւ բողոքներ, ըմբոստներ, որ մեր դժոխային պայմաններն աւելի են պրօպագանդ անում, յեղափոխականացնում ժողովրդին եւ որ «հալածել՝ նշանակում է տարածել» սկզբունքը կիրարկւած է եւ մեր իրականութեան մէջ:*

*Ամենօրեայ չարչարանքներն ու սպանութիւնները, կոտորածներն ու բանտերը, թալաններն ու բռնաբարումները այն գլխաւոր ազդակներն են, որոնք դառնութիւն եւ մաղձ են քամում իւրաքանչիւր ժողովրդի հոգու մէջ, տրամադրում նրան մի ելք գտնելու, ազատւելու, ըմբոստանալու. եւ այդ է պատճառը, որ երբ ապստամբութեան առաջին շեփորն է հնչում, շատերի սիրտը թունդ է ելնում, նրանք ելեքտրականանում են եւ խիզախօրէն առաջ նետւում՝ բարձրացնելու եւ իրենց արեամբ սրբագործելու Յեղափոխական Դրօշի անհրաժեշտութիւնը: Մարդ աւելի դիւրին է գտնել՝ քան զէնք եւ վերջինս աւելի շատ է գտնւում՝ քան դրամ:*

*Բոլոր ազգութիւնների ապստամբական չար-*

ժումների ժամանակ դրամը առաւելութեամբ է դըր-
նըւել, բոլորն էլ նւիրաբերել են ուրախութեամբ, իսկ մեր մէջ՝ հարուստների գծծութեան պատճառով՝ գործի այդ անհրաժեշտ մասը պակասել է:

Թողնենք այդ, որովհետեւ դեռ առիթներ շատ պիտի ունենանք վերադառնալու այդ ցաւոտ, ժահրոտ խնդիրներին եւ պատմութեան անէծքին յանձնելու այն հարուստներին, որոնք տասնեակ հազարներ են ծախսում՝ բազմաթիւ թիկնապահ ոստիկաններ պահելու եւ գլանում են հարիւրներ տալ՝ Ազգային Ազատութեան սրբազան գործին:

Դառնանք ապստամբական շարժումներին: Ներկայացնելով դրանց էութիւնն ու իրագործման անհըրաժեշտ պայմանները, ես կ՚անցնեմ դրա նպատակայարմութեան:

Իւրաքանչիւր մի յեղափոխական շարժում, որ կարողանում է շփոթ առաջ բերել միապետական կառավարութեան շրջանակներում եւ վարկաբեկում՝ ժողովրդի աչքում, նպատակայարմար է:

Ժողովուրդը հպատակւում է կառավարութեան, որովհետեւ նրա մէջ ուժ, կարգ ու կանոն է տեսնում եւ որոշ կարո ւթիւն: Իսկ երբ ահաբեկումներով, ապստամբական շարժումներով ցոյց կը տրուի որ կառավարութիւնն անկարող է զսպել, վերջ տալ, ձերբակալել եւ պատժել, այն ժամանակ ժողովրդի հոգեբանութիւնը կը փոխւի, նա այլ եւս չի հաւատայ կառավարութեան ամենակարողութեան, այլ ընդհակառակը կը սկսի համակրել յեղափոխական շարժման:

Եւ երբ մի անգամ այդ խրամատը բացւեցաւ, երբ դարերից ի վեր ունեցած հաւատը խախտւեցաւ, երբ

արտաքին կարծեցեալ ներդաշնակութեան մէջ այդ ճեղքուածքն առաջ եկաւ, այն առեն արդէն կարիք պիտի զգացւի նոր կառավարութեան, նոր կարգերի եւ նոր մարդկանց:

Ստեղծելով մի անգամից այսպիսի դրութիւն, այն ժամանակ կարելի կը լինի օգտագործել բոպէն եւ աւելի լայն ծաւալ տալով՝ առաջ բերել ընդհանուր յեղափոխութիւն եւ տալ հին կարգերի տապալում:

Երկրորդական ահաբեկումները մասնաւոր չըրջանակի մէջ որոշ տպաւորութիւն, ազդեցութիւն են թողնում. կենտրոնական տեռորը՝ սարսափ է ազդում և դաստիարակում, իսկ ապստամբական ձեռնարկը՝ իր կետեւից է քաշում ժողովրդի թէ՛ համակրութիւնը եւ թէ՛ գործողութիւնները:

Ապստամբական ձեռնարկները, եթէ նրանք չափանակական բնոյթ են կրում եւ իրար կետեւից երեւան գալիս որոշ չրջաններում, պատրաստում են այդ մասի հասարակութիւններին եւ երբ ընդհանուր ապստամբութեան դրօշն է բարձրանում, այն ժամանակ բոլոր դժւարութիւնները մէջտեղից վերացած են լինում եւ չարժումը կարողանում է անարդել իր նպատակին հասնել: Ապստամբական ձեռնարկներ ունեցել ենք եւ այն էլ յաջող կազմակերպած, բայց ընդհանուր ապստամբութեան, դժբաղդարար, օրինակ տալ չենք կարող եւ այդ մեր չարժման պակաս կողմերից մէկն է:

Դաշնակցութիւնից յառաջ եղել են Հնչակեան որոշ խմբակներ՝ Զէյթունում եւ Սասունում, որոնք տեղական տրամադրւած եւ պատրաստի ժողովրդի ղլուխ անցած՝ ապստամբութեան դրօշ են պարզել:

Դրանք, իմ հայեացքով, սխալ եւ անժամանակ ձեռնարկներ են եղել, որոնք եկել անցել են և խոր, դաստիարակող հետք չեն թողել, ինչպէս Բանկ-Օտտոմանը, Խանասորայ Արշաւանքը եւ կամ Սասունի 904 թւի ապստամբութիւնը:

Դաշնակցութիւնը, որպէս առողջ յեղափոխական կազմակերպութիւն, կռի՛ւ է յայտարարել Թուրք բռնակալութեան դէմ. հասկանալով այդ կռիւը իբրեւ շարունակական, կազմակերպուած միջոց, իր տրամաբանական զարգացման աստիճաններով վերածել է այն՝ որոշ եւ յստակ սիստեմայի:

Այդ է Հ. Յ. Դաշնակցութեան յաջողութիւնների գլխաւոր ազդակներից մէկը:

Դեռ 1877-ի Ռուս-Տաճկական պատերազմից յետոյ էր, երբ ճնշուած, ստրուկ Բուլղարիան՝ ապստամբական շարժումներից յետոյ իր ազատութիւնն ստացաւ եւ երբ կոմս Իգնատեւ յայտարարեց Ռուսճուգեան վարդապետին, որ հայերի անպատրաստութեան պատճառով նրանք չեն կարող բաղձալի ազատութիւնը ձեռք բերել:

Դեռ Բեռլինի վեհաժողովից յետոյ էր, երբ Մեծ Ծերունին, այն ատեն յեղափոխական եւ յանդուգն Խրիմեանը, դատարկաձեռն վերադարձաւ եւ «Երկաթէ շերեփի» քարոզը կարդաց, յայտարարելով, որ միայն կռւով, զէնքով կարելի է քաղաքական տանելի պայմաններ ստեղծել:

Դեռ շատ ժամանակներ առաջ նշանաւոր եւրոպացի բարեկամներ մեզ ուղղութիւն էին ցոյց տւել եւ կռւի անհրաժեշտութիւնը յիշեցրել, իսկ դրանցից ամենավերջիններից՝ պատմաբան եւ Արեւելեան Հարցի ուսումնասիրող Էտուար Տախօ-ն յայտնել է

այն միտքը, որ «77–ի պատերազմի ժամանակ հայերը չմղեցան ազգային մեծ ապստամբութեան մը», որի համար էլ ազատութիւն չտրուեցաւ:

Հայկական դաժան իրականութեան մէջ, ուր թուրքերն ու քիւրդերը զինուած ժանիքներով, օրէնքով, հրացաններով մեզ են յօշոտում, երբ նրանք անպատիժ չարունակում են իրենց աւերումները, երբ նրանք կոտորածը, թալանը սխատեմայի են վերածել — ուրիշ ո՛չ մի միջոց չկար ազատագրելու, բացի կազմակերպուած եւ կանոնաւոր կռւից:

Դեռ թարմ էին մեր յիշողութեան մէջ 19–րդ դարու ազատագրական չարժումների պատմութիւնը, յունական–սերբական ապստամբութիւնները, սեւլեռեան եւ բուլղարական ընդվզումները, Գարիբալդիի կարմիր–հազարեականներն ու Ցրանսիական Մեծ Յեղափոխութիւնը: Դրանք մեզ համար պատմական հիմունքներ էին եւ ամենայն իրաւամբ «Դրօշակ»ի 95–ի թիւ 5–ի առաջնորդողում չեշտուում էր, որ

«Քանի երկու դասակարգ՝ ժողովուրդ եւ միապետութիւն իրար դէմ են կանգնած, ո՛չ մի կերպ հաշտութիւն չկայ: Պատմութիւնն է այն ուսուցել եւ ցոյց տուել, որ ժողովուրդների յեղափոխութեամբ, նորա արեամբ պիտի խեղդւի միապետութիւնը եւ կախարդան բարձրանայ դլխաւորը, վեհապետը, որ ժողովուրդն ազատօրէն իր բաղդը տնօրինէ եւ ազատ ապրի: Ձենք հաւատում բարենորոգումներին եւ քանի կայ միապետութիւնը, պիտի լինի կռիւ նորա տապալման համար»:

Եւ այսպէս՝ կռիւը որպէս պատմութեան օրէնք:

Եթէ մենք աւելի խորը թափանցենք եւ աշխատենք աւելի հիմնաւորել կռւի թէօրիան, պիտի հե-

ուր գնանք եւ շեշտենք, որ բուսական թէ կենդանական աշխարհում, թռչունների թէ ձկների կեանքում ինքնապաշտպանութեան եւ յարմարեցման երեւոյթները ոչ այլ ինչ են, եթէ ոչ կռուի իւրայատուկ ձեւ: Կենդանական աշխարհում՝ իր ամենաստոր աստիճանից մինչեւ ամենաբարձրը, գոյութեան կռուի ընթացքում, երբ ուժեղներն յաղթանակում են եւ թոյլերին ստիպուած են լինում տեղի տալ, երբ ժանիքաւորներն հարւածում են «մսաւորներին», երբ արագավազները տիրապետում են յետամընացներին, երբ կնճիթաւորները հարւածում են թշնամիներին, երբ սմբակաւորները պաշտպանւում են հակառակորդներից եւ երբ սուր կտուցները կարողանում են հալածել իրենց նեղութիւն պատճառողներին, մենք իրաւունք եւ հիմք չունինք այլ կերպ մտածելու, երբ շրջապատուած ենք յօշոտողներով:

Երբ անձրեւ, ձիւն է գալիս՝ պաշտպանւում ենք, երբ մեր մարմնի վրայ վէրք է երեւան գալիս՝ մտահոգւում ենք եւ աշխատում սպեղանի գտնել, երբ խփում են մեզ՝ պաշտպանւում ենք, ինչո՞ւ ուրեմն լուռ պիտի մնանք քաղաքական հարւածների հանդէպ եւ ինչո՞ւ չպիտի մտածենք ինքնապաշտպանական միջոցների մասին:

Ինչո՞ւ լռենք, աղաչենք եւ քարոզենք, երբ մեզ հալածում են, մեր ազգային գոյութեան են վտանգ սպառնում, մեր ինքնութիւնն են ցանկանում մեռցընել եւ մեր սեփականութիւնը թալանել:

Երբ կռիւ է կենդանական, բուսական աշխարհում, երբ կռիւ է մարդու մարմնի եւ դրսի բնութեան միջեւ, ինչո՞ւ չպիտի եզրակացնենք, որ մեր

քաղաքական գոյութեան համար պէտք է կռիւ եւ զոհաբերութիւն:

Եւ այսպէս, կռիւը որպէս բնախօսական օրէնք:

Քաղաքական կեանքի մէջ միապետական կարգերը իբրեւ նեանդութիւն են, որ աստիճանաբար վարակում են հասարակական օրգանիզմը, մեռցընում են նորա մէջ նախաձեռնութեան ոգին, քայքայում են ներքին հոգեկան աշխարհն ու սահման դնում ազատ մտածողութեան: Աստիճանական այդ վարակումը կարող է լայն ծաւալ ստանալ, անգամահատութեան ենթարկել ամբողջութեան մասերը, ապա հիւծելով, հիւծելով՝ դէպի գերեզման առաջնորդել:

Այդ հիւանդութեան բացիլները միապետութեան հիմնարկութիւններն են՝ դատարան, ոստիկանութիւն, պաշտօնեաներ, որոնք հանդիսանում են որպէս խոզովակներ, նեարդներ, որոնցով հիւանդութիւնը տարածւում է դէպի զանազան կողմեր:

Յեղափոխական կռիւը, ընդհակառակը, բժշկութիւն է, ներսրսկում, թարմ եւ մաքուր արեան երեան գալը, որ կամաց-կամաց տարածելով, աստիճանաբար կլանում է վնասակար տարրերը, կուլ է տալիս բացիլներն ու այսպէս առաջ է բերում հասարակական օրգանիզմի մէջ որոշ ռէակցիա, չըրջում, սիրում է խառնակ վիճակ, կռիւը, ընդդիմութիւնն ուժեղանում են, կատաղի բնոյթ ստանում եւ հասնում իրենց գագաթնակէտին, երբ եւ մի վճռական հարուած՝ վերջ է տալիս սկսուած պայքարին, որից յետոյ կամ հիւանդութիւնն է յաղթանակում եւ սկսում զգալի քայքայումներ մտցնել եւ կամ առողջութիւնն է տիրապետում, երբ եւ մարդը կամ

հասարակութիւնը իր զարգացման նօրմալ ընթացքի մէջ է մտնում:

Յեղափոխական կռիւը — որպէս քաղաքական դիպլոմատիայի, ախտահանութեան միջոց:

Յեղափոխական կռիւը ո՛չ միայն միջոց է, որով կարելի կը լինի որոշ քաղաքական իրաւունքներ ձեռք բերել, ազատութիւն վայելել՝ բռնապետութիւնը տապալելով, այլ եւ միջոց է նոր ուժեր, ստեղծելու, չարքերն ամրացնելու, սուսերացնելու՝ նոյն այդ կռիւը չարունակելու համար:

Դա մի դպրոց է, ուր կախաղաններն են հանդիսանում որպէս դասատուներ, ահաբեկումները՝ որպէս քննութիւններ, ապստամբական չարժումները՝ որպէս դասագրքեր: Իւրաքանչիւր մի դէպք, ամենաթեթեւ կռիւ, ընդվզումութիւն, սերունդներ են կրթում, պատրաստում, աւելի են յեղափոխականացնում եւ մշակում, եւ այդ է պատճառը, որ յեղափոխական իւրաքանչիւր մի դործ հարիւր, հազար անդամ աւելի աչխատանք, արդիւնք է տուել, քան պրոպագանդան եւ խօսքը:

Յեղափոխական կռիւը ստեղծել է եւ բարոյական որոշ մթնոլորտ, ուր մարդիկ սովորել են զոհաբերել, իրենց կեանքը նւիրաբերել ուրիչներին, վեհասրտութեան եւ սիրոյ դաղափարներն են զարդացել, թոյլերին պաչտպանելու բնազդն է տիրապետել, մոռացել են իրենց ես-ը, անձնականը. դուրս են եկել անասնական, կենդանական աչխարհից եւ բարձրացել դէպի վեր, դէպի Գողգոթա, որի վրայ 20 դար առաջ Քրիստոս մեռաւ, նահատակուեց իր դաղափարների, սկզբունքների համար, ամբողջ մարդկութեան փրկութեան համար եւ այն...

կրօնական ասպարէզում: Նա բաւէ բուն նշանակութեամբ կրօնական յեղափոխական էր:

Իսկ չատ-չատերը, որոնք նոյնպէս ծնուել էին հասարակ, աշխատաւոր ժողովրդի ծոցից, որոնք պիւղացիների, դարբինների, հիւանների որդիներ էին, նրանք էլ մոռացան իրենց ես-ը եւ պատրաստ գոնեցան իրենց կեանքը զոհելու իրենց դաղափարների, ազգութեան, աղատութեան համար եւ այն... քաղաքական ասպարէզում: Եւ այդ երկու դէպքում էլ մենք տեսնում ենք, որ քաղաքական եւ կրօնական այդ պայքարի, կռւի մէջ մարդիկ գառնում են աւելի դաղափարական, անձնազոհ եւ հաւատքով լեցուն՝ դէպի գործը, դէպի վերջնական յաղթանակը...

Սրանք էին այն կարեւորագոյն հիմունքները, որոնց վրայ յենւած Հ. Յ. Դաշնակցութիւնը ասպարէզ իջաւ եւ ցայտարարեց յեղափոխական կռիւ բռնակալութեան, մխիթարութեան դէմ:

Ահա դրանք էին կռւի այն միջոցները, որոնցով նա դուրս եկաւ եւ 26 տարուայ ընթացքում անընդհատ, անվհատ աղատագրութեան սրբազան պայքարը մղեց եւ ո՛չ մի րոպէ դադար չտուաւ՝ հաւատարիմ մնալով իր դաւանած սկզբունքներին:

Կռիւը, յեղափոխական մտածելակերպը, նորա համար ո՛չ թէ միայն քաղաքական աղատութեան միջոցներից մէկն էր, այլ եւ պատմական-բնական-հոգեբանական օրէնք: Եւ դաւադրութիւնն ու ինքնապաշտպանութիւնը ո՛չ թէ խօսքեր էին եւ կամ լոկ ծրագրային կէտեր, այլ եւ անհրաժեշտութիւն եւ մարդկային բողոքող, ընդդիմացող բնաւորութեան յատկանշական գծեր: Եւ այդ է պատճառը, որ չատ

չուտով նա կարողացաւ աճել, զարգանալ, տարածուել եւ դառնալ ժողովրդական կուսակցութիւն: Այդ էր գաղտնիքը, որ բոլոր կռւող, բողոքող, ըմբոստ եւ խիզախ տարրերը նորա դրօշակին փարեցին եւ այդ էր պատճառը, որ չնայած բազմաթիւ կախաղաններին, անթիւ հալածանքներին եւ անհամար բանտերին. չնայած հազարաւոր ձերբակալութիւններին, ներքին հալածանքներին, սեւ տարրերի դաւերին, երկու բռնակալների խստութիւններին եւ հերոսների—նահատակների սրբազան շիրիմներին — նա չմեռաւ, չկորաւ, չընկճուեց, այլ օրէցօր աճեց, զարգացաւ եւ աւելի ամուր հիմունքների վրայ կանգնեց:

## ԳԼՈՒԽ Բ.

### ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

**ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ**

90-ական թուականն է: Տաճկահայաստանի բազմաթիւ վայրերից բողոքներ, ցոյցերի և մասնաւոր ընդհարումների լուրեր են գալիս եւ փոթորկում Կովկասի հայութեան միտքը: Գոյութիւն ունեցող կուսակցութիւնները եւ կամ աւելի ճիշդ հոսանքները բաւարարութիւն չէին տալիս օրւայ պահանջին: Անհրաժեշտ էր իրական եւ միացեալ աշխատանք: Եւրոպական կենտրոններից յեղափոխական շարժումներ ղեկավարելն անկարելի էր համարւում եւ ամէն կողմից ձայներ էին լսւում «դէպի երկի՛ր, դէպի երկի՛ր», բուն Հայաստանի սիրտը:

Էրզրումի արխիւոտ եւ անդրանիկ ցոյցն էր աւելի ունեցել եւ այդ երեւոյթը անդրադարձել էր բոլոր հայաշատ կենտրոններում:

Օրւայ խոտակցութեան նիւթն էր չուտափոյթ օգնութեան հասնելու խնդիրը:

Նորակազմ Դաշնակցութիւնը, անկարող լինելով իր մէջ խտացնել բոլոր յեղափոխական գոյութիւն ունեցող ամբակները, իր սեփական ուժերով առաջարկ էր նետւել: Մի կողմից անվեհեր եւ զաղափա-



ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԽՄԲԻ
ՍԻԲԻՐ ԱՔՍՈՐԻԱԾՆԵՐԸ

*բապաշտ գործիչները Պարսկաստանի վրայով զէնք էին տեղափոխում դէպի Վասպուրական, իսկ միւս կողմից Դաշնակցութեան հիմնադիրներից մէկը՝ Պետերբուրգի արհեստագիտական դպրոցի ուսանողներից Սարգիս Կուկունեանը զբաղւած էր արշաւախումբը կազմակերպելով:*

*Մեծ խանդավառութիւն էր տիրում հասարակութեան մէջ, ամէն կողմից երիտասարդ ուժեր պատրաստակամութիւն էին յայտնում եւ բոլորի շրթունքների վրայ էլ մի երգ կար.*

«Զայնը հնչեց էրզրումի
Հայոց լեռներէն»:

*Այդ էր պատճառը, որ առաջին խումբը չատ դիւրութեամբ կազմւեցաւ ու Ալէքսանդրօպոլի, Ղարսի վրայով դէպի սահմանադլուխ անցաւ: Ռուսական կառավարութեան մեղադրական ակտը, բացառապէս նւիրւած Կուկունեանի արշաւանքին եւ կազմւած 1891 թւի նոյեմբեր 30-ին, աղօտ լոյս է սփռում նախնական շարժումների վրայ:*

*Այդ ակտից երեւում է, որ երեք գլխաւոր դէմք խոշոր դեր են խաղացել. նրանք են «Գաղտնի Ընկերութիւն», «Յակոբ Սարկաւագ» եւ «Ալաշկերտցի Յարութիւն աղան»:*

*Խմբի անդամներից Մուրադ Կալմակեանը ցոյց է տւել որ «խմբի ղեկավարներից մէկը, թիւրքահպատակ Յակոբ Սարկաւագն ասել է որ եթէ խումբը յաղթութիւն տանէր քիւրդերի վրայ՝ նրանց գոյքերը պիտի բաժանւէին հայերի մէջ»:*

*Պարզւում է, որ Ս. Կուկունեանը, Կոնստանդին Լիսինեանը եւ Ռուբէն Յովհաննիսեանը, 90-ի ամա-*

ուր Պետրոգրադից Թիֆլիս էին եկել, ուր եւ հանդիպել էին վերոյիշեալ Սարկաւագին, որ ինչ որ «Գաղտնի Ընկերութեան» կողմից բանակցել է դերանց հետ եւ համոզել դինւած խմբով սահմանն անցնել, բացատրելով մեծաժամանակ որ Անգլիան խոստացել էր իր օժանդակութիւնը բերել: Այդ անխոնջ յեղափոխականը նկարագրում է բուն Հայաստանի տանջանքները, պատկերացնում է անասելի հալածանքները եւ այդ բոլորին վերջ տալու համար միայն մի միջոց էր առաջարկում — Կռիւ:

Յունիսի մէջ Ալաշկերտից Կաղզւան է գալիս Յարութիւն աղան: Նա եղել էր Բաթում, Թիֆլիս եւ Բազու եւ տեսակցել էր տեղի յեղափոխականների հետ: Նրա նպատակն էր հայկական խմբեր կազմել Կաղզւանում, որոնց թիւը 400-ի պիտի հասնէր եւ ապա բոլորը միասին պիտի սահմանն անցնէին՝ կըռւելու քրդերի դէմ եւ պաշտպանելու հայերին:

Յարութիւն աղան չուտով 12 հոգով անցնում է Մասուռ լեռը, ուր նրան սպասում է խնուսցի Քաջ Արամը՝ իր ընկերներով: Դրանք բոլորն էլ հետեւում էին մի ընդհանուր ծրագրի եւ աշխատում էին զինւած, կազմակերպւած խմբեր առաջ բերել, որը եւ մեծ խանդավառութիւն է ստեղծում:

Կուկունեանի մօտ պահւած թղթերից երեւում էր, որ «պոյութիւն ունէր ինչ-որ «Գաղտնի Ընկերութիւն», իր ներքին կանոնադրութեամբ, իր պայմաններով եւ որ իւրաքանչիւր անդամ պարտաւոր էր կատարել վարչութեան հրահանգները՝ կատարելապէս հնազանդելով»:

«Զենք կասկածում, շեշտում է մի նամակի մէջ,

որ դու ունենալով Ս. Գործը իբրեւ նպատակ, պիտի համաձայնիս գործել համերաշխ այն կանոնադրութեանը, որին հնազանդում են Ընկերութեան մէջ գտնուղ բոլոր անձերը»:

Երրորդ նամակի մը մէջ, գրած Թիֆլիսէն, յայտնում են Կուկունեանին, որ կառավարութիւնն արդէն տեղեակ է արշաւանքի մասին, որ պաշտօնեաները սպասում են Շերեմետեւի (Կովկասի կառավարչապետի) դաստեան, որից յետոյ միայն որոշ քայլեր պիտի առնուին եւ այդ պատճառով էլ խորհուրդ են տալիս հինգ Պետերբուրգեան ընկերներով անմիջապէս անցնել սահման (1890 թ. սեպտ. 8–ի թուակիր):

Չորրորդ նամակի մէջ նորից չեշտուում էր սահմանն անմիջապէս անցնելու անհրաժեշտութիւնը եւ միաժամանակ խորհուրդ էին տալիս բաժանուել աւելի մանր խմբերի եւ երթալ կարաւանային ճամբով: Այդ գործողները, երկիր մտնելուց յետոյ որոշ աշխատանքներով պիտի զբաղուէին՝ մի մասը խաղաղ պրօպագանդայով, կազմակերպելով եւ տեղական նոր ուժեր գտնելով, իսկ միւս մասն էլ բացառապէս ղէնքի մատակարարութեամբ եւ մարտական խմբերի գործունէութեամբ:

Գլխաւորապէս ուշադրութիւն էր դարձրած վերջին գործիչների վրայ, որոնք ամենաճանր լուծն իրենց ուսերի վրայ էին առել:

Այս բոլորը ցոյց էր տալիս, որ քայլ Յակոբ Սարկաւագից եւ Յարութիւն աղայից, որոնք 90–ական թուականներին Կովկաս էին անցել, կար եւ մի յեղափոխական, գաղտնի կազմակերպութիւն իր

ներքին օրէնքներով եւ իր գծած, յատակ ծրագրով:

Կուկունեանն առաջինն է եղել այդ Գաղտնի Ընկերութեան անդամներից, որ վճռել էր խօսքից գործի անցնել եւ այդ նպատակով էլ սկսել էր հայդուկային խմբի կազմակերպման:

Մի քանի հաւատարիմ գործիչներ անցնում են հայաշատ գաւառները, վինտուում են խիզախ եւ անվեհեր տղաներ, միացնում են փոքրիկ խմբերի եւ ապա ուղարկում դէպի սահմանապլուխ, Ղարսի գաւառակը, Բեանա գիւղը, ուր եւ պիտի ստանային իրենց հրացանները:

Մի երկրորդ յանձնախումբ էլ զբաղւած է եղել, շա՛տ դժւար, համարեա պժոխային պայմաններում դրամ հայթայթելով եւ դէնք ձեռք բերելով: Նո՛ր գործունէութիւն էր, նոր մարդիկ էին եւ այդ բոլորի հետ միասին կար եւ ուուս կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը:

Երկար աշխատանքներից յետոյ 90 թւի սեպտ. 23–24-ի գիշերը հարիւր հոգուց բաղկացած խումբը, զինւած արագաձիգ հրացաններով, դիմում է դէպի սահման: Դրանց առաջնորդներ էին նշանակւած՝ Կուկունեան, Սարդար Աւետիսեան եւ Ղարաբաղցի Աբրահամը:

Այդ խմբից 15 ձիաւոր, սեպտ. 24-ի կէսօրին, կարողանում են անցնել սահմանը, յարձակւել տաճկական Ախւարկ գիւղի վրայ եւ բաւական վնաս հասցրնել բնակչութեան: Այչին-Օղլի եւ Ախւարկ գիւղի բնակիչները վճռում են դիմադրել եւ այդ նպատակով առաջ են անցնում դէպի Զիչաղլեի կիրճը,

ուր եւ հանդիպելով ձիաւորներուն, սկսած են հրացանաձգութեան:

Քիչ յետոյ, սակայն, պարզուած է որ Զիչաղլիի կիրճում երեւացող զինուորները ռուս սահմանապահ կօզակներն են եղել, որոնց թիւրքերը բացատրում են զինուած հայկական խմբի չարձակման մասին: Այդ տեղից էլ սկսուում է երկու կողմից աչալուրջ հսկողութիւնը:

Հայդուկային այդ խումբը ապաստանում է Բօղդաղի ստորոտներում: Դրանց որսալու համար Թօփրագ-Գալէից ուղարկուած են կէս վաշտ թրքական զինուորներ, բայց անօգուտ է անցնում, որովհետեւ խումբը կարողացել էր հեռանալ: Այդ դէպքն իրենց մանրամասնութիւններով տեղեկագրուած է բարձր իշխանութեան եւ վերջինս, համարելով դրանց «չարագործներ», հրաման է արձակում հետապնդել եւ ձերբակալել:

Մի երկրորդ խումբ, մօտեցած լինելով սահմանին, ճանապարհին սպանում է բազմաթիւ թիւրքերի՝ թուով 10-ը, բոլորն էլ բացառապէս թրքահպատակ: Դրանց դիակները գտնուած են Աղրուլաղի մօտ՝ մի ձորակի մէջ: Բժշկական քննութիւններից երեւացել է, որ այդ սպանուած թիւրքերը ստացել են խէնչալի հարուածներ, որոնցից առաջացած վէրքերի թիւը հաշուում էր 6, 7, 12, 19 եւ աւելի: Սեպտեմբերի 26-ին, Կաղզուանի մօտ գտնուած Գիւմիւշ-թափայի վրայ, երբ խումբը անտառների միջով անցնում էր դէպի սահմանապլուխ, պատահում է երեք թիւրքերի, որոնք անտառ էին իջել փայտ կտրելու: Տեսնելով զինուած հայերի, նրանք սարսափում են եւ

պատրաստւում չէր փախչելու: Տղաները կասկածում են եւ շրջապատում նրանց՝ սպանելով մէկին եւ վիրաւորելով երկրորդին: Երրորդը, որ ձիաւոր է լինում, կարողանում է փախչել և հասնել Կաղզւան ու տեղեկացնել գաւառապետին:

Այդ դէպքից յետոյ սկսւում է ռուս կառավարութեան հետապնդումը: Կապիտան Կուզուցօվը իր հետ վերցնելով մի փաշտ կօզակներ, գալիս է փնտռելու «չարագործներին»: Արաքսի ափին, Գիւմիւշ-Քիւմբէթի եւ Կաղզւանի միջեւ ձերբակալւում են երեք հայի, որոնց մէջ է լինում եւ Եփրեմ Դաւթեանը: Դրանք բոլորն էլ զինւած են լինում:

Այդտեղից կապիտանը անցնում է Խաս գիւղը, որի շրջակայ այգիներից մէկի մէջ պահւած են լինում հայդուկները: Նրանք իրենց ճանապարհը շեղած են եղել՝ խուսափելու հետապնդումից եւ յարմար րոպէի սպասելու: Յանկարծ երեք կողմից շրջապատւում են պետական զինւորներով: Հրաման է արձակւում զինաթափ լինել — բայց մերժում է ըստացւում: Կօզակների խմբին առաջնորդում էին հայ զինւոր Մարտիրոսեանը եւ գիւղի մուխտար Գրիգոր Ոսկանեանը, որոնք եւ բանակցութիւններ են վարում: Ըստ մեղադրական ակտի՝ այդ մերժումից յետոյ թեթեւ հրացանաձգութիւն է տեղի ունենում եւ իբրեւ թէ նախայարձակ են լինում հայերը, որից եւ վիրաւորւում է մի կօզակ:

Մի ամբողջ օր կապիտան Կուզուչօվը պաշարում է տղաներին, մինչեւ որ հետեւեալ օրը, ժամի 12-ի մօտերը Կաղզւանից օգնութեան են հասնում Դերբենդեան 154-րդ գնդի մի փաշտ եւ մի ջոկատ էլ

Կարսեան սահմանապահ բրիգադից: Դրութիւնը կրրիտիկական էր: Նրանք ո՛չ մի մտադրութիւն չունէին կռուելու ռուսական զինուորների դէմ, իսկ վերջիններս էլ չէին կարող ըմբռնել երիտասարդ յեղափոխականների խանդավառ տրամադրութիւնը:

Երկար խորհրդակցութիւնից յետոյ, թեր ու դէմ խօսակցութիւններից յետոյ, վճռում են անձնատուր լինել, յուսալով թէ կարող կը լինէին շուտով ազատուել եւ նորից գործի գլուխ անցնել:

Բոլորին ձերբակալելուց յետոյ, կառավարութիւնը գրաւում է 28 բերդան հրացան, 2 վանչեստրրի, 2 Պիրօլի, 4 Շնէյդէրի եւ այլ հրացաններ: Միաժամանակ վերցնում են 11 դաշոյն, 2 սուր, 6 ուլին, 1 ատրճանակ, 24 եափունճի և 6 պայուսակ՝ փամփուշտներով լիքը:

Դրանք բոլորն էլ աշխատում են ամէն կերպ՝ համոզելու իրենց ձերբակալողներին, որ վատ մտադրութիւն չունին, որ ռուս կառավարութեան դէմ չեն գործում, որ նպատակ ունին միայն տանջուած հայրենակիցներին օգնելու. բայց անօգուտ: Նրանց բոլորին էլ առաջնորդում են Ղարսի բանտը, շղթայ են զարնում ոտներին եւ որպէս քրէական յանցաւորների դատում:

Հայ ժողովուրդը խո՛ր յուսահատութեան մէջ է ընկնում: Ի՛նչպիսի ոգեւորութեամբ նա ճանապարհ էր դրել իր որդիներին, ի՛նչ յոյսեր էր կապել նրանց հետ, ո՛րպիսի լաւ հաւատք էր ունեցել քրիստոնեայ, խաչապաշտ ռուսի վրայ, որոնք ահա իր աչքի առաջ չքանում են: Մի հսկայ թափօր էր այդ, պատմում են ժամանակակիցները, մի մեծ ժողովըր-

դական չարժում, համամկրական մի խոշոր ցոյց, որ ունեցաւ իր պատմական նշանակութիւնը եւ դասախարակիչ միջոց հանդիսացաւ նոր սերնդի համար:

Քաղաքից-քաղաք այդ բանտարկեալներին հետեւում էր հոծ բազմութիւն, ամէն մէկը ուրախութեամբ դրամ, կերակուր էր փոխադրում բանտը. կիրակի օրերը հարիւրաւոր այցելուներ էին ապասում տեսակցելու, մխիթարելու, ոգեւորելու նրանց եւ չատ-չատերի դանկերում էլ յեղափոխական խրոխտ թռիչք էր երեւում՝ փախցնել բանտից եւ ազատել դրանց, բայց դեռ անկազմակերպ վիճակի մէջ են լինում:

Նրանք դատւում են քրէական օրէնսդրքի 262, 268, 269 եւ 1459 յօդւածներով: Այդ յօդւածների տրամադրութեամբ բանտարկեալներն համարւում էին որպէս չարագործներ, մարդասպաններ եւ պետական կարգերի դէմ կռւողներ: Դատավարութեան ժամանակ բոլորն էլ անկեղծաբար բացատրում են իրենց նպատակը:

Նրանք յայտնում են, որ ոչ մի մտադրութիւն չեն ունեցել կռիւ յայտարարել ռուս կառավարութեան դէմ, որ նոյնիսկ նրանք կարծել են թէ՝ այդ քայլը կարող է համակրանք գտնել որոշ խաւերում, որ նրանք մտադրութիւն չեն ունեցել մարդ սպանելու եւ կամ թալանելու, այլ միայն անցնել սահմանը, մտնել տաճկաց հողը, պաշտպան հանդիսանալ տառապող եղբայրներին, վրէժ լուծել անդութ եւ գազան քիւրդերից:

Խումբը մի ժամանակ խոստովանել է գեներալ Պետանդերին թէ՝ Ռուսաստանը գուր տեղն է մի-

մըտում իրենց պաշտպանած դատին, քանի որ իրեն հակառակ չեն գործելու:

Ռուս կառավարութեան համար պարզ է եղել եւ այն, որ դրանք պիտի սահմանն անցնէին եւ ուղիղ դէպի Սասուն գնային, ուր անհամեմատ աւելի չարմար վայրեր կային՝ կռւելու եւ պաշտպանելու համար:

Դատաւորները, իրենց քննութեան ընթացքում առանձնապէս ուշադրութիւն են դարձրել չեղափոխականների ուսերի վրայ գտնւած գինանշանին՝ «Մ. Հ.», որ նշանակում է «Միութիւն Հայաստանի»: Այստեղ է, հաւանօրէն, որ նրանք կասկածում են եւ վճռում չատ աւելի խիստ վերաբերմունք ցոյց տալ ու մի անգամից արմատախիլ անել «Միացեալ Հայաստանի» գաղափարը:

Մի քանի օր տեւող դատավարութիւնից յետոյ, երբ ամէն միջոց գործադրում են բանտարկեալներին ազատելու, դատավճիռն է կարդացւում, որով բոլոր մասնակցողները աքսորւում են Սիբիր, սառցային հիւսիսը, որ գաղափարի ու գործունէութեան վայրից չատ է հեռու:

Առաջին ծանր հարւածն է, որ իջնում է մանուկ Յեղափոխութեան գլխին: Առաջին զոհերն են, որ բաց են անում Ազատագրութեան մեծ ճանապարհը եւ հիմք են դնում այն չարժման, որ յետագայում աւելի է ծաւալւում եւ տարածւում:

Առաջին խմբին մասնակցողները բոլորն էլ չեն ձերբակալւում եւ դատւում: Նրանցից մի քանի հոգի մեռնում են, մի քանիսն էլ անցնում են Պարսկաստան՝ այնտեղ շարունակելու սկսած գործը:

Կուկունեանի արշաւանքը իր կազմակերպութեան մէջ շատ թոյլ կարող է եղած լինել, բայց փաստ է, որ շատ սերունդներ կրթեցան նրանով, որի համար մինչեւ այսօր էլ յիշատակելի ու պաշտելի է այն:

Առաջին փորձը, որ այնքան դժուարութիւններով էր պլուխ բերւած, որի հետ այնքան ցոյսեր էին կապւած, եղաւ միանգամանակ ուղեցոյցը ցետագայ գործունէութեան: Նախնական այդ դասն առանց հեռեւանքի չմնաց:

Եւ ահա, մի առ ժամանակ խոշոր խմբեր կազմակերպելու մտադրութիւնը մի կողմն են նետում, համարելով այդ անկարելի եւ դժւար, ու փարում են կազմակերպական աշխատանքին:

Գործիչների մի մասը մնում է Կովկաս, օգտւելու ստեղծւած տրամադրութիւնից, նիւթական աղբիւրներ գտնելու եւ ղէնք հայթայթելու: Մի ուրիշ խումբ էլ հարքաշ աշխատաւորներից՝ կենտրոնանում է Պարսկաստան՝ հսկելու տեղափոխութեան վրայ եւ հաղորդակցութեան դիւրութիւններ գտնելու, իսկ մի երրորդ մասն էլ իր վրայ է վերցնում ամենադժւարինը՝ անցնել սահմանը, մտնել հայ ժողովրդի մէջ, արթնացնել դիտակցութիւնը եւ պատրաստել ապագայ գործունէութեան համար:

Հ. Ց. Դաշնակցութիւնը իր գործունէութեան սկզբնական շրջանում երկու գլխաւոր աշխատանք էր առաջ տանում — ղէնքի տեղափոխութիւն եւ ահարեկումներ: Երկուսն էլ իրենց յատուկ դժւարութիւններն ունէին, մանաւանդ առաջինը, որի համար ո՛չ միայն շատ աշխատանք, դրամ ծախսւե-

ցաւ, այլ եւ բաղմաթիւ զոհեր տուեցան: Գործունէութեան այդ երկու շրջանն էլ յեղափոխական արխիւի սեփականութիւն են եւ մենք հնարաւորութիւն չունինք մանրամասնօրէն եւ ժամանակագրական կարգով ուսումնասիրութեան ենթարկելու:

Այսքանը միայն կարելի է չեշտել, որ 92 թուականին առանձնապէս աշքի էր ընկնում Վասպուրականը: Լինելով Կովկասի եւ Պարսկաստանի սահմաններին կից եւ մշտապէս չհեւելով յեղափոխական գործիչների եւ հայդուկային խմբերի հետ, նա աւելի շուտ էր նետուել ընդոստութեան եւ դիմադրութեան պիրկը:

Եւ ահա մենք տեսնում ենք թէ՝ ինչպէս մէկը միւսի յետեւից գլորւում են վնասակար տարրերը, պատժւում են մատնիչները, լինում են յաջող ահաբեկումներ, որոնք իրենց բարոյական խոշոր նշանակութիւնն են ունենում ու զարկ են տալիս յեղափոխական շարժման: 92-ի օդոստոսի վերջերին քաշանում է Գէորգ Զրաղաւեանը, որ կանոնաւոր կերպով մատնութիւններ էր անում եւ աշխատում պաշտօնի տիրանալ՝ իր կեղտոտ ծառայութիւններով: Նա միշտ տեսակցում էր Վանի կուսակալի եւ ոստիկանապետի հետ, որոնք յեղափոխականներին հալածելու համար յաճախ նրա օգնութեան էին դիմում: Այդ վատ տիպը մի քանի անգամ «կասկածելի հայերի» ցուցակ է ներկայացրել սուլթանի անձնական քարտուղար Քեամիլ Սարդար փաշային, ինչպէս եւ Վանի կուսակալ Բահրի փաշային: Այդ խոշընդոտները մէջ տեղից վերացնելու համար խիղախ տիպեր չէին պակասում, եւ ահա մի օր, երբ նա վա-

բազից քաղաք էր վերադառնում, նրա վրայ են յարձակւում ահաբեկիչները ու սպանում:

Նոյն բաղդին է արժանանում եւ Նշան Թարգիբաշեանը, սեպտեմբեր 10–ին: Այդ տխուր, կեղեքելու եւ աւելի ազատ չահագործելու համար իրեն պարտական հայ դիւղացիներին, կառավարութեան վէշերի տակ էր մանում եւ մի կողմից լուրեր հաղորդելով յեղափոխականների մասին, միւս կողմից իր չահատակութիւններն էր չարունակում: Նա պատրաստութիւններ էր տեսնում Պօլիս գնալու եւ իր եղբայրների մասին տեղեկութիւններ հաղորդելու կառավարութեան ու մի քանի «կարեւոր» տիպերի մասին լուրեր տալու, երբ յեղափոխականի տաք դնդակը գալիս է եւ նորա ճանապարհը փոխում ... դէպի գերեզման:

Նոյն օրը և եթ վիրաւորւում է և մի այլ Թերգիբաչեան՝ Յարութիւն էֆէնդին, որ երեւի աղգական էր նախորդին – թէ՛ արեամբ եւ թէ՛ մատնութիւններով, որովհետեւ ոստիկանութեան գաշնակից էր եւ պարբերաբար լուրեր էր հաղորդում:

Միայն ներքին չարիքի դէմ չէր որ կռիւ էր մղում յեղափոխութիւնը: Նա հաւասար չափով պայքարում էր եւ դրացիների դէմ՝ թիւրք ոստիկանների եւ մատնիչների: Վանի մէջ առանձնապէս աչքի էին ընկնում երկու ոստիկան՝ Մէհմէդ էֆ.–ին եւ լրտես փօլիս չէյխ Հէյդէրի Նուրին, որոնք մի–մի դաւ էին դարձել հայ ժողովրդի գլխին: Նրանք միշտ կառավարում էին ձերբակալութիւնները, հետապընդում էին յեղափոխականներին, աշխատում էին թակարդներ լարել, տանջանքի էին ենթարկում ան-

մեզ հայերի խոստովանացնելու դիտաւորութեամբ եւ շատ ժամանակ էլ դրամական տուգանք էին վերցընում՝ ապառնալով հակառակ դէպքում բանտ առաջնորդել:

Նրանք էին վիրաւորների եւ տների տէրերը, նրանք էին կառավարում ժողովրդին եւ ամէն ինչ էին՝ արհեստաւոր, աշխատաւոր դասակարգի աչքում: Պէտք էր վերջ տալ դրանց, ցոյց տալու համար թէ՝ մի այլ պատժող ուժ կար, աներեւոյթ ձեռք, որ նոյնպէս ամէն տեղ էր, միայն այն տարբերութեամբ, որ պաշտպան էր հանդիսանում հասարակ ժողովրդի շահերին: Եւ ահա հոկտեմբեր ամսում, իրար յետեւից վիրաւորւում է Մէհմէդ Էֆէնդին եւ սպանւում լրտես Նուբին:

Այդ յանցագործութիւնների իրենց նշանակութիւնն են ունենում եւ սարսափ են ազդում կառավարութեան շրջանակների վրայ:

92-ի սեպտեմբերին, Մշոյ Դաշտի մէջ էլ երեւան են գալիս ահաբեկումներ, որոնցից նշանաւորն է մատնիչ Կրպօի սպանութիւնը՝ Ալիշանցի Լեւոնի ձեռքով:

Այս բոլորի հանդէպ ժողովուրդի համակրութիւնն է երեւում. նա ուրախանում է եւ հրճւում, որովհետեւ իր ազատութիւնը պաշտպանող կտրիճներ են երեւան եկել, որոնք անճնազոհութեամբ ասպարէզ են նետւել եւ ստոր տիպերին հեռացնելով՝ հարթում են ճանապարհը:

Մի ներքին, թաքնւած համակրանք էր նկատւում դէպի այդ ազատարար շարժումը. հոգիները ամրապնդւում էին, սիրտերը թռունդ ի թռունդ բա-

թախում, մտքերը խմորւում և կամաց-կամաց վարագոյրի յետեւից երեւան էր գալիս երէկւայ ըստրուկ, հնազանդ հայը, որ այսօր ապստամբ է եւ իր զէնքերով ցանկանում է իր ունեցւածքն ու պատիւը, կեանքն ու ազատութիւնը պաշտպանել: Դրան որպէս ապացոյց կարելի է բերել այն տոկունութիւնը, որ ցոյց են տալիս հայ գիւղացիները բանտերի մէջ, երբ նրանք անպատմելի տանջանքների են ենթարկւում, բայց յեղափոխականների, ահաբեկիչների տեղը չեն յայտնում:

Ժողովրդի այդ տրամադրութիւնները կարողացան օգտագործել յեղափոխականները: Առանց ժամանակ կորցնելու, իրենց չնչին միջոցներով, նրանք որոշեցին զէնք մտցնել երկիր, զինել ժողովուրդը եւ առաջուց պահեստներ հիմնել՝ ապագայ մեծ ծրագիրների համար: Այդ տանջալից աշխատանքները կատարող հերոսների անունները յայտնի չեն դեռ հասարակութեան, նրանք դեռ փոշիների, անյայտութեան մէջ են: Նրանք միայն մի պատւաբեր անուն ունին՝ «Զինակիր Խմբ»ի անդամներ: Ծանր է եղել դրանց աշխատանքը եւ մահաբեր: Ամէն մէկը մի քանի հրացան շալակած, գիշերները միայն ճամբայ քալելով, մարդկային բնակավայրերից հեռու մնալով, նրանք պարտաւոր էին անտառների միջով, լեռների, դժւար անցանելի բլուրների վրայով քալել եւ փոխադրութիւններ կատարել:

Ահա դրանցից մէկը, 93 թւականին, դէպի Վան տանող ճանապարհից մէկի վրայ հանդիպում է մի խումբ զինւած քրդերի, որոնք պահանջում են անձնատուր լինել եւ զէնքերը յանձնել: Տղաները ո՛չ մի

մտադրութիւն չունէին եւ ո՛չ էլ պարտականութիւն՝ նուէրու: Նրանք բուռ խոչընդոտներ պիտի յաղթահարէին եւ ղէնքերն իրենց որոշեալ տեղը հասցնէին: Անճնաուր լինել, ղէնքերը յանձնել— այդ հաւասար է մահուան եւ ահա նրանք վճռում են դիմադրել, կուել եւ քիչ զոհ տալով ազատուել:

Մի քանի ժամ տեւող կուի ընթացքում մերոնք տալիս են երեք զոհ, որոնք անվեհերաբար կուել էին, թէև դեռ երիտասարդ հասակի մէջ էին: Թշնամին ունենում է բաւական թուով սպանուածներ եւ վիրաւորներ: Մութը վրայ է հասնում եւ խմբի միւս տղաներն հնարաւորութիւն են ունենում նահատակուած ընկերների ղէնքերն էլ վերցնելով՝ իրենց ճանապարհը շարունակել՝ ընտրելով աւելի դժուարին կէտեր:

Վասպուրականի չրջանը նորից փոթորկւած էր եւ վտանգաւոր ամպեր էին կուտակւել երկնքում: Կուտակալ Բահրի փաչան աչքի էր ընկնում իր հայատեցութեամբ եւ խստութիւններով: Նա նպատակ էր դրել ոչնչացնել եւ արմատախիլ անել չեղափոխական մտածողութիւնը եւ այդ նպատակով էլ աշխատում էր վախ ազդել, սարսափեցնել հայ հասարակութեան: Այդ ժամանակները իրար չետեւից երկու քստմնելի դէպք են պատահում՝ Կոզուլի ձորի նահատակութիւնը եւ Կուտուրաչի ոճիրը:

Կոզուլի ձորում, համիդիէների ձեռքով սպանւում են մի քանի դերձակ եւ դարբին աշխատաւորներ՝ որոնց համակրանքը յեղափոխական շարժման հետ է եղել եւ որոնք լուռ ու մունջ իրենց մասնակցութիւնն էին բերել ու ժողովրդի ծոցից ելնելով՝

նրա համար էլ աշխատանք էին թափում: Բահրի փաշան հրամայում է այդ գիւղերից կտրել գլուխները, ցից հանել եւ պտտցնել փողոցները՝ որպէս պետական դաստիարակութիւն, որպէս հակայեղափոխական պրօպագանդայ:

Նոյն տարուայ ընթացքում Կուռուբաշ գիւղի դաշտերում, գարնան ժամանակ, համիդիէ հեծելազօրքը յարձակւում է 4 հայ պատանու եւ նոյնքան էլ երիտասարդ հայ օրիորդների վրայ: Երբ պատանիները դէպի գիւղ կը վազեն՝ օգնութիւն խնդրելու, ձիաւորները կը հասնեն, կը բռնեն նրանց եւ չորսին էլ սրախողխող կ'անեն, իսկ աղջիկներին կը լլկեն, որոնցից երկուսը տեղն ու տեղը կը մեռնեն:

Ժողովուրդը, սաստիկ գրգռուած եւ յուզուած, վերցնում է դիակները, բարձում սայլերին եւ դէպի Վան տանում: Ճանապարհին նրանց միանում են ուրիշ հայեր, իսկ քաղաքում, յեղափոխականների յորդորներով եւ ստիպման տակ, խանութները փակւում են եւ այսպիսով ցոյցն ընդհանուր բնաւորութիւն է կրում: Ցուցարարները անցնում են անգլիական եւ ռուսական հիւպատոսարանների մօտով, մօտենում են Նալբանդեանների տան, ուր բնակութիւն էին հաստատել Պօղոս եպիսկոպոսն ու Աղթամարայ Խաչատուր եպիսկոպոսը, որոնք միացած մի քանի հարուստների հետ աշխատում էին բնի մէջ խեղդել յեղափոխական շարժումը եւ իրենց ազգադաւ գործունէութեան համար լայն ասպարէզ բաց անել:

Ցոյցի ամենափառաւոր րոպէում, երբ պատուիրակութիւնը ներս պիտի մտնէր Պօղոս եպիսկոպո-

սին առաջարկելու, որ միասին գնան հեռագրատուն եւ Բահրի վաշայի գազանութիւնների մասին իմացընեն Պօլիս՝ ազգային իշխանութիւններին, վրայ են հասնում ասոլիկանները, որոնց հետ թեթեւ ընդհարում են ունենում ցուցարարները: Ջնայած դըրան, ժողովուրդը ներս է խուժում եւ բռնի ուրս հանելով եպիսկոպոսին՝ թափօրի դլուխ անցուցած չարժւում դէպի հեռագրատուն: Այդ դէպքի մասին Պօղոսականները իմաց են տալիս վալիին, յայտնում են որ եպիսկոպոսին բռնութեամբ են տանում եւ ահա բազմաթիւ պահակներ հասնելով կարողանում են ցրել հասարակութեան եւ ազատել իրենց սիրեցեալ եւ հաւատարիմ առաջնորդին:

Այդ երկու դէպքերի տռթիւ եղած ցոյցը անհետեւանք չի անցնում: Կառավարութիւնն սկսում է որոշ խստութիւններ ձեռք առնել եւ առաջուց պատրաստած ցանկի հիման վրայ ձերբակալութիւններ կատարել: Բանտերը լեցւում են երիտասարդներով. դուրսն էլ չարունակւում է հալածանքը: Հայ լրտեսներն էլ պակաս դեր չեն խաղում այդ աշխատանքի մէջ եւ մանաւանդ նրանցից մէկը՝ Յակոբ Ղլտճեանը, որ դեռ չատ առաջ լրտեսի պաշտօն ունէր եւ կառավարութեան օժանդակում էր:

Սկսում են անասելի տանջանքների ենթարկել բռնաւարկեալներին՝ յեղափոխական գաղտնիքներ իմանալու դիտաւորութեամբ:

Բանտի մէջ, կէս դիշերին, դասատուրը, միլադիմն ու մի քանի զափթիաներ ներս են մտնում հայ կալանաւորներից իմանալու մխիթարների (յեղափոխականների) մասին տեղեկութիւններ: Բանտար-

կեալները մերժում են: Այն ժամանակ դատաւորը հրամայում է ձեռքերն ու ոտքերը փայտեայ մեքենայի մէջ դնել ու սղմել, հասցնելով անպատմելի ցաւ ու տանջանք: Երբ այդ միջոցն իր որոչ արդիւնքը չի տալիս, այն ժամանակ կը դիմեն չիկացած երկաթի օդնութեան՝ այրելով, տապալելով նրանց մարմինը՝ ձգելով ուշագնացութեան մէջ:

Մի ուրիշին, աւելի խիզախ պատանու, դլխի մազերն են փետում, դուրս հանում, որից բանտարկեալը ճչում է, խնդրում ազատ արձակել, բայց ապօգուտ: Ինքն էլ ոչինչ չի ասում: Այն ժամանակ երեան են բերում մի քանի բեւեռներ, վերցնում են մուրճն ու մի քանի հարուած խփելով՝ բեւեռները խրում են ուղեղի մէջ, որից ստիպւած բանտարկեալը մի քանի անուն է տալիս՝ անդիտակից եւ ուշաթափ դրութեան մէջ: Յետոյ երբ ուշքի է գալիս եւ երբ նրան պատմում են որ ինքը մի քանի անուններ է յայտնել, տղան չի կարողանում տանել Հոգեկան այդ ծանր պատասխանատուութիւնը, խելագարւում է եւ վշտի դերազոյն րոպէներից մէկում իր գլուխը զարնում է պատերին ու ջարդ-փշուր անում:

Այս բոլոր դէպքերը, սակայն, անօգուտ չեղան եւ յեղափոխական շարքերի համար, որոնք օր ըստ օրէ աւելանում էին: Ամենից առաջ մի քանի մատնիչներ եւ լրտեսներ ահաբեկման ենթարկուեցան, որոնց մէջ կարող ենք յիշատակել միայն լրտես Յակոբ Ղլտճեանի անունը: Այդ յաջող փորձերն իրենց մեծ նշանակութիւնն ունեցան ժողովրդի վրայ, որ ուրախութեամբ դիմաւորեց իւրաքանչիւր մի նման լուր, ապա առաջ եկան աւելի խիզախ, յանդուգն ե-

րիտասարդներ, որոնք նահատակների թարմ շիրիմների առաջ ծնկաչոք երդուեցին վրէժխնդիր լինել եւ շարունակել սրբազան գործը: Կուռուբաշի եւ Կողուլի նահատակների դիակները չեն վհատեցնում մի բուռն յեղափոխականների, այլ աւելի եւս ոգեւորութիւն եւ ուժ են ներշնչում: Կազմակերպւում են աւելի ստուար խմբեր, առաջ է գալիս կազմակերպուած ուժի անհրաժեշտութիւնը, պարզւում է յեղափոխական դրօշը, որի տակ են մտնում տաճկահայը, կովկասահայն ու պարսկահայը: Ձեռք ձեռքի են տալիս ինտելիգենտն ու բանւորը, արհեստաւորն ու գիւղացին, որոնք միացած մի մեծ գաղափարական նպատակի համար, աշխատում են իրենց զոհաբերութեամբ, իրենց արիւնով մաքրել հայութեան ճակտից ստրկութեան արատը եւ ինչ գնով էլ լինի՝ հանել ազատութեան:

Բռնապետութիւնն իր աչքի առաջ տեսնում էր այդ զարգացումն ու կռուի աստիճանական ուժեղացման թափը, բայց անկարող էր վերջ տալ:

## ԱՐԱԲՕԻ ԿՌԻՒԸ

Մուշի շրջանն էլ խռովումների մէջ էր: Մի քանի յեղափոխական խմբեր, որոնց ղեկավարում էր Արաբօն, իրենց գործունէութեամբ սարսափ էին ազդել կառավարական շրջանների վրայ, որոնք անկարող էին ձերբակալել այդ աներեւոյթ ուժերին: Մշտական շրջագայութեան մէջ գտնուելով, հայդուկները մշտապէս յարձակման եւ կամ պաշարման վտանգին էին ենթարկուած: 93-ի աշնան, Խնուսի եւ Մուշի մէջ գտնուած Գէօլ-Առաշ գիւղի մօտ տեղի է

ունենում խոշոր ընդհարում։ Այդ կռւին մասնակցում են յայտնի յեղափոխականներ — Արաբօն, Վարդանը, Աւօն, Բուլղարը եւ ուրիշներ։ Մութը վրայ հասնելով խումբը աննկատելի կերպով թաքնւում է մի մարագում։ Նրանք շա՛տ յոգնած էին եւ որոշել էին մի քիչ հանգստանալ իրենց քաղցը լռեցնելու, ապա ճանապարհը շարունակելու համար։

Անօթի էին եւ պէտք էր հաց գտնել։ Իրենցից մէկին որոշում են ուղարկել դուրս, գաղտագողի կերպով, որ հացի, կերակրի պաշար առնէ եւ շատ մեծ զգուշութեամբ վերադառնայ, որպէսզի գիւղացիներն իրենց թագստեան տեղը չիմանան։

Նրանք խուսափում էին եւ գիւղացիներից։

Հացաբերը դուրս ելնելուց մի քանի րոպէ յետոյ գիւղում իմանում են յեղափոխականների ներկայութիւնը եւ վախենալով կառավարութեան վրէժխնդրութիւնից՝ վճռում են դիմել տղաներին, ամէն ինչ բացատրել եւ խնդրել որ օր առաջ թողնեն գիւղը։

Գիւղական ներկայացուցիչներին տղաներն ընդունում են մարագում, լսում են նրանց բացատրութիւնները, իրենք էլ իրենց նպատակն են բացատրում եւ վերջապէս համաձայնելով՝ իրաւունք են խնդրում շատ քիչ հանգստանալու, ճաշելու եւ ապա իրենց ճանապարհը շարունակելու։

Լուսաբացին նրանք հասնում են Գեօլ-Առաշու ձորը, ուր եւ շրջապատւում են զինուած քրդերից։ Շուտով հաւարն ընկնում է եւ մօտակայ գիւղերը։ Մի քանի ժամից յետոյ սար ու ձոր լիքն են մարդկա-

յին ստեղներով, լաւում են գոռում–գոչում, հրա–
ցանաձգութիւններ:

Շատ վատ ժամանակ չրջապատեցան նրանք եւ
այն էլ ձորի մէջ: Արաբօն հրամայում է պէպի սարը
բարձրանալ՝ յարմարաւոր դիրքեր գրաւելու հա–
մար: Սարի լանջերով մի բուռն հայ քաջերը վեր են
բարձրանում, համարեա թէ մագլցելով եւ սկսում
է կատաղի, օրհասական կռիւը:

Մեծ իրարանցում է տիրում քրդական ցեղերի
մէջ: Նրանց պատեհութիւն էր տրւած կառավարու–
թեան աչքում հաւատարմութիւն ցոյց տալու եւ մի–
աժամանակ պարզեւներ ստանալու:

Զորս կողմից պաշարւած տղաները իրենց յոյսը
կտրում են ապաւէնից, զգում են մահւան մօտա–
լուտ լինելը եւ վճռում են մի լաւ դաս տալ թշնա–
մուն:

— Ոտքից վիրաւորուեցի, տղերք, կանչեց Ա–
ւօն եւ կանգ առաւ:

— Հրացանդ չարունակիր նստած դցել — եղաւ
Արաբօի պատասխանը — եթէ չես կարող կռւել
լաւ է քայլես առաջ, քանի վէրքդ տաք է:

Կռիւը կատաղի էր: Արաբօն սրտապնդում էր
տղաներին, յոյս էր տալիս նրանց եւ երբեմն բար–
կացնում էր սաելով՝ «լէչէկ ձգեցէ՛ք գլուխներդ,
եթէ քիւրդերից այդքան կը վախենաք»:

Բոլորն էլ ոգեւորութեան մէջ էին: Ոչ ոք յու–
սահատութեան նշան չէր ցոյց տալիս: Արաբօն ու
վարդանը ցատկում էին մացառից մացառ, քարից
քար, իսկ քրդերի գնդակները կարկտի պէս էին
թափւում:

Անհաւասար այդ կռւի մէջ ընկան Մարտօն, Բուլղարն ու Աւօն: Արաբօն եւ Վարդանը աւելի բարձր դիրքեր գրաւած լինելով՝ յետ էին կասեցնում թշնամու առաջխաղացքը:

Վիրաւոր ընկերներից մէկը, որի գլխի վրայով էին անցնում, սուրում այդ գնդակները, ուրախութեան արցունքներն աչքերին կանչում է.

— Գնդակներ, գնդակներ, դատարկ մի՛ գնաք, որտեր պատռեցէք:

Երեկոյեան դէմ կռիւը վերջանում է: Գիշերային խաւարը գալիս է եւ ամէն ինչ ծածկում: Արաբօն եւ Վարդանը մի‌ւս ընկերների հետ կարողանում են աներեւութանալ եւ նորից դէպի գործ դիմել:

Մի աւ ժամանակ ոչ ոք չէր իմանում նրանց ուր լինելը: Միայն ժողովուրդն հաւատում էր թէ նրանք ազատ են, նոր պատրաստութիւններ են տեսնում, նոր խմբեր են կազմում՝ շարունակելու իրենց կռիւը եւ որ գլխաւորն է ազատելու ձերբակալուած Տամատեանին:

## ԿԱՐԱՓԻԼԻՍԷԻ ԿՌԻՒԸ

Ամառւայ ամիսներն էին: Սահմանագլխի մօտակայ դիւղերում եռ ու զեռ կար: Ցեղափոխ. խումբ պիտի անցնէր Երկիր: Այդ լուրը մի նոր եւ վեհ ապրեցում էր շատերի համար: Զինակիր հայդուկներն են դրանք, որոնք պարտաւոր են ամենայն զգուշութեամբ եւ բոլոր վտանգները յաղթահարելով, գէնքը տեղափոխել եւ որոշուած վայրը հասցնել:

Ցունիս ամիսն էր: Ռուսաստանից ոգեւորուած

եւ անձնազոհ երիտասարդների այդ խումբը, բաղկացած սահմանահայ եւ կովկասահայ յեղափոխականներից, յաջողութեամբ անցնում է սահմանն ու մտնում Բասէն՝ աւելի խորերն երթալու եւ յեղափոխական գործն աւելի ամուր կազմակերպելու համար:

94–ի յունիսի 20–ին, երբ նրանք անցնում են Կարաքիլիսէ քրդաբնակ գիւղի մօտով, պատահում են կառավարական զինուորների: Տղաները ամէն կերպ աշխատում են խուսափել եւ թակարդի մէջ չընկնել: Նրանք ո՛չ մի նպատակ չունէին կուի բռնելու, սակայն, զինուորները աւելի ու աւելի համարձակ են դառնում, երբ նկատում են զինուած հայերի խուսափումը: Նրանք վճռում են ինչ գնով էլ լինի ձերբակալել նրանց եւ այդ պատճառով էլ սկսում են հրացանաձգութիւնը: Տղաները առաջին անգամ չեն պատասխանում, այլ չտապով չարունակում են իրենց ճանապարհը: Զինուորների յամառ հետապնդումն սոխպում է նրանց լաւ մոտծել, կշռել եւ ապա կուի բռնել: Եւ երբ նկատում են որ իրենց խոյս տալով աւելի են ոգեւորում զինուորները եւ որ վերջիններիս արձակած հրացանների ձայնից բազմաթիւ քրդեր են չտապել օգնութեան հասնելու, վճռում են դիրքեր գրաւել եւ պատասխանել:

Հայդուկների առաջին համազարկը, նրանց անշեղ գնդակներն իրենց ազդեցութիւնն ունենում են, որովհետեւ զինուորները թուլացած՝ չետ գնալու վճիռ են արձակում: Բայց երբ շրջակայ Մուղարտճուղ, Արփաչայ եւ այլ գիւղերից քրդական հրոսակները օգնութեան են հասնում, իսկ միւս կողմից

էլ մօտ 40 հեծեալ զինուորներ երեւում, նրանք սիրտ առած նոր յարձակողականի են պատրաստւում...:

Սկսւում է տաք եւ կատաղի կռիւ: Տղաները իրենց նոր մօսիններըը փորձելով գործադրութեան մէջ են դնում: Թշնամին կամաց-կամաց մօտենում է դէպի զէրքերը: Քանի առաջ է գնում, այնքան վիրաւորներ եւ սպանուածներ է ունենում, այն ժամանակ երբ յեղափոխականները ապահով զէրքերի մէջ լինելով անվնաս են մնում:

Ձորս ժամ չարունակարար կռիւն է տեւում: Տղաները կարողանում են իրենց զէրքերը պահպանել մինչեւ երեկոյ, երբ եւ վճռում են օգտւել հանգամանքից ու խոյս տալ:

Ամբից երկու հոգի — Սռաքելը եւ Մկրօն, որոնք խմբից զատւել էին, գնացողների, զէնք փոխադրողների թիկունքը պաշտպանելու, կռւում են մինչեւ վերջին փամփուշտն ու ապա այլ ճանապարհով աշխատում խոյս տալ: Նրանց այդ չի յաջողւում, որովհետեւ ձերբակալւում են և լաւ գանակոծւում, որպէսզի յեղափոխականների տեղն յայտնեն, բայց անօգուտ:

Մինչ այդ երկու հոգին կալանաւորւում են եւ բանտ նետւում, միւսները կարողանում են ապահովաբար աւելի խորերն հասնել ու իրենց վրայ դրւած պարտականութիւնը լիուլի կատարել:

## ՀԱՑԴՈՒԿԱՑԻՆ ԽՄԲԻ ԿՌԻՒԸ

94 թւականն էր: Գարնան սկիզբներին, երբ դեռ ձիւնը նոր էր սկսում հալւել, երբ դեռ

բուք ու բորանը սարերի վրայ էին թափառում ու երբ գեռ ամէն մարդ կուշ եկած իր բնակարանում՝ տաք ու հանգիստ իր օրերն էր անցկացնում, հայդուկային մի խումբ, բաղկացած 7 հոգուց, Պարսկաստանից Երկիր անցաւ՝ վասպուրականի գծով: Նրանք կարեւոր յանձնարարականներով էին անցնում եւ մեծ ժամանակ մի քանի բեռ էլ «ապրանք» էին փոխադրում ներսերը: Երեք օր ուռով եւ բեռնաւորուած՝ քալել էին անընդհատ, երբ գգում են որոշ յոգնածութիւն, վճռում են դադար առնել, «ջունչ քաշել», ապա թարմ ուժով շարունակել իրենց ճանապարհը: Նախօրօք զգուշական բոլոր միջոցները ձեռք են առնում՝ պահապան նշանակելով ճօտակայ հանդիպակաց բլրի վրայ, որտեղից ազատ կերպով կարելի է տեսնել շրջականերն ու իւրաքանչիւր մի վտանգ ժամանակին նկատել ու խմաց տալ:

Մեւս տղաները, վռազ մէջ մտնելով, ձիւնը մի կողմ տալով՝ իրենց համար պառկելու տեղ են պատրաստում:

Հազիւ 3–4 ժամ հանգստացել էին, երբ պահապանը նշան է տալիս, որ շրջակայքում զափթիաներ են երեւացել: Խումբը մի րոպէից ոտքի վրայ կանգնած էր: Առաջին որոշումն է լինում՝ յարմարաւոր դիրքեր գրաւել, թողնել ձորը եւ դիմացի բլուրը բարձրանալ, որ եթէ պատահի որ կուի բռնուեն, գոնէ աւելի բարձրից կարողանան կրակել:

Մինչ նրանք հեւ ի հեւ կը բարձրանային դէպի վեր եւ ամէն կերպ կ'աշխատէին հասնել գագաթը, կիսաճամրին կը նկատեն զափթիաներին: Այս վերջիններս, ինչպէս երեւում է, առաջուց են հետա-

պընդել եւ իմանալով որ հայդուկները պիտի հանդըստանան, վճռել են չրջապատել ու քնած ժամանակ ձերբակալել եւ կամ կոտորել բոլորին: Ոստիկաններն հրամայւում են տեղներից չշարժւել, ո՛չ մի դիմադրութիւն ցոյց չտալ, բայց ապարդիւն: Առաջին ընկերոջ նշան բռնելն ու ոստիկանների վախուսը մէկ կը լինի: Ինչ անց երկու կողմերն էլ դիրքերի մէջ էին եւ կռիւն էլ սկսւած: Տղաները դեռ ձորի մէջ էին. նրանք պարտաւոր էին մի կողմից զբաղեցրնել թշնամուն, իսկ միւս կողմից աւելի վեր ելնել եւ թիկունքից զարնել:

Այդ դժւարին նպատակին հասնելու համար խումբը երկու մասի է բաժանւում — կուռղ, դիմադրող և դէպի վեր ելնող՝ նոր դիրքեր գրաւելու համար: Ձորի մէջ մնացողները կուռւում էին քաջաբար: Նրանց գնդակները կարկտի պէս էին տեղում եւ անընդհատ: Տեղից-տեղ ցատկելով եւ կրակելով նրանց այնպէս էին ցոյց տալիս, որ իրենք իբրև թէ թւով շատուր են և հնարաւորութիւն էին տալիս դէպի վեր գնացող ընկերներին չնկատւել զարհիանքից:

Թշնամին էլ պակաս ճարպիկ չէր: Նա էլ երեք մասի էր բաժանւել եւ չրջապատել յեղափոխականներին. կամաց-կամաց յառաջանալով նրա նպատակն էր օղակի մէջ առնել և ձերբակալել: Ձերբակալութիւնն իրենց համար աւելի ձեռնտու էր, քան սպանութիւնը: Առաջին դէպքում նրանք կ'արժանանային ե՛ւ դովասանքի, ե՛ւ չքանչանի, իսկ երկրորդ դէպքում՝ միայն դովասանքի:

Մինչ այս, մինչ այն, առաջուց վճռած մի քանի հոգիները երկու հազար ոտք բարձրութիւն ունեցող

բլուրը բարձրանալով իրենց սիրած համազարկերը սկսում են։

Ջրի մէջ գտնուած տղաները սիրտ են առնում, ոգեւորւում եւ ուռաներ կանչելով իրենց դիրքերից ելնում։ Թշնամին անակնկալի է գալիս։ Նա իրեն երկու կողմից շրջապատուած է տեսնում։

Այդ յարձակման ժամանակ սպանւում է խմբի տղաներից Սահակը։ Տղաներն աւելի են կատաղում, որովհետեւ վրէժ պիտի լուծեն, իրենց սիրելի ընկեր Սահակի վրէժը, որ նահատակւեցաւ իրենց առաջ։

— Տղե՛րք, Սահակն ընկած է, բայց վնաս չունի. վրէ՛ժ, առի՛ն, կրա՛կ թշնամու վրայ, ձայն տւեց հայդուկներից մէկը։

— «Կեցցէ՛ վրէժը, կեցցէ յեղափոխութիւնը», լսւեցաւ խմբի միահամուռ աղաղակը։

Շուտով ոստիկաններին օգնութեան են հասնում եւ շրջակայ քրդական գիւղերից։

Կռիւն աւելի օրհասական բնոյթ է կրում։ Փոքրաթիւ հայդուկները բոլորովին չեն ընկճւում։ Նրանք գիտակ իրենց պարտականութեան, շարունակում են սկսած պայքարը այն յոյսով, որ անպայման պիտի յաղթանակեն։

—Սա թող լինի Սահակի փոխարէն, լսւեցաւ արեւելեան դիրքերից մի ուրախալի բացականչութիւն։ Եւ զափթիան թաւագլոր գետին փռւեցաւ։

— Սա էլ թող լինի Սուլթան Համիդին ղուրպան, լսւեցաւ հարաւային դիրքից։ Տղաների ոգեւորութեան չափ չկար։ Քրդերի օգնութիւնն էլ ո՛չ մի նշանակութիւն չունեցաւ, որովհետեւ չկարողացան իրենց գրաւած դիրքերից և ո՛չ մի քայլ առաջ

անցնել:

Ամբողջ օրը կատաղի կռիւը չարունակւում է, մինչեւ երեկոյեան խաւարը գալիս է բաժանելու երկու դարձեալ թշնամիներին: Տղաները առիթը չեն փախցնում: Նրանք զգում էին, որ իրենց պարտականութիւնն այլ է, որ կարեւոր յանձնարարականներ են տանում եւ որ այդ պատճառով էլ խելացիութիւն չէ չարձակողականի սկսել:

Ներքեւի տղաները կամաց-կամաց ելնում են բլրի գագաթը, մխանում մխա ընկերներին եւ ապա որոշում կայացնելով՝ բլրի մխա փէշերով վար իջնում:

Նրանք վերջին դնդակներն էլ արձակելով թշնամու դիրքերի վրայ՝ «մնաս-բարով» ասելով իրենց ճանապարհն են չարունակում:

## ԴԵՐԵԿԻ ԿՈՒԻԸ

94 թուականի յուլիսի սկիզբներում Պարսկաստանում գտնւած Դերեկի վանքի հողի վրայ Աղբակի մագրիկցիների ցեղից 5 մարդ սպանւեցան: Այդ դէպքը մեծ յուզում առաջ բերեց կառավարական եւ քրդական շարքերում: Նրանք չէին կարող երեւակայել, որ իրենց տիրապետութեան շրջանում երկւայ ստրուկ եւ ճնշւած հայերը կարող էին սպանել քիւրդերին: Այդ դէպքը նրանք մեծ արշաւանքի եւ պատրաստութիւնների նախանշան համարեցին եւ իսկոյն ամէն հնարաւոր միջոց գործադրեցին՝ սահմանադրութիւնը պահպանելու եւ հայդուկներին լրտեսելու: Բահրի փաշան վանից տեղափոխւեցաւ Բաշ-Գալէ՝ սահմանադրին աւելի մօտ լինելու: Պէտք էր

պատժել յեղափոխականներին, եւ փաշան իր մօտ կանչեց չիրակների ցեղապետ Մամէին, որ յանձն առնէ վանքի վրայ արշաւելու պարտականութիւնը: Վանքը դատնելով պարսկական հողի վրայ՝ կառավարութիւնն զգուշանում էր պատժողական խմբեր ուղարկելու, վախենալով երկու պետութիւնների դիւանագիտական յարաբերութիւնների լարումից եւ մանաւանդ Ռուսիայի եւ Անգլիայի միջամտութիւնից:

Վալին կատաղած էր եւ հրամայում էր, ինչ գնով էլ լինի, քանդել յեղափոխականների բոյնը. «Դերեկը պիտի քանդուի. հէնց վաղը—վաղը, քարը քարի վրայ չպիտի մնայ: Հողի հետ հաւասարեցրէք, մխսխլմաններ, սուլթանի հրամանն է այդ: Հայ ապստամբների արիւնով ներկուած գլուխները վաղն այստեղ պիտի տեսնեմ: Կատարեցէք չներին»:

Եւ հրամանն իսկոյն իրագործւում է: Պատրաստւում է մի մեծ արշաւանք, որի գլուխն է անցնում մազրիկցիների ցեղապետ յայտնի Շարաֆ-բէկը: Նա իր մօտ է հրաւիրում բազմաթիւ քրդական ցեղապետների, խորհրդակցում է նրանց հետ, աշխատելով ընդհանուր համաձայնութիւն կայացնել: Ապա նա լրտեսների մի քանի խումբ է ուղարկում՝ վանքի չրջակաները մանրամասն ուսումնասիրելու:

Այդ նախապատրաստութիւնները աննկատ չեն մնում վանքի մօտակայքում ապրող դիւղացիների համար, որոնք օր առաջ վճռում են տեղափոխել՝ դգալով գալիք ահաւոր վտանգը: Նոյն որոշումն են կայացնում եւ մի քանի հայ ընտանիքներ, որպէսզի դոհ չգնան քրդական վայրագութիւններին:

Յեղափոխականներն էլ լուռ չէին: Նրանք գիտէին ծրագրուած արշաւանքի մասին եւ ուրախ էին, որ զոհն իր ոտքով է գալիս: Վանքի մէջ այդ ժամանակ մնացել էին 35 հոգի՝ 4 գիւղացի, 5 միաբան, 12 «ուխտաւոր» յեղափոխականներ եւ կանայք, երեխաներ:

Վանքը գտնւում էր տաճկա-պարսկական սահմանագլխի վրայ և շրջապատուած էր Դուշմանի հրակայ լեռներով, որոնց փէշերում ցրուած էին քրդական բազմաթիւ գիւղեր:

Ներսում գտնուածները վճռում են կռուել մինչեւ վերջին շունչը: Նրանք առաջուց իրենց պատրաստութիւններն են տեսնում, քար ու աղիւս են կրում եւ դիրքեր շինում: Նրանք բոլորն էլ մի գաղափարով էին միացած՝ վարդապետ թէ յեղափոխական, գիւղացի տղամարդիկ եւ կանայք: Յեղափոխական երգեր երգելով առաւօտից մինչեւ երեկոյ աշխատանքի մէջ էին: Նրանք ամրացնում էին պարիսպներն ու աւելի բարձր դիրքեր էին կանգնեցնում: Երկու-երեք օրւայ ընթացքում նրանք իրենց գործն արդէն լրացրել էին եւ սպասում էին թշնամու արշաւանքին:

Յուլիսի 21-ի առաւօտն էր: Դիրքերում գտնուած պահապանները հրացանաձգութեան նշան տուին: Բոլոր կռւողներն էլ կազմ ու պատրաստ էին իրենց դիրքերում: Առաջուց վճռած դիրքերում հայ կըտրիճները չօքել էին արդէն քարերի յետեւ: Նրանք չորս կողմից էլ շրջապատուած էին: Հարիւրաւոր զինուած քիւրդեր եւ յիսունի չափ էլ կառավարական զինւորներ՝ Խանթ գիւղի կորդօնի թիւրք հարիւրա-

պետի հրամանատարութեան տակ, առաջանում էին դէպի վանքը: Դիմացի բլրից էլ համիդիէ հեծելազօրքն էր իջնում եւ այսպէս կանխապատրաստուած ծրագրով, ամէն ինչ առաջուց մտածած, կշռած եւ կել էին վանքը քար ու քանդ անելու եւ յեղափոխականների գլուխները Բահրի վաշային տանելու:

Ամրապետն անվրդով իր դիրքի մէջ էր եւ հեռադիտակով ուսումնասիրութեան էր ենթարկում թշնամու շարժումները: Նա առաջուց պատուիրել էր շատ վամփուշտ չվնշացնել, այլ ամէն մէկ գնդակով թշնամու շարքերից զոհեր խլել:

Կանայք եւ երեխաները սկսել էին իրենց սովորական աղմուկը — լաց, կոծ, սարսափ: Դրանց այդ իրարանցումն աւելի էր խանգարում, յուսահատեցնում կուռղներին, քան թշնամու անչափ ուժը եւ լաւ պատրաստութիւնը:

Քրդական ցեղերի գլխաւորները առաջուց գիտէին, որ անկարող են գրաւել վանքը, որովհետեւ շատ դժուարին եւ վտանգաւոր վերելք ունէր: Նրանք խորամանկութեան պիտի դիմէին, որպէսզի կարողանային հայդուկներին իրենց դիրքերից դուրս հանել, խլեցնել ներքեւ, շրջապատել եւ... գլուխները վաշային տանել: Այդ դիտաւորութեամբ մի քանի տասնեակ քիւրդ յարձակում գործեցին վանքի նախիրի վրայ, գնդակներ տեղացին երկու փոքրիկ նախրապահների գլխին — 16 եւ 17 տարեկան տղաներ, որոնք անմիջապէս դէպի վանքը սկսեցին վազել՝ օգնութիւն խնդրելով կուռղ յեղափոխականներից:

— Տղե՛րք, ձեզ մեռնի՛մ, որդիներս, նախիրը,

բղաւեց երեխաների մայրը:

Ժամանակ չպէտք էր կորցնել եւ ահա խմբապետի հրամանով սկսւում է հրացանաձգութիւնը: Անշեղ գնդակներն յետ են մղում Նախիրի վրայ յարձակւող քիւրդերին եւ հնարաւորութիւն տալիս փոքրիկներին՝ ազատուելու եւ վանք ապաստանելու:

Սկսւած էր կռիւը: Սար ու ձոր թնդում էր հրացանների որոտից: Զորս կողմից սկսւում է յարձակողականը: Թրքական եւ քրդական միացեալ խմբերը, առանց հաշւի առնելու իրենց տւած զոհերը, դիմում են գրոհի, բայց մօսինի գնդակների տեղատարափի տակ՝ ստիպւած են լինում յետ նահանջել: Մի քանի անգամ նման խիզախ փորձեր արին, բայց եւ ոչ մէկը չյաջողուեցաւ:

Դէպի վեր ելնել չէին կարող, իսկ Փէդայիներն էլ իրենց դիրքերից չէին շարժւում:

Անելանելի կացութիւն էր ստեղծւել: Յաղթահարելու ո՛չ մի միջոց չէր մնացել: Աննպատակ հրացանաձգութիւնը ո՛չ մի իմաստ չունէր: Նրանք պարտաւոր էին այդ օրն եւ եթ ամէն ինչ վերջացնել, թէ չէ կարող էին շրջապատւել պարսկական զինւորներով:

Այս անգամ փորձեցին ուժեղ յարձակւում գործել մի որեւէ դիրքի վրայ, որպէսզի այդ միջոցով կարողանան միւս դիրքերը թուլացնել եւ յարձակումի համար պատրաստել:

Ինչ որ շատ կանխապատրաստութիւններ են տեսնւում, տեղի են ունենում համախմբումներ եւ զանազան դիրքերից դէպի արեւելեան ճակատն են ուղղւում: Խոշոր պատրաստութիւնն աննկատ չէր

անցնում եւ խմբապետն հրամայում է զգոյշ լինել, մտածւած զարնել եւ դիրքերի մէջ ոչ մի փոփոխութիւն չմտցնել:

Մի ժամ յետոյ լսւում են վայրի աղաղակներ քրդական երգեր, չեփորի հնչումներ եւ խիզախ, անվախ յարձակում: Նրանք բաժանւած, ցրւած խմբերով, փորսող տալով եւ հրացաններ պարպելով դէպի վանքն էին արշաւում:

Օրհասական եւ վերջին րոպէն էր: Մութն արդէն վրայ էր հասնում եւ արեզակն իր յաջողութիւններն էր մաղթում ազատութեան համար կռւող հայդուկներին:

—Տղե՛րք, պատրաստ կացէք, մի՛ յուսահատւէք: Մենք այս վշտա ճանապարհն ենք ընտրել, այլ եւս յետ չդառնալու մտքով: Մեր վերջը մահն է: Պատրաստ գտնւեցէք եւ քաջ: Թշնամու վերջին յարձակումն է այս, խրախոյս կարդաց Դաւանը ընկերներին:

Ցեղափոխական—ռազմական երգերը միախառնւեցան զնդակների սուլոցի հետ եւ այդ մաքուր, պեղեցիկ մթնոլորտի մէջ բոլորն էլ առւած էին կըռւել ու կռւում էին քաջարար:

Թշնամու այդ ծրագիրն էլ ձիրաւորւեցաւ: Նա ստիպւած եղաւ նահանջի փողը փչել: Ի զուր տեղը աւելորդ զոհեր տւին եւ զնդակներ փչացրին: Ոչ մի քայլ չկարողացան առաջանալ: Հայդուկներից և ոչ մէկին վնաս չհասցրին: Նրանք ամօթահարւած, յաղթւած, իրենց ընկածների, վիրաւորների դիակները վերցնելով քաշւեցան սահմանադլխից եւ անցան Թրքական հողը:

*Յաղթանակը յեղափոխականներինն էր։ Նրանք բոլորն էլ ի մի գումարուեցին, փոխադարձաբար ողջագուրուեցին եւ վճռեցին երկար չմնալ վանքում, այլ դուրս ելնելով այլ շրջաններ անցնել։*

*Նրանք մի քանի օր էլ մնացին վանքում, ապա առաջուց շրջականերն հետախուզող սուրհանդակներ ուղարկեցին եւ երբ լուր հասաւ որ ոչ ոք չկայ, ճանապարհներն ապահով են եւ ազատ, թողին այդ պատմական վանքը, ամուր սեղմեցին իրենց հետ կռուող վանականների ձեռքն ու աներեւութացան։*

## ԱՀԱԲԵԿՈՒՄՆԵՐ

95 *թուականի ընթացքում մի շարք ահաբեկումներ տեղի ունեցան, որոնք արդիւնք էին այն արդար զայրոյթին, որ տեղ գտան հայ յեղափոխականների սրտում Սասունի ապստամբութեան ճնշուելուց յետոյ։ Իւրաքանչիւր անյաջող ձեռնարկից յետոյ հասարակութիւնը ենթարկւում էր ռէակցիայի, որի արդիւնքն այն էր լինում որ ստոր տարրերի թիւն աւելանում էր, մատնիչները բազմանում էին եւ այդպիսով անբարոյականացնում հասարակական մթնոլորտը։*

*Այդ զայրոյթի առաջին զոհն է դառնում* Խաչիկ Բախալեանը։ *Սասունի ապստամբութիւնից յետոյ, երբ եւրոպական պետութիւնների կողմից քննիչ յանձնախումբ նշանակուեցաւ՝ իրերն իրենց վայրում քննութեան ենթարկելու եւ երբ հասարակական կարծիքը գերագրգռուած դրութեան մէջ էր ու Հայկ. Հարցը բոլորի շրթունքների վրայ, ու անհրաժեշտ էր ուժ տալ այդ բողոքներին եւ պետու-*

*թիւնների գործնական միջամտութիւնն հրաւիրել, Բաղէշի կուսակալ Թահսին փաշան հանրագրութիւն էր հաւաքում տեղական երեւելի հայերից: Այդ հանրագրութեան բովանդակութիւնն էր, որ «իբրեւ թէ Սասունում հայ աւազակներ կային, որի համար էլ հայերը խնդրել էին կուսակալին՝ գնալ եւ զսպել նրանց»: Եւ Թահսին փաշան գնացել ու կոտորել էր հայերին: Հայերը մերժում էին ստորագրել: Այդ աշխատանքն իրականացնելու համար Բախալեան վատթար տիպը իր աջակցութիւնն է բերում, դիմում է թէ՛ քաղաքի եւ թէ շրջանների հայերին՝ ստորագրելու, բայց մերժում է ստանում:*

*Այն ժամանակ նա, ցոյց տալու համար իր ամենազօր ազդեցութիւնը կառավարական շրջաններում, 20 նշանաւոր հայերի եւ Ախլաթի այն ժամանակուայ առաջնորդ վարդապետին՝ իբրեւ կասկածելի անձնաւորութիւններ է ներկայացնում, որի հետեւանքով նրանք ձերբակալւում են եւ բանտ նետւում: Միեւնոյն ատեն կառավարութիւնը պաշտօնանկ է անում դատարանի հայ անդամ Կակոսեանին, բանտ առաջնորդելով նրան եւ տեղը նշանակում է սեւհոգի Բախալեանին:*

*Այդ բոլորն ի նկատի առնելով Բաղէշի կոմիտէն գործը յանձնում է ահաբեկիչներին, որոնք կարողանում են յաջողութեամբ կատարել իրենց վրայ ընկած պարտականութիւնը:*

Լրտես Արտաշէսի սպանութիւնը.— *Ապրիլ 3-ին Դաշնակցական ահաբեկիչների ձեռքով Ղալաթիա թաղի մէջ ահաբեկման է ենթարկւում գաւառացի-*

ներին յայտնի լրտես Արտաշէսը: Նա լրտեսութեան բոլոր տուեալներն էլ ունէր — անբարոյական վարք, ճարպիկութիւն, զարգացում եւ սրամտութիւն: Կառավարութեան ձեռքին լաւ խաղալիք էր: Շնորհիւ իր բազմապիսի ընդունակութիւններին եւ անուշ լեզուին, նա մտնում էր գաւառներից եկած Հայրենակիցների մէջ, բարեկամանում էր նրանց հետ, իրեն նշանաւոր ազգասէր էր ցոյց տալիս եւ նոյնիսկ երբեմն էլ յեղափոխական պատմութիւններ էր անում, թէ ինչպէս իրեն ձերբակալել են, բանտ նետել, եւայլն, եւայլն: Այդ միջոցներով նա կարողանում էր վստահութիւն ձեռք բերել եւ իմանալ որոշ գաղտնիքներ, յեղափոխականների անուններ եւ ապա այդ բոլորը մի քանի օրից յետոյ ներկայացնում կառավարութեան: Այդ ձեւով նա կարողացել էր 8—10 հոգու բանտարկել տալ եւ որոշ գաղտնիքներ երեւան հանել: Նրա սրիկայութիւնն ու յանդգնութիւնը չափից անցնում էին: Նա ո՛չ միայն ներս էր մտնում բոլոր շրջանակները և տեղեկութիւններ հաւաքում, այլ եւ ազատօրէն կարողանում էր բանտ մտնել, այցելել իր զոհերին, ցոյց տալ որ ինքը նրանց բարեկամն է, որ կարող է յարաբերութիւն պահպանել ներսի եւ դրսի միջեւ եւ այդ կերպով կարողանում էր դրսում ողջ մնացածների աչքին թող փչել ու իր «աւատարութիւնները» շարունակել:

Այդ պրօվակացիան երկար տեւել չէր կարող և իր դիմակը մի օր պարզուեցաւ: Պարզ գաւառացի Հայրենակիցները սկսեցին կասկածով վերաբերուիլ դէպի այդքան ազատօրէն կառավարական շէնքերն ու բանտերը մուտք գործող Արտաշէսը եւ այդ մա-

սին տեղեկացրին Պօլսոյ Դաշնակցական մարմիններին: Սրանք էլ իրենց հերթին մանրամասն քննութեան ենթարկեցին, ուսումնասիրեցին բոլոր քայլերը եւ եկան այն անվիճելի եզրակացութեան, որ նման սրիկայ տխպերն աւելի վնաս են հասցնում յեղափոխական շարժման եւ շարքերին, քան շատ կառավարական պաշտօնեաներ:

Գործը յանձնւում է տեղի ահաբեկիչներին, որոնք յաջողութեամբ վերջնում են մէջտեղից լրտես Արտաշէսին:

Ոստիկան Հաճի-Տիգրանի ահաբեկումը.— Նախկին սարկաւագ էր, որի պատճառով էլ ծանօթ էր հայկական մտաւորական շրջաններին եւ հայ ժողովրդի հոգեբանութեան: Նա սրամիտ էր և խօսուն, որի համար էլ արժանացաւ Նազըմ փաշայի յատուկ ուշադրութեան: Նա բաւի բուն նշանակութեամբ լրտես էր եւ այն էլ եւրոպական իմաստով, Շէրլօք Հօլմսեան ճարպիկութիւններով:

Նա ամէն տեղ էր — մտաւորականների, արհեստաւորների, բանւորների, մուրացիկների շրջանում: Նա ամէն ձեւով երեւան էր գալիս: Շատ անդամ կը հանդիպէիք ծպտուած, կեղծ մէրուքով, մի ուրիշ անգամ մուրացկանի հագուստով՝ ողորմութիւն խնդրելիս, մի այլ դէպքում՝ կառապան էր եւ իր ծառայութիւններն էր առաջարկում իր «ղիւղացի, ճանապարհ անցորդներին», առաջնորդելու վերջիններին ժամադրավայրերը եւ այսպէս շարունակ. կան փոփոխութեան ենթարկելով՝ կարողանում էր խոշոր ծառայութիւններ մատուցանել կառավարու-

թեան եւ առատ նուէրներ ստանալ:

Եթէ անհրաժեշտ լինէր այս կամ այն խոշոր դէպքից յետոյ մի շարք խուզարկութիւններ կատարել եւ այդ նպատակով յատուկ անուանացանկ պատրաստել, առանց Հաճի Տիգրանի չէր կարելի: Եթէ պէտք կար շրջապատելու տուն մը և անոր անցքերը բռնելու, որ ներսը գտնուածները չկարողանան փախուստի ճամբան բռնել, նրան էին ուղարկում եւ նշանակում ոստիկանների հրամանատար: Նա շատ անգամ անձամբ ղեկավարել է մի քանի խուզարկութիւններ:

Երբ 'բոյորն էլ բանտ էին տարւում եւ կարիք կար խոստովանութեան, ո՛չ ոք այնքան ճարպիկ եւ գիտակ չէր միջոցների, որքան նախկին սարկաւագը, որ հնարաւորութիւն էր ստեղծում կառավարութեան համար՝ համեմատաբար շատ տեղեկութիւններ ստանալու եւ ճնշելու յեղափոխական շարժումը:

Իբրեւ լրտես, մատնիչ, կառավարութեան ձեռքին գործիք 90–95 թւականին, ենթարկւում է մահւան պատժի: Վճիռը գործադրելը յանձնւում է Ռումբ կոմիտէի Թ-եան խմբին, որ 95 թւի մայիս 21-ին այդ անարժան հային, ազգադաւ եկեղեցականին ուղարկում է դէպի գերեզման:

Մատնիչ Թիւթիւնջեւ.— Հայկական իրականութեան մէջ տարօրինակութիւններ շա՛տ են պատահում: Մի փոքրիկ ստրուկ, ճնշուած ազգութիւն ենք եւ մեր կեանքը լի՛քն է հակասութիւններով ու խաչաձեւումներով: Փոխանակ Ազատագրական մեծ գա-

գաղափարի շուրջն հաւաքելու, միանարար ապըս-տամբութեան դրօշ բարձրացնելու եւ նպաստելու յեղափոխական գիտակցութեան զարգացման, մեր մէջ ընդհակառակը որոշ կրթուած, ինտելիգենտ մարդիկ ո՛չ միայն չէզոք և կամ հակառակ են, այլ եւ զբաղւում են մատնութիւններով:

Ահա ձեզ Թիւթինջեւը: Կրթուած, ինտելիգենտ մարդ է: Արհեստով վիրաբոյժ եւ ապա ուրեմն կեանքի կուլի մէջ ապահովագրուած:

Նա մի ժամանակ եղել է եւ յեղափոխական շարքերում, աշխատել է գաղափարակից ընկերների հետ, պայքարել է բռնակալական կարգերի դէմ եւ, ո՞վ գիտէ, քանի անգամ ձեռք է բարձրացրել մահւան պատժի ենթարկելու այն սրիկայ եւ մատնիչ տիպերին, որոնք խոչընդոտ են հանդիսանում յեղափոխական յառաջխաղացման:

Եւ այսօր ինքն էլ նոյն շարքերում է, ինքն էլ խոչընդոտներից է եւ կառավարութիւնից որոշ ռոճիկ ստանալով՝ նա մատնութիւններ է անում՝ իր նախկին ընկերներին յանձնելով կառավարութեան ձեռքը, չմոռանալով միաժամանակ նորերին էլ առաքել դէպի պետական տանջավայրը, դէպի յաւիտենական աքսորը: Սակայն նա երկար չարունակել չկարողացաւ իր չարաղէտ գործունէութիւնը:

Պօլսոյ Ահաբեկիչ Ատեանը քննելով նրա բոլոր յանցանքները, մահուան է դատապարտում եւ գործադրութիւնը յանձնում Ջոհ խմբի անդամներին:

Յունիսի 11-ին, երկու ահաբեկիչներն ամենայն սառնասրտութեամբ կը մօտենան Թիւթինջեւին, երբ վերջինս փողոցում կանգնած կը լինի, առճա-

նակի մի հարուածով վերջ կը տան նրա կեանքին: Ոստիկանները կը սկսին հետապնդել, տեղի կ'ունենայ թեթեւ ընդհարում երկու կողմի միջեւ, բայց ճարպիկ յեղափոխականները, իրենց պարտքը կատարելուց յետոյ, կարող կը լինին խուսափիլ կառավարութեան հետապնդումից:

Մամբրէ վարդապետ.— Սա էլ արիւնոյ տիպերից մէկն էր և իր վարդապետ լինելու հանգամանքն ստիպում է մեզ աւելի երկար կանգն առնել, մանրամասն բացատրութիւններ տալ, որպէսզի հնարաւորութիւն ունենանք ճօտիկուց ծանօթանալու հայկական իրականութեան ախտաւոր կողմերից մէկի հետ:

Նախկին վարդապետ էր, որ իր մի քանի կրակոտ եւ ազդային էութիւն կրող քարոզներով կարողանում է հասարակութեան մէջ անուն ստեղծել եւ յարգանք վայելել: Ապա նա, ո՞վ գիտէ ինչ պատճառներով, ձգում է հոգեւորականի աքեմը, դասալիք է դառնում ու մտնում յեղափոխական չարքերը, երեւի այն հաւատքով, որ կրօնական ասպարէզը «չատ նեղ» է գալիս իր ազատամիտ թռիչքներին:

Նա անդամագրւում է Հնչակեան կուսակցութեան, որ բնականաբար այդպիսի մի լինաելիզենտ եւ հռչակ վայելող մարդուն գրկաբաց է ընդունում, առանց իմանալու որ ապագայում մի հրէշ պիտի դուրս գայ:

Ապա նրան ուղարկում են դաւառները՝ կազմակերպական գործերով, պրօպագանդ անելու եւ նոր

մասնաճիւղեր կազմակերպելու համար: Մի առ ժամանակ նա չարունակում է իր գործը, կատարում է որոշ դրական գործեր, կազմակերպում է նոր մարմիններ եւ առանց դժւարութեան յաջողութիւնների հանդիպում:

Թիւրք կառավարութիւնը, որ իրեն նպատակ էր դրել յեղափոխութիւնը ոչնչացնել, ճնշել այդ չարժումը եւ դեկավարներին բանտ նետել, իր հայեացքն ուղղում է եւ յեղափոխական Մամբրէի վրայ: Առաջին անգամ լինելով նա իր կեանքի ընթացքում ենթարկւում է հալածանքների եւ անկարող լինելով տանել, նա թողնում է գաւառն ու վերադառնում Պօլիս:

Այստեղ նրա աստղը թեքւում է: Մտնում է անբարոյական շրջանակում, իրեն մատնում է իր անառանձ կրքերին, չռայլ եւ դեղխ կեանք է անցկացընում, որոնց համար խոշոր գումարներ են պէտք, որոնք չկային յեղափոխական կուսակցութեան դրամարկղում, ապա ուրեմն պէտք էր անցնել կառավարութեան չարքերը, մտածում է այդ թոյլ, կամազուրկ եւ անբարոյական տիպն, որ լրտեսի պաշտօն ստանձնելով՝ լքում է յեղափոխական չարքերը:

Այդ օրւանից սկսում է մատնութիւնների չարքը: Նա կառավարութեան ձեռքն է յանձնում իր նախկին դաշտակիցներին, երեւան է հանում մի քանի ծրագիրներ եւ լայն աշխատութիւն է տոյժ տալիս՝ ձերբակալութիւնների ժամանակ:

Մի քանի անգամ նա Մուրատի անուան եկած նամակները դաշտնի կերպով ստանում է եւ յանձնում կառավարութեան:

*Հ. Յ. Դաշնակցութեան Պօլսոյ Կ. Կոմիտէի ձեռքն է ընկնում այն հարցաքննութիւնը, որից երեւում է որ Մամբրէն կառավարութեան ձեռքն է յանձնել շատ յեղափոխականների, Հնչակեանների Պօլսոյ մարմնի անդամներին, կրօնաւորներից շատերին, որոնց մէջ Եգիպտոսի այն ժամանակւայ նըշանաւոր առաջնորդ՝ Մատթէոս Իզմիրլեանին, որին ներկայացնում է որպէս յեղափոխական: Ինքը Մամբրէն, աւելի բարձր պաշտօնի տիրանալու համար եւ լաւ ոճիկ ստանալու դիտաւորութեամբ շատ անգամ կեղծ նամակներ էր պատրաստում եւ իբրեւ յեղափոխական գործակատար ներկայացնում, որով և ոստիկանութեան սիրելին է դառնում:*

*Իր հարցաքննութիւնը, որ տպւած է ամբողջութեամբ «Դրօշակ»ի մէջ, ծառայել է այն հիմքը, որի վրայ յենւած Պօլսոյ կենտրոնական Կոմիտէն մահւան է դատապարտել: Այդտեղ մանրամասնօրէն կան իր արած բոլոր կեղտոտ քայլերը, յեղափոխականների անունները, բազմաթիւ հոգեւորականների ցանկը, որոնք յեղափոխական գործակատարներ են հըրաշակւած եւ այն, որ ինքը ոճիկ էր ստանում եւ առաջին անգամ էլ որպէս նւէր Հարիւր օսմ. լիրա է ստացել:*

*Օգոստոսի 3-ը նշանակալից օր է դառնում, երբ Իւակիւտարի Թատրոնի դռան առջեւ, հսկայ բազմութեան մէջ գարնւում է Մամբրէն՝ իր գործած անթիւ յանցանքների համար: Կառավարութիւնը, գայրացած, որ կորցրել է իր օգտակար պաշտօնեան, անմիջապէս խիստ խուզարկութիւնների է դիմում եւ մի քանի օրւայ ընթացքում 150-ի չափ անձեր, որ-*

ծից անդիտակ մարդիկ բանտ են առաջնորդուում այն ժամանակ, երբ սպանութեան իսկական հեղինակները — ահաբեկիչները — ազատ են եւ նոր գործի պատրաստ:

95 թուականն էր: Արիւնի սարսափը տիրում էր ամենուրեք:

Թիւրք կառավարութեան ներկայացուցիչները դաւառներում՝ պահանջում էին հայերից յեղափոխականներին յանձնել, սպառնալով հակառակ դէպքում ջարդ, ալան-թալան եւ աւերածութիւն: Նրանք կանխամտածած ծրագրով սկսել էին զինաթափ անել ժողովրդին, զրկել նրան ինքնապաշտպանութեան միջոցներից եւ այդ առաւել եւս դժուարին չէր, որովհետեւ Եւրոպական դիւանագիտութեան ճգրագործ լռութիւնն աւելի նպաստաւոր պայմաններ էր ստեղծել հալածանքի համար:

Կոտորած էր Երզնկայի, Պօլսոյ, Մուշի, Տրապիզոնի, Հալէպի եւ այլ հայաշատ շրջաններում: Սեւ խաւարը սարսածւել էր ամենուրեք: Պէտք էր յեղափոխական ըմբոստ գործողութիւններով ցոյց տալ, որ դեռ ժողովուրդը չի յուսահատուած, որ դեռ պատրաստ են կռիւը չարունակելու եւ այդ ուղղութեամբ որոշ քայլեր առնուած են:

Սեպտեմբերի 3-ին Վանի մէջ, Դաշնակցական կոմիտէի որոշմամբ 4 հոգով յարձակւում են մի Թիւրք հարիւրապետի վրայ, որ Սասունի կոտորածների հերոսներից էր եւ ամէն կողմ պատմում էր իր սխրագործութիւնները: Նա մի ժամանակ բռնութեամբ իր մօտ էր պահում մի հայ աղջիկ, որին կանխօրօք բռնաբարել էր: Յարձակումը կատար-

ւում է բազմամարդ վայրում, հարիւրապետը վիրաւորւում է երեք գնդակով: Ահաբեկիչներն ազատւում են:

Սեպտեմբերի 20-ին, Տրապիզոնի մեծ, արքայական ճանապարհի վրայ ահաբեկիչները յարձակում են գործում Վանի նախկին կուսակալ Բահրի փաշայի եւ Տրապիզոնի զինուորական հրամանատար Ֆերիդ փաշայի վրայ: Երկուսն էլ վիրաւորւում են: Ահաբեկիչներին ձերբակալել կառավարութիւնը չի կարողանում եւ ինչպէս միշտ, այս անգամ էլ իր բարկութիւնը անմեղ ժողովրդի վրայ է թափում:

Այս երկու կենտրոնական ահաբեկումները, չընայած իրենց ելքի մէջ անյաջող, բայց իրենց խիզախութեամբ մեծ տպաւորութիւն են թողնում կառավարական շրջանակների վրայ, որ կարծում էին թէ՝ յեղափոխականները անհետացել են, հայ ժողովուրդը խելօքացել է և որ ներքին շարժումների ո՛չ մի վտանգ չկայ:

Դրանցով չի վերջանում ահաբեկումների շարքը: Զանազան շրջաններում իրար յետեւից պատժի են ենթարկւում հայ կեանքի մէջ գտնւող ցեցերը, որոնք պակաս վնասակար չեն ազատագրական շարժման: Ահա Շատախի Կաճետ գիւղացի Սօումին, որ իր ստոր մատնութիւններով շատախցի կտրիճներին և յեղափոխական տիպերին կառավարութեան ձեռքն է յանձնել: Նրա զոհերը բանտերի մէջ անլուր տանջանքների են ենթարկւել եւ իրենց տանջավայրից մատնիչի մահը պահանջել: Եւ նրանց ընկերները, կօմիտէի կանխօրօք համաձայնութեամբ, սեպտեմբերի 22-ին սպանում են նրան Շատախում:

*Ահա եւ* Յովհաննէս աղա Տէր Պօղոսեանը, *որ Բահրի փաշայի օրով ոստիկանական լրտես էր ու տեղեկատու, որ կառավարութեան ամենամտերիմ եւ հաստատուն սիւներից մէկն էր, որովհետեւ ինքն էլ կեղեքողներից էր եւ կատաղի հակառակորդ նոր տիպի երիտասարդներին՝ յեղափոխականներին, որոնց դէմ անկարող լինելով այլ կերպ կռուել եւ յաղթահարել, աշխատում է լրտեսութեամբ վերջ տալ յեղափոխականների գոյութեան: Սեպտեմբերի 28-ին նա եւս վանի մէջ սպանուում է ահաբեկիչների ձեռքով:*

*Ահա Մուշի չրջանը, ուր* Բարսեղ Խահանեան, *Մօկունք գիւղի մօտ իր արժանաւոր պատիժն է ընտանում տարիներ շարունակ կառավարութեան տեղեկութիւններ հաղորդելու եւ յեղափոխականների շարքերը լրտեսած լինելուն համար:*

*Կարինն էլ իր որոշ դերծունէութիւնն է ցոյց տալիս. այնտեղ էլ որոշ աշխատանք է կատարուում եւ դրա արդիւնքներից մէկն է լինում, որ հոկտեմբերի 5-ին, քաղաքի փողոցներից մէկի վրայ սպանուում է ահաբեկիչների ձեռքով* փաստաբան Յարութիւն Տէր Սարգսեանը, *որ զբաղուում էր մասնութիւններով:*

*Այս բոլոր ահաբեկումները, որոնք կատարուում են 95 թուականի ընթացքում, ո՛չ թէ միայն պատիւ են բերում հայ յեղափոխական չարժման, այլ եւ անպատուութիւն հայ հասարակութեան, որի ծոցից են ծնուել այդ վատ տիպերը եւ խոչընդոտ են հանդիսանում Սպատագրական չարժման:*

## ՁԽՈՒՐԻ ԿՌԻՒԸ

Կոտորածները չեն յուսահատեցրել յեղափոխականներին, այլ աւելի յանդուգն եւ խիզախ են դարձրել: Վրէժի եւ փոխհատուցման անհրաժեշտ զգացմունքը, ապրելու եւ վերածնուելու կարեւորագոյն բնազդը, աւելի են շեշտըւում եւ իրար յետեւից երեւան են գալիս ահաբեկումներ եւ հայդուկային խմբերի կռիւներ:

Մայիսի 30-ն է: Դաշնակցութեան հայդուկային խումբը դիմում է դէպի Վան, որտեղից պիտի անցնէր գաւառները՝ զինման եւ պրոպագանդայի գործն աւելի հիմնաւորելու համար:

Ձխուր գիւղի մօտ խումբն իջնում է մի ձորակում՝ մի քիչ հանգստանալու համար եւ միաժամանակ չի մոռանում եւ պահապան դնելու մօտակայ բլրի վրայ՝ հսկելու համար: Շրջակայ հովիւները, սակայն, նկատում են զինուած ֆիդայիներին և հաւա՛ր են ձգում: Շուտով բազմաթիւ քիւրդեր՝ մօտ՝ 100-ի չափ, զինուած չէչխաններով, շրջապատում են հայդուկներին:

Գիւղալդարայի բերանում, ուր մի ժամանակ անվեհերաբար կռուել են Յովհաննէս Ագրիպասեանն ու Աղէքսանդր Գօլօշեանը, եւ ուր այդ պաշտելի հերոսներն են նահատակուել, սկսւում է մի տաք և կատաղի կռիւ:

Առաջին ուժեղ համազարկը իր խոշոր ռազմական նշանակութիւնն է ունենում, որովհետեւ քիւրդերը յետ են նահանջում: Նրանց չէչխանները մի քանի հարիւր քայլից այն կողմը չեն կարողանում գործ տեսնել, իսկ մօտենալ՝ իրենց կեանքը վտանգի

ենթարկել էր նշանակում:

Նկատելով Շինամու թոյլ կողմը, տղաները այնքան էլ չեն մտահոգւում եւ աշխատում են դիրքերը պահել, մինչև իրենց մշտական օգնող եւ բարեկամ մութը վրայ հասնի: Այդ պատճառով խումբը որոշ մասերի է բաժանւում — մի մասը կռւում է, դիմադրում, իսկ միւսները՝ քնանում, հանգստանում և այսպէս պարբերաբար:

Այս անհոգութիւնն աւելի է սարսափ ազդում քիւրդերի վրայ, որոնք առաջուց էլ այն կարծիքն են ունեցել, որ Ֆիդայիները դերմարդիկ են:

Սպասողական այս դրութիւնը երկար չի տեւում: Շրջականերից հաւաքւում են այլ քրդական հրոսակները, դինւած մարդիկ, հայ հայդուկներին մի լաւ պատժելու համար:

Երեկոյեան դէմ է: Քիւրդերի սիրած ժամանակն է, երբ նրանք կատաղի եւ վերջնական յարձակման են պատրաստւում: Այդ դիտէին տղաները, որի համար էլ բոլորն իրենց դիրքերում էին: Երեք մասի էին բաժանւել նրանք, երեք կողմից կրակ տեղալու այն ժամանակ, երբ քիւրդերը, երեւում էր, միայն մի ուղղութեամբ պիտի առաջ տանէին իրենց յարձակողականը:

Սկսւեց կռիւը: Քիւրդերը կամաց-կամաց մօտենում են տղաների դիրքերին, որտեղից ո՛չ մի պատասխան չի լսւում: Աւելի են ոգեւորւում քիւրդերը եւ ահա նրանք մօտ հազար քայլի վրայ են:

Լսւեց ահռելի համազարկը: Մի քանի քիւրդեր գետին են փռւում: Նրանք չէին սպասում այդ անակնկալին:

— Տղե՛րք ջան, լսւում է հրամանատարի ձայնը,

ամէն տեղ կռիւը մէկ է, թշնամին մէկ է: Այստեղ, Գիւզալդարայի բերանում մեր կռիւը սուրբ է, որովհետեւ յեղափոխական նախակարապետների չիրիմների չուրջն է մղւում այդ կռիւը և նրանց ոսկորները ուրախանում են, որ իրենց սկսած գործը աճել է, զարգացել: Կուեցէ՛ք քաջաբար: Մի հարւած եւս եւ թշնամին կորած է:

— Կեցցէ՛ կռիւը, կեցցէ՛ վրէժը, արձագանգում է հայդուկների խումբը:

Այս տեսարանի առաջ թշնամին ապշահար էր մնացել: Նա անկարող էր մի քայլ առաջ դնալ: Երբ այս վերջին ոգեւորութեան հետ մխաւին երեք կողմից էլ կրակ թափւեցաւ, նրանք սոխրւած եղան նահանջել, ասելով «վախէ՛ք, սրանք դեւ են, սրանք մեզ կը կոտորեն»:

Մութը վրայ է հասնում եւ տղաները իրենց ճամբարն են չարունակում:

Այս կուի առթիւ Մօշաբից պաշտօնական հեռագիր են ղարկում Վան, յայտնում են յեղափոխականների երեւալը: Կառավարական չրջաններն ահ ու սարսափի մէջ են: Նրանք նախապատրաստական միջոցներ են ձեռք առնում՝ հայդուկների մուտքը Վան՝ արգիլելու համար: Այդ նպատակով վարագայ լերան ալ ու ձախ կողմի կիրճերի վրայ զօրքեր են դնում՝ քաղաքի ապահովութեան համար:

## ԱՐՇԱԻԱՆ ԳԻՒՂԻ ԿՈՒԻԸ

Կոտորածների ժամանակ եղել են որոշ գիւղեր, որոնք խելացի են գտնւել առաջուց գինւելու եւ դի-

մադրելով կարողացել են փրկել իրենց կեանքն ու ստացուածքը: Դրանցից նշանաւոր է եղել ե՛ւ կարնոյ Արշաւան դիւղը, ուր կոտորածների ժամանակ կը գտնուէր զինուած հայդուկային խումբը: Երբ խուժանը յարձակում է գործում գիւղի վրայ՝ թալանելու, կոտորելու, նրա ընթացքը կասեցնում է համազարկը: Ոչ ոք չի յամարձակւում մօտենալ: Մի քանի օրից յետոյ նոր պատրաստութիւնով, նոր ուժով գիւղի վրայ կ՝աբշաւեն, բայց անքուն եւ քաջարի հայդուկները միշտ յետ կը մղեն նրանց: Հինդ անդամ յարձակում է կատարւում, կառավարական զինուորներ էլ մասնակցում են, բայց ոչ մի վնաս տալ չեն կարողանում: Երբ վերջին անգամ, մեծ ուժով ամբոխը չրջապատում է այդ մի բուռն քաջերին, գիւղի քէհեաները կը դիմեն յեղափոխականներին ասելով. «Անձնատուր լինենք, դուցէ ասով կեանքերնիս փրկենք»:

«Վատեր, կը պատասխանեն կուռղները, ասպատեցէք մեզ մեռնինք, յետոյ դուք անձնատուր եղէք. դորչափ կենդանի ենք՝ այդ ցածութիւնը ընել երբէք չանձն չենք առներ եւ ոչ ալ կը թողունք, որ ուրիշներն ընեն»: Այս դիմադրութիւնը խոր տպաւորութիւն էր ձգել կառավարական չրջանակների վրայ: Վերջիններս կառավարական հմայքը ընկած են տեսնում ժողովրդի աչքում, որի համար էլ զօրք են ուղարկում դիւղը պաշարելու: Երբ հայդուկները յամառում են եւ սրանց էլ ընդունում դնդակների տարափով, այն ժամանակ կառավարութիւնը բանականանում է միայն հարիւր ոսկի դանձելով՝ որպէս տուգանք:

Արշաւան դիւղի պաշտպանութեամբ թալանից ու կոտորածից ազատւել են Նինձի, Թվանթ, Մուսուրկա եւ Սօուք-Ջերմուկ դիւղերը:

Դիմադրութիւններ եղել են եւ Ռշտունեաց գաւառի Փայխներ և Նոր-Գեղ դիւղերում, որոնք 15 օր կարողացել են դիմադրել: Սպակերտի շրջանում էլ դոնւել են որոշ վայրեր, որոնք փրկւել են չնորհիւ պէնքի եւ ինքնապաշտպանութեան: Դիմադրել են Սեւ-Քար, Կեղիսի վանք, Առնջիկ, Դաշա, եւայլն: Կռիւ են մղել Ճաճւան, Կօտենց եւ 15—16 այլ դիւղեր:

Ինքնապաշտպանութիւնը նրանց փրկել է կոտորածից եւ թալանից:

## ՔԷՕՓՐԻ-ՔԷՕՑԻ ԿՌԻԻԸ

Քէօփրի-Քէօյ դիւղն ընկած է Լազիստանի եւ Էրզրումի ճամբան վրայ, որի պատճառով էլ միշտ չարձակման է ենթարկւում դինւած լազերից: Լազերի մի խումբ, բաղկացած 50 հոգուց, չարձակում է դործում դիւղի վրայ՝ թալանելու նպատակով: Այդ շրջանում պատող Գրիգոր Տէր Մկրտչեանի հրամանատարութեան տակ եղած հայդուկային խումբն իմանում է այդ մասին եւ առանց րոպէ կորցնելու՝ չտապում է օգնութեան:

Ամբողջ Գրիգորը՝ կատաղած չարձակում է դործում լազերի վրայ, առաջին հարւածից վար է դլորում Ահմէդ Օմարին (լազերի առաջնորդը) եւ դոռում. «Անպիտաններ, միշտ սովոր էք հային անպէն դանելով մորթել նրան. միշտ պէտք է ձեղնից

*արիւն հոսի. գետին փուխր»: Գրիգորը խլում է Օմարի մարթին հրացանն ու դառնում դէպի խումբը, բայց զարնուելով կռնակից ընկնում է գետին:*

*Հայդուկները կատաղում են, տեսնելով իրենց քաջարի հրամանատարի վիրաւորուելը եւ վճռում են փախուստի մատնել թշնամուն: Նրանք իրար յետեւից մի քանի համազարկ են տալիս, ապա իրենց դիրքերից ելնելով՝ յարձակողականի սկսում: Լազերը չեն կարողանում դիմանալ, նրանք փախուստի են դիմում: Տղաները հետապնդում են նրանց գիւղից դուրս էլ, մինչեւ որ մութը վրայ է հասնում:*

*Գիշերային մթութեան մէջ լազերը, կարծելով թէ Փիդային հանգիստ պառկած կը լինի, վերադառնում են դէպի գիւղը, ցորեկուայ իրենց ընկերների դիակներն հաւաքելու եւ տանելու: Այդ նկատում են պահապանները եւ իմաց են տալիս տղաներին, որոնք իրենց տեղերից դուրս թռչելով՝ յանկարծակիի են բերում նրանց եւ մի քանի հոգու վիրաւորելով՝ փախուստի մատնում:*

*Այս դէպքից յետոյ թէ՛ լազեր, թէ՛ զափթիաներ կը վախենան Բէօփրի–Բէօյում մնալ եւ միշտ էլ վախով ու ակնածութեամբ կը վերաբերուեն դէպի այդ գիւղը:*

*Գիւղացիներն իրենց շնորհակալութիւնն են յայտնում հայդուկներին, որոնք յիշեցնում են նրանց «եթէ ուզում ես Թուրքի հետ բարեկամ լինել, նրան լաւ ծեծիր» հայկական առածը:*

*Հայդուկային խումբը անցնում է այլ շրջաններ:*

### ՍԻՒՐՄԷՆԷԻ ԿՌԻՒԸ

Սիւրմէնէն Տրապիզոնի հարաւ արեւելեան մասի մի լեռնոտ գաւառն է: Ազգաբնակութեան մեծ մասը մահմեդականներից է բաղկացած, իսկ հայերը կենտրոնացած են հինգ գիւղերում, որոնք իրարից մէկ ժամ հեռաւորութիւն ունին: Այդ գիւղերն են՝ Քուլթունց, Քինասլի, Ժիւժք, Կատրաս եւ Էլէմանոս, որոնց մէջ 90 տուն կայ, մօտ 800 բնակչութեամբ:

Այս լեռնականները շատ անգամ յարձակումների են ենթարկուել, բայց միշտ էլ անվեհօրէն դիմադրել են թշնամիներին ու պաշտպանուել: Վերջին ժամանակներն էլ յեղափոխականներն էին մուտք գործել եւ երբեմն էլ ապաստանում էին այդ վայրերում՝ սուլթանական իշխանութեան հետապնդումներից առժամապէս ազատ մնալու համար:

Դաշնակցութեան «Տապարեան» խումբը անընդհատ կ'ասպատակէր Թիւրք գիւղերի վրայ եւ միշտ էլ կը խուսափէր կառավարութիւնից: Անկարող լինելով ձերբակալել դրանց, որոնք միշտ ահ ու սարսափի մէջ էին պահում իսլամ ազգաբնակչութեան և պաշտօնեաներին, կառավարութիւնը վճռում է ջըրջապատել հայաբնակ գիւղերն ու մի լաւ ջարդ տալ, որից սոսկացած յեղափոխականներն իրենք դան՝ անձնատուր լինելու:

Կառավարական զինուորները միայնակ չէին կարող այդ արշաւանքը գլուխ հանել, եթէ նրանց թիւը մի քանի հազարների անգամ հասնէր, որովհետեւ անծանօթ եւ անմատչելի լեռներ են, որոնց կողերին

քնակութիւն են հաստատել մի քուռն հայեր: Այդ նպատակով նա հրաւէր է կարդում լազերին, պատզակցիներին, պուրնուխցիներին, ախուցիներին եւ մի քանի այլ ցեղերի ներկայացուցիչներին, յորդորում է յարձակում գործել Սու-Արմէնէի գիւղերի վրայ ու քար-քանդ անել:

Գազանային հակումներ ունեցող ամբոխն էլ յարմար առիթի էր ապասում և ահա նա ուրախութեամբ ընդառաջ է գնում իշխանութեան առաջարկներին:

Հայերն էլ ղղում են գալիք վտանգը եւ պատրաստւում են պաշտպանութեան:

Ներանք առաջուց գիւրքեր են շինում, կուռղներին բաժանում են մասերի եւ ապատղական դրութեան մէջ մնում մինչեւ սեպտեմբերի 20, երբ եւ 300 զինուած լազեր պաշարում են ժիւժք գիւղը: Հայերը ցոյց են տալիս ուժեղ դիմադրութիւն, որից լազերն ստիպւած են լինում յետ քաշւել եւ իրենց հարւածներն ուղղել Քինասլիի վրայ: Այս անգամ թշնամու թիւն աւելանում է, չհաշւած «Ջորիի պաշտօն» կատարող կանանց, որոնք եկել էին յատկապէս թալանելու, կողոպտելու նպատակով: Գիւղը պաշարում են լուսնկայ գիշերով եւ պահանջում հայերից, որ անձնատուր լինեն, բայց մերժում են ստանում: Հայ գիւղացիները՝ տղամարդ թէ կին, գիւրքեր մտած պատրաստ էին իրենց ապաւութեան համար կուելու:

Սկսւում է հրացանաձգութիւնը: Ժուժանը կատաղիօրէն յարձակում է գործում՝ ամէն ինչ տակն ու վրայ անելու, կոտորելու հայերին, բայց ներ-

սկից՝ դիմադրում են քաջաբար:

Յանկարծ, դիշերային մթութեան մէջ, մօտակայ բլուրից լսուում է մի անվեհեր ձայն.

— «Յածուխեանը եկաք դիշերով եւ գիւղը պաշարեցիք. ասկայն, գիտցած եղէք որ դուք էլ պաշարած էք եւ եթէ հայերից մէկին դպչէք, խոտացած եղէք, որ ձեզնից ոչ ոք ողջ չի մնայ»:

Հրացանները որոտում են: Յեղափոխական թրուցիկ խմբի անդամներն էին դրանք, որոնք իրենց սովորական պատյան էին կատարում՝ օգնելու հայերին: Թիւրք խուժանը ապշահար է մնում: Նա չէր սպասում այդ անտեսանելի ուժի երեւալուն եւ այդ է պատճառը, որ նրանք թողնում են գիւղն ու հեռանում, անդադար կրկնելով «էրմէնիէր պիզի բրաճաֆլար»:

Դրանով չէ վերջանում ամէն ինչ: Կատաղած ամբոխը նոր պատրաստութիւն է տեսնում, նոր ուժեր հաւաքում մախելացի, օձոլի, խարեցի, զանեկի ցեղերից, թուով հազար հոգի, որոնք նորից պաշարում են Քինասլի գիւղը:

Մի քանի ժամւայ կուից յետոյ նրանք կարողանում են գրաւել գիւղի մի թաղը, որտեղ եւ ձերբակալում են մի քանի կիներ եւ աղջիկներ, սպանում են երեխաներին, լկտում են Մարկոսեան Սարգիսի տասը տարեկան աղջկան, որի հայրը մի քանի րոպէ առաջ սպանուել էր՝ քաջաբար դիմադրելով: Անկարող լինելով ամբողջ գիւղին տիրանալ եւ տեսնելով մնացածների դիմադրութիւնը, նրանք ստիպուած են լինում յետ քաշուել:

Մեա կողմից ախուցինները չրջապատել էին

Քուրթունունց թաղը, իսկ Ճաւատար-Ալլին, Քէօռ-Պօղոն եւ իր եղբայր Քիպարը, Կուկուտացի Չաւֆան-օղլիներն Կատրաս եւ Էլէմենոս գիւղերը:

Օրհասական կռիւը մի քանի օր է տեւում: Հայերը դիմադրում են քաջաբար և տեսնելով որ գիւղերում մնալով աւելի վտանգի պիտի ենթարկուեն, նրանք որոշում են բարձրանալ մօտակայ լեռներն ու անտառների մէջ ապաստանել:

Ամբոխի ցանկութիւնն էլ այդ էր: Նա չի հետապնդում հայերին, որովհետեւ նպատակ չունէր նրանց հետ կռուելու: Ներքեւում, գիւղերի մէջ սկսում են իրենց պաշտօնական թալանը — եւ բոլորը բարձելով իրենց կանանց՝ ճանապարհ դնում: Իրենք անկարող լինելով վրէժ լուծել, կոտորել զինուած հայերին, վճռում են աւերել շէնքերը եւ յարձակում գործելով Կատրասի եկեղեցու եւ դպրոցի վրայ, կոտրում են դռներն ու ամէն ինչ աւերում, ս. սեղանը և Մայր Աստուածածնայ պատկերը պղծում, ժամագրքերը կտրտում ու այրում և ապա քաշւում են դէպի Բաբերդ:

Ամբողջ 10 օր տեւում է այդ արշաւանքը, որի ընթացքում հայերը դիմադրել են եւ իրենց կեանքը պաշտպանել: Ապա նրանք վար են իջնում եւ իրենց տները ամայի գտնում:

Մի քանի օրից յետոյ կառավարութեան ներկայացուցիչ ոստիկանները գալիս են ու բազմում նրանց գլխին, պահանջելով զէնքերը. «այլ եւս ասանկ դէպքեր չեն պատահիր. մենք էլ ձեզ վրայ կասկած չենք ունենայ»:

Չքաւորութիւնն ու այլ սպառնացող չարիքներ,

*միանալով կառավարութեան խորամանկութեան հետ, ասիպում են հայ գիւղացիներին իրենց պէնքերը յանձնել:*

*Եւ սկսում է իսկական արշաւանքը անզէն հայերի վրայ, նրանց պատժելու իրենց ընթրասութեան եւ ինքնապաշտպանութեան համար:*

*Եւ այդ բոլորը կոտորածով է վերջանում:*

## ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՕՐՔԻ ՀԵՏ ԸՆԴՀԱՐՈՒՄ

*Հոկտ. 12-ին հայդուկային խումբը, բաղկացած 33 հոգուց, գինւած ամենաընտիր հրացաններով, անցնում է Տաճկահայաստան: Եօթ ժամ անընդհատ քայլելուց յետոյ, ծարաւ եւ յոգնած, նրանք փուռւում են սարի լանջին՝ փոքր ինչ հանգստանալու: Հոկտեմբերի սկիզբներին էր, աշնանային պաղ քամին փչում էր եւ աւելի դժւարացնում տղաների դործը: Պահապանն առաջ ու յետ էր պտտում յամրաքայլ եւ անդադար չորս կողմը նայում: Ցանկարծ դիմացի սարի գլխին երեւում են ահմանապահ զինւորները, որոնք կօրդօնն էին վերադառնում: Պահապանը այդ մասին յայտնում է խմբապետին, որն իսկոյն հրամայում է պատրաստ կենալ:*

*Զինւորները արդէն նկատել էին հայդուկներին: Նրանք քչւոր էին եւ միայնակ անկարող դիմադրելու, որի համար էլ փոքրիկ խորհրդակցութիւնից յետոյ՝ պատրաստւում էին փախուստի դիմելու, որպէսզի հնարաւորութիւն ունենան միւս ընկերներին յայտնելու, բայց հայդուկների միաժա-*

մանակ համազարկը նրանց գետին է փռում: Միայն մէկը կարողանում է ազատուել, որը եւ շուտով հասար է ձգում շրջակաները:

Շուտով հաւաքւում են պինւած քրդեր, ապա երեւում են 300 հետեւակ, 100 ձիաւոր եւ 3 թնդանօթ, բայց երբ պաշարում են բլուրը, նրանց դիմադրող չի լինում, որովհետեւ ֆիդայիները արդէն թողել էին դիրքերն ու օգտւելով գիշերւայ մթութիւնից՝ իրենց նպատակադրած տեղն էին ուղեւորւել:

Հայ յեղափոխականների այս յանդուգն քայլը— անցնել սահմանից աննկատելի կերպով, հասնել սահմանամերձ պինւորների կենտրոնատեղին եւ ըսպանելով մի քանի պինւորներ՝ անհետանալ — զարմանք է պատճառում և միաժամանակ ստիպում կառավարութեան՝ աւելի զգոյշ լինել եւ վախկոտ:

Յեղափոխական խմբերի ներս մտնելը, նրանց ընդհարումները, ահաբեկչական գործունէութիւնը նախանշաններ էին համարւում մի մեծ չարժման, որի էութեան մէջ չէին կարողացել թափանցել կառավարութեան պաշտօնեաները՝ իրենց անհամար լրտես օձնականներով:

## ՍԱՐԱ-ԲՈՂԱԶ-ԿԵՍԱՍԱՆԻ ԿՈՒԻՒԸ

Հայկական կոտորածներից յետոյ տեղի են ունենում մի շարք վրէժխնդրական գործողութիւններ, երբ պինւած հայդուկային խմբերը խանգարում են մարդասպանների եւ հայատեացների հանդիստը: Թիւրք կառավարութիւնն հրամայեց

տալիս ուժեղ հակողութեան ենթարկել պարսկատանկական սահմանապլուխը, որի համար էլ աւելացնում է զինուորների թիւն ու հրաւէր կարդում քիւրդ ցեղապետներին: 400 զինուոր մի այն Ապբակի Ս. Բարդուղիմէոս վանքը լեցուում են, վռնտելով այնտեղից վանահօրն՝ իր մարդկանցով: Կօթուրի սահմանի պահպանութիւնն էլ յանձնուում է մլանցոց, մոկորցոց եւ բադուրցոց, որոնց մի հանում են և Սարայի 150 սահմանապահ զինուորները:

Հոկտեմբերի 12-ին, երբ հայդուկային խմբի ընդհարումն է տեղի ունենում սահմանապահ զինուորների հետ, ընդհանուր խուճապը տիրում է վանի չուկայում: Կառավարութիւնը բացարձակ զինում է քիւրդերին եւ թիւրքերին: Հոկտեմբեր 13-ին վանում երեւում են Համիդիէ հեծելազնդեր, որոնք անդադար պտտում են փողոցները: Նոյն օրը Արծկէի եւ Արճէշի թալանումն է տեղի ունենում եւ կառավարութիւնը ո՛չ մի միջոցի չի դիմում՝ զսպելու վայրենի ամբոխի քայլերը: Իր լռութեամբ նա աւելի է խրախուսում:

Հայերն էլ լուռ չեն. նրանք էլ իրենց պատրաստութիւնն են տեսնում՝ սրբելով հրացաններն ու սրբերը մաքրելով: Կառավարութեան և հայերի միջև փոխադարձ կասկած է տիրում:

Դաշնակցական տեղական կենտր. կօմիտէն մի քանի օր է ինչ ապատում է հայդուկային մեծ խմբի, որը տարաբաղդաբար ուշանում է:

Լարուած դրութիւնն այսպէս շարունակւում է մինչեւ հոկտեմբեր 25-ը, երբ Դաշնակցութեան ստւար խումբը, լաւ ապառազինուած, ներս է մըտ-



ԴՈՒՄԱՆԻ ԽՈՒՄԲԸ

նում Թիւրքաց Հայաստան: Ճանապարհին դրանց են միանում 16 արմենականներ:

Բոլոր լեռներն արդէն ձիւնով ծածկուած էին, բայց այդ չէր կարող արգելք հանդիսանալ՝ նրանց ժամանակին Վան ժամանելուն: Խումբն առաջ էր գը-նում դանդաղ՝ ցրտի եւ ձիւնի շատութեան պատճառով: Մի քանիսի ձեռներն ու ոտները սառել էին: Յառաջընթաց խմբակը, որ բաղկացած էր 11 հոգուց, մի վերստի չափ հեռաւորութեան վրայ էր:

Մնացածները, որոնց աչքից յառաջապահները կորել էին, կասկածելով ճանապարհի շիտակութեան վրայ, վճռում են այլ ուղղութիւն բռնել: Առաջ քալելով՝ լուսաբացի մօտերը սրանք հասնում են Սարա գիւղաքաղաքի մօտ, որի պատճառով էլ դուրս են գալիս ճամբից եւ մի փոքրիկ ձորակի միջից բարձրանում Ինկիր-Թափա կոչուած բլուրը: Ժամի 2-ին, երկու քիւրդ նկատելով հայդուկների հետքերը, որսկան շան պէս կամաց-կամաց մօտենում են դիրքերին: Պահապան հայդուկը դիտակով նկատում է նրանց եւ անմիջապէս իմաց տալիս խմբապետին: Քիչ յետոյ քրդերն անցնում են մի բլրի քամակ, վիզները բարձր-ցածր անում եւ նկատելով հայդուկներին, անմիջապէս յետ փախչում ու հաւար ձգում մօտակայ քրդաբնակ գիւղերն ու Սարա գիւղաքաղաքը:

Քիչ յետոյ երկու ձիաւոր մօտենում են տղաների դիրքերին ու հրացան արձակում, որ հաւարի նըշան էր:

Եւ իրօք, կարճ ժամանակում քիւրդերն ու Համիդիէ ձիաւորները շրջապատում են հայդուկնե-

րին.—

— Հա՛, հա՛, հա՛, խաչաղէ փլայ,, խաչաղէ փըլայ (Հայ փախստականներ) հիմա ձեզ կը կոտորենք, հիմա ձեզ ջրի պէս կը խմենք: Ջան Ֆիդայիլար; էլ ո՞ւր պիտի ազատուէք, ո՞ւր պիտի փախչէք մեր ձեռքից:

Քրդերի ձիաւոր խմբերն անդադար գալիս են— մլանցիք, Թակուրցիք, մուկուրցիք և համսկցիք— որոնք իրար են խառնւում և որոնց թիւը կէս օրից յետոյ հազարի է հասնում՝ և բաղկանում հաւասար քանակութեամբ ձիաւորներից եւ հետեւակներից:

Հայդուկներն էլ լուռ չեն: Նրանք էլ առաջուց որոշած դիրքերի մէջ են: Մի րոպէ մոռացել են քաղցըն ու ցուրտը: Թմբածներն յարութիւն են առնում, իրար սրտապնդում, ոգեւորում եւ միասին երգելով «Տուր ձեռքդ եղբայր» եւ «Միփանայ սարեր»-ը, հըրացանները գրկում ու առաջ նետւում: Բողոքի եւ ոչ մի ձայն չի լսւում՝ չնայած յոգնած են եւ կռիների էլ մասնակցած: Նրանք զգում են իրենց վրայ ընկած խոշոր պարտականութիւնը, և դայն տանում են յատուկ տոկունութեամբ:

— Պատրաստ կացէ՛ք, լսւում է՛ խմբապետի ձայնը: Երկու կողմից էլ լսւում է հրացանի որոտը եւ կռիւն սկսւում է:Սկզբնական շրջանում քիւրդերն ու գինւորները, յենւելով իրենց թւի առաւելութեան վրայ, առաջ են նետւում մի գրոհով դիրքերը գրաւելու, բայց ստիպւած են լինում ետ կենալու՝ մոսինի հրացանների առաւելութեան պատճառով:

Խումբը երեք կողմից շրջապատւած է: Կռիւն սատիճանաբար տաքանում է եւ արիւնալից դառ-

նում ։

— Ընկաւ, ընկաւ, տղերք ջան, հրէ ձիուց քիւրդըն ընկաւ, գոռում է հայդուկը ։

— Ահա երկրորդը ձիուց կախ ընկաւ, բացականչում՝ մի ուրիշ ընկեր ։

Կռւի տաք ժամանակ խմբապետը դառնում է դէպի իր գաղափարակիցները՝ հետեւեալ խօսքերով ·

— Ընկերներ, ձե՛զ մատաղ, խփեցէք · յաջողւում է մեզ, մի՛ վախենաք ։ Մեռնինք մինչեւ վերջին ընկերը մեր բազմաչարչար սուրբ հողի վրայ ։ Զարկեցէ՛ք, թող անընդհատ սուլեն մեր գնդակները ։ Մի՛ մոռանաք, սակայն, որ կրկին կռիւ կ՚ունենանք ։

— Կեցցէ՛ կռիւը, կեցցէ՛ յաղթանակը ։

Եւ ամբողջ խումբը արձագանգ է տալիս իր հրամանատարի վերջին խօսքերին ։

Սարայի միրալայի հրամանատարութեամբ 60-ի չափ զինուորներ դիրք են բռնել խմբի յետեւի կողմում եւ համազարկ տալիս ։ Երրորդ դիրքի տղաները իրենց կեանքը մոռանալով, յանդգնութեամբ դուրս են թռչում դիրքերից եւ ուժեղ յարձակումով ստիպում նրանց նահանջի փողը հնչեցնել ։

Կէսօրից յետոյ խումբը տալիս է առաջին նահատակը՝ աշտանցի Ա...ն, որ անմիջապէս հոգին աւանդում է ։

— Տւեցինք առաջին նահատակը, ընկերներ, բղաւում է մէկը... վրէ՛ժ, կրա՛կ, կրակ թափենք թշնամու գլխին · սրբազան օր է այս ։

Հայդուկների դիրքից մի քիչ ներքեւ գտնւած

կարեւոր բլուրը վտանգի է ենթարկուում: Նշանաւոր կտրիճ քիւրդ Փաշօն 50 հոգով աշխատում է յեղափոխականներին իրենց դիրքից հանել: Վրայ են հասնում խմբապետն ու մի քանի ուրիշ տղաներ ու մի քանի համազարկից յետոյ Փաշօն ընկնում է, միւսները փախչում են ու բլուրն ազատուում:

Երեկոյեան դէմ, երբ ուժեղ եւ միացած յարձակում են գործում թշնամիները, երբ նրանք անզօր եւ յուսահատած վերջին ճիգն են թափում դիրքերը գրաւելու, յոգնած եւ անօթի հայդուկները՝ ինքնամոռացութեան մէջ դիմադրում են կատաղաբար եւ փախուստի մատնում թշնամուն: Այդ կռւի ընթացքում նահատակուում են Փանոսը, սալմաստցի Աբդարը, Աւետիսը և ուրիշներ: Մութը վրայ հասնելով կռիւը դադարում է, բայց խումբը մնում է պաշարուած:

Մութ գիշեր էր: Երկինքն ամպամած էր, որը հայդուկների համար բաւականին նպաստաւոր էր: Սաստիկ ցուրտ էր եւ տղաներն անընդհատ դողում էին: Պէտք էր գիշերով թշնամու շղթան ճեղքել եւ մի կերպ անցնել առաջ՝ վան հասնելու համար:

Դիրքերը փոխելով յեղափոխականները կրակ բաց են անում եւ թշնամին կարծում է թէ՝ խումբը պիտի վերադառնայ դէպի սահմանադրուխ: Տղաները բաժնուած են մի քանի մասերի, որոնք իրարից բաւականաչափ հեռաւորութեան վրայ պիտի քայլէին: Աննկատելի կերպով, չաւտ մեծ վարպետութեամբ նրանց յաջողւում է ելնել այդ վտանգաւոր թակարդից և քայլել դէպի Մամադ-Ալանի Քուեք կոչուած տեղը: Այդ նահանջի ժամանակ, երբ իրարից ո-

բոչ հեռաւորութեան վրայ են քայլում, հոկտ. 26-ի գիշերը, 14 հոգի են անյայտանում։

Երկար քայլելով, անընդհատ խուսափելով թշնամու հետապնդումից, 29-ի առաւօտեան խումբն հասնում է Հաջի Ղշլաղ գիւղի շրջակայքը, որ Բոզաղ-Բեասանից մի ժամ հեռաւորութեան վրայ է գտնւում։ Շամօկցոց ցեղը, իմանալով ֆիդայիների տեղը, միանում է հաջի-ղշլաղցի Ջնդի անունով ցեղապետին և ուրիշների հետ ու շրջապատում նըրանց։ Այս անգամ, սակայն, նրանք կրակով չեն ուզում ընկճել հայ խաչաղներին, այլ խօսքով և խորամանկութեամբ՝ աշխատելով ձերբակալել նրանց, խոստանալով Սոաւմբուլ ուղարկել և ազատել։

— Շատ լաւ, պատասխանում է հայդուկների գլխաւորը, թող գան մեզ մօտ ցեղապետներից 10-12 հոգի, բախդ. տան, երդւեն, որ մենք էլ հաւատանք ու անձնատուր լինենք։

Ցեղապետներն համաձայնում են։ Իրենց միջից 12 նշանաւոր մարդիկ են ընտրում, որոնք իրենց քայլերն ուղղում են դէպի տղաների դիրքերը։ Երբ սըրանք մօտենում են հրացանի գնդակի տարածութեան չափ, տղաների մօսինները միանգամից են որոտում և 12 ցեղապետներին գետին գլորում։

Բարձրանում է մի սարսափելի աղմուկ. սկըսւում է ուժեղ հրացանաձգութիւն. քիւրդերը վըճռում են վրէժխնդիր լինել և առաջ են նետւում։ Բայց երբ առաջին շարքերը երեք սպանւած և երեք վիրաւոր են տալիս, յուսահատւում են և յետ քաշւում։

Այդ կռւի ժամանակ ցեղապետներից սպանւում

են՝ Հաջի Ղշլաղայ Ջնդին, սորա որդին եւ եղբայրը, Հասքստանի Իբրահիմ աղան, Կարթալունայ Շաւէշ աղան եւայլն: Խումբը կարողանում է խոյս տալ թշնամուց եւ ուղեւորւել դէպի Բողազ-Քեասան: Հայաբնակ գիւղ է սա, որի բնակիչներն ամէն ինչ նւիրաբերել էին յեղափոխութեան:

Այս անգամ կանայք եւ խեղճ տղամարդիկ են թափւում հայդուկների առաջ, աղերսելով «ի սէր Աստուծոյ, ամա՛ն, շուտով զօրքը, քրդերը կը գան, գիւղ մի՛ մտնէք, ձեր հետքը բոլորովին յայտնի է: Մենք ոչինչ չենք խնայի, բայց այսօր լե՛ռը, լեռը»:

Սոված, անօթի, ցրտից եւ յոգնութիւնից թուլացած խումբը, որ մի քանի կռւի էր մասնակցել և մի քանի շաբաթ անդադար քայլում էր լեռների կատարներով, Փիզիքապէս անկարող է լինում ընդառաջ գնալ գիւղացիների պահանջներին եւ վճռում է մի քիչ հանգստանալ, հաց ուտել, ապա նորից թափառականի ցուպը ձեռքն առնել: Նրանք մտնում են տաք գոմի մէջ:

— Մի քիչ հաց ուտելուց յետոյ, նկարագրում է Թղթակիցը, ոտներս հանեցինք. ցրտահար ոտների գուլպաները հանելիս շատերի ոտքի կաշին պոկւում էր հետը, մի քանիսներին էլ ուռել էր: Ամէնքս էլ չորացած, կմախքացած էինք եւ ո՛չ մի մարդկային կերպարանք չէր մնացել:

Չոր խոտերի վրայ բոլորն էլ մեկնւում են, չմոռանալով մի քանի հոգի պահապան նշանակել:

Դեռ հազիւ էին պառկել, դեռ մի ժամ ու կէս չկար նրանց հանգստանալն, երբ յանկարծ գիւղացիները աղմուկ են բարձրացնում— «վե՛ր կացէք,

քիւրդերը, քիւրդերը, շուտով եւ զօրք կը հասնի»:

Քիւրդերը պաշարել են գիւղը. նրանք հայդուկների հետքերով կարողացել են առաջ շարժուել եւ գտնել օթեւանը:

Քրդերի հրամանով գոմի դուռը կոտրում է մատանուն իւղացի Աւետն ու իբրեւ պատգամաւոր հետեւեալ պայմանն է առաջարկում. «Զինաթափ եղէք եւ նրանք ձեզ անվնաս, ազատ կը թողնեն»: Խմբապետը պատասխանում է, որ «թող վախկոտ հայերն հեռանան, իսկ թէ յեղափոխականներն ինչ կ՚անեն, այլ էլ իրենց իմանալիք գործն է»:

Ստանալով մերժողական պատասխան, քիւրդերը կատաղում են եւ վճռում հրդեհել գոմը, որի համար էլ շրջականերից խոտի դէզեր են բերում եւ վերջըն էլ վառած լաթեր ձգելով՝ կրակ տալիս ֆիդայիների բնակարանը: Բոցերը երկինք են ելնում: Մուխը լեցւում է ներսը, դուռն արդէն այրուել է, կամաց-կամաց հրդեհն աւելի է տարածւում: Լո՛ւռ են բոլորը եւ ո՛չ մի ձայն չկայ: Քիւրդերը դիրք մտած սպասում են:

Յանկարծ դռան յետեւից դուրս է թռնում խըմբապետը, նրա յետեւից եւ բոլոր հայդուկները «դուրս, դուրս թռչել. կեցցէ՛ հայրենիքը, կեցցեն հայդուկները» աղաղակելով:

Այդ յանդուգն քայլը սարսափեցնում է շատերին եւ քրդերը շփոթուելով չեն կարողանում ո՛չ մի վնաս հասցնել, այլ զգալով աւելի վտանգի մէջ, դիմադրութիւն չեն ցոյց տալիս սրանք, այլ խուսափելու ճամբայ են որոնում: Քիւրդերից ընկնում են 15 հոգի: Հայդուկներին յաջողւում է գրաւել 6 հը-

բացան եւ 6 ձի:

Տղաները գիտէին, որ դրանով ամէն ինչ չի վերջանում, որ նոր պատրաստութեամբ իրենց պիտի հետապնդեն, ուստի չտապում են թողնել գիւղն ու բարձրանալ Ցաղքաձոր լեռան գլուխը:

Քիւրդերը մօտակայ Հաղարտ գիւղից օգնութիւն ստանալով՝ նորից յարձակում են գործում յեղափոխականների վրայ: Այս անգամ այնքան թափով չի լինում կռիւը, տեւում է մի քանի երկու ժամ, որից յետոյ գիշերը վրայ է հասնում եւ տղաները վճռում են ինչ գնով էլ լինի շարունակել ճանապարհը եւ խուսափել բոլոր կռիւներից:

Մի քա օրը նրանք հանդիպում են խմբի մի մասին, որին թողել էին ճանապարհին եւ որոնց մէջ էր գտնւում նաեւ Վազգէնը, որոնք երկու օր փարատում մնալուց յետոյ, կարողանում են հրաշքով ազատուել և ոչ մի կռւի բռնել:

Բողազ-Քեասանի կռւի ժամանակ յեղափոխականները կորուստ ունեցել են 20 հոգի, 30 հրացան եւ 18 բօմբլվէր: Կորուստը մեծ է լինում ո՛չ թէ բուռն կռւի ժամանակ, այլ աւելի յետոյ:

Հոկտեմբեր 26-ի գիշերւայ կորածներից Դաւիթ, Փանոս Բ. և Արսէն ապաստանում են Մամաղ-Ալանայ քարայրում: Լուսարացին նրանց շրջապատում են և ցրտահար հերոսներն հազիւ են կարողանում մէկ քիւրդ սպանել և մէկին էլ վիրաւորել: Եբեքն էլ նահատակւում են այդտեղ:

Վիրաւորւած Գարեգինը հազիւ իրեն ձգում է Սարա, ուր մերալայը տանջանքների է ենթարկում նրան՝ իմանալու յեղափոխականների գաղտնիքնե-

*ըը, բայց երբ չի յաջողւում, հրաժարւում է իսկոյն հրացանազարկ անել:*

*Փանոս Գ.Սարայի կուի դաշտում նոյն գիշերը սառչում է: Երիտասարդ Մարտիրոսը մնալով Բողազ-Քեասան՝ նահատակւում է: 7 հոգի էլ անլուր անհետանում են:*

*Սրանով վերջանում է Սարա-Բողազ-Քեասանի պատմական կուի մանրամասնութիւնը:*

*Այդ կռիւը մեծ ազդեցութիւն է ձգում թէ՛ քրդական եւ թէ՛ կառավարական շրջաններում: Բազմաթիւ առաջնորդներ են յօրինւում՝ ֆիդայիների քաջագործութիւնները պատկերացնելու համար: Պատմում են, որ երբ քիւրդ ցեղապետները հաւարի եկան եւ շրջապատեցին հայդուկներին, վերջիններս երգել սկսեցին եւ ուրախութեամբ վեր-վեր թռնելով, «կլոր պար» բռնելով զարճացան: Քրդերը՝ մնացել էին ապշած եւ չէին կարողանում հասկանալ թաքուրդ ընկած այդ «դեւերի» ցնծութեան պատճառները:*

*Առաջին մեծ ընդհարումն է այդ, որ իր մէջ պարունակում է խոր դաղափարականութիւն ու հերոսութիւն: Հոկտեմբերի 12-ից մինչեւ 29-ը քայլել՝ ձիւնի եւ սառոյցի վրայով, առանց հանգստի, առանց մի կտոր չոր հացի եւ այդ բոլորից յետոյ մի քանի անգամ շրջապատւել, վտանգի մէջ ընկնել եւ ապա յաղթական դուրս գալ — քչերի եւ յարգանքի արժանի մարդկանց գործ է:*

### Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ԿՌԻՒԸ

Խիզան գաւառին տիրապետող չէյխ Իբադուլլահը, Ջիբրանցի Նէյիդ-բէկը, Օսման-բէկն և իր արբանեակ խաչախ Մամէն, տիւտէրցի Օսման եւ Մահմէդ բէկերը, Նորտուզցի Շաքիրը եւ ուրիշներ՝ համախորհուրդ վճռում են վերջ տալ, բնաջնջել գաւառաբնակ հայերին։ Այդ նպատակով մի քանի մարդ են ուղարկում Ս. Խաչ վանքի վանահայր Սահակ վարդապետի մօտ, և պահանջելով 17 ոչխար եւ 8 տիկ իւղ։ Վանահայրն հիւանդ է ձեւանում եւ նորա տեղ վերատեսուչը 8 ոչխար եւ 2 տիկ իւղ տալով՝ ճանապարհ է դնում ներկայացուցիչներին։ Իրենց պահանջները լրիւ չկատարելուն համար, բոլոր աղաները կատաղում են եւ վճռում քար ու քանդ անել վանքը։ Վանահայրն իմանում է նրանց դիտաւորութիւնն ու անմիջապէս մարդ ուղարկելով Վան Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէի մօտ՝ օգնութիւն խնդրում։ Անմիջապէս երկու հայդուկ են գալիս, իրենց հետ էլ բերելով երկու աւելորդ հրացան։ Շուտով գալիս է եւ խումբը։

Հոկտեմբերի 26-ին, առաւօտեան դէմ, վանքը պաշարւում է Համիդիէներով։ Վանքի կռուողները քսան հոգի են լինում, որոնցից 4-ը բերդան հրացաններ ունէին, իսկ միւսները՝ հին չախմախլիներ։ Խումբը բաժանւում է չորս մասի, որոնցից իւրաքանչիւրը բռնում է մի-մի աշտարակ։ Կռիւը սկսւում է եւ հետզհետէ կատաղի բնաւորութիւն ըստանում։ Վանահայրը, հրացանը ձեռքին, ոգեւո-

*րում է տղաներին. «կուէք, տղերք, բայց փամփուշտների, բարութի խնայողութիւն: Կամ կը մեռնինք պատւով եւ չենք տեսնի վանքի աւերումը եւ կամ թշնամուն յետ կը դարձնենք կորագլուխ»:*

*Անհաւասար կուի ժամանակ քրդերը չեն համարձակւում առաջ շարժւել: Նրանք միայն աննպատակ հրացանաձգութեամբ են զբաղւում: Առաջին օրը նրանք քշում, տանում են* 80 *եզ, գոմէշ, կով եւ* 540 *էլ ոչխար:*

*Վանքը պաշարւած է մնում* 5 *օր: Այդ ժամանակւայ ընթացքում դիմադրութիւնը լինում է փառաւոր: Ներսից եւ ո՛չ մի զոհ, իսկ թշնամին տալիս է անթիւ վիրաւորներ եւ մի քանի հոգի էլ սպանւած:*

*Վերջին օրւայ կէսօրին մի խումբ զինւած քիւրդեր՝* 50 *ոչխարով առաջ են անցնում եւ անդադար գոռում. «Ձեր ոչխարների մի մասը յետ ենք դարձնում, մնացածն էլ շուտով կը բերենք»: Այս խորամանկութեան ներսից պատասխանում են գնդակներով:*

*Մինչ այդ վանքի քիւրդ հօտաղը միւս դուռ բաց է անում՝ իբրեւ ոչխարներն ընդունելու եւ այդ դաւադրութեան պատճառով քիւրդերը կարողանում են ներս խուժել: Վանքի բակում տեղի է ունենում վերջին, յուսահատական կռիւը: Կռւողների ռազմամթերքը վերջանալու մօտ է, ուստի խնայողաբար են վարւում: Նրանք գիտեն իրենց մահւան մօտալուտ լինելը, որի համար էլ աշխատում են աւելի զոհ խլել թշնամուց:*

*Քրդական հարիւրաւոր կատաղած, գազանացած դէմքեր ներս են խուժում, շրջապատում են մի*

բուան կուտղ քաջերի, սպանում են 8 հոգու, որոնք մինչեւ վերջին րոպէն հերոսաբար դիմադրում են եւ անձնատուր չեն լինում:

Երբ այդ սոսկալի, արիւնահեղ կռիւը վերջանում է, երբ տասից աւելի հայերի գնդակները ըսպառւում են, եւ երբ 5 օրւայ անընդհատ կռւից յետոյ անդէն դրութեան մէջ մնալով՝ ձերբակալւում, անպատմելի տանջանքների չարանն է սկսւում... Սահակ վարդապետին բռնում եւ սազ-սաղ կաշին քերթում, ապա բոլորի ներկայութեամբ վանքի դըրան չէնքի վրայ գլուխը կտրում: Ժամկոչից պահանջում են վանքի բանալիները, բայց կտրուկ մերժում ստանում, որի համար էլ կտրում են հաւատարիմ աւանդապահի երկու թեւերը: Ապա աւերում են տներն ու պարագները, պղծում են վանքի սրբութիւններն ու ամէն ինչ թալանելուց յետոյ՝ նորից սկսում իրենց անլուր չարչարանքները:«Ալիշանեան» ընկերութեան դրադարանը տակն ու վրայ են անում, ուսումնարանը քանդում, վանքի տնտեսին կտրատում, իսկ դաղափարական Տիգրան վարժապետին՝ դպրոցի չէնքին վրայ յօշոտում:

Այդ կռւի ընթացքում թշնամու սպանւածների թիւը 30-ից անցնում է, իսկ վիրաւորներինը՝ մի քանի տասնեակներով են հաշւում:

## ՂԱԼԱԹԻՈՑ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

96 թուականն է: Հայկական սարսափներից յետոյ յուսալքւած են բոլորը: Յեղափոխական չարքերից էլ շատ թուլամորթներ հեռանում են և աս

պարէզը թողնում փոքրաթիւ գաղափարական տար-
բերին, որոնք լուսաբեան մէջ մեծ ծրագիրներ են
պատրաստում: Պօլսոյ մէջ Դաշնակցութեան ահա-
բեկիչները ահ ու սարսափ են տարածել: Մէկը միւ-
սի յետեւից ընկնում են մատնիչները, իսկ յաճախա-
կի ընդհարում ոստիկանների հետ՝ անպակաս է:

Եղիա Շահբազ կոչուած հայը հրաժարուում է
յեղափոխական նպատակներին համար 300 ոսկի
տալ, իսկ իրեն պաշտպանող եւ այդ պատճառով էլ
սպանուած ոստիկանի ընտանիքին 500 ոսկի նւէր է
տալիս: Անպատիժ թողնել նման տիպերին՝ չանցանք
է: Եւ ահա ապրիլ 16-ին, ահաբեկիչները սառնա-
սրտօրէն կը բարձրանան դէպի Եէնի խան: Դրան-
ցից մէկն առաջ կ'անցնի, իսկ միւսները կը սպասեն
Քարաքէօյի հրապարակին վրայ: Բարձրացող յեղա-
փոխականի դէմը կը ցցւի Շահբազին պաշտպանող
ոստիկանը: Ահաբեկիչի մի զնդակը վերջ կը տայ
նրա կեանքին: Այդ ձայնի վրայ չորս կողմից ոս-
տիկաններ կը հաւաքւեն. իսկ միւս կողմից էլ օգ-
նութեան կը հասնեն տղաները՝ իրենց ընկերոջ: Կը
սկսւի կատաղի կռիւ: Պէտք էր դէմ դնել ոստիկան-
ներին եւ միաժամանակ խուսափել շատ շուտով,
որպէսզի չձերբակալուէին:

Այդ նպատակով նրանք մի կողմից դիմադրում
էին, իսկ միւս կողմից էլ հանդարտութեամբ յետ
էին քաշւում Մոմհանէի ճամբայով:

Այդտեղ տները, իրենց հին սովորութեան հա-
մաձայն, աթոռներ, պատշգաններ են նետում՝ տը-
ղաների վազքը խանգարելու համար, որի արդիւնքն
այն է լինում, որ երկու հոգի՝ չմշկածագի կարա-

պետը և թէքիրդաղցի Լեւոնը ձերբակալուած են: Միւս ազանները կարողանում են խուսափել: Այդ դէպքն իր խոշոր բարոյական ազդեցութիւնն է թողնում թէ՛ հայ հարուստների եւ թէ՛ կառավարական շրջանակների վրայ, որոնք կարծում էին թէ՝ կոտորածներից յետոյ յեղափոխութիւնը մեռել է:

**ՈՍՏԻԿԱՆ ՄԱՐԳԱՐԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ**

Ապրիլ 23–ին, Պօլսոյ մէջ, Գալաթիոյ դէպքից անմիջապէս յետոյ, Գուսգ Գարուի ամենէն մարդասէր հրապարակի վրայ, օրը յորեկով, ահաբեկիչների ձեռքով սպանուում է ոստիկան–քօմիսէր Մարգարը: Այս տիպը բուռականաչափ վնասներ էր հասցրել յեղափոխական շարքերին եւ տարիներ շարունակ դործիք էր հանդիսացել կառավարութեան պաշտօնեաների ձեռքում: Քանիցս նրան դիտել են տուել, յիշեցրել են իր վնասակար եւ ազդադաւ ընթացքը, բայց միշտ արհամարհական պատասխան են ստացել: Այս վատթար տիպերն էլ կարծում էին թէ՝ կոտորածներից յետոյ իրենք ազատ–համարձակ կը լինին, իրենց կեանքը վտանգի չի ենթարկուի եւ ապարէզի վրայ կը թափառուրեն: Սխալուած էին: Այդ սպանութիւնը, որից յետոյ ահաբեկիչը չի փախել, թաքնուել, այլ մի քանի րոպէ կանգնել է գոհի մօտ, դիտել նորա տանջանքներն ու ապա անհետացել, մեծ եւ բարերար ազդեցութիւն է թողնում ստորին պաշտօնեաների վրայ: Կառավարութեան հետապընդումները ոչ մի արդիւնք չեն տալիս՝ ահաբեկչին ձերբակալելու համար:

## ԴԷԼԻ-ԲԱԲԱՑԻ ԿՈՒԻԼԸ

Բաւէնի գաւառում քրդական հրոսակախըմբերը սկսել էին իրենց գար նանային արշաւանքները եւ գազանութիւնները՝ հայերի վերաբերմամբ: Երկու օր չարունակ նրանք պաշարել էին հայ գիւղերը, հրացանաձգութեամբ ահ ու սարսափ էին ազդել, թալանելով, կողոպտելով եւ իրենց կրքերին բաւարարութիւն տալով:

Դէլի-Բաբայի գիւղի չրջականները պահպանող հայդուկները, նկատելով քրդերի երեւալը, անմիջապէս լման են տալիս խմբի մէւս անդամներին: Տղաները բոլորը ոտքի վրայ են: Նրանցից իւրաքանչիւրը իր հրացանը գրկած դուրս է թռչում գէպի գիւղերը: Փոքրաթիւ հայդուկային խումբը մի քանի մասի է բաժանւում եւ գրաւում առաջուց որոշած գիրքերը՝ սպասելով խմբապետի հրամանին:

— Ժամանակն է սղրարք, ասում է ընկերներից մէկը, կամ մեռնել եւ կամ չքաղնել որ հայ ընտանիքն ու զաւակները թշնամու գիրկը ընկնեն:

Թշնամին 500 հեծեալ ձիաւորով չրջապատել է գիւղը եւ երկու կողմից էլ հրացանաձգութիւնն ընկըսւել է: Արեւը նոր է ծագել եւ քանի բարձրանում եւ ջերմութիւն է տալիս կուռղներին, այնքան աւելի կռիւը կատաղի բնոյթ կրում: Տղաները չեն մոռացել կռւի ժամանակ եւ իրենց յեղափոխական երգերը, իսկ գիւղացիները էլ օգնում են նրանց ու արտասւալից աչքերով օրհնում իրենց տունը եւ պատիւը պաշտպանողներին:

Քրդերը իրենց յարձակումն աւելի սրաղաց

ցընում են, չորս կողմից առաջ սլանալով դէպի դիրքերը: Նրանք էլ մի քանի մասի են բաժանուած: Գոռում–գոչումով աշխատում են սարսափ ազդել կուռքների եւ գիւղացիների վրայ: Դրան որպէս պատասխան դիրքերից լսում է ուժեղ համազարկ եւ ոգեւորուած, խանդավառ երգեցողութիւն.—

«Ազատութեան այն վառ սէրը
Թող որոտայ մեր սրտում.
Իմ հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում»:

Այս խանդի եւ ոգեւորութեան րոպէներում տղաները յարձակւում են թշնամու վրայ. մի քանիսն էլ իրենց դիրքերից դուրս ելնելով աւելի են մօտենում վերջին յարձակման պատրաստուող քիւրդերին, որոնք այս անակնկալը տեսնելով՝ սկսում են յետ նահանջել:

Մութը վրայ է հասնում: Գիւղը ազատուած է եւ թշնամին պարտուած: Փամփուշտների պակաս է զգացւում: Բոլոր եղածները կրակել էին եւ անհրաժեշտ էր նոր պատրաստութիւն տեսնել: Մի քանի օրւայ ընթացքում նրանք լեցնում են դատարկ փամփուշտներն ու կարեւոր պատրաստութիւնները տեսնելով՝ սպասում թշնամու նոր յարձակման:

Նրանք գիտեն որ քիւրդերն աւելի մեծ պատրաստութեամբ պիտի յարձակում գործեն: Շրջանի յայտնի ցեղապետ Զըլէթը՝ պատաղդի քիւրդերի գլխաւորը, երդւում է Մուհամմէտի անուան վրայ, որ պիտի պատժէ գեաւուրներին: Այդ նպատակով նա յարձակում է գործում Տօղ հայաբնակ գիւղի վը–

*բաչ, աւերում է տներն ու տեսնելով որ հայ չկայ մէջը, դիմադրող ֆիդայիներ չկան, վճռում է վրէժը լուծել Դէլի-Բաբայից:*

*Նախօրօք նա մի գրաբեր է ուղարկում Դէլի-Բաբայի գիւղապետ Համբար-աղայի մօտ, պահանջելով որ անձնատուր լինին: Այդ հայրենասէր մարդը պատասխանում է լրաբերին.*

*«Թէեւ մենք արեան, կողոպուտի ծարաւ չենք, բայց եթէ ձեր աղան գալիս է, մենք պատրաստ ենք ամէն կերպ՝ մինչեւ վերջին շունչ դիմադրել, մեռնել եւ ապա տեսնել մեր զաւակների գերութիւնն ու մեր տների աւերումը»:*

*Թարա-Խօջա գիւղից էլ Ղասր յիւզապետն իր զինուորներով է գալիս, կանչում է Դէլի-Բաբայից Տօդի հայերին, որպէսզի վերջիններս ·իբր թէ ցոյց տան իրենց վնասները: Երբ մի քանի հայեր հաւատում են եւ մօտենում գիւղին, այն ժամանակ քրդերի գնդակներից 4 հայ է սպանւում: Միւսները յետ են փախչում Դ. Բաբա և իմաց են տալիս հայդուկներին, որոնք իրենց բարձր դիրքերից կրակ բանալով՝ փախուստի են մատնում քրդերին:*

*Քիչ անցած Բաբա կիրճից երեւում են 80 հեծեալ զինուոր և 10—15 համիդիէներ, որոնք անմիջապէս շրջապատում են գիւղը: Մինչ այդ հայդուկները թողել հեռացել էին եւ մօտակայ լեռները քաշւել:*

*Հազարապետը կանչում է գիւղի տանուտէրին եւ նշանաւոր մարդկանց, ծեծի է ենթարկում բոլորին, պահանջելով ջան-ֆիդայիներին յանձնել:*

*— Գիտեմ, գիտեմ, գոռում է նա, որ ձեր գիւ-*

ղում 2–300 յեղափոխականներ կան. ի՞նչպէս կարող է պատահել որ բոլոր հայ դիւղերն աւերուին, իսկ ձեր դիւղը մնայ ազատ եւ պաշտպանուած:

Ընայած անլուր տանջանքներին, դիւղացիները յեղափոխականների ուր լինելը չեն յայտնում:

## ՊՕԼՍՈՒՄ ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

Սուլթանական կառավարութիւնը չբաւականացաւ արեան բաղանիքներ սարքելով, Հայաստանի սար ու ձորերը դիակներ լեցնելով եւ հարիւր հոր հայեր բանտ նետելով: Նա վճռել էր մի անդամից վերջ տալ իր կառավարութեան սահմանների մէջ երեւցած վտանգաւոր տարրերին, որի պատճառով էլ որդեգրել էր ե՛ւ կախաղանները:

Գլխաւորապէս ահաբեկիչ ուժերն էին այդ պատժին արժանանում՝ իրենց յանդուգն, համարձակ քայլերի համար: Երիտասարդ եւ թարմ ուժեր էին լինում դրանք, դեռ յոյսերով ու երազներով լի-քը, դեռ մեծ ապագայ խոստացող եւ դեռ նոր դէպքերի տեղիք տացող: Յատուկ «որսորդներ» կային Պօլսում, որոնց պարտականութիւնն էր որոնել եւ գտնել ահաբեկիչներին: Կոտորածներից յետոյ Յեղափոխութիւնը դադար չէր առել, ընդհակառակը աւելի լայն ծաւալ էր ստացել եւ նոր թափով առպարէզ նետուել: Նրա գործունէութեան կենտրոններից մէկն էլ մայրաքաղաքն հանդիսացաւ:

96 թուականի յունիս 3-ն է: Դաշնակցական երկու նշանաւոր ահաբեկիչներ՝ ուղղաստոցի Գէորգը եւ Հմշկածագցի Յովսէփը դէպի կախաղան են առաջ-




ՋՄՇԿԱԾԱԳՑԻ ՅՈՎՍԷՓ,
ՌՈԴՈՍՏՈՑԻ ԳԷՈՐԳ,
ԹՕՖՈՒՆԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ,

նորդուում: Բարմաղ-Գափուի բարձունքների վրայ ահագին ժողովուրդ է կուտակուել՝ դիտելու այդ երկու անվեհեր հերոսներին, որոնք արհամարհոտ հայեացքով եւ ժպտադէմ դէպի մահ էին գնում:

Կախաղանի առջեւ Գէորգը ծլծաղում է, իսկ Յովսէփը մերժելով քահանան ու դահիճը, ինքն իր ձեռքով չւանը վիզն է անցկացնում ու «կեցցէ Հայաստան» աղաղակելով՝ կախւում:

Նրանց դիակները երկար ժամանակ կախուած են մնում հասարակութեան «դաստիարակելու» համար:

Տասը օր անց՝ այդ թարմ չիրիմների կողքին ուելանում են եւ երկու ուրիշ կախաղաններ՝ Գարաքէօյի կամուրջի կողմը:

Դրանցից մէկը Պրուսայի Զէնկիլէր դիւղից՝ Թօֆունեան Գարեգինն էր, միւսը՝ կօշկակար Գալուստ Աստուրեանը: Երկուսն էլ նոյնպէս ահաբեկիչներ էին:

## ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Վաստպուրականը վաղուց ի վեր յեղափոխական կենտրոն է եղել, որի ղեկավարն էլ Վան քաղաքն է հանդիսացել: Լինելով Պարսկաստանին եւ Թուրքիային սահմանակից, թէ՛ տեղափոխութիւնները եւ թէ՛ պրօպագանդը իրենց նախնական թափի մէջ ադդել են ղպայուն եւ ըմբոստացող վանեցու վրայ: Այդ պատճառով էլ կառավարութիւնն յատուկ ուշադրութիւն է դարձրել միշտ եւ առիթը չի փախցրել խուզարկելու քաղաքը եւ ձերբակալե-

լու յեղափոխականներին:

96 թուականն է: Վաստուրականը դեռ ոչ մի հարուած չի կրել եւ միշտ էլ յետ է մղել կառավարութեան զաղանութիւնները: Հայկական սարսափները չեն կարողացել տարածուել այդ շրջանում եւ ահա կատաղած պաշտօնեաներն ամէն առիթ փնտռում են պատժելու խիզախ վաստուրականցուն:

Մայիսի 17–ից կառավարութիւնն սկսում է մի չարք խուզարկութիւններ՝ թաղային բնաւորութիւն կրող: Նախ 300 զինուորով շրջապատում է Տաճիկ-Ամէնեան փողոցը՝ չղթայի մէջ առնելով 70 տուն. ապա վեց զինուորներ, չեփորները ձեռին՝ զանազան յարմարաւոր վայրերում սպասում են, որ վտանգի րոպէին օգնութիւն կանչեն՝ պահականոցից եւ զօրանոցից: Խուզարկում են 25 տուն, բայց ոչինչ չեն գտնում: Թաղի մէջ եղած մի քանի հայդուկները կարողացել են ժամանակին խոյս տալ:

Նոյն ձեւով խուզարկութեան են ենթարկում Զալղին Նորաշէնը: Առանձին խստութեամբ քննում են Տիգրան Տէրօեանենց տունը: Տիգրանի մօր եւ քրոջ հետ շատ անպատկառօրէն են վարուում եւ նոյն իսկ ծեծի են ենթարկում: Օրիորդ Զարուհին, որ միշտ նպաստել է յեղափոխական չարժման եւ պահապան հրեշտակն է հանդիսացել շատ դաղտնի նամակագրութիւնների եւ որոշումների, խիստ ընդդիմութիւն է ցոյց տալիս ոստիկաններին: Փօլիս Յակոբ էֆէնդին, չքանչանների եւ չնորհակալութեան արժանանալու համար անձամբ սկսում է ծեծել օրիորդին, ստիպելով խուզարկութեան ենթարկել, որի արդիւնքն է լինում երկու նամակների երեւան

դալը, որոնց հիման վրայ աշխատում են ապացուցել, որ օրիորդը Դաշնակցական տեղական կոմիտէին է պատկանում: Ուղարկութեան ժամանակ ճերբակալում են Զարուհուն՝ պահանջելով որ ցոյց տայ թէ՝ ո՞ւր են դանուում դէնքի պահեստը, Դաշնակցութեան գաղտնի թերթի տպարանը եւ որոշ յեղափոխականներ:

Բոլոր այդ չարժումների նպատակն էր դրդռել տաճիկ խուժանը եւ կոտորածի համար հող պատրաստել:

Այդ ժամանակները յեղափոխական խմբերը դուրս էին գնացել՝ դէնքի տեղափոխութեան համար: Բոպէն յարմար է կատավարութեան համար: Նա իրաքանչիւր ժամ սուտ եւ հնարովի լուրեր է բաց թողնում՝ ամբոխի բնազդներն արթնացնելու: Հայերն էլ պարապ չեն եւ կանխապատրաստութիւններ են տեսնում: Ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է: Նա զգում է գալիք ահաւոր վտանգը եւ զգուշանում է: Յունիսի 1-ին չուկան գոցում է եւ բոլորն էլ փակւում են տների մէջ: Յունիսի 2-ին, Այդեստանի մօտ ընդհարում է տեղի ունենում կառավարական զինուորների եւ մի խումբ հայերի մէջ, որի հետեւանքով սպանւում են երկու զինուոր և մի միլտիմ էլ վիրաւորւում է: Յունիսի 3-ին թաղ փողոցում սպանուած տաճիկների դիակները ցուցադրւում են խուժանին: Այդ օրը, վայրենի ամբոխը, զօտեպնդուած կառավարութեան թոյլտուութեամբ, կէսօրւայ ժամի 4-ին յարձակում է գործում փողոցում պատահած հայերի վրայ, կոտորում է արու մարդկանց և երեխաներին, թալանում է և այրում

պատահած խանութներն ու տները: Կլոր–Դար, Հայկավանք, Թորոմանի թաղ, Մ. Յակոբի թաղ կոտորում են առանց որեւէ դիմադրութեան:

Կոտորածն սկսւել էր... Պէտք էր կարելի եղածին չափ պաշտպանուել եւ դիմադրել ամբոխին: Համազգայինն այդ վտանգի րոպէին գոյութիւն ունեցող հայ երեք քաղաքական–յեղափոխական կուսակցութիւնները, մոռացած իրենց Եա՜ն ու անճնականը, մի կողմ նետած նեղ կուսակցականն ու անցեալ պայքարները, եղբայրաբար իրար ձեռք են մեկնում, կազմում գործունէութեան ընդհանուր ծրագիր, նշանակում յարմարաւոր դիրքեր եւ բոլորն էլ մխասին նետուում են ահաւոր կռւի մէջ՝ հայրենիքի եւ ժողովրդի փրկութեան համար:

Մարտական նշանաւոր դիրքերն են — հիւսիսային կողմում՝ Շան թաղ, ուր տղաները տների պատերը ծակելով՝ դիրքեր չինած են. հարաւային մասում՝ Թխլխլնճեանների տունը, արեւմտեան մասում՝ Նախրի վողոցէն Սահակ–պէկենց տունը:

Բոլոր դիրքերում էլ համապատասխան թւով կռւողներ կան, որոնց մչտապէս օգնում է ժողովուրդը: Ամենականների ներկայացուցիչն է՝ Մ. Աւետիսեան, Հնչակեաններինը՝ Մարտիկ, իսկ Դաշնակցականներինը՝ Պետօն: Դրանք, այդ երեք հերոսները, դիրքից–դիրք են պտտում, ոգեւորում կռւողներին, սիրտ տալիս եւ աւելի թոյլ մասերին էլ՝ օգնութեան հասնում: Այդ մխացումը համազգային բնոյթ է տւել կռւին, թափ եւ ուժ է ներշնչել թոյլերին, իսկ թշնամուն՝ յուսահատութիւն պատճառել:

*Հարաւային եւ հիւսիսային թաղերում կռիւը չատ սաստիկ է եւ տեւում է ամբողջ վեց օր, որի ընթացքում յեղափոխականները կարողանում են յետ մղել թշնամուն՝ մեծ կորուստ պատճառելով նրան:*

*Այդեստանն էլ հինգ օրւայ ընթացքում ազատ է: Թշնամին չի կարողանում մօտենալ: Փողոցներում միայն հայ տղաներն են երեւեւկում: Տիրում է ընդհանուր ոգեւորութիւն. ժողովուրդն օրհնում է իր զաւակներին, որոնք քաջաբար դէպի մահն են վազում: Կառավարութիւնն սկզբնական օրերում նպաստում է միայն խուժանին իր գաղտնի մասնակցութեամբ, բայց յետոյ իր դիմակը վերցրած՝ կանոնաւոր զինուորներ է հանում հայդուկների դէմ: Այդ միջոցն էլ նրան չի օգնում: Նա չի կարողանում յաղթահարել յեղափոխականներին, 5–6 օրւայ ընթացքում ո՛չ մի դիրք չի գրաւում: Զգալով իր թուլութիւնը եւ տեսնելով որ խիստ միջոցներով իր նպատակին չի կարող հասնել, նա դիմում է իր վաղեմի խորամանկութեան՝ բանակցութիւններ վարել՝ հիւպատոսների միջոցով: Այդ դերակատարները հանդիսանում են անգլիական հիւպատոս Ուիլերմը եւ ամերիկեան միսիոնար Բէյնօլտսը, որոնք ամէն կերպ աշխատում են համոզել հայերին՝ անճնաւոր լինելու: Անգլիական հիւպատոսը ներկայանում է իբրեւ լիազօր վեց պետութեան կողմից, չը նայած հայերը պահանջում են որ ռուսական եւ պարսկական հիւպատոսներն էլ ներկայ գտնուին:*

*Յունիսի 7-ին յեղափոխականներին եւ առաջնորդ Սահակ վարդապետին ներկայացնում են հե-*

տեւեալ պահանջները.—

1.— Հայերը պէտք է անձնատուր լինեն,

2.— Նշանաւոր դիրքեր եւ զէնքեր յանձնեն,

3.— 15 հոգի իբրեւ գլխաւորներ՝ պիտի կառավարութեան ներկայացնել, այլապէս Այգեստանը պիտի ռմբակոծուի:

Ռուսական հիւպատոսը չէզոքութիւն է պահպանում. իսկ պարսկականը՝ յօգուտ հայերի խօսում:

Յեղափոխականները պահանջում են որ այդ կէտերը ներկայացուին գրաւոր եւ մի քանի օր էլ ժամանակ տրուի՝ պատասխանելու համար:

Յունիսի 8-ին, առաւօտեան կառավարութիւնն իր դիրքը որոշել է: Զինուորների ստուար բազմութիւն մը, 7-8 թնդանօթներով, կատաղի յարձակումի է սկսում: Օրհասական կռիւ է այդ, երբ մի բուռն կտրիճներ անվեհերաբար դիմադրում են կանոնաւոր զօրքին: Ժողովուրդն արդէն ահ ու սարսափի մէջ է եւ պատսպարում է հիւպատոսների տները: Թնդանօթներն իրար յետեւից որոտում են եւ տղաների դիրքերը կամաց-կամաց փլչում են: Փողոցների բոլոր ծառերը կտրտել էին, որպէսզի թշնամին չկարողանայ թաքնուել նրանց յետեւում: Կռիւը տեւում է մի ամբողջ օր: Կառավարութիւնը նորից պարտւում է՝ տալով մօտ 200 զոհ, իսկ յեղափոխականներից միայն 2 հոգի են նահատակւում:

Հայ զինուորների ոգեւորութեան սահման չըկայ: Նրանցից իւրաքանչիւրը գիտէ որ մեծ պարտականութիւն է կատարում եւ այդ է պատճառը, որ գնդակների սուլոցի հետ մէկտեղ լսում է.

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի.
Բայց երանի որ իր ազգի
Ազատութեան կը զոհուի»:

*Դիմադրութեան վերջին օրն է: Գիշերը կամաց-կամաց իր թեւերն է փռում: Պէտք է խուսափել կառավարութեան վրէժխնդրութիւնից. պէտք է հեռանալ քաղաքից, որովհետեւ մի կողմից փամփուշտների պակասը, կուռղների թւի սակաւութիւնը, իսկ միւս կողմից էլ թնդանօթների եւ կանոնաւոր զինուորների մասնակցութիւնն ու եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների անտարբեր վերաբերմունքը մեծ յուսահատութիւն են պատճառել բոլորին:*

*Ի՞նչ անել: Մնա՞լ թէ գնալ: Գնալու դէպքում ժողովուրդի մի մասն էլ պիտի մնանայ՝ վախենալով յետագայ ջարդից: Ի՞նչպէս ելնել այս անտանելի դրութիւնից: Եւ այդ բոլորից յետոյ դէպի ո՞ւր գնալ եւ ո՞ր ճանապարհով: Ահա կարեւոր հարցեր, որոնք բուռն վիճաբանութիւնների նիւթ են դառնում ժողովրդի եւ յեղափոխականների եւ ապա վերջիններիս պարագլուխների միջեւ: Այստեղ պատմութիւնը դեռ լուռ է եւ փաստացի ոչինչ չի տալիս:*

*Յայտնի է միայն, որ կուռղների մի մասը դաւաճանների է անցնում՝ պաշտպանելու ժողովրդին՝ քրդական յարձակումներից, իսկ միւսները, իրենց վճռի համաձայն՝ սարն են բարձրանում:*

*Վարագայ լերան գլխին յեղափոխական խմբե-*

*լը բաժանուում են եւ զանազան ուղղութեամբ դէպի Պարսկաստան ուղեւորում : Մ. Աւետիսեանի առաջնորդութեամբ վանեցիների մի խումբ, բաղկացած 200 ընտանի եւ 800-1000 անձէն մարդկանցից, շարժուում է Հայոց-Ձորի, Աղբակի վրայով անցնելու Պարսկաստան : Սրանք, ծանրաբեռնուած ժողովրդով, աւելի դանդաղ են առաջ գնում եւ Նոր-Գիւղից սկսած միշտ ընդհարումներ են ունենում թիւրքերի եւ քիւրդերի հետ : Մեծ կռիւներ են լինում Զաղկաձորում, Զուխում և ապա որոշ մասերի բաժանուած՝ նրանք հասնում են Աղբակայ Ս. Բարդուղիմէոս վանքի շրջակաները, ուր եւ շրջապատուում են զինուորներով ու քիւրդ աշիրաթներով : Տեղի է ունենում մի անհաւասար կռիւ : Փամփուշտները վերջանում են եւ կատաղած, զազանացած թիւրք-քիւրդ խուժանը սարքում է մի արեան հաբսանիք, կոտորելով բոլորին՝ անզէն եւ անպաշտպան ժողովրդին :*

*Յունիսի 14-ին, թապուր-աղասին, 300-էն աւելի զինուորներով բուն է գնում Ձորոց վանք թիւրք դիւղի մօտ եւ պատւիրում Վարագայ սարի ստորոտներում բուն դրած «կաչաղներին» հեռանալու :*

*Յունիսի 17-ին, Ֆէրիդ Սաատէդդին փաշան 5-6 հարիւր զինուորներով եւ ահագին ռազմամթերքով պաշարում է Վարագը, կարծելով թէ յեղափոխականները դեռ այնտեղ են կենտրոնացած : Փաշան ոչ-ոքի չի կարողանում գտնել եւ ստիպուած է լինում իր վրէժը լուծել Ս. Գրիգոր վանքից՝ այրելով եւ թալանելով բոլորը :*

*Պետօի խումբը բաժանուում է երկու մասի՝ մէկը երկրում մնալու պայմանով, իսկ միւսը 58 հոգուց*

բաղկացած, որուն մէնանում է և Մարտիկը՝ իր 25 ընկերներով, ուղում է սահմանն անցնիլ: Այս խումբը, 83 հոգուց բաղկացած՝ Սալախանէի գծով ուղեւորւում է դէպի Պարսկաստան:

Եղբայրացած այդ խմբերը, Սալախանէ աւանի մօտ, Գարահիսար լերան վրայ, կուի են բռնւում առաջուց պատրաստուածեան մէջ դրւած սահմանապահ զօրքի եւ բազմաթիւ զինւած քրդերի հետ: Ամբողջ օրը սոսկալի կռիւ է տեղի ունենում, որից յետոյ, երբ փամփուշտները վերջանում են, բոլորն էլ նահատակւում են:

Պատմական այս կռիւը վերջանում է, ճիշդ է, ահագին զոհեր խլելով թէ՛ ժողովրդից եւ թէ՛ յեղափոխական շարքերից, բայց մեր պատմութեան այդ էջը միշտ պաշտելի, միշտ խնկարկելի կը մնայ իր այն դեղեցիկ յուշարձանով, որ հայ ժողովրդի վտանգալից րոպէներում՝ երբ արտաքին թշնամին իր սուրն էր դրել մեր վզին, յեղափոխական շարքերը միացան իրենց սիրելի ժողովրդի կեանքը եւ հայերը պաշտպանելու համար եւ ապա նրանք միացած դիմադրեցին անարդ թշնամուն՝ Գարահիսար լերան կրծքին, միասին արիւն թափեցին, միասին նահատակւեցին եւ միասին՝ յեղափոխական երգը շրթնեերին՝ դերեզման նետւեցին: Հաւաքական այդ շիրիմը մի սրբութիւն պիտի լինի հայութեան համար:

## ՇԱՏԱԽԻ ԿՌԻՒԸ

Վանի պատմական ինքնապաշտպանութեան ամբողջութիւնները տարածւում են եւ գաւառները, որոնք պակաս դիմադրութիւն ցոյց չեն տւել կառավարու-

թեան: Հայդուկային մի խումբ, Վարդանի հրամանատարութեան տակ մնում է Վանում՝ գաւառներն անցնելու դիտաւորութեամբ: Երկար չեն մնում նրբանք Ալպեստանի թաղերում, այլ շուտով են անցնում Շատախ, որտեղ եւ բազմաթիւ ընդհարումներ են ունենում՝ քրդական ցեղերի եւ կառավարական զօրքերի հետ:

Լեռնական Շատախը շատ շուտ է կարողացել իւրացնել յեղափոխական մտքերը եւ ամէն րոպէ պատրաստ է եղել ընդառաջ գնալու ինքնապաշտպանական կռիւներին: Վանի վերջին դէպքերը մեծ ցուզմունք են առաջ բերել գաւառներում եւ մասնաւորապէս Շատախում, ուր օրէցօր սպասում են առնակնկալների:

Ամբողջ շրջանը երկու կարեւոր կենտրոնի է բաժանւած — Թաղ գիւղը, 200-ից աւելի հայ տուն բնակչութեամբ, որն ընկած է Սիվտիկ գետի եւ Տիգրիսի խառնարանում, եւ Փեսաճ Դաշտը, որ առաջին դէրքից վեց ժամ ղէպի հիւսիս հեռաւորութեան վրայ կը գտնւի: Վերջինս բաղկացած է չորս հայ գիւղերից՝ Շիտան, Կաղավիզ, Ասեղ և Կայնամիրան:

Թաղի բնակիչները երեք դէրք են բռնել, որոնց վրայ հսկում են տեղական կուռդ երիտասարդները՝ 70 հէշմանականերով եւ մի քանի հատ էլ փամփուշտաւոր հրացաններով: Սիվտիկ գիւղացիները էլ 30 հէշմանայով եւ 3–4 հրացանով իրենց գիւղի վերեւի սարի վրայ են դէրք բռնել:

Վարդանն էլ Թուրքիկ խմբի դլուխ անցած կենտրոնացել է Փեսաճ Դաշտում, կանչել է տել

*ջրջակայ գիւղերի եւ Գաւաշի ջրջանի ներկայացուցիչներին, բացատրում է նրանց գալիք վտանգը, խրախուսում է, սիրտ տալիս եւ կոչ է անում, որ ժողովուրդն էլ ճիանայ, ուժ տայ յեղափոխականներին՝ կռւելու ընդհանուր թշնամու դէմ:*

*Մի ժամանակ վարդանը նամակներ է գրում ջրջանի գիւղացիներին, լինչպէս եւ թաղեցիներին, որոշ հրահանգներ է տալիս եւ չեշտում «մէկ վայրկեան երբէք կառավարութեան խոստումներէն, կռւել մինչեւ վերջին շունչը: Հասեր է ժամը, երբ անվեհեր կերպով պէտք է նահատակւել հայրենի հողի վրայ»:*

*Վարդանը պատրաստութիւն է տեսել Գաւաշի կողմերն անցնելու եւ արդէն Արտօս լերան գլուխն է բարձրացել, երբ լուր է տրւում թէ՝ քիւրդերը յարձակւել են Կաղաւիզ գիւղի վրայ եւ եօթ մարդ սպանել: Ռումբն անմիջապէս վերադառնում է Փեսան Դաշտի Շիտան գիւղը: Քրդերը դրոհ են տալիս այդ գիւղի վրայ, բայց հայդուկների պնդակների տարափի տակ՝ ստիպւած են լինում երեք սպանւած տալով՝ յետ նահանջել: Յատուկ սուրհանդակներ լուր են բերում, որ պատրաստւած եւ զինւած քըրդական ուժեր պաշարելու մտադրութիւն ունին գիւղը: Այդ պատճառով էլ հրաման է տրւում գիւղի բնակիչներին՝ բարձրանալ դիմացի բարձր սարը:*

*Քիչ անց՝ հարիւրաւոր ձիաւոր եւ հետեւակ քիւրդեր, իրենց վայրենի աղաղակներով, լեցւում են գաշտը եւ տեսնելով որ անկարող են մօտենալ դիրքերին, վճռում են գիւղի տները կրակի տալ: Այս տեղից նրանք անցնում են դէպի Թաղ գիւղը,*

ուր արդէն ժողովուրդը նրանց գալատեան կը սպասէր՝ առաջուց դիրքեր գրաւած: Շուտով քիւրդերին մխանում են կրակիները՝ աւազակապետ Շաքիրի առաջնորդութեամբ, խալխլանցիներ եւ ուրիշ ցեղեր:

Թալեցիները կենտրոնական դիրքի մէջ են: Նրանց թիւն վրայ աւելանում են եւ յեղափոխական ուժեր, որոնք կռիւը պիտի ղեկավարէին: Տիրում է ընդհանուր ոգեւորութիւն եւ ամէն մէկն աշխատում է նպաստել ինքնապաշտպանութեան: Գիւղացիների մի մասը վառօդ է պատրաստում, գնդակ է ձուլում, փամփուշտները լեցնում, իսկ փոքրիկ երեխաները էլ քար ու կիր են կրում՝ դիրքերը ամրացնելու համար:

Երկու կողմից էլ կանխապատրաստուած են: Կառավարութիւնն էլ զէնք եւ զինուոր է հասցրել քիւրդերին, որոնք ամէն կերպ աշխատում են ցոյց տալ իրենց քաջագործութիւնը:

Ցունիս ամսի վերջերն է:

Սար ու ձոր, լեռ ու դաշտ թնդում է հրացանների որոտից: Կատաղի կռիւն սկսւել է եւ պէտք է քաջաբար դիմաւորել: Հայերն անվեհերօրէն պաշտպանւում են: Նրանք բաժանւած մի քանի դիրքերի, գնդակներ են տեղում թշնամու գլխին: Մի քանի ժամ կռիւը տեւում է, բայց քիւրդերը չեն կարողանում մի քայլ առաջ անցնել: Աննպատակ եւ երկար կռւելն իրենց օգտակար չէ եւ ահա վճռում են հրդեհել դիրքերը, որի համար յատուկ խմբակներ են նշանակել: Նրանց նպատակն է դիրքերից դուրս հանել յեղափոխականներին՝ ստիպելով որ կրակը

հանդիպնեն, բայց այդ պաշտօնի համար գտնուած են քաջարի հայ կանայք, որոնք հերոսաբար առաջ են նետուած, մարդուն կրակին ու հնարաւորութիւն տալիս ապաններին՝ կռւելու: Այդ գործողութիւնների ժամանակ հինդ հայուհի նահատակուած են՝ ապացուցելով որ իրենք էլ պատրաստ են մեռնելու հայրենիքի ազատութեան համար:

Չյաջողելով իրենց այդ փորձի մէջ, քիւրդերը վճռած են գնդակներն ուղղել տների պատուհաններին՝ անմեղ ժողովուրդին վնասելու եւ չփոթութիւն առաջ բերելու համար: Ցեղափոխականների խորհրդով բոլոր պատուհանները ծածկուած են թաց թաղիքներով, որպէսզի տաք գնդակի զօրութիւնը տկարանայ:

Կռւի ամենատաք ժամանակը դիրքի մէջ գըտնուած մեակ ազբիւրն յանկարծ ցամաքած է եւ մեծ վհատութիւն առաջ բերած ժողովրդի մէջ: Քիչ յետոյ, սակայն, հրաշք է պատահած եւ դիրքի մէջի երկու թոնիրներն էլ ջրով լեցուած են, որը ե՛ւ ոգեւորութիւն առաջ է բերած եւ թէ՛ բաւարարութիւն տալիս կարիքին:

Մութը կամաց-կամաց վրայ է հասնում: Քիւրդերը դեռ իրենց առաւօտեան դիրքերումն են: Նրանք իրենց թուլութեան եւ անկարողութեան խոր տպաւորութեան տակ՝ վճռած են թողնել եւ հեռանալ: Իրենց վերջին յարձակումն էլ ապարդիւն է անցնում, որովհետեւ քարերի յետեւ դիրք բռնած տղաները, մահն իրենց աչքի առաջ ունենալով, դիմադրում են բոլոր ուժով:

Գայմաղամը, որ ղեկավարում է այդ կռիւները,

տեսնելով որ այս մի բուռն քաջերին ցաղթել չի լինում, անմիջապէս լուր է ուղարկում վան՝ պահանջելով մի վաշտ զօրք, թնդանօթներ: Այդ ժամանակութիւնը չի ուշանում եւ Սարի բինբաշին չոտապում է Շատախ, բայց հասնում է այն ժամանակ, երբ կռուղ քիւրդերն արդէն նահանջել էին:

Կառավարութեան ներկայացուցիչներն սկսում են մի չարք ձերբակալութիւններ անել, գրաւել 30 հատ չէչխանա:

Ցաղթանակը ժողովրդի կողմն է եւ այդ զգում է չատախցին: Կոտորածի վտանգը վաղուց է չքացել եւ թշնամին իր առաջ դիմադրող ուժ տեսնելով՝ հաշտարար քաղաքականութեան է դիմում՝ արձակելով բոլոր բանտարկեալներին: Ժողովրդի ոգեւորութեան եւ հաւատքին չափ ու սահման չկար եւ նա մինչ այդ կրկնում է, որ Շատախի կռիւները վրկեցին թէ՛ իրենց կեանքը եւ թէ՛ մանաւանդ պատիւը:

## ԳԼՈՒԽ Գ.

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Տասնեակ տարիների յեղափոխականների անդուլ աշխատանքը չատերի համար աննկատելի է մնում, որովհետեւ հասարակական լայն խաւերը տեղեկութիւն չունին կատարուած դէպքերի եւ նահատակուող դէմքերի մասին:

Ընդհանուր հոլիզոնի վրայ մեայն մի քանի դէմքեր են յիշատակւում եւ դրանցով էլ եզրակացութիւններ հանւում: Շատ-չատերի մէջ դեռ որոշ տեղ չի բռնել մեր նահատակների պատկերները եւ նրանք որոշ անուններով են միայն ապրում, չատ անգամ առանց ծանօթ լինելու նրանց կեանքի, գործունէութեան եւ կրած տանջանքներին:

«Դէպքեր եւ Դէմքեր», ահա այն պակասը, որ այնքան պիտի է մեզ համար: Մէկն առանց միւսի նշանակութիւն չունի: Մէկը մարմինն է, միւսը՝ հոգին, մէկը ազդում է, միւսը՝ վոխոխում, մէկը նիւթ է մատակարարում, միւսը՝ կերտում, մէկը ներկայացնում է արտաքին աշխարհն իր մանրամասնութիւններով, իսկ միւսը՝ ներքին կեանքն իր ապրեցումներով:

Հասարակական կեանքի եւ նորա զարգացման վուլերի լայն ուսումնասիրութեան համար բաւա-

կան չէ՛ միայն արտաքին առարկայական պայմանները երեւան հանել, այլ եւ այն գաղափարներն ու տիպարները, որոնք ղեկավարող են եղել եւ որոնցով ապրել են սերունդներ:

Շատ հարուստ ենք հերոսներով, որոնցից իւրաքանչիւրը մի ուրոյն կեանք, յատկանշական բնոյթագիծ եւ խորունկ հոգի է ունեցել եւ որոնք հասարակականօրէն կարող էին պատկերացնել հայ ժողովրդին՝ իր ճաքրուքեամբ, գաղափարական աշխարհահայեացքով եւ անճնազոհութեամբ, բայց զուրկ ենք դրանց ներկայացնող դրական աշխատանքից:

Պիտի վիպասել, որոնել, յատկապէս պիտի հետաքրքրուել ո՛չ միայն նշանաւոր դէմքերով, այլ եւ այն բազմաթիւ անանուն, երկրորդական հերոսներով, որոնք մեր յեղափոխական–դեմոկրատիկ շարժման դլխաւոր դերակատարները են եղել:

## ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ

Գիւղական համեստ ուսուցիչ էր նա, որ ղրաղուած էր մանուկների դաստիարակութեան դործով: Նա թէեւ իր հոգու խորքում զգում էր տաճկական կառավարութեան անլուր բռնութիւնները, բայց միշտ լուռ էր մնում: Մուշի Վարդենիս գիւղից էր նա եւ աշխատում էր իր ծննդավայրում:

90–ական թուականին քրդական մի հրոսակախումբ յարձակում է գործում Վարդենիսի վրայ եւ փախցնում մի երիտասարդ հայ հարսի՝ Գիւլիզարին: Գիւղացիները լուռ ու մունջ դիտում են այդ անար-

դարութիւնը եւ ո՛չ մի միջոցի չեն դիմում: Նրանք միշտ հետեւել են մի քաղաքականութեան.— «Համբերենք այս անգամ. գուցէ ամենավերջինը լինի»:

Մարգար վարժապետը չի կարողանում համբերել: Նա մի կողմն է ձգում իր ապաղան, խաչ է քաշում դպրոցի վրայ եւ իր մի քանի համախոհներով հասնում է քիւրդերին: Սկսւում է կատաղի կռիւ: Մի քանի ժամ փոխադարձ հրացանաձգութիւնից յետոյ՝ քիւրդերից սպանւում են երկու հոգի, իսկ մի քանիսն էլ վիրաւորւում են: Միւսներն էլ Գիւլիզարին Թողնելով փախչում են՝ իրենց կեանքը ազատելու համար:

Վարժապետն յաղթականօրէն վերադառնում է գիւղ եւ երիտասարդ հարսին յանձնում իր տիրոջ:

Այդ դէպքից յետոյ նա այլեւս չի կարողանում մնալ իրենց գիւղում ու հալածականի ցուպն իր ձեռքըն առնելով՝ քայլերն ուղղում է դէպի Կովկաս:

Ժամանակին Վարդենիսի դէպքը շատ յուզեց հայ հասարակութեան եւ առանձնապէս կովկասահայութեան: Պատրիարքարան թէ առաջնորդարան, մամուլ թէ ընկերութիւններ, բողոքի իրենց ձայնը բարձրացրին եւ Գիւլիզարը պատմական դէմք դարձաւ, ինչպէս նրան ազատող գիւղական վարժապետը:

Յեղափոխականացած Մարգարը պարապ չի նստում Կովկասում, այլ իսկոյն ձեռնարկում է զինագործութեան և զինավարժութեան: Դրանով նա իր փշոտ ճանապարհն էր գծում եւ անտրտունջ աշխատում էր կրկին վերադառնալ հայրենիք՝ աւելի

գործնական ծառայութիւններ մատուցանելու իր հարազատ ժողովրդին:

91 թուականին նա արդէն Երկրումն է: Դաշնակցութեան գինակիր խմբերից մէկի մէջ է մըտնում եւ որոշ յանձնարարականով անցնում սահմանը: Շնորհիւ իր աչալրջութեան եւ գիմացկունութեան, մի քանի օրւայ դժուարին ճանապարհը կարողանում է ոտով անցնել եւ իր պարտականութիւնը լիուլի կատարել և ապա նորից վերադառնալ կովկաս:

Մայր-Հայաստանն էր նրան քաշում: Եւ ահա մի տարւայ չարաչար կանխապատրաստութիւնից յետոյ 92 թուին, Արաքսի խմբի հետ մխասին անցնում է Երկիր եւ մնում է Ինուսի ու Մուշի շրջաններում՝ կազմակերպողի պաշտօնով:

Նա պտտում է գիւղերը, հասկացնում է նրանց յեղափոխութեան նշանակութիւնը եւ աշխատում է առաջ բերել տեղական ինքնապաշտպանական խըմբեր: Մի օր, երբ նա գործով Աւզուր գիւղումն է գտնւում, մի գծուծ հայի ամբաստանութեամբ, ձերբակալում են նրան եւ Բաղէշ տանում:

Մարդար վարժապետին կախաղանի են դատապարտում: Երևոնամեայ, թարմ հասակի մէջ, դեռ լի կենսունակութեամբ եւ աշխատելու բուռն տենչանքով, նա անխռով դէպի մահն է գիմում: Բայց հրապարակի վրայ, ժողովրդի ներկայութեամբ, նրան դէպի կախաղանն են առաջնորդում:

94 թուին էր այդ: Յեղափոխական չարժման նախնական օրերում եւ բոլորն էլ սրտատրոփ սպասում էին թէ՝ ո՞րքան գիմացկուն պիտի լինի հայ





ԱԻԵՏԻՍ ՄԱԼՈՅԵԱՆ

*ցեղափոխականը: Ահա եւ նա: Իր վերջին խօսքերն ուղղում է ժողովրդին. «Հայե՛ր, մի վհատիք. քաջ գիտցէք, որ այլ եւս հասած ենք մեր նպատակին: Եթէ խանդակաթ այցելուներ ունենամ գերեզմանիս շուրջը, ոսկրներս ալ կը հրճւին ու կը խայտան»...*

*Վարժապետի գլուխը մտցնում են օդակի մէջ. դա հինը քաշում է ոտքերի տակից աթոռը, մի կարճ խեխեռոց է լսում, ոտքերի եւ կապած թեւերի անկանոն երկու թափահարութիւն է տեսնում եւ պաշտեալի ցեղափոխականն անխռով նետւում է յաւիտենականութեան գիրկը:*

## ԱԻԵՏԻՍ ՄԱԼՕՅԵԱՆ

*Բնիկ ալէքսանդրապօլցի էր: Աղքատ ընտանիքի զաւակ լինելով նա շատ նեղութիւններ է քաշում, մինչեւ որ կարողանում է ուսուցչական պաշտօնի տիրանալ: Նա շատ մտազբաղւած էր իր ծեր եւ անճարակ ծնողների վիճակով, աշխատում էր մի կերպով նրանց ապահովել, բայց անկարող է լինում: Նա արդէն յեղափոխական շարքերի մէջ էր: Տեղական երիտասարդների եւ աշխատաւորների ղեկավարն էր: Ազատ ժամանակները միշտ պատում էր զաւառները՝ կազմակերպական գործերով: Ալէքսանդրապօլը կարեւոր կենտրոնատեղի էր յեղափոխական գործունէութեան համար: Լինելով հայաշատ եւ մերձմանակ Ղարսի ու Երեւանի նահանգների կենտրոնում, սահմանակից տաճկական եւ պարսկական հողերին եւ ունենալով բաւական թւով խիզախ, վարվըռուն եւ բռնկուռ երիտասարդութիւն, Գիւմրին*

կարեւոր դեր էր խաղում:

Գիտէր այդ բոլորը Մալօյեանը եւ գիտէր որ ինքը շատ կարեւոր դէմք է տեղական աշխատանքների համար: Բայց նրա հոգու խորքում մի այլ բաղձանք կար — անցնել այնտեղ, սահմանի միւս կողմը, տանջանքի կենտրոնատեղին, նետուել յեղափոխական ասպարէզը, ապրել չարչարուող եղբայրակիցների մէջ եւ մեռնել Հայաստանի հողին վրայ: 94 թուի սկիզբներին նա պատրաստութիւններ էր տեսնում անցնելու Ալաշկերտի շրջանը: Ալէքսանդըրապօլի կօմիտէի վճռով իր գնալը մի առժամանակ յետաձգւում է՝ վերջ տալու կուսակցութիւնների միացման անունը չահագործող մի խմբակի գործունէութեան:

Յաջողութեամբ վերջացնելով իր միսիան, նա որոշում է անմիջապէս շարունակել իր ճամբան եւ առանց մի րոպէ կորցնելու, պատրաստւում է անցնելու Երկիր: Զատկի օրեր են լինում: Ընկերները թախանձագին խնդրում են մի առժամանակ յետաձըգել, մինչեւ գարունը բացուի, ճանապարհները դիւրանան եւ որ, վերջապէս, միասին անցնեն տօն օրերը:

— Ո՛չ, պատասխանում է ժողովրդի զաւակը, ես այդ նւիրական օրը տաճկահայ եղբայրների հետ պիտի անցկացնեմ:

Ծնողներն էլ թախանձագին խնդրում են, առանց իմանալու իրենց որդու վտանգաւոր ճամբորդութեան մասին, բայց կտրուկ մերժում են ստանում: Ընտանիքի հոգսը, պահպանութիւնը յանձնում է իր փոքրիկ եղբօրը, իսկ ինքը մի անձրեւոտ



ՄԿՐՏԻՉ ՍԱՀԱԿԵԱՆ

*որ ընկերներով ճանապարհւում է դէպի սահմանի միւս կողմը գտնուած հարազատները :*

*Նա բնաւորութեամբ համեստ էր, քիչ խօսող, ոչ մի վտանգից երկիւղ չունող, խստապահանջ դէպի անհատական կարիքները, դէպի հասարակական գոյքն ու փողը :*

*Սահմանագլխի մօտերը, սաստիկ բուքի պատճառով մոլորւում են ճամբան : Երկար պտտելուց յետոյ նրանք հասնում են մի քրդական գիւղի եւ տաճկական Ղարաքիլիսէի մէջտեղը, ուր եւ քարերի, սարերի խոռոչներում գիշերում են : Հետեւեալ օրը ճանապարհը շարունակում են, բայց դեռ մի քանի ժամ չքայլած, ձերբակալւում են : Քիւրդերը կողոպտում են նրանց, խլում հրացաններն ու իրենց էլ յանձնում սահմանապահ զօրքի հրամանատարին : Վերջինս անխնայօրէն հրամայում է ծեծել, որի հարուածների տակ մահանում է Աւետիսը :*

*Դիակն յանձնում են ղարաքիլիսեցի մի հայ խանութպանի, որ մի խոր փոս փորելով՝ պաշտելի եւ գաղափարական ուսուցչին է տեղաւորում :*

## Ա Բ Ր Օ

*Մկրտիչ Սահակեանը, այս էր Աբրօի իսկական անունը. ծնւել էր 1861 թւին, Փոքր-Ասիոյ Շապին-Գարահիսար քաղաքում : Իր կեանքի մեծագոյն մասըն անց էր կացրել Սեբաստիոյ Թամզարայ գիւղում եւ Սեւ ծովի ափին՝ Կիրասոնում : Աւարտել էր միջնակարգ դպրոց, որի ընթացքում նա կարողացել էր ծանօթանալ հայ ժողովրդի անցեալ տառապանքների և ներկայ ձգտումների հետ : Բնատուր տաղանդ*

էր նա՝ կազմակերպելու, խօսելու և հաւատացնելու մէջ: Նա շատ լուռ կարողացել էր թափանցել ժողովըրդի հոգեբանութեան մէջ եւ այդ էր պատճառը, որ հաւատարտակէս սիրուած էր թէ՛ հայ եւ թէ՛ մահմեդական հասարակութիւնից: Դպրոցն աւարտելուց յետոյ նա զբաղւում էր վաճառականութեամբ, որի ընթացքում մեծամեծ ծառայութիւններ էր մատուցանում յեղափոխական չարժման: Մինչեւ 92 թուականը նա դեռ դրսից դիտողի դերի մէջ էր եւ մնայն ջերմ համակիր: Իր խօսակցութեան ընթացքում, ամէն անդամ փափաք էր յայտնում լինելու կարմիր յեղափոխական, մինչեւ որ 92–ի գարնանը յաջողւում է նրան անցնել Կովկաս, այցելել Բաքու քաղաքը, ուր եւ տեղաւորւում է նաւթի գործարաններից մէկում:

Եռ ու դեռով լիքը բանուորական այդ քաղաքը նրա առաջ բաց էր անում գաղափարների նոր աշխարհ, նոր ծրագիրներ: Այդտեղ նա ծանօթանում է Դաշնակցական մտաւորականների հետ եւ կարճ ժամանակից յետոյ մասնակցում է տեղական կազմակերպութեան: Իր յեղափոխական պարտականութիւնները կատարելուց յետոյ, նա բանուորներից շատերին հաւաքում է մի սենեակ ու գրել–կարդալ սովրեցնում: Շաբաթական երկու–երեք անդամ ժողովներ է գումարում, զրոյց անում բանուորների հետ, պատկերացնում հայրենիքի տանջանքներն ու եռանդով հրաւիրում նրանց հերոսութեան եւ անձնուիրութեան:

Մօտ երեք տարուայ աշխատանքը վերջնականապէս գծում է նրա ուղին, չտկում է բնաւորութիւ-

նըն ու դաստիարակում հողին: Նախկին վաճառականն արդէն ազատագրական շարժման ղեկավարներից մէկն է հանդիսանում: Այն ժամանակները բոլոր նրանք, ովքեր յեղափոխական շարքերի մէջ են մտնում, ովքեր մի անգամից վճռում են հանդիստ կեանքը թողնել, պարտաւոր էին սահմանն անցնել եւ բուն ժողովրդի մէջ գործել: «Դէպի Երկի՛ր», այս էր օրւայ քաղաքական նշանաբանը եւ նոր սկըսողների փորձաքարը: Կովկասեան իրականութեան, քիչ թէ շատ տանելի պայմանների մէջ հնարաւոր է ամէն ինչ լինել — բացի յեղափոխականից: Այս վերջին դպրոցն աւարտելու եւ քննութիւն տալու համար դէպի Վասպուրական եւ կամ դէպի Սասուն պիտի անցնել:

95 Թւականն է: Աբրօն, մի ուրիշ ընկերոջ հետ ճանապարհ է ընկնում դէպի Հայաստան: Կայարանը լցւել են բանւոր ընկերներով, որոնք եկել են իրենց սիրելի ընկերոջ եւ անզուգական ուսուցչին վերջին երթաս-բարովն ասելու: Տեղի են ունենում բարեմաղթութիւններ, գրկախառնութիւններ, որից յետոյ, Մկրտիչը թողնելով աշխատաւորական մըթնոլորտը, վերափոխւում է յեղափոխական Աբրօի:

Այդ ժամանակներն էր, որ քաջարի Սասունը օգնութիւն էր խնդրում: Իր ըմբոստ եւ դիւցազնական կռւից յետոյ նա ենթարկւել էր գազանութիւնների և Թափառական-հալածական վիճակի մէջ ձեռքը կարկառել էր դէպի ազգը, դէպի ապրող հայութիւնը: Դաշնակցութիւնը, իր անձուկ միջոցներից մի կարեւոր գումար յանձնեց Աբրօյին, որ յատուկ խմբի գլուխ անցած օգնութեան պիտի հասնէր՝ թէ

նիւթապէս, թէ՛ բարոյապէս և թէ՛ ոգեպէս:

Այդ փոքրիկ խումբը վայելեց ժողովրդի ջերմ համակրանքը, որովհետեւ ամէն տեղ ոգեւորում, սրտապնդում էր յուսահատեալներին, հաւատ էր ներշնչում դէպի գործը: Այդ ժամանակները Մուշ էին հասել եւ եւրոպական մի քանի պետութիւնների ներկայացուցիչները՝ տեղին վրայ քննութիւն կատարելու եւ կատարուած փաստերն արձանագրելու: Թիւրք կառավարութիւնն ամէն միջոց գործադրում էր հեռու պահելու սասունցիներին այդ քննութիւններից՝ ծեծելով, կաշառելով, սպառնալով եւ բանտարկելով: Պակաս չէին եւ որոշ հայեր, բացասական ու կեղտոտ հոգեբանութեամբ, որոնք չափից դուրս նպաստում էին թիւրք պաշտօնեաներին:

Աբրօն եւ իր ընկերները ուշադրութիւն են դարձնում եւ այդ կէտի վրայ, մանում ժողովրդի խաւերը՝ բացատրում, հասկացնում, որ պէտք է չվախենալ, չքաշուել, այլ բոլոր ճշմարտութիւնները պարզել հիւպատոսներին: Այդ ուղղութեամբ մեծ աշխատանք են թափում, ազդեցութիւն բանեցնում, որի պատճառով էլ կառավարութեան աչքում վնասակարներ են նկատուում: Իրենց վրայ դրած ծանր պարտականութիւնը կատարելուց, ժողովրդին զբաղմունք տալուց եւ քննիչներին օժանդակելուց յետոյ խումբը երկու մասի է բաժանուում՝ Երկրում մնալու. իսկ Աբրօն կազմակերպական գործերով Կովկաս է անցնում:

Նա դեռ հապճեպ էր չունէր քաշել եւ հանգիստ առել, երբ Տարօնի ընկերները պահանջում են նրան

անմիջապէս: Նա տրամադրութիւն ունէր մեծ հայդուկային խումբ կազմել և սահմանը նորից անցնել, բայց անհրաժեշտ ցեղափոխական կարիքը նրան թոյլ չէր տալիս մնալու: Նա իր մնաս-բարովն է ասում ընկերներին, անցնում Երկիր և սահմանակից վայրերից գինւած տղաների մի խումբ առնելով՝ մեկնում է դէպի Տարօն:

Կոտորածների տարին էր: Ամէն դաւառ, շրջան մօտալուտ վտանգի մէջ էր: Այն տեղերն ուր հնարաւոր էր, պէտք էր ինքնապաշտպանութեան դիմել: Եւ Աբրօն կարեւոր դեր է խաղում Մշոյ դաշտում: Նա գիշեր ու ցորեկ պտտում է գիւղից-գիւղ, օգնութեան է հասնում աւելի թոյլերին, յետ է մղում քրդական արշաւանքները եւ իր ամբողջ կարողութեամբ աշխատում է աւելի թուով հայեր պաշտպանել:

Երբ խաղաղութիւնը վերահաստատւում է, երբ սուլթանն յայտնւում է տալիս իր արեան ծարաւին և երբ Դաշտի մէջ մնալն այլեւս կարեւոր չի նկատւում, նա անցնում է Սասուն՝ իր գործունէութեան կենտրոնատեղին:

96 թւականի մարտ ամսում շրջանի կազմակերպութեան Ընդհանուր ժողովն է տեղի ունենում Ս. գիւղում: Մարտի 18-ին, ժողովից յետոյ, Աբրօն՝ իր հետ վերցրած ութ Թումման էֆ.-ին և մի քանի գիւղացիներ, ճանապարհւում է դէպի Սասուն:

Մէզրէուր կոչւած բարձր սարից իջնելու ժամանակ, երկուսով թաղւում են ձեան հիւսքի տակ: Հարիւրաւոր սասունցիներ օրերով յետ են տալիս ձիւնը, ամէն կերպ աշխատում են իրենց սիրելի

գործչին ազատել, բայց անկարելի է լինում: 45-րդ օրը մեզ կարողանում են գտնել դիակները:

Բնութեան անժամանակ պատահարներից մեկն էր, որ եկաւ յեղափոխական սակաւաթիւ շարքերից մի կարեւոր ուժ էլ խլելու:

Աբրօն մեզ երեք տարի ծառայում է իր սիրած գաղափարին եւ այդ կարճատեւ ժամանակամիջոցում նա կարողանում է որոշ գործ կատարել, պատրաստել բազմաթիւ հեռուզներ եւ ժողովրդի սէրը վայելել:

Աբրօն հայ ժողովրդի իսկական զաւակն էր — համեստ, աշխատասէր, մաքուր եւ հաւատացող հոգի. նա հասարակ, աշխատաւոր դիւղացիութեան բարեկամն էր, նրա դրկանքներին մասնակից, նրա ցաւերով տանջուղ, նրա վշտերին կարեկից եւ միշտ վրէժխնդրութեան կայծը բորբոքող:

Սակաւ են նման տիպերը, որոնք քաղաքի հանդիստն ու փափուկ կեանքը թողած, թափառականի ցուպը ձեռին՝ պատրաստ են դիւղէ-գիւղ քարոզելու, կազմակերպելու համար:

Չնայած նա չհասաւ իր նպատակին — ընկնել հրացանը ձեռքին, բայց եւ նա չչեղեց մի րոպէ իր ընտրած գաղափարական ճանապարհից:

## ՁԱԹՕ-ՇԻՐՕ

Սրանք երկուսով անբաժան ընկերներ էին, ծնւած եւ մեծացած Շատախի գաւառի կաճեան գիւղում: Դեռ յեղափոխական շարքերը մտնելուց առաջ բողոքող տարրեր էին և տրտունջը արտայայտել էին ո՛չ թէ բառերով կամ լուռելով, այլ գէնքով և խ-

բական վրէժխնդրութեամբ: Մի անգամ քիւրդերը եւ կառավարական պինւորները յարձակւում են իրենց գիւղի վրայ եւ հանդիպում դիմադրութեան: Կռիւը վերջանալուց յետոյ պարզւում է որ միայն երկու հոգի են եղել իրենց դէմ՝ Զաթօն եւ Շէրօն (Մարկոսը): Այդ դէպքից յետոյ երկուսով հեռանում են հայրենի գիւղից, այլ եւս չվերադառնալու նպատակով:

Երկուսն էլ անվեհեր եւ յանդուգն էին. նրանք միշտ անհանգստացնում էին քիւրդերին եւ պետութեան, և ամէն մի փորձ ձերբակալելու նրանց՝ ապարդիւն էր անցնում: Այդ պատճառով էլ լայն ժողովրդականութիւն ձեռք էին բերել, քրդերը դէր տատում էին նրանց քաջութիւնը, հայ ժողովուրդը ոգեւորւում էր, որովհետեւ նրանց մէջ աւետնում էր իր բողոքն ու կռիւը: Նրանց եռանդն ու ծանօթութիւնները պէտք էր օգտագործել եւ որոշ կազմակերպութեան մէջ դնել, այլապէս անհատական ընդհարումները ո՛չ մի դրական, չօչափելի արդիւնք չէին տայ: Շուտով նրանք վան են գալիս, ուր եւ ծանօթանում են յեղափոխական շարքերի հետ եւ հակւում Դաշնակցութեան, վերջինիս մէջ աւելի կուռի եւ վրէժի յենարան գտնելով:

Ո՛վ քիչ թէ շատ ծանօթ է Վասպուրականի եւ պարսկա-տաճկական սահմանի մօտ կատարւած յեղափոխական գործողութիւններին, նա անպայման ճանաչում է Զաթօ-Շէրօին: Երկուսն էլ երկար տարիներ անց են կացրել կռիւների և փոխադրական պաշարին գործի մէջ:

Շէրօն ամէն տեղ էր, ուր վտանգ կար, ուր

պէտք էր արիւն թափել: Մէկ տեսնուում էր իր հայրենակիցների հետ՝ հայրենի դիւղերը պաշտպանելիս քրդական արշաւանքներից. մէկ յարձակուում էր քիւրդ ցեղապետների վրայ, մէկ՝ դիշերային խաւարի մէջ դէնքեր էր տեղափոխում եւ կամ մի բուռն քաջերով ճեղքում էր թշնամու չղթան՝ օդնելու հայրենակիցներին:

Շնորհիւ Շէրօի նուրբ լսողութեան, իր զարմանալի ընդունակութեան՝ տեղեր, ճանապարհներ ճանաչելու, եւ շնորհիւ իր բազմամեայ փորձառութեան՝ նա անդնահատելի անդամ էր հայդուկային խմբերի:

Իր երկար տարիների չարքաշ կեանքի պատմութեամբ, իր կատարեալ արհամարհանքով դէպի մահը, նա բարոյական նեցուկ էր յեղափոխական խմբերի անդամների համար: Կռիւների ժամանակ Շէրօն իր արծւի աչքերով դիտում էր ընկերների դիրքերը եւ երբ նկատում էր այս կամ այն դիրքի թուլանալը, թշնամու դնդակների տարափի տակ՝ իսկոյն օդնութեան էր հասնում նորեկներին՝ ոգեւորելով եւ սիրտ տալով նրանց:

Գործնական այդ դասախարակութիւնը մեծ նշանակութիւն ունէր, եւ այդ դիտաւորութեամբ էր որ խմբապետները օգտւում էին նրանից, ու ամենավրտանդաւոր վայրերն էին ուղարկում՝ նորեկ ընկերների հետ միասին:

Շէրօն իր արտաքին տեսքով բուն լեռնականի տպաւորութիւն էր թողնում. հասակով կարճ, բայց ուժեղ կազմւածքով մի տղամարդ էր: Նա մանկութիւնից չատախոսի Շաքիր աւազակի դէմ կատարած



ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՃԵԱՆ

յարձակումներին, Բօղազ–Քեասանի, Զուխ–Գեադուկի, Նարեկայ եւ մի չարք այլ ընդհարումներին:

Շէրօն յեղափոխական ասպարէզում կարողացաւ աւելի զարգացնել իր ուժերն ու օգտակար լինել: Իր ընկեր Զաթօն աւելի համեստ աշխատաւոր էր եւ ոչ այնքան տաղանդաւոր: Նա սոսկական եւ համարձակ կռւող էր: Սա էլ մասնակցել է չատ կռիւների, հայդուկային խմբերին վաչատուքիւն է արել եւ երբեմն էլ զինակիր խմբերին է օժանդակել:

Բնութեան պարզ որդիներ էին դրանք, որոնք մինասին երգւել էին հաւատարիմ մնալ հայրենիքին եւ անբաժան ընկեր լինել: Նրանք չատ անգամ մինասին են մասնակցել կռիւների եւ զարմանալի զոհողութեամբ՝ երկուսն էլ նոյն տեղում են նահատակւում, մինչն Զաթօն երկու տարի առաջ է ընկնում:

Զաթօն նահատակւեցաւ 94 թւին, իսկ Շէրօն՝ 96–ին:

Դրանք անփոխարինելի սիւներ էին յեղափոխութեան համար:

## ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՃԵԱՆ

Յեղափոխական ահաբեկչի մի տիպ է Մարտիրոսը, որի կենսագրութեան մասին քիչ տեղեկութիւն ունինք: Նա արհեստով կօշկակար էր եւ ժողովրդի աշխատաւոր դասակարգից: Նորա կատարած դէպքը, սակայն, մի վստաւոր կենսագրական է, որ ցոյց է տալիս նորա հոգու վեհութիւնն ու դաղափարի հաստատուն հիմունքները:

Պօլսոյ մէջ անհամար ձերբակալութիւններէն ու բանտերէն յետոյ կառավարութիւնը կարծում էր թէ՝ արմատախիլ արեց յեղափոխութիւնը, որ նըրանք այլ եւս չկան եւ որ ինքն ազատ է՝ իր արբանեակների հետ միասին իր քմահաճոյքներն իրագործելու:

Կարաքէօյի հերոսական կուիւը սարսափ էր ազդել բոլոր շրջաններում, իսկ յեղափոխականների կախաղանի վրայ ճօճուելն աւելի եւս ուժ էր տուել իրենց ընկերների գործունէութեան, որոնք սկսել էին մի քանի խոչընդոտներ մէջ տեղից վերացնել:

Սպանւում է լրտես Մարզարը: Յաջորդ թեկնածուն էր յուսարար Օննիկը, որ իր հին մտանութիւններն վրայ մտանեց նաև՝ Մայր Եկեղեցում ապաստարան դտած ահաբեկչին կառավարութեան ձեռքն յանձնելով: Օննիկը դատապարտւում է մահւան եւ գործադրութիւնն յանձնւում կօշկակար Մարտիրոսին:

Մի օր Օննիկը նստած դիւնեատան մէջ՝ ալկօհօլով իր խղճի խայթն էր խեղդում: Նրան պահպանում էին մի քանի ոստիկան–թիկնապահներ. Մարտիրոսը, ճեղքելով սուլթանի ծառաների շարքը, ներս է մըտնում դիւնեատուն եւ դաշոյնի երեք հարուածով վերջ է դնում մատնչի կեանքին: Ապա առանց չփոթուելու, ատրճանակը ձեռքում սեղմած, դուրս է թռչում, ուր եւ դեռին է գլորում մի ոստիկանի և մի դիւնեորի:

Ճամբան չարունակելով՝ ներս է մտնում մի բակ: Նա աշխատում է խոյս տալ իրեն հետապնդող բազմաթիւ ոստիկաններից, բայց այդ նրան չի յաջողւում: Այն բակը, ուր ներս էր մտել, հանդիսա–

նում է եւ նրա դերեզմանը: Տան տէրերը, տեսնելով օտարականի ձեռնելը արեան մէջ շաղախուած, սաստիկ ազազակ են բարձրացնում եւ դրսից օգնութիւն խնդրում: Իսկոյն վրայ են հասնում ձիաւոր զինուորներ եւ տունը շրջապատում: Սկսւում է մի կատաղի կռիւ: Մի հզօր ահագին թուով զինուորական ուժ է ելել: Մարտիրոսն անվհատ շարունակում է կրակել. նա կռւում է առիւծաբար: Ամէն կողմից՝ թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ ոստիկանները գոռում էին. «անձնատուր եղի՛ր, անձնատուր եղի՛ր», հաւատացընելով թէ՝ աւելի լաւ է այդ միջոցը եւ ապահով, բայց անվեհեր Մարտիրոսը շարունակում է կրակել, որովհետեւ անձնատուր լինելը՝ ջեղափոխականի օրինագրքում չի գրւած:

Այդ կռւի ընթացքում նա կարողանում է մի զինուոր էլ սպանել: Մի քանի ժամ է տեւում այդ պատերազմը, մինչեւ որ ահաբեկիչն զգում է որ մեայն մի գնդակ է մնացել եւ որ մահը մօտեցել է: Առանց երկար խորհելու, միայն պատկերացնելով Քրքալեան բանտերը, խոշտանգութիւնները ու տանջանքները, վճռում է ինքնասպան լինել:

— Ես ձեզի պէսներուն անձնատուր չեմ ըլլար— կանչում է Մարտիրոսը — ու վերջին գնդակը բերնի մէջ պարպելով՝ նախընտրում է վայրկենական մահը:

Պաշարողներից եւ ոչ ոք չէր սպասում այդ վախճանին: Ժողովուրդն հիացմունքով է դիտում այդ նահատակութիւնը եւ աստիճանաբար հաւատում, որ ջեղափոխական, մաքուր շարքերի միջոցով միայն կարելի է վերկել ազգն եւ դերի հայրենիքը:

Այդ մահը մի դաստիարակութիւն էր՝ նոր սերունդի համար, որը սովորեց արեան ճանապարհով քայլելու անհրաժեշտութիւնը եւ միաժամանակ մի ուժեղ հարուած էր կառավարութեան այն մտայնութեան, թէ այլ եւս յեղափոխականներ չկան եւ որ յեղափոխութիւնը հիւանդոտ երեւոյթ էր, որ շուտով բուժուեցաւ:

Մարտիրոսի անձնազոհութիւնը եկաւ այլ բան ապացուցելու: Որքան կարճ է նորա կատարած գործը—գաշոյնի երեք հարուածով սպանել մի մահնիչ—բայց որքան խորն է նորա հոգու թափը, նորա պաղարիւնութիւնը, պատասխանը գինուորներին եւ վերջապէս հերոսական մահը:

Իւրաքանչիւրը դրանցից մի–մի խոր հոգեբանական երեւոյթներ են և դրանց բոլորի ստեղծագործողը՝ ժողովրդի իսկական զաւակ՝ կօշկակար Մարտիրոսն է:

## ՊԵՏՈ

Ալէքսանդր Պետրոսեան, այս էր Պետօի իսկական անունը: Համեստ ընտանիքի զաւակ լինելով՝ նա մինչ իր սրտի խորքում վառ է պահել ազատութեան եւ հայրենիքի սէրը: Ծնողները, որոնք հազիւ էին կարողանում իրենց օրապահիկը ճարել, մտածում են իրենց որդուն կրթութիւն տալ եւ հայ ուսուցչութեան պատրաստել:

Աւարտելով դպրոցը նա զբաղւում է վարժապետութեամբ և այդ աստիճանում ցոյց տալիս է իր յեղափոխական տրամադրութիւնները:

Իննսունական թուականների յեղափոխական–ա–





ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

զատագրական չարժումը նրան դուրս է կանչում իր թագստոցից եւ աւելի դժուարին, վշտա ճանապարհի հրաւիրում: Պետոն երկար չի մտածում. նա անմիջապէս ձգում է ուսուցչութիւնը, թողնում է հանդիստ կեանքն ու աղքատ ծնողներին երեսի վրայ ձգելով՝ անցնում սահմանը:

Սահմանն անցնել Թուրասատանից, տեսնել Հայաստանը, լսել հայ ժողովրդի տառապանքների ձայնը, աշխատել այդ բոլորը վերացնել, առաջ տանելով յեղափոխական պրօպագանդ, դա ամէն մարդու փափաքն էր, բայց ամէն մարդու գործ չէր: Պետոն առաջին յեղափոխական գործիչներից էր, որ մտաւ Երկրի դժոխային պայմանների մէջ՝ բուն հայ ժողովրդի մէջ կազմակերպութիւն առաջ բերելու, եւ ընթացութեան, դիմադրութեան եւ չարքաշ անհատներից էր, որոնք ամէն վտանգ աչքի առաջ ունենալով, իրենց գաղափարի իրագործման համար հող են պատրաստում:

Դուք նրան կը պատահէք ամէն դերի եւ պաշտօնի մէջ: Կառավարութեան հալածանքից խուսափելու համար երբեմն նա ծառայի հագուստներով էր պտտում՝ բրդեայ փափախը դլխին, տրեխները ոտներին, կեղտոտ եւ դղրդւած չորերով. երբեմն նա աղքատի դրութեան մէջ կը լինէր, նկեղեցիների դռներում եւ մեծ փողոցներում նստած՝ «ողորմութիւն» էր խնդրում, և միաժամանակ իր յեղափոխական պրօպագանդը առաջ տանում, խրախուսում եւ սրտապնդում ժողովրդի յուսահատ տարրերին:

Պետոն եւ իր ընկերները, որոնք երկար տարիներ չարունակ ամէն տանջանք չանձն առած աշխա-

տում էին յեղափոխել ժողովրդին, գործնական քողքողներ հանդիսացան այն հոսանքների եւ նրանց ղեկավարների դէմ, որոնք «կենտրոններից» էին հրաման տալիս՝ հայկական իրականութեան մէջ ծաւալուղ յեղափոխական չարժման՝ միանգամայն անտեղեակ լինելով երկրի իրական պայմաններին:

92 թուին, երբ կարճատեւ գործունէութիւնից յետոյ շատ քիչ դրական արդիւնք տեսնուեցաւ եւ երբ շատերը, կարծելով թէ մի քանի տարուայ աշխատանքը բաւական պիտի լինէր ազատութիւն ձեռք բերելու, յուսահատւում էին, գործից քաշւում, ըստ պատեհի աւելի «յարմար առիթի», Պետոն յայտնի էր իր ոգեւորութեամբ եւ ո՛չ մի ձախորդութիւն չէր կարող յուսահատեցնել նրան, այլ աւելի եւս կ՚ամրապնդէր հաւատքը՝ դէպի Ս. Գործը:

93 թուականին նա վերադառնում է Կովկաս: Երիտասարդութեան անտարբերութիւնն ու յուսահատ վերաբերմունքը դէպի հայ ժողովրդի տառապանքները, նրա ցաւերը, խիստ վիշտ են պատճառում Պետոին, որը իրեն յատուկ տաք շնչով, անկեղծ ու մաքուր ոգեւորութեամբ սկսում է ժողովների չարքը: Նա կարճ ժամանակում իր շուրջն է համախմբում երիտասարդութեան, պատմում է ժողովրդի անտանելի վիճակից, ներկայացնում է յեղափոխութեան եւ մանաւանդ գործչի անհրաժեշտութիւնը, յոյս է ներշնչում շատերին եւ առաջ բերելով որոշ ոգեւորութիւն՝ նորից վերադառնում է Երկիր:

Վասպուրականի չրջանը կարեւոր յեղափոխական կենտրոն էր նկատւել եւ նախկին գործիչների

մեծ մասը այնտեղ էին հաւաքուած:

Պետոն Վան քաղաքի այդ չարժումների կենտրոնական դէմքերից մէկն էր: Նա ներկայ էր լինում բոլոր ժողովներին, վիճում եւ բացատրում էր շատ կարեւոր հարցեր, անզադար հարւածում էր այն սեւ եւ տրկամիտ տարրերին, որոնք աշխատում էին յետադիմութիւնը մեռցնել, պատրաստում էր քաղաքական եւ մարտական խմբեր եւ միշտ էլ յատուկ ուշադրութիւն էր դարձնում զինման գործի վրայ:

Նա միշտ աշխատում էր թարմ երիտասարդներ ներս քաշել, լծել հասարակական դժւարին գործին եւ իր անձնական զաղափարականութեամբ, սակաւապետութեամբ եւ անձնազոհութեամբ օրինակ էր հանդիսանում բոլորին:

96 թուականն էր: Վանի պատմական ինքնապաշտպանութիւնն էր պատրաստւում: Յեղափոխական երեք կուսակցութիւնները, մոռացած երէկը, չուրջ էին բոլորւել օրւայ հրամայական պահանջին եւ մի ընդհանուր կուրծք կազմելով՝ վճռել էին դիմադրել անարգ թշնամուն:

Անհաւասար ուժերով կռիւը տեւում է 5–6 օր, երբ եւ Եւրոպական որոշ պետութիւնների արած եւրաչխատութիւններին հաւատալով, թողնում են նրանք քաղաքն ու վարդապետ լեռը բարձրանում:

Այդտեղից էլ Պետոն եւ Մարտիկը, 83 հոգու դլուխ անցած, վճռում են անցնել Պարսկաստան՝ Գարահիսար լերան գծով...

Այդտեղ է լինում, որ նրանք չրջապատւում են առաջուց պատրաստւած զինւորների եւ զինւած քրդերի խմբակներով, որոնց դէմ կռւում են անվեհե-

բաբար ու բոլորն էլ նահատակւում: Դրանցից միայն մէկն է կարողանում ազատւելով՝ չայտնել յեղափոխական նահատակութեան ոգալից էջերից մէկի վախճանը:

Պետօն ընկաւ 6–7 տարւայ բուռն, անդադար եւ մաքուր գործունէութիւնից յետոյ... Նա չկայ այլ եւս, բայց հոգով, իր գաղափարական մտածողութեամբ միշտ մեզ հետ է: Նա ընկաւ, ապացուցելով, որ յեղափոխական տարրերը կարող են եւ պարտաւոր են միանալ ընդհանուր թշնամու դէմ կռւելու ժամանակ:

Եւ ամէն անգամ, երբ Պետօին եւ իր նահատակ ընկերներին ես պատկերացնում, միշտ աչքիդ առաջ են գալիս Ղարիբի խօսքերը — «Դա՛շտ, արխնոտ վայր. գիտեմ, դու տեսար այն ահեղ մարտը, ուր մէկը տասի դէմ, նզովք կարդալով սեւ ճակատագրին՝ մէկ-մէկ փռւեցին իմ եղբայրները՝ խեղճ հայրենիքի մօտիկ փրկութեան անհուն կարօտը այրած սրտերում, անկատար իղձերի վառ երազների ցաւը կրծքերում... Ասա, դաշտ, ո՞ւր, ի՞նչպէս ընկան նահատակները. ո՞ւր են նրանց սրբազան շիրիմները»...

«Շիրի՞մ ես փնտռում... Ո՛հ, զգոյշ շարժւիր: Նայի՛ր ոտքիդ տակ, տե՛ս, դու քայլում ես շիրիմների մէջ... Ժայռերի ներքեւ, վտակի ափին, սեւ լերան կրծքին, այս թփերի մէջ, այն խոտերի տակ՝ անտէր փռւած են մեր ոսկորները...Քամին է շոյում մեզ իր մեղմ շնչով, ծաղիկն է լալիս մեզ ուշ գիշերին, խաւարն է ծածկում մեզ դաւաճաններից... Թո՛ղ, թո՛ղ մեզ հանգիստ ու անցիր գնա»...

*«Գարահիսար լե՛ռ, անէծքի անուն, ասա դու ինձ քո ո՞ր ժայռի տակ լուռ ընկաւ Պետոն, ո՞րտեղ պառկեցին իր ընկերները»...*

*Եւ ոչ ոք պիտէ: Պետոն չկայ մեզ համար իր դամբարանով, բայց գոյութիւն ունի, ապրում մեր մէջ իր դաղափարականութեամբ եւ իր հերոսական ձահով: Փա՛ռք իրեն եւ այն նահատակներին, որոնք հիմք դրին մեր Ազատագրութեան վառ Արշալոյսին...*

(ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ)

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա.

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Յուսադրիչ խօսքեր: Ներքին տրամադրութիւններ.— Հայ-թրքական յարաբերութիւններ.— Արտաքին պայմաններ.— Դիւանագիտութիւն, օտար պրօպագանդ.— Հայ-կրէտական և հայ-մակեդօնական յարաբերութիւններ — Տակտիկա.— Հայդուկի տիպ:

Յուսադրիչ խօսքեր.— *Ընդհանուր հայկական կոտորածներից յետոյ, երբ բոլոր ջրհաններն էլ ենթարկւեցին անպատմելի սարսափների եւ երբ հասարակութեան զանազան խաւերում յուսահատութիւնն էր սկսել իր սերմերը ցանել, թիւրք կառավարութեան թւաց թէ՝ յեղափոխական շարժումը վերջացել է, որ Ազատագրութեան ո՛չ մի նշան չկայ եւ որ հայութիւնն արդէն պատրաստ է իր հրամաններըն իրագործելու: Դիւանագէտներն էլ հանգստացան, կարծելով թէ՝ հայկական կնճռոտ հարցն այլ եւս չկայ:*

*Մթնոլորտը վարակւած էր: Շատերն յուսահատւել էին եւ ապարդիւնից քաշւել: Տկար էր ոգեւ-*

*նում մօտակայ անցեալի գաղափարների եւ գործունէութեան վերագնահատում, հին աստուածները ոտի տակ էին տրւում եւ այդ հիւանդոտ պայմաններում յեղափոխական աշխատանքն աւելի էր դժւարանում:*

*Մթութեան միջից գլուխ էին բարձրացրել յետադիմական տարրերը, համախորհուրդ գործունէութեան էին սկսել հոգեւորականներն ու հարուստները, աւելի բազմացել էին լրտեսների եւ մատնիչների թիւը եւ այդ բոլոր տականքներին ուժ էին տալիս մանաւանդ նրանք, որոնք երէկ յեղափոխական շարքերի մէջ էին, գէնքի-կուլի էին հաւատում եւ պատրաստ էին մինչեւ մահ դիմադրելու, միայն թէ հայրենիքն ազատագրւի: Վհատութիւնն աստիճանաբար ծաւալւում էր եւ անհրաժեշտ էր օր առաջ դիմադրաւել:*

*Այդ ընկճւած, թուլամորթ հասարակական մըտածողութեան մէջ միակ մխիթարական կէտը՝ յեղափոխական շարքերի եւ յատկապէս ու բացառապէս Հ. Յ. Դաշնակցութեան պրօպագանդն էր եւ գործունէութիւնը:*

*Պէտք էր հակահարւած տալ բռնապետութեան եւ որքան շուտ՝ այնքան լաւ:*

*Փոքրաթիւ մտաւորականներ եւ աշխատաւորներ, հալածական բոլորից, նետւել էին կեանքի ալիքների մէջ եւ ամէն կերպ ձգտում էին բարձր պահելու տրամադրութիւնները:*

*— Ճամբից չշեղւենք, կռի՛ւ է մեր ճամբան, այս է ամենօրեայ աղօթքը մի բուռն յեղափոխականների, որոնք աստիճանաբար իրագործում էին*

Բանկ–Օտտոմանի եւ Խանասորայ արշաւանքի ծրագիրները:

«Յեղափոխութեան եւ ազատութեան ծանրութիւնն ընկնում է երիտասարդութեան վրայ», գրում էր «Դրօշակ» իր 96-ի թիւ 26-ում: Հայ գաղափարական անձնուէր երիտասարդութիւնն էր, որ ամենից առաջ սկսաւ անհաւասար կռիւը: Թշնամին կատաղօրէն կռւում է, որովհետեւ մեր ազատութիւնը նորա մահն է: Վերջին հարուածն իջեցնելու համար պէտք է կազմակերպւել, շարքերը ստւարացնել, եռանդով գործել եւ, որ գլխաւորն է, լինել անձնուէր: Ազատ ազգի զաւակ լինել — ամէն մէկի ցանկութիւնն է եւ զարգացման նախապայմանը, ուրեմն, թողէ՛ք ամէն ինչ հայ երիտասարդնե՛ր, դպրոց, արհեստ, ծնող, սիրելիք եւ լցրէք շարքերը՝ մեր սրբազան կռիւը առաջ տանելու համար»:

Եւ հաւատքով ու գաղափարով ոգեւորւած երիտասարդները գալիս էին դէպի յեղափոխական վտանգաւոր եւ փշոտ ճանապարհը եւ նրանք ազատւում էին տիրող վատթար մթնոլորտից ու նորից զարգանում էին շարժումը եւ դիմադրութիւնը:

Միայն այդ փոքրաթիւ մարդկանց շարքերից էր լսւում յուսադրիչ խօսքեր, միայն դրանք չէին վախենում սուլթանական հալածանքներից ու անվախօրէն դէպի կախաղաններ քայլելով՝ վրէժի եւ կռւի զգացմունքն էին արթնացնում ժողովրդի մէջ: Դրանք, այդ՝ բանտի եւ կախաղանի մշտական յաճախորդները, լռութեան մէջ մեծ ծրագիրների համար պատրաստութիւններ էին տեսնում: Նրանք գիտէին, որ հասարակութեան համար խօսքը, քարոզը

*բաւական չեն — անհրաժեշտ են իրական և չմեռնող գործ :*

## ՆԵՐՔԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ .—

Հակայեղափոխական տարրեր .— *Հայկական կոտորածները իրենց դերը խաղացին, ազդելով հասարակութեան տրամադրութիւնների վրայ : Շատ անհատներ, որոնք յեղափոխական շարժման ջերմ երկրպագուներից էին, անմիջապէս իրենց դիրքը փոխելով՝ միացան հակայեղափոխականների հետ և սկսեցին հարուածել, հայհոյել, վարկաբեկել այն ազնիւ, գաղափարական անհատներին, որոնք դեռ յամառօրէն շարունակում էին գործել՝ հայրենիքի փրկութեան համար :*

*Բանկ–Օտտոմանի փոռաւոր ցոյցից յետոյ այդ տարրերը շարժուեցան և հրապարակային խօսակցութիւններում թէ մամուլով սկսեցին քննադատութեան ենթարկել Դաշնակցութեան գործելակերպը, անուանել «հայ ժողովրդի չահերին վնասող», «հայութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող», «օտար պետութիւնների ձեռքին գործիք», «աւազակներ, բաղդախնդիրներ» եւայլն : Դրանց ուղղութիւն տուողը սուլթանական կառավարութեան դրամալից ներկայացուցիչներն էին, որոնք ամէն տեղ էին և պարտականութիւն ունէին կասեցնել յեղափոխական շարժումը :*

*«Դրօշակ»–ը իր 1898–ի թիւ 1–ի «Դաշնակցութիւնը և հայ հասարակութիւնը» յօդուածում հակայեղափոխական տարրերին բաժանում է հետեւեալ կարեւոր տեսակների .*

ա) Տիպեր, որոնք իրենց մտածողութեամբ, իրենց դիրքով եւ հոգեբանութեամբ դէմ են յեղափոխական շարժման եւ այդ ախտն անցել է շատերի մէջ ժառանգաբար: Դրանց շարքերում դուք կը հանդիպէք հարուստներին, հոգեւորականներին եւ այն թերթերին, որոնք դրանց դրամներով են իրենց գոյութիւնը քարշ տալիս:

Դրանք, այդ անուղղելի եւ երդուեալ հակառակորդները, այնքան էլ վտանգաւոր չեն այն տեսակէտից, որ նրանց դիրքը որոշ է եւ նրանք գտնւում են հակահայ, թշնամի տարրերի բանակում: Ճիշդ է, նրանք խոշոր դեր են խաղում եւ շա՛տ էլ մեծ վնաս հասցնում Ազատագրութեան, բայց այդ չարիքը որոշ է եւ ակնաբախ:

բ) Կային այնպիսիները, որոնք միայն դրամական մասնակցութիւն էին բերում շատ նուազ չափով եւ ամէն պատեհութիւն չէին փախցնում պահանջելու, որ յեղափոխութիւնը հրաշքներ գործէ: Միջին դասակարգից էին դրանք, որ տարեկան մի քանի տասնեակ ոսկիներ էին միայն նուիրաբերում, այն էլ յակամայից, բայց միշտ, ամէն տեղ դէմդ կը ցցուէին «այսքան տալիս ենք, հա՛ տալիս, դեռ ազատութիւն չեղա՞ւ» ասելով: Այդ տարրերն էլ այնքան դրական ազդեցութիւն չէին թողնում հասարակական լայն խաւերի վրայ:

գ) Հոսանքներ կային, որոնք իրենց մտածողութեամբ համակարծիք էին յեղափոխական շարժման, գիտէին որ պատմութեան անհրաժեշտ օրէնքն է այդ եւ որ բալկանեան փոքրիկ ազգութիւնները ազատագրուել են արեան այդ անխուսափելի ճանա-

պարհով քայլելով: Նրանք խօսում համակիրներ էին, շատ անգամ էլ ներքոյներ եւ պաշտպանողականներ էին կարդում ու մի շատ բառերով գիմադրում հակառակորդներին, բայց իրենց գործնական ո՛չ մի մասնակցութիւնը չէին բերում, այլ բարւոք էին համարում հեռուից միայն ականատես լինել:

դ) Եւ վերջապէս այնպիսիները երեւան եկան, որոնք մինչեւ կոտորածները յեղափոխական շարքերումն էին, աշխատում եւ պատրաստում էին ժողովրդին կռւի համար, բայց չդիմանալով կեանքի ուժեղ հարւածներին եւ կամքի ուժեղութեան պակասութիւնն զգալով՝ տեղի են տալիս ու նեռւում հակայեղափոխականների դիրքը: Դրանք սկսում են քննադատել գործողներին, պախարակել իրենց նախկին ընկերներին, հայհոյել նրանց եւ միշտ գործիք լինել կառավարութեան ձեռքում: Դրանց անունով շատ անգամ հրատարակ են իջնում յեղափոխական գործելակերպի «սխալ ու վնասակար» լինելը: Դրանք, այդ նախկին ընկերները, իրենց գործունէութեամբ աւելի վտանգաւոր տարրեր են հանդիսանում եւ շատ բնական էր Դաշնակցութեան բռնած դիրքը՝ նախ ուժգնապէս հարւածել դրանց եւ ապա անցնել միւս հակառակորդներին:

Դրանք էին այն տարրերը, որոնք իրենց ուժը վատնում էին ո՛չ թէ հայ ժողովրդի, տառապող եղբայրների ազատագրութեան համար, այլ տապալելու այն անհատներին, որոնք յանդգնում են ընդհանուր ոէակցիայի ժամանակ գլուխ բարձրացնել

*եւ ընթռտանալ սուլթանի «հայրախնամ» կառավարութեան դէմ: Բայց դրանք միայնակ չէին:*

Հարուստներ — հոգեւորականներ.— *Այս երկու տարրերը պատմականօրէն փոխադարձ համակրութեան եւ պաշտպանութեան մէջ են եղել եւ մինչ էլ հասարակական կեանքում ձեռք-ձեռքի տրուած են առաջ ընթացել: Դրանց մէջ շատ քիչ յարգելի բացառութիւններ են եղել: Դրանք, այդ երկու կարեւոր խաւերը՝ ղրամի եւ հաւատքի ներկայացուցիչները եթէ ամենայն ոգեւորութեամբ իրենց մասնակցութիւնը բերէին եւ մինչ էլ նպաստէին հայ ժողովրդի տառապանքների թեթեւանալուն — մենք այժմ անհամեմատ աւելի տանելի պայմանների մէջ կը լինէինք: Նրանք ո՛չ թէ միայն չեն նպաստել, այլ եւ ոտքի են կազմակերպուած ու պարբերական կռիւ մղել գործող տարրերի դէմ՝ թէ իրենց անձնական նախաձեռնութեամբ եւ կամ թէ կառավարութեան թելադրութեամբ:*

*Պօլսոյ մէջ կենտրոնացած հարուստները եւ մանաւանդ պալատական սեղանաւորները՝ իրենց դաւառական արբանեակներով աշխատում էին հայ ժողովրդի քաղաքական ներկայացուցչութիւնը հանդիման, որովհետեւ մտածում էին թէ՛ ազգը համապատասխան դնահատութիւն չի կարողանում տալ: Նրանք ամէն բան մենաշնորհի վերածելու տրամադրութիւն էին ցոյց տալիս: Նրանք իրենց վերապրում էին, «Դրօշակ»ի նկարագրութեամբ, ամէն ինչ՝ եւ ազգի շահը պաշտպանողներ, եւ՛ խոհեմ, զգոյշ եւ ազգօգուտ քաղաքականութեան հետեւողներ, եւ որ գլխաւորն*

է «ազգը գոյութիւն ունի չնորհիւ իրենց գործունէութեան» եւ իրենց միջամտութիւններին՝ կառավարութեան մօտ, այլապէս յեղափոխականների ևս-ասիրութեան պատճառով ազգութիւնը փշացել էր:

Նրանց այդ մտայնութեան ուժ էին տալիս հոգեւոր հայրերը, որոնք ամէն կերպ աշխատում էին կուել յեղափոխական տարրերի դէմ՝ ձչտապէս քարոզելով խոհեմութիւն, հնազանդութիւն եւ հպատակութիւն:

Եթէ նրանք իրենց խօսքերի համապատասխան գործ կատարէին, նևիրաբերութիւններ անէին, այնքան էլ քննադատութեան չէին ենթարկւի, բայց որովհետեւ գործնական կեանքում չատ անդամ հակառակ ընթացք են բռնել, ժողովրդական դժբաղդութիւնների ժամանակ իրենց դրպանները են ամուր գոցել, այդ պատճառով էլ անհրաժեշտ է երեւան հանել այդ տարրերի բացասական գործունէութիւնը:

Ահա դրանք — Եղիա Շահրազը՝ Պօլսում, որ հրաժարւում է յեղափոխական նպատակների համար 300 ոսկի տալ, բայց ամենայն ուրախութեամբ 500 ոսկի է տալիս մի քանի ատիկաններին, որպէսզի իր կեանքը պաշտպանեն յեղափոխականների գնդակից:

Վասպուրականի մէջ էլ հայ հարուստները նոյն քար անտարբերութիւնն են ցոյց տւել, որից զրկւած՝ 97-ին, Դաշնակցութեան կենտ. կօմիտէն մի թռուցիկ է բաց թողել, դատապարտելով հայ հարուստների ընթացքը: «Նրանք — չեչտւած է թռուցիկի մէջ — զրամը տաճիկին, քիւրդին չեն խնայի, կը տան, իսկ յեղափոխութեան ո՛չ մի բան չեն տայ,

այլ եւ կռիւ կը յայտարարեն»: Դրանց, այդ անխիղճ հայերի եւ վայրենի, արիւնարբու քիւրդերի մէջ ո՛չ մի տարբերութիւն չկայ, եւ «բնական է — շարունակում է Թաուցիկը — հայութեան հասարակ թշնամի են, որի պատճառով էլ միատեսակ որոշում եւ գործադրութիւն է պէտք՝ մահուան պատիժ»:

Դրանք միայնակ չէին: Կենտրոնական կայանը, որտեղից հրամաններ էր արձակում՝ Պոլիսն էր եւ պատրիարքական գահի վրայ բազմող Օրմանեանը:

Հայկական կոտորածների ապաւորութիւնը դեռ թարմ էր: Հայ ժողովուրդը ցասման եւ վրէժի օրեր էր ապրում: Իւրաքանչիւրի հոգու խորքում անարգանքի եւ ատելութեան արտայայտութիւն կար սուլթանի գազանութիւնների դէմ: Այդ բոլորը, սակայն, Օրմանեանի համար չէր: Թուքատի կոտորածից անմիջապէս յետոյ, նա մի կոնդակ է հանում, որի մէջ գովաբանում է սուլթանի կառավարութիւնը, համարում է այն «բարեխնամ» եւ պատուիրում որ հնազանդ եւ հաւատարիմ լինեն: Այդ կոնդակը կարդացւում է Հայաստանի բոլոր եկեղեցիներում եւ բնականաբար փաստ է համարւում թիւրք վարիչների ձեռքում՝ եւրոպական դիւանագիտութեան եւ հասարակական կարծիքի վրայ ազդելու ժամանակ:

Այդ երկու խմբերի տիպիք ներկայացուցիչներըն էին Օրմանեան եւ Արթինեան, որոնք յեղափոխականներից պահանջում էին հաշտուել թիւրք կառավարութեան հետ, որպէսզի բարենորոգումներ եւ կամ աւելի ճիշտը, բարուոքումներ կարողանանք ըստանալ: Դրանց նշանաբանն էր — դադարել կռւե-

լուց եւ ձեռք վերցնել Եւրոպայից, որպէսզի Թիւրք կառավարութիւնը բարեկամաբար վերաբերուի:

Արդ տարրերը, նկատելով որ զանազան բանակցութիւններ իրենց դրական արդիւնքը չեն տալիս, որ յեղափոխականներն աւելի յամառօրէն շարունակում են իրենց գործունէութիւնը եւ որ ժողովրդական լայն խաւերի համակրանքն օրէցօր աճում է դէպի կռիւը եւ դիմադրութիւնը, և տեսնելով որ շիտակ միջոցներով անկարող են տապալել, դիմեցին վարկաբեկման եւ յերիւրանքին: Նրանք իրենց վարձկանների միջոցով, որոնց միացել էին եւ կուսակցական կրքից կուրացած հակառակորդներ, աշխատեցին նսեմացնել Բանկ-Օտտոմանն ու Խանասորայ Արշաւանքը, որոնց հերոսներին «վատեր» անուանեցին, «գիշերանց Շարաֆ-բէկի վրայ յարձակողներ» և «կանանց մորթողներ» կոչեցին, «դաւաճան» եւ «ազգակործան ընթացք» բառերով բնորոշեցին, եւ երբ այդ բոլորն անգամ որոշ արդիւնք չտուեց, այն ժամանակ ստիպուած եղան տարածելու եւ քարոզելու, որ Հայկական կոտորածների պատճառը Հայ յեղափոխականներն էին, եւ Խոյի շրջանում քիւրդերի գործադրած գազանութիւնները եւ պարսիկ պաշտօնեաների աւարառութիւնները, այդ շրջանի հայդուկային խմբի գործունէութեան արդիւնք համարեցին:

Թիւրք կառավարութիւնը չէր կարող ունենալ աւելի լաւ վկաներ եւ հաւատարիմ փաստաբաններ, քան այդ մարդիկ, որոնք Հայկական իւրաքանչիւր մի վշտի, տառապանքի եւ բռնութիւնների ժամանակ աշխատում էին յանցաւորներ գտնել ո՛չ թէ տէ-

բարեկեցող պաշտօնեաների շարքերում, այլ ժողովըրդի իրաւունքը, ազատութիւնը պաշտպանող հայ գաղափարական հոսանքի մէջ: Այդ մտայնութիւնն էր պատճառը եւ այդ կեղտոտ զէնքն էր առիթ տուել հանդուցեալ Քր. Միքայէլեանին՝ գրել իր այնքան տրամաբանական եւ փաստալից յօդուածաշարքը՝ «Ամբոխային Տրամաբանութիւն» վերնագրով, ապացուցելու համար, որ կոտորածները յեղափոխական շարժումների արդիւնք չեն, այլ բռնապետական կառավարութեան առօրեայ գործունէութեան մի մասը: Կոտորածները՝ թիւրք կառավարութեան համար անհրաժեշտ միջոցներ են, որպէսզի հպատակ քրիստոնեայ եւ ընդունակ տարրերը աճեցման չենթարկուին եւ այդպիսով վտանգ չսպառնան թէ՛ թիւրք ժողովրդի գոյութեան եւ թէ՛ կառավարութեան:

Քր. Միքայէլեանն ստիպուած է եղել հերքելու այն մտայնութիւնը, թէ երբ «միայն հայերին են կոտորել եւ որ այդ արդիւնք է յեղափոխական գործունէութեան»: Նա իր յօդուածի մէջ մէջբերումներ է անում ամերիկացի գրող Գրինի յօդուածից, որ տպուել է "The Independant" լրագրի մէջ, որ թիւրք կառավարութիւնը կոտորածներ սարքել է՝ 1840 թւին — սիւրիացիների ջարդը — Նէջիբ փաշայի ղեկավարութեամբ,

1850 թ — հայերի եւ նեստորականների ջարդը — գլխաւորութեամբ Բէդր–խանի,

1860 թ.— մարօնիների եւ սիւրիացոց կոտորածը — Խուրշիդ փաշայի առաջնորդութեամբ:

1876ին բուլղարական ջարդերը, 1877ի

*Շէյխ Ջալալէդինի արշաւանքը, 1879-ի Զէյթունի ջարդը, 1894ի Սասունի կոտորածը եւ այսպէս շարունակաբար:*

*Այդ պայքարը, որ սկսած էր այնքան վաղուց, չարունակւում է մինչեւ մեր օրերը, երբ Հայկական աննախընթաց տառապանքի պատճառը, մի քանի բթամիտ եւ եսամոլ հոսանքներ ու անհատներ համարում են կամաւորական չարժումը:*

*Բուրժուազիայի եւ Հոգեւորականների միացեալ այդ խմբակները դեռ վերջինը չէին. նրանց նըպաստող այլ տարրեր էլ կային, որոնք մեր ներքին տրամադրութիւնների բարդութեան վրայ մի նոր չերտ էին աւելացնում:*

---

Ընդհանուր պատրաստականութեան կողմնակիցներ.— *Այս մտայնութեան ներկայացուցիչները յայտնում էին, որ յեղափոխական մասնակի դէպքերը Հայ Ազատագրութեան աւելի մնաս են հասցրնում եւ թիւրք կառավարութեան գրգռումներին պատճառ հանդիսանում: Պէտք է նախօրօք կազմակերպել, յեղափոխել ամբողջ ժողովրդին, միացընել բոլորը ըմբոստ տարրերին եւ ապա սկսել ապստամբութիւնը:* Դրանց արտայայտող թերթը «Արմէնիա»ն էր, որի խմբագիր Մ. Փօրթուգալեանը իր մտածողութեամբ *յեղափոխութեան էր հաւատում, իր գործունէութեամբ՝ անգործութեան:*

97 թւի «Արմէնիա»-ի թիւ 45-ի առաջնորդող յօդւածում չեչտում է. «Եթէ մենք բաւական ներքին ուժ կազմած լինէինք, բանի ուժով մեր խնդիրը պէտք եղածին չափ առաջ տանելու համար — թիւրք

կառավարութիւնը եւ եւրոպական պետութիւնները կը բռնադատուէին աւելի մեծ նշանակութիւն տալու մեր պահանջներին: Ով որ ուժ չունի — իրաւունք ալ չունենար այս աշխարհի վրայ»:

Շատ ճիշտ է, որպէս տեսակէտ:

99 թուի «Արմէնիա»-ի թիւ 22-ում, Մեն-Սէյի յօդւածում այն միտքն է տարածւում, որ հայկական յեղափոխութիւնը յաջողութիւն չի ունեցել, որովհետեւ «մեր մէջ ջանք չի եղած ժողովրդական յեղափոխութիւն առաջ բերելու»:

Դրանք շեշտում էին, որ պէտք է գիտակցութեան բերել ժողովրդին, զարգացնել երիտասարդութեան, սիրել տալ ազատութիւնը, զինել բոլորին եւ այդ բոլորը անվտանգ, գաղտնի, առանց ընդհարումների կատարելուց յետոյ՝ երբ ամէն ինչ պատրաստ կը լինի — կը սկսենք ընդհանուր ժողովրդական ապստամբութիւնը:

Ընդհանուր պատրաստականութիւն է պէտք, այս է այդ հոսանքի գլխաւոր առանցքը:

Բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով առաջ բերել այդ պատրաստականութիւնը — դրա մասին քիչ է գրւած եւ մանաւանդ կատարւած: Այդ նպատակին հասնելու համար ի՞նչպէս անել որ բոլորը զարգանան, երբ դպրոցներն են փակւում եւ թերթերը հալածւում. ի՞նչ միջոցներով զինել ժողովուրդը, երբ զինակիր խմբերին ճանապարհներին շրջապատում են պետական զինւորներ եւ զինւած քիւրդեր. անձնատո՞ւր լինեն, թէ դիմադրեն, եւ վերջապէս ի՞նչպէս կազմակերպեն բոլորին, երբ դրամական խոշոր գումարներ չկան: Գործնական այդ «չնչին»

խնդիրներով «Արմէնիա»ն քիչ է հետաքրքրել: Նա միշտ իր դաղափարակիցներին մի խորհուրդ է տալ· «պիտի հաւաքեն, խմբեր կազմեն, դրամական արնտուներ հիմնեն, նիւթապէս օդնեն «Արմէնիա»-ին, ինքնապաշտպանմար դրաղուին, աշխատեն բաժանորդ դտնել Թերթին եւ դաղափարները տարածեն»: Իսկ ինչ վերաբերում է կամաւորական խմբերին, ապըստամբութեան, կուսակցութիւնների հետ ձուլման — այդ խմբերի գործունէութեան ծրագրէն կրնան դուրս մնալ... եւ եթէ չկանան վճռել, իրենց արածները կոյր մի բան կը լինի եւ անշուշտ վնասակար:

96-ի թիւ 4-ում Բանկ-Օտոմանի դէպքը քննադատելով «Արմէնիա»ն համարել է այդ քայլը աղդակործան եւ միայն պատճառ հանդիսացող ջարդերի: Իսկ 97 թիւի Բ. Դրան մէջ ռումբի պայթումը առիթ է տալ նոյն Թերթին ասելու, որ ռումբեր նետելը Եւրոպայում անիշխանականների գործ է եւ այդ պատճառով էլ հայ յեղափոխականների ամբաչին գործունէութիւնը դէչ ազդեցութիւն է թողնում Եւրոպայում:

«Ապուշի գործ է այս արածնին», եւ շարունակելով յօդուածը, վերջացնում է թէ՝ «եթէ այսպէս դնանք, նոյնիսկ քրիստոնեաները երես պիտի դարձընեն հայերից եւ նոյնիսկ յարձակում գործեն»:

Կատարածներից յետոյ հայկական իրականութիւնն այսպիսի խառնակ վիճակի մէջ էր, չկար ընդհանուր ձգտում եւ նպատակ, ամէն օր նոր տրամադրութիւններ էին առեղծւում եւ փոփոխւում, չկար մի հաստատուն, ամուր հիմք, որի վը-

բայց կարողանային կանգնեցնել հայ ժողովրդի ազատութեան շէնքը:

**Համերաշխութեան խնդիր.—** Ընդհանուր կոտորածը հայ ժողովրդի բոլոր խաւերի վրայ չջնջեցընող տպաւորութիւն թողեց: Ամէն կողմից ձայներ էին լսւում համագործակցութեան: Անմիաբանութիւնը մեր տունը քանդել է, մեր ազգի ուժերը ջլատել եւ այս ընդհանուր սարսափներից յետոյ գոնէ, անհրաժեշտ է իրար ձեռք մեկնել եւ միահամուռ ջանքերով Ազատագրական պայքարն առաջ տանել:

Գոյութիւն ունեցող երկու կուսակցութիւնները՝ Հին Հնչակեան եւ Հ. Յ. Դաշնակցութիւն, իրենց առանձին գործունէութիւնն էին առաջ տանում: Դրանց մէջ 90-ական թւականներին փորձ էր եղել միանալու եւ կամ համագործակցելու, բայց Ա. Նազարբէգեանի բռնակալական ձգտումների պատճառով չէր յաջողւել:

96 թւականին տեղի է ունենում Հնչակեան առաջին պառակտումը, երբ եւ նախկին ընկերներն իրար են հայհոյում, պախարակում, մէկը միւսին զեղծարար անւանում եւ իրարից հաշիւ պահանջում:

Հասարակութեան եւ մանաւանդ յեղափոխական շարքերում այն յոյսը կար, որ լաւ տարրերը, աշխատող անհատները կը բաժանւեն, կը կազմեն նոր կուսակցութիւն եւ իրենց չորս կողմը կը հաւաքեն մաքուր, անկեղծ տարրերին, երբ եւ կարելի կը լինի համերաշխութեան եզր գտնել:

Ներքին այդ երկպառակութիւնների ժամա-

նակ կողմերն սկսում են իրար վրայ յարձակուել, լոյս են տեսնում բազմաթիւ թռուցիկներ, յօդուածներ և դրքեր, որոնցով կարելի է լինում ներս թափանցել Հնչակ. կոչւած առեղծւածի ներքին կեանքը եւ տեսնել այնտեղ անհատական հաշիւներ, դրամական գեղծումներ եւ որ գլխաւորն է, անգործունէութիւն: Այս բոլոր իրազարձութիւնների արդիւնքն է լինում, որ Հնչակեան կուսակցութիւնը երկու հատուածի է բաժանւում եւ դրանցից վերակազմեալները առանձնանում են՝ իրենց «ծրագրով» եւ հրատարակութիւններով:

1896 թ. օգոստոս 20-ին, Լօնդօնում գումարուած վերակազմեալ Հնչակեանների Պատգամաւորական ժողովը փափաք է յայտնում վերսկսել Հ. Յ. Դաշնակցութեան հետ մխուեան շուրջը բանակցութիւններ:

Այդ խնդրի առթիւ տեղի են ունենում նամակագրութիւններ, ապա 96-ի հոկտ. 22-ին, Մ. Սըվազեան, վերակազմեալների կենտրոնի առենապետը, կէս-պաշտօնական ձեւով այցելում է Ժընեւ, Ծորհրդակցելու Մխուեան խնդրի մասին: Այդ խօսակցութիւնների ժամանակ, Դաշնակցութեան ներկայացուցիչները դիտել կը տան, որ քանի կուսակցութեան շարքերում Աբդիւլհամիտեանի պէս ապազուցուած լրտեսը եւ մատնիչը կայ, անկարելի է եղը գըտնել եւ որ այդ խնդրի առթիւ պէտք է որ բանակցողները լուրջ խորհրդակցեն: Ժողովուրդն ակնդէտ կը սպասէր բանակցութիւնների ելքին: Տիրում էր դեպրպիւս դրութիւն, երբ իւրաքանչիւր օր բազմաթիւ լուրեր էին տարածւում եւ յուզում հասարա-

*կութեան: Շատ անգամ արհեստական կերպով էին աշխատում հետաքրքրեցնել տալ, ստորագրութիւններ հաւաքել, պահանջել Դաշնակցութիւնից, որ միանայ Վերակազմեալների հետ, որպէսզի այդ միջոցով հնարաւորութիւն ունենան ապագայ անյաջողութիւնները բարդել Դաշնակցութեան վզին, իբրեւ նա է յանցաւորը անհամերաշխութեան:*

*Այդ խաղը նրանց չի յաջողւում:*

1897 *թ. մայիս* 6-*ին, բանակցութիւնների նոր շրջանն է սկսւում, երբ եւ Վերակազմեալների կենտրոնական վարչութեան կողմից պ. Յարութիւն Ճանկիւլեանը նկատւում է իբրեւ բանակցող: Դաշնակցութեան ներկայացուցիչներն էլ ընդառաջ կը գնան այդ առաջարկին՝ համաձայնելով որ պ. Ճանկիւլեանը գայ իբրեւ ո՛չ-պաշտօնական մէկը, որ նախ որպէս անհատ կարողանայ «անձամբ եւ բերանացի խորհրդակցել եւ տեղեկանալ միութեան արգելքներին»:*

*Արփիարեանը արգելք է հանդիսանում այդ բանակցութեան եւ ամէն կերպ աշխատում է ձախողանքի ենթարկել: Նա մերժում է պ. Ճանկիւլեանին դրամ տալ՝ ճանապարհածախսի համար: Չնայած այդ բոլոր դժուարութիւններին, պ. Ճանկիւլեանը կարողանում է անցնել Ժընեւ, ուր եւ մի քանի օրուայ ընթացքում ծանօթանում է Արփիարեանի վերաբերեալ եղած բոլոր փաստաթղթերին եւ ապա համոզւում է որ Դաշնակցական շարքերը լրջութեամբ եւ անկեղծութեամբ են մօտենում միութեան խնդրին ու այդ մասին որոշ արձանագրութիւն կազ-*

*մելով եւ ստորագրելով երկու կողմերն էլ, սկսում են գործնական քայլերի դիմել:*

*Այստեղ է որ արգելքներ են յարուցւում, այստեղ է որ վայնասուն է բարձրանում եւ ամէն կողմից սկսւում են քննադատութիւններ, հայհոյանքներ և սպառնալիքներ՝ իրար վերաբերեալ:*

*Այդ խառնակ դրութեան վերջ է տրւում այն ժամանակ, երբ Հ. Յ. Դաշնակցութեան Երկրորդ Ընդհանուր Ժողովը, 1898-ի ապրիլին, միաձայնութեամբ իր որոշումն է քէարկում.—*

*«Նոր Հնչակեան կուսակցութիւնը իր արդի կազմին մէջ չճանչնալով իբր վաստահութիւն ներշնչող յեղափոխական, կազմակերպւած մարմին մը՝ մերժել անոր վարչութեան առաջարկը միութեան կամ համերաշխութեան մասին:*

*«Ժողովը խորապէս համոզւած, սակայն, որ կան Հնչակեաններէն մէջ անկեղծ եւ մաքուր իմքակներ ու անհատներ, որոշից հրաւէր կարդալ նրանց, որ ձեռք-ձեռքի տւած գործեն եւ կռիւ մղեն ընդհանուր թշնամու դէմ»:*

*Համերաշխութեան խնդիրը, որ այնքան ցուպից, գրաղեցրեց հայ հասարակութեան եւ մասնաւորապէս գաղթավայրերին, ջուրն ընկաւ չնորհիւ մի քանի անհատների, որոնք իրենց եսն աւելի բարձր, վեր դասեցին, քան ընդհանուր յեղափոխական համագործակցութիւնը:*

## ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—

*Համիդական կառավարութիւնն իր բռնակալ եւ հալածական միջոցներով արդար պայքար էր*

*պատճառել թէ՛ եւրոպական հասարակութեան, թէ՛ հպատակ ազգութիւններին եւ թէ՛ թիւրք ինտելիգենցիայի որոշ խաւերին:*

*Սկսել էր ընդհանուր շարժում, գլուխ էին բարձրացրել շատ ըմբոստ տարրեր: Կրէտէն ու Մակեդոնիան ապստամբութեան դրօշ էին բարձրացրել, հայկական յեղափոխութիւնն իր պաշտպանողական դիրքից անցել էր յարձակողականի եւ Բանկ-Օտտոմանն ու Խանասորը սարսափ էին ազդել տիրող խաւերի վրայ, արտասահմանում առաջ էին եկել թիւրք ընդդիմադիր տարրերի կազմակերպութիւններ և այս բոլորն ի նկատի առնելով՝ Համիդն ամէն կերպ աշխատում էր դիջումների ճանապարհը բռնել և կամ աւելի ճիշդը՝ խաբել: Նա սկսեց իր յատուկ ներկայացուցիչների միջոցով բանակցութիւններ վարել Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնի հետ:*

**Տատեանի բանակցութիւնները.—** *1896 թւի օգոստոս 14-ի դէպքերից յետոյ երբ սուլթանական կառավարութիւնն զգաց, որ հայկական կոտորածներից յետոյ յեղափոխական շարժումը ո՛չ մի չափով չի վերացել եւ կամ թուլացել, այլ եւ աւելի կազմակերպուած ու խիզախ բնոյթ է ստացել, մտածեց այլ ճանապարհներով վերջ տալ իրեն հանգիստը խռովող այդ տարրերին: Այդ դիտաւորութեամբ էր, որ Յարութիւն պէյ Տատեանին յանձնարարեցաւ Դաշնակցութեան տրամադրութիւնները շօշափել եւ աշխատել համաձայնութեան որոշ եզր գտնել: Սա էլ իր կողմից յատուկ բանագնաց է ու-*

*զարկում ծրընեւ, «Դրօշակ»ի խմբագրութեան մօտ, բացատրելու եւ հասկացնելու, որ յարմար առիթ է կառավարութեան հետ հաշուելու եւ հայկական խնդրին վերջնական լուծում տալու: Այդ պաշտօնն ստանձնում է Տիրան պէյ Տատեանը (Յարութիւն փաշայի որդին): Երկու անգամ բանակցութիւններ են տեղի ունենում 1896 թւի հոկտեմբեր 28–ին եւ 1897 թւի փետրուար 4–ին:*

*Ի՞նչ է առաջարկւում սուլթանի կառավարութեան կողմից: Տիրան պէյը յայտնում է.*

*ա) Որ վերջ տրւի յեղափոխական կռիւներին,*

*բ) Որ սուլթանը խոստանում է շատ չուտով բարենորոգումներ մտցնել Երկրի մէջ: Այդ երկու պայմաններից յետոյ չէշտում է, որ ազգային բարձր ընթանակների տրամադրութիւնն է, որ սուլթանի այդ առաջարկը չմերժւի, որ յեղափոխականները աշխատեն ընդառաջ գնալ եղած դիմումին եւ խաղաղ միջոցներով աշխատեն իրականացնել եւ դիւրացնել հայ ժողովրդի ազատութեան պայմանները:*

*Դաշնակցութեան ներկայացուցիչները ճշդիւտ կերպով կարողացել էին պատկերացնել, որ այդ բանակցութիւնները մի խաղ են, որին ընդառաջ գնալը վտանգ կը ապառնար յեղափոխական շարժման, և ապա ուրեմն Հայ Ազատագրութեան: Ներանք գիտէին, որ նման քայլեր առնւած են թիւրք ընդդիմադիր տարրերի հանդէպ, որոնց սուլթանը խոստացել էր ազատ վերադարձ եւ լաւ պաշտօններ, որպէսզի այդ միջոցով կարողանար հաւաքել ար-*

տասահմանում դոյութիւն ունեցող յեղափոխական տարրերին:

Սուլթանի այդ դաւադրութեան գոհ են գնացել չատ երիտասարդ թուրքեր, որոնք վերադառնալով Պօլիս, խակոյն ձերբակալւել են եւ բանտը նետւել: Մի քանիսն էլ վերադառնալով մայրաքաղաք, լաւ պաշտօնների են տիրացել՝ մոռանալով իրենց քարոզած սկզբունքներն ու յոխորտանքները:

Դրանցից էր երիտասարդ թիւրք Մուրատ-բէյը, որ վերադառնալով Պօլիս... նշանակւում է հաբեմի ներքինապետ: Դրանցից էր եւ մի հայ՝ Անմեղեան անունով, որ «Մէշվէրէթ»ի խմբակին էր պատկանում եւ մասնակցում էր այդ թերթին, և որ վերադառնում է՝ կաշառւելով եւ պաշտօն ստանձնելով:

Այդ բոլորը պարզ էր Դաշնակցութեան համար: Նա չէր հաւատում սուլթանական կառավարութեան եւ այդ պատճառով էլ Տիրան պէյի պայմաններին պատասխանում է, որ յեղափոխական գործունէութեան, կուի եւ ահաբեկումներին վերջ կը տրւի միայն այն ժամանակ, երբ կառավարութիւնն անմիջապէս ձեռնարկէ բարենորոգումներին՝ ո՛չ թէ խօսքով, այլ գործով, որ ազատւին բոլոր քաղաքական բանտարկեալները, որ վերջ տրւի Երկրում տիրող վայրենի եւ հալածկեր քաղաքականութեան: Եւ քանի այդ բոլորը շարունակւում են խօսք մնալ եւ կամ թղթի վրայ, քանի իրական կեանքի մէջ ո՛չ մի փոփոխութիւն տեղի չի ունենում, Հայ Յեղ. Դաշնակցութեան պատասխանը մերժողական է եւ նա պիտի

շարունակէ իր յեղափոխական գործունէութիւնը աւելի յանդուգն, աւելի խիզախ ծրագրով։

Այդ բանակցութիւնները դրական արդիւնք չեն տալիս եւ հայ բուրժուազիայի ներկայացուցիչը ձեռնունայն վերադառնում է՝ նոր արշաւանք սկըսելու դիտաւորութեամբ՝ յեղափոխական տարրերի դէմ։

Թիւրք ընդդիմադիր տարրեր.— Հակահամիդական պրոպագանդն օրէցօր աճեցողութեան էր ենթարկւում արտասահմանում։ Մի քանի թերթեր «Օսմանլի», «Մէշվէրէթ», «Միզանի», յաճախակի յարձակողական էին սկսում՝ քննադատելով տիրող անտանելի պայմանները։ Նրանցից իւրաքանչիւրն իր տեսակէտից էր մօտենում եւ երբեմն էլ աւելի կամ նուազ ուժգնութեամբ էր իր սլաքներն ուղղում դէպի Պոլիս։

Ճնշւող ազգութիւնների որոշ ըմբոստացումներից յետոյ, Թրքական այդ թերթերը աշխատում են համագործակցութեան որոշ եզր գտնել եւ այդ միայն յօդւածներով։

Երիտասարդ Թիւրքերի օրգան «Օսմանլի»-ի մէջ կոչ է ուղղւած «մեր բոլոր հայրենակիցներին, առանց խտրութեան ցեղի եւ կրօնի, համախմբւել ու միանալ ընդհանուր թշնամու դէմ»։

Դրան անմիջապէս յաջորդում է «Մէշվէրէթ»ը, որ մի շարք յօդւածներով համերաշխ գործունէութեան հրաւէր է կարդում, չեշտում է բռնակալութեան դէմ կռւելու անհրաժեշտութիւնը եւ ցանկալի

է համարում, որ բոլոր ընդդիմադիր տարրերը միանան եւ մի վերջին հարուած տալով՝ ազատեն Հայրենիքը Համիդի քաղաքականութիւնից:

Ձի ուշանում եւ Տամատ–Մահմուտ փաշայի (Համիդի քեռայրի, որ փախել էր Եւրոպա) կոչը, ուղղուած հայերին, որի մէջ նա, վերլուծելով համիդական բռնակալութիւնը, դէպի հայերը եղած վատ քաղաքականութիւնը, հրաւէր է կարդում միանալ եւ «ջնջել հայրենիքը կեղեքող բռնակալութիւնը»:

Ի՞նչ դիրք պէտք էր բռնել այդ կոչերի հանդէպ: Ընդառա՞ջ պէտք էր գնալ արդեօք թէ ոչ, եւ եթէ այո — ի՞նչ պայմաններով: Ահա այդ շրջանի կարեւորագոյն տրամադրութիւնները եւ հասարակութեան միտքը յուզող հարցերը:

Նախ պէտք էր շեշտել, որ նոյնիսկ արտասահման ապաստանած թիւրք ընդդիմադիր տարրերի մէջ կային շատերը, որոնք իրենց նեղ ազգամոլութիւնն էին ցոյց տալիս, երբ հարցը վերաբերւում էր մանր ազգութիւնների ազատագրութեան խնդրին: Այսպէս, «Մէշվէրէթ» լրագիրը Սպաղանքի կոտորածի առթիւ, որի դէմ եւրոպական մամուլը բողոք բարձրացրեց, իր 900 թ. սեպտ. համարում «Ինչո՞ւ» յօդուածում գրեց թէ՝ «ինչո՞ւ Անգլիա և Ֆրանսիա կարող են Աֆրիկայում սպանութիւններ անել, իսկ քիւրդը կամ տաճիկը իրենց երկիրներում չեն կարող իրենց հասկացած ձեւով դատաստան կապել հայ աւազակների հետ»:

«Սպաղանքի դէպքը»—գրում է «Մեղաւո՞ր են թէ ոչ» յօդուածում—«տեղի ունեցաւ այն ժամանակ,

երբ գերմանական կայսրը հրամայում էր Չինաստան դնացող իր զինուորներին ո՛չ մի դթութիւն ցոյց չտալ դէպի նրանց, որոնք կ՚ընդդիմադրեն զէնքով: Եթէ Վիլհելմի այս խօսքերը ուղղուած լինէին Ալի փաշային, նա իր heroական դործերի համար վարձատրութիւն կը ստանար»:

Ապա պէտք է յիշատակել եւ այն, որ արտաահմանի ազատ մշնոլորտում նրանք, այդ ընդդիմադիր տարրերը, մնացել են նոյն յետադէմ եւ պահպանողական էութիւնները:

Երիտ. Թիւրքերի մի այլ թերթը — «Միզանի» — քննադատելով Ցունաստանի չարժումը, անւանում է այն ատպակային. իսկ Հայդելբերդում դուրս արուած հայ ուսանողների համադումարի անունից տրուած հեռագիրը՝ կրկէկի ազատամբութեան առթիւ, քննադատելով՝ հարց է տալիս «Հայ Յեղափոխական Կոմիտէին» թէ՝ «ճի՞շդ է, որ հայերն այդ ոճրային գործման մասնակցել են»:

Ք. Միքայէլեանը քննադատելով Երիտ. Թիւրքերի այդ եւ նման «Պրիմիտիվ Աշխարհահայեացքը», վերլուծելով նրանց հոդեբանութեան բոլոր մանրամասնութիւնները, Թիւրքերի հետ միութեան խնդրի առթիւ երկու կարեւոր առաջարկ է բերում— որ անհրաժեշտ է ունենալ պարզ և ճեկին նպատակ եւ ո՛չ թէ անորոշ բառեր ու ոճեր, եւ որ պէտք չկայ միայն խօսքի, այլ եւ անհրաժեշտ է գործ:

Տապալել համիդեան բռնակալութիւնը շատ լաւ է, բայց ի՞նչ ձեւի պետական կարգեր պիտի դնել եւ փոքրիկ, հպատակ ազգութիւնները ի՞նչ չափով ազատութիւն պիտի վայելեն: Այդ նպատակը պէտք է

լինի «ֆեդերատիվ (դաշնակցական) ռամկավարական կազմակերպութիւն, որի համաճայն տաճկահպատակ բոլոր ժողովուրդները կազմում են մի անխախտ ամբողջութիւն, բայց իւրաքանչիւրը իր ներքին, տեղական ինքնավարութեամբ»: Թիւրք ընդդիմադիր տարրերը, սակայն, բաւականանում էին միայն ընդհանուր բառերով եւ դրանց տահմաններին մէջ էլ մնում էին:

«Հայ յեղափոխականները վաղուց են հրապարակի վրայ եւ վարում են արդէն այն կոիւը, որի անունով մեզ հրաւիրում են միանալ: Իսկ ո՞ւր են թիւրք կուսակցները», չեշտում է Ֆր. Միքայէլեանը, «մինչև այժմ մենք տեսանք անհատներ, խմբեր, թղթի պրօպագանդայով պարապողներ, բայց չը տեսանք գործով կուսակցներ, գործի պրօպագանդիստներ»:

Այս էր Դաշնակցութեան ընդհանուր տեսակէտը: Նա, միութեան թէ այլ խնդիրներում, շատ հաւատաք չէր ընծայում խօսքերին, բանակցութիւններին եւ ընդհանրապէս համարում էր այդ բոլորը ժամավաճառութիւն. նա իւրաքանչիւր կուսակցութիւնից (հայ թէ թիւրք) պահանջում էր անկեղծութիւն եւ գործնական քայլեր:

Իրականութիւնը, կուի ասպարէզը, կեանքը ինքը կարող է չտակել բոլոր թիւրիմացութիւնները, միայն թէ նրանք, գործող անհատները պատահեն կուի դաշտում: Եւ ամենայն իրաւամբ նա պահանջեց Երիտ. Թիւրքերից «Թող խօսքին՝ միշտ գործ հետեւէ»:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Մեր քաղաքական ազատութեան մէջ արտաքին պայմանները շատ խոշոր դեր են խաղացել, որոնց, դժբաղդաբար քիչ ենք ուշադրութիւն դարձրել: Եւրոպայում մենք ունեցել ենք միայն անհատ բարեկամներ և մի քանի պատմագէտներ, որոնք հայկ. հարցի ջերմ պաշտպան են հանդիսացել: Կազմակերպւած եւ կանոնաւոր հասարակական շարժում չի եղել: Այդ խաւերը շատ մակերեսութեային տեղեկութիւններ են ունեցել մեր պատմութեան, դրականութեան, քաղաքական ձգտումների եւ ընդունակութիւնների մասին:

Դիւանագիտութիւնը, որ սկզբից եւ ևթ տատանուող քաղաքականութեան է հետեւել, ո՛չ մի դրական միջոցի չի դիմել եւ սոսկական տրամադրութիւն անգամ ցոյց չի տւել՝ հայկական կոտորածներից յետոյ որոշ բարեփոխութիւններ մտցնելու:

Այդ շրջանում եւ թւականներին էր, որ Կրէտական ապստամբութիւնը, Թրքօ-Հելլէն պատերազմը եւ մակեդոնական ընդոստութիւնները երեւան եկան, որոնք իրենց հերթին ապառնում էին սուլթանական կառավարութեան:

Դիւանագիտութիւն.— Հայկական կոտորածներից յետոյ եւրոպական դիւանագիտութիւնը դրական քայլեր չառաւ: Ինքն իր մէջ անհամաձայն էր: Բոլորի մէջ տիրում էր փոխադարձ կասկած: Հայաստանը կարեւոր վայրերից էր՝ մանաւանդ Ռուսաստանի եւ Անգլիայի համար: Աղաւթութիւն տալ հայ ժողովրդին՝ Եւրոպայի եւ Ասիայի մէջի կամուրջի

ռէրը դարձնելով՝ թոյլ չէր տայ դէպի Միջերկրականը ձգտող ռուս քաղաքականութիւնը:

Մեծ պետութիւններն աշխատում էին «մեղմացնել անոնց (կոտորածների) արձագանգը, եւ արդարեւ, ամիսներով կոտորածները չիմացուեցան Արեւմուտքի մէջ», շեշտում է Էտուար Տաիօն:

Անգլիական հասարակական կարծիքը գրգռուած էր: Ամէն կողմ բողոքի միթինկներ էին տեղի ունենում: Մեծ հայասէր Գլատսթոնն իր հուժկու ձայնը բարձրացրեց եւ Համիդին «Մարդասպան սուլթան» մակդիրը տուեց, իսկ Վ. Սանտալ՝ «Կարմիր սուլթան» անուանեց կոտորածների հեղինակին: Լսում էին անկեղծ, մաքուր ձայներ, բայց ո՛չ մի գործնական քայլ չէր առնւում:

Ռուսները լաւ չէին տրամադրուած դէպի հայերը, հետեւելով Լօբանովեան քաղաքականութեան:

Ֆրանսացիները տրամադրութիւն չունէին նախաձեռնութիւնն իրենց վրայ վերցնել, որովհետեւ ֆրանս-ռուսական դաշնադրութիւն կար, որի հիման վրայ զատ-զատ քայլեր չպիտի առնէին:

Գերմանիան ունէր իր որոշ քաղաքականութիւնը՝ բարեկամական յարաբերութիւն սուլթանական կառավարութեան հետ, իր ապագայ ծրագիրների համար: Եւ ինչո՞ւ զարմանալ, որ նա բոլորովին չհետաքրքրուեց հայկական հարցով, երբ Թրքօ-հելլէն պատերազմի ժամանակ, 1897 թւին, Թէսալիայի մէջ գործող թրքական բանակի զօրականներից մէկն էր Վիլհելմ Բ.-ի կողմից ուղարկուած գերմանացի Գրումպքով փաշան, եւ երբ Յունաստանի մէջ

գտնուած իսլամների պաշտպանութիւնը գերմանական կառավարութիւնն էր ստանձնել:

Ի՞նչ էր անում Անգլիան:

Բանկ-Օտտոմանի ցոյցից յետոյ, երբ Եւրոպան նորից իր ուշադրութիւնը դարձրեց Հայկական Հարցի վրայ, նա սեպտեմբեր 16-ին առաջարկեց յայտարարել սուլթանին, թէ՝ «իր կայսրութեան վատթար վարչութեան շարունակութիւնը իր գահին կորըստեան պատճառ պիտի ըլլար»: Իր այդ բանաձեւն առաջարկեց միւս պետութիւններին, որոնք իրենց համամտութիւնը չյայտնեցին:

Ֆրանսիական կառավարութիւնը, ըստ Է. Տոխի, կասկածով էր վերաբերւում լորդ Սօլսբըրիի քաղաքականութեան, վախենալով թէ՝ Թիւրքիայի ներքին կեանքին խառնուելով Անգլիան կ՚աշխատի «Եգիպտոսն վերջնականապէս պահելու»:

Ֆրանսիան երեւան հանեց օսմանեան կառավարութեան ամբողջութեան քաղաքականութիւնը, որով ո՛չ մի պետութիւն «ո՛չ համատիրութեան (condominium) եւ ո՛չ էլ առանձին գործողութեան» իրաւունք ունէր:

Տաճկաստանը մտնում էր Եւրոպայի խնամակալութեան տակ եւ քրիստոնեայ ժողովուրդները կարծում էին թէ՝ դոնէ իրենց տառապանքները որոշ չափով կը թեթեւնան:

Դիւանագիտութեան հաւատալ, սակայն, չէր կարելի, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը հետապնդում էր երկրի տնտեսական շահերը եւ նրա համար ո՛չ մի սրբութիւն եւ վեհ գաղափար գոյութիւն չունէր: Նրանցից իւրաքանչիւրը, «Դրօշակ»-ի

նուրբ դիտողութեան համաձայն, հետեւում էր Ֆրանսիական մի թագաւորի այն սկզբունքին թէ՝ «անոնք որ չեն կրնար խաբել, չեն կրնար կառավարել»:

Օտար պրօպագանդ.— Պէտք էր կազմակերպած պրօպագանդ եւ այդ նպատակով ո՛չ միայն լոկ համաձայնութիւնը բաւական էր, այլ եւ անհրաժեշտ պատրաստուած եւ անանձի մարդկանց դեկավարութիւնը, որոնք իրենց տրամադրութեան տակ ունենային դրամական խոշոր միջոցներ: Եթէ բալկանեան վոքրիկ ազգութիւնները, Եւրոպային իրենց մօտիկութեամբ, աւելի նպատակաւոր պայմաններուն մէջ էին գտնուել, մենք պարտաւոր էինք օգտուել քաղաքակրթութեան գործերից՝ մամուլի դիւրութիւններից: Այդ չենք արել: Հայկական աղաւաղութիւնը պատկանել է, կարծես, միայն յեղափոխական տարրերին, որոնք պարտաւոր էին ամէն ինչ անել եւ կամ ձգել ուրիշներին անելու: Հայկական բուրժուազիան՝ թէ՛ Թիւրքիայում եւ թէ՛ Ռուսաստանում, տիրապետող կարգերի կարեւորագոյն հիմնաքարերից են հանդիսացել: Նրանք գործնական ո՛չ մի հետաքրքրութիւն ցոյց չէին տալիս դէպի հայ ժողովրդի քաղաքական կեանքը — իրենց աղգասիրութիւնը կենտրոնացնելով բարեգործական շրջանակներում:

Եւրոպայի հասարակական կարծիքը պէտք էր: Ոչ ոք չէր ժխտում այդ, բայց քչերն էին գործնականապէս հետաքրքրւում:

Ահա այդ նպատակով էր, որ 99 թուի մարտ 25–

*լին, «Դրօշակ»ի խմբագրութիւնը դիմում է Եւրոպայի մի քանի ցայտնի անձնաւորութիւնների, որպէսզի իրենց հեղինակաւոր ձայնը բարձրացնեն հայկական դատի համար:*

*Այդ դիմումն ունեցաւ իր դրական նշանակութիւնը, որովհետեւ շատ նշանաւոր գործիչներ իրենց կարծիքն յայտնեցին, որոնք տպագրուեցան թերթերի մէջ եւ որոնք միանգամայն գովում էին հայ ժողովրդի տոկունութիւնը, նրա աշխատասիրութիւնն ու ընդունակութիւնները, բաւական քննադատութեան էին ենթարկում եւրոպական դիւանագիտութիւնը, նրա վարանոտ եւ ո՛չ կտրական վերաբերմունքը. չէին մոռանում խարազանելու սուլթանական կառավարութեան ու չեչտելու, որ հայ ժողովուրդը պէտք է պատրաստ լինի գալիք իւրաքանչիւր մի պատահականութեան առաջ:*

*Դրանցից նշանաւորներն էին.—*

Ռիչչիօթի Գարիբալդի.— *Գարիբալդիի որդին, նշանաւոր գործիչ եւ իտալական խորհրդարանի անդամ եւ Թրքօ-Հելլէն պատերազմի ժամանակ կամաւոր արձանագրուած յունական բանակում:*

Ամիլկար Զիպրիանի.— *Որ նամանաւանդ 97 թուին իտալացի կամաւորներու գլուխ անցած օգնութեան գնաց Յունաստանին, թիւրքերի դէմ կռուելու համար, երբ եւ ծանրապէս վիրաւորուեցաւ:*

Ժ. Ֆաւրօ.— *Ժնեւցի–խմբագրապետ "Le Genevois" թերթի, դիւցերիական Ազգային ժողովի երեսփոխան, Ժընեւի հանրապետութեան հանրային կրթութեան նախարար եւ Ժընեւի կանտոնի արմատական կուսակցութեան պետ:*

Ֆրանսիս–դը–Պրէսանսէ։— *Նշանաւոր հրապարակագիր, ֆրանսիական* "Temps" *թերթի քաղաքական բաժնի խմբագիր եւ ապա Կլէմանսօի հետ միասին վարում էր* "Aurore" *արմատական թերթը։*

Ժեռօ–Րիւար։— *Նախկին երեսփոխան եւ խմբագրապետ* "La Petite Republique"*–ի։*

Պիէռ–Քիյար։— *Բանաստեղծ եւ հրապարակագիր։*

*Այդ համակիր վերաբերմունքից յետոյ անհրաժեշտ էր աւելի գործնական քայլեր առնել եւ ահա 900–ական թուին հիմնւում է հայասէր* "Pro Armenia" *թերթը, որին մասնակցելու խոստում էին տալ՝ Կլէմանսօ, Անատօլ–Ֆրանս, Ժօրէս, Պրէսանսէ, Դէ–Րօբերտի, Ֆերրի, Վանդերվելտ, Քիյար եւ ուրիշներ։*

*Ճանապարհը հարթւած էր։ Պէտք էր օգտւել այդ հանգամանքից եւ պարբերական ծանօթութիւններ տալ հայ ժողովրդի անցեալ պատմութեան եւ մանաւանդ ապրող ձգտումների մասին։*

*Զբաւականանալով միայն դրանով, «Դրօշակ»ի խմբագրութիւնն յատկապէս հետեւում էր Եւրոպայում տեղի ունեցող զանազան համագումարներին, որպէսզի սրանց միջոցով էլ կարողանայ ազդել պետութիւնների քաղաքականութեան վրայ եւ միաժամանակ համակիրների աւելի լայն շրջանակ ստեղծել։*

*Այդ ուղղութեամբ առած քայլերից առաջինը անկայողութեան է հանդիպում։ 900 թուին գումարւում է Մամուլի Միջազգային Համագումարը, որին «Դրօշակ»ի խմբագրութիւնը մի հեռագիր է տալիս՝ չեչ–*

*տելով հայկական կոտորածները, Թիւրք կառավարութեան խոստումներն ու անտարբեր վերաբերմունքը: Համագումարի նախագահի, գերմանացի Զինկելնի, հրամանով այդ հեռագիրը չի կարդացւում, որովհետեւ իր մէջ «քաղաքականութիւն է պարունակում»:*

*Նման անյաջողութիւնները չէին յուսահատեցնում, այլ ստիպում էին աւելի ուժգին թափով առաջ տանել այնքան անհրաժեշտ օտար պրօպագանդան, որին այնքան քիչ է ուշադրութիւն դարձել 90-ական թւականներից սկսած:*

Հայ-կրէտական յարաբերութիւններ.— *Կրէտէի ապստամբութիւնը խոր տպաւորութիւն էր թողել հայ ժողովրդի վրայ: Նրանք, որոնք կռուի ճանապարհին շատ քիչ էին հաւատում եւ որոնք հակառակ էին ապստամբական ձեռնարկներին, որոշ չափով աշխատում էին զիջանել եւ հաւատալ, որ հայկական Գորդեան հանգոյցի լուծողն էլ սուրը պիտի լինի:*

*Յունաստանը խանդավառութեամբ, մի մարդու պէս ոտքի էր ելել իր հայրենակիցներին պաշտպանելու եւ այդ պատճառով էլ պատերազմ էր յայտարարել Թիւրքիայի դէմ: Անհաւասար էր այդ կռիւը, բայց արդարացի: Հայ յեղափոխականները մեծ հետաքրքրութիւն էին ցոյց տալիս եւ ոգեւորութիւնը մինչեւ այն աստիճան էր հասել, որ Խանասորայ Արշաւանքին մասնակցող հայդուկներից մէկը՝ Աստւածատուր Միրզոյեան, պահանջում էր անմիջապէս արշաւանքն սկսել. «կռի՜ւ եմ ուզում, կռի՛ւ. եթէ*

*Հայաստանում գործ չկայ ինձ համար, կ'երթամ Կրէտէ, այնտեղ էլ նոյն բռնակալն է»:*

*«Դրօշակ»ը մանրամասնօրէն տեղ էր տալիս պատերազմին վերաբերուող լուրերին եւ հիացմունքով էր խօսում փոքրիկ Յունաստանի զեղեցիկ ժեստի վրայ:*

*Երբ Կրէտէին ինքնավարութիւն տրւեցաւ եւ երբ սուլթանական բռնակալ կառավարութիւնն իսպառ վտարւեցաւ կղզուց, յոյն ժողովուրդն ուրախութիւնից հանդէսներ էր սարքում՝ նւիրւած Կրէտէի ազատութեան:*

*Այդ համակրական ցոյցերին, ուր որ հնարաւոր էր, մասնակցել է Հ. Յ. Դաշնակցութիւնը, աշխատելով աւելի սերտ կապ հաստատել այն փոքրիկ ժողովրդների հետ, որոնք տառապել են Թրքական բռնակալութեան տակ:*

*Եղիպտոսի Աղէքսանդրիա քաղաքում տեղի ունեցած ցոյցի ժամանակ տեղական մարմնի ներկայացուցիչը իր ճառն է արտասանել, իսկ Արեւմտեան Բիւրօն մի հեռագրով իր ուրախութիւնն է յայտնել՝ Գործադիր Մարմնին, Կրէտէի ազատութեան առթիւ:*

*Կրէտական Եղբայրութեան վոխ-նախագահ Լիմպրիտիսը հեռագրով իր եւ կրէտացիների շնորհակալութիւնն է յայտնում համբակրութեան, մաղթելով որ մի օր էլ պատիւ կ'ունենան տօնելու հայ ժողովրդի ազատութիւնը:*

Հայ-մակեդօնական յարաբերութիւններ.— *Այս կապն աւելի գործնական եւ երկարատեւ եղաւ: Մա-*

կեդրոնիան էլ յեղափոխական շարժման մէջ էր: Պէտք էր միաժամանակ հարուած իջեցնել արիւնոտ բռնակալին եւ այդ էր պատճառը, որ Դաշնակցութիւնն այդ ուղղութեամբ իրական քայլերի դիմեց: Երկուսով միասին՝ Մակեդոնական Գերագոյն Կոմիտէն եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը միասնաբար մշակեցին այդ պատմական յայտագիրը, որ ներկայացրին Լա Հէյի վեհաժողովին: Այդ յայտագրի մէջ նրանք պարզել էին երկու ժողովուրդների քաղաքական անտանելի կացութիւնը, ապա չեշտել էին իրենց նւազագոյն պահանջները, որոնց իրագործումով միայն կարելի կը լինէր երկու երկիրների մէջ խաղաղութիւն հաստատել:

Լա Հէյի վեհաժողովն անհետեւանք է թողնում այդ յայտագիրը: Պետութիւնների ներկայացուցիչների այդ բացասական վերաբերմունքը չի յուսահատեցնում յայտագրի տակ ստորագրող յեղափոխական մարմիններին եւ որպէս պատասխան այդ մերժումի, երկու կոմիտէները վճռում են միացնել իրենց գործողութիւնները եւ միասնաբար հարուածել ու պատասխանել թիւրք կառավարութեան դաշնութիւններին:

Այդ նպատակով երկու կողմերն էլ փոխադարձ համաձայնութեամբ վճռում են իրենց ժողովուրդներին ծանօթացնել՝ յօդուածներ եւ գրքեր տպելով: Ստոիլ Բրանդօվ մակեդոնացին էլ մանրամասն դեկուցում է կարդում իրենց յեղափոխական շարժման մասին:

«Դրօշակ»ն էլ 99-ի թիւ 7-ում մի շատ ընդարձակ առաջնորդող է գրում, որ թւում է թէ սխ-

բեւի Ակնունու գրածն է.

«Մէկ չենք ծագումով, մէկ չենք լեզուով, կրօնով, բայց մէկ ենք դժբաղդութեամբ: Ունինք մի թշնամի, բայց մենք չկարողացանք բոլորս միաժամանակ նորա դէմ ելնել եւ կռւել: Երբ յոյնն էր կռւում՝ լռեցինք, երբ բուլգարներին ջարդեցին՝ լռեցինք, երբ հային ջարդեցին՝ նրանք լռեցին եւ այսպէս միշտ...

Եղբայր ենք մենք արցունքով, ցաւով, պիտի միանանք եւ կռւով, նպատակով»:

Ահա արտաքին այն պայմաններն ու դրութիւնները, որոնք ընդհանուր առմամբ գոյութիւն ունէին 97–ից մինչեւ 900 թուականը: Այդ բոլորը անհրաժեշտ էր ի նկատի առնել և ըստ այնմ սկսել որոշ յեղափոխական գործողութիւններ, եւ մենք կը տեսնենք, որ Դաշնակցութիւնն իր յետագայ գործելակերպի մէջ սխալուած չի եղել, նորանոր այլ ուժերի հետ է սկսել բանակցել, միանալ՝ միաժամանակ չըմոռանալով բուն երկրի մէջ իր ծրագիրները իրագործել:

Կուսակցական աշխատանքներն սեւելի բարդ բնոյթ էին կրում, որի համար էլ պէտք էր ղեկավարում պատրաստուած, ինտելիգենտ ուժերի:

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ.— Թիւրք կառավարութիւնն անապորոյն է: Նա ո՛չ մի տրամադրութիւն ցոյց չի տալիս՝ դիջումների ճանապարհը բռնելու: Հպատակութիւնն ու խաղաղ միջոցները նրա վրայ ո՛չ մի ներգործութիւն չունին: Նա հանդուրժել չի կարողանում, երբ իր հպատակ ազ-

դուքիւններէն մէկն ու մէկը ըմբռստանում է: Նա իրեն նպատակ է դարձրել բնաջնջել հայութեան՝ սովի, դաղթի, հալածանքների, բանտերի եւ սպանութիւնների միջոցով:

Եւրոպական դիւանագիտութիւնն էլ ո՛չ մի ազդեցութիւն չի բանեցնում և իր այդ լռութեամբ աւելի էր խրախուսում դազանին, որը եւ կարողացաւ սարքել հայկական արիւնալից կոտորածները:

Ի՞նչ պէտք էր անել: Շարունակե՞լ կուիը, թէ վերջ տալ, որովհետեւ ո՛չ մի դրական օգուտ չուներ: Այդ կարեւորագոյն խնդիրն է, որ 96-ից յետոյ սկըսում է յուզել հասարակական-քաղաքական կեանքով հետաքրքրուողներին եւ որոնք երկու խոշոր, հակընդդէմ բանակների են բաժանուում:

— Մեզ կուիւ պէտք չէ, որովհետեւ արիւն է թափում իր հետ, սուլթանական կառավարութեան բարկութիւնն է հրաւիրում հայերիս վրայ, եւ որ 6-7 տարուայ կուիը չօչափելի ո՛չ մի արդիւնք չտուեց: Վե՛րջ կուին, ժամանակն է անցնելու խաղաղ աշխատանքի, կուլտուրական վերածնութեան շրջանի: Այդ հոսանքի տիպիք ներկայացուցիչները Օրմանեան-Աբթինեան խմբակն է, որ դլխաւորապէս կենտրոնացած էր ճահճացած Պօլսում: Դրանք հոգեւորականների եւ հարուստների չափաւորական քարոզներն էին:

— Մեզ այժմ կուիւ պէտք չէ, որովհետեւ համապատասխան պատրաստականութիւն չունինք: Առաջին տարի անհրաժեշտ է ուժ հաւաքել, կազմակերպել, դիտակցութեան բերել ժողովուրդը եւ նոր միայն կուի դրօշը բարձրացնել: Յեղափոխականնե-

*լի մասնակի շարժումները, ապստամբական ձեռնարկները աւելի վնաս են հասցնում, քան օգուտ բերում: Առանձին խմբակներն աւելի դիւրութեամբ են պարտւում, քան ընդհանուր զինւած ժողովուրդը: Մենք պատրաստ չենք, մենք ուժեղ չենք եւ լաւ կազմակերպւած չենք, ապա ուրեմն չպիտի շտապենք, թմբկահարում էին նրանք հայ ժողովրդի առջեւ: Այդ հոսանքի պարագլուխներն էին հանդիսանում խօսքի հերոսները, յեղափոխական շարքերից դասալիքները և «Արմէնիա»ն իր յափխոնական ծրագիրներով ու նախագծերով: Զինեցէք ամբողջ ժողովրդին — նոր ապստամբութեան դրօշ բարձրացրէք, այս էր նրանց յենակէտը:*

*— Սկսած կռիւը պէտք է շարունակել, պնդում էին մաքուր յեղափոխական տարրերը: Կռւով միայն ձեռք պիտի բերենք մեր ազատութիւնը: Ապահով, ազատ կեանքը ոչ ոքի չեն տալիս, այլ խլում են, ձեռք են բերում: Ժողովրդին կազմակերպելու համար, կռիւ է պէտք, դէնք բաժանելու ժամանակ՝ ընդհարումն անխուսափելի է, զաղտն նահանգապետների, պաշտօնեաների եւ լրտեսների գործունէութիւնը չէզոքացնելու համար ահաբեկումները տեղի պիտի ունենան: Ի՞նչ միջոցով կարող ենք լաւ կազմակերպւել, ժողովրդին զինել, դարաւոր ստրկական հոգին փոխել և նոր, խիզախ երիտասարդներ առաջ քաշել — խօսքո՞վ, քարոզո՞վ, թէ անզգադար եւ ճշտասէր ու յամառ ընդհարումների միջոցով:*

*Տաճիկը կռւում է, քիւրդը թալանում է, լրտեսներն ու պաշտօնեաները իրենց աւարառութիւններն*

են անում, իսկ օրէնքի, պետութեան ներայացուցիչները ո՛չ միայն պաշտպանում են, այլ եւ յատկապէս խրախուսում են: Ի՞նչպէս կուեել դրանց դէմ — խօսքո՞վ, բայց չէ՞ որ ազատ խօսքն էլ է պատժի ենթարկւում, իսկ ազատութեան մասին խօսողին՝ հրաւիրում են դէպի կախաղան:

Սկսած կռիւը պէտք է շարունակել, եղաւ Հ. Ց. Դաշնակցութեան շարքերի մարտական նշանաբանը: «Մենք», ասւած է «Դրօշակ»ի 96-ի թիւ 22-ում, «սուրը, հուրը որպէս նպատակ չենք գըտնում: Դրանք միջոցներ են՝ հասնելու համար աշխատանքի, քրտինքի ստեղծագործութեան տիրապետութեան»:

Եթէ կար մի հարց, որի մասին պէտք էր խօսել, այդ ո՛չ թէ այն էր թէ կռիւը պիտի փոխել եւ որպէս միջոց չպիտի ընդունել, այլ որ աշխատել պիտի կուի ձեւը փոխել, աւելի թոյլից — ուժեղացնել, աւելի պաշտպանողականից — յարձակողականի ըսկըսել:

Այդ ճանապարհով գնաց Հ. Ց. Դաշնակցութիւնը: Մի քանի տարւայ եռանդուն եւ մեղւական աշխատանքից յետոյ, երբ արդէն յամառ կռիւը կարողացել էր արտադրել հերոսների մի շարք, երբ արդէն հայ ժողովուրդը կարողացել էր ըմբռնել կռուի, զիմադրութեան եւ ինքնապաշտպանութեան իմաստը, անհրաժեշտ նկատուեց գոյց տալ թիւրք կառավարութեան, որ իր հալածանքները չեն ընկճում յեղափոխականներին, այլ աւելի եւս ստւարացնում են շարքերը:

Պէտք էր դուրս գալ գետնի տակից եւ կազմակերպւած ու շարունակական կռիւներով վրդովել

արեւելքի վեհապետի հանդիսաը: Մանաւանդ և փոքրիկ ընդհարումներից, որոնք աւելի շուտ ինքնապաշտպանական բնոյթ էին կրում, անհրաժեշտ էր անցնել հզմեցնող գործերի եւ յարձակողական գործելակերպի: Շա՛տ դժուար էր այդ փոխանցումը եւ միայն խիզախ հոգիներին յատուկ. ճիշդ է, կային շա՛տ արտաքին եւ ներքին խոչընդոտներ, հակամարթիւն, հալածանք, նիւթական միջոցների պակաս, եւ, որ գլխաւորն է, յուսահատութիւն, բայց այդ բոլորը չէր կարող ընկճել այն մի բուռն հերոսներին, որոնք առաջուց առնաարտօրէն եւ պիտակցաբար հաշտուել էին մահուան զաղափարին հետ:

Եւ ահա Բանկ-Օտտոմանը, որ հայ յեղափոխութեան պատմութեան մէջ եզակի տեղ պիտի բռնէ: Մի քանի ժամւայ ընթացքում օսմանեան կառավարութեան երակները եւ սիրտը դրաւուած են, մայրաքաղաքի զանազան մասերում ռումբեր են պայթում, կառավարութիւնն ուշադրութեամբ հետեւում է բանակցութեան իւրաքանչիւր կէտին:

Ահա եւ Յանաւօրը, ուր հարիւրաւոր զինուած և վրիժառու երիտասարդներ պաշարեցին վայրենի մաղրիկցիներին ու ահ, սարսափ տարածեցին կառավարական շրջանակների վրայ:

Ահա եւ Վանի երկրորդ պաշտպանութիւնը, ահա ե՛ւ Բաբչէնն ու Յաստուրը, Աղբիւր-Սերոբի դիմադրութիւնները, սամաթիացիների հերոսական պայքարը եւ մահը: Մէկը միւսի չեռեւից, զանազան շրջաններում եւ անդադար, որոնցով թէ՛ հայ ժողովուրդն է յեղափոխականապէս դաստիարակւում և թէ՛ կառավարութիւնն է զգում, որ այդ չարժու-

մը ո՛չ թէ անհատների, «չարագործների» գործ է, այլ հայ ժողովրդի, որին պէտք է ընդառաջ գնալ:

Յարձակողական տակտիկայի գործադրութեան ընթացքում լսեցան ներքին խաւերից (հայ ժողովրդի) աւելի տրտունջներ, քննադատութիւններ, թէ ձեր Բանկ-Օտտոմանն ու Խանասորն էլ մեզ ազատութիւն չբերեցին, այլ աւելի եւս կատաղեցրեցին թիւրք կառավարութեան: Յեղափոխութիւնը վիժեց, կռկռացին հակառակորդները եւ մի սրբազան դաշն կապեցին՝ տապալելու այդ «վտանգաւոր եւ աստիճանաբար զարգացող» ուժը: Այդ մտայնութիւնների դէմ էր, որ Քր. Միքայէլեանը իր «Ամբոխային Տրամաբանութեան» մէջ շեշտում է թէ՝ իւրաքանչիւր անյաջողութիւն չպիտի յուսահատեցնի, այլ աւելի եւս պիտի ամրապնդէ շարքերը: Նա իր յօդուածների մէջ փաստ է բերում բալկանեան ազգութիւնների ապստամբական շարժումներից եւ յատուկ ուշադրութիւն է դարձնում անյաջողութիւնների թւի վրայ: Լսենք իրեն:

«Բուլղարներն ապստամբել են 1828, 1837, 1841, 1862, 1867, 1868, 1872 եւ 1876 թւերին. ազատուել են 1878-ին. ուրեմն շարժումը տեւել է յիսուն տարի, ունենալով 44 տարուայ ընթացքում անընդհատ անյաջողութիւն:

Յոյներն ապստամբել են 1770, 1798, 1801, 1812, 1820, 1829 թւերին. ազատութիւն գտան 1829-30 թւին, այսինքն 60 տարուց յետոյ, շատ անգամ տեղիք տալով զարհուրելի կոտորածների: Այսօրուայ ազատ Կրէտէն, որ իր կռիւը սկսեց դեռ Յունաստանի հետ միասին, ապստամբել է աւելի քան 10 ան-

գամ՝ պաշտպանելով իր դատը ամբողջ 128 տարի: Սերբերը կռուել են 40 տարու չափ: Ռումանական շարժումը, նոյնպէս արիւնով ներկուած, տեւել է ոչ պակաս քան 100 տարի: Բոսնիա և Հերցեգովինա կռուել են 1830 թուից մինչև 1870-ը: Իրլանդիան 600 տարի է չի ընկճւում իր ազատութեան տենչանքների մէջ, չնայած իր միլիօնաւոր զոհերին: Դեռ երէկ մարտնչող, հերոսական Կուբան միմիայն վերջին դարում 3 խոշոր ապստամբութիւններ է ունեցել՝ միմիայն վերջին ապստամբութեան ժամանակ 200,000 զոհ տալով: Իտալական յեղափոխութիւնը 60 տարի պահանջեց՝ յաղթանակը տանելու համար: Հարցընում ենք. մի՞թէ սրանք բոլորն էլ ամէն անգամ «անպատրաստ» են պատմական բեմ դուրս եկել, որ չեն կարողացել մի անգամից իրենց ազատութիւնը ապահովել»:

Հայկական յեղափոխութեան ամենադժբաղդ կողմերից մէկն էլ այն է եղել, որ իր շարքերը հալածուել են ո՛չ թէ միայն դրսից, կառավարական շրջանակներից, այլ եւ իր հարազատներից, ներսից, որ աւելի սարսափելի եւ յուսահատական է երեւացել: Հակայեղափոխական այդ տարրերը ոչ մի միջոցի առաջ կանգն չէին առնում՝ հայհոյելու, պախարակելու, մատնութեան դիմելու եւ շատ անգամ էլ պատճառաբանելու, որ այդպիսի տիպերին մատնելը ազգասիրական գործ է:

Յեղափոխական շարքերը, սակայն, չէին յուսահատւում, այլ շարունակում էին իրենց միայնութեան մէջ կռիւը, հաւատալով որ այդ միջոցով նրանք ժողովրդի մեծամասնութեան եթէ ո՛չ յայտ–

նի, գոնէ գաղանի համակրութիւնն են վայելում: Նրանք մի չատ քարոզում էին ղէնք եւ գործնականապէս էլ ցոյց էին տալիս զինադրութեան ձեւերը:

«Հայ ժողովուրդ»,—բացականչում է «Դրօշակ»ը —«դուն պատմութեան մէջ շատ ես յոյսդ դրել եկեղեցիների, վարդապետների, աղօթքների, քրիստոնեայ պետութիւնների, մարդասիրութեան եւ քաղաքակրթութեան վրայ, բայց այդ բոլորն ապարդիւն են անցել: Այժմ պէտք է ղէնք եւ միայն ղէնք՝ ինքնապաշտպանութեան համար: Դիմեցինք հարուստներին — մերժում ստացանք: Եթէ դուն էլ չըլսես եւ ոչխարի պէս կոտորուես — ուրեմն արժանի չես ապրելու»:

Երկու այդ տեսակէտները իրար դէմ չանդիման էին եկել, պայքարում էին ուժեղ կերպով, հարուածում էին ուժգնօրէն, մինչեւ որ յեղափոխական չարքերն իրենց գործունէութեամբ եւ իրենց արտադրած հայդուկի տիպերով կարողացան յետ վանել յետադէմ տարրերին եւ ժողովրդի սրտում տեղ գրաւել:

Ժողովուրդն իր յոյսը կապեց հայդուկի հետ:

Ո՞վ է հայդուկը: Նա ամենից առաջ հայ ժողովրդի հարատատ զաւակն է, որ ապրում է նրա ցաւերով, կռւում է նրա ազատութեան համար եւ նահատակւում է նրա պատիւը փրկելիս: Նա, հայդուկը, հեռացած է իր ընտանեկան յարկից եւ ճանապարհ տան անդամ չէ. նա իրեն զոհաբերել է ամբողջ ազգութեան եւ ուր տառապանք կայ՝ հոն է իր բնակավայրը: Ո՛չ մի տեղ նա հանդիստ չունի, անդադար հալածանքի եւ կռիւների մէջ է, մի չատ մուխ գիշերների, քաղցի եւ ցրտի հետ անընդհատ ընկերը, օ-

բերով առանց քնանալու եւ հանգստի, կեանքը մի՛շտ վտանգի ենթարկուած եւ կամքով՝ անընկճելի: Նա հայ ժողովրդի մարտական ուժի արտայայտիչն է, նրա ազատութեան գաղափարը իրագործողը եւ դարաւոր վրէժի լուծման գործակատարը:

Դրանք բոլորն էլ դժգոհ են, որոնք իւրաքանչիւր մի բռնութեան դէմ ըմբոստանում են եւ որոնք իրենց դրած նպատակին հասնելու համար չեն վախենում եւ իրենց կեանքը զոհելու եւ իրենց արեամբ սրբագործելու: Դրանք գաղափարական, անձնազոհ տարրերն են, որոնք ամէն գրկանք կրելով՝ ձգտում են միայն ազատութեան գաղափարն իրագործել:

Հայդուկները ծնունդ են հայ ժողովրդի ներքին խաւերի, ելած են աշխատաւոր գիւղացիութեան ծոցից եւ արհեստաւոր-բանւորների շարքից: Նրանք այն տիպերն են, որոնց վրայ յենւել է Հայ Ազատագրութեան չարժումը, որոնք իրենց կռւով կարողացել են ստեղծել Հայ Յեղափոխական չարժումը եւ իրենց արեամբ ստաջ են բերել Հայկական Հարցը:

Դրանք այն խիզախ տիպերն են, որոնց գլխաւոր վրայ գրւած է

«Ազատութիւն կամ մահ»:

## ԳԼՈՒԽ Բ.

## ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

### ԲԱՆԿ–ՕՏՏՕՄԱՆԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Ընդհանուր կոտորած– ներէն յետոյ հայ ժողո– ժողովուրդն ապրեց յու– սոյ չրջան, որովհետեւ պետութիւնները «աչխատում» էին բարենորոգում– ներ մտցնել եւ այս անգամ անպատչման: Սասունի ա– պըստամբութիւնից եւ կոտորածից յետոյ անգլիա– կան, ֆրանսիական եւ ռուսական հիւպատոսներն անցան անտաւիկ ժայռերից այն կողմը, մտան Շէնըք, Սէմալ եւ Կէլիէ–Կուզան գիւղերը, հարց ու փորձի ենթարկեցին թէ՛ քրիստոնեաներին եւ թէ՛ թիւրք պետական պաչտօնեաներին, իրենց աչքով տեսան աւերուած գիւղերը, խոչտանգուած կիները, հորերի մէջ լեցուած դիակները... տեսան և տեղեկագրեցին իրենց պետութիւններին, որոնք անմիջապէս առաջ քաչեցին բարենորոգումների ծրագիրը:

Անցան ամիսներ եւ դրական ո՛չ մի քայլ չատնելեցաւ: Հայ յեղափոխականները ժամանակաւո– րապէս դադար առան՝ անհամբեր ապասելով պետու– թիւնների միջամտութեան արդիւնքին: Երկար ապա– սելուց, բարենորոգումների ծրագիրը խուզելուց յե– տոյ, եւրոպական դիւանագիտութիւնը նորից տրա մադրութիւն ցոյց չտուեց իրական որեւէ բան անե–




# ԲԱՆԿ ՕՏՏՕՄԱՆ

լու, նա մնաց անտարբեր հայկական տանջանքներէ հանդէպ: Եւ պայթեց յեղափոխականի ռումբը, այս անգամ աշնախի հակայական ծրագրով, որով պէտք էր զգացնել տալ Եւրոպային, վնաս հասցնել նորա անմիջական շահերին, ցոյց տալ թիւրք կառավարութեան անզօրութիւնը՝ պետական հիմնարկութիւնները պահպանելու մէջ եւ անհրաժեշտութիւնը՝ չուտափոյթ միջամտութեան:

Գործունէութեան կենտրոն ընտրուած էր Պօլիսը, որ Եւրոպային աւելի մօտ էր եւ որտեղից ռումբի ձայնը լսելի կը լինէր: Յատուկ կազմակերպիչ մարմին էր ընտրուած՝ նախապատրաստական աշխատանքներն առաջ տանելու համար:

Բոլոր աշքի զարնող ընկերները հաւաքւել էին սուլթաններէ մայրաքաղաքը: Նրանք ամիսներ շարունակ իրենց պատրաստութիւններն էին տեսնում՝ ծածուկ, աննկատ: Աշխատանքը բաժանուած էր կարող տղաների միջև, որոնցից ոմանք պիտի ուսումնասիրէին ճանապարհները, ոմանք ռումբերի տեղափոխութեան խնդրով էին տարուած, մի քանիսն էլ վարժեցնում էին սուրհանդակներին և պարզ, կուռղ հայդուկներին, իսկ կային, որ պետութիւններին ներկայացնելիք պահանջներն էին մշակում:

Որոշուած էր տիրանալ Պօլսոյ ամենաբանուկ փողոցի՝ Բերայի վրայ դռնուած Օտտոման Բանկին, որի մէջ էին կենտրոնացած եւրոպական զանազան պետութիւնների, կապիտալիստների դրամադրութիւնները, փաստաթղթերը եւ կապիտուլասիոնների օրիժինալները: Այդ խիղախ քայլով Դաշնակցութիւնը միայն մի մօտաւոր նպատակ ունէր՝ Եւրոպա-

յի ուշադրութիւնը դրաւել եւ հասարակական կարծիքն պրաղեցնել հայկական տառապանքներով:

Առաջին դժուարին եւ պատասխանատու քայլն էր, որ նրանք ձեռնարկում էին՝ իրենց անփորձառութեամբ, բայց եւ առաջին խիզախ յարձակողականն էր՝ յեղափոխական տեմպ պարունակող իր մէջ, որի համար էլ բոլորն էլ ուրախ էին եւ զուարթ:

Գրաւման օրը որոշուած էր 96 թուի օգոստոս 14-ին, չորեքշաբթի օրը: Ժամի 6-ին (ը. տ.) յարձակումն անպայման պիտի սկսէր: Երեքշաբթի օրը ռումբերն ու պայթուցիկ նիւթերը ապահովաբար տեղաւորուած էին յատուկ, առաջուց որոշած վայրը, որտեղից հետեւեալ օրը պարկերը չալակած՝ պիտի մեկնէին դէպի Բանկան:

Մի քանի ընկերներ հեւքոտ աշխատանքի մէջ էին թուրցիկներ պատրաստելով, միւսները՝ պահանջատրերը տպագրելով, մի այլ տեղ խմբապետների ժողովներ էին տեղի ունենում, և այսպէս բոլորն էլ տարուած էին մի մեծ եւ վեհ դաղափարով:

Երեքշաբթի երեկոյեան բոլոր մասնակցողներն էլ հաւաքւում են մի տուն, որի տանտէրը, մի քարձրահասակ, խորշոմած դէմքով մշեցի էր, որ դիմաւորում է նրանց՝ խորհրդաւոր ժպիտը դէմքին: Նրանք բոլորն էլ սուս-փուս բարձրանում են վերեւ, անցնում են խաւար միջանցքներով, ոլոր-մոլոր ճանապարհներով եւ տեղաւորուում են իրենց մշտական խորհրդավայրը՝ մութ եւ երկայն սենեակում:

Այդտեղ են բոլորը՝ դեկավարներից մինչեւ հասարակ բեռնակիրները: Մի անկիւնում խմբապետները մանրամասն բացատրում են վաղւայ յարձակ-

ման ծրագիրը, չեշտելով նրանցից իւրաքանչիւրի կատարելիք դերը, տալով անհրաժեշտ հրահանգներ: Այս կարգադրութիւններն անելուց յետոյ, ղեկավար ընկերները, սեղմելով իրենց գործակից ընկերների ձեռքը, խրախուսելով նրանց որ անվախ և քաջ մնան, յիշեցնելով որ հայ ժողովրդի տառապանքը թեթեւցնելու համար է որ կը կռուեն, նրա ազատութիւնը ձեռք բերելու համար է որ պատրաստւում են արիւն թափելու, իրենք անցնում են մի այլ ժողովի, որին մասնակցում էին Բերայի, Ղալաթիայի շրջանի եւ Բանկի գործը ղեկավարող ընկերները: Դրանց մէջ էին Բարկէն-Սիւնին, Հրաչը, Գարօն, Աշոտը, Եգիպտացին եւ ուրիշները: Այդ գիշեր բոլորն էլ լուրջ էին, նոյնիսկ ծիծաղկոտ եւ զւարճախօս Բարկէնը: Նրա յօնքերը կիտուած, ճերմակ ճակատը փոքր ամպամած, կարծես իր կեանքի վերջին օրն հաշւելով՝ աշխատում էր իր գործերը կարգի դնել:

Երկար խորհրդակցելով յարձակման մանրամասնութիւնների մասին, կրկին անգամ չեշտելով իւրաքանչիւրի կատարելիք գործը, ապա Բարկէնը, Հրաչը, Գարօն եւ Աշոտը ստորագրելով Բանկից եւրոպական պետութիւններին ուղարկւելիք պահանջագրի տակը, սղանները նստում են ընթրիքի:

Վերջին, խորհրդաւոր երեկոն է, երբ տարիներով իրար հետ աշխատած, չարչարւած գաղափարական ընկերները պատրաստւում են մահւան ընդառաջ երթալու եւ իրենց մեծ գաղափարի արեան ճանապարհով քայլելու: Վճռում են մի քիչ գինի խմել, որպէսզի մի քիչ կարողանան զւարթանալ: Նրանք

տաք եւ երկար վիճաբանութիւններ են ունենում, ապա ճառերը ու կենացները են առաջարկում, յիշում են իրենց ընկած ընկերներին, որոնց մօտ գնալու պատրաստութիւն են տեսնում: Զգացած խօսում է Բարկէնը.

— «Ընկերներ, դիտեմ որ պիտի մեռնինք, սակայն մեկ վախաքս է, որ ողջ մնացողները աւելի կատաղի կերպով չարունակեն մեր սուրբ գործը, լուծեն մեր հարեւր հազար սրախողխող եղած եղբայրներուն ու քոյրերուն վրէժը և ազատեն մեր դժբաղդ հայրենիքը. այն ժամանակ մեր ոսկորներն էլ հանգիստ կը մնան»:

Բոլոր մնացածներն էլ երդւում են հաւատարիմ մնալ իրենց ուխտին, ապա պինդ-պինդ գրկւելով, համբուրւելով բաժանւում են:

Հետեւեալ օրն է: Առաւօտեան չաւ շուտով, տղաները արդէն աշխատանքի են սկսել: Ներանգից իւրաքանչիւրն իր գործի վրայ է: Մի քանի վայրկեանում ղէնքերն ու վառօդուչները բաժանւում են մասնակցողներին, իսկ ռումբերը՝ բամբակի մէջ վաթսուած՝ պայուսակներում տեղաւորւում: Վերջին անգամ ղեկավար ընկերները յիշեցնում են, որ բանական ներս մտնող իւրաքանչիւր անհատ պարտաւոր է դրան մօտ «Ազատութիւն» կանչել, իբրև պարօլ, ապրանչան, հակառակ դէպքում պիտի զնդակահար արւի: Վերջին անգամ խրախուսական, ոգեւորիչ խօսքեր ասւում են, ջերմագին համբուրւում իրար հետ եւ դէպի բանկան շարժւում:

Բարկէնն ամենից առաջ վեց նախապատրաստական քայլերին ճանապարհ է դնում: Ներանգ պիտի աշխատէին

*ներս մտնել, յարձակուելով պահապանների վրայ, որոնց առաջին գնդակի պայթիւնից յետոյ, միւս բոլոր ընկերները՝ ռումբերով, ուժանակներով զինուած՝ միահամուռ ներս պիտի խուժէին:*

*Բոլորն էլ կաղմ ու պատրաստ էին: Անհանգիստ եւ սրտատրոփ՝ նրանք սպասում էին ժամի 6-ին եւ առաջին գնդակին:*

*Ժամի 6½-ն է: Յանկարծ լսուում է «բամբ-բամբ» որոտները: Տղաները վազում են: Նրանք պար տաւոր էին ժամանակին հասնել: Մեծ Փողոցի վրայ խուճապ սկսւել էր. մարդիկ աչխատում էին իրենց գլուխն ազատել: Միայն մի խումբ մարդիկ էին յառաջանում դէպի Բանկան: Նրանք իրենց ձեռքերում ատրճանակներ եւ ռումբեր ունէին, իսկ մէջքերի վրայ՝ պայուսակներ:*

*Յեղափոխականներն հասնում են Բանկայի մօտ և ներս են խուժում: Դա նախայարձակ խումբն էր: Նրանք տալիս են առաջին գոհը՝ բէյնըցի Յովհաննէսը, 28 տարեկան: Միւս հինգը, առանց տատանուելու, ատրճանակների գնդակներով դետին են գլորում երկու զապթիաների և դռնապաններից մէկին: Նրանք տիրանում են դռներին և երեք հոգի պահապան նշանակում՝ միւս ընկերներին էլ ներս թողնելու համար:*

*Իրար յետեւից, խորհրդաւոր ուրուականների պէս, «Ազատութիւն, Ազատութիւն» կանչելով մէկ-մէկ ներս էին մտնում: Ընկերներից մէկը անզգուշութեամբ մոռանալով այդ պարօլը, ներս է վազում, բայց պահապան յեղափոխականներից մէկի ատրճանակը ստիպում է «Ազատութիւն» կանչել եւ ա-*

պա ներս մտնել:

Ներս անցնողներն անմիջապէս յարմարաւոր դիրքեր են գրաւում՝ օգնութեան հասնող զինուորներին յետ մղելու եւ պատուհաններից պաշտպանելու Բանկայի մուտքը՝ մինչեւ բոլոր ընկերների հասնիլը:

Գարօն տասի չափ ընկերներով իջնում է ներքեւի յարկը, որտեղից տաք կռուի է բռնւում վրայ հասնող զինուորների հետ:

Հրաչը մի քանի տղաներով բարձրանում է վերեւի յարկը, այնտեղի դիրքերը գրաւելու եւ միաժամանակ նշան տալու հեռու տան մէջ պահուող մի ընկերոջ, որն անմիջապէս Դաշնակցութեան անունից գրած պահանջագիրը պիտի տանէր վեց պետութիւնների ներկայացուցիչներին:

Բանկայի ներքեւի յարկում կատաղի կռիւ է: Վրայ հասնող պետական զինուորներն աշխատում են ներս խուժել, բայց ստիպուած են լինում յետ նահանջել: Մի քանի անգամ ուժեղ հրացանաձգութիւն է լինում, զինուորները կուտակւում են փողոցի անկիւնում, առաջնորդող սպան խրախուսական խօսքեր է ասում, բայց վրէժխնդրութեամբ լցուած ֆիդայիների գնդակներն ստիպում են թողնել իրենց մտադրութիւնը: Տղաներից իւրաքանչիւրը պատուհանից դիտում է կուտակուած զինուորներին, ընտրում է յարմար բոպէ ու ռումբը նետում: Լսւում է պայթող, դժոխային աղմուկ, տիրում է մի անպատմելի վայնասուն, զինուորները փախչում են աջ ու ձախ:

Մինչ այդ՝ ներքեւում, Բանկի դրան յեղափո-

*խական պահապանները, դիակները մի կողմ քաշելով դուռը գոցում են:*

*Բանկան դրաւուած էր:*

*Բանկայի չորս կողմի փողոցները լեցուել էին պինուորներով եւ ոստիկաններով, որոնք անդադար հրացանաձգութեամբ աշխատում էին չփոթ ձգել յեղափոխականների մէջ եւ ապա յարձակումով յետ դրաւել:*

*Այդ ժամանակներն էր, որ պատահական պընդակներից մէկը դիպչում է տղաներից մէկին, որի ձեռքից երկու ռումբ են ընկնում, որոնցից զոհ-ւում է 18 տարեկան Մարզար Մինասեանը, իսկ նախայարձակներից էլ երեք հոգի վիրաւորւում են: Դրան յաջորդում է մի այլ դժբաղդութիւն: Բանկայի ծառայողներից մէկը, բոլորովին այլ չարժառիթներից դրդւած, իր ատրճանակն ուղղում է յեղափոխականներին, որի գնդակներից մէկը դիպնալով մի ռումբի՝ պայթեցնում է, որին զոհ է գնում Բիթլիսի Մ... գիւղից Սեդրակ Եղիազարեանը, 24 տարեկան: Նորա երկու ձեռքերը ջարդ ու փշուր են լինում, ոսկորները դուրս են ելնում, արիւնն ահագին քանակութեամբ հոսում է, որից սրտաճմլիկ աղաղակներ է հանում. «Պարոն, ես լմնցայ, ի սէր Աստուծոյ գնդակ մը... Ջե՞ս կրնայ... Աստուծոյ սիրոյն բէվլօլ տուր ես դիս պարնեմ»:*

*Բանկայի զոհերից էր եւ Բարկէն Սիւնին, բոլոր այդ կազմակերպութիւնների հոգին: Նա բոլորից վերջը պիտի ներս մտնէր՝ թիկունքը պաշտպանելով: Երկու ձեռքին ռումբ նա շտապում էր ներս մտնել, երբ թշնամու գնդակներից մէկը ծակում է*

նրա փորն ու գետին գլորում: Ձեռքի մէջ գտնուած ռումբերը պայթում են, իր փայփայած եւ պատրաստած ռումբերը, որոնց եւ զոհ է գնում ինքը․ նրա մահը, սակայն, հնարաւորութիւն է տալիս միւս ընկերներին ապահով կերպով ներս մտնել, իսկ թիւրք զինուորները, որոնք պատրաստւում էին դեռ բաց դռներից ներս խուժել, Բարկէնի ռումբերի պայթիւնից սարսափահար, ընկնում են անվճռականութեան մէջ եւ չեն յամարձակւում առաջ շարժուել:

«Ես, շարունակում է իր տպաւորութիւնները Հրաչը, դուրսի դռանը մօտ իջայ սպանուածները դիտելու եւ անունները նշանակելու․ յանկարծ ծնկներս դողալ սկսան, կուրծքս ուռեցաւ, դիմացս կը տեսնէի Բարկէն-Սիւնին սոսկալի վիճակի մէջ, զգեստները պատառոտած, այրուած, երկու ձեռքերը դաստակներէն կախուած, մսերը փրթած, դէմքը արիւնած և մարմինը արիւնալիճի մէջ թաղուած, սանդուխին վարի աստիճաններուն վրայ ընկած էր: Չեմ կրնար այդ վայրկեանի զգացումներս ձեզի յայտնել, ահագին տխրութիւն մը վրաս եկաւ, որը տեւեց երկար ժամեր: Հէք ընկերոջ անկենդան սառած մարմնի առջեւ մնացի անշարժ երկար ատեն․ տխուր յիշատակներ մտքէս կ՚անցնէին: Երեք ժամ առաջ ողջ առողջ էր եւ տղայոց հրահանգներ կը տար․ դեռ կը զգայի երկար գրկախառնութեան անուշ տպաւորութիւնը: Դեռ քիչ առաջ էր որ «Ազատութիւն» կը պոռար ներս մտած ատենը․ այժմ նոյն սիրելի ընկերը պաղած, անշնչացած է: Սիրածի լուսանկարը Գարօի հետ գրպանէն հանեցինք, նաեւ ժամացոյցն ու դրամը: Խե՛ղճ Ինսարով, երկուքս ալ մահ կը փնտռէ-

ինք»...

Մինչ տղաների մի մասն զբաղուած է լինում կռւով, երկրորդը՝ վիրաւորների և սպանուածների անուներն արձանագրելով ու դիակները ներս տանելով, մի քանի հոգի էլ իջնում են ներքնայարկը, ուր պահուած էին Բանկայի ծառայողները՝ ահ ու դողի մէջ։ Սրանք կարծել են թէ՝ յարձակումը տեղի է ունեցել՝ կողոպտելու նպատակով։ Բայց երբ մի քանի ընկերներ, մաքուր ֆրանսերէնով դիմում են նրանց, հասկացնում գործի էութիւնը եւ խնդրում հանգիստ մնալ, չվախենալ ու միաժամանակ հնազանդիլ տըրւած բոլոր հրահանգներին, նրանք հանգստանում են։

Մի քանի ժամ տեւող այդ խառնաշփոթ դրութիւնն աստիճանաբար կանոնաւորւում է այն ժամանակ, երբ Թիւրք կառավարութեան ներկայացուցիչները տեսնում են որ այլ եւս անկարող են յետ գրաւել պետական այդ հիմնարկութիւնը, որի վրայ սկսել էր ծածանել Հ. Յ. Դաշնակցութեան Ազատ Դրօշակը։

Այդ բոլորը, 3 սպանուած եւ 6 վիրաւոր ընկերների արիւնը, ստիպում է կառավարութեան սպիտակ դրօշ բարձրացնել, զինադադար խնդրել եւ բանակցութիւններ վարել։

Մինչ Բանկայի ներսում այդ բոլորն էր կատարւում, դուրսը, ընկերներից մէկը, տպագրուած պահանջագրերով պտտում էր եւրոպական դեսպանատունները և նրանց յանձնում մի-մի օրինակ։ Դրանք շատ չափաւոր պահանջներ էին, տպագրուած ֆրանսերէն, Թիւրքերէն եւ հայերէն, բաղկացած

տասներկու կէտերից, որոնցից գլխաւոր եւ առաջնակարգ բնոյթ էին կրում հետեւեալները.—

1) Հայաստանի համար նշանակել ծագումով եւ ազգութեամբ եւրոպացի կօմիսար՝ վեց տէրութիւնների կողմից նշանակուած,

2) Վալիներին, միւթէսարիֆներին եւ գայմագամներին պիտի նշանակէ այդ կօմիսարը եւ սուլթանը պիտի վաւերացնէ,

3) Եւրոպացի սպաների հրամանատարութեան ներքեւ կազմակերպել տեղական ազդերէն միլիցիա, ժանտարմէա եւ ոստիկանութիւն,

4) Դատական բարենորոգումներ՝ եւրոպական սխեմայով,

5) Կրօնի, կրթութեան եւ մամուլի կատարեալ ազատութիւն,

6) Երկրի հասոյթների երեք քառորդը ցատկացնել տեղական կարիքներուն, յետնեալ հարկերը ջնջել եւայլն:

Դրանք պահանջներ էին, որոնց կազմութեան ժամանակ ի նկատի էին առնուած եւրոպական դիւանագիտութեան տրամադրութիւնը, որոնք շատ չընչին են եւ իրագործելի եւ այդ այն նպատակով, որպէսզի լայն հասարակական խաւերի համակրութիւնը ապահովի, և որպէսզի զանազան երկիրների ժողովուրդների կարծիքն ի նպաստ այդ պահանջների լինի:

Ծայրայեղ բնոյթ չէին կրում, այլ համեստ եւ անմիջական: Նրանք այդ ճշտաւոր նպատակ էին դրել, չմոռանալով չրջաբերականի վերջում չեշտել, որ եթէ աննկատ թողնուին հայ ժողովրդի ցաւերը,

վճռել են ուժանակներով պայթեցնել Բանկան, յօդս ցնդեցնել եւ իրենք էլ մէջը նահատակուել: «Մենք պէտք է կռուինք մինչեւ վերջին շունչը, ցորչափ կենդանի մնայ վերջին հայը», այս էր նրանց հաստատ որոշումը:

Բանկ Օտտոմանի գրաւումը մի անակնկալ էր Եւրոպայի եւ մանաւանդ Պօլսոյ մէջ գտնուած իր ներկայացուցիչների համար: Նրանք չէին սպասում հայ յեղափոխականներից այդքան խիզախութիւն, եւ տեսնելով իրականացած փաստը, վճռեցին բանակցութիւններ վարել՝ դիւանագիտութեան անունից, նշանակելով ներկայացուցիչներ ռուսական դեսպանատան առաջին թարգման Մաքսիմօվը, Բանկի դիրեկտոր՝ սըր Եդւարդ Եաւէր եւ փոխ-դիրեկտոր՝ պ. Օպվուան:

Բանակցութիւնների ընթացքում տղաները հետեւեալ ընդհանուր կէտերն են դնում — ա) Երկրի մէջ խաղաղութիւն հաստատել, բ) պետութեանց դրկած մեր պահանջներու գործադրութիւնը երաշխաւորել, գ) բոլոր այս դէպքերին մասնակցողներուն ազատ թողնել եւ ուժ չգործադրել եւ դ) հակառակ պարագային օդը կը հանենք Պանքը, մեզ հետ ի միասին:

Մաքսիմօվը միշտ խուսափողական պատասխան է տալիս. նա շեշտում է որ ամէն ջանք գործ են դընում ազդելու սուլթանի վրայ, որ կարող է պատահել Թիւրք կառավարութիւնն համաձայնի Երկրի պահանջների համապատասխան բարենորոգումներ մտցնել. նա աշխատում է յեղափոխականներին հանել Բանկից, որից յետոյ ամէն բան հեշտ կը լինէր:

*Ռուսական դեսպանատան ներկայացուցիչը յայտնում է. «Մինչեւ հիմա արիւնթիւն ցոյց տուիք. այսքանը կը բաւէ ձեր խնդիրը նորից յուզելու, բայց եթէ յամառուիք մնալ, պիտի կորանցնէք այն դատը, որ կը պաշտպանէք. համակրութեան տեղ ատելութիւն պիտի կրէք»:*

*Քառորդ ժամ խորհրդակցելուց յետոյ չեղափոխականները վերսկսում են բանակցութիւնները:*

Գարօ.— *Մենք բանկը մտանք որոշ նպատակով, պահանջները ներկայացրած են և կը սպասենք ձեր եւ ձեր հինգ պաշտօնակիցների (դեսպանները) պատասխանին մինչեւ վաղը իրիկուն:*

Մաֆսիմօվ.— *Կ'աղաչեմ, ելէք դուրս, եախտի վրայ աւելի մանրամասն կը խօսենք, հոս դիպլօմատական խնդիրներու մասին խօսելու տեղ չէ: Կ'աղաչեմ, ծնկան կուգամ, կը խնդրեմ որ չտապէք: Եթէ այսօր չհամաձայնէք ելնելու, այս պիշեր կարող է ջարդ լինել, այնպէս որ ամբողջ ազգի ճակատագիրը աչքերնուդ առջեւ բերէք: Եթէ դուք յամառուիք, դուք կը դառնէք ամբողջ Եւրոպայի ատելութիւնը եւ ես, ռուսական պետութեան ներկայացուցիչը, հիմակուընէ ձեզի կը յայտնեմ, որ ձեր դատը կը կորսընցնէք, եւ եթէ յամառուիք, ռուսական քաղաքականութիւնը ձեզ թշնամի պիտի ունենաք:*

*Բանակցող չեղափոխականներէն համար ատեղծուում էր բաւականին ծանր դրութիւն, ռուս պետութեան ներկայացուցիչն ասում էր, որ կարող է ջարդ լինել, որ դիպլօմատիան երես կը դարձնի եւ այդ բոլորի պատասխանատուութիւնը կ'ընկնի իրենց վրայ: Ի՞նչ անել: Յամառե՞լ, սպասե՞լ մինչեւ վաղը*

*երեկոյեան, Բանկան օդը հանե՞լ թէ համաձայնել եւ պատուոյ խօսքի հաւատալ:*

Գարօ.— *Խօսք տուէք որ վէրաւոր ընկերները հիւանդանոց պիտի ղրկուին, որ պրաւոր պիտի վկայէք թէ՝ Բանկայի ո՛չ մի վարան վատնած ենք եւ որ վաղը դուք ձեր պաշտօնեաներով նաւ կուգաք՝ բանակցութիւնները շարունակելու համար:*

Մաֆսիմով.— *Իմ մասին պատուոյ խօսք կուտամ՝ վաղը եախտ դալ. պատուոյ խօսք կը տամ ջանալ իմ պաշտօնակիցները համոզել, որ գան: Պատուոյ խօսք կը տամ, որ ձեր վէրաւորները հիւանդանոց տարուելով՝ թժշկուելէ ետքը՝ երկրէն դուրս ելնելու թոյղթ կ'առնուի, իսկ Բանկայի ղրամի մասին՝ վաղը բապօրտ (տեղեկութիւն) կը տանք, որ ձեր վերաբերմամբ չկասկածեն: Հիմա ատրճանակները, ռումբերը եւ ուժանակները Բանկը թողեցէք եւ եկէք չուտով:*

Գարօ.— *Ռումբերն ու ուժանակները հոս կը թողունք, իսկ ատրճանակները՝ երբէ՛ք:*

Մաֆսիմով.— *Շատ լաւ, առէք ատրճանակները:*

*Հարցը վճռուած էր: 13 ժամ Բանկայում մնալուց յետոյ՝ տղաները շատ մեծ դժկամակութեամբ էին թողնում այդ չորս պատերը, բայց ստիպուած էին: Վճռուում էր, որ եթէ ճանապարհին յարձակման ենթարկուեն, ամենից առաջ պիտի սպանէին Մաքսիմովին եւ երկու դիրեկտօրներին:*

*Դռները բացուում են, տղաները դուրս ելնում՝ վերջին համբոյրը տալով Բարկէնի սառած ճակտին:*

*Նրանք մի աւելորդ անգամ էլ հաւատացին, յոյս*

ւրէն դիւանագիտութեան վրայ, որի ներկայացուցիչը հայկական ջարդի հաւանականութիւնն էր շեշտում:

Բոլոր տղաներն էլ զինուած ատրճանակներով, շրջապատուած ռուսական պահակազօրքով, խուռն բազմութեան միջով առաջնորդւում են դէպի քարափ: Այդտեղից, առաջուց նշանակուած շոգեմակոյկներով, յեղափոխականներին տեղափոխում են սըր Էդգարի եախտը, որ պաշտպանւում էր ֆրանսիական, անգլիական պահականաւերով:

Երեկոյեան ժամի 5-ի մօտերը, ռուսական, ֆըրանսական եւ անգլիական դեսպանների թարգմանները շոգենաւ են մտնում դէմքերը խոժոռած: Նըրանք Ղալաթիոյ կոտորածի լուրն էին բերել: Նըրանք այդ մեծ հայրենասիրական քայլը յիմարական էին անւանում և միշտ խրատում էին սպասել, միշտ սպասել, մինչեւ որ դիւանագիտութիւնն Հայկական Հարցը լուծէր: Այդ տեսակցութիւնից յետոյ Բանկայի հերոսներին տեղափոխում են ֆրանսիական «Ժիրոնտ» նաւը, որտեղ եւ բաժանւում են դեսպանների ներկայացուցիչներից: Վերջին անգամ տղաները չեն մոռանում յիշեցնելու, որ «ուր էլ լինին, միշտ պիտի ձգտին իրենց հայրենիքը վերադառնալ, կռուել նորա ազատութեան համար եւ մեռնել նորա հողի վրայ»:

«Ժիրոնտ» շոգենաւի ծառայողները· առաջուց իրենց յայտնած տեղեկութիւնների հիման վրայ այն կարծիքն էին կազմել, որ իբր «ասոնք սրիկաներ են, կարող են շոգենաւը օդը հանել», որի համար էլ շատ զգուշութեամբ են վերաբերւում եւ միշտ դժկամա-

կութեամբ էին խօսակցում նրանց հետ: Բայց երբ մտերմանում են, ծանօթանում յեղափոխականների կեանքի եւ վերջին պատմութեան հետ, երբ իմանում են որ նրանք հայրենասէրներ են եւ ազատութեան համար կռւողներ, այն ժամանակ իրենց վերաբերմունքն են փոխում ու աւելի յարգալից դիրք բռնում: Առանձնապէս մտերմանում է Նաւային բարի եւ անւանի բժիշկ Մէլիէրը:

Մի քանի օրից յետոյ նրանք Մարսէյլ են հասնում, ուր եւ 17 օր մնալով, ենթարկւում են դիւանագիտութեան աւելի ծանր հարւածներին:

Բանկայի գրաւումն առաջ բերեց հասարակական որոշ խաւերում՝ հսկայական փոփոխութիւն դէպի յեղափոխութիւնը եւ այդ դէպքը մեծ գնահատութեան արժանացաւ ե՛ւ եւրոպական մամուլի կողմից:

Մինչև այդ մոռցւած և մահւան ճիրաններում խեղդւող հայութեան քաջարի որդիներն՝ իրենց սպարտական քաջութեամբ եկան ցոյց տալու թէ՝ իրենք էլ ընդունակ են զէնքով պաշտպանելու իրենց իրաւունքն ու արեամբ ձեռք բերելու ազատութիւնը:

Եւրոպական մամուլն իր ուշադրութիւնը դարձնում է այն հանգամանքին վրայ, որ Օտտոման Բանկը, որի մէջ միլիոններով դրամ կար, ոսկին և արծաթը տոպրակներով են եղել դարսւած, ո՛չ մի դէպքում չեն արժանացել հայրենատենչ երիտասարդների ուշադրութեան, որոնք տարւած էին վեհ գաղափարներով, իրենց հայրենիքի ազատութեան իղձերով: Խռովութիւնն ուղղւած չի եղել յատկապէս

այդ հիմնարկութեան դէմ, այլ կրեալ է բացառապէս քաղաքական բնոյթ:

Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ այնքան համակրութեամբ չեչուեցաւ այն է, որ Բանկի մէջի ծառայողներից եւ ոչ մէկին վնաս չեն հասցրել, եւ որ ընդհակառակը բոլորի հետ վարուել են քաղցր եւ քաղաքավարի: Բոլոր բանտարկուած պաշտօնեաները վկայում են, որ իրենք յեղափոխականներին սկզբնական շրջանում ընդունել են իբրեւ ցավը շատակիչների, բայց յետոյ հասկանալով նրանց նպատակը, ծրագիրը՝ հանգիստ են մնացել եւ նոյն իսկ ապահովաբար սկսել են ընթրել, ճաշել եւ կօնեակ խմել:

Այս դէպքը մեծ ազդեցութիւն է ունեցել եւ Եւրոպայի հասարակական կարծիքի վրայ, որոնք համակրանքով վերաբերուեցին դէպի հայերն, իսկ անգլիական յուզուած մտքերն այն աստիճանի էին հասել, որ կառավարութիւնից պահանջում էին պատերազմ յայտարարել Տաճկաստանի դէմ: Մամուլը խոշոր ուշադրութիւն էր դարձնում եւ դրամատան մասնակցողների կրթութեան եւ դաստիարակութեան վրայ: «Գործի ղեկավարները, գրում է "Le Petit Parisien", այնպիսի զարգացած մարդիկ են, Ֆրանսերէնին տիրապետող, համալսարանական կըրթութեամբ եւ վերին աստիճանի քաղաքավարի, որ ձեր կասկածը կը փարատի՝ թէ իրր նրանք նպատակ են ունեցել դրամարկղին ձեռք տալու»:

«Պետութիւնները, չեչոում է «Դէյլի–Նիւզ»ը, չեն կարող անտարբեր դրութեան մէջ մնալ: Անգլիական ոչ մի մինիստր չի զոհել մի մարդ կամ մի չիլինդ

Բ. Դրան պաշտպանութեան համար»:

«Այս արիւնահեղ կոտորածը, գրում է «Ֆրանկֆուրտեր Ցայտունգ»ը, առաջին անգամն է տեսնըւում Պոլսում, և այսպիսի ծանր պարագաներին Եւրոպայի լուրջ պարտականութիւնն է ամենաեռանդուն կերպով միջամտել՝ խաղաղութիւնը վերականգնելու համար»:

Մի ուրիշ Թղթակից, իր յօդուածների մէջ առանձնապէս շեշտում է «որ հայկական ուժանակները ո՛չ միայն դղրդեցին Պոլիսը, այլ եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը»:

Անգլիա զայրոյթի եւ բողոքի մարմնացումն էր դարձել: Լոնդոնից մինչեւ յետին գիւղը բողոքի միտինգներ էին գումարում եւ ուժեղ կերպով քննադատութեան ենթարկում պետութեան քաղաքականութիւնը: Մեծ Գլադստոնը, «Ազգերու Ազատարարը» իր հուժկու ձայնը բարձրացրեց հայերու ազատութեան համար:

«Ինչ որ պիտի պատմեմ ձեզ», գրում է «Էտուալ Բելժ» թերթում Ժիրոնա նաւի առողջապահական բժիշկը, «անհաւատալի պիտի թուայ, սակայն ճիշտ իրողութիւն է: Յեղափոխականները ներս խուժեցին Բանկան եւ 157 հոգի՝ ամէն ազգութեան պատկանող մարդկանց իրենց հետ փակեցին: Մի՛ վախենաք, պոռաց չէֆը, մենք ձեզ չպիտի ձեռք տանք եւ ո՛չ էլ ձեր գանձարանին. չշարժուէք ձեր տեղից. մենք ունինք դինամիտ եւ շուտով ձեզ հետ օդը կը ցնդինք»:

Արդարեւ, նրանք գողեր չէին: Մի սանտիմ էլ չի գողացուել: Սեղանի վրայ կար մոռացուած մի քսակ,

որի մէջ կար 10,000 տաճկական լիրա եւ ահագին թուով բանկային տոմսակներ: Ինքը, չեղափոխականների պարապմունքը վերցրեց այդ քսակը եւ տարաւ անձամբ, վերեւի յարկն ու դրաւ դիրեկտորի տրամադրութեան տակ: Շփոթութեան մէջոցին գլխաւոր գանձարանը բաց էր մնացել: Դիրեկտոր Անթուան խնդրեց առաջնորդից, որ փակէ: Անմիջապէս կատարուեց խնդիրը: Նրանց նպատակն էր 1) դրաւել Եւրոպայի ուշադրութիւնը Հայաստանի թշուառութիւնների վրայ, 2) սարսափեցնել սուլթանին յանկարծակի հարուածով եւ մի քանի պիջումներ ստանալ: Չեմ ուզում ընդարձակուել, միայն կ'ուզեմ մի փաստ արձանագրել, որ մի բուռն կտրիճներ, օրը ցերեկով, լիակատար անձնապահութեամբ, մայրաքաղաքի կենտրոնում դրաւեցին օսմանեան ամենակատարեալ հաստատութիւնը, 13 ժամ մնացին այնտեղ, առանց մի սանտիմի ձեռք տալու եւ ի վերջոյ թողեցին բանկը՝ ամենապատուաբեր ու յաղթական կերպով: Եւ այդ հերոսները, այդ առաքեալները մեզ հետ էին վեց օր շարունակ: Մենք կարողացանք քննել ու դնահատել նրանց. սպաներ եւ ուրիշ պաշտօնեաներ՝ մենք բոլորս հիացած ենք նրանցից, պատում ենք, սիրում ենք նրանց»:

Հատարակական կարծիքի այդ ուժեղ ճնշման տակ դիպլօմատիան էլ իր ընթացքը փոխեց, մտածեց բարենորոգումների ծրագրի մասին, վեց պետութիւնների դրահակիր նաւերը խարիսխ ձգեցին Պօլսոյ դիմաց, դեսպանները խիստ լեզու են բանեցընում եւ վճռում են նոյնիսկ չտօնել սուլթանի տարեդարձը: Երբ այդ լուրն առնում է Համիդը, թէֆֆիկ

փաշայի միջոցով յայտնում է դեսպաններին, որ այդ ցոյցը կարող է վատ ազդել գործի վրայ, որին պատասխանել են որ վերջին օրերի դէպքից յետոյ սուգ էր հարկաւոր պահել եւ ոչ թէ տօնախմբութիւն կազմել:

Երբ մի կողմից եւրոպական մամուլը այսքան գովասանքով էր խօսում այդ մի բուռն հերոսների կատարած քայլի մասին՝ հայկական իրականութեան մէջ, հողեւորականներ, հարուստներ եւ կուսակցական կրքից տարուածներ ամէն կերպ աշխատում էին նսեմացնել Բանկայի գրաւումը, իսկ Մարսէյլում հրատարակւող «Արմէնիա»ն աւելի առաջ գնալով՝ այդ քայլն համարում էր «ազգակործան եւ միայն պատճառ հանդիսացող ջարդերի»:

Այս է մեր տխուր իրականութիւնը, որի մէջ աշխատելու, գործելու համար մեծ կամք է պէտք եւ ջերմ հայրենասիրութիւն, որպէսզի կարողանային դիմագրաւել հարազատներից եկած հարուածներին:

Եւ նրանք, այդ առիւծ յեղափոխականները, ո՛չ մի ուշադրութիւն չդարձրին այդ անտեղի քննադատութիւններին, այլ աւելի եռանդուն կերպով շարունակեցին իրենց սկսած դժուարին և մեծ գործը:

**ՍԱՄԱԹԻԱՑԻՆԵՐԻ ԿՌԻՒԸ**

Բանկ Օտտոմանի գըրաւման մի անբաժան մասն է կազմում Սամաթիոյ հերոսական դիմադրութիւնը: Դա օգոստոս 14-ի հսկայական ծրագրի մի օղակն էր, որ լայն շարժում պիտի առաջ բերէր հա-

սարակութեան մէջ: Բանկի գրաւման հետ միաժամանակ յարձակումներ պիտի տեղի ունենային Պօլսի զանազան թաղերում: Սամաթիա գիւղն էլ իր պատրաստութիւններն էր տեսել. առաջուց որոշուած էին որոշ դիրքեր, ապա ծրագրուած էր զօրանոցի վրայ յարձակուելու պատրաստութիւնը, որի պատճառով էլ կռիւը պիտի լինէր սոսկալի, միայն զօրքի և ոստիկանների հետ եւ այն էլ ուժանակներով: Ռումբերի գործածութեան բացէն, բոլոր մասնակցողների ցանկութեան և հրճուանքի ժամանակը, որոշուած էր, եւ բոլորն էլ սրտատրոփ, կազմ եւ պատրաստ սպասում էին օգոստոս 14-ին, ըստ Թրքական ժամը 6ին, երբ արդէն Բանկ Օտտոմանը պիտի գրաւուէր ու բոլոր թաղամասերում էլ յարձակումները պիտի սկսէին:

Սամաթիայ մէջ առաւօտեան ինչ որ շշուկներ երեւան էին եկել, հասարակութեան որոշ մասը կանխօրօք փոխադրւում էր Ս. Ստէֆանօ, տիրում էր ջղային սպասողական դրութիւն եւ այդ բոլորն առիթ էին հանդիսանում կառավարութեան համար զգոյշ լինել եւ խուզարկել: Փողոցների անկիւններում պահակներ դրւում են, անց ու դարձ անողները խուզարկութեան ենթարկւում: Ժամի 2-ին տեղի է ունենում առաջին ձերբակալութիւնը: Այդ բոլոր խառնութիւններն արդիւնք էին որոշ մատնութեան եւ այդ էր պատճառը, որ օգոստոս 14-ին, չորեքշաբթի օրը, ոստիկանութիւնը փնտռում էր Գնունուն եւ Արտաշէս Միսաքեանին: Առաւօտեան շատ շուտ կը շրջապատեն, ուժեղ զինուորական պահակներով, Գնունու տունը եւ կը պահանջեն անձնատուր լինել,

բայց Գնունուն ալտեղ չեն գտնի, որովհետեւ նախորդ օրւանից Մխսաքեաններու տունն էր գնացած՝ վերջնական կարգադրութիւններ անելու համար: Կատաղած այդ անյայտող փորձից, նրանք անմիջապէս գիմում են Մխսաքեաններին տունը եւ ժամի 2½–ի 3–ի միջոցները ուժեղ շղթաներով շրջապատում են տղաներին:

Ոստիկանները փնտռում են Գնունուն եւ միաժամանակ պահանջում, որ տան տիրոջ որդին, Արտաշէսը, զօրանոց ներկայանայ, ուր իրեն պահանջում են: Բոպէն վճռական էր եւ ճակատագրական: Բոլոր մասնակցողներն էլ շրջապատուած են — անճնաոուր լինելն անպատւաբեր է իրենց համար, իսկ չուտով կուի գիմելն էլ վնասակար, որովհետեւ կարող էր վտանգել կենսարոնական գործը եւ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել: Տունը պաշարող ոստիկանների եւ Գնունու միջեւ սկսւում են բանակցութիւնները: Կառավարութեան թեթեւամիտ պաշտօնեաները պահանջ են դնում, որ բոլորն էլ անձնատուր լինին: Ապա առաջարկում Արտաշէսին թողնել՝ զօրանոց գնալու համար:

Գնունին տան վերեւի յարկից (թարասէն) իր գլուխը դուրս հանելով պատասխանում է թէ՝ այժմ չեն կարող ո՛չ անձնատուր լինել եւ ո՛չ էլ Արտաշէսին յանձնել, աւելի լաւ կը լինէր որ երեկոյեան ժամի 6–ին գային, երբ եւ իրենց բոլոր պահանջներին բաւարարութիւն կը տրւի:

Ձիշդ ժամի 6–ը մի խորհրդաւորութիւն էր յեղափոխականների, իսկ անհասկանալի՝ ոստիկանների համար:

Այսպէս թէ այնպէս պէտք էր լուր տալ Կ. Կոմիտէին, որպէսզի ընդհանուր ծրագիրը փոքր անընդունելութեամբ չխանգարուի: Դիմացի տան մէջ գտնուող ընկերներից մէկն անմիջապէս կարողանում է իմանալ տղաների վճռականութիւնը և այն, որ որոշել են կեանքերը թանկ ծախել, իսկոյն չտապում է քաղաք, յայտնում է մեւս ընկերներին այդ լուրը, հատուկտակաւոր համոզւում է որ գործերն ընթանում են յաջող, որ տղաները որոշեալ կարգապահութեամբ ու մեծ անհամբերութեամբ սպասում են յարձակման րոպէին եւ որ ամէն ինչ ապահով է: Մինչեւ սուրհանդակի վերադարձը, Սամաթիոյ տների դռները դոցւած էին, վարժարանն էլ կատկածի տակ էր դրւած եւ անկարելի էր մի կերպով քաղաքի գործերի մասին հաղորդել պաշարւած ընկերներին: Սրանք ամէն մէկդ գործ էին դնում, ձգձգում էին բանակցութիւնները եւ աշխատում էին մի քանի ժամ էլ ուշացնել կռիւը, որպէսզի որոշեալ ժամանակը գայ:

Ժամը 6½-ն է: Լսւում է մի հաժամանակ ռումբերի որոտումը: Իրարու յետեւից, զանազան տներից կրակ են տեղում տղաները զօրքի վրայ: Փողոցներու խռնւած թիւրք զինւորներն էլ անխնայ գընդակներ են տեղացնում, մասնաւորապէս ուշադրութիւն դարձնելով Մխսաքեանների տան վրայ: Այս պատմական տնից, ըստ տեղեկութիւնների, առաջին ռումբը նետւում է տարիքաւոր մի հայ կնոջ, որ իր յանդգնութեամբ ցոյց է տալիս թշնամուն, որ հայուհին էլ կարող է կռւել. իսկ հայ երիտասարդների համար այդ մեծ քաջալերական էր, որից յետոյ նը-

րանք առիւծի պէս են դիմադրում: Փոխադարձ ուժեղ յարձակում է տեղի ունենում, որի ընթացքում զինուորները ստիպուած են լինում յետ նահանջել, ուժանակների մահատարած սարսափի տակ: Մինչ այդ յեղափոխականներից մի քանի հոգի յարձակում են գործում զօրանոցի վրայ եւ կրակ բաց անում՝ պահապաններին շփոթի մէջ ձգելով:

Ժամի 12-ին կռիւը դադարում է: Երկու կողմերի համար մի տեսակ զինադադար էր այդ, երբ եւ նոր յարձակման համար պատրաստութիւններ էին տեսնւում: Յեղափոխականների տրամադրութիւնը շատ բարձր էր եւ նրանք ծիծաղելով էին պատմում թիւրք զինուորների փախուստի մասին եւ խնդրում էին դրացիներից՝ միայն փամփուշտ հասցնել: Ժամի 4-ին կռիւը նորից է պայթում: Շատ չուտով, սակայն, զինուորները յետ են նահանջում, տեղի տալով տղաների նետած մի քանի ռումբերի աւերիչ ազդեցութեան: Ժամի 7-ի մօտերը երկու կողմերից էլ կատաղիօրէն վերսկսւում է հրացանաձգութիւնը:

Զօրքը խիտ շարքերով շրջապատել էր դպրոցը: Տղաները կռւում էին քաջաբար: Թշնամին զինւած էր եւ կացիններով, որոնցով նրանք կարողանում էին դուռը կոտրել եւ ներս խուժել: Առաջին զոհն է լինում Սողոմոնը, որին սպանելով՝ ոտներից բռնած դուրս են քաշում: Ապա երկար որոնումներ կատարելով դատարկ սենեակների մէջ՝ ոչ ոքի չեն գտնի, որովհետեւ կռւողներից երկու հոգի պատուհանից փողոց են ցատկում: Դրանցից մէկն սպանւում է տեղն ու տեղը, իսկ միւսը կարողանում է հրաշքով ազատւել: Դպրոցի դիմադրութիւնն էր այդ,

*ուր երեք հոգով կարողանում են կռուել քաջաբար եւ մեծ վնաս հասցնել թիւրք զինուորներին:*

*Մինչ այդ՝ Մխաքեանների տան մէջ տեղի էր ունենում մի հերոսական դիմադրութիւն: Տան մէջ կային վեց հոգի՝ Գնունին, Սուրէնը, Մխաքեան երկու եղբայրները, վերջիններիս անվախ մայրը եւ հայդուկ Հայկ Արապեանը: Սրանցից Գնունին եւ Արտաշէսը պաշտպանում էին տունը՝ փողոցի կողմից, իսկ Սուրէնն ու Հայկը՝ պարտէզի կողմից:*

*Վճռել էին խնայողաբար վարուել ռազմամթերքի հետ եւ ամէն կերպ աշխատել մի քանի ժամ աւելի կռուել: Բոլորն էլ զգում էին իրենց մօտալուտ մահը եւ այդ պատճառով էլ՝ աւելի ուժ եւ կորով ստանում: Վերջին տաք համբոյրներն էին տալիս, փոխադարձաբար ոգեւորում, ճառեր արտասանում: Գնունին սկսում էր, Սուրէնն էր վերջացնում եւ այսպէս գաղափարապէս տարուած նրանք պատրաստւում էին կատաղի կռիւ մղելու:*

*— Ուրեմն մեռնինք, եղբայրներ, վերջացնում է իր ուղերձը Սուրէնը, և սկսւում է անհաւասար կռիւը: Խորին մթութիւն է: Լսւում է հրացանների եւ ռումբերի որոտը, հեռուից առաջ են շարժւում պետական զինուորներ՝ պատերազմական փող փչելով:*

*Արշալոյսը կամաց-կամաց բացւում է. Նոր լոյսի հետ միասին սկսւում է եւ կռուի նոր թափ: Զօրքերի թիւն աւելի ստուարանում է, նրանք ամուր եւ խիտ շարքերով առաջ են անցնում իրենց վայրենի հարա-հրոցով: Ռումբերը մեծ աւերմունք են գործում: Թշնամին արդէն մօտեցել է տան դռանը, որն անմիջապէս կոտրւում է ու խուժանը ներս վա-*

*զում: Երեք հոգի սպանւում են: Գնունին եւ Սուրէնը դեռ դիմադրում են, որոնց գնդակները մի քանի աւելորդ թշնամիներ էլ գլորում են: Վերջին երկուսը, տեսնելով որ շարունակելն անկարելի է եւ որ իրենք կենդանի պիտի թշնամու ձեռքն ընկնեն, վճռում են վերջ տալ իրենց կեանքին եւ իրենց հերոսական մահով ցոյց տալ թշնամուն յեղափոխականի կամքն ու բարոյական ուժը:*

*Սկսւում են ձերբակալութիւնները: Ամենից առաջ դուրս են քաշում Մխաքեանների մօրն ու հիւանդ քրոջը: Տիրում է մահասարսուռ լռութիւն ամբողջ գիւղում: Տասն եւ ութ ժամ անընդհատ կռւելուց յետոյ ընկնում են այդ հերոսները, մաքրելով հայ ճակատից այն արատը, որ իբրեւ «հայը կռւել չգիտէ»:*

## ՎԱՆԱՅ ԵՐԿՐՈՐԴ ԿՌԻՒԸ

*Սաադէտտին փաշան, Վասպուրականի կոտորածների հեղինակը, որ սուլթանի կողմից նշանակւած էր Հայաստանում բարենորոգումներ մտցնող յանձնախմբի անդամ, սկսել էր նորից իր բռնութիւնները:*

*Պետօի, Մարտիկի եւ Աւետիսեանի խմբերից յետոյ, որոնք նահատակւեցին դէպի Պարսկաստան տանող ճանապարհների վրայ, ժողովուրդը մեծ յուսահատութեան մէջ էր: Նրան թւում էր թէ՝ յեղափոխականները չքացել են, որ նրանք լքել են գործը եւ որ ժողովրդի օգնութեան գործը ղեկավարողներ չկան:*

Այդ բոլոր յոռի տրամադրութիւններին իբր պատասխան Վան են մտնում Վարդանի և Վազգէնի հայդուկային խմբերը: Օրը ցերեկով կատարում են տերօրական գործողութիւն, ուղղուած լրտեսների դէմ, որոնք ահ ու սարսափ են ազդում կառավարական պաշտօնեաներին, որոնք կարծում էին թէ՝ յեղափոխականներ այլ եւս չկան:

Ժողովրդի մի մասը, գիտակից եւ անկեղծ, ոգեւորութեամբ է ընդունում հայդուկներին, իսկ դաւաճանների մի խմբակ, կառավարութեան ձեռքին գործիք դարձած, Վանում գտնուած յեղափոխականների մասին յայտնում է Շաքիր փաշային:

Շաքիրը յայտարարութիւններ է կպցնում պատերից՝ պահանջելով, որ ժողովուրդն իր ձեռքով յանձնէ երկրի հանգստութիւնը խանգարող վտանգաւոր տարրերին, իսկ առաջնորդին էլ սպառնում է, որ եթէ չյանձնեն խռովարարներին՝ կոտորած տեղի կ՚ունենայ: Բնակչութիւնն ահ ու մահւան երկիւղի մէջ է: Բարդուղիմէոսի կուսակից Արսէն վարդապետը եկեղեցու բեմից քարոզներ է խօսում ժողովրդին՝ օգնել կառավարութեան եւ հասարակութիւնն «ազատել» առաջիկայ աղէտից:

Ընդհանուր մթնոլորտի ճնշիչ տպաւորութեան տակ ժողովուրդն հեռու է փախչում հայդուկներից, երես է դարձնում նրանցից եւ կտրականապէս մերժում է տեղաւորել նրանց՝ իրենց տներում: Շատ դէպքերում Վարդանն ստիպուած է եղել յարմար դիրքեր ունեցող տները բռնի գրաւել, դատարկել տալ եւ յատկացնել հայդուկներին: Դէպքեր են եղել, որ շատ տնատէրեր այդ մասին յայտնել են կա-

ռավարութեան եւ նրա օժանդակութիւնը խնդրել:

Սեպտեմբեր 10–ն է: Ամբերից մէկը՝ Բուլղարացու առաջնորդութեամբ գնում է Արաշունց թաղում: Զօրքերը շրջապատել են տունն ու պահանջում են անձնատուր լինել: Հայդուկները պատասխանում են համազարկով: Սկսւում է կատաղի կռիւը երկուսաեք: Տղաները կռւում են հերոսաբար: Նրանք դիտեն որ ազատուելը դժւար է եւ որ իրենք վճռել են պատժել թշնամուն: Ամէներն անկարող են լինում յաղթել եւ մի քայլ անգամ առաջ չեն շարժւում, որից ստիպւած որոշում են տունը կրակ տալ: Մինչ հակառակորդը պատրաստութիւններ է տեսնում՝ դիրքն այրելու, յեղափոխականները վճռում են մի կողմից կռւել՝ թշնամուն զբաղեցնելու համար, իսկ միւս կողմից էլ՝ պատը ծակել խուսափելու ապագայ վտանգից: Տղաներին իրենց փորձն յաջողւում է, իսկ զօրքի հրամանատարը կարծում է թէ՝ Ֆիդայիներն այրւեցին կրակի մէջ:

Նոյն երեկոյեան, որիկայ հայերի մի խումբ դիմում է վարդանին, պահանջելով թողնել քաղաքը: Վազգէնն ու վարդանը, չնայած սիփով բռնւած են լինում, կարճ խորհրդակցութիւնից յետոյ վճռում են մի օր եւս մնալ քաղաքում, ապա թողնել հեռանալ: Նրանց մի օր մնալը բաղդի արտայայտութիւն պիտի լինէր եւ միաժամանակ զգացնել պիտի տար կառավարութեան, որ անհատ յեղափոխականներին կարող է ոչնչացնել, բայց չեղափոխութիւնը՝ երբէք:

Երկրորդ օրւայ կռւի համար խմբերը տեղապին աշխատանքի մէջ են, ամրացնում են իրենց դիր-

քերն եւ առաջուց պայմանաւորում՝ թէ դիշերը, կուից չեռոյ, ուր պիտի հանդիպեն իրար:

Թուով 52 Դաշնակցական մարտիկները երեք մասի բաժանուում են, որոնցից մէկն ամրանում է կայլենց տան մէջ, երկրորդը՝ կար էմէնց եւ երրորդը՝ Փախչաննենց տունում:

Սեպտեմբեր 11-ն է: Լոյսը բացւելուն պէս հայկական թաղում մեծ իրարանցում է տիրում: կառավարութիւնն էլ նախապատրաստութիւնների մէջ է: Հայերի մի խումբ նորից դիմում է կառավարում վարչանին՝ անձնատուր լինել, բայց կտրուկ մերժում է առանում: Ռուսական հիւպատոսն էլ միջամտում է գործին, իր պաշտպանի միջոցով փափաք յայտնելով անձամբ տեսնուել յեղափոխականների հրամանատարի հետ, բայց մերժում է: Այն ժամանակ ռուս հիւպատոսն հետեւեալ պաշտօնական գրութիւնն է ուղարկում.— «Պարոնայք, Շաքիր փաշան առաջարկում է ձեզ՝ անձնատուր լինել և խոստանում է կեանք պարգեւել ձեզ: Նա ձեզ վրայ պիտի նայի իբրեւ ժողովրդի միջից խռովարարների, եւ ես, ռուսաց հզօր պետութեան հիւպատոս, երաշխաւորում են Շաքիր փաշայի խօսքերը: Այս, ինչ որ գրում եմ, կարող եմ ձեր երեւելիներից մէկի հետ անձամբ տեսնուել եւ խօսել: Երբէք մտքերնիդ չհանէք, որ ձեր այդ վարմունքը շատ անյաջող եւ վնասակար հետեւանքներ պիտի ունենայ թէ՛ ձեզ եւ թէ՛ Վասպուրականի ժողովրդի համար (ստորագրութիւն եւ կնիք)»:

Յեղափոխականներն այդ առաջարկն էլ են մերժում, հաւատ չընծայելով դիւանագիտութեան

ներկայացուցիչների խոստումներին: Կառավարութիւնը, մի բուռն հայերի այդ յանդգնութիւնը տեսնելով, կատաղում է եւ հետեւակ ու թնդանօթաձիգ զինուորներով լեցնում է Այգեստանն ու պաշարում դիրքերը: Առանձին չառապղականութեամբ պաշտօնեաները տների մէջ մէկ տանիքների վրայ դիրքեր են պատրաստում, ահագին քանակութեամբ ռազմամթերք են տեղափոխում եւ մինչ նրանք նախապատրաստական աշխատանքներն են տեսնում, հայդուկների դիրքից առաջին ուժեղ համազարկն է լսուում ու պայթում է մի կատաղի կռիւ: Մի խումբ հայրենասէրների դէմ կառավարութիւնը դուրս էր եկել զինուորներով, կրուպպի թնդանօթներով եւ այդ բոլորը բաւական չէր, թնդանօթների նշանը տալիս էր անգլիական կառավարութեան ներկայացուցիչը, հիւպատոս Վիլիամսը, որին Պետօն իրաւամբ ոստիկան անունն էր տուել:

Գնդակների տարափը տեղում է տղաների գլխին, որոնք ամէն կերպ, չեանուած խիզախութեամբ աշխատում են չետ մղել թշնամուն: Դրութիւնը քանի գնում վատթարանում է. զօրքերին հրաման է տրուած գրոհով գրաւել դիրքերը և այդ էր պատճառը, որ նրանք մի քանի անգամ յուսահատ փորձեր են անում՝ խիտ շարքերով առաջ անցնելու, բայց բազմաթիւ զոհեր տալով՝ ստիպուած են լինում չետ քաշուել եւ պատրաստուել աւելի ուժեղ եւ կատաղի յարձակողականի համար:

Թնդանօթներն իրենց որոշ աշխատանքն են կատարում՝ աւերելով եւ հիմնայատակ քանդելով բազմաթիւ տներ: Նրանց բերանները միշտ ուղղուած են

լինում հայդուկների դիրքերին, որտեղից յուսահատական եւ անհաւասար կռիւ են մղում: Մի քանի ժամ տեւող այդ սոսկալի դիմադրութիւնը ստիպում է կառավարութեան այլ եւս յարձակումներ չկատարել, այլ հեռուից թնդանօթի հարուածներ ուղղել այն սենեակին, ուր կենտրոնացած են հայդուկները:

Րոպէն վճռական է: Խմբապետի հրամանով տղաներից երեք հոգի թօնրան շամփուրներով եւ բահով անցք են բաց անում հարեւան տան պատից: Անցքը մտնելու առաջին փորձը կատարում է կարճկանցի Գրիգորը, զոհ գնալով թշնամու գնդակին: Այն ժամանակ անցքի մակարդակն աւելի ցածրացնում են և մէկը միւսի յետեւից դուրս են գալիս ապահովաբար:

Զօրքը կատաղել է: Նկատելով եւ զգալով զինուորների անճարակութիւնը, հրամանատարը պատուիրում է վերջին յարձակումն էլ գործել, եւ ահա բոլորն էլ «արշ» գոռալով առաջ են նետւում, կոտրատում դռները, կատաղաբար ներս վազում սենեակները՝ սրախողխող անելու խռովարարներին, երբ տեսնում են որ բոլորն էլ խոյս են տուել: Հայդուկները կարողանում են օգտուել հանգամանքից, խոյս տալ եւ դէպի գաւառները գնալ:

Վանայ այս երկրորդ կռիւն էլ ունենում է իր քաղաքական եւ բարոյական ազդեցութիւնը: Եւրոպական թերթերը նորից զբաղւում են Հայկական Հարցով, յիշեցնում են պետութիւններին իրենց խոստումներն ու պարտականութիւնները, չեշտելով որ հայերի մէջ յեղափոխական շարժման առաջն առնել

անկարելի է, մինչեւ որ վերջ չտրուի հայերի վերաբերմամբ կատարուած անիրաւութիւններին:

«Բերլիներ Տագեբլատ»–ին հեռագրում են. «Վանում մեծ խռովութիւններ են տեղի ունեցել. ահագին թուով զինուած հայեր (ըստ լուրի 6,000) յարձակուել են Թրքական բերդապահ զօրքի վրայ եւ ծանրը կորուստ են պատճառել նրան: Վալին հեռագրով մեծ թուով զօրք է պահանջել՝ ապստամբութիւնը ճնշելու համար»:

Ընդամէնը լուրերը չափազանցուած են, բայց այդ նշան է, որ 52 զինուած հայդուկներն էլ՝ իրենց դիմադրութեամբ կարող են որոշ ազդեցութիւն թողնել:

## ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԿՌԻՒ ՀԱՅՈՑ–ՁՈՐՈՒՄ

Վանի երկրորդ կուսից յետոյ հայդուկները բաժանուում են խմբերի, որպէսզի աւելի դիւրութեամբ կարողանան հետք կորցնել: Զանազան ուղղութիւններով գնացող խմբերը պէտք է հանդիպէին իրար Հայոց–Ձորի կէս դիւղի սարում: Իւրաքանչիւր խմբակ իրեն առաջնորդ ունէր: Ճանապարհին, խորին մթութեան ժամանակ, խմբերից մէկը դժւարութիւնների հանդիպում է եւ թշնամու հետ մի քանի ընդհարում ունենում:

Երբ նրանք լուռ ու մունջ քայլելով, դէպի Ս. Աշէ վանքը տանող ճանապարհով առաջ են ընթանում, յանկարծ դիմացի բլրի վրայ ինչ որ սեւ ստւերներ են երեւում: Տղաներից մէկն առանց հրամանի եւ խորհրդի, հրացանն արձակում է, որից յետոյ

խումբն էլ ստիպւած է լինում համաձարկ տալ, որպէսզի թշնամուն դնդակահար անելով՝ հնարաւորութիւն չտան հաւաքի կանչելու: Ընայած խմբի պրած քայլը տակտիկական մի սխալ էր, բայց եւ այնպէս ստիպւած էին դիմադրելու եւ վերացնելու իւրաքանչիւր մի խոչընդոտ:

Կարճ խորհրդակցութիւնից յետոյ, խումբը վճռում է նոյն ճանապարհը չշարունակել, համաբերով բաւականաչափ աննպատատ եւ վտանգաւոր, որովհետեւ քիւրդերն արդէն տեղեկացած կը լինին «հայ դաշնակների» երեւալու մասին: Նրանք փոխանակ հարաւ-արեւմուտք գնալու, ծռւում են արեւելք՝ մի գիշեր Նոր-Գեղի դիմաց անցկացնելու:

Ամբողջ օրը տղաներն առանց հացի եւ ջրի են մնում, անհաց — որովհետեւ քաղաքից չէին կարողացել վերցնել իրենց հետ, եւ անջուր — որովհետեւ չրջակայ ձորերում անհամար քրդեր էին վխտում, որոնց երեւալը՝ կռւի նախադռւռն էր հաչւում: Մի քանի պահապաններ նշանակելով, տղաներն աշխատում են քնանալ, քաղցը մոռացութեան տալու համար, բայց երկնքից տեղացող անձրեւի մանր կաթիլները այս անգամ խոչընդոտ են հանդիսանում: Ինչպէս էլ լինէր, պէտք էր ճանապարհը շարունակել եւ կէսգայ սարը հասնել՝ միւս տղաներին միանալու համար:

Սոված, յոգնած, տեղատարափ անձրեւի տակ, ցեխի կտորները ոտներին կպած՝ նրանք անկարող էին քալել· արագ գնալը դժւար էր, ծանր գնալը՝ վտանգաւոր, եւ ահա նրանք, օգտւելով կէս գիշերի ճօտիկութիւնից վճռում են մտնել մի մարագ եւ քիչ

հանգստանալուց յետոյ ճանապարհ ընկնել:

Առաջին ընտրած մարդը բաւականին անյարմար լինելով, նրանք անցնում են մի ուրիշը, որի մինչի դարմանը յետ-յետ տանելով՝ պառկում են քնանալու:

Սեպտեմբերի 14-ն էր: Լուսաբացին քիչ էր մնացել, երբ մի հայ կին մարդը մանելով տեսնում է պինւած հայերին ու աղերսագին թախանձում. «Ամա՞ն, դուրս եկէք, ես ձեր բազդ, տունս կը քանդէք»:

Հայդուկները աշխատում են նրան հանգստացնել, բայց չի լինում, որից եւ ստիպւած յայտնում են, որ սոված են, եւ անհրաժեշտ է, որ ստանան ուտելու հաց եւ պաշար իրենց՝ հայդուկների համար, երբ եւ կարող կը լինին հեռանալ: Քիչ յետոյ կինը ներս է մտնում 9 հաց բերելով: Երկու օր սոված մնացած 22 հայդուկին 9 հացն ի՞նչ անէր, այն էլ միայն չոր հաց:

Հազիւ նրանք նստել էին հացը բաժանելու, երբ մի պիւզացի ներս է մտնում յայտնելով, որ մատնուած են, որ կառավարութիւնն իրենց տեղը գիտէ, եւայլն: Տղաները չեն հաւատում, հանդիսա նստած են իրենց տեղերը, միաժամանակ չմոռանալով մի պահապան նշանակել՝ մարդի չորս կողմին հսկելու: Դեռ հազիւ էր պահապան պինւորը տեղից չարժւել, երբ մի կարմիր ֆէսաւոր գլուխը ներս է մացընում մեւ փախչում. «բուրդա տըրլար» գոչելով:

Տղաները բնազդմամբ վեր են թռչում իրենց տեղերից, հրացաններն առնում, երբ եւ լսւում է խմբապետի խրոխտ հրամանը. «Տղե՛րք, ել-

նենք»: Բոլորի հրացաններն էլ որոտում են, իսկ լռենք էլ դէպի դուռը վազում: Ամենից առաջ դուրս թռնողն է լինում զարաբաղցի Մէչօն, որը եւ թըշնամու գնդակին զոհ է գնում: Նա ընկնում է ձեռքը կրծքին դրած, անշարժ եւ արիւնլուայ: «Մէչօն ընկաւ» լինում է բոլորի հառաչանքն ու սոսկալի կուի նշանաբանը: Կատաղի յարձակումով դուրս են թըռչում հայդուկները կայծակի արագութեամբ աջ ու ձախ համազարկեր են տալիս, եւ չփոթեցնելով թըշնամուն, կուելով ցած են իջնում դէպի Անգղ (Մօլաբ) գետի կամուրջը:

Ցիսունի չափ զինուորներ դիրք էին բռնել մարագի չորս կողմը եւ սպասում էին «զաչախների» դուրս ելնելուն, բայց չարաչար նրանց անվախութիւնից եւ անփութութիւնից, չեն կարողանում ոչ ոքի վնասել:

Մի քիչ հեռաւորութեան վրայ մերոնք դիրք են բռնում կրակելու թիկունքից, երբ յանկարծ նկատում են, որ մարագից ելել են միայն ընկերների մի մասը: Ի՞նչ անել: Այդ նոյն ժամանակ կառավարութեան զինուորներից մի մասն չտապում է կամուրջը գրաւելու, որով տղաների դրութիւնն աւելի վտանգաւոր կը դառնար. ուստի առանց երկար խորհելու գրաւում են կամուրջը՝ միաժամանակ կուի մղելով հակառակորդների դէմ: Պէտք էր չարունակել դիմադրութիւնը մինչեւ միւս տղաներն էլ ելնէին և ապա միացած ուժով աշխատէին յետ մղել աւազանի ծառաներին:

Կամուրջի յետեւի մասում, դաշտի մէջ մի բլուր կայ, որ ուղիղ նայում է թէ՛ գիւղին եւ թէ՛ հայդուկ-

ների Թիկունքին: Ձիաւոր քրդերն շտապում են այդ դիրքը գրաւելու, որից յետոյ շրջապատած կը լինէին Ֆիդայիներին՝ ամէն կողմից: Ազատուած խումբըն առաջ վազելով բարձրանում է բլուրը՝ յետ մղելով քրդերին: Բոլոր տղաներն էլ ոգեւորուած են, մոռանում են քաղցն ու յոգնածութիւնը. Նրանց մըտահոգութեան միակ առարկան մարագում մնացած ընկերներն են:

Ոստանի եւ շրջակայ գիւղերից բազմաթիւ ձիաւոր եւ հետեւակ քրդեր խուռն հասարի են գալիս եւ շրջապատում բլուրը, գրաւելով Ղզլ-Դաղի բոլոր քարերը, դիրքի հարաւ-արեւելեան եւ արեւմտեան ձորերը: Խմբի միւս մասը մարագում պաշարուած է մնում: Կամրջի վրայի Թիւրք զինուորներն էլ յետ դառնալով միանում են իրենց ընկերներին ու սկսւում է միահամուռ յարձակում՝ պաշարուածների վրայ: Րոպէն վճռական էր, և պէտք էր մի ելք գտնել ազատւելու համար, եւ ահա նրանք, դռնից ելնելը վտանգաւոր համարելով, վճռում են պատը ծակել եւ այնտեղից դուրս թռչել դէպի կամուրջը:

Այդ նրանց փառաւորապէս յաջողւում է եւ արդէն մօսինների ձայնն իմաց է տալիս ընկերներին, որ մարագի տղաները ողջ եւ առողջ են: Քիչ յետոյ նրանք արդէն կամուրջի վրայ են եւ շտապում են դէպի բլուրը: Առանց իմանալու թէ ո՞ւր են ընկերները, նրանք շարժւում են դէպի քրդերը, որոնք արդէն շրջապատել էին բլուրը: Պէտք էր մի կերպ իմաց տալ, որ ճանապարհը փոխէին, այլապէս առանց բացառութեան, բոլորն էլ զոհ կ՚երթային:

Բլուրի վրայ գտնուողներն սկսում են բարձր ձայ-

նով կանչել, սուլել, եւ երբ այդ էլ չի օգնում, մի քանի անվախներ դիրքից ելնում են, աւելի մօտենում վտանգուածներին ու տոպրակներն են ցոյց տալիս: Նրանք նկատում են այդ եւ ճանաչում: Իմանում են իրենց ընկերների տեղը, շտապում այդ ուղղութեամբ, անդադար կռիւ մղելով թշնամիների դէմ: Բլրի վրայից էլ տղաներն յետ էին մղում քրդերին՝ պաշտպանելով իրենց ընկերների ճանապարհը: Քիչ յետոյ նրանք «ուռա»ներով իրար են հանդիպում. դիրքերի վրայ այժմ 20 կռուող կար:

Թիւրք գլխաւորները, միացած քրդերին, աշխատում են բլուրը գրաւել, բայց 2500 ոտի վրայ ձըգող մօսինների գնդակները յետ են մղում նրանց: Կռիւն արդէն սաստկանում է: Մութն արդէն վրայ է հասնում եւ թշնամին, ըստ սովորութեան, աշխատում է իր վերջին ճիգը թափել: Այս անգամ էլ նրանց չի յաջողւում առաջ շարժուել:

Չորս կողմը տիրում է լռութիւնը: 8½ ժամ անընդհատ կռիւը յոգնեցրել էր տղաներին բայց չուսահատեցնել՝ երբէ՛ք: Նրանք վճռում են խուսափել այդ տեղից եւ այդ պատճառով էլ կամաց-կամաց իջնում են ձորը, նստում մի առւակի մօտ, իրենց ծարաւն յագեցնում ու որոշում բարձրանալ Արտօս, այնտեղից էլ Շատախ անցնելու:

Մինչ տղաները խորհրդակցում էին իրենց ապագայ անելիքների մասին, յանկարծ մօտիկուց ձիանների դոփիւն է լսւում: Ձիաւորները գալիս էին դէպի յեղափոխականները. այլեւս սպասելու ժամանակ չէր, պէտք էր համադարկով վերջ տալ եւ այդ վտանգին:

Գիշերային մթութեան մէջ լսւում են գնդակների սուլոցը: Թշնամին իր հերթին համազարկ է տալիս, որից ղարաբաղցի Նիկօլան, որ առաջ Հնչակեան կուսակցութեան էր պատկանում, զոհ է գնում:

— «Տղե՛րք ջան, ես ընկայ, կեցցէ Հայաստան», կանչում է նա խզուած ձայնով եւ ընդմիշտ լռում:

Զինւորները չեն կարողանում յառաջանալ: Նրանք արդէն ընկել էին՝ հայդուկների գնդակներից: Այս դէպքից յետոյ խումբն անմիջապէս շարժւում է դէպի Արտօսի գագաթը, ուր աւելի ապահով էր, եւ որտեղ կարելի էր մտածել յետագայ անելիքների մասին:

Ողբալի էր տղաների դրութիւնը. երրորդ օրն էր հացի երես չէին տեսել. Կէսի 9 հացն էլ մնացել էր մարագում: Նրանք փորձում են գարու հասկեր մաքրել և ուտել, բայց անյաջող է անցնում այդ փորձը և ստիպուած են լինում ստամոքսները լցնել՝ սինձ եւ աւելուկի թեւեր ուտելով: Հետեւեալ գիշերը նրանք հասնում են մի հայաբնակ գիւղ, ուր մի քանի գարի հացով իրենց քաղցն են յագեցնում:

Մի քանի օրից յետոյ նրանց մօտ սուրհանդակ է գալիս՝ Վարդանի զինւորներից մէկը՝ Նախօն: Խումբը վերադառնում է նորից Վարագ, մարդ է ուղարկում Վան, որտեղից բաւականաչափ թւով ոտնամաններ եւ հաց են բերում, որոնցով պարենաւորւում են տղաներն ու ճանապարհ ընկնում դէպի սահմանագլուխ: Երկու օրից յետոյ նրանք հասնում են Ախուռկայ լեռները, ուր եւ ունենում են մի այլ ընդհարում:

ԱԽՈՌԿԱՑ ԿՌԻՒԸ

Վանից նոր ընկերներ աւելանում են խմբին, եւ այժմ 31 հոգով ճանապարհ ընկնում շատ արագ, որպէսզի կարողանան ցերեկւայ դիրքին հասնել: Ախոռկայ լեռների մէջ, առաւօտեան լուսաբացին մօտ, առաջապահներին մի քիւրդ է պատահում, որն հետաքրքրւում է այդ զինւած մարդկանցով եւ պատասխան է ստանում որ «ասկեար» են: Հայդուկների այդ պատասխանը բաւականաչափ անուժ էր քրդին համոզելու եւ միայն յետոյ են զգում իրենց սխալը, որ պէտք էր ոչնչացնէին այդ մէկին, որը կարող էր հաւաքի կանչել շրջակայ քիւրդ ցեղերին:

Տղաներն սկսում են աւելի արագ քայլել եւ ճանապարհը չեղել: Ծուտով նրանք Ախոռկայ լերան ստորոտումն են եւ որոշած են գագաթը բարձրանալ, երբ ուղեցոյցն յայտնում է որ այս վայրն ապահով է, մարդկային երթեւեկութիւն շատ քիչ է լինում և ուր կարելի է քիչ չունչ առնել: Հանդըստութեան կարօտ եւ 15 օր տաժանելի թափառումներ կատարող խումբը լսում է վալադին, բարձրանում է մի քիչ աւելի վերեւի մասը, մտնում է քարանձաւն ու աշխատում է թրջւած լաթերը չորացընել:

Երկու ժամից յետոյ նրանք ձոր են իջնում, կըրակ են վառում՝ տաքանալու համար: Խմբի մտադրութիւնն այն էր, որ գիշերն այդ սարերի լանջերին անցկացնեն, որի համար էլ մի քանի ընկերներ են ուղարկում այրեր և խոռոչներ գտնելու, որ-

պէս բնակավայրեր:

Մինչ նրանք այսպիսի պատրաստութեան մէջ են լինում, յանկարծ «հօ՛յ, հօ՛յ» խառն ի խուռն աղաղակներ են լսւում: Ձիաւոր զինուորները սփռւել էին դիմացի սարերի վրայ: Լաւ էր որ նրանք աղմուկ հանելով են բարձրացել, այլապէս կարող էին շրջապատել հայդուկներին՝ ձորի մէջ եւ բոլորին էլ կոտորել: Երբ այդ ձայները լսում են բոլոր տղաները, իսկոյն վեր են թռնում տեղերից, պատրաստութիւն են տեսնում դիրքեր գրաւելու, առաջուց մի քանի մասի բաժանւելով: Նոյն ժամանակ անձրեւն սկսում է տեղալ, եւ չնայած բնական այդ արգելքին, մերոնց յաջողւում է դիմացի լերան գլխին չորս դիրք բռնել՝ ուղիղ թշնամիների դէմ:

Սկսւում է կատաղի կռիւը: Երկու կողմի հրացաններն էլ որոտում են եւ դղրդեցնում սարեր ու ձորեր: Գնդակները շատ անգամ գարնւում են ապառաժներին, ահարկու ձայներ հանելով: Կատարեալ կռիւ է, որի երաժշտութեան ներքոյ յեղափոխականներն աւելի ոգեւորւած եւ հսկայ թափով պատասխանում են թշնամիներին: Նրանք մոռացել են ամէն ինչ — քաղց, յոգնածութիւն, ոգեւորւած են ու անդադար ազգային երգեր հնչեցնելով՝ յետ են մղում թշնամու յարձակումները: Քրդերը թաքնւելով քարերի յետեւում, չէին համարձակւում իրենց գլուխները դուրս հանել, վախենալով Ֆիդայիների անշեղ գնդակներից: Մօսինների սարսափ ազդող գնդակները ձիաններից վար են գլորում թիւրք զինուորներին, որոնք եւ պատրաստութիւններ են տեսնում յետ նահանջելու:

*Մութը վրայ է հասնում: Հայդուկները պատրաստւում են վերջին հարուածը տալու, որից յետոյ բոլորովին ապահով պիտի լինէին իրենց ճանապարհը շարունակելու: Չորս դիրքերի վրայ էլ բոլորը կազմ ու պատրաստ են:*

*— Տղե՛րք ջան, ձայն է տալիս խմբապետը, մի քանի շաբթւայ ընթացքում անընդհատ կռիւներ ենք ունեցել եւ միշտ էլ յաղթական դուրս եկել: Ունեցել ենք մի քանի նահատակ ընկերներ, որոնց թարմ շիրիմները վրէ՛ժ, վրէ՛ժ են կանչում:*

*— Վրէ՛ժ, վրէ՛ժ, լսւում է չորս կողմից ու երեք տասնեակ հայդուկները կարողանում են փախուստի մատնել հարիւրաւոր թշնամիներին:*

*Ամբողջ օրւայ կռւի ընթացքում տղաներից եւ ո՛չ մի զոհ չի լինում, մի կաթիլ արիւն չի թափւում, իսկ թշնամին ունենում է* 12–14 *զինւոր եւ մի միլազիմ սպանւած:*

96 *թւականն ենք փակում:*

*Հայկական կոտորածներից յետոյ հայ ժողովրդի վրէժն էր լուծւում եւ այդ էր պատճառը, որ Ֆիդայու անունով էին երդւում հայ գիւղացիները, նրա գովքն էին անում հայ աշուղները, քրդերն էլ երգ էին յօրինում եւ միաժամանակ սարսափում գիշերային այդ ոգիներից, որոնք անհամար կռիւների մէջ էին անցկացնում իրենց կեանքը:*

*Նրանք մոռցած էին տուն ու տեղ, քուն և հանգիստ, մշտապէս ենթակայ էին քաղցի, ծարաւի, անհանգստութեան, շատ անգամ առանց օթեւանի՝ լեռներում, ձորերում և միշտ, ամէն րոպէ պատրաստ դիմագրաւելու թշնամուն, ընդունելու թէ՛*

նրանց պնդակը և թէ՛ բանտի չարչարանքները:

Նրանք նման էին Բօանիայի ուսիկներին, Յունաստանի կլէֆտներին, Բուլղարիայի հայդուկներին, որոնց բոլորի նպատակն էլ մէկ էր՝ ազգի եւ հայրենիքի ազատագրումը եւ միջոցն էլ մէկ՝ կռիւ եւ անդադար կռիւ:

Հայ իրականութիւնն էլ կարողացել է առեղծել մի տիպ, որ հայ ժողովրդի մարտական ընդունակութիւնների ներկայացուցիչն է ու գործադրողը:

Դա՝ անվախ Ֆիդային է:

## ՍՈՂՈՐԴԻ ԿՈՒԻԿԸ

Բաղէշի չրջանն էլ վերադարձած է: Ալաթ գաւառի յեղափոխականների մի խումբ՝ Աղբիւր— Սերոբի գլխաւորութեամբ ահ ու սարսափ է տարածել կառավարական չրջանակների վրայ: Նա ամէն օր փոխադրւում է մի գիւղից մի ուրիշը, պաշտպանելու համար աշխատաւոր հայ գիւղացիութեան՝ քրդո-թրքական յաճախակի չարճակումներից եւ թալանից: Աղբիւրն իր հայրենասիրական գործունէութեամբ լայն համակրանք էր ձեռք բերել ժողովրդի մէջ եւ մինչ էլ հալածանքի էր ենթարկւել՝ կառավարութեան կողմից: Բազմաթիւ պաշտօնեաներ եւ լրտեսներ իրենց չատուկ նպատակ են ունեցել ձերբակալելու այդ հերոսին՝ իր խմբով, բայց մինչ դատարկաձեռն են մնացել:

Կառավարութիւնն անկարող է լինում առանձին իրագործել իր ցանկացածը, նա դիմում է հայերի

*օգնութեան, որոնց մէջ մի քանի տուր անհատներ մինչ պատրաստ են լինում՝ նպաստելու, որպէսզի այդ «վտանգաւոր» յեղափոխականը ձերբակալուի:*

97 թուականն է: Փետրուար 27-ին, Աղբիւրի նախկին ընկերներից Գրիգոր Վարդանեանը եւ ուխտաղանց Պօղոսը յայտնում են կառավարութեան, որ Սերոբ վաչան գնում է Թեղուտ գիւղում՝ մեկնակ: Այդ լուրն առաջին անգամ ստանում է Ղլաթի գայմագամը, որն եւ 30 զինուոր է ուղարկում յիշեալ գիւղը, խստիւ պատուիրելով, որ աշխատեն Աղբիւրին ձեռք ձգել քաղցրութեամբ, հանդարտութեամբ, հակառակ դէպքում՝ մեռնիլ կամ մեռցնել: Զինուորները չրջապատում են Թեղուտ գիւղը, անց ու դարձն իսկոյն դադրում է: Հարիւրապետը պահանջում է գիւղացիներից, որ յեղափոխականների գլխաւորին իրեն յանձնեն, հակառակ դէպքում սպառնում է գիւղը տակն ու վրայ անել: Նրան պատասխանում են, որ այդպիսի մարդ չկայ, որ իր վնտռած մարդը իրենց գիւղում չէ· բայց ղօրքի գլխաւորը հաւատ չի ընծայում: Նա հրամայում է իսկոյն խուզարկութեան ենթարկել տները, ձեռնել մի քանի նշանաւոր մարդկանց, կարծելով թէ՝ այդ մէջոցով կարող կը լինի գտնել թաղստեան տեղը: Բոլոր որոնումներն ի զուր են անցնում, որովհետեւ քաջարի հայդուկը մի օր առաջ կարողացել էր անցնել Սողորդ գիւղը:

*Զինուորներն իսկոյն երկու մասի են բաժանուում, որոնցից մէկն անմիջապէս ուղեւորուում է դէպի Սողորդ, հաւատալով որ այնտեղ պահուած կը լինի:*

Թեղուտի ընկերներից մի ազնիւ երիտասարդ, զգալով Աղբիւրի գլխին գալիք վտանգը, գիշերով վազում է դէպի Սողորդ եւ առաջուց յայտնում եղելութիւնը: Մռնչում է Խլաթի Հսկան, զէնքերն իր վրայ է կապում և պատրաստւում է խուսափելու, երբ յանկարծ իրեն շրջապատւած է տեսնում: Չցանկանալով անձնատուր լինել, նա որոշում է միայնակ շարունակել դիմադրութիւնը: Չորս կողմն ընկերներ չկային, որ իրեն օգնութեան հասնէին եւ այդ պատճառով էլ ուժեղ դիմադրութիւն է ցոյց տալիս, յետ մղում թշնամիներին եւ միաժամանակ կամաց-կամաց դէպի Ներքովթաղ սարը բարձրանում: Աղբիւր-Սերոբը, գիւղը աւերածի չմատնելու նպատակով, գընդակներն արձակում էր՝ միայն թշնամուն վախեցընելու եւ ո՛չ թէ սպանելու դիտաւորութեամբ: Բայց տեսնելով նրանց յամառ դիմադրութիւնն ու հետապնդումը, դառնում է զինւորներին եւ ասում. «Ամօ՛թ ձեզ, որ այդչափ բազմութեամբ ետեւէս ինկած էք: Տեսա՞ք թէ որչափ փամփուշտներ վառեցի ձեր դէմ, բայց նպատակ չունէի սպանելու ձեզ. սակայն քաջ գիտցէք, մինչեւ վերջին շունչս, ցորչափ արիւնը կը դառնայ երակներուս մէջ, ճիգ պիտի թափեմ այլ եւս սպանելու ձեզ. տեսնենք ձեզմէ ո՞րը պիտի կրնայ ազատւիլ իմ գնդակներէս»: Եւ քաջ հայդուկն իր անշեղ գնդակների տարափը տեղալով թըշնամուց մի քանի հոգի կը վիրաւորէ: Այդ դէպքը սարսափ կ'ազդէ իրեն հետապնդող զինւորներին: Նրանք չէին սպասում թէ խօսքից այդքան շուտ կարող է գործի անցնել, որի համար էլ հրամանատարը

*պատուիրում է.— «Դարձէ՛ք, դարձէ՛ք, այս մարդը մեզմէ մէկը չթողուր»:*

*Աղբիւրը կամաց-կամաց դէպի Ներքովթայ գագաթն էր բարձրանում: Փչում էր սաստիկ ձիւնախառն քամի, որը դժուարացնում էր վերելքը, չնայած դրան, և այն խոչընդոտներին, Սերոբի աչքերը արդէն ձիւնահար էին եղել (ձմէթ), բայց ամպը պատելով լերան գագաթը, կարողանում է իր գրկի մէջ առնել այդ հալածական հայրենասէրին ու ազատել թշնամուց:*

*Ցիմար տաճիկ զինուորները, այդ դէպքից յետոյ Դատւանէն Ներքովթ են նայում միշտ եւ հեռուում, սարի բարձունքների վրայ սև կէտեր նշմարելով իրար ցոյց են տալիս ասելով* «պաք, կեավուր նէ՞րէտէ տուրմուշտուր» *(նայի՛ր, անհաւատը ո՞րտեղ է կեցած):*

*Պարտուած պետական զինուորները չկարողանալով ձերբակալել իրենց որսին, կը վերադառնան գիւղ, կը յարձակւին Աղբիւրենց տան վրայ, կը ձերբակալեն մեծ եղբօր Մխիթարին եւ եղբօրորդի Սօգոյին եւ կ՚առաջնորդեն նրանց դէպի բանտ:*

## ՍՊԱՀԱՆ ԼԾԻ ԿՌԻՒԸ*)

*Պարսկաստանի Փայաջուկ գիւղի շրջակայքում Խանասորայ արշաւանքի պատրաստութիւններն էին տեսնում: Նախ քան այդ մեծ յարձակողականն*

*) *Պատմեց՝ Սահակ Աւետիսեանը, Ղզլդաշ գիւղացի, որ անձամբ մասնակցել է այս կռւին:*



ՎԱՋԳԷՆԻ ԽՈՒՄԲԸ

սկսելը, վճռուած էր երկու խումբ ուղարկել Երկրի
ներսերը՝ Վանայ եւ Մուշի շրջանի ժողովուրդին
պաշտպանելու համար, որպէս սահմանակից եւ
վտանգին ու արշաւանքին աւելի մօտիկ վայրեր:

Խումբը, բաղկացած 40 հոգուց, յուլիսի 18–ին,
գիշերուայ ժամը 12–ից յետոյ ճանապարհ ընկաւ: Ա-
մէն մի հայդուկ զինուած էր մօսին հրացանով, ունէր
վեց հարիւր փամփուշտ, խէնչալ եւ դանակ: Իւրա-
քանչիւրն ունէր ջրաման եւ հացի տոպրակ, որի մէջ
տեղաւորուած էին 5–6 բաղարջ, հալւա, քիշմիշ, թել,
ասեղ եւայլն: Իրենց հետ ահագին քանակութեամբ
դեղօրայք ունէին, որ գտնւում էր Գուրգէնի մօտ:
Բացի այդ իրենց հետ երկու բեռնակիր ձի էին տա-
նում՝ բարձած մօսինի փամփուշտներով: Խումբն
յանձնուած էր Վազգէնին եւ Գուրգէնին: Խմբի մէջ
էր գտնւում և հերոս Անդրանիկը, այն ժամանակ
պարզ եւ ոգեւորուած պատանի:

Ամբողջ գիշերը ճանապարհ քայլելուց յետոյ,
նրանք հասնում են Խոյի դիմաց գտնուած լերան փէ-
շերին, ուր եւ իրենց հանգիստն են առնում: Նախ
քան այդ՝ մարդ են ուղարկում մօտակայ գիւղը, բե-
րել են տալիս սեխ, ձմերուկ, ուտում են եւ ապա
երկու պահապան նշանակելով՝ իրենք անուշ քը-
նում են: Միւս օրը երեկոյեան դէմ, դեռ արեւը մայր
չմտած, նրանք ճամբայ են ելնում ու Մակուի սահ-
մանին չհասած հանդիպում են մի դժուարանցանելի
կիրճի, որի մօտ ձիաներից մէկը գետին է գլորւում:

Վազգէնի հրամանով մի քանի հոգի մնում են՝
որ ձին բարձրացնեն, բեռը շտկեն, ապա իրենց հաս-
նեն: Մնացողներից մէկը, Սերոբի զինուորներից Սի-

ման անունով (Վանի Այգեստանից), մի քարի տակ է մտնում, հրացանը գրկում, սպասելով որ մեւս ընկերները աշխատանքը վերջացնեն: Այդ դրութեան մէջ էլ քնանում է: Ընկերները վերջացնելով աշխատանքն ու առանց իմանալու թէ երրորդն էլ կայ, առաջ են չարժւում՝ որոշեալ տեղը հասնելու համար: Երբ սրանք հասնում են խմբին, նոր պարզւում է որ մէկը պակաս է: Վաղդէնի հրամանով մի քանի անգամ հրացան են պարպում, որպէսզի կորսւած ընկերը ուղղութիւնը կարողանայ որոշել:

Ապարդիւն: Այդ ժամանակ երկու վալաղ՝ Աւօն եւ Շահէնը ուղարկւում են դէպի կիրճը՝ ընկերոջ գտնելու եւ վերադառնալու Թադէոս Առաքելոց վանքը, ուր խումբը մի քանի օր հանգիստ պիտի առնէր:

Վալաղները յետ կը գառնան, կը փնտռեն, կը կանչեն և գատարկաձեռն դէպի վանք կը վերադառնային, երբ ճանապարհին հանդիպում են Սիմոնին, որ իր կարճատեւ մնայնակ կեանքի պատմութիւնն հետեւեալ կերպով է ներկայացնում—.

«Քարի տակ նստել էի քիչ հանգստանալու: Ջը դիտեմ ինչպէս քնացայ: Միայն այն ղղացի, որ արեւն այրում է ինձ: Ելայ եւ տեսայ տղաները չկան: Մելտարի պէս ամէն կողմ վազեցի, փնտռեցի, կանչեցի, բայց անօգուտ: Ճանապարհւեցի դէպի հիւսիս եւ երկու թիւրքի պատահեցի: Նրանք վախից փախուստի դիմեցին, բայց իմ գործնական սպառնալիքներից՝ կանգն առան: Հասկացրի, որ ռուս դեր-Հիւպատոսի փոստատարն եմ եւ նամակ եմ տանում — Մակուի խանին. խնդրեցի նրանցից, որ ճանապարհը ցոյց տան: Մի դիշեր լաւ հիւրասիրւելուց

*չեռուչ ճամբայ ընկայ եւ պատահեցի երկու վալաղ ընկերոջ, որոնց հետ եւ վերադարձայ Առաքելոց վանքը»:*

*Երեք օր խումբը վանքում մնում է: Այդ ժամանակ այնտեղ է գալիս Հնչ. Փարամազի խումբը, թեւավ քառասուն հոգի: Տեղի է ունենում խմբապետների՝ Վարդանի, Գուրգէնի եւ Փարամազի միջեւ խորհրդակցութիւն՝ վճռելու թէ ինչպէս պիտի այդքան մեծ խմբով անցնեն սահմանը: Երկար խօսակցելուց յետոյ նրանք գալիս են այն եզրակացութեան, որ քանի Դաշնակցական խումբն իր հետ վալաղներ ունի, ամենից առաջ սահմանն անցնի, մինչեւ Բերկրի գաւառի կիւր Զոր գիւղը, որտեղից եւ վալաղները պիտի վերադառնան ու Հնչակեաններին առաջնորդեն: Տղաները ճամբայ են ելնում եւ մի քանի օրն հասնում են Մակուի Կալանիի կոչուած գիւղաքաղաքի վերեւի չրջանը, ուր աղլ կար (ոչխարներ պահելու տեղ): Բոլորն էլ ներս են մտնում: Շուտով դրսից ինչ որ սարսափելի ձայներ են լսուում, զնդակների սուլոմներ եւ տղաները պատրաստուում են դուրս ելնելու, երբ եւ պարզուում է երկնքի որոտումը: Նոյն այդ ժամին վաղդէնն հանում է իր ժամացոյցն ու յայտնում, որ հէնց այդ րոպէին տղաները կրակ են տեղում Շարաֆի բէկի ցեղի վրայ եւ կռուում քաջաբար: Բոլորի դէմքի վրայ էլ ուրախութեան նշաններ են երեւում եւ կռւի ծարաւ հայդուկները «կեցցէ՛» են գոռում:*

*Այդ օրն աղլ-ում հանգստանալուց յետոյ, նրանք երեկոյեան դէմ ճամբայ են ելնում: Գիշերային մթութեան մէջ վալաղներն անգամ անկարող են լի-*

*նում չիտակ ճամբով գնալու եւ ահա նրանք դէմ յանդիման են ելնում արագացիներին — վրանաբնակ քրդեր — որոնց հետ ընդհարումն անխուսափելի էր, երբ միայն յանկարծ «հրաշք»ով երկինքը չպատէր մառախուղով եւ իրենց չբաժնէր քրդերից:*

*Մի սարի լանջով ճանապարհը շարունակւում են. իսկ հակառակ կողմում արագացիների վրաններն են: Շներն արդէն հոտն առել էին, անդադար հաչոցով տղաների վրայ էին յարձակւում: Սարի փէշերը փոքրիկ քարերով ծածկւած էին, դժւարանցանելի և վտանգաւոր էին: Քայլելու ժամանակ քարերն անդադար ներքև էին թափւում, ուր ոչխարների հօտ ու հովիւներ կային, որոնք և կարծելով թէ անցնողները աւազակներ են՝ աննպատակ հրացան էին պարպում, որ բարեբաղդաբար ո՛չ մի վնաս չհասցրեց տղաներին: Ճանապարհը քիչ շարունակելուց յետոյ տղաները տրտունջ են յայտնում այդ կեանքի համար, պատճառաբանելով՝ թէ լաւ է քիչ աւելի հանգիստ ճամբով գնալ, կռւի բռնւել, մեռնել, քան այս դժւարին լեռներում առանց կռւի զոհ գնալ: Շատերը գլորւում էին, կորցնում հրացանների չիչերը, քայլում էին ջրի միջից: Անոնք այդ վիճակը անտանելի գտնելով՝ վճռում են ճանապարհը փոխել և շուտով սահմանն անցնել ու մտնել Աբաղայի դաշտը: Առաւօտեան դէմ հասնում են Ալի-Բեալայ լեռը, որ գտնւում է Աբաղայի դաշտի մուտքի մօտ և որի ստորոտում գտնւում է հայաբնակ Խաչան գիւղը, որտեղացի էր և Վալադ Շահէնը: Վերջինը խնդրում է Վազգէնին թոյլ տալ գիւղն իջնելու, իւրայիններին այցելելու եւ միաժամանակ հացի պատրաստու-*

եւ պահւելու համար յարմարաւոր քարեր: Երեք հոգի քրդերից գաւեցան եւ դէպի այդ քարերն եկան՝ գրաւելու, բայց հայդուկները նրանցից երկուսին դեռին գլորեցին, իսկ միւսին յաջողւեցաւ՝ չանը-ման չորս թաթերի վրայ քալելով հասնիլ քարի յետեւն ու դիրք բռնել: Այդ միակ մարդուն պահպանելու եւ նրա շարժումներին հետեւելու համար նըշանակւում է Սահակը:

Զանազան դիրքերում կռիւը շարունակւում է: Քիչ յետոյ տղաները յայտնում են Սահակին, որ դէպի իր դիրքը արշաւողներ կան: Երբ Սահակը դառնում է ձիաւորներին հալածելու, նրան յայտնում են.— Սահակ, մարդդ փախաւ:

— Նա իմ ձեռքից չի փախչի, սեփականութիւնս է, ասում է եւ զնդակի մի հարւածով դեռին գլորում:

Թշնամու շարքերում երեւում են մի քանի կանայք, որոնք իրենց ամուսիններին օգնութեան են հասնում՝ վիրափուչներ մատակարարելով: Հայդուկների մի քանի զնդակները, ուղղւած կանանց, ստիպում են նրանց փախչել: Կռիւը կատաղօրէն տեւում է մինչեւ երեկոյ: Առանձնապէս աչքի է ընկնում Գուրգէնը, որ քաջաբար էր կռւում եւ դիրքից-դիրք վազելով՝ ոգեւորում տղաներին: Քիւրդերն արդէն ուժասպառ էին, անկարող էին առաջանալ եւ վնաս հասցնել հայ ֆիդայիներին: Տղաները խօսում էին քրդերի հետ եւ ծաղրում նրանց քաջութիւնը, յայտնելով որ իրենք պատրաստ են երեք օր ու գիշեր էլ կռւել եւ ապա միայն մեռնել:

Քրդերն զգալով այդ բոլորը, շատ անգամ գո-

*չում էին.*— «Բասա, բասա․ ռաբըն հարըն, մը թըռ խօլ պըվօրա թընա․ վօ մէրի մա դալան․ տօ վէ մը բըր հան, ռաբըն հարըն»...

*(Հերիք է, հերիք է, ելէք գացէք․ մենք ձեզ հետ գործ չունենք, դու մեր մարդկանց սպանեցիք, մեր սերմը կորեցիք, ելէք ու գացէք):*

*Քրդերից սպանուեցան* 10–12 *հոգի, իսկ հայդուկներից եւ ո՛չ մի գոհ:*

*Մութը վրայ էր հասնում: Իրենց վերջին յարձակումն էլ ապարդիւն է անցնում, որից սոսկացած կամաց-կամաց յետ են նահանջում, սարի լանջերն ու ճանապարհները թողնելով հայդուկների տրամադրութեան տակ:*

*Այդ կռուի մէջ աչքի էր ընկնում Ե՛ւ Անդրանիկը՝ իր համարձակ եւ անվախ յարձակումներով: Նա դեռ երիտասարդ էր եւ նոր յեղափոխական ասպարէզ մտած: Միշտ բոլոր ընկերներին անտրտունջ ծառայութիւն կ'անէր — հաց կամ ջուր հասցնելով իւրաքանչիւրին: Նրա այդ համեստ եւ խոհեմ բնաւորութեան համար բոլորն էլ սիրում էին:*

*Գիշերուայ մթութիւնից օգտուելով խումբն առաջ շարժուեցաւ դէպի Ջորձոր գիւղը, որի ճանապարհի վրայ գտնւում է Բէչ-Բարմաղայ (հինգմատեան) այնքան նեղ ու անանցանելի կիրճը, որտեղից անցնելով ապահովարար հասան գիւղն ու մտան Մելօի աչգին, ուր եւ պառկեցին՝ հանգստանալու:*

*Շուտով կանչուեցաւ Մելօի տղայ Մարկոսը, որին Վազգէնը պատուիրեց հանգստանալու տեղ պատրաստել: Մարկոսը, որ մեր ընկերներից էր, խորհուրդ տուաւ գիւղում չմնալ, որովհետեւ Սպահան*

լճին չատ մօտ է : Ինքն անմիջապէս պինւեցաւ եւ տըղաներին առաջնորդեց դէպի մօտակայ լեռները, որտեղ քանդւած վայրեր չատ կան՝ թագնւելու և հանդըստանալու համար :

Նա չուտով վերադարձաւ գիւղ եւ անմիջապէս հայդուկների համար ուղարկեց հաց, փոխինճ, եւ րեք հատ էլ խորոված գառ եւայլն :

Երբ գիշերը վրայ հասաւ, բոլորն էլ պատրաստ էին ճամբայ ընկնելու : Վալադներն յայտնեցին, որ ճամբու վրայ մի Թրքական գիւղ կայ, որի միջով պիտի անցնել : Մարի անդամներից կեսարացի Մուկուճը առաջ անցաւ եւ խնդրեց Վազգէնից հրամանատարն իրեն նշանակել՝ գիւղի միջով անցելու ժամանակ :

— Ես պիտի գառնամ իւզբաշի, դուք էլ զինւորներ :

Վազգէնն համաձայնեցաւ : Նա անցաւ կազմ ու պատրաստ խմբի առաջ : Գիւղի շները վրայ հասան : Մուկուճն հրացանի կոթով զարնեց շներից մէկին :

— Ի՛նչ, ո՞վ է այդ :

— Օղլա՛ն, անշնորհք, չե՞ս իմանում որ կառավարական զինւոր է անցնում, ինչո՞ւ շներին չես պահում :

— Աղա ի՞նչ իմանամ : Նեբոզ եղիր : Ո՞ւր էլ գնում :

— Օղլա՛ն, չես իմանում որ վան կուիւ կայ հայերի հետ եւ գնում ենք նրանց վրայ :

— Ուղուրլար օլսըն — յաջողութիւն ձեզ...

Մուսըն անվատանգ անցաւ դէպի առաջ : Նոյն

երեկոյեան տղաներն Հասան Կոուց անապատ, որտեղից քան Հոգլի Գուրգէնի առաջնորդութեամբ անցան Բաղէշ՝ Սերոբին միանալու, իսկ միւսները Վազգէնի հրամանատարութեամբ Վան մտան:

### ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱՒԱՆՔԸ

97 թուականն էր: Յուլիսի 21-ին բոլոր խմբերը կազմ ու պատրաստ էին եւ առաջուց տասնեակների, չյոնեակների բաժանուած:

Հայդուկներն անհամբեր սպասում էին հրամանատարի նշանին՝ առաջ շարժուելու, իսկ վերջինս էլ «լրտեսող» ջոկատի վերադառնալուն էր նայում: Այդ ջոկատը պիտի ուսումնասիրէր թշնամու դիրքերը, նրանց վրանների տարածութիւնն ու ցրւածութիւնը, առաջուց պիտի ընտրէր յարմարաւոր դիրքեր ու բոլոր տեղեկութիւնները ներկայացնէր զինուորական խորհուրդին:

Կարճ խորհրդակցութիւնից յետոյ Փիդայիներն հրաւիրւում են հանդիսաւոր երդում տալու: Երբ բոլորն հաւաքւում են, հրաման է տրւում բարձրացընելու Դաշնակցութեան դրօշը, որ վաղամեռիկ ընկերուհի Մարօի կտակն էր: Թնդում է բոլորի սիրտն էլ, ուրախութեան եւ ոգեւորութեան նշաններ են երեւում իւրաքանչիւրի դէմքի վրայ եւ առանց ազդարարութեան, ինքնաբերաբար կանչում են. «Կեցցէ՛ Դաշնակցութիւնը, կեցցէ՛ Յեղափոխութիւնը, կեցցէ՛ խմբապետը»:

Առաջ է անցնում արշաւախմբի Փիդայի քահանան, կարճ եւ հասկանալի ոճով բացատրում է յե-



ԽԱՆԱՍՕՐԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ

ԽՄԲԱՆԿԱՐԸ

*դափոխականի կոչումը, հրաւիրում է լինել անձնուէրը, հայրենասէրը եւ կոչ է անում միշտ հաւատարիմ մնալ կուսակցութեան դրօշին: Իր ճառից յետոյ նա կարդում է Կօմխէի խմբագրած երդումը, որի բովանդակութիւնն էր.—*

*«Ես, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Փիդայիս, ազատ կամքով Դաշնակցութեան յաղթական դրօշակի տակ մտնելով, տալիս եմ այս երդումը վրէժ կենտրոնական Կօմխէին: Երդւում եմ Դաշնակցութեան յաղթական դրօշակով, երդւում եմ բռնութիւնը կործանող յեղափոխական սրով՝ որ չեմ դաւաճանի ղեկավարներին, չեմ դաւաճանի Փիդայու վեհ կոչումին, չեմ դաւաճանի Դաշնակցական դրօշակին»...:*

*Մորհրդաւոր եւ սրբազան րոպէ էր: Բոլորն էլ ապրում էին մի վեհ նպատակ, ամէն մէկի աչքերում արցունքի կաթիլներ էին երեւում, դրկում, համբուրում էին իրար, ապա միացած ու բարձրաձայն ողաղակում.*

*«Մ իասին կուենք եւ միասին մեռնենք»:*

*Առաջ է անցնում ընդհանուր հրամանատարը, որին ընդունում են որոտընդոստ ևեցցէներով, անվերջ ու ջերմ ծափահարութիւններով:*

*Նա խօսում է պարզ եւ յուզւած, բացատրում է ժողովրդի հալածանքները ու սուլթանական կառավարութեան կոտորածները ու կախաղանները. շեշտում է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը պարտաւոր էր ընդոստութեան դրօշը բարձրացնել, չնայած այդ կռիւն օրհասական էր եւ անհաւասար, եւ իր խօսակցութիւնը վերջացնում է հետեւեալ խօսքերով.—*

«Մեզանից է կախուած յեղափոխական ընդհանուր գործի յաջողութեան մէկ մասը: Ձոյց տանք մեր հասարակութեան թերահաւատ մասին, որ մենք ընդունակ ենք յեղափոխական — թէեւ անհաւասար — կռիւը յաջողութեամբ մղելու, իսկ միւս կողմից ցոյց տանք ամբողջ աշխարհին, որ հայն էլ գիտէ կռուել հայրենիքի ազատութեան համար»:

Խօսողը զարաբաղցի Վարդանն էր:

Հրամանատարից յետոյ խօսում է Նիկօլը, որ արշաւանքը կազմակերպողներից մէկն էր եղել եւ որ իր խօսակցութիւնը վերջացնում է այնպիսի բառերով, որ յետոյ նշանաբան են դառնում յեղափոխական ներուժներին եւ նրա՝ ժողովրդական երգերի:

«Տղե՛րք, վերջացնում է նա, վեհանձն եղէք դէպի տկարները, ո՛չ մի դէպքում ձեռք չտաք կանանց եւ երեխաներին, իսկ տղամարդկանց՝ անխնայ կոտորեցէք»:

Ապա խօսում են Փիդայի քահանան, Փիդայի բժիշկը, որոնք վարձատրում են բուռն ծափահարութիւններով:

Արշաւախումբը բաղկացած էր հեռեւակ զօրքից ու հեծելազնդից: Հետեւակները բաժանւում էին՝ հարիւրակների, յիսնեակների եւ տասնեակների, իսկ հեծելազունդը միայն տասնեակներից էր բաղկացած: Փիդայիները իրենք էին ընտրել իրենց ղեկավարներին՝ տասնապետ, յիսնապետ, հարիւրապետ, իսկ վերջիններս էլ իրենց կողմից՝ ընդհանուր հրամանատարին եւ իր օգնականին: Զինուորական խորհուրդը բաղկացած էր՝ հրամանատարից, օգնա-

կաններէն, հարիւրապետներէն եւ երկաք կողմնակի անձերէն: Այդ մարմնին էր վերապահուած անհաժեչտ պարագայում փոխել կուի յատակագիծը, նորը կազմել, չարունակել կամ դադրեցնել կուիը: Ամբողջ բանակը գինուած էր կատարելագործուած մօսին հրացաններով: Ամէն մի ֆիդայի կրում էր 3–4 փամփչատուփ՝ 230–300 գնդակով, որոնց մի մասն էլ տեղաւորուած էին մէջքին կապուած տոպրակում:

Այդ տոպրակում կային՝ ուղի օրւայ ուտելու պաչար, կարեւոր գործիքները, դեղերը, թել–ասեղ, լուցկի, ծխախոտ եւայլն: Իւրաքանչիւրն ունէր եւ իր ջրամանը:

Գիչեր էր: Մուքը պատել էր երկինքը: Զորս կողմը մեռելային լռութիւն էր, միայն հրամանատարը՝ իր չուրջը ժողոված խմբապետներին, բացատրում էր կուի յատակագիծը, ճանապարհին ձեռք առնելիք բոլոր զգուշութիւնները, որոչած ազդանչանները, պատւիրում էր լինել աչալուրջ եւ ապա հրաման էր տալիս՝ առաջ չարժուելու:

Բանակի առջեւից 50–100 քայլ հեռաւորութեան վրայ գնում էր առաջապահ դունդը, իսկ յետեւից՝ վերջապահ խումբը, որոնց պարտականութիւնն էր հսկել բանակի ապահովութեան վրայ: Մի քանի հոգի էլ զաւակով խմբից պիտի առաջանային եւ իրարից որոշ հեռաւորութեան վրայ գտնուելով՝ անմիջապէս եւ շտապ, իւրաքանչիւր մի անակնկալ պիտի տեղեկացնէին ընդհանուր հրամանատարին: Հեծելազունդը պիտի պաչտպանէր բանակի թիկունքը: Իւրաքանչիւր չինեակ ունէր իր եռատոյն դրօչակը իսկ ամբողջ խմբի համար կար Մայր–Դրօչակը, Ա-

պառած Կոմիտէի նւիրական ընծան: Դրօշակի մի երեսի վրայ կային զանազան խորհրդանշաններ, իսկ միւս երեսին՝ քնքոյշ մատներով ասեղնագործւած Նալբանդեանի «Մեր Հայրենիք»ի հետեւեալ տողերը

«Ահա, եղբա՛յր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի»...

Մայր Դրօշակի պահպանութիւնը յանձնւած էր Դ. չխնեակին:

Այն գիւղը, ուր իջեւանել էին հայդուկները եւ որտեղից սկսեցին արշաւանքը, ամբողջ ոտքի վրայ էր: Հայ գիւղացին զգում էր այդ երիտասարդների հայրենասիրութիւնը, հասկանում էր, որ նրանք մաքուր եւ անձնւէր անհատներ են, տեսնում էր հային ոտից ցփլուխ զինւած. տեսնում էր եւ արտասւում...

Բոլոր գիւղացիները՝ ծեր, երիտասարդ, կին, տղամարդ, երեխաներ, դուրս էին եկել եւ ուրախութեան ժպիտներով ճանապարհ էին դնում ազատութեան համար կռւող մարտիկներին: Վերջին մնասբարովն է: Ծանօթ-անծանօթ, բարեկամ-հակառակորդ համբուրւում էին եւ մի քանի րոպէից յետոյ գիւղացիներն հեռւում ինչ-որ մարդկանց ստւերներ էին տեսնում, իսկ հայդուկները՝ օդի մէջ ծածանւող թաշկինակներ, գլխարկներ եւ լսում էին ժողովրդական երգի ձայն:

Բանակն առաջ էր ընթանում՝ մեղմիկ երգ երգելով:

Գիշերւայ խորին լռութիւնը, բանակի համաչափ քայլերը, ռազմի երգի հնչիւնները եւ նրա արձագանգները մի խորհրդաւոր ներդաշնակութիւն

էին ստեղծում եւ ոգեւորում իւրաքանչիւրին:

Յուլիսի 24-ի պայծառ եւ լուսնկայ գիշերն էր: Ֆիդայիների բանակն շտապում էր դէպի իր առաջ ցցուած Արառուլը, որի աջ ու ձախ կողմերից դէպի վեր են բարձրանում մեծ ու փոքր կատարներ, իսկ դէպի ներքեւ տարածւում են՝ բազմաթիւ ձորեր ու լայնատարած դաշտեր:

Առաւօտեան ժամի 4-ն էր: Երկնքում մի աստղ ցոլաց եւ լուսաւորեց արշաւախումբը, ապա լսւեց մի խուլ որոտ:

— Ընկերներ, ասացին տղաներն իրար, Թռէ՛ք, Շարաֆի աստղն էր որ ընկաւ:

— Սուլթանի աստղն էր, որ խաւարեց, ասում են ուրիշներ՝ կատակաբանելով:

Բանակն հասել էր Արառուլի արեւելեան լանջը, իսկ սարի հարաւ-արեւմտեան ստորոտում փռուած է Խանասորի լեռնադաշտը, որի վրայ ընկած էին մազրիկ ցեղին պատկանող համիդիէներու 250-ի չափ վրաններ: Այս վրաններից աչքի են ընկնում երեք հաստ ալիտակները, որոնք պատկանում են Շարաֆ-բէկին: Սա այն Շարաֆն է, որ վերջին կոտորածների ժամանակ Մեծ Մարգասպանի գործակից հանդիսացաւ եւ աւերեց ու քանդեց Աղբակի գաւառը՝ թալանելով բոլոր հայերին: 1894-ին 400 ձիաւոր ուղարկեց Դերիկի վանքի վրայ արշաւելու, որին միացան եւ կառավարական յիսունի չափ զինուորները եւ որոնց պատուիրած էր յեղափոխականների այդ բոյնը ոչնչացնել. բայց քանի չափ հայդուկները քաջաբար դիմադրելով՝ նրանց յետ դարձրին:

Սա այն Շարաֆն է՝ արիւնարբու եւ կատաղի,

որը 96–ին Ս. Բարթուղիմէոս վանքի շրջակայքում շրջապատեց անպէն վանեցիներին եւ գինուած Արմենական–ներին՝ Աւետիսեանի գնկավարութեամբ եւ բոլորին էլ ջարդեց անգթաբար ու իր այդ «քաջագործութիւնների» համար սուլթանից ստացաւ հազարապետութեան պաշտօն եւ օսմանիէի Բ. կարգի շքանշան:

Ահա այդ տանջւած հայերի, խողխողւած մանուկների, լկտւած կոյսերի, աւերւած տների վրէժն էր, որ կանչում էր հայ ֆիդայիներին եւ աւելն ու հոգի էր ներշնչում նրանց:

Լայն արշէն բացւում էր: Պէտք էր զաղար առնել եւ թագնուել, որպէսզի թշնամին չկարողանայ նչմարել խմբի գործողութիւնները: Որոշւեցաւ հեռաւոր խումբը պահել ճորում, իսկ հեծելազնդին պատւիրւեցաւ գրաւել շրջակայքի ռազմագիտական տեսակէտից կարեւոր դիրքերը: Հետո՛ւ արեւմուտքում երեւում են Սիմանն ու Արտոսը, Վարագն ու Առնոսը, որոնք պահապան հրեշտակների պէս կանգնած են, իսկ դէպի հարաւ ձգւած են Կորտոնաց լեռները, որի դէմ առ դէմ, իր կուրծքը զարաւոր յիշատակներով զարդարւած Ս. Բարդուղիմէոսի վանքն է երեւում:

Արաուլի զազաթի վրայ պատերազմական խորհուրդն է ժողով գումարել՝ վճռելու օրւայ անելիքները: Հրամանատարն ու իր օգնականները դիտակներով ուսումնասիրում էին վրանների դիրքերն ու դէպի նրանք տանող ճանապարհները: Երկար խորհրդակցելուց յետոյ վճռում են՝ վրանների դիրքին համեմատ՝ ուժը երկու մասի բաժանել—մի մասը աղե-

դի ձեւով պիտի չրջապատէր վրաններէն արեւմտեան եւ հիւսիս–արեւմտեան կողմերը, իսկ միւսը՝ արեւելեան և հիւսիս– արեւմտեան: Հնծելապունդը պիտի բռնէր երկուսի միջեւ գտնուած տարածութիւնը՝ բաւականաչափ հեռաւորութեան վրայ թիկունքը պաշտպանելու համար:

Իւրաքանչիւր խմբապետ մանրամասնօրէն եւ պարզ կերպով աշխատում էր իր խմբի անդամներին բացատրել չարճակման յատակագիծը, որպէսզի ամէն մէկը գիտակցաբար սկսէր կռիւը, որից և կախուած էր յաջողութիւնը:

Յորհրդաւոր վայրկեանն էր մօտենում: Մինչեւ այժմ միասին եղած ընկերները պիտի բաժանուէին իրարից՝ դիրքերը գրաւելու: Գուցէ մահը շատերին իրարից բաժանէր: Ֆիզայի քահանան՝ մի ձեռքին խաչ, միւսին՝ սուր, կրակոտ եւ ոգեւորիչ խօսքեր ասաց, օրհնեց բոլոր հայդուկներին, յաջողութիւն մաղթեց նրանց բազուկներին, եւ յիշեցրեց Ե. դարը, երբ Ղեւոնդ երէցը օրհնում էր Վարդանի բանակները:

Բոլորն էլ վերջին մնաս–բարեւն ասացին ու բաժանուեցին առանձին խմբերի:

— Ընկերներ, լսեցաւ Թիւրք ընկերոջ՝ Սամւէլի ձայնը, եթէ ես ընկնեմ, յիշեցէք գանէ, որ մի Թիւրք զինուոր ձեզ հետ միասին կռւում էր բռնութեան դէմ:

Արեւն արդէն մայր էր մտնում: Հայդուկային խմբերը կամաց–կամաց, մեղմ երգեցողութեամբ Աբասւլի բարձր դաշտից ներքեւ էին իջնում դէպի Յանասօրայ ընդարձակ լեռնադաշտը: Այստեղ, այդ

հարթութեան վրայ էին փռուած մազրիկցիների վրանները, որի մէջ բնակւում էին յեղափոխականներին անհաչտ թշնամի եւ սուլթանի կամակատար Շարաֆին մարդիկը:

Վճռած էր յարձակում գործել լուսաբացին, բայց դեռ դիշերւայ ժամի 11-ն էր: Նրանք վրաններից 4-500 քայլ հեռաւորութեան վրայ էին գտնւում:

Լռութեան մէջ լսւում է հրամատնատարի ձայնը — «Տղե՛րք, ձեզ մատաղ, վրէժխնդրութեան ժամն հասաւ արդէն: Լինել-չլինելու վայրկեանն է այժմ: Մեր խոհեմութիւնից ու կարգապահութիւնից է կախւած գործի յաջող կամ անյաջող ելքը: Կուեցէք մինչեւ ձեր վերջին շունչը, բայց միշտ խնայեցէք կանանց եւ երեխաներին»:

Ամբերն սկսեցին բաժանուել եւ իւրաքանչիւրն իր առաջուց որոշած գիրքը գրաւել: Այդ բոլոր գործողութիւնները կատարւում էին զգուշաբար, լուռ, շունչը փորը ձգած, որովհետեւ մի անզգոյշ շարժում թշնամին կարող էր պատրաստութեան մղել, նախօրօք գիրքեր գրաւել եւ մեծ ծրագիրը ջուրը ձգել:

Ցեղապետի սպիտակ վրանները գտնւում էին գետի միւս եղերքին: Գետը տղմոտ էր եւ անցնելը՝ դժւար: Եթէ հայդուկները չանցնէին՝ ցեղապետին վնաս չէր հասնի, իսկ անցնելն էլ՝ անհնար էր:

— «Տղե՛րք, գետը անցէք», ձայն տւեց հրամատնատարը, եւ երկու տասնեակ, ոտքերը տիղմի մէջ խրելով, թռան միւս կողմը: Վրանների պահապանները լուռ էին, դեռ չէին իմանում դալիք վտանգը. բայց շունը հաչում էր, ձին՝ խրխնջում, ոչխարնե-



ԽԱՆԱՍՈՐԻ ԽՄԲԵՐԻՆ ՄԷԿԸ




ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻՆ ՄԷՋ

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԴՐՕՇԱԿԸ

թէ դու կը յանդգնիս ձեռք դպցնել այդ երեխանե-
րին, ես էլ քեզ կը սպանեմ»։

Երբ տղաները վրանները մտան՝ հրացանները փոխանակեցին դաշոյններով. հայ քաջերը մէկը միւսի յետեւից փռում էին անխիղճ քիւրդերին, որոնք, ո՜վ գիտէ, քանի-քանի անմեղ հայ կանանց եւ աղջիկների սրախողխող էին արել։ Բոլոր վրաններն էլ այրւում էին ու խորտակւում։

Ընդհանուր հրամանատարի հոգսերից մէկն էլ լինում է անպայման սպանել Շարաֆին, եւ այդ նպատակով նա իր հետ է տարել աղբակցի մի փիդայու, որ մազրիկցիների ցեղապետին մօտ ծառայել էր եւ նրան լաւ էր ճանաչում։ Երբ նախկին ծառան ներս է մտնում իր տիրոջ վրանը, տեսնում է Շարաֆին վիրաւորւած, իսկ կինը՝ չէյխ Համիդի աղջիկը, արտասւալից ու հեծեծալով, տեսնելով իր նախկին ստրուկին, պաղատագին դիմում է նրան «դուն մեր հացն ես կերել, ազատիր ինձ եւ ամուսնուս։ Ես հայ եմ, կը գամ ձեզ հետ, տարէք ուր որ կ՚ուզէք, միայն խնայեցէք մեզ»։

Շարաֆի վրանի կողքին լինում է եւ Արդխ-բահման հարիւրապետի վրանը։ Տեսնելով այս բոլորը եւ զգալով իր անզօրութիւնը, նա խնդրում է որ իրեն չսպանեն, որովհետեւ ինքը քիւրդ չէ, այլ պետական զինւոր։

— Ի հարկէ պէտք է խնայել, ինչպէս դու ներողամիտ ես եղել քո ոտքերն ընկած հայ երեխաների եւ կոյսերի վերաբերմամբ, պատասխանում են նրան արհամարհանքով եւ սպանում։

Թշնամու դիակները չորս կողմը փռւած էին,

վրանների մուխը երկինք էր ելնում, Ֆիդայիներն իրենց վրէժն էին լուծում՝ գոռալով վրանների միջից «այս իմ կնոջ փոխարէն. այս իմ որդու փոխարէն» եւ սպանում էին չորս հոգու: «Ես իմ պարտքս կատարեցի, այլ եւս ցաւ չունեմ, եթէ մեռնեմ» մռնչում էին նրանք, դուրս գալով վրանից: Մի ուրիշ հայդուկ երգելով «Թամզարա» էր խաղում եւ երբ ընկերները հարցնում են պատճառը, նա սառնասրտօրէն, առանց այլայլուելու պատասխանում է «ոտքիցս վիրաւորուած եմ, դրա համար եմ պարում»:

Ընդհանուր շփոթի ժամանակ 10–15 մարդ հնարաւորութիւն են ունենում ազատուելու եւ արշաւանքի լուրը տարածելու շրջակայ քիւրդ ցեղերի մէջ: Վրաններից մի քանի հարիւր քայլ հեռաւորութեան վրայ գտնւում էին տասնեակներով այլ վրաններ, որոնցից 20–30 մարդ, բլուրների վրայով անցնելով հարաւային կողմում դիրքեր բռնեցին, երբ դեռ տըղաները դաշտի մէջ կռւում էին:

Պէտք էր Խանասորայ դաշտի հետ մնաս-բարեւ ասել եւ դէպի Արաուլի բարձունքները ելնել՝ յարմարաւոր դիրքեր գրաւելու համար, որպէսզի հնարաւորութիւն ունենային օգնութեան հասնող քիւրդերի եւ զինուորների հետ կռիւ մղել:

Նախօրօք, զինուորական խորհրդի յատուկ կարգադրութեամբ, մի քանի փոքրաթիւ խմբեր դիրքեր էին գրաւել եւ յատկապէս ձիաւորներ պատրաստել էին այդ գործը գլուխ հանել, որի համար էլ առաջուց գրաւել էին ռազմական տեսակէտից կարեւոր երկու բլուրներ: Քիչ յետոյ նրանք նկատում են, որ չխառնի չափ ձիաւորներ, փոքրիկ պտոյտ կատարելով

ցանկանում են Արաուլի ստորոտի ամենաբարձր դիրքը գրաւել, բայց Հեծելազնդից ուղարկուած երկու ֆիդայիներ ելնում են բլուրն ու մի քանի ժամեայ ընթացքում՝ կռուելով չեն թողնում թշնամուն մօտենալու: Շուտով այդ երկու հոգուն օգնութեան են հասնում հինգ ընկերներ, որոնցից մէկը մնում է նրանց մօտ, իսկ միւս չորսն աւելի վեր բարձրանալով՝ յարմարաւոր դիրքեր են գրաւում:

Նախկին երկուսը՝ քահանան եւ միւսն էլ վաճառական, կատաղի կռուի մէջ էին: Նորեկ ընկերը տեսնելով այդ, ծիծաղելով հարցնում է.

— Հը՛, կռիւներդ շատ տաք է երեւում:

— Կռի՞ւս որն է... կոտորում ենք էս շան ծնունդներին, պատասխանում է վաճառականը:

Քիւրդերն անել դրութեան մէջ էին մնացել—ո՛ր դիրք ցանկանում էին գրաւել, նրանց չէր յաջողւում, որովհետեւ ֆիդայիները արդէն գրաւել էին: Նրանք ստիպւում են մի շրջան գործելով Թաւրավա բլուրը գրաւել, որտեղից իրենց գնդակները կարող էին հասցնել նպատակին, բայց այդ դիրքն էլ գրաւել էին Պետի-Աշոտն ու ասորի Ենամը իրենց ընկերների հետ:

Հրամանատարի հրամանով բանակի մի մասը Նահանջի փողը հնչեցրեց եւ ձիաւոր խմբի պաշտպանութեամբ Արաուլի գագաթին առաջուց որոշած դիրքերը գրաւեց, իսկ միւս մասը դեռ մնում էր վրանների մօտ՝ իր «հաշիւը» վերջացնելու:

Թշնամին կամաց-կամաց ստուարանում էր. նա ծանօթ շրջակայքին, ձիգ էր թափում շրջապատելու

հայդուկներին և մխաժամանակ թարմ ուժ ունենալով՝ ուժեղ յարձակողականի է սկսում:

Բոլորն էլ պէտք է նահանջէին եւ յարմարաւոր վայրերից կռիւ սկսէին նոր եկած թշնամիների դէմ: Գործը բաւականաչափ դժուար էր, որովհետեւ տղաները յոգնած էին, ծանր բեռը չալակին եւ անդադար կռւի մէջ: Սկսած գործը պէտք էր յաջողութեամբ վերջացնել եւ ահա հայդուկները, իրենց հետ առնելով այնպիսի իրեր, որոնք այդ օրւայ յիշատակ կարող էին ծառայել, անցան դէպի դիրքերը: Մաղրիկեցիներից վերցրած են Շարաֆ-բէկի սուրը, ուսնոցները, պաշտօնական գլխարկը, նրա եւ Աբդիւրահմանի չքանշանները եւ համիդիէ դունդ կազմելու համար սուլթանի տւած հրովարտակը: Իրենց հետ վերցրնում են նաև բաւականաչափ ձիաններ, 15-20 դոմէշներ՝ վիրաւորներին ու յոգնածներին փոխադրելու համար, բազմաթիւ հրացաններ, որոնցից շատերը Արմենական նահատակներից են եղել յափրշտակւած: Այն հրացանները, որ անկարելի էր վերցրնել՝ փչացնում են, որ թշնամին չկարողանայ գործ ածել: Կարօն, այդ համառ գինագործը, հրացաններն անգործածելի էր դարձնում:

Ֆիւրդերի թիւը բազմապատկւել էր: Մինչև այդ՝ տղաների դրութիւնը շատ լաւ էր, ունէին մի-այն երեք վիրաւոր: Այժմ դիրք ունեցողները պարտաւոր էին զգուշութեամբ եւ համառութեամբ պաշտպանել տղաների վերջին խմբի նահանջը, որոնք չորջապատւած էին քրդերով:

Պարտւած աշիրէթի վրէժը լուծելու եւ նոր հրացաններ ձեռք ձգելու տենչը ոգեւորել էր քրդե-

րին, որոնք անկանոն յարձակումով աշխատում էին չփոթեցնել տղաներին եւ նրանց դուրս քշել դիրքերից, բայց անյաջող, որովհետեւ իրենց դիմաց հանդիպում էին փորձուած մարտիկների: Նահանջը կատարւում էր կանոնաւոր եւ կանխօրօք վճռւած ուղղութեամբ: Բանակի մի մասը պահած գետնի վրայ՝ կռիւ էր մղում թշնամու դէմ՝ հնարաւորութիւն տալով միւս մասին աւելի վեր բարձրանալու եւ երբ այս գործողութիւնն յաջողութեամբ էր կատարւում, իրենք էին պահում գետնի վրայ եւ չչմեղնելով թշնամուն՝ միւս ընկերներին առիթ էին տալիս բարձրանալու:Ցեղափոխականները գնահատում էին իրենց իւրաքանչիւր մի զնդակը, ի դուր տեղը չէին վատնում առաւօրէն՝ ինչպէս խառնիճաղանճ կրակերը. այդ պատճառով է որ իւրաքանչիւր զնդակ մի դիակ էր գլորում եւ ամէն անգամ, երբ նման մի դէպք էր պատահում, տղաները ոգեւորւած յեղափոխական երգեր էին երգում եւ կանչում. «Կեցցէ Ցեղափոխութիւնը», իսկ մի այլ խմբակ իրրեւ արձագանգ՝ ձայնակցում էր — «Կեցցէ՛ Դաշնակցութիւնը»:

Կռիւը շատ տեղերում տաքանում էր եւ տղաները կուռւում էին յաճախ քսան քայլի վրայ: Ընդայած նրանց պատուիրւած էր ո՛չ մի ընդհարում չունենալ մինչեւ համապատասխան դիրքերի գրաւումը, բայց թշնամու արեան կարօտ Ֆիդայիները անզուսպ ոգեւորութեամբ դուրս էին թռնում քարերի յետեւից ու կրակ մաղում:

Այդ օրն աչքի ընկաւ Կարօն, որին իրաւամբ հերոս կարելի է անուանել:

Կարօն առաջնակարգ գինագործ էր եւ անչեղ դնդակահար, առաջին անգամն էր որ մասնակցում էր կռւի, այդ պատճառով անյագօրէն մի դիրքից միւսն էր թռչում, հալածում թշնամուն եւ նորից նոր թափով առաջ խուժում: Ընկերները նրան խնդրում, աղաչում էին եւ չատ անգամ հրամայում, որ նա իր վտանգաւոր խաղերից հեռու կենայ, որ նա առաջ չնետուի ու իր կեանքը թանկ դնահատէ, Կարօն իր նպատակէն ետ չէր կենայ:

Ամենանաբար վեր բարձրանալով եւ կռւելով տղաների մեծ մասը հնարաւորութիւն կ'ունենան դիրքեր գրաւելու: Թիկունքի պաշտպանութիւնը մնացել էր Ֆար-Հատին, որի դրութիւնը քանի գընում վտանգաւոր էր դառնում: Տեսնելով այդ՝ Ֆար-Հատը օգնութիւն է խնդրում վերջին խմբի քսան տարեկան Սաղաթէլից, որ ցած լինելով իր ընկերոջ կողքին դիրք է բռնում եւ սկսում կռւել: Մի խումբ քիւրդեր աննկատելի ճանապարհներով առաջ են ընթանում եւ այդ երկուսին չղթայի մէջ առնում: Կարօն այդ ժամանակ երկու հազար քայլի վրայ դիրք գրաւած է լինում: Նա գիտէր որ ուշացած ընկերներ կան, որի համար էլ իր դիրքը չէր թողնում: Քիչ յետոյ նա գլուխը վեր է բարձրացնում եւ տեսնում Ֆար-Հատի եւ Սաղաթէլի անել դրութիւնը: Սիրտը սիրտը կսկծում է, արցունքով լեցւում են զգայուն Կարօի աչքերը եւ նա անմիջապէս երկու ընկերոջ ուղարկում է հրամանատարի մօտ՝ օգնութիւն խնդրելու: Մինչ այս, մինչ այն, դրութիւնը վտանգալից էր դառնում, օգնութիւնն ուշանում էր, որով-հետեւ խումբը բաւականաչափ հեռուն էր եւ Կարօն,

*չկարողանալով համբերել եւ տեսնելով միաժամանակ մի այլ ընկերոջ գետին գլորուելը՝ Ֆար-Հաուի մօտ, դուրս է ցատկում իր դիրքից, գնդակների տարափի տակ դէպի տղաները է ընթանում եւ երբ այնքան մօտենում է, որ գնդակները կարող են լինում ծակել թշնամու կուրծքը, չոքում է մի քարի յետեւ եւ կրակ թափելով քիւրդերի դէմքին, հնարաւորութիւն է տալիս երկուսին դուրս գալու իրենց դիրքերից եւ աւելի վեր ելնելու: Այդ ժամանակ օգնութեան են հասնում երեք հոգի՝ Կրէտացին, Գրիգորը եւ Յարութիւնը, որոնց հետ միասին կարօն սկսում է հալածել թշնամուն, սպանում են մօտ 14 հոգի, որոնցից միայն ութը ձիաւորի կարօն է գլորում:*

*Ֆար-Հաուի դիրքի մօտ նահատակւում են Ռուբէն Տէր-Կարապետեանը, Արշակ Ոսկանեանը եւ ծանրապէս վիրաւորւում է Մաղաքէլ խան Զօհրաբեանը: Այդ վտքրիկ խմբակն ուղիղ եօթ ժամ կռիւ է մղել եօթնապատիկ աւելի թշնամու դէմ: Դրանց մէջ իր ցանցնութեամբ աչքի էր ընկնում երիտասարդ Մաղաքէլը, որ երկու տեղից՝ կողքից եւ ոտից վիրաւորւում է: Ընկերները հաւաքելով նահատակների գէնքերը, վիրաւոր Մաղաքէլի հետ վեր են ելնում եւ լերան գագաթին հանդիպում են բանակին: Բոլորն էլ հաւատացած էին որ այդ անվեհեր խմբակն այլ եւս գոյութիւն չունի, որ նա վաղուց է պոհ դնացել, իսկ այժմ նրանք ազատ են եւ քարերի յետեւից դուրս են սրծել՝ ուրախանների նըմանն: Հայդուկների ուրախութեան չափ ու սահման չկար, նրանք արտասուալից դրկում են իրենց պաշտելի ընկերներին, բայց մի րոպէ նրանց ուրախու-*

թիւնը վշտի է փոխուում, երբ երիտասարդ եւ պատիւրական Սաղաթիէլը երկու ժամ անընդհատ մահուան դէմ մաքառելուց յետոյ, հոգին փչում է իր սիրած Հայաստանի հողի վրայ:

Բոլորն էլ խորին ցաւակցութեամբ ծունկ են չոքում այդ թարմ եւ մաքուր չիրխի առաջ, երդւում են վրէժխնդիր լինել եւ շարունակել սուրբ գործը: Նրանք մի աննշան հողակոյտ կանդնեցնելով իրենց սիրած ընկերոջ գիակի վրայ, առաջ են անցնում՝ արշաւանքը իր վերջակէտին հասցնելու համար:

Հեռաւոր օրեայ առաւօտեան ժամի տասն էր: Հայդուկները արդէն դրաւել էին տաճարակու դիրք եւ չրջապատած էին մօտ երկու հազար գինուած թըշնամիներով, որոնք ամէն կերպ աշխատում էին վեր բարձրանալ՝ տղաներին դիրքից դուրս քչելու, բայց այդ նրանց չէր յաջողւում, որովհետեւ եւ ոչ մի յետախոհական իր դիրքը չէր թողնում:

Կռիւը կամաց-կամաց թուլանում էր, միայն արեւելեան բլուրի՝ Թաւրաւայի վրայ դեռ կատաղօրէն շարունակւում էր: Կէս օրւայ մօտ, վրայ է հասնում եւ չիլակ ցեղի գլխաւորը՝ Ջաւար-աղան իր մարդկանցով: Սա այն աւազակն է, որ երկու ամիս առաջ Ճարօի բերդում պարսից կառավարութեան դէմ կռւած եւ ամրացած էր սահմանապլխի աղերում: Այժմ լուր առնելով Փիդայիների մասին՝ իր մի քանի հարիւր մարդկանցով եկել էր նրանց «կատրելու»: Մի տասնեակ հայդուկներ քաջարար յետ են մղում դրանց, մինչեւ որ երկրորդ տասնեակն էլ օգնութեան է հասնում:

— Տղերք ջան, հասէք, պռում է մի Փիդայի եւ

*չորս–հինգ հոգի թռնում են նրա յետեւից ու միահամուռ համազարկերով ստիպում են քրդերին, երեք զոհ տալով՝ թողնել ու փախչել: Քիչ յետոյ այդ դիրքն էլ գրաււում է: Այդ ժամանակ արեւմտեան մասում տղաները Խանիկի դիրքից ետ են քշում թըշնամուն եւ Արաուլի «միջնաբերդ»ը ամէն կողմից ապահովում:*

*Փոքրիկ խմբակները թէեւ ընդհարումներ են ունենում թշնամիների հետ, իսկ տղաների մեծ մասն հաւաքուելով միատեղ՝ իրենց տոպրակները բաց են անում՝ գաթա ու հալւա հանում՝ ճաշելու համար: Նրանք տաք–տաք խօսում էին օրուայ դէպքերի մասին, զւարճախօսութիւններ էին անում, իսկ մի քիչ հեռու՝ Փիդայի բժիշկը, այդ տոկուն եւ անզուգական ընկերը, թեւերը յետ քաշած՝ հիւանդներին էր խնամում, նրանց վէրքերը լւանում, դեղ դընում եւ փաթաթում:*

*Նա հանգիստ չունէր եւ իր դերի մէջ էր. դեռ առաւօտւանից: Բանակի մի այլ մասում կազմւում է զինւորական խորհուրդը՝ վճռելու յետագայ անելիքները: Արշաւանքն համարեա իր նպատակին հասել էր, մազրիկցիների ցեղը կոտորւել, սահմանագըլխի վրանաբնակ քիւրդերը վախից Երկրի խորերն էին գաղթել, շրջակայ թիւրք եւ քիւրդ ազգաբնակութիւնը ահ ու սարսափի մէջ էր, իսկ կառավարութիւնը՝ անճարակ:*

*Միւս կողմից՝ Բաշ–Գալէից մօտ երկու հազար քիւրդ ձիաւորներ էին եկել, ամէն կողմից շրջապատել էին մի բուռն քաջերին, որոնք իրենց ունեցած փամփուշտի կէսը սպառել էին (միայն Կարօն իր 300*

*փամփուշտը սպառել էր մինչեւ կէսօրւայ ժամի 3-ն ու ընկերներից էր վերցնում), ուտեստի քանակը նւազում էր, աւելի ուշ թշնամու շղթան ճեղքել անցնել էլ աւելի դժւար կը լինէր եւ կ'ունենային բաւականին շատ կորուստ, որով օրւայ փառաւոր յաղթանակը կարող էր նսեմանալ եւ քիւրդերի վրայ թողած սարսափն էլ այնքան ազդու չէր լինի: Վերոյիշեալ բոլոր պատճառաբանութիւններն ի նկատի առնելով՝ զինւորական խորհուրդը, գրեթէ միաձայն որոշում է նահանջել:*

*Նահանջի ճանապարհն ուսումնասիրել էր Դումանը, որ իր վարպետութեամբ, ընդունակութիւններով արշաւանքի սիւներից մէկն էր: Որոշւած գծի ուղղութեամբ՝ բաւական հեռու տարածութեան վրայ, վաթսունի չափ ձիաւորներ էին իջել եւ մարգագետնի կանաչ խոտերի միջից դիտում էին: Տղաները կարծում են թէ՝ այդ ճանապարհը վտանգւած է, որ թշնամին գիտէ նահանջի գիծը եւ այդ պատճառով էլ որոշում են դիրքերում մնալ՝ այդ խորհրդաւոր ձիաւորների ով լինելը ճշդօրէն պարզելու համար: Նրանք կամաց-կամաց մօտենում են տղաների դիրքերին եւ երբ բաւականաչափ մօտենում են, դիրքապահները գնդակ են արձակում, որից ձիաւորները յետ են փախչում: Դրանք կռւի մասնակցողներ չէին, այլ եկել էին միայն դիտելու համար: Յետոյ պարզւում է, որ դրանք պարսիկ կառավարութեան բարեկամ քիւրդեր էին, որոնք եկել էին այդ անհաւասար կռւին ականատես լինելու:*

*Երեկոյեան դէմ էր: Արեւը կամացուկ իր մնաս-բարովն էր ասում եւ միայն վերջին ճառա-*

գայթներն էին մնացել, որոնցով լուսաւորւում էին սարերն ու դիրքերը: Դիմացի բլրակի վրայ քրդերի հազարաւոր ձիաւորներ ի մի էին խմբւել: Նրանք ինչ-որ խորհրդաւոր որոշումներ էին կայացնում, հրամաններ էին տալիս եւ պատրաստւում էին, ըստ սովորութեան վերջին յարձակումը գործելու: Այդ գիշերին յեղափոխականները, որոնք ամրացել էին իրենց դիրքերում: Քիչ յետոյ նրանք երկու մեծ խմբի են բաժանւում եւ յարձակւում երկու գլխաւոր դիրքերի վրայ — Թաւրավայի եւ Խանիքի: Ի՜նչ ականջ խլացնող ձայներ էին, որոնք ձիանների խըրխընջոցի, սարերի արձագանքի հետ միասին կազմում էին մի ահռելի և դիւական համերգ: Իսկ երբ այդ բոլորի հետ խառնւում էր և հրացանների միահամուռ զարկը, յեղափոխականների ոգեւորւած երգը—

«Կուեցէք տղերք, կուեցէք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ»,

այն ժամանակ նոր ոգի, նոր աւիւն էր ստացւում եւ մոռացւում էին քաղցն ու թուլութիւնը, վէրքն ու ցաւերը, և միայն տարւում էին մի գերագոյն ապրեցումով: Այդ գաղափարական եւ հերոսական դիմադրութեան հանդէպ քիւրդերի անմիտ եւ ոչխարանման յարձակումները ո՛չ մի նշանակութիւն չունէին: Նրանք իրենց յոյսը իրենց ձայների, աղմուկների վրայ էին դրել եւ միաժամանակ էլ իրենց վերջին դրոհը պատրաստել՝ կամ գրաւելու հայդուկների դիրքերն ու նրանց անխնայ կոտորել եւ կամ յետ նահանջել՝ միւս առաւօտեան աւելի մտածւած եւ պատրաստւած արշաւանքի սկսելու:

Անշեղ գնդակները տարափի տակ քրդերն իրենց գլուխը կորցնում եւ ուժերը կենտրոնացնում են Թաւրաւայի դիրքի չուրջը: Շուտով մի խումբ տղաներ օգնութեան են հասնում եւ պատնէշ կանգնեցնում նրանց առաջ: Թշնամին կատաղում, բորբոքւում էր, երբ իրենց հրացանների գնդակները ընկնում էին տղաների դիրքերից քսան-երեսուն քայլ հեռաւորութեան վրայ, իսկ չեզոքախառնների գնդակները իրենց նպատակին էին հասնում:

Քիչ յետոյ Յանիկում կռիւը աստիճանում է, ուր կենտրոնացել էին համիդիէ եւ կանոնաւոր զինուորները, որոնք իրենց դիրքերից չէին համարձակւում ելնելու:

— Ամօ՛թ է, ամօթ, կանչում էին հայդուկները. «ղոչ»ի կռիւ է, ասպարէզ ելէք:

Այդ յարձակման ժամանակ Ջաւար աղայի եղբայրն իր ուժը մարդկանցով ընկնում է, իսկ իր տրպան վիրաւորւում է ճակատից, որից յետոյ իր մարդկանցով վախչում է:

Շուտով կռիւն ամէն կէտի վրայ դադարում է, բացի մէկից, ուր Կարօն 15–20 ընկերներով կռւում էր հերոսաբար: Լուսինն արդէն իր դէմքը պարզել էր ամպերի տակից, երբ եւ հրաման է տրւում ի մի հաւաքելու, որպէսզի նահանջի համար պատրաստութիւն տեսնեն: Կարօն դեռ չարունակում էր կռւել, այն էլ քսան-երեսուն քայլի վրայ: Դիրքում մնացել էին ինքն ու կրէտացին, որոնք չրջապատւել էին 25–30 քրդերով: Այդ միջոցին ընկերներից մէկը հասնում է նրան, խնդրում է վերջացնել կռիւը եւ որոշած տեղը հաւաքւել, բայց Կարօն մերժում է ասե-

լով. «սրանց հէրն անիծած, ես դեռ պէտք է կռուեմ»:

— Բայց հրաման է տրուած քաշուելու, տղերքն արդէն գնացին եւ մեզ չեն սպասի, պնդում են ընկերները: Կարօն յամառում է եւ Կրէտացու հետ շարունակում է օրհասական կռիւը: Նա անպատուութիւն է համարում իր թիկունքը դարձնել թշնամուն. և չնայած որ դեռ առաւօտեան կռիւներին աջ թեւից վիրաւորուած է եղել ուխտուած հայդուկը՝ խիզախ Կրէտացու հետ կռւում է քաջաբար, լուծում է հայի դարաւոր վրէժը եւ սիրած գիրքերի մէջ մնալով՝ նահատակւում է ընկերոջ հետ....

Գիտակցական մահը հաւասար է անմահութեան, իսկ նրանք մեռան սիրով եւ յօժարակամ...

Արաուլի արեւմտեան փէշերի վրայ իջնող երկու լեռնաշղթաներն էին ընտրուած իբրեւ նահանջի ճանապարհ, որ պաշտպանւում էր առաջուց: Մինչ այդ, բոլոր տղաներն էլ հաւաքւում են, պայուսակները բացած հալւա ու գաթա են ուտում և օրուայ պատահարներից խօսում: Շատերը չէին ցանկանում վերադառնալ, նրանք այն կարծիքն էին յայտնում, որ պէտք է մնալ եւ նահատակուած ընկերների վրէժը լուծել:

— Վալլահ, լաւ բան ի, ես ոչ ոքի մտիկ չեմ տայ, քասսուն խոքի կ'առնեմ, կ'երթամ էն չաթրճերաց վրայ, խօսում էր հարիւրապետ Յ., որ սկզբում այս արշաւանքի դէմ էր գնացել եւ համամիտ չէր:

Մի այլ տեղ, հայաստանցի պարզ գիւղացիները, քննադատելով քրդերին, չեշտելով նրանց վախկոտութիւնն ու թուլամորթութիւնը, կրկնելով իրենց

յաղթանակները, չէին մոռանում խարազանելու եւ այն հայերին, որոնք «ծառի տակ պառկած, բերանը բաց են արել, որ խնձորն ընկնի մէջը»: Այդ մանրանրկարները ցոյց են տալիս թէ՝ ո՛րքան յեղափոխութեան ցանած սերմերը հասունացել են: Ժողովուրդը նոր դիտակցութեան է եկել եւ միաժամանակ այն, որ դրանցից իւրաքանչիւրն իր ընդհանուր մի մասնացած բողոք պիտի լինի եւ կենդանի պրօպագանդ առաջ տանող:

Կենտրոնական խումբը պէտք է առաջ անցնէր: Քսան հոգուց բաղկացած մի խումբ, որի մէջ կային ընդհանուր հրամանատարն ու Դումանը, կազմեցին յետնապահ խումբը, որ ո՛չ մի վտանգ չսպառնայ միւսներին: Խումբը կարողանում է ապահովաբար տեղ հասնել, իսկ այդ քսան հոգու հետ շատ արկածներ են պատահում, որոնց վրայ արժէ թեթեւ ուշադրութիւն դարձնել:

Որպէսզի թշնամուց աննկատելի մնան եւ իրենց ճանապարհները յայտնութեամբ չարունակեն, խումբապետները բաժանւում են եւ քայլում որոշ տարածութեան վրայ: Բաժանւելով նրանցից՝ Դումանն առաջ է անցնում եւ քիչ յետոյ լսում է օգնութեան մի ճիչ: Ձայնից ճանաչելով ընկերոջը, նա վազելով օգնութեան է հասնում: Ընկերը վիրաւոր ընկած էր, սրեխները կորցրած եւ անկարող քալելու: Դումանը մի ձի է գտնում, նստեցնում է նրան եւ այսպէս, կամացուկ առաջ է ընթանում, երբ մի դնդակ վիրաւորում է Դ–ի ձախ թեւը: Նա դրա վրայ ուշադրութիւն չի դարձնում, այլ աւելի շուտ մտածում է թէ՝ ինչպէս ապահով տեղ հասնեն, մանաւանդ

որ ձին էլ բաւականաչափ յոգնած է լինում: Վերջապէս, ճանապարհների դժուարութեան պատճառով, Դուման ընկերոջ լքեցնում է ձիուց, հագցնում է նրան իր տրեխներն ու երկու օր անընդհատ քալելով ապահով տեղ են հասնում:

Մի այլ փոքրիկ խմբակ, բաղկացած 8–9 հոգուց, բոլորովին այլ ճանապարհով քալելով՝ հասնում է մի ձոր: Վերեւի բլրակից լսւում են հրացանների ձայները. դրանք զրդեր էին, որոնք սուլում էին, «տղաները» էին կանչում (իմանալով որ յեղափոխականներն այդպէս են անւանում իրար), վնտռում էին քարերի յետեւը: Հայդուկները իսկոյն հրացանները լեցրած, քարերն ի վեր մագլցելով բարձրանում են բլուրը՝ թշնամուն չրջապատելու, բայց նրանց այնտեղ չեն կարողանում գտնել: Սարսափելի յոգնածութիւնը, անորոշ ճանապարհը, ընկերների անյայտութիւնը եւ անտանելի ծարաւը տանջում էին այդ փոքրիկ խմբակին: Բլրակից ցած իջնելով՝ նրանք մտնում են մի խոտաւէտ դաշտ, որի մէջից առւակն էր հոսում: Անկարագրելի էր նրանց ուրախութիւնը: Բոլորն էլ վրայ են հասնում, խոտը յետ յետ դարձնում, անկշտօրէն խմում, ապա ջրամաններն էլ լեցնելով՝ ճամբայ ելնում: Պէտք էր մի ուրիշ տեղ պատսպարուել, չարմարաւոր դիրքեր բռնել, մինչեւ մութը վրայ ընկնէր:

Բարձրանալով ծօսակայ սարը, նրանք դիրքեր կը պատրաստեն, հրացաններն կը լեցնեն ու զրկած կը պահեն:

Անուշ քնի մէջ են լինում տղաները, երբ յան-

կարծ մարթին հրացանի ձայներ են լսում: Նրանք իսկոյն վեր են թռնում իրենց տեղերից, դիրքեր գրաւում եւ պատրաստւում յարձակւելու թշնամու վրայ, կարծելով թէ սրանք շրջապատել են յետ մնացած հայդուկներին, բայց ո՛չ մի մօսին հրացանի ձայն չլսելով, խոհեմութիւն են համարում լռել: Քրդերը երեք—չորս ժամ փնտռում են, ման են գալիս քարերի յետեւը, ձորերի մէջ, սուլում, կանչում, երբեմն էլ հրացաններ արձակում, բայց տեսնելով որ ոչ ոք չի պատասխանում եւ հաւատացած որ ջանֆիդայիներ չկան, թողնում հեռանում են: Այդ դէպքից յետոյ խմբի տղաները վեր են բարձրանում, մանրամասն ուսումնասիրում են շրջակայքի ճանապարհները եւ որոշում թէ՝ ի՞նչ գծով պէտք է առաջ անցնեն:

Երեկոյեան մութն ընկնելուց յետոյ, նրանք իրենց թաքստոցից ցած են իջնում. 24 ժամ ծարաւ մնալուց յետոյ, ձորի մէջ աղբիւր են գտնում, կէս ժամի չափ նստում մօտը, հանգստանում, ծարաւնին յագեցնում ու առաջ անցնում: Վեց օր էր ճանապարհ էին քայլել և ուրաքանչիւր օր հազիւ մի քանի ժամ հանգիստ առել: Քառասուն ժամ էր ոչինչ չէին կերել և երեւակայեցէք թէ ո՛րպիսի ուրախութիւն կարելի է պատճառել տղաներին, երբ հասնում են մի գիւղ, ուր կարելի էր երկու օր հանգիստ առնել եւ սպասել միւս ընկերներին:

Կենտրոնական խումբն ապահովաբար անցել էր իր տեղը, իսկ առանձին խմբակներն էլ, ահագին նեղութիւններ քաշելով՝ կարողանում են գտնել իրար: Ի՞նչ մաքուր, գաղափարական բոյներ էին լինում

դրանք, երբ եղբայրաբար գրկախառնուում էին իրար, արցունքները թաւխում: Զէ՞ որ փոխադարձաբար իրար կորած, նահատակուած էին համարում, իսկ այժմ առողջ էին եւ իրար քով:

Այսպէս վերջացաւ Յանասօրայ արշաւանքը:

Եւրոպական բոլոր մեծ թերթերն արձագանգեցին այդ յեղափոխական քայլին եւ ուրախութեամբ արձանագրեցին այն, որ հայ ֆիդայիները չարաճիտներ եւ աւազակներ չեն, այլ որ նրանք գաղափարական անձնաւորութիւններ են, որոնք խնայում են թոյլերին, կանանց եւ երեխաներին, իսկ աւարառութեան ո՛չ մի տրամադրութիւն ու որոշում չունէին: Թիւրք պաշտօնական ներկայացուցիչները եւ մասնաւորապէս նրանցից կաշառուած թերթերը հայ ժողովրդին համարում էին խուժադուժ, աւազակաբոյ: Յանասօրայ արշաւանքի առթիւ թիւրք կառավարութիւնը աշխատում էր ցոյց տալ Եւրոպային մատծոլ եւ հետաքրքրուղ հասարակական խաւերին, որ փայլուն յաջողութիւն հայերը չեն ունեցել, բայց երբ այդ անյաջող է անցնում, նա դիմում է երկրորդ միջոցին՝ պաշտօնական ազդով «Կօրէսպօնտանղ Պօլիտիկի» մէջ բացատրութիւն է տալիս, որ դրանք կաշաղներ են, որոնք կողոպտում են խեղճ հասարակութեան:

Եւրոպական մամուլը երեսան հանեց ընդհակառակը եւ դովասանքով խօսեց այդ չարժման մաքրութեան եւ հայերի քաջութեան մասին: Դիւանագիտութեան թիւրք կառավարութիւնն հասատացրել էր, որ այլեւս յեղափոխական խմբեր չկան, որ նրանք մեռան եւ մոռացուեցան, որ երկիրը խաղաղ

է, իսկ հայ հասարակութիւնը՝ չնորհակալ, որ «հայ ժողովրդի ծայրագոյն տարրերը, ինչպէս նաեւ կօմիտէները, ահաբեկ եղած կոտորածներէն, ամէն յոյս կորուսած են նոր չարժումի մը յաջողութեան մասին»:

Այդ չարժումը թիւրք կառավարութեան չփոթեցուցեց, նա մեծ քանակութեամբ զօրք փոխադրեց դէպի ռուս-պարսկական սահմանագլուխը, մեղադրեց Պարսից կառավարութեան, որ իբրև թէ՝ համակրանք էր ցոյց տալիս դէպի ապստամբները եւ ամէն կերպ նպաստում էր հայերին: Թիւրք բարձր պաշտօնեաներն զգացին, որ քիւրդերն այնքան էլ տոկուն եւ կուռոդ չեն, եւ որ անկարող են պատնէշ կանգնել յեղափոխականների առաջ:

Վանն էլ մեծ պատրաստութեան մէջ էր, ամէն կողմից դինուորներ էին լեցւում և դիրքերն էլ ամրացւում: Ահ ու սարսափից կառավարութիւնն իր մօտ կանչեց հայ եպեւելիններին, առաջնորդին եւ հետեւեալն յայտարարեց.—

«Եթէ հայ հրոսակներ քաղաք գան, որեւէ տան մէջ ապաստանին, իսկոյն իմաց տուէք ինձ: Եթէ տունը վառել իսկ հրամայեմ, հոգ մի՛ ընէք, իմ ծախքով պիտի չինել տամ: Իսկ եթէ չիմացնէք — վա՛յ ձեզ, ամբողջ ժողովուրդը կոտորել կուտամ, առանց նայելու սեռին եւ հասակին»:

Կառավարութեան այդ անուժութիւնը մի կնդանի պրօպագանդ է ժողովրդի մէջ, ինչպէս եւ հրապատակ ցեղերը կը սկսին անվստահութիւն տածել, իսկ այդ բոլորի դիմաց հայ Ֆիդայու հմայքն աւելի կը բարձրանայ, յեղափոխութիւնն էլ կը ծաւալւի:

Ի՞նչ դիրք բռնեցին հայ կղերականներն ու հարուստները.— ինչպէս միշտ՝ քծնող, քսու եւ բացասական: Թէ՛ Վանում եւ թէ՛ այն ժամանակւայ պատրիարք Օրմանեանը Պօլսում՝ անմիջապէս որոշեցին հաւատարիմ հպատակութեան զգացմունքները սփռել վեհ. սուլթանի ոտների ներքոյ, կռիւ յայտարարեցին յեղափոխականների դէմ, ամէն միջոցի դիմեցին վարկաբեկելու անձնուրաց եւ հասարակական շահը պինդ գրկած հայդուկներին: Նրանք խորին հնազանդութիւն յայտնեցին թիւրք կառավարութեան, որ վերջին դէպքերի առթիւ շատ հայրաբար է վերաբերուել դէպի հայութիւնը... այսինքն կոտորած չի սարքել ու միաժամանակ իրենք էլ սկսեցին գրել, տարածել, յայտարարել, որ դրանք ապստամբներ են, գողեր են եւ ժողովրդի շահերին վնասողներ: Նրանց այդ բացասական վերաբերմունքին իրրեւ պատասխան բաւական է յիշել գերմանական Թերբէի թղթակից եւ ճանապարհորդ, այդ ժամանակ պարսկա-թիւրք սահմանագլխում գտնւած Հանս Ֆիւէրի նկարագրութիւնը:

«Արշաւախումբը կազմւած էր երեք հարիւր հոգուց, դրանց մէջ 25 ձիաւոր: Արշաւանքը կատարւում էր այն կարգով ու ձեւով, ինչպէս պրուսական զօրքի մէջ, ես անձամբ տեսայ: Զօրքը մեծ մասամբ բաղկացած էր բազում դժնդակ փորձերից անցած հասակաւոր մարդկանցից: Մռայլ, լուրջ դէմքեր, պողպատէ կազմւածքներ: Ես աւելի շատ վատ էի երեւակայում այդ տարրերը: Տիրօլի ազատութեան դիւցազուններն էին յիշեցնում այդ մարդիկ՝ իրենց լայնալանջ, ջղուտ եւ կարճ ու լիքը կազմւած

քով: Շատերը նրանցից կռուածների ժամանակ կորցրել էին կին, որդիք, եղբայրներ եւ ծնողք: Իսկոյն նկատւում էր, որ խնդիրը երեւակայական, թեթեւամիտ խաղի մասին չէր, այլ լուրջ գործի»:

Եւ այսպէս, ընդհանուր կռուածներից յետոյ, երբ վհատութիւնը տիրել էր բոլորին, երբ յեղափոխութեան բարեկամներն անգամ երես էին դարձրել գաղափարական աշխատանքից եւ երբ ռէակցիան թեւատարած քնացրել էր հայ ժողովրդին, Խանասորայ արշաւանքը եկաւ ցնցելու բոլորին, թուլերին ոգի ներշնչելու, անհաւատներին՝ յոյս եւ խանդավառութիւն: Այսքանն էլ բաւական էր ցոյց տալու, որ հայը կռուող չի համարւում, այլ եւ կոտորող, որ նա վախկոտ չէ, այլ եւ վախեցնող, եւ որ նա գիտէ իր պատիւը զէնքով պաշտպանել:

## ԹԵՂՈՒՏԻ ԿՌԻՒԸ

Աղբիւր–Սերոբը, Բաղէշի շրջանի հայ թէ թիւրք հասարակութեան համար աներեւոյթ ուժի համբաւ էր ստացել: Քրդական ցեղերը նրա անունից ահ ու սարսափի մէջ էին: Կառավարութիւնն էլ ամէն միջոց գործադրեց նրան ձերբակալելու, բայց չյաջողուեց, որովհետեւ հայ ժողովուրդն իր համակրութեամբ պաշտպան էր հանդիսանում նրան:

Յուլիսի վերջերին, երեսուն հասանցի քիւրդ ձիաւորներ յարձակում կը գործեն Թեղուտ գիւղի դաշտերի վրայ եւ տաւարը կը քշեն: Այդ լուրն անմիջապէս Աղբիւրին կը հասնի, որ չորս ընկերներով, առանց սպասելու, իսկոյն օգնութեան կը հասնի եւ

երկուստեք կատաղի կռիւ կը սկսւի: Չորս յեղափոխականները, տարբեր դիրքեր մտնելով, թաղնւելով բաւական մեծ քարերի յետեւ, սկսում են գնդակներ տեղալ ոչխարի հօտը քշող քիւրդերի վրայ ու նրանց մէջ չփոթ առաջացնել: Քիւրդերը խորամանկութեան կը դիմեն: Երկու-երեք հոգու կը պատւիրեն աւարը քշել, իսկ միւսները կը շարունակեն գնդակ տեղալ եւ պաշարել քառեակին:

Հինգ-վեց ժամ կռիւը տեւում է: Թշնամին անկարող էր որեւէ վնաս հասցնել տղաներին: Մօսիններն իրենց յատուկ դերն էին խաղում: Մի քանի սպանւած եւ վիրաւոր քիւրդեր արդէն փռւում են դաշտում: Տասնեակ ոչխարների փոխարէն քիւրդերի գլխակներն են ընկնում: Այդ իրենց կրած վնասը կատաղեցնում է հասանցիներին, որոնք վճռում են խորտակել յեղափոխականների բոյնը: Աղբիւրը հրաման էր տւել աւելորդ գնդակ չփճացնել, եւ երբ փրփրած աւազակները դիրքերին են մօտենում, իրար յետեւից լսւող համազարկերը ստիպում են նրանց յետ նահանջել:

Գիշերւայ ժամի 1-ն էր, երբ թշնամին յուսահատ լքում է դիրքերը: Տղաներն էլ իրենց տեղերից ելնելով շարունակում են ճանապարհը՝ առաջ տանելու իրենց յեղափոխական գործունէութիւնը: Աղբիւր-Սերոբը ժողովրդի սիրելին էր դարձել, որովհետեւ նա ո՛չ թէ մեծ արշաւանքներ էր ծրագրում, այլ նրա կռիւները կապ ունէին ժողովրդի առօրեայ կարիքների հետ; նա պաշտպանում էր գիւղացիներին ամենօրեայ աւազակներից, օգնութեան էր հասնում վտանգի րոպէին եւ թոյլ չէր տալիս, որ անզէն

եւ անպաշտպան հայութիւնը սարսափի մէջ լինի: Նա հայ գիւղացիների պահապանն էր, իսկ թշնամիների՝ հոգէառը:

**ՌՈՒՄԲԵՐԸ ՊՈԼՍՈՒՄ**

Վճռուած էր Պոլսոյ գըլխաւոր կենտրոններում, օգոստոս 9-ի օրը, մի քանի ռումբեր պայթեցնել, Բանկ Օտտոմանի տարեդարձի մօտալուտ լինելը յայտարարելով:

Օսմանեան Բանկայի շինութեան մէջ կը մտնի Դաշնակցութեան ահաբեկիչներից մէկը՝ ուժանակի ծրարը ձեռքին: Պահապանները կասկածելով՝ հարց ու փորձ կ'անեն: Կ'աշխատեն տղային ձերբակալել: Վերջինս պաղարիւնութեամբ, առանց շփոթուելու, ամէն միջոց գործ կը դնէ ռումբը սիկարով պայթեցնելու, բայց նրան այդ չի յաջողւի, որովհետեւ պետական զինւորներից մէկը ձեռքին զարնելով՝ արգելք կը հանդիսանայ:

Ահաբեկիչը կը ձերբակալւի:

Նոյն օրը եւ նոյն ժամին՝ Կալաթա-Սէրայի առջեւ երկու ռմբաձիգներ պատրաստ էին մի ուժեղ հարւած տալու կառավարութեան զինւորներին: Նրանք վճռել էին որ մէկը ռումբը պիտի նետէր, որի վրայ ոստիկաններ եւ զինւորներ պիտի հաւաքւէին, որից յետոյ միայն երկրորդը պիտի ռումբը պայթեցնէր: Առաջին ռումբը չի պայթում, իսկ տղան էլ ձերբակալւում է: Երկրորդ ընկերն էլ, առաջուց նկատւած լինելով, նորից թակարդն է ընկնում: Այդ դէպքն էլ է վիժում:

*Երրորդ առաքը, նոյն օրը, պիտի պայթէր Բ. Դրան «Թէշրիֆաթ»ի սենեակներէն մօտ:*

*Որոշած ժամին երկու ահաբեկիչները ներս են մտնում՝ ծրարը ձեռքին: Ներանք անմիջապէս մըտնում են ներքանցք, որ բաւականին երկար տարածւում էր եւ ուր բոլորովին մարդ չկար: Այդտեղ կային ձիաններ, ախոռներ եւ սպասաւորի սենեակներ: Նախարարների սեղը բաւականաչափ հեռու էր: Երկուսով, առանց տատանուելու, առաջ են անցնում եւ մտնում մի ներքանցք, ուր բաւականին բազմութիւն է լինում հաւաքւած: Ամբոխը, խնդրատուները լեցուել էին, խօսում–վիճում էին, իսկ սօֆթաները ծալապատիկ դեռինը նստած՝ ծխում էին: Ահաբեկիչները, ընտրելով «Թէշրիֆաթ»ի սենեակը, նստում են դրան դիմաց ու ոտերի մէջ առնում ծրարը: Ձորս անգամ սիկարը կպցնում են, բայց պատրոյդը չի վառւում: Նոր սիկառ վառելով՝ այս անգամ կրակը կպցնում են ու իրենք կամացուկ դուրս են գալիս փողոց, ուր եւ անհամբեր սպասում են պայթիւնին: 48 վայրկեանից յետոյ լսւում է մի ուժեղ ձայն, երկիրը ցնցւում է, շինութիւնների պատերը չարժւում են, թիւրքերը խելակորոյս վախչում են դէպի դուրս, խանութպաններն իրենց խանութները են դոցում, իսկ մի քանի տասնեակ ոստիկաններ, ահաբեկիչների մօտով վազելով դէպի դէպքի վայրն են չտապում:*

*Կառավարութիւնն ապշահար է: Ահաբեկիչները կը փնտռեն, բայց անուն չդիտեն, այլ մխայն սրտաքին նշաններ ունին՝ խարտեաշ, սեւ, շագանակագոյն մազեր, երկար կամ կարճ հասակ, կա-*

պոյտ աչքերով երիտասարդները: Ամէն անցորդ որ իր մօտ ծրար ունի՝ խուզարկութեան է ենթարկւում: Յոյն վիրաբոյժ պ. Լօզոֆէթիսին կառքի մէջից կը հանեն, ծրարը հետը կը քաշքշեն, ոստիկանատուն տանելով կը խուզարկեն եւ միայն բժշկական դոծիքներ գտնելով՝ ազատ կ'արձակեն: Թիւրք պաշտօնեաները կատաղած են այդ դէպքի առթիւ: Կասկածի տակ են բոլոր հայերը, որոնց հետ խօսակցութեան ժամանակ թիւրքերը հեգնում են «ռումբ մըն ալ դուն նետէ, որ քեզի արտաքին գործոց նախարար ընենն»:

Ձերբակալութիւնները սկսւում են ուժեղ կերպով: Կէտիկ-Փաշայի կողմերը ձերբակալելով քանի հատ հայ երիտասարդներ՝ դէպի Գում-Գաբու են տանում, եւ որպէսզի ոտքի ձայները չլսւին՝ կօշիկները հանել են տալիս: Նոյն օրը Պօլսոյ Կենտրոնական Կոմիտէն մի յայտարարութիւն է ուղարկում վեց պետութիւնների դեսպաններին, յիշեցնելով հայ ժողովրդի անտանելի դրութիւնը, եւրոպական դահլիճների անտարբերութիւնը դէպի հայկական բարենորոգումները, շեշտելով միաժամանակ, որ այս բոլորը նախերգանք են այն մեծ չարժումների, որ հայ յեղափոխականները պատրաստւում են իրագործելու, եթէ միայն չտեսնեն ուշադրութիւն դարձնեն հայկական տառապանքների վրայ: Յայտարարութիւնը վերջանում է հետեւեալ տողերով — «Մենք կը պահանջենք, որ տիրող բռնութեան եւ անտանձ կառավարութեան փոխարէն՝ օրէնքը մեզի թագաւորէ: Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իբրեւ մարդ ապրելու համար եւ եր-

բէք չպիտի դադրենք գործելէ մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի եւ նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործուած պահանջները»:

Տեղւոյն այս դէպքերի առթիւ յեղափոխական տարրերը հրճւանքի մէջ էին, երիտասարդութիւնն աւելի ոգեւորուած էր, չնայած կանխօրօք պատրաստուած ծրագիրն ամբողջովին իրագործուած չէր:

Կառավարութիւնն աւելի զգոյշքի մէջ էր ընկել. նա սարսափահար էր լինում աներեւոյթ ձայներից եւ ռումբերից: Նրա ներկայացուցիչ ոստիկաններն ու լրտեսներն ամէն կերպ աշխատում էին մի անգամից խորտակել յեղափոխականների բոյնը եւ այդ նպատակով էլ առիթը չէին փախցնում օգուտ տալու հայ հարուստների եւ կղերի օժանդակութիւններից:

Պէտք է նշել, որ օգոստոս 9-ի առաւօտեան, Օրմանեանը խառն ժողով է գումարել տալիս Ղալաթիա, յայտնում որ յեղափոխականները նոր դէպքեր են պատրաստում, ուր եւ վճռում է կանխօրօք յայտնել կառավարութեան, որպէսզի վերջինն աւելի նեղողամիտ լինի դէպի «հայ ժողովուրդը» (իմա՛ աղաները): Մինչ նրանք պատրաստւում էին Բ. Դուռ դնալու եւ դրուչացնելու դալիք դէպքերի համար, ռումբը պայթում է...

Այդ դէպքերից յետոյ, Օրմանեանը սուլթանի իր վրայ դրած յոյսերն իրականացնում է: Նա իր շնորհակալութիւնն է յայտնում մարդասպանին, որ որոշել է միայն «մեղաւորներին» պատժել, իսկ ինքն էլ իր կողմից պատւիրում է քահանաներին եւ քա-

*բոլշեւիկներին, յորդոր կարդալ ժողովրդին՝ հաւատարիմ մնալու պետութեան, պահպանել կարգ ու կանոնը, եկեղեցական ու դպրոցական հիմնարկութիւնների մէջ «վնասակար» մարդկանց չընդունել եւ ամէն կերպ հոգ տանել հանրային ապահովութեան: Իր այս քայլով պատրիարքը վոխադարձ լրտեսութեան դուռ է բաց անում, չեղափոխականներին մատնելու ճանապարհ է ցոյց տալիս:*

*Այդ բոլորի արդիւնքն այն է լինում, որ ձերբակալուածներից տասը հոգի մեղադրւում են իրրեւ հեղինակներ ամբաստին գործողութիւնների, որոնցից ութը հոգին մահուան են դատապարտւում:*

*«Դրօշակ»ի խմբագրութիւնն այդ առթիւ սեպտեմբեր 6-ին հետեւեալ հեռագիրն է ուղղում եւրոպական մեծ պետութիւնների արտաքին գործոց նախարարներին.— «Թոքատի կոտորածների հեղինակները ներման արժանացած լինելով, վրդովեցուցիչ անտարբերութիւն կը լինի թոյլ տալ մահով պատժել քաղաքական յանցանքների համար վերջերս դատապարտւած հայերին: Խնդրում ենք ձեր վսեմութիւնից արդեօք հանդիսանալ դուռ արիւն թափելուն, որը միայն ներկայ կացութիւնը ծանրացնելու կը ծառայի»:*

## ՔԱԹԱԽԻՆԻ ԵՒ ԱԻԵՐԱԿ ՋՐԱՂԱՑԻ ԿՈՒԻՆԵՐԸ*)

*Ականաւոր պատմական յաղթանակից յետոյ, երկերը խմորումների մէջ էր եւ չնորհիւ Դաշնակցութեան կանոնաւոր եւ ա-*

*) Դէպքն իր մանրամասնութիւններով դրի առաւ

նընդհատ գործունէութեան, կազմակերպուած շըրջաններն օրէցօր աւելանում էին եւ հսկայական ցանցով պատում՝ Վան, Տարօն, Սասուն, Ախլաթ ու Բաղէշ, մինչեւ վերին Բուլանըխներ, Կոր, եւն.: Այդ շղթայի ղեկավարութիւնը գտնւում էր այնպիսի փորձառու եւ ժողովրդականացած անհատի ձեռքում, ինչպիսին էր Աղբիւր-Սերոբը:

Արշաւանքից յետոյ ժողովրդի զինման գործին նւիրուած յայտնի եւ անյայտ ընկերներ՝ Սեմօնը, Ալեքսան Զիլօեանը, Հայրոդ-Մղճուկ եւն., ամէն միջոց գործ էին դնում՝ գիշեր թէ ցերեկ, աւելի լայն շրջաններ առնել իրենց ցանցի մէջ: Նրանցից ամէն մէկը միւսի գաղափարական ուսուցիչն էր, որ վտանգի եւ զուլումի օրերին բազմահագուստ պտըտում էր ժողովրդի մէջ՝ վարժապետի կամ քահանայի, երբեմն էլ Թիւրք շէյխի կամ մօլլայի դերում...:

Երկրի ներսի ուժը զուտ տեղական եւ հաստատուն էր: Ամէն մի խումբ իր որոշեալ շրջանն ու սահմաններն ունէր: Կարիք էր զգացւում միայն դրսից եկած մի սուսար Թռուցիկ խմբի, որի ներկայութիւնը կարողանար որոշ ազդեցութիւն թողնել շրջակայ աշիրաթների եւ կառավարական պաշտօնեաների վրայ:

Այդ նպատակով եղած բանակցութիւնները յաջողութեամբ են պսակւում եւ ահա 1898 թւին, սեպ. սկիզբներին մի մեծ խումբ, բաղկացած 78 հոգուց

---

ընկեր Հայաստանցին, ականատեսի պատմածի հիման վրայ:

եւ առաջնորդութեամբ Առաքելի, Մուշեղի (Եղդանեան), Գէլենց Առիւծ Կարապետի, ճամբայ է ելնում Մանազկերտ-Բուլանըխ գծով, աշխատելով ամէն կերպ խուսափել աւելորդ և անժամանակ կռիւներից:

Սեպտեմբերի 3-ին խումբն հանդիպում է առնում Սիպկնոց սահմանի մէջ՝ Քէօշկայ լերան արեւելեան ստորոտում (Քէօշք՝ սիպկնոց քիւրդ բէկերի գիւղն է, որ իր մէջ խոշոր ապարանք ունի, որի համար եւ գիւղն ու շրջակայքը Քէօշք են կոչւում): Քիւրդ երկու պահապաններ հեռւից նկատում են այդ գինւած եւ օտարոտի մարդկանց խումբը, իսկոյն հաւար են ձգում ու 2-2500 համիդիէ զինւորներ, ձիաւոր ու հետեւակ քիւրդեր մրջիւնի նման դէպի տղաների դիրքերն են վազում: Անմիջապէս հայդուկները էլ են գործի անցնում եւ յարմարագոյն վայրերը գրաւում: Կռիւն սկսւում է: Քրդերը մի քանի անգամ գրոհ են տալիս, խտացած շարքերով, բայց քաջարի մարտիկների ճօճիններն անմիջապէս յետ են մղում նրանց: Թշնամին բազմաթիւ զիւակներ է տալիս: Նա անկարող է մի քայլ առաջանալ: Ամբողջ օրն անընդհատ կռւելուց յետոյ, երեկոյեան դէմ, քիւրդերը փախուստի են դիմում:

Գիշերւայ մթութիւնից օգտւելով՝ հայդուկները անցնում են Քէօշքայ լերան մեւս կողմը՝ Քաթաւին բարձրանալու համար: Դժբաղդութիւնն հետապընդում էր նրանց. հազիւ մի քանի ժամ ճամբայ էին կտրել, երբ պատահում են քրդական պահակախմբի, որ տղաների դիրքերն էր ուսումնասիրում: Հրացան պարպելու ժամանակ չէր եւ ահա լուռ ու մունջ,

խէնչարները ձեռներին հայդուկներն յարձակւում են քրդերի վրայ, սրախողխող են անում շատերին եւ միայն մի քանի հոգի հնարաւորութիւն են ունենում փախչելու եւ լուր տանելու աշիրաթներին:

Երեք ժամ էլ քալելով, յոգնած ու սոված հայդուկները մի կերպով բարձրանում են Քաթաւին լեռան գագաթը՝ Կարակայա գիւղի ուղղութեամբ: Սոված եւ ուժասպառ, նրանք անմիջապէս բանջարեղէններ են որոնում՝ ուտելու համար եւ մի կողմից էլ մտածում են հաց գտնելու մասին:

«Անիծեա՛լ սովութիւն», խոր ա՛խ քաշելով ասաց Առաքելը, «հացի պակասը միշտ մեր թշնամին է եղել»: Մինչ նրանք հացի մասին էին խորհում, Քաթաւին լեռը կամաց-կամաց պաշարւում էր: Շրջանի Դուլթաղ գայմագամանիստ քաղաքից հեռագիր են խփում Մանազկերտի բերդը թէ՝ «ֆիդայիները մեզ հետ կատաղի կռիւ մղելով բարձրացան Քաթաւին: Դիմադրում ենք, դուք էլ այդ կողմից օգնութեան հասէք»:

Այս հեռագրին վրայ, տեղական երկու հարիւրի չափ կառավարական զինւորներ եւ բազմաթիւ քրդեր՝ հասանանցի բէկերի առաջնորդութեամբ, պաշարում են տղաներին հիւսիսային թեւից:

Հէյդարցի աշիրէթներն էլ դէպի Քաթաւին են բարձրանում Մարմուզ կէս հայաբնակ գիւղի կողմից, իսկ սիպկիցիք՝ Բէօշքայ կողմից դէպի լեռ են ելնում :

Արշալոյսին, երբ հայդուկները թշնամուց շըրջապատւելն իմանում են, չնայած յոգնածութեան եւ քաղցին, մի րոպէ կը մոռանան ամէն ինչ եւ խմբի

«Մահ կամ Ազատութիւն» վերտառութեամբ ժապաւէնեայ դրօշն են բարձրացնում:

Սկսւում է կատաղի եւ անհաւասար կռիւը: Տղաներն իւրաքանչիւր մի գնդակ իր նպատակին են հասցնում, որի համար եւ շատ անգամ գովասանական խօսքեր են լսում թշնամիներից:

Ահա Ալիար քիւրդ գիւղի չէյխի երկու «թոռուն» (կորիւն) տիտղոսը կրող որդիներն առաջ ընկան, եւ գնդակների տարափի տակ, կրօնական կանչերով եւ հայհոյանքներով «կուռէ խորսէ՛, ամ հաթըն (հոտաներու տղաքներ, մենք եկանք) կանչելով դէպի դիրքերը վազեցին: Տղաներն իրարու ձայն տուին եւ հրացանների զարկը դադրեց: Քիւրդի լաճուկներն աւելի ոգեւորուեցին ու դէպի վեր ելան, Մուշեղի դիրքից անզգալաբար դէպի Գէլենց Կարօն անցան: Այդ ժամանակ տղաներն հրացանները դէպի նրանց ուղղեցին, պահանջելով «թէսլիմ, թէսլիմ պըպըն, հէ՛յ, կուռէ՛ քէրէ», (անձնատուր, անձնատուր եղէք, իշու ծնունդներ): Ահ ու սարսափ տիրեց նրանց: Հայդուկները երկուսին էլ բռնելով, տոն ու ձեռքը կապելով՝ մօտակայ խոտի դէզի մէջ ձգեցին ու լուցկիով կրակ տուին, այրեցին:

— Մատաղ կ՚ուղարկեմ քեզ, ո՛վ եօթն անուան տէր Սուրբ Կարապետ, ասաց Կարօն ու գնդակներն ուղղեց դէպի սիպկնցոց խուժանը, որ լերան ետեւից դէպի վեր էր բարձրանում: Հայդուկներն իսկոյն տասնեակների են բաժանւում: Կարակայա գիւղի դիրքի մէջ են քաջարի եւ փորձուած տղաները՝ Առաքելը, Մուշեղը, Կարօն և ուրիշ հինգ ընկերներ: Բոլորն էլ ոգեւորուած են և կռւում են խոր հաւատքով:

*Յուսահատութեան ո՛չ մի նշան: Թշնամին այդ ըղձում էր եւ անկարող էր գլխադրել: Անօթութիւնն էր որ շատ էր նեղում տղաներին: Եւ ահա նրանք ութը հոգուց բաղկացած «հացի յանձնախումբ» են ընտրում, որի պարտականութիւնն էր անյապաղ ուտելիք գտնել: Կէսօրին մօտ էր: «Հացի յանձնախումբ»ն իր կարճատեւ խորհրդակցութիւնից յետոյ վճռում է հրացանները թողնել դիրքերում, որպէսզի իրենց ձերբակալութիւնով այդ թանկագին իրերն էլ չկորչեն, հանում են իրենց վրայի կովկասեան տարազն ու ներքեւի սպիտակ հագուստով, դէպի Կարակալա տանող հեղեղատար փոսի միջով, երկու ոտի ու ձեռքերի վրայ չորեքթաթ տալով, թշնամուց աննշմար կարողանում են գիւղ մտնել: Գիւղի մէջ կռւող աշիրաթներից ոչ ոք չկար, բայց տղաները մոռացել էին որ կալի հաւաքման ժամանակն էր և որ միւլթէզիմը մի քանի զինւորներով այնտեղ էր՝ հսկելու համար եկամուտի վրայ: Ութ օտարոտի մարդկանց երեւալն ահ է ազդում պաշտօնեաների վրայ, որոնք պատրաստւում են փախչելու, բայց նկատելով որ անզէն են, իսկոյն վրանին են յարձակւում ու ձերբակալելով տանում ռէս Աւդալի տունը:*

*Ֆադէհ բէկի քիւրդ մշակները պահանջում են հրապարակով գնդակահար անել այդ ութ հայերին, բայց զինւորների մի մասը մերժում է: Տեղական հայերն ու ռէս Աւդալը խնդրում են ազատ արձակել այդ մշակներին, որոնք, իբրեւ թէ, լեռն աշխատած ժամանակ կռւի են հանդիպել եւ գիւղն ապաստանել, խոստանալով դրամական մեծ գումարներ տալ, բայց անօգուտ: Շուտով զինւորներն էլ*

կատաղելով բոլորին դուրս են հանում ու սոված, յոգնած ֆիդայիներին դաշունահար անում: Նրանցից շատերի ստամոքսի մէջ կանանչ խոտ են գտնում, որոնցով մի քանի օրից ի վեր կերակրուել էին:

Թաթաւինի լերան գագաթին անօթութեան ճիրաններում անգամ յանդուգն հայդուկները անպատմելի կռիւ են մղում թշնամու դէմ մինչեւ երեկոյ, երբ եւ վճռում են, օգտուելով մթութիւնից, զանազան խմբերի բաժանուել եւ ճեղքելով թշնամու շղթան՝ ճամբայ բաց անել:

Մի մասը՝ Մարմուղ գիւղի ճամբով, յաջողւում է ճեղքել շղթան եւ անցնել Քռաներ կոչուած քարաբլուրների մէջ, ուր եւ իր հետքը կորցնում է: Միւս խմբերն էլ կարողանում են խուսափել, բացի առաջնորդող ութնեակից, որ Սեւրակ Ջրաղացի ուղղութիւնն է բռնում՝ Կարակայա գիւղի վրայով, յուսալով թէ հացաբեր խմբին կը պատահեն եւ նրանցով խումբը կ՚ուժեղացնեն: Թաթաւինի այդ կռւի մէջ հայդուկային խումբը կ՚ունենայ երեսուն սպանուած եւ երկու վիրաւոր, իսկ թշնամին՝ հարիւր սպանուած եւ նոյնքան էլ վիրաւոր, ինչպէս յետոյ տեղեկացրել էր պաշտօնական զեկուցումը:

Այդ նահանջից յետոյ քրդերը կը նկատեն, որ հրացանաձգութիւն չկայ, կը կարծեն թէ՝ ֆիդայիների գնդակներն հատել են եւ կամ բոլորն էլ սպանուած են, անմիջապէս լեռն ի վեր են վազում, ամէն քարի տակ փնտռում են դիակներ՝ կողոպտելու եւ զէնքեր յափշտակելու համար: Բայց ո՞րքան են զարմանում նրանք, երբ միայն երկու դաշոյն եւ դի-

ակներ են գանում :

— Այդչափ են եղել արդէն, միայն երեսուն հոգի և ո՛րպիսի յանդուգն դիմադրութիւն հազարների դիմաց, փախուստ են իրար քրդերը... Դիշեր ժամանակ կուին մասնակցողները, յաղթական «լավըդ» երգով դէպի բերդ են դիմում՝ կառավարութեան պատմելու իրենց քաջագործութիւնը :

Ճանապարհին քրդերից մի քանիսը գտնում են տղաների կորցրած լաստիկից պատրաստած մեքենական կնիքը եւ բժշկական դեղօրայք պարունակող մի պայուսակ : Անկարող լինելով հանելուկը պարզել, որովհետեւ հաւատացած էին թէ՝ բոլորին էլ սպանել են լերան գագաթին, վճռում են յայտնել կառավարութեան թէ՝ խլել են ֆիդայիներից : Նրանց այդ պատմութեան իշխանութիւնը չի հաւատում, որովհետեւ տեղական զօրքի հրամանատարն արդէն մանրամասն եւ հիացմունքով զեկուցում էր ուել, յայտնելով որ ջանֆիդայիները չնայած անօթութեան, կուեցին քաջաբար և նրանց հրացանների «վո՛ւյ, վո՛ւյ» ձայները ահ ու դող էին ազդում բոլորին :

Կնիքի ինչ լինելը չեն կարողանում հասկանալ, չնայած արեւելցու բնաւորութեան եւ երեւակայութեան յատուկ բազմաթիւ ենթադրութիւններին. վերջապէս ստիպւած են լինում դիմելու մի հայի օգնութեան, որ բացատրում է թէ՝ վտանգաւոր ոչինչ չկայ, որ մի քանի հայերէն գրեր են :

Ութ հոգուց բաղկացած խումբը, դիշերը մի քանի ժամ ճամբայ կտրելով, հասնում է Աւելրակ ջրաղացը (երկար ժամանակից ի վեր անգործածելի),

ուր եւ խոնաւ ու բորբոսնած պատերի տակ, անասելի աղտեղութեան մէջ, գետին կը փռուեն ու անուշ կը քնանան: Վիրաւոր երկու ընկերոջ վէրքերն էլ զանազան լաթերով, առանց դեղերի կապում են եւ սպասում իրենց ճակատագրի ընթացքին: Գէլենց Կարօն պահապան է նշանակւում դրան վրայ:

Կէս գիշերին մօտ էր: Ջրաղացի մօտով մի խաշնարած իր հօտն էր քշում շտապելով դէպի գիւղ՝ երբեմնակի հայերէն եւ երբեմն էլ թիւրքերէն հայհոյելով:

Երբ նա բաւականաչափ մօտենում է Ջրաղացին, Կարօն մեղմ ու քնքոյշ ձայնով դիմում է նրան.

— Հայ տղայ, այդ ոչխարներն ո՞ւր կը տանիս:

— Աղա, վալահի, գիւղը կը տանիմ, չփոթւելով պատասխանում է տղան:

— Մի՛ վախենար, ես հայ եմ, քրիստոնեայ եմ, ասաց Կարօն, մենք անօթի ենք, հացերնիս պակսեր է:

Տղան առաջարկում է մի ոչխար մորթել եւ ուտել, բայց Կարօն ընդդիմանում է, ասելով թէ կըրակ վառել չեն կարող, որպէսզի աննկատելի մնան, որովհետեւ Ջրաղացը քսան վայրկեան հեռաւորութիւն ունի քեզրից:

Ջաջարի տղան իր համաձայնութիւնն է տալիս հաց բերելու, ոչխարները թողնելով Կարօի իշխանութեան ներքոյ: Առաջուց խաչէն եւ Աւետարանի վրայ երդւելով, որ իրենից բացի ոչ ոք չի լսանայ, տղան վազում է դէպի գիւղ: Կարօն նեղս է մտնում աչքալոյս տալու ընկերներին: Առաքելն ու Մուշեղը

*իրար են նայում, կարծես ինչ որ մօտալուտ վտանգ զգալով:*

*— Գոնէ հաց ուտէինք, յետոյ մեռնէինք, ո՛ւֆ, ո՛ւֆ, ձայնեց վիրաւորներից մէկը:*

*— Զէնքերնիդ վեր առէք տղաք, դուրսը պատրաստ կենանք, այսպիսի պարագաների մէջ փորձանքն աւելի բարեկամ է, քան որեւէ խաշնարած կամ հօտաղ, ասաց Առաքելը:*

*– Ես տղայի սիրտը կարդացի, բա՛ն չկայ: Բայց զէնքերնիս պատրաստ պահելուն չեմ հակառակիր: Ուժ ունի՞նք կռուելու կամ փախչելու, պատասխանեց Կարօն, եւ բացի վիրաւորներից, միւսները դուրս թռան Ջրաղացից:*

*Փոքրիկ հովիւը, որ պահուած հայդուկների համար հաց պիտի բերէր, Բերդան գիւղն էր հասել: Նա ճանապարհին մտածել ու որոշել էր, որ եթէ իրեն ձերբակալեն, պիտի պատասխանէ որ հացն իրեն համար է, որպէսզի չվտանգէ հայրենիքի համար կռուողներին: Նա այդքան հասկացել էր: Նրա բաղդից՝ հանդիպեցաւ մի բաղէշցի խանութպանի, որ «ընկերութեան մարդ» էր եւ խնդրեց իր հետ գալ մինչեւ Փուռուռ, մի հատ չուալ առնել, մէջը հացով լցնել եւ շալակը բարձնել: Բաղէշցին, կարծես, զգաց եղելութիւնը, լուռ ու մունջ հետեւեցաւ նրան, բաւական թիւով հաց գնեց ու ճանապարհ դրեց փոքրիկին:*

*Առաքելը, Մուշեղը եւ Կարօն հեռուից նկատեցին փոքրիկին, ընդառաջ վազեցին, առան հացն ու տղայի հետ ներս մտան:*

*Վիրաւոր ընկերներից բաղէշցի Արմենակ Դար-*

բինեանը անմիջապէս, վէրքը բռնելով, հացի չալմի վրայ նետուեցաւ, գոչելով. «այս ամէնը մենք կըրնա՞նք ուտել»: Տղաներն ախորժակով կերան եւ կըշտացան, բացի վիրաւորներից, որոնք մահւան ճիրաններում էին գալարւում:

Քիչ յետոյ վոքրիկ հովիւին համբուրեցին եւ ճամբայ դրին: Մինչ տղաներն այստեղ էին, բերդի մէջ անպատմելի դէպքեր էին տեղի ունենում:

Վաղ առաւօտեան, ձիաւոր զօրքի հրամանատարի՝ մխրալայի տան մօտ, վլած ախոռի պատերի մէջ, աղալի երկու ծառաները երկու յեղափոխականի են ձերբակալում, որոնք քնած եւ թմրած վիճակի մէջ էին: Սրանք ճամբան կորցրած եւ դիչերով բերդ հասած էին: Անօթութիւնից բառական թուլացած լինելով՝ անկարող էին առաջ շարժւել: Այս երկուսը՝ մին նշանաւոր ջըխտրցի Նազօն, միւսը՝ կարճկանցին, ամենայն պատարիւնութեամբ իրենց դէնքերը դուրս են թողնում եւ ապա քաղաք մտնում:

Մխրալայը նրանց բանտ է առաջնորդում, որտեղից էլ կապած վիճակով դէպի Մուշ է ուղարկում:

Թիւրք խուժանը կատաղած էր: Հայերն իրենց տներն ու խանութները փակել էին՝ սարսափած կոտորածի ուրուականից: Տեղի է ունենում կողոպուտ եւ միայն շնորհիւ Ֆաղէհ-բէկի միջնորդութեան՝ կոտորածի առաջն է առնւում:

Բերդի խուժանի դայրոյթն ու կատաղութիւնն իր սահմանից անցնում է, երբ Ջրաղացի մօտից մի քիւրդ մազապուրծ փախած՝ գալիս է եւ պատմում, որ իրենք երկու ընկերով գնացել էին Աւերակ Ջրաղացի մօտ «գազ» կոչւած վառելանիւթը հաւաքելու,

երբ իր ընկերը քիչ հեռանում է առւակից ջուր խմե-լու, ֆիդայիներից հրացանազարկ է լինում:

Բաւական էր այսքանը: Յայտնի աւազակա-պետներ — Ըազաք-Փաղէհ, Սիւլէյման, Մահմուտ, Ռաշիդ–Մահմէ, Մահմուդ–Սայիդ եւ Մահմուդ–Ամի իրենց աշիրէթների եւ կառավարական զինուորների հետ միասին դէպի Ջրաղացքն են քայլում: Տղաներն հեռուից նկատեցին այդ խուժանի մօտենալը: Որո-շեցին անմիջապէս մօտակայ լեռը բարձրանալ, բայց վիրաւոր ընկերներն անկարող էին շարժուել, ուստի եւ որոշեցին նրանց հետ մնալ եւ կռուել թշնամու դէմ: Անմիջապէս զանազան ուղղութեամբ ծակեր փորեցին եւ դիրքեր շինեցին, իսկ Մուշեղին էլ յանձնեցաւ դուռը պաշտպանել:

Թիւրք խուժանի մէջ կար նաեւ մշեցի հայ ոս-տիկան Նազարը, որ բոլորից առաջ անցաւ, ձիուց վար իջաւ ու. մտաւ մի քարի յետեւ ու դառնալով դէպի տղաներն ասաց.

— Հէ՜յ, հայ ֆիդայիներ, գիս լաւ ճանչցէք, ես Նազարն եմ, ձեր մեծ կտորը ականջը պիտի թողեմ. քիւրդի ձեռքէն ազատւեցաք, Նազարի ձեռքէն ին-տո՞ր պիտի ազատի՛ք, ասաց ու առաջին գնդակն արձակեց:

Եղտանեան Մուշեղը ճանաչում էր այդ սրի-կային, ուստի դիմեց նրան ասելով. «Թիւրքի սե-րունդ, պնակալէզ ոստիկան, եթէ դուն քաջ ես, գը լուխդ մատնաչափ մը վեր բարձրացրու ու եթէ գըն դակով չզարկի, անձնատուր լինեմ քեզ, Նազար կուչւածիդ»:

Նազարը ֆէսը հրացանի ծայրը անցկացրեց եւ

բարձրացրեց գոռալով. «Ահաւասիկ»: Մուշեղի գնդակը ծակեց Ֆէսն ու անցաւ դէպի խուժանը: Երկուստեք կռիւն սկսած էր: Քրդերի գնդակները ջրաղացքի քարերին էին զարնւում, իսկ հայդուկների իւրաքանչիւր գնդակն իր նպատակին էր հասնում: Տեսնելով որ մի բուռն հայերին անկարելի է յաղթահարել, վճռում են կրակ տալ ջրաղացը եւ այդ նպատակով քաղաքի հայ վաճառականներին թալանելով՝ երեսուն սնտուկ քարիւղ են հաւաքում եւ նախօրօք աթարները վառելով յանձնում 18 պատանու, որոնք մօտակայ ժայռի մօտ գտնուած բլուրը պիտի բարձրանային եւ այնտեղից վար նետէին: Դրանք բոլորն էլ առաջ շարժւեցան, բայց դեռ բլուրը չբարձրացած՝ մէկիկ-մէկիկ գնդակահար եղան՝ բոլորն էլ գլուխներից զարնւելով:

Ճէյակատար Նուբո անունով բաղէշցի Թիւրքը, արեւելքցու պարծենկոտութեամբ, չոխորտանքով յայտարարեց, որ մինչեւ ինքը կրակ չձգէ, ո՛չ ոք չի կարող: Երբ բաւականաչափ մօտեցել էր, ընկերներից Սիմոնը խնդրեց որ իրեն թոյլատրէ խփելու:

— Կանթուրճի Նուբո, ահաւասիկ փէշքէշ մը կը ղրկեմ քեզի, ասաց ու գնդակն ուղիղ ճակատի միջից զարնեց:

Թշնամին ահ ու սարսափի մէջ էր այս պատահարներից: Սիւլէյման բէկն իր զօլամներով աւելի մօտ դիրքերում էր գտնւում: Նրա մարդկանց մէջ էր Դիւկնիկ գիւղացի Մուսօ անունով մի հայ, որ իր քաջասրտութեամբ մեծ համբաւ էր ձգել Թիւրքերի մէջ: Տեսնելով որ բոլորը կը մրսեն, խորհուրդ

կը տայ, որ քարիւղ լեցնեն աթարների վրայ եւ վառեն՝ տաքնալու համար։ Նրա նպատակն էր ֆիդայիների ուշադրութիւնը դարձնել եւ ուղղութիւն ցոյց տալ, որ դիւրութեամբ կարողանան դառնել թշնամուն։

Տղաները չկամեցան օգտուել այդ առիթից՝ դառնալու համար, այլ մտածեցին թողնել ջրաղացն ու հեռանալ։ Վճռեցին որ վիրաւոր ընկերներին էլ իրենց հետ տանեն, բայց այդ անկարելի եղաւ, որով եւ իրենց թախանձանքով, ընկերները ջերմ համբուրուելուց, գրկախառնուելուց յետոյ, Մուշեղը երկու հարուածով վերջ է տալիս նրանց անտանելի տառապանքներին։ Լացով, արցունքով հեռացան ընկերները՝ կատարելով իրենց պարտականութեան ամենադժուարինը։

Հրացանի որոտի վրայ Մուսօն պոռաց թէ՝ մի շարժուէք տեղերնիցդ, բացատրեց որ քարիւղի լոյսով կարող են հրացանազարկ անել ու պատուիրեց հանգցնել, քարերի յետեւը մտնել՝ մութի մէջ պահուելու համար։ Մինչ սրանք իրենց կաշին էին փրկում, Մուսօն նկատում էր թէ՝ ինչպէս հայդուկներն հեռանում են կամաց-կամաց եւ թէ ինչպէս նրանք մօտակայ սարի գագաթից միւս կողմը շրջուեցան եւ Քռաներ կոչուած քարաբլուրի ճամբան բռնեցին, որտեղով գնացել էին միւս ընկերները։

Մուսօն, իմանալով որ տղաներն արդէն հեռացել են, դիմում է իր բէկին եւ յայտնում, որ ամօթ է մի քանի զինուած մարդուց դողալ եւ յարձակում չգործել։ Պէտք է անմիջապէս գործի անցնել, դիմեց նա աշիրէթապետին եւ ասաց. «Հոգ չէ թէ յի-

սուն–հարիւր մարդ զոհ կը տայ, առաջին յարձակւողը ես ինքս պիտի լինիմ եւ հոգ չէ թէ առաջին զոհըն էլ ես լինիմ»: Քիւրդերը չէին համարձակւում մօտենալ, որովհետեւ ծանօթ էին Փիդայու անշեղ գնդակին: Այդ ժամանակ Մուսօն դիմեց սովորական միջոցին՝ գրգռեց Սիւլէյման բէկին, որ եթէ ինքը լինի նախայարձակողը՝ շքանշաններն ու պատիւներն իրեն կը մնան: Մուսօն առաջինն եղաւ որ առաջ անցաւ: Երբ բաւական մօտեցել էր ջրաղացին, ձայն տուեց. «Հէյ, Փիդայիներ, անձնատուր եղէք, թէ ոչ կոտոր–կոտոր կը լինիք»: Պատասխան չկար: Մուսօն ներս մտաւ: Բոլոր քրդերը զարմացել էին հայի քաջութեան վրայ: Քիչ յետոյ Մուսօն ձայն տուեց թէ՝ հոս Փիդայի չկայ, միայն երկու դիակներ են՝ առանց զէնքի: Քիւրդերը կատաղած ներս են մտնում, եւ համոզուելով Մուսոյի ասածներին ու անկարող լինելով բացատրել այդ հանելուկը, վերադառնում են բերդ՝ առիթներ փնտռելով իրենց վրէժխնդրութեան յագուրդ տալու:

Ամսի 5–ին, կառավարութեան պաշտօնական քննիչները գնացին դէպի վայրը՝ մանրամասն տեղեկագիր պատրաստելու: Ամէն ինչ վերջանալուց յետոյ, երկու դիակները բերդ են տեղափոխում: Գազանացած խուժանը անմիջապէս յարձակւում է դիակների վրայ՝ սրերով եւ բրերով: Յետոյ սպառնալիք են կարդում հայերին՝ արգիլելով չմօտենալ եւ թաղելու փորձ չանել:

Գիշերը, սակայն, դիակները անյայտանում են: Կարծում են թէ Մուսօն է վերցնողը՝ հողին յանձնելու համար:

Պատահաբար ձերբակալուած ընկեր Նաւոն՝ բարձրահասակ եւ հուժկու կազմուածքով մի տղամարդ, բանտն է նետւում և ապա Բաղէշ փոխադրըւում, ուր և հինգ տարի մնալուց յետոյ՝ ընկերների միջոցով ազատւում է:

Սիւլէյման բէկի գօլամները դիւղ վերադառնալու ժամանակ՝ Թունտրաս դիւղի ճանապարհին չորս ուրիշ յեղափոխականների հանդիպում են, եւ որովհետեւ իրենց մեծը պատւիրել էր որեւէ կասկածելի հայու հանդիպած ժամանակ՝ ձերբակալելով տուն տանել, չորսին էլ ձերբակալում են: Դրանցից մէկը Բօստանքեանդցի էր, որ համոզել էր թէ գնանք դիւղ՝ մի տնից հաց առնենք, մի քիչ հանգստանանք եւ ապա առաջ չարժւենք:

Բէկը մի քանի ժամից յետոյ վերադառնում է, ճանաչում է բօստանքեանդցուն, որուն տանը հաց էր կերել ժամանակին, պատւիրում է նրան վար դընել, իսկ միւս երեքին դուրս հանելով՝ յանձնում է խուժանի դատաստանին, որոնց մի ակնթարթում սպանում են: Ապա բէկն իր ձօտ է կանչում ռէս Սարգիսին, յետոյ միւս երիտասարդին ու իրենց շէյխին եւ յայտնում է իր միտքը, որ բօստանքեանդցին պիտի իր հաւատը փոխէ, մահմետական դառնայ, որպէսզի կարելի լինի կատաղած խուժանի բարկութիւնից փրկել:

Հայ յեղափոխականը, խոշոր անպատւութիւն համարելով հաւատափոխութիւնը, քաջարար քննադատում է նրանց կրօնն ու սովորութիւնները, պարզում է իր ժողովրդի ցաւն ու կարիքները եւ իր երդումը՝ հաւատարիմ մնալ իր հաւատքին մին-

*չեւ վերջին շունչը: Բէկի եւ չէյխի համոզումներն ի դուր են անցնում: Տղան անդրդւելի է մնում եւ մի ժամանակ քննադատում, պախարակում մահմեդական կրօնը:*

*Ռէա Սարգիսը ոչինչ չէր խօսում: Նա միայն արտասուալի աչքերով վկայ էր լինում այդ բոլորին: Ջնայած նրա հոգին տակն ու վրայ էր լինում, բայց անկարող էր միջամտել:*

*Սուր խօսքերից եւ քննադատութիւններից յետոյ, չէյխը տղային դուրս է հանում եւ չանճնում խուժանին: Տղան անվեհերաբար իր դաշոյնն է հանում, ընկնում է այդ վախկոտ արարածների մէջ եւ վերջապէս տեսնելով որ չեն կարողանում ծառենալ իրեն, բոլորն էլ հեռու են փախչում, դառնում է դէպի չէյխն ու ասում.—*

*«Էհ՛յ, կասդած չէյխ, տեսար որ քիւրդի դէնքը չի կարող մեռցնել հայ Ֆիդայուն... ահաւասիկ ես ինքս իմ ձեռքով վերջ կը դնեմ կեանքիս»...*

*Եւ դաշոյնի մի հարուածով քաջարի հայ պատանին փրկեց ազգի, յեղափոխութեան եւ իր պատիւը:*

*Այդ նոյն ժամանակ, բերդից մի խումբ քիւրդ կանայք են վերադառնում, որոնք արդէն լսած են լինում հայ Ֆիդայիների քաջագործութիւնը, իրենց ամուսինների տմարդութիւնը, որոնց հիման վրայ անմիջապէս երգ են յօրինում ու երգում—*

*Առաքել կապի կըր, Մուշէ՛ղ, պրայէ մօ*
*Մէրկէլի չէյ բըխա պըպա...*
*Նաւէ մօ պըզա կեդրօնա-մալըն*
*Ջան Սերոբ վաչա բնամուսա...*

*Լէխա՛ կարօ, լէխա՛ Մուշեղ ջան...*
*Լէխա՛ լամուկէ կորմանջան...*

*(Առաքելն կանչեց Մուշե՛ղ, իմ եղբայր,*
*Կորիճ չարժիր դուն այս կուի վայր.*
*Անունն այս կուին երբ կենարոն հասնի*
*Սերոբ փաչան պատուէն մեր հրճւի...*
*Ջա՛րկ կարօ, զա՛րկ Մուշեղ–ջան,*
*Ջա՛րկ քիւրդի լամուկներին)...*

*Շէյխն յանդիմանեց քիւրդ կանանց եւ պատուիրեց նրանց անյապաղ հեռանալ: Նրանք հեռացան, բայց իրենց կրծքի տակ մի տաքուկ անկիւն պահեցին՝ հայ կորիճ Ֆիդայիների համար:*

*Այսպէս վերջացաւ Քաթաւինի եւ Աւերակ Ջրաղացի յաջորդական, անընդհատ կռիւները, որոնց ընթացքում այնքան տոկունութիւն, ոգեւորութիւն եւ քաջութիւն ցուցադրեց հայ յեղափոխականը: Ամբի միւս ցրւած անդամները, թւով երեսուն հոգի, օգոստոսի 6–ին միանում են Քռանների մէջ, ապա նորից իրենց ճամբան շարունակելով՝ դէպի Բաղէշ են ուղեւորւում:*

*Ճանապարհին մի քանի աննշան ընդհարումներ ունենալուց յետոյ, նրանք վերջապէս հասնում են Սաղորդ՝ Սերոբ փաչայի գիւղը:*

### ԲԱԲՇԷՆԻ ԿՌԻՒԸ

Բաղէշի շրջանում Աղբիւրն իր մի խումբ ընկերներով կառավարութեան անհանգստութիւն էր պատճառում: Նոր կուսակալը Պոլսից գալու ժամանակ հրահանգ էր ստացել այս յեղափոխականին կենդանի կամ մեռած ձեռք ձգել: Այդ պատուէրը կենտրոնից՝ կարեւոր էր գաւառական պաշտօնեայի համար եւ նրա յաջող ելքից էր կախուած իր ապագան եւ ստանալիք շքանշանները: Այդ նպատակին հասնելու համար նա մի քանի խորհրդակցական ժողովներ գումարեց մահմեդականներից եւ հայերից բաղկացած եւ նրանցից էլ յանձնաժողով ընտրելով՝ հրամայեց պտտել գիւղերն ու ստորագրութիւն հաւաքել գիւղացիներից, որ Աղբիւրին իրենց տներում չեն պահի եւ իսկոյն կառավարութեան ձեռքը կը յանձնեն:

Գիւղացիները միայն խոստացան, բայց նրանցից ամէն մէկը պատրաստ էր վտանգի րոպէին պաշտպանել իր ազատութեան համար կռւող մարտիկներին: Այդ միջոցն՝ անյաջող անցաւ եւ նոր կուսակալը որոշեց հին ձեւերին դիմել — կասկածելի մարդկանց ձերբակալել եւ ընդհարումներ ունենալ՝ զինուած հայերի հետ: 98 թուականի հոկտեմբեր 20-ին Աղբիւրն իր 16 ընկերներով ապաստանում է Բաբշէն գիւղը, որ Բաղէշից կէս ժամ հեռաւորութեան վրայ է գտնւում: Լուրն անմիջապէս հասնում է կառավարութեան, մատնիչներն իրենց վրայ դրած պարտականութիւնն հաւատարմութեամբ են կատարում, եւ ահա գիշերւայ ժամի 12-

են, մի ջոկատ զինուորներ յիշեալ գիւղը չորս կողմից շրջապատում են, պահանջելով յեղափոխականներից՝ անձնատուր լինել:

Աղբիւրն առաջուց իմանալով այդ բոլորը, ընկերներով իր թաքստոցից դուրս կը գայ եւ յարմարաւոր դիրքեր գրաւելով՝ կրակ կը տեղայ թշնամու գլխին:

— Տղե՛րք, կանչում է պաշտելի խմբապետը, կռուեցէք եւ դիմացի քարերը բարձրացէք:

Հայդուկները քաջաբար դիմադրելով դէպի դիմացի բլուրն են բարձրանում եւ քիչ յետոյ, ոտքից վիրաւոր մի ընկեր տալով, նրանք գրաւում են ապահով վայրերը եւ հերոսաբար դիմադրում կըրկնապատիկ աւելի թշնամուն: Այդ կռիւը տեւում է երկու ժամ: Ոստիկաններն անկարող են լինում իրագործել կառավարութեան հրամանը: Հրամանատարը վերադառնում է քաղաք՝ օգնական զօրք եւ թնդանօթներ բերելու:

— Ի՞նչպէս եղաւ, հարցնում է կուսակալը վերադարձող պաշտօնեային, պիտի բռնէ՞ք, խորտակէ՞ք այս անգամ, թէ ո՛չ:

— Կամ կը կոտորենք ամէնն ալ կամ ողջ կը բռնենք, այս անգամ ձեռուընուս չեն ազատիր, դողդաբար պատասխանում է հրամանատարը:

Մինչ այս, մինչ այն, շրջակայ քիւրդ ցեղերն էլ շտապել էին օգնութեան՝ Սերոբ փաշային ձերբակալելու եւ կամ սպանելու: Այդ արշաւանքին մասնակցելը մեծ պատիւ կը բերէր նրանց, և կառավարութեան մօտ էլ պարզ երես կը լինէին: Վայրենի աղաղակներով; անկանոն շարքերով, ձիաւոր

եւ հետեւակ իրար խառնուած՝ նրանք չտապում են դէպի Բարչէն եւ դեռ իրենց յարձակումները չսկսած՝ ստիպւած են լինում յետ նահանջել, որովհետեւ մօտինի վրկարար զնդակները իրար յետեւից դիակներ էին խլում թշնամուց: Այդ քիւրդ ցեղերն այն դերը կատարեցին, որ նրանք ըլուրը պաշարած պահեցին մինչեւ երեկոյեան ժամի երկուքը, երբ եւ քաղաքից վրայ հասան թնդանօթները:

Կանոնաւոր զօրքի հրացանների ու թնդանօթների որոտը մեծ սարսափ ազդեց դիւղացիների մէջ: Ռումբերը որոտում էին: շրջակայ ձորերն արձագանգ էին տալիս, մինչ յեղափոխականներն էին սառնասրտօրէն ունկնդրում այդ բոլորին:

Երկու կողմից էլ կռւում էին օրհասական կերպով: Յեղափոխականներն իրենց զնդակների հետ շատ մեծ խնամքով էին վարւում: Մի քանի անգամ, թշնամու կողմից խիտ շարքերով, յարձակում եղաւ, բայց մինչ էլ յետ մղւեցաւ: Հազարապետը մի քանի տասնեակ պինւորի հրամայեց թնդանօթի արձակումից անմիջապէս յետոյ համազարկեր սկսեն, զրաղեցնեն ֆիդայիներին, որպէսզի հնարաւորութիւն լինի թնդանօթները լեցնելու: Այդ վտրճն էլ չի յաջողւում, որովհետեւ Աղբիւր-Սերոբը մի քանի հոգի է զատում, որոնց պարտականութիւնը պիտի լինէր յարմարաւոր դիրքեր գրաւելով՝ մինչ թնդանօթաձիգների վրայ հրացան պարպել, իսկ միւսները զօրքի եւ քիւրդերի հետ պիտի կռւէին: Այդ յաջողւում է տղաներին, որովհետեւ առաջին վտրճի արդիւնքն այն է լինում, որ թնդանօթաձիգների գլխաւորը գետին է տապալւում: Զօրքե-

րի հրամանատարն անել դրութեան մէջ է մնում: Նա կատաղում է եւ չգիտէ ի՞նչ անելը: Երբեմն հրամայում է զինուորների մի մասին առաջ անցնել՝ երբեմն թոլորին եւ երբեմն էլ մի քանի մասի բաժանելով նրանց:

Սերոբ փաշան խրախուսում է տղաներին, հրամաններ է արձակում եւ ապա կռւի մէջ նետւում: Տղաներն էլ խանդավառութեամբ երդեր են հնչեցընում, թշնամու վերաբերեալ սրախօսութիւններ են անում, ապա քաջաբար, անվհատ կռիւը շարունակում: Ժամի վեցի մօտերը թշնամու զնդականներից մէկը դիպչում է պուլանըխցի Սարգսի գլխին, որ անձայն իր հոգին աւանդում է՝ քնածի դիրքի մէջ լինելով: Կռւի էն սաք ժամանակը ընկերներից մէկը գառնալով Աղբիւրին յայտնում է՝

— Սարգիսը չգիտեմ քնա՞ւ, ի՞նչ եղաւ:

— Բան չկայ, պատասխանում է պաղարիւն խմբապետը, ան թող քնէ, դուք կռւեցէք:

Կռիւն անընդհատ տեւում է մինչեւ երեկոյ: Թշնամու ուժեղ վերջին յարձակումն էլ յետ է մղւում: Այդ բոլորից չետոյ վճռւում է ամենայն զգուշութեամբ գլխից իջնել եւ անհետանալ: Որոշւում է մի կողմով իջնել, որ երբ թշնամին հանդիսի, կարողանան դիրքերը պրաւել եւ կռիւը շարունակել: Մութը վրայ է հասնում: Հայդուկներից միայն մի քանի հոգի վերջին դնդականներն արձակում են: Շըրջակայքում ա՛չ մի շարժուն չկար: Անշշուկ, ամբողջ խումբն իրենց երկու վիրաւոր ընկերներին վերցնելով իջնում են գլուխից եւ յաջողութեամբ խուսափում թշնամուց:

Թշնամին ունեցել էր բազմաթիւ վիրաւորներ եւ երեսունի չափ կորուստ: Կառավարութիւնը աւելի եւս մտատանջութեան մէջ էր: Այս յալոզակ դէպքն էլ չէր կարողացած օգտագործել: Մահմեդական ժողովուրդն անպատմելի վախի մէջ էր: Սերոբ վաչայի եւ իր ընկերների ուրւականը միշտ նրանց աչքի առաջ էր: Չկարողանալով այլ կերպ պատժել հայդուկներին, ամբոխը կուի օրը կատազում է, յարձակում է գործում հայերի խանութների վրայ՝ թալանելու եւ կոտորելու նպատակով, բայց, հանդիպելով երիտասարդութեան դիտակից եւ կազմակերպուած մասի կողմից դիմադրութեան՝ աւելի առաջ չի գնում: Այդ դէպքի ժամանակ էլ թշնամին կ'ունենայ երկու սպանուած եւ մօտ երեսուն վիրաւոր:

Բաբչէնի կռիւը խոշոր նշանակութիւն ունեցաւ թէ՛ մահմեդականների եւ թէ՛ մանաւանդ հայերի վրայ, որոնց մէջ սիրեց եռանդ ու ոգեւորութիւն, կազմակերպութեան շարքերը խտացան եւ մարտնչողների թիւն օր ըստ օրէ աւելացաւ:

## ՅՐՕՆՔ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

99 թուականն է: Ապրիլ 25-ը յիշատակելի կը մնայ Տարօնի ինքնապաշտպանութեան պատմութեան մէջ: Այդ օրը Դաշնակցական գործիչներից Գուրգէնը իր հօթ ընկերներով Դաչտ է իջնում դիւղացիներին այցելելու եւ կազմակերպական գործով զբաղւելու: Շրջագայելուց յետոյ՝ նա հասնում է Յրօնք գիւղը, որ Մուշից երեք ժամ հեռաւորու-

թեան վրայ է գտնուում եւ հայաշատ կենտրոն է: Լրտեսներն անմիջապէս իմաց են տալիս Բաղէշ եւ Մուշ՝ կառավարութեան ներկայացուցիչներին, որոնք երկար ժամանակէ ի վեր էր որ փնտռում էին այդ անհանգիստ տարրերին: Իտարէի ժողովի անդամ յայտնի ցեղապետ եւ արիւնռուչ Դալիֆ-էֆէնդին ու հեծելազօրքի հրամանատար Ալայի պէյը հրաման են ստանում շրջապատել գիւղը ու ջանֆիդայիներին ձերբակալել կամ ոչնչացնել: Հրամանը բարձրից էր եւ պէտք էր ճշտութեամբ կատարել այն: Ցխտուն ձիաւոր զինուորներ բաւական չէին արշաւանքը սկսելու, պէտք էր աւելի օղնական ուժեր խնդրել, եւ ահա յատուկ մարդ են ուղարկում Մուշ՝ կառավարչի մօտ, եւ մի քանի հարիւր մարդ են խնդրում, որ անմիջապէս ուղարկուում է:

Դալիֆ էֆէնդին էլ շրջակայ բոլոր քիւրդ ցեղապետներին յայտնում է՝ որ չտապեն յեղափոխականներին ջարդելու, որ կառավարութիւնը նւէրներ է խոստացել, եւ ահա մի քանի հազար բաշիբոզուքներ շրջապատում են գիւղը:

Օրը կիւրակի էր: Հրամանատարն իր մօտ է կանչում գիւղի ռէս Սլօին ու պահանջում է. «Ջանֆիդայի կայ հոս. Բաղէշէն ուղղակի եկած ենք, ցոյց տուր անոնց պահուածտեղը, թէ ոչ հիմա գիւղը կը վառենք»: Տանուտէրը յայտնում է որ այդ բոլորը սուտ է, որ գիւղում օտարական մարդ չկայ եւ ամէն կերպ աշխատում է յետ պարձնել նրանց՝ բայց անօգուտ: Իսկոյն հրաման է արձակուում չարչարել գիւղացիներին, տանջանքների ու ծեծի ենթարկել, մինչեւ նրանցից մէկը ճարահատեալ՝ մա-

բազի տեղն է ցոյց տալիս, ուր պահւած է լինում Գուրգէնն իր ընկերներով:

Մարագը չրջապատում են: Տղաները մատնըւած են: Դուրս ելնել ազատւել չի լինի՝ այդքան բազմութեան միջից: Պէտք էր ուրեմն, ցամաքօրէն կռիւ մղել եւ մինչեւ երեկոյ զբաղեցնել թշնամուն: Հրամանատարն ու Դալիք-էֆէնդին մի ժամ բանակցութիւններ են վարում՝ խոստանալով ազատութիւն եւ ընծաներ: Բայց հայ յեղափոխականները կտրականապէս մերժում են, մահը նախապատիւ համարելով՝ քան անձնատուր լինելը:

Սկսւում է կռիւը: Գուրգէնի հետ էին չայոնի հայդուկները՝ Ռուբէն, Տիգրան, Վարդան, Կրպօ, Նշան եւ Փարսահտան, որոնք վճռել էին դիմադրել մինչեւ: Գնդակների տարափը կը տեղար: Այդ ժամանակ Գուրգէնը պատւիրում է երգ սկսել եւ ցնծութեամբ մահը դիմաւորել: Հրացանների որոտի հետ միաժամանակ լսւում են—

«Կուեցէ՛ք տղերք, կուեցէք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ»...

Տղաները մարագի դռնից կուել չէին կարող, որովհետեւ դէմ յանդիման թագմաթիւ հրացանաւորներ էին սպասում. երդիքով էլ կրակ տալ անհնաստ էր, որովհետեւ թշնամին չէր համարձակւում մօտենալ: Այդ պատճառով էլ որոշւում է յետեւի մասից պատը փորել եւ այնտեղից կուել: Փորւածքն արդէն պատրաստ է լինում, երբ եւ տղաները նկատում են որ դիմացի կտուրի վրայ նստած Դալիք-էֆէնդին դիտում է կռիւը: Մի գնդակը բաւական է լի-

նում՝ նրա կեանքին վերջ տալու: Քիւրդերն ու պինուրներն իսկոյն չտապում են դէպի այդ անցքը, որի չորս կողմն սկսում է անհաւասար կռիւը: Այդ ժամանակ չորս պինուր եւ չորս քիւրդ են սպանւում, որոնց մէջ եւ հազարապետ Հասան բէյը: Թշնամին յուսահատւում է: Երեկոն էլ մօտենում է եւ յեղափոխականները կարող են խուսափել, եթէ րոպէ առաջ հաշիւը չվերջացնեն: Հրամանատարն հրամայում է մարտը կրակել և մօտակայ Ալրդոս գիւղից քարիւղ բերելով՝ կրակ են տալիս հերոսների բնակավայրը: Նրանք չեն յուսահատւում: Վճռում են խմբովին դուրս թռնել եւ մի յանկարծակիութեամբ յետ մղել թշնամուն, ապա դուրս գալ ազատ դաշտը: Այդ նպատակով չորս հոգի դուրս են թռնում, բայց բոլորն էլ նահատակւում են տեղն ու տեղը: Երկրորդ խումբը՝ Խուրշուդն ու Տիգրանը, կարողանում են դուրս ելնել, երեք հոգու էլ սպանել, բայց բազմաթիւ արձակուած գնդակներից զոհ գնալով՝ ընկնում են իրենց ընկերների դիակների մօտ:

Քիչ յետոյ, Գուրգէնն ու Մկրօն են դուրս թռչում, անդադար հրացան արձակելով՝ աջ ու ձախ:

Նրանք է՛ւ կրակում էին է՛ւ ոգեւորւած իրենց երգը երգում.՝

«Մնաք բարեաւ սուր, հրացան,
Մնաք բարեաւ ընկերներ»...

Այդ երկուսին յաջողւում է չփոթ ձգել թշնամու շարքերի մէջ:

Այդ երգը, նահատակութեան այդ մեղեդին, ինչպէս բնորոշել է Հրայրը, այնքան ազդեց Ալայի

պէյի վրայ, որ հրաման տուեց զինուորներին. «Աստուած սիրողը թող մի րոպէ դադար տայ զնդակներին»:

Նրանց յաջողւում է ճեղքել Թշնամու շղթան: Գուրգէնը կէս ժամուայ ճանապարհ կտրեց, բայց հետեւներից հասան: Նա վտանգի մէջ էր: Փամփուշտներն հատել էին եւ նա, որպէսզի հրացանը Թշնամու ձեռքը չընկնի, զարկում է քարին, փշրում է այն, ու անխռով սպասում է մահուան՝ արդէն վիրաւորուած: Թշնամին հեռից զնդակներով պարնում է եւ քաջարի հայդուկն անկենդան մայր հողի գիրկն է ընկնում:

Մկրօն էլ անասելի քաջութեամբ կռւելով, հասնում է մինչեւ Մեղրագետի եղերքը, բայց հանդիպելով օղնութեան վազած քիւրդերի խմբակին, նրանց հետ էլ կռւի կը բռնւի ու վիրաւոր կ՝ընկնի:

Ահա թէ ինչպէս է նկարագրում Մկրտչի մահը Հրայրը — «Հայդուկներէն Մկրտիչը Թշնամւոյ պարիսպը ճեղքելով անցաւ, կռւեցաւ անօրինակ քաջութեամբ մինչեւ Մեղրագետի ափերը, հոն վտանգուշտները հատնելէ յետոյ, վիրաւոր ընկաւ, ծնկներին վրայ եկած, դաշոյնը ձեռին կը սպասնար մա՛հ, եւ ոչ ոք չէր համարձակեր մօտենալ այդ ուժասպառին. ժպիտը երեսին կը խնդար Թշնամւոյ վատհոգութեան ու թուլութեան վրայ: Հեռից սատպետ նորէն վէրքեր եւ ինկա՛ւ: Մկրտիչը նեղկեց իր արիւնով Մեղրագետի ջրերը»...

Հայդուկներից մէկն էլ մարտում վիրաւորւած լինելով եւ չկարողանալով դուրս ելնել՝ ծխա-

մահ է լինում:

Բոլոր նահատակների գլուխը կտրելով տանում են Մուշ, ուր ամսի 26-ին, առաւօտից մինչեւ երեկոյ, արեւի տակ, կառավարութեան շէնքի մօտ, գետնի վրայ փռուած են մնում: Երեկոյեան դէմ, յայտնում են Առաջնորդարան, որ քահանայ ուղարկեն՝ կրօնական արարողութիւն կատարելու համար: Հայերից եւ ոչ ոք չի մօտենում կառավարութեան շէնքին՝ իբրեւ բողոքի նշան: Ոստիկանների հսկողութեան տակ մի քանի մշակներ գլուխները տանելով, միայն մի քահանայի ուղեկցութեամբ, թաղում են քաղաքի արեւելահարաւ մասում գտնուած գերեզմանոցում, որ գտնւում է Ս. Մարիանէ եկեղեցու դիմաց:

Այդպէս են ընկնում մի բուռն քաջեր:

**ՊԱՂՐ-ԴԱՂԻ ԿՌԻՒԸ**

99 թուականի յունիս ամիսն է: Զինակիր խումբը, 18 հոգուց բաղկացած, Պարսկաստանից Խանասորայ վրայով երկիր պիտի մտնէր: Ահագին դժուարութիւններ յաղթահարելով խումբն հասնում է Խանասորայ պատմական դաշտի մօտ, ուր և հանդիպում է քիւրդերի, որոնք կարծելով թէ՝ 97 թւի տարեդարձը պիտի լինի, իսկոյն հաւա՛ք են ձգում շրջականերն ու դէպի Վան ձիաւոր ուղարկում՝ կառավարութեան իմաց տալու: Այդտեղ ֆիդայիները քաջաբար դիմադրում են, Շարաֆի մարդկանցից վաթսուն, Դապախ խանի մարդկանցից 18 հոգի են սպանում եւ ապա օգտւելով գիշերայ մը-

թուքիւնից՝ անցնում են Պաղը-Դաղ, ուր եւ չրջապատուում են կանոնաւոր պինուրներով ու բաշխոզուկներով:

Գիշերւայ ժամի 1-ն է: Ընկերներից երկուսը, որոնք ջրի էին գնացել, լսում են չան հաչոց եւ այդ մասին տեղեկացնում են միւսներին: Շուտով իմացուում է որ մօտակայքում քրդերի վրաններ կան, եւ որպէսզի աննկատելի մնան եւ ճանապարհը չարունակեն՝ քիչ հանդստանալուց յետոյ, վճռում են մօտակայ բլուրը բարձրանալ: Այդ բոլորը նկատում է մի քիւրդ, որ վախից թագնուում է մի քարի ետեւ: Քիւրդի ներկայութիւնը գաղտնի չէր մնացել եւ հայդուկներից, բայց նրան հրացանազարկ անելն հաւասար կը լինէր կռւի յայտարարութեան: Այդ պատճառով աշխատում են նրան ձերբակալել, բայց ապարդիւն: Քիւրդը կարողանում է ազատուել եւ իմաց տալ իւրայիններին: Շուտով վրայ են հասնում 25 ձիաւոր, որոնց հետ կռւի են բռնուում տղաները: Իրենց դիրքն անյարմար լինելով որոշում են բարձրանալ Պաղը-Դաղ: Զորս հոգի առաջուց բարձրանալով դիրք են բռնում եւ ապա յետ մղում թշնամուն՝ հնարաւորութիւն տալով միւս ընկերներին ապահով դիրքեր գրաւելու: Մի քանի ժամից յետոյ վրայ են հասնում մի քանի հարիւր քիւրդեր, որոնց երեւալով կռիւն աւելի կատաղի բնոյթ է կրում: Բաղմաթիւ քարերի ետեւ թագնուած, մօսին հրացանները գրկած հայ յեղափոխականները թոյլ չեն տալիս մի քայլ առաջ անցնելու՝ վատթար թշնամուն: Երկու համարձակ ընկերներ, իրենց դիրքերից դուրս թռնելով, յարձակուում են քիւրդերի

վրայ, բայց սպանում են՝ իրենց անզգուշութեան պատճառով: Դրանցից կուռուպաշցի Կարապետը, սրտից զարնուելով, իսկոյն հոգին աւանդում է, իսկ սպակերտցի Սիմոնը՝ ճակատից մահացու վէրք է ստանում:

Մութը վրայ է հասնում: Պէտք էր օգտուել հանգամանքից ու հեռանալ: Վիրաւոր Սիմոնը չարչարանքների եւ գալարումների ճանկերումն է: Նա աղաչում է ընկերներին իրեն սպանել, բայց ոչ ոք յանձն չի առնում: Ի՜նչ ոճրագործութիւն, ի՜նչ այլանդակութիւն՝ սպանել մօտիկ եւ սիրելի ընկերոջը, որի հետ տարիներով ապրել, կռուել, լացել ու խնդացել ես: Բայց չէ՞ որ եթէ քիւրդերի ձեռքն ընկնի, աւելի անխիղճ պիտի վարուէին, մահն աւելի պիտի յետաձգէին ու երկարացնէին...

Կարճ խորհրդածութիւնից յետոյ, նրանք վճռում են կատարել իրենց տխուր եւ դժուարին պարտքը... մի աւելորդ գնդակով վերջ տալով Սիմոնի կեանքին...

Այդ բոլորից յետոյ նրանք ճանապարհ են ընկնում, բայց քիչ քայլելուց յետոյ, քարերի ետեւ թագնուած քիւրդերը հրացան են պարպում և վիրաւորում մի այլ ընկերոջ: Տղաները չեն պատասխանում: Նրանք կապում են վէրքը եւ շարունակում իրենց ճանապարհը: Դեռ չհասած Վէնիսի Հաչու ձորին, նրանք նորից շրջապատուում են բազմաթիւ քրդերով ու մի վաշտ էլ կանոնաւոր զինուորներով: Հինգ ժամ տեւում է այդ կռիւը: Յեղափոխականները դիմադրում են կատաղաբար՝ ո՛չ մի վիրաւոր չտալով: Նոյնիսկ վիրաւոր ընկերն էլ է մասնակ-

ցում կուբին՝ կարծես աւելի ոգեւորելով եւ առողջանալով: Թշնամին բազմաթիւ վիրաւորներ կ՚ունենայ եւ հնարաւորութիւն չի ունենայ հետապընդելու հայդուկներին, որոնք օգտուելով մութից՝ զէնքերը վերցրած, առաջ են սլանում՝ իրենց հետքերը կորցնելով:

99 թւի հոկտեմբեր 25-ն էր:

ԿԷՒԻՒ-ԳՈՒՉԱՆԻ ԿՈՒԻՐ

Բաղէշի Ալայ-պէկը, Գուրգէնի նահատակութեան ոճրամիտ հեղինակը, 500 զինուորի գլուխ անցած լուր է տարածում, որ ինքը Մօթկնայ քիւրդ ցեղապետների վրայ պիտի արշաւէ՝ նրանց պատժելու համար: Նա չէր մոռացել նաեւ հրաւէր կարդալ պալաքցի, խիանցի եւ այլ քիւրդ աշիրաթների, որոնք 1500 հոգու գլուխ անցած, Մուշի գաւառակի վրայով, գիշեր ժամանակ, աննկատելի կերպով կը դան եւ Կէլիէ-Գուզան գիւղը կը շրջապատեն:

Սեւ գաւաճանութիւնն իր նպատակին հասած էր:

Գէղաշէնցի Աւօն թունաւորել էր Աղբիւր-Սեւրոբին, եւ հսկան, որից կառավարութիւնն էր դողում, իր 12 ընկերներով Կէլիէ-Գուզան էր ապաստանել՝ վերջին օրերն անցկացնելու:

Շուտով վրայ կը հասնի Ալայ-պէկը, ապա Բըշարի Մալիլ-աղան՝ իրենց օգնական ուժերով:

Դրութիւնը վճռական էր: Սերոբը հիւանդ էր, թուլացած եւ անկարող շարժւելու: Ընկերները՝ վշտաբեկ էին եւ մի այն մտահոգւած իրենց սիրելի

*Համբաւպետի կեանքն ազատելու խնդրով:*

*Իրենց պաշարումը լուր են տալիս Սերոբին, որը հրամայում է իրեն դուրս հանել, դէպի դիրքերը տանել, որովհետեւ կամենում է վերջին անգամ չափւել թշնամիների հետ:*

*Նա, իր վերջին հրամանով, խումբը երեք մասի է բաժանում, ապա պատւիրում է տղաներին՝ իր մասին չմտածել, այլ ամէն կերպ աշխատել՝ խուսափելու համար:*

*Մի քանի րնկերներ, Սերոբի թեւերը մտած, հազիւ կարողանում են նրան դուրս հանել:*

*Նա խնդրում է իր զինակիցներից, որ իրեն տեղաւորեն դիրքի մօտ դտնւած քարի յետեւը— «Դրէք ձիս սա քարին առաջ, իմ վերջին օրն է եւ չանացէք դուք դէթ ձեր կեանքը ազատել. մնաք բարով»...*

*Սկսւում է հրացանաձգութիւնը: Հայդուկները կատաղած եւ վրէժխնդրութեամբ լեցւած, կրակ են տեղում թշնամու գլխին: Տաք եւ անհաւասար կռիւ էր, որի ժամանակ մի բուռն հայդուկներ եւ վիրաւորւած առիւծը դիմադրում էին կանխօրօք յարմարւած դիրքեր գրաւած թշնամուն:*

*Ութ ժամ անընդհատ այդ կռիւը կը տեւէ, որի ընթացքում՝ տղաները մեծ կորուստ են պատճառում եւ միայն Աղբիւրի խնդրի համաձայն՝ հեռանալու մասին են մտածում:*

*Սերոբն ուժասպառ էր: Թոյնը զօրաւոր կերպով ներգործել էր նրա վրայ եւ նա անկարող էր հրացանը շարժել:*

*Երբ նա զգաց, որ հրացանն իր ձեռքից ընկնում է, նա մի խոր ա՛խ քաշեց եւ ընկաւ:*

Իր կինը, քաջասիրտ եւ հաւատարիմ Սօսին, վերցնում է հայդուկի հրացանն ու չարունակում պաշտպանել դիրքը եւ ամուսնու դիակը:

Կատաղած քիւրդերն ու թիւրքերը գրոհ են տալիս, շրջապատում դիրքերն ու վերջին համազարկով՝ չաղթանակը ձեռք բերում:

Նրանց ուրախութեան չափ ու սահման չկար:

Նրանք կարում են Սերոբի դլուխը եւ Սօսիի հետ միասին փոխադրում Մուշ, Բաղէշ՝ ցուցադրելու իրենց քաջագործութիւնը:

Այդ կուի մէջ նահատակւում են Աղբիւրի երկու եղբայրները՝ Մխէն եւ Զաքէն եւ իր 12 տարեկան զաւակը՝ Յակոբ անունով: Կուի մէջ հերոսաբար ընկնում են նաեւ Կէլիէ-Գուզանի Քալ անունով քահանան եւ ինը հայդուկներ: Միայն չորս հայդուկ, խիզախաբար յարձակում գործելով թշնամու վրայ, կարողանում են ճեղքել շղթան ու անյետանալ՝ ապագայում վրէժխնդիր լինելու համար:

## ԽԱՍՏՈՒՐԻ ԿՌԻՒԸ

99 թուի հոկտեմբեր 26-ն է: Զինակիր խումբը, բաղկացած մի քանի տասնեակներից, Բագրեւանդի (Ալաշկերտ) Խաստուր դիւղի մօտ կանգ է առնում մի փոքր հանգստանալու համար: Նրանք անկարող էին ժամանակին հասնել որոշուած դիրքերին, որովհետեւ 4-5 ժամուայ ճանապարհ կար, եւ յոգնած ու դադրած, մի քանի օր նեղութիւններ քաշած հայդուկները չէին կարող արագ քայլել: Պաղ էր եւ բոլորն էլ մրսում էին: Պեխերնին ամբողջովին սառոյց

էր կարել եւ լսելով վալաղներից, որ մօտակայում յարմարաւոր դիրքեր չկան, որոշում են դաշտում մնալ, մի քիչ հանգստանալ եւ ապա ճանապարհ ընկնել:

— Գիւղ մտնենք, ասաց խաստուրցի Ղուկասը, և քանի որ անունս Փիդայի է՝ տունս էլ, տեղս էլ, մալ ու մուլքս էլ թող այս հրացանիս զուրպան լինեն: Ընկերներ, չուշանանք, աստղերը շուռով երկընքում կ'անհետանան, արշալոյսը հեռու չէ: Շուրջերնիս խորին լռութիւն է տիրում: Ինչո՞ւ ենք այսպիսի պաղի ժամանակ՝ սառը գետնի վրայ տապածուել: Սկսում ենք պաղել, վեր կացէք գնանք մեր տուն:

— Գիւղ մտնել, բայց...

— Էլ ի՞նչ բայց, ընդհատեց Ղուկասը, բայցերի ժամանակն անցել է, գոնէ մի ժամ կը հանգստանանք ու չենք պաղի, պեխերիցս սառցի կտորներ են կախուել...

Ոչ ոք տեղից չէր շարժւում:

— Վեր կացէ՛ք, գնանք, կրկնեց Ղուկասն ու դէպի գիւղ վազեց:

— Գիւղը մտնենք, կրկնեցին վալաղները, ամենայարմար գիւղն է, եթէ կուի բռնուելու լինինք, գոնէ մի քիչ հանգստացած կը լինինք եւ պաղած չենք լինի, իսկ եթէ ոչինչ չպատահի՝ աւելի լաւ: Երեկոյեան դէմ բոլորովին թարմացած՝ ճանապարհներս կը շարունակենք:

— Աւելի լաւ է դաշտում մնանք, քան գիւղ մտնենք. եթէ ընդհարում ունեցանք այստեղ, գոնէ մենք կը տուժենք մի այնակ, իսկ եթէ գիւղում բան

պատահեց՝ գիւղացիք էլ կարող են վնասուել, ասացին շատերն ու պատկեցին գետնի վրայ:

Տղաները այսպէս հատ ու կտոր խօսակցութեան մէջ էին, երբ Ղուկասը վերադարձաւ գիւղից ու ժպտադէմ դիմեց նրանց ասելով. «Ամէն ինչ պատրաստ է, գիւղում ո՛չ քիւրդ կայ եւ ո՛չ էլ ասկեար, չուռով եկէք գնանք»:

Վաղդներն առաջ անցան, իսկ խումբը կամացուկ քայլերով հետեւեց նրանց: Մի քիչ յետոյ գինակիր խումբը գիւղը մտաւ եւ ուղիղ դէպի Մաչիկ վարժապետի դռան գնաց: Հայդուկները տեղաւորուեցան յարդի, խոտի վրայ, ոտները մեկնեցին եւ հանգստանալու պատրաստութիւն կը տեսնէին, երբ վարժապետը ներս մտաւ եւ նրանց բարի գալուստ մաղթեց— «Շատ ուրախ եմ, որ ձեզ իմ յարկիս տակն եմ տեսնում: Անհոգ եղէք, յոյս ունիմ, որ մեզ ո՛չ մի վտանգ չի սպառնայ: Իսկ հակառակ դէպքում Թող իմ արիւնս էլ մեր սրբազան դաւին նւիրական լինի եւ մեր նահատակ գիւղերի վրայ հիմնապնդուի մեր եւ մեր սերունդի ուրախութիւնը, ազատութիւնը»:

Մի քանի ժամ քնանալուց յետոյ, առաւօտեան ժամի 10–ի մօտերը նրանք վեր կացան, լուացուեցան եւ իրենց գործերով սկսան զբաղուել — մէկը հրացանն էր սրբում, միւսը՝ չարուխի կապերն էր ամրացնում, իսկ երրորդը՝ թուխմանը հանելով գլանիկ էր պատրաստում: Մաչիկը մինչ այդ աչալուրջ կերպով հսկում էր, ներս ու դուրս էր անում եւ միշտ էլ ապահով լուրեր էր հասցնում:

Քիչ յետոյ գրան շէնքին մի կին երեւաց, յայտ

նեց գլխաւորների երեւալն ու «պատրաստ եղէք» ասելով հեռացաւ:

Մատնութիւնն իր գործն էր տեսել եւ դեռ տղաների քնած ժամանակ լուր էին տուել կառավարութեան, եւ ահա հարիւր հոգի ասկեաններ վրայ էին հասել ջարդ ու փշուր անելու, բայց տեղեկանալով որ Ֆիդայիները մի քանի հոգի չեն, այլ մի քանի տասնեակ, չէին համարձակուել մօտենալ, այլ մարդ էին ուղարկել շրջակաները՝ քիւրդ աշիրաթների եւ համիդիէ գնդերի մէջ հաւար ձգելու, իսկ Ղարա-Քիլիսայից էլ թնդանօթ բերել տալու:

Տղաներն իմանալով այդ՝ իսկոյն պատրաստութիւններ են տեսնում. տիրում է մի առանձին ոգեւորութիւն՝ հանգստից յետոյ սպասում էին մի փառաւոր յաղթանակի:

Խմբապետն հրացանը ձախ ձեռքն առաւ, իսկ աջով բռնեց խէնջալը, որ նշանակում է թէ՝ ցանկութիւն ունի խօսելու: Բոլորն էլ լռեցին:

— Ընկերնե՛ր, Ֆիդայիներ, ահա վճռական րոպէն, յիշեցէ՛ք ձեր կոչումը: Թշնամին իրաւի բազմաթիւ է, բայց յոյս ունիմ չէք ընկճւի նրանց գնդակների տարափի տակ: Վրէ՛ժ, ընկերներ, վրէ՛ժ՝ մեր սուրբ ու ամայացած հայրենիքի, վրրէ՛ժ՝ անպատուած քոյրերի, մայրերի ու սրբապղծուած նւիրական վայրերի... Տղերք ջան, բարուկ ենք ծնւել, բայց սուրուկ մնում են միայն նրրանք, որոնք կամենում են սուրուկ լինել: Մենք յեղափոխականներ ենք, թանկ ծախենք մեր կեանքը: Ընկերնե՛ր, կռւենք միասին, ապրենք միասին եւ մեռնենք միասին»...

— Կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցէ՛ մեր խմբապետը, որոտացին հայդուկներն ու իրենց ուխտը կատարեցին. «Երդւում ենք յանուն Դաշնակցութեան եւ յանուն Ֆիդայիի մեծ կոչման, կռւել մինչեւ մեր վերջին շունչը, թող մեր մահը վրէժի նոր ուխտ լինի մեզնից յետոյ եկող խմբերին»:

Ասկեարները շրջապատել էին գոմը: Շատերը նրանցից դիրք էին բռնել 30–40 քայլ հեռաւորութեան վրայ գտնուած տներում:

Յանկարծ, կտուրն ի վար 3–400 գնդակ արձակւեց թշնամու կողմից:

Կռիւն սկսւեց: Հայդուկներն «ուռա» կանչելով դէպի դուրս համազարկ տւին: Գոմը մթնեց: Այդ ժամանակ առաջին տասնեակը, որ առաջուց դուրս էր եկել գոմից՝ զինւորական խորհրդի միաձայն վճռի համաձայն և շարւել էր պատի մօտ՝ թըշնամուց աննկատելի իր կատաղի, յանդուգն յարձակումները սկսեց: Զօրքն ու քիւրդերը այդ անակընկալել էր ծեմարանի չորս պատերի մէջ, Նահապետլիս գոմն ու կրակում առաջին տասնեակի վրայ: Այդ առիթից օգտւում են տղաներն ու իրար յետեւից դուրս թռնում մարագից ու դէպի հակառակորդները արշաւում: Հայդուկները դուրսն էին: Թշնամին առաջուց շրջապատել էր գիւղն ու գրաւել բոլոր կարեւոր դիրքերը, այնպէս, որ շատ մեծ դըժւարութիւն կար յառաջանալու դէպի մօտակայ բըլուրը, ուր պէտք էր ապաստանել:

Կռիւն աստիճանաբար տաքանում էր: Յեղափոխականներն ուրախ զւարթ, երգ երգելով քշում էին թշնամուն: Քիւրդերի գլխաւորները սալաւաթ

էին կանչում՝ ոգեւորելու իրենց հետեւորդներին: Յուսահատութիւնը տիրել էր հակառակորդին: Նըրանց սպանուածների եւ վիրաւորների թիւը տասնեակներով կարելի էր հաշուել: Շատ տեղեր էլ կանոնաւոր զինուորները զէնքերը մի կողմ նետելով, աղաչում էին խնայել իրենց կեանքը՝ «Ալլահ աշգընա, գնայըն պանա, օջաղընա տուշմիշըմ» ասելով:

Գոմի դռան մօտ, առաջին յարձակման ժամանակ, նահատակուել էր տանուտէր Գրիգորը, որի հրացանին ցանկանում էր տիրանալ Դարվիշ-աղան, որ Խասսուր գիւղի տէրն էր, բայց նա՝ ճակատից հայդուկի գնդակ ընդունելով, գետին է գլորւում: Դարվիշի եղբայրը կամենում է ազատել իր հարազատի դիակը, բայց նա էլ փռւում է, իր եղբօր հետ դէպի յաւիտենականութիւնը միասին ճամբորդելու համար: Նոյն վիճակին են ենթարկւում եւ աղայի երկու որդիները:

Թշնամին վհատւում է եւ կամաց-կամաց տեղի տալիս: Խմբապետի հրամանի համաձայն, չորս տասնեակներն արշաւում են դէպի մօտակայ բլուրը, յաջողութեամբ անցնում են գետն ու երեք քառորդ ժամից նրանք կարողանում են տիրանալ այդ կարեւոր դիրքերին: Խմբի մի մասն էլ գիւղում մընում է կռիւը շարունակելու համար: Թիւրք կանոնաւոր զինուորներն ու համիդիէները գրաւել էին աւելի յարմարաւոր եւ բարձր դիրքեր, որ բլրից հեռու էր մօտ հազար հինգ հարիւր քայլ:

Բլուրի մակարդակը քառորդ քառակուսի վերստաչափ էր եւ պէտք էր որ տղաները ցրւէին բազմաթիւ դիրքեր գրաւելու, որպէսզի թշնամին չկարո-

ղանար յանկարծակիի բերել և պաշարման մէջ առնել:

Կռիւը հայդուկների կողմից պաշտպանողական բնոյթ էր կրում, որովհետև յարձակումով մօտենալ թշուի աւելի շատ թշնամիների՝ դիտակցաբար դէպի մահ դնալ էր նշանակում: Արեւը կամաց-կամաց մնաս-բարովի էր պատրաստւում: Թշնամին բռնել էր արեւմտեան դիրքերը, այդ պատճառով էլ տղաների համար բաւականաչափ դժւար էր կռւել եւ հրացան արձակել, որովհետեւ արեւի ճառագայթները արգելք էին հանդիսանում:

Շատերը, նոյնիսկ հրացան չէին արձակում, այլ խողովակներ սրբելով էին զբաղւած: Այդ լռութիւնը թշնամուն ուժ ներշնչեց, որ իր վերջին ուժերն հաւաքելով դէպի դիրքերը բարձրացաւ: Երկու կողմից էլ նրանք վեր էին ելնում՝ չրջապատելու հայդուկներին: Երկու կողմից էլ չէին խնայում դնդակները, ու զղում էին, որ բոպէն վճռական է: Իսկոյն խմբապետն իր մօտ է կանչում սուլիչներով՝ տղաներին և պատւիրում է կռիւը չարունակել խէնչարներով եւ տասնոց ատրճանակներով, որոնք անընդհատ էին նման դէպքերում: Կատաղի կռիւ էր: Ոչ ոք յոյս ունէր թէ պիտի ապրէր, բոլորն էլ վերջին անգամ ժպտում էին մայր բնութեան: Յանկարծ լսւում է հրամանատարի խրոխտ ձայնը՝ «պառկել» եւ բոլորն էլ իսկոյն գետին են փռւում: Այժմ երկու կողմից բարձրացող թշնամիները իրար դէմ էին կռւում եւ շատ ուշ հասկացան «պառկելու» ռազմագիտական նշանակութիւնը: Տղաներն էլ իրենց պառկած տեղերից էին կրակ տալիս և աչ ու ձախ

թշնամին գետին էր գլորւում: Զարկը կատարեալ էր: Թշնամու սխալւելը եւ հրամանատարի խելացի հրամանը՝ «պառկել»՝ փրկեց շատերին: Թշնամին սարսափահար, առանց մնալու, համարեա գլորւելով բլուրն ի վար, մի աննկարագրելի, խելագար վազք սկսեց՝ ազատւելու Փիդայու գնդակներից: Տղաները երկու մասի բաժանւելով՝ սկսում են հալածել նրանց, մինչեւ որ խմբապետը, իրենց ճանապարհը շարունակելու համար, յետ է կանչում:

Բոլորն էլ ուրախութիւնից արտասւում էին իբար գրկախառնւած եւ շրջապատած իրենց սիրելի հրամանատարին:

Այդ տեղից տղաները շտապում են աւելի բարձրր դիրքերը գրաւելու, որ ցորեկով հակառակորդի ձեռքումն էր, և ո՛րպիսի ուրախութիւն, երբ այդ վայրերը գրաււած են լինում գիւղում մնացած հայդուկներով:

Սրանք հրամանատարի օգնականի ղեկավարութեամբ կռիւ են մղում գիւղում եւ ցրելով թշնամուն՝ շտապում են բարձր դիրքերը գրաւելու:

Գիւղից վերադարձող եւ միւս հայդուկները գրկախառնւեցին ու ուրախ, զւարթ երգ երգելով՝ պար բռնեցին՝ մէջ ընդ մէջ էլ կանչելով «կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցեն խմբապետները»:

Նոր եկողները պատմեցին, որ այս սեւ մատնութեան գործը կատարել է խաստուրցի Յովսէփ անունով հայը:

Զինւորները նախ քան Փիդայիների հետ կռւելը՝ խէնչարով սպանում են Աաշիկ վարժապետին և իր եղբօրը, որոնք համարձակւել էին տեղ տալ

«վտանգաւոր» մարդկանց: Մի երիտասարդ հայ օրիորդ աչքի էր ընկել իր քաջասրտութեամբ: Մինչ թշնամու շրջապատելը, հայ օրիորդը ջուր էր կըրում իր պատուի համար կռւող յեղափոխականներին եւ նախ քան կռիւը նա գոմի մէջն էր, երբ տղաները խնդրում են նրան՝ անմիջապէս թողնել եւ հեռանալ: Նա, այդ սրտոտ հերոսուհին, մերժում է նրանց առաջարկն ասելով. «Ո՛չ, ես պէտք է ձեզ հետ լինեմ, կամ ապրել ձեզ հետ, կամ ձեզ հետ մեռնել»: Այդ պատասխանից յետոյ՝ դժւար է լինում նրան համոզել, եւ օրիորդն կռւի ամբողջ ընթացքում մնում է օգնելու հայդուկներին:

Երեկոյեան, կռւի ժամանակ, տղաների արձակած գնդակներից մէկը մտնում է զինւորների պատերազմական փողի բերանն այն ժամանակ, երբ զինւորը փչելիս է լինում, որից փողահարը տեղն ու տեղը սպանւում է: Այդ դէպքը հիմք է ծառայում զանազան առասպելների եւ խօսակցութիւնների եւ պատմում են իրար մէջ, որ Ֆիդային գիշերը ցերեկւայ պէս պարզ տեսնում է:

Թշնամին շատ մեծ կորուստ էր տւել: Հաստատ աղբիւրներից քաղած են, որ 350-ի մօտ է, որոնց մէջ են Դարվիշ-աղան, իր եղբայրը, երկու որդիներն, երկու հատ շէյխ, Ալի փաշայի տղան, երեք հատ հազարապետ և շատ հարիւրապետներ ու պաշտօնեաններ:

Կռւին մասնակցում էին ութ հարիւր հոգի հետեւակ զօրք, երեք հարիւր հոգի կանոնաւոր հեծելազօրք եւ քրդական հինգ աշիրաթների մարդիկ:

Նահատակւած յեղափոխականներն եղել են՝

չորս հատ տաճնապետ՝ կեսարացի Միհրան, սիվանցի Գրիգոր, տիգրանակերտցի Հաճէ, խնուսցի Պետօ եւ մի օգնական՝ էրզրումցի Աւետիս: Հայդուկներից նահատակւել էին տասը հատ, որոնցից մէկը չիսուն տարեկան էր, երկուսը երեսունից աւելի, իսկ միւսները մինչեւ երեսուն, որոնցից հինգ հոգին ծաղիկ հասակի մէջ էին դեռ՝ 22–23 տարեկան: Այդ կռիւը բարոյական խոշոր ազդեցութիւն է թողել քիւրդերի վրայ, որոնցից շատերն իրենց աղայի դէմ բողոք էին բարձրացրել, ասելով. «Ջանըմ, նրանք Ջան-Ֆիդայի, պաշախ մարդ են, ինչո՞ւ համար կռւի առիթ էք տալիս: Գալի՞ս են թէ գնում են՝ մեր ի՞նչ գործն է: Ո՛ւր ուզում են գնան, ինչ ուզում են՝ անեն, չէ՞ որ մեզ չեն վնասում, ոչ մեր մալն են տանում եւ ոչ էլ մեր մուլքը: Դո՛ւրս ենք գալիս կռւում հեռները՝ մեր տունն են քանդում: Լա՞ւ եղաւ, որ տներնիս քանդեցին, այսքան մարդ ջարդեցին, իրենք էլ վատաւորապէս անցան իրենց գործին գացին»:

## ՍՊՂԱՆ ԳԻՒՂԻ ԿՌԻՒԸ

Աղբիւրի մահից մի քանի յետոյ, քրդերն առիթ փնտռելով արշաւում են Սասնոյ գիւղերի վրայ՝ իբրեւ չպանձւած հարկերն հաւաքելու դիտաւորութեամբ: Զկար Սերոբ-փաշան եւ նրանք կարծում էին էլ՝ դիմադրութեան չեն հանդիպի:

1899 թւականի նոյեմբեր 2-ն էր: Պշարի տղայ Խալիլ, երկու հարիւր հոգով յարձակւում է Տալուորիկի Սպղան գիւղի վրայ, ուր այդ ժամանակ

պանուում էր Սերոբի կնքահայր հայդուկ Մարզարը: Ցարմար առիթին էր վրէժ լուծելու Սերոբի մահուան համար, եւ ետ մղելու աներես հակառակորդներին, որոնք հանդիստ չէին տալիս հայ ժողովըրդին:

Մալիլը չրջապատում է գիւղը, ապա մի քանի ներկայացուցիչներ է ուղարկում գիւղի մեծամեծների մօտ, պահանջելով, որ չդանձած հարկերը յանձնեն, հակառակ դէպքում ամէն ինչ քար ու քանդ կ'անէ: Այդ պատճառով մեայն մի քանի ժամ ժամանակ է տալիս: Գիւղացիները, արտապնդուած հայդուկ Մարզարի ներկայութիւնից եւ ունենալով մի քանի հատ էլ պինուած երիտասարդներ, մերժողական պատասխան են տալիս և յայտնում, որ պատրաստ են մինչեւ վերջին շունչ դիմադրելու եւ իրենց պատիւը պաշտպանելու:

Մերժումից յետոյ, Մարզարն իր չորս կողմն է հաւաքում գիւղի պինուած երիտասարդներին եւ նրանց խրախուսում հետեւեալ խօսքերով. «Տըղա՛յք, ահաւասիկ Մալիլ աղան Աղբիւրի գլուխը կերաւ եւ հիմա ալ այսչափ մարդով եկեր եւ դէպի գիւղը կը յառաջանայ իր ուզածն անելու... Ալ ինչո՞ւ կ'ապրինք. մենք Աղբիւրից աւելի չենք»: Տասը կտրիճներ դուրս են թռնում եւ գիւղի մօտերը դիրք բռնելով՝ թշնամու դէմ յանդիման են լնում:

Սկսւում է կռիւը: Մի քանի ժամ տեւող կռւի ընթացքում՝ գիւղացիները ամէն օգնութիւն ցոյց են տալիս իրենց իրաւունքը պաշտպանող հերոսներին, որոնք ոգեւորութեան մէջ ամէն ինչ մոռացել էին եւ մեայն թշնամու առաջխաղացն էին կասեցը-

նում:

Խալիլը չի կարողանում իր նպատակին հասնել: Նա չորս սպանուած եւ վեց վիրաւոր տալով յետ է դառնում՝ իր մտքի մէջ որոճալով նոր եւ ուժեղ յարձակումը: Հայերի կողմից զոհւում են Զաքար եւ Պօղոս երիտասարդները: Այս դէպքն իսկոյն կառավարութեան ականջն է հասնում, որ վրդովւում է եւ միաժամանակ զայրանում, որովհետեւ չէր կարծում թէ՝ Սերոբի մահւանից յետոյ դիմադրութիւն կարող է լինել: Քիչ յետոյ, հայերի դէմ կառավարական զինուորներ են ուղարկւում, որոնց դէմ իսկոյն ցցւում են զինուած հայերը: Տեսնելով այդ յանդուգն պատրաստակամութիւնը՝ Բաղէշից հրամայում են՝ առանց վնաս հասցնելու գիւղացիներին, ձերբակալել Գաբրիէլ քահանային և մի քանի ազդեցիկ մարդկանց ու վերադառնալ:

## ԱՊԱՂԱՑԻ ԿՌԻՒԸ

99 թուականի դեկտեմբերի 2-ն է:

Դաշնակցական զինակիր խումբը, բաղկացած վեց հոգուց, Պարսկաստանից Վասպուրական պիտի անցնէր: Խաչան հայ գիւղի մօտ նկատւում է քիւրդերից եւ հաւարն իսկոյն ընկնում է շրջակայ աշիրէթների մէջ: Զինատարներն ամէն կերպ աշխատում են խուսափել, բայց անկարելի է լինում, որովհետեւ կանոնաւոր կերպով նրանց լրտեսում էին: Որոշում են հրացան արձակել հանդիպած քրդերի վրայ, վիրաւորում են մէկին ձեռքից, որպէսզի այդ միջոցով կարողանան փախուստի մատնել:

Շուտով վրայ են հասնում բազմաթիւ քրդեր, որոնք սկսում են հետապնդել դինատար խմբին: Ամբողջ դիշերն անընդհատ առաջ են գնում տղաները, աշխատում են չարմարաւոր դիրքեր գրաւել, բայց չը կարողանալով, ստիպւած են լինում բաց դաշտում մնալ: Հետեւեալ օրը նրանք ստիպւած են լինում դետն անցնել, երբ եւ ամբողջովին թրջւում են: Գետի միւս ափին կրակ են վառում, հանում են հագուստները չորցնելու եւ մի քիչ էլ հանգստանալու երբ յանկարծ նկատում են որ դաշտը լեցւում է ձիաւորներով, որոնք ամէն կողմից շրջապատում են տղաներին: Կրակն իսկոյն հանգցնում են եւ վազում մօտակայ փոսերը՝ ապաստանելու համար: Այդ ժամանակ քիւրդերն չարձակում են գործում եւ սպանում երկու հոգու: Միւս չորսն էլ իսկոյն պատրաստ են նահատակւած ընկերների դիակների մօտ ու իրենց էլ սպանւած ձեւացնում: Թշնամին ուրախութիւնից վազում է կողոպտելու եւ դլուխները կտրելու նպատակով: Երկու հարիւր քայլի վրայ, երբ քիւրդերը չարքեր կազմած առաջ են ընթանում, իսկոյն «մեռած» հայդուկների կողմից լսւում է ուժեղ համազարկ: Քիւրդերը մի քանի սպանւած եւ վիրաւոր տալով ստիպւած են լինում յետ փախչել: Յեղափոխականները, խմբապետ Յովհաննէսի կարդադրութեամբ, փոսերի մէջ չարմար դիրքեր գրաւելով, երդւում են մինչեւ վերջին շունչը կռւել, իրենց ընկերների վրէժն առնել, սակ միայն նրանց եռեւից դնալ: Դեռ իրենք չդնած, հագուստները թրջւած, սոված ու քրտնաթոր, սպասում էին թշնամու յարձակման, երբ միւս կողմից Մուսդաֆա-

բէկի մօտ վեց հարիւր համիդիէներն խակոթի միահամուռ առաջ են նետուում «եա Օմար» կանչելով:

Ցարճակումն անսպասելի էր եւ թիկունքից: Տղաներից երեք հոգի սպանուում են, իսկ Ցուվհաննէսն էլ վիրաւորուում է: Վերջինս անկարող լինելով հրացան արձակել, սպասում է, երբ քիւրդերը մօտենում են, ատրճանակի հարուածներով երկու հոգու էլ վիրաւորում է եւ ապա մեռնում: Քիւրդերից սպանուում են 13 հոգի եւ երեքն էլ վիրաւորուում: Դրանց մէջ լինում են եւ հոգեւորականներ:

Ֆէդայիներին թալանում են՝ հագուստ, ոտնամաններ, ներքնազգեստ, դրամ և ամէն ինչ տանելով: Ապա նրանք հաւաքում են մօսին հրացանները, որոնցից մի քանիսը տղաները նախօրօք փչացրել էին, որպէսզի թշնամին անկարող լինի գործածելու: Այնուամենայնիւ նրանցից երեքը լաւ դրուրուխեան մէջ, ընկնում են թշնամու ձեռքը, որի համար էլ ցեղապետների մէջ կռիւ է ծագում թէ՝ ո՞ւմ մօտ պիտի մնան նրանք: Այդ վէճը հասնում է կառավարութեան ականջը, որ իր կողմից պահանջ է դնում զէնքերը յանձնել պետութեան: Այդ պահանջը մերժում են եւ միայն նահատակ ընկերների դիակներն են տալիս:

Ֆէդայիներից Ցուսէֆին ճանաչելով, գլուխը կտրում են՝ խաչէնցիներին ցոյց տալու: Այդ կռիւը, չնայած բոլոր մասնակցողներն էլ սպանուում են, խոր տպաւորութիւն է թողնում թշնամիների վրայ: «Եթէ ֆէդայիները թրջուած չլինէին, ասում էին քիւրդերը, անկարելի պիտի լիներ նրանց մօսիններին ղէմ կռուել: Այդ մօսինների ահից էր, որ ա-

*ոաջին անգամ չվստահեցանք քիչ ուժով յարձակում գործել»:*

*Բարոյական այդ ազդեցութիւնը աւելի է բարձրանում, երբ նահատակուած ընկերների պըրպանններից «Դրօշակ»-ի 99 թիւ 6–7 թիւերն են հանում, ապա հետաքրքրուելով բովանդակութեամբ, կարդացնել են տալիս մի հայի ու խոր ակնածութեամբ լսում թարգմանութիւնը:*

*Նրանց վրայ առանձին տպաւորութիւն է թողնում Գուրգէնի եւ իր ընկերների հերոսական կռիւը:*

*Այնուհետեւ նրանք առասպելներ են սարքում, տարածում ժողովրդի մէջ, որ ֆիդայիները վեց հազար հոգով յարձակում պիտի գործեն եւ իրենց սպանուած ընկերների վրէժը պիտի լուծեն:*




ԱՐՏԱՇԷՍ ՄԻՍԱՔԵԱՆ

## ԳԼՈՒԽ Գ.

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ՓԱՑԼԱԾՈՒ ԱՐՏԱՇԷՍ ՄԻՍԱՔԵԱՆ*)

Ծնած է 1875 թ. Պէօյիւք Տէրէ եւ մինչեւ 1888 թուականն իր մանկութիւնն այնտեղ է անցկացրած ու սկզբնական կրթութիւնն էլ ստացած է տեղական նախակրթարանի մէջ:

Իր հայրը՝ Մխսաք աղա, բնիկ սամաթիացի, նորից կը վերադառնայ իր հայրենիք եւ իր սիրած թաղերից մէկի մէջ հաստատուելով, կը սկսի որդիների կրթութեան հոգը տանել: Արտաշէսը կ'ընդունւի Սահակեան վարժարանի մէջ եւ իր ազնիւ ու անկեղծ բնաւորութեամբ, մանաւանդ տոկուն աշխատասիրութեամբ բոլորին սիրելի կը դառնայ: Գլխաւորապէս նա տարւած էր հայոց պատմութեամբ եւ դրականութեամբ, մանրազնին ուսումնասիրում էր իր ձեռքն ընկած իւրաքանչիւր մի թուղթ: Արտաշէսը ունէր եւ մի այլ յատկութիւն, նա վերացական մարդ չէր, նա կեանքի շշուառու-

*) Մանրամասն կենսագրականն ստացել եմ հանգուցեալի եղբայր՝ Մխքայէլ Մխաքեանից:

թիւններ տեսած եւ իր քնքոյշ սրտով զգացած էր եւ այդ էր պատճառը, որ իւրաքանչիւր մի անարդարու թիւն նրա մէջ առաջ էր բերում ցասում եւ բողոք: Նա դեռ չատ վաղ հասկացաւ ծարդկային հասարակութեան մէջ տիրող անհաւասարութիւնները՝ քաղաքական, անտեսական հողի վրայ և այդ էր պատճառը, որ վճռեց կուել այդ անարդարութիւնների դէմ:

Դեռ աշակերտական կեանքի մէջ էր, երբ դրսից ինչ որ գործիչների, կուսակցների, պայքարողների մասին էր լսում եւ իր այդ հետաքրքրութեան արդիւնքն այն եղաւ որ 1893 թ.–ին, մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ:

Նոյն տարին աւարտելով Սահակեան վարժարանը, նա վճռեց ուսուցչական ասպարէզն ընտրել իրեն, որպէս գործունէութեան վայր, համարելով այդ՝ սերունդ կրթելու, յեղափոխականացնելու միակ հաստատուն ճանապարհը: Զնայած ծնողների եւ բարեկամների խորհուրդներին եւ թախանձանքներին, որ յետ կենայ իր մտադրութիւնից, Արտաշէսեան հայերէնի դասատուի պաշտօն ստանձնեց նոյն վարժարանում:

Միաժամանակ նա չէր մոռացել եւ ազգային գործերը: Իր ազատ ժամանակներին նա տեղական երիտասարդների հետ էր՝ վիճաբանելով եւ բացատրելով օրեայ հրատապ հարցերի չուրջ: Բոլոր ընկերներն էլ հաւատում էին Արտաշէսին եւ գիտէին, որ իր զաղափարների իրագործման համար ո՛չ մի միջոցի առաջ կանգն չի առնի:

Եւ իրօք: Ընկերներից չատերը չզարմացան,

երբ երիտասարդ, վառվռուն Արտաշէսը, հայ ժողովուրդին աւելի օգտակար լինելու դիտաւորութեամբ վճռում է վարդապետական վեղարն օգտագործել, որի համար եւ Արմաշի դպրավանքն է մըտնում՝ 1894-ի վերջերը:

Յանդուգն եւ ազնիւ Արտաշէսը շատ շուտ զգաց այդ մթնոլորտի սարսափելիութիւնը, նրա պատերի նեղլիկութիւնը և ահա մի օր, երազելով զէնքերն ու զգալով յեղափոխութեան կարօտը, վերադառնում է Պօլիս: 95 թւականն է: Աշըգեանի օրով մեռած Ազգ. Սահմանադրութիւնն Իզմիրլեանի օրով յարութիւն է առնում: Հայ ժողովուրդը, Ազգային Հիւանդանոցի պարտէզի մէջ է տօնում այդ յաղթանակը: Յանկարծ մէկը վեր է բարձրանում «մի երիտասարդ՝ ձուաձև, սիրուն դէմքով, սրածայր միրուքով եւ ոգեւորուած կը նկարագրէ Սասունի կորածն ու զէնքի, վրէժի կը կանչէ ժողովրդին, որ խռնուած նրա չորս կողմը՝ ծափահարութիւններով եւ կեցցէներով կը խլացնէ օդը»: Այդ երիտասարդը Մխաքեանն էր, որ լրտեսների աչքից չվրիպեցաւ:

Նա այդ դէպքից անմիջապէս յետոյ անցաւ Իզմիր, ուր մի առ ժամանակ մնալուց յետոյ, նորից վերադարձաւ Պօլիս՝ այս անգամ օգոստոս 14-ի գործի կազմակերպողներից մէկն հանդիսանալով:

Նա տոկուն աշխատող էր, խստապահանջ էր դէպի ընկերները և գործը: Նա էր թաղատոցներ գտնում, զէնքերի փոխադրութեան մասին մտածում, ընկերներին տեղաւորում, խրախուսում շատերին: Նա այն աստիճանին գաղափարական էր եւ

տարուած, որ ո՛չ մի րոպէ իրենց տան ապահովութեան եւ իւրայիններին կեանքի մասին չէր մտածում, այլ միշտ խորհրդակցական ժողովներ էր նըշանակում իրենց տան մէջ, որ քիչ անգամ թաքըստոց չի հանդիսացել ռումբերի եւ ատրճանակների համար:

Սամաթիոյ ինքնապաշտպանութեան կենտրոնական դէմքերից էր: Նա, Գնունին եւ Սուրէնը, ահա այն յեղափոխական երրորդութիւնը, որ կարողացաւ 18 ժամ անընդհատ դիմադրել՝ անվախ, յամարձակ եւ ի վերջոյ ընկնել, նահատակուել՝ ազատութեան ճանապարհի վրայ...

Արտաշէսը կռուեց պաղարիւնութեամբ, որովհետեւ իրեն սկզբունք էր արել Րաֆֆու խօսքերը—

«Ես եւ գուցէ իմ բոլոր համախորհուրդներս կ՚ընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ բաց կ՚անէ մեր հետեւորդների առջեւ, նրանք կ՚անցնեն մեր դիակների վրայից»:

Եւ ընկաւ նա գիտակցութեամբ: Նոյնիսկ վերջին րոպէին, երբ մահն այնքան մօտալուտ էր, երբ վերջին րոպէներն էր ապրում, իր սիրելի գործն ու ընկերներին չթողեց եւ առանց մնաս բարով ասելու նոյն յարկի տակ գտնուող հարազատ մօրը, քրոջը և եղբօրը, հերոսի դափնեայ պսակը ճակտին՝ յաւիտենականութեան գիրկն է նետւում, յարգանքի յիշատակ թողնելով իր յետնորդներին...



ԱՐՏԱՇԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

## ՍՈՒՐԷՆ
## ԱՐՏԱՇԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Բնիկ սամաթիացի էր, ուսած էր Գէորգեան ճեմարանում, իր կեանքի լաւագոյն մասն անց էր կացրել Արագածի լանջերուն վրայ, Անիի աւերակների մէջ, եւ տարւելով հայ անցեալի փառաւոր յուշարձաններից, տեսնելով եւ զգալով ներկան իր ցնցող եւ մահացնող պարագաներով, որոշեց նետուել յեղափոխական կռուի ասպարէզը:

Աշակերտական շրջանում շատերը կարող էին նրան չսիրել, բայց Արտաշէսին չյարգել՝ անկարելի էր: Նա հեզ ու ներող էր իր ընկերական շրջաններում, բայց կեղծութեան եւ նենգութեան առթիւ նա կը կատաղէր եւ այն ժամանակ սոսկալի էր Արտաշէսը՝ իր կարշնեղ բազուկներով: Նա այն տիպերից էր, որոնք հոգով եւ մտքով են զգում հայրենիքի դժբաղդութիւնը, վերլուծելով անցեալը, քննելով եւ պատկերացնելով ներկան եւ գծելով ցանկալի նպատակ՝ ապագայի համար: Նա իր պայքարն արդէն ըս կրսել էր ճեմարանի չորս պատերի մէջ, նահապետեան-Կոստանեան դժնդակ ռէժիմի դէմ եւ իր բազմաթիւ ընկերների հետ միասին՝ 1891 թւին, փետ. ամսւայ բուք ու բորանին՝ չունենալով ոչ վկայական եւ ոչ էլ դրամ, թողեցին կղերականների փըտած որջն ու դուրս ելան «խռովարարները»: Այդ դէպքից յետոյ, նա վերադարձաւ Պոլիս, ապա հայ վարժապետի ցուպն առաւ իր ձեռքը: Ծնողներն ու ծանօթները խնդացին վրան, որ ինը տարի աւարտելուց յետոյ, նա «հայ վարժապետ» է դարձել, բայց Արտաշէսն արհամարհեց նրանց կարծիքն ու գնաց

ժողովրդին ծառայելու:

Հինգ տարուայ ուսուցչական կեանքի մէջ նա շատ թշնամիներ վաստակեց՝ իր չիտակ եւ խարազանող բնաւորութեան չնորհիւ: Ռոտոսթօչն դիշերով վախաւ նախկին թագաւորներէն եւ Համալեակ Դիմաքսեան եպիսկոպոսէն, որոնք նրան որպէս յեղափոխականի մատնեցին կառավարութեան:

Կովկասից համակիր Դաշնակցութեան սկզբունքին, նա շուտով յարեց Պօլսոյ «Զոհ» կոմիտէին, որի եռանդուն եւ գործունեայ անդամներից մէկը եղաւ մինչեւ վերջին չունչը:

Նա եւ Գնունին միեւնոյն կոմիտէի մէջ էին եւ մինչեղեւ վերջինս խանդ ու ոգեւորութիւն կը մտցնէր կոմիտէական գործերի մէջ, նա՝ Արտաշը իր չիտակ եւ արդարակորով խորհրդածութիւններով լրջութիւն կը մտցնէր: Ռումբերու եւ դինամիտի գործածութիւնը զազանիք էր կենտրոնական կոմիտէի մօտ, բայց պէտք էր արդէն այդ սեփականութիւն դարձնել միւս կոմիտէներուն: Եւ ահա մի պատահարի մէջ դրած մի ռումբ նէր ուղարկեցաւ «Զոհ» կոմիտէին: Հինգշաբթի օրւայ նիստն է. կոմիտէի բոլոր անդամներն էլ ներկայ են: Կենտրոնական կոմիտէի ներկայացուցչի ռումբի գործածութեան մանրամասն բացատրութիւնից յետոյ, բոլորի երեսին մի դեղեցիկ եւ անբացատրելի հրճւանք երեւցաւ, իսկ Արտաշն առնելով իր ձեռքն այդ դուն դը, փայփայեց և բացադանչեց. «Հիմա Պօլիսը մերն է»:

Եւ Արտաշը կրկնապատկեց իր եռանդը եւ զարմացրեց ընկերներին իր եռանդով ու վարչական ըն-

դունակութիւններով: Սամաթիոյ կուի ծրագիրը իր եւ Գնունու չղացումն էր, որոնք ամէն կերպ աշխատել էին գործնական բնոյթ տալ, բայց ոսոխականութեան կանխօրէն իմանալը՝ արգելք հանդիսացաւ այդ փառաւոր ծրագրի իրագործման: Սուրէնն այդ փառաւոր հերոսների հետ կուեցաւ մինչեւ վերջին րոպէն, սպառեց իր զնդակներն ու ռումբերը, սառնութեամբ յետ մղեց թշնամիներին, կանգնեց վեհութեամբ իր չեղափոխականի կոչման բարձրութեան վրայ եւ վերջն էլ՝ ինքն ու Գնունին ջերմ ընկերական հրաժեշտ տալով... գաւաթներով թոյն ընդունեցին: Նայեցէք նորա ջնջի հանդարտութեան եւ ճակատի ծալքերի մէջ կենարոնացած խոհականութեան. ներա թափանցեցէք նորա խոհուն եւ վճիտ աչքերով պէտի աւելի խորը, հոգեկան աշխարհը եւ դուք կը զգաք նորա վեհութիւնը, վճռականութիւնը, պլուխ կը խոնարհէք նորա գաղափարականութեան առաջ ու կ'ուզէք գնալ նորա ճամբով. առաջ տանիլ սկսած սրբազան գործն ու բարձրը պահել նորա սիրած չեղափոխական դրօշը:



ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

## ՇԱՀԷՆ ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

Սամաթիոյ կուսէ անմահ երջանկութեան հոգին էր, նրան զեկավարը, առն առողը, մի խոշոր յեղափոխական տիպ, որի մասին արժէ աւելի մանրամասն կանգն առնել: Նա ծնուել է Վասպուրականի է. դիւղում 1865 թուականին: 1878-ին նա թողնում է հայրենի տունը, դիւղական մաճն ու հովւական ցուպը, անցնում է ռուս-տաճկական սահմանը, Գէորգեան ճեմարանում ուսումն առնելու համար: Մի քանի տարուայ ընթացքում աւարտելով տեղական ծխական դպրոցը, նրան յաջողւում է ընդունուել ճեմարան, որ այն ժամանակ իր վառուռը չրջանն էր ապրում: Աշակերտական կեանքում արդէն նա երեւան եկաւ յեղափոխականի յատուկ գծերով: Ուր որ դոք կար վարչութեան դէմ, Գնունին հոն էր. ուր յանդուգն մի քայլ կար, կամքի կարիք կար եւ մարմնի ճարպիկութիւն, նա զեկավար էր առաջին չարքերում, ուր ընկերոջ օգնութեան խնդիր կար— նա բոլորից առաջ արձագանգ կը տար: Ընկերական կեանքի մէջ անկեղծ եւ պարզ, նա կատարեալ հակառակորդ էր կեղծիքի և ձեւականութեան: Մեծացած՝ դիւղական ազատ և լայն բնութեան գրկում, հեռու քաղաքի ժխորից եւ խարեբայութիւններից, անծանօթ մարդկանց հոգիների րոպէական փոփոխութիւններին, նա ճեմարանի չորս պատերի մեռնութեան մէջ տարուեցաւ հանրային գաղափարներով եւ մինչ պատրաստուեցաւ ծառայելու այն դիւղացիութեան, որի ծոցից ինքն էր ելել: 1886 թ. ճեմարանում տարածուած աչքացաւը ստիպեց Գնու-

նուն հեռանալ եւ վերադառնալ հայրենի գիւղը՝ իր ստեղծանին բերելու նախկին խաչնարած ընկերներին, որոնք անտեղեակ կեանքից՝ խարխափում էին մթութեան մէջ: Կարճ ժամանակից յետոյ նա բաց արաւ վարժարան, որի մէջ հաւաքելով գիւղի երեխաներին՝ սովրեցնում էր գրել-կարդալ եւ մխաժամանակ տարածում էր յեղափոխական կայծը: Տեղական իշխանութեան ստեղծած խաղերի պատճառով Գնունին ստիպւած էր հեռանալ գիւղից եւ անցնել Պօլիս, ուր Գատը-Գիւղի ազգային վարժարանին մէջ ուսուցիչ կ'ընդունուի: Շատ չանցած այդ տեղ էլ կ'ուղենայ մի տիպիք ընդհարում, որի պատճառով էլ նրան դպրոցից կը հեռացնեն:

Մի կիրակի օր, եկեղեցու բակի մէջ իրեն կը մօտենայ գիւղի «մեծ ազայի», Աբիկ Ունճեանի կոյր հետևորդներից մէկն ու հրամայական տոնով կ'ասի.

— Միւսիւ, գիտէք, որ Աբիկ էֆէնտին գաւազան գործածելու դէմ է. իսկ դուք հակառակի պէս առանկ այլանդակ «չօպանի» մահակ մը առեր ու եկեղեցիին բակին մէջ իր քթին տակը կը պտտցնէք: Շատ, շատ բարկացեր է. պատւիրեց, որ ձեռքերնիդ չառնէք:

— Ինծի նայէ, պարոն, ըսաւ Գնունին, էֆէնտիդ բարեւ ըրէ եւ ըսէ, որ իրեն չվերաբերած գործին մէջ քիթը չխոթէ: Հասկցա՞ր:

— Ես լաւդ գլուխդ ժողվէ, միւսիւ, չէ նէ դպրոցէն ճամբել կուտամ քեզի:

— Դուն կ'երեւայ թէ մարդ չես տեսեր դեռ, յիմար. այս գաւազանին կէսը գլխուդ կը ջարդեմ, կէսն ալ եկեղեցիին բակին մէջ կը թաղեմ ու ետքը

*կ՚երթամ ասկէ :*

*Այս միջադէպի վրայ, ադայի հրամանով, հետեւեալ օրը Գնունին վռնտուած էր ուսուցչութեան պաշտօնից :*

*Պօլսոյ մէջ մի որեւէ վարժարանում չէր կարող մնայուն պաշտօն ունենալ, որովհետեւ իր կրակոտ բնաւորութեամբ միշտ ատելի էր ադա—հոգաբարձուներին : 93 թուին, Անդրէասեանի հետ հրաւիրւում է Ռօտոսթօէն, սակայն բաղդն այստեղ էլ չի ժպտում նրան : Հմայեակ եպ. Դիմաքսեանը, նըկատելով որ այդ նոր երիտասարդներն իրենից աւելի են ժողովրդականութիւն վայելում, որ նրանք եկեղեցու հասոյթները չատկացնել էին տալիս դըպրոցին, որոշեց մի անգամից ազատել նրանցից եւ այդ նպատակով էլ յայտնեց կառավարութեան, որ այդ ուսուցիչները Կովկասից եկած յեղափոխականներ են, որի համար էլ այդ անխոնջ մշակների համար վտանգալից դրութիւն ստեղծւեց :*

*Այդ բոլոր տանջանքներից և հալածանքներից յետոյ, նա զգաց գործունէութեան աւելի լայն, աւելի խիզախ եւ ազատ շրջան, որի համար էլ մտաւ Պօլսոյ Դաշնակցական շարքերը, գրկեց յեղափոխական ասպարէզն ու գիշեր ցերեկ նրան նւիրեց իր ժամանակը, մտածումներն ու հոգին : Գնունիին դըրանից յետոյ, կը հանդիպինք պարտէզների մէջ, ուր նա՝ իր գլխին հաւաքած արհեստաւորներ, բանւորներ և գիւղացիներ, բացատրում է ճնշւողների եւ ճնշողների տարբերութիւնը, յեղափոխական կռւի նշանակութիւնն ու կազմակերպութիւնը :*

*Նա տեղաւորւում է Սամաթիա՝ ուսուցչի պաշ-*

*տօնով: Ինչ յետոյ զուգադիպութեամբ նոյն թաղի քարոզիչ է նշանակւում Դիմաքսեանը եւ այդ երկուսի մէջ սկսւում է կատաղի կռիւը: Շուտով նրան դպրոցից հեռացրին, բայց նա չյուսահատեցաւ եւ աւելի ամուր հաստատուեցաւ այդ շրջանում՝ իր շուրս կողմն հաւաքելով բոլոր յեղափոխականացած տարրերին: 95-ին, պատահաբար կը ձերբակալուի, եւ վեց ամիս բանտի մէջ անասելի տանջանքների ենթարկուելով, վերջապէս կ'ազատուի: Բանտից շաբունակ նամակներ կը գրէր «Շահէնն ի վանդակի» ստորագրութեամբ եւ իր յեղափոխական մտքերը կ'արծարծէր: Երբ բանտից կ'ելնէ, կը մտադրուի անցնիլ Վասպուրական, իր սիրելի հայրենիքը, յեղափոխական սերմերը ցանելու նպատակով, բայց Պօլսոյ մէջ նա կը նկատէ, որ մեծ չեղափոխութիւն է առաջ եկել, որ Դաշնակցութեան Ռումբ, Սիւննիք, Շանթ, Զոհ, Ապուսելճ խմբերն արդէն ցանցով պատել են, որ տիրում է խանդավառ ոգեւորութիւն, որ ինչ որ կարեւոր եւ խորհրդաւոր ծրագրի իրագործման համար պատրաստութիւններ են տեսնըւում եւ այդ պատճառով էլ վճռում է մնալ եւ միանում է «Զոհ» խմբին:*

*Հայկ Տիգրան լրտեսի ամբաստանագիրը կազմողներից և բանտից փաստացի տեղեկութիւններ տուողներից մէկն է լինում Գնունին, որ պահանջում է անմիջապէս տերրօրի տալ: Քննութիւնից յետոյ որոշւում է խափել Հայկ Տիգրանին, որն և իրագործւում է 95-ի յունիսի 2-ին:*

*Գնունին պաշտօն կը գտնէ Ազգային Որբանոցի մէջ, այս անգամ նա կը սիրէ ճակատագրից հալած-*

ւած, բաղդի ալիքներին թողնուած այդ անբաղդնե-րին, որոց պաշտպանութեան համար էր որ կռիւ մղուեցաւ իր եւ հոգաբարձութեան միջեւ: Նորա նպատակն էր Որբանոցը հեռացնել հիւանդանոցից, որովհետեւ վերջինիս պաշտօնեաներն ու ծառաները անբարոյականացնում էին Որբանոցի սաներին: Նա իր այդ կռւի մէջ յաջողւում է, բայց շատ սուղ է նստում իրեն, որովհետեւ իր դէմ է զինւում ամբողջ հոգաբարձութեան:

Հոգաբարձութիւնը առիթներ է գտնում Գնու-նու դէմ եւ ահա մի գեղեցիկ օր լուր է ստանում որ նա, այդ «վտանգաւոր» մարդը Դաշնակցական է եւ իր բարձի տակ ատրճանակ է պահում: Ատրճանա՛կ, ի՞նչպէս կարող է պատահել, պէտք է հարցաքննել եւ արժանի պատիժը տալ:

— Իրա՞ւ է, պ. Գնունի, որ բարձերնուդ տակ ա-տըրճանակ կը պահէք:

—Այո՛, ո՛չ միայն բարձիս տակ, այլ եւ մէջքս:

— Ի՞նչ պէտք ունիք ատրճանակի:

— Պապը-Ալիի կոտորածի օրը, երբ դուք ա-մէնքդ ալ պահւըտած էիք, մենք որբանոցին տղաքը բիրերով միայն կրցանք զինել ինքզինքնին պաշտպա-նելու համար: Իսկ ես բոլոր յոյսս դրած էի ռէվօլ-վէրիս փողին եւ գնդակներուն վրայ:

— Ո՛չ, պ. Գնունի, ձեր ատրճանակը պարզա-պէս դաւաճանութիւն մըն է որբանոցին դէմ, հոգա-բարձութիւնս չի կրնար ներել:

— Ձեր կարճ խելքին ըմբռնումն է այդ: Ես ա-տըրճանակ պիտի ունենամ միշտ եւ եթէ դուք ան-փոյթ էք տակաւին մէյ մէկ հատ ունենալու, ամօթ

ու վայ ձեզի․ կը ցաւիմ վրանիդ։ Գնունին վռնտուած էր պաշտօնից, բայց նա ուրախ էր եւ ոգեւորուած, որովհետեւ օգոստոս 14-ի օրուայ նախապատրաստութիւններին էր մասնակցում։

Յունիս 3-ի ռոդոսթօցի Գէորգի և չմշկածագցի Յովսէփի կախաղանները նրան հանգիստ չէին տալիս․ նա չէր կարողանում պատկերացնել որ իր գաղափարակիցները պիտի ճօճէին փայտերի վրայ, օդի մէջ կախուած, եւ ահա Գնունին առաջարկում է Կ. Կօմիտէին, անցնիլ ռմբակիր խմբի գլուխը, սատկեցնել դահիճները, խորտակել կախաղանը եւ տղաները ազատել։ Այդ ծրագիրը բոլորի տենչանքն էր, տեսնւում են համապատասխան պատրաստութիւններ, որոնք իրենց ժամանակին չկարողացան նպատակին հասնիլ։ Ահա եւ ցանկալի օրուայ՝ օգոստոս 14-ի նախօրեակն է։ Գնունին ոգեւորուած է եւ ինքնամոռացութեան մէջ է։ Ժպտում է բոլորին եւ վերջին մնաս բարին ասելով ընկերներին՝ ջերմապէս համբուրում է նրանց։ Նոյն օրը հետեւեալ երկտողն է գրում իր մի մտերիմին․

«Սիրելիդ իմ,

Վաղը հարսանիքիս օրն է․․․ Ազատութեան ոգին թեւերը բաց՝ անհամբեր ինձի կ՚սպասէ։ Ներէ՝ որ առանց քեզի կանխաւ լուր տալու, վերջնական որոշումս առի։ Հարսանիքիս շաքարը կ՚ընդունիս։

Կարօտագին համբոյրներով՝

ՇԱՀԷՆ»

13 օգոստոս 1896

Ի՞նչ է այս հակիրճ նամակը, որի մէջ մարդ գիտակցաբար դէպի մահն է գնում. այդ մի դարապլուխ է, հոգեկան աշխարհի անբացատրելի վոփոխութիւն, մարդկային զոհաբերութեան դերագոյն օրինակ: Զգալ, որ այսօր դու կաս, ապրում ես, որ այսօր կարող ես սիրել, խօսիլ ընկերներիդ հետ, ունենալ մաքուր ապրեցումներ, որ այսօր կարող ես քալել, ընչել, վիճել եւ ցանկանալ — իսկ վաղը՝ ան չունչ մի դիակ, անկենդան, առանց զգացումի, գիտակցութեան, որ արդէն անկարող ես սիրել և խօսիլ — և այդ հակադրութիւններն իմանալուց յետոյ գիտակցաբար ընտրել վերջինը, զոհել՝ միայն թէ հայրենիքն ազատի, չապրել՝ միայն թէ ազգը գոյութիւն ունենայ — այդ մահը հաւատար է անմահութեան:

Եւ օգոստոս 14-ին, երբ Պօլսի կենտրոնական թաղամասում իր սիրելի ընկերները Բանկ Օտտոմանը պիտի գրաւէին, երբ նրանք գոյց պիտի տային դիպլոմատիային եւ եւրոպական հասարակութեան, որ հայն էլ կուռել գիտէ եւ կուռով միայն կը ցանկանայ իր ազատութիւնը ձեռք բերել, ինքն էլ՝ գլուխ անցած մի խումբ կտրիճների, Սամաթիոյ զօրանոցին պիտի տիրանար, ահ ու սարսափ պիտի տարածէր իր պաշտելի ուժանակներով ու ռումբերով: Գնունին, Անդրէասեանը, Մխսաքեանը եւ Արապեանը, առաւօտեան ժամը եօթին կը պատրաստուէին իրենց դիրքերը գնալու, երբ յանկարծ կը շրջապատեն Մխսաքեանների տունն ու Գնունուն կը պահանջեն: Որպէսզի ընդհանուր ծրագիրը խանգարած չը

*լինին, նրանք վճռում են լինել սառնասիրտ, յայտնել Կ. Կոմիտէին, ապա զբաղեցնել իրենց ձերբակալելու եկած ոստիկաններին, յայտնելով որ անձնատուր կը լինեն «միայն կէսօրին»: Հինգ երկար ու ձիգ ժամեր ոստիկանները կը սպասեն դրան մօտ, որ ժամի 6-ին (ը. թ.) առանց կուէի ձերբակալեն յեղափոխականներին:*

*Ի՞նչ ժամեր էին դրանք, ի՞նչ տանջալից րոպէներ, որքա՞ն մեծ եւ տոգորուած պիտի լինի մարդ, որ իրեն շրջապատուած տեսնէ զինուած, կատաղի թըշնամիներով, որոնք եկել են ձերբակալելու, դատելու եւ ապա կախաղան բարձրացնելու — բայց հանգիստ և անխռով մնայ, սպասելով ժամը 6-ին:*

*—Կէս օրէն վերջ, Գնունին կը նետէ առաջին ռումբը եւ կ՚սկսւի կռիւը, ահաւոր ու անհաւասար կռի՛ւ...*

*Գնունին գլխաբաց՝ մէկ ձեռքը ռէվօլվէր, միւսին մէջ՝ ռումբ, վրէժխնդրութեան ոգին պէս երեւում է պատուհանի առաջ՝ սեւ մուխին եւ խլացնող որոտումների մէջ: Զօրքը ամուր շղթայել էր փողոցները, անց ու դարձը դադարել էր, մարդկային ստուերներ չէին երեւում, միայն ռումբերի եւ ուժանակների որոտն էր դղրդեցնում Սամաթիան: Կառավարութիւնը խելակորոյս, չգիտէր ի՞նչ անել: Ոստիկանապետ Հիւսնին, որ իր չքախմբով հասել էր ողջ ողջ բռնելու այդ հերոսներին, խոստանում էր որ սուլթանը կը ներէ նրանց, եթէ կամովին անձնատուր լինեն:*

*— Դուն չէի՞ր, գազան, որ վեց ամիս չարչրկեցիր ինձ բանտի մէջ, պատասխանում է Գնունին:*

Քեզ ալ կը ճանչնանք, խօսքերդ ալ կը հասկնանք: Գնա, պատմէ տեսածդ Եըլտըզի Դահիճին եւ ըսէ, որ այս նախերգանքն է ըլլալիքին: Անձնատուր ըլլալ... հա՛, հա՛, հա՛... մեր դիակները կ՚առնաք բայց մեր մահը ձեզի շատ սուղ պիտի նստի...

18 ժամ հերոսաբար կռուելուց յետոյ, երբ ոչ յոյս կը մնայ օգնութեան, ոչ ռազմամթերք, չորս քաջերը կ՚որոշեն ինքնասպան լինել: Գնունին սառնասրտութեամբ կը սպասէ իր հերթին եւ երբ կը տեսնէ իր շուրջը սիրելի Սուրէնի ջղաձգութիւնները՝ մօրֆինի ազդեցութեան տակ, ականատես կ՚ըլլայ Միսաքեանի եւ Արապեանի հոգեւարքին... մի վայրկեանից յետոյ իր վերջին ռումբը՝ կատաղի վրէժխնդրութեամբ լի, կը նետէ լիրբ զինուորներու մէջ եւ ապա ատրճանակի փողն էլ կ՚ուղղէ դէպի իր բերանը...

Գնունին կռուողներու առաջինն էր եւ մեռնողներու վերջինը եղաւ...

Եւ այսօր, Պալըքլըի Հանգստարանին մէջ, սառը հողն իր ներքեւ կը պահէ այդ պաշտելի դիցազներու ոսկորները, որոնք նախընտրելով մահը գերութիւնից, իրենց կեանքերը զոհ բերին ազգի եւ հայրենիքի համար:

Փա՛ռք նահատակ հերոսներին եւ յարգա՛նք յեղափոխական նոր սերնդին:



ՊԵՏՐՈՍ ՓԱՐԵԱՆ

## ԲԱԲԿԷՆ-ՍԻՒՆԻ ՊԵՏՐՈՍ ՓԱՐԵԱՆ

Բանկ Օտտոմանի դիւցազներգութեան հերոսնեւ ըից մէկն է ներկայանում մեր առաջ: Ահա նա, եւ րիտասարդ, վառվռուն, իր խոշոր եւ խելօք աչքերով, իր լայն եւ մտածկոտ ճակատով, իր յարատեւ քաղցր ժպիտով, որ երկու ոսմբ գրկած ներս է վազում դէպի Բանկայի դուռը՝ իր վրէժխնդրութիւնը թափելու սուլթանական կառավարութեան եւ նորան հպատակուող դիպլօմատիայի վրայ:

Այդ մի պաշտելի, սիրելի անուն է, որ իր մէջ մարմնացնում է Հայ Յեղափոխութիւնը՝ իր գաղափարականութեամբ, անձնւիրութեամբ, իր գործնա կանութեամբ եւ հոգու խորութեամբ:

Ո՞վ էր դա, որ հանդիսացաւ մաքուր յեղափոխականի տիպար, որ եղաւ Պօլսոյ Դաշնակցական մարմնի հոգին և Բանկ Օտտոմանի գրաւումի գաղափարի յղացողը, կազմակերպողն ու իրագործողը:

Դա Բարկէն Սիւնին է, Ռոսլովը:

Պետրոս Փարեան է իր իսկական անունը, ծրնւած Ակնի Բինկեան գիւղում, 1873 թուականին: Ազքատ ընտանիքի զաւակ էր, բայց հին ազնւական գերդաստանի մնացորդ: Մանուկ հասակում նա ձըդեց իր հայրենի տունը, մնաս բարեւ ասաց Եփրատի ալիքներին ու անցաւ Պօլիս՝ կրթութիւն ստանալու համար:

Գաղտնի վարժարաններից մէկում մի քանի տարի սովորելուց յետոյ, նա 1887 թ. մտաւ կենսաբոնական վարժարանը: Բնաւորութեամբ բաւական-

նին պարզասէր, առվոր ժուժկալութեան եւ չարքաշութեան՝ նա ամէն նեղութիւն ցանձն կ'առնէր, կ'արհամարհէր պերճանքը, ապառաժի կտորի վրայ կը քնէր՝ մխայն թէ աւելի մօտենար իր նպատակին: Այդ բոլորի հետ նա ունէր լայն եւ զգայուն սիրտ, ապրեցումներով լի հոգեկան աշխարհ, որոնք սկսան աւելի փթթիլ, աւելի զարգանալ:

Նա հետեւում էր չափական դիտութիւններին, որով նա իր զարգացումները ներթարկեց սառը եւ առողջ տրամաբանութեան օրէնքներին: Հետու էր մխատիկ, վերացական մտածողութիւններից, նա ապրում էր կեանքով. իրականութեան դաժան պայմաններն էին կաշկանդել նրան եւ նա վերլուծում էր հայ ժողովրդի տանջանքները, կառավարութեան անիրաւութիւնները ու կամաց-կամաց իր մէջ մշակում ապագայ բողոքող եւ յեղափոխական բարկէնի բաղկացուցիչ մասերը:

Կատաղի հակառակորդ էր բռնակալական կառավարութեան եւ չէր կարող երեւակայել որ մէկը կամ մի քանիսները իրաւունք ունին իրենց ձեռքում կենտրոնացնելու բազմամիլիոն ժողովրդների բաղդը: «Կառավարութիւն մը, ասում էր նա, հանրային բարի խղճերուն մարմնացումը եւ անոնց արդար գործադիրը պիտի ըլլայ. բայց այսպէս չեն ըլլար բռնաւորները. ուրեմն հարկ է, որ հասարակութիւնը իր բարի ցանկութիւնները չվստահի այդ տեսակ ապիկարներու, որոնց ձեռքին մէջ ամէն ազնիւ ներշնչում ուշ կամ կանուխ մարդախոշոշ դաշոյնի կը վերածուի եւ պատուհաս կը դառնայ խաղաղ ժողովուրդներուն»: Ինչ է այս. փիլիսոփայական

վերլուծում է տիրող ժամանակակից կարգերի, գիտակցական քննադատութիւն է բռնապետութեան եւ ապա յեղափոխական ճանապարհի անհրաժեշտութիւն՝ բարեփոխելու կամ աւելի շուտ յեղափոխելու անիրաւ պայմանները:

Դեռ ուսանող ժամանակ նա դէմ էր ազնուական եւ դրամատէր դասակարգերին, որոնք ծոյլ, պորտաբոյծ կեանք անց կացնելով՝ անօգտակար տարրեր են հանդիսանում մարդկային յառաջդիմութեան տեսակէտից:

Սիրում էր մարդկութիւնը, նորա էութիւնը եւ որովհետեւ իր ազգութիւնն էլ նոյն մարդկութեան մի անբաժան մասնիկն է, որ աւելի մօտ է իր սըրտին, իր հոգեկան խառնուածքին եւ բնաւորութեան, այն խոր գիտակցութիւնն ունէր, որ ծառայելով իր խեղճ, ճնշուած, բայց լայն հայեացքներով օժտուած ազգին՝ ծառայութիւն էր մատուցանում ընդհանուր մարդկութեան:

Ուսանողութեան նախավերջին տարին նա ձերբակալուեցաւ, բանտ նետուեցաւ վեց ամիս, որի պատճառով էլ հայրը, որ տաճիկների մօտ կը ծառայէր՝ զրկուեցաւ իր տեղից: Բանտից յետոյ նա լուռ ու մունջ իր ուսումը շարունակեց, աւարտեց եւ մտադըրուեցաւ նաւապետ ըլլալ: Իր ընտանիքը շատ խեղճ վիճակի մէջ էր, հայրը միայն սուրճ եւ ջուր կը ծախէր, որ հացի օրապահիկը կը լինէր եւ Բարկէնը այդ բոլոր տառապանքների հանդէպ ամուր մնալու կտրուկ եւ լուրջ սկզբունքն ունէր. «Ի՞նչ ընեմ, հայութիւնն իմ ծնողացս պէս շա՜տ դժբաղդներ ունի, անոնց ամենուն մէկէն դարման ընելու է»: Այս խօսքին մէջ է թաղնուած ինքը Բարգէնը, իր մտածողու-

թեամբ, չեղափոխական տեմպով եւ վճռականութեամբ. նա կողմնակից չէր զիջումների, պալիատիւ–մասնակի փոփոխութիւնների. նա նկատում էր որ իր ընտանիքի թշուառութիւնը օրգանապէս կապուած է ազգի ստրուկ դրութեան հետ, որ մի թշուառութիւն վերացնելը հեշտ է, բայց դորա կողքին հարիւրաւորներ, հազարաւորներ կան, որոնք միշտ ցաւի եւ վշտի մէջ կը մնան: Զարիքը հիմքից պիտի արմատախիլ անել եւ նա իր մտածումը կեանքի մէջ փառաւորապէս իրագործեց:

Նաւային վարժարանի մէջ (Ազապ–Գաբուխ) նա վճռեց չեղափոխական ասպարէզը նետուիլ եւ մի քանի ընկերներով կազմելով «Սիւնիք» խումբը, մտաւ «Դաշնակցութեան» դրօշակին ներքեւ: Շուտով վարժարանից վռնտուեցաւ հայ լինելուն պատճառով: Նորա ուրախութեանը չափ չկար եւ որպէսզի աւելի ազատ լինէր իր քայլերի գործողութիւնների մէջ, նա հօրն հայրենիք ուղարկեց, իսկ կրտսեր եղբօրն էլ մի տեղ սղմեց՝ հացի փարան հանելու համար:

Բարկէն Սիւնին իր սիրած ասպարէզումն էր. գիշեր–ցերեկ անդադար կ'աշխատէր, կուսակցական գործի ծանրութիւնը իր ուսերի վրայ էր ընկած եւ նա իր այդ աշխատանքը թեթեւացրեց երկաթէ կամքով եւ ինքնավստահութեամբ: Լաւ ծանօթ էր Պօլսոյ փողոցներին, ծակ ու ծուկերին. հրա շալի ուսումնասիրել էր տաճիկ ժողովրդի հոգեբանութիւնը, առանձնապէս ոստիկաններին: Օրը ցորեկով նա փոխադրութիւններ կ'անէր եւ այդ բոլորն այնպիսի պաղարիւնութեամբ, ճարպիկութեամբ, որ ոչ մի կասկած չէր հրաւիրի իր վրան:

Զափազանց գաղտնապահ էր և եթէ իմանար, Հռովմայեցի զինուորականի պէս, որ իր բաճկոնը գիտէ իր գաղտնիքը՝ այն կ'այրէր: Ահաբեկչական գործողութիւնները կը տանէր ամենայն յաջողութեամբ եւ իր ընկերական խոր սիրով կարողանում էր կապել գործին մասնակցող բոլոր ընկերներին: Բռնութեան դէմ պիտի ուժ գործ ածել եւ բռնի ուժով վերացնել, այլապէս նա երկար ժամանակ խաբազան կը դառնայ մարդկութեան գլխին: Սարսափելի ատում էր տաճիկ կառավարութեան եւ արհամարհանքով էր միշտ շեշտում, որ «բարութիւն չէ՞ միթէ, մարդկութեան միջից այդ հոտած լէշը վերցնել, թէեւ քիչ մը պիտի քրտնինք...»

Բարկէնն ամէն տեղ էր. ամենուն սրտի մէջ, նրանց զգացմունքների հետ: Նորա ծրագիրները, երեւակայութեամբ քաշում էին իր յետեւից գործողների ահագին բազմութիւն: Նա եղաւ որ մանրամասըն ուսումնասիրած ներկայացրեց Պոլսոյ Կենտրոնական Կոմիտէին Բանկ Օտտոմանի ծրագիրը. Նա էր որ առաջարկում էր միաժամանակ վառել ամբողջ Պոլիսը (մերժւեցաւ իբր անագորոյն գործողութիւն), նա էր որ գիշեր ցերեկ ուժանակներ կը տեղափոխէր եւ համապատասխան մասնակիցներ կը գտնէր, նա էր որ ոգեւորիչ խօսքերով բացատրում էր «դարուս մեծագոյն յղացման», Բանկ Օտտոմանի գրաւման, մանրամասնութիւնները. Նա էր որ զէնք, փամփուշտ, ռումբ էր բաժանում ընկերներին եւ նա էր որ իր վերջին մնաս-բարովի ժամանակ յիշեցընում էր «Հայկական Հարցը կը թաղուի, պէտք է կռուենք եւ յարութիւն տանք անոր. եթէ մեր նպա-

տակին մէջ յաջողինք, ի զուր չեն մեր թափած արիւնները: Հակառակ պարագային մեր եղբայրները պիտի չարունակեն մեր սրբազան գաղը ու աւելի կատաղօրէն եւ աւելի հաւատքով»:

Նա եղաւ էն խիղախներից, որ իր ատրճանակը ընկերներից մէկին նւիրելով ինքն իր սրած եւ պատրաստած ռումբերով գօտեպնդւեցաւ եւ անվեհերութեամբ ներս խուժեց Բանկ Օտտոմանը: Նա եղաւ առաջիններից, որին թշնամու գնդակը դիպաւ, որից ռումբերը պայթեցան եւ պաշտելի Բարկէնը իր ծրագրած եւ սրած գործի յաջող վախճանը չտեսնելով նահատակւեցաւ: Թշնամին ներս պիտի խուժէր, եթէ Բարկէնի ձեռքի ռումբերի ահեղ եւ սոսկումնալի պայթիւնը չլինէր եւ նա՝ իր մահով իսկ նպաստեց գործի յաջողութեան:

Որքան կարճ նորա կենսագրականը, որքան անբաւարար նորա հոգու նկարագրութիւնը, որքան քիչ դէպքերի մանրամասնութիւնները, բայց այդ բոլորն էլ բաւական են Բարկէն Սիւնիի պէս ազգասէրին ճանաչելու համար: Եւ երբ նորա ընկերները պանքային տէր դարձան, երբ ցոյց տւին ամբողջ աշխարհին, որ իրենք էլ, որպէս հայութեան ներկայացուցիչները կուռել ու մեռնել գիտեն, եւ երբ իրենց յաղթանակից յետոյ՝ եւրոպական դիպլօմատիայի պնդումների վրայ պիտի թողնէին պանքան, ողջ մնացած ընկերները դուրս գալնելու ժամանակ նրա մարմինը արեան հեղեղներու մէջ գտան, իսկոյն վոխադրեցին Պանքայի գաւիթը, լուսացին արիւնով մկրտւած դէմքը, արտասուալից եւ ջերմ համբոյրներ դրօշմեցին ճակատի վրայ ու երդւեցին հաւատարիմ մնալ իրենց սրբազան ուխտին՝ ծառայել հայ ժողովրդին եւ նոր ազատութեան:



ՕՐ· ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐԵԱՆ

## ՄԱՐՕ ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐԵԱՆ

Կանացի տիպեր ցեղափոխութիւնը շատ քիչ է տուել, եղածներն էլ հայ կնոջ համեստութիւնն ու-նենալով՝ իրենց արած գործերը ծածկել են, չեն ցուցադրել եւ շատ տիպերի գործունէութիւնն էլ չեն արձանագրուած: Ո՛վ գիտէ քանի-քանի անքուն գիշերներ, բարախող անհամբերութեամբ հայ աղջիկները նպաստել են յեղափոխականների փախուստին, նրանց թաղնուելուն, դէնք փոխադրելու մէջ ահագին օգնութիւններ են հասցրել, դրօշակներ են կարել ու արտասուել... Բայց այդ բոլորի անուններըն անյայտ են աւ այժմ յեղափոխական գրականութեան եւ մխայն շատ քչերն են արժանացել հասարակութեան լայն ուշադրութեան, որոնցից մէկը օր. Մարիամ Մակարեանն է. Մարօն:

Մարօն ծնուել է 1872 թ. Կովկասի Ծովեզրեայ քաղաքներից մէկում: Փոքր հասակից ծնողներից դուրկ էր եւ ինքն էլ յանձնուած նախապաշարուած բարեկամների խնամքին: Կեանքից հալածուած, մայրական փաղաքշանքից զրկուած, նա միայնակ էր, անտուն, տարաբաղդ եւ այդ պատճառով էլ իր հոգին ընթանում էր համընթաց տառապեալների ցաւերի հետ: Աշակերտական հասակում նա իր գլխին էր հաւաքում ընկերուհիներին, բացատրում էր աշխարհի անարդարութիւնները ու Բաֆֆու հայրենաշունչ վէպերով ազգասիրական զգացմունքն էր վառ պահում: Դպրոցն աւարտելուց յետոյ, նա չի մնում փափուկ և հանգիստ կենտրոններում, այլ անմիջապէս մտնում է գիւղացիների մէջ, թափա-

ռում է չարքաշ աշխատաւորների կենտրոններն ու իր ուսուցչուհու պաշտօնով մեծ ծառայութիւն է մատուցանում կրթական գործին:

Ցեղափոխական մտքերն աւելի են խմորւում, դաղտնարարական երիտասարդների մի հոսանք Արագն անցնում է եւ մտնում Երկիր, աւելի մօտ լինելու հայկական տանջանքներին եւ ցաւերին, եւ այդ հոսանքի մէջ էր եւ օր. Մարօն, որ 1894 թ. անցաւ Պարսկաստան: Ցեղափոխական համեստ մշակի պաշտօնով նա մտնում էր աշխատաւորների շարքերը, իր կրակոտ խօսքերով ներկայացնում էր հայրենիքի վիճակութեան ուղին, շատ շատերին էլ յոյս էր ներշնչում, ոգեւորում, բայց նա անկարող էր լինել աւելի խիզախներից, որովհետեւ Ֆիզիքական պակասութիւն ունէր եւ միաժամանակ ունէր մի նշանաբան՝ «աղջկայ կոչումն է համեստութիւն, խաղաղութիւն, քաղցրութիւն եւ պարզութիւն», որ դրւած էր նորա յուշատետրի առաջին երեսի վրայ:

1896 թ. դեկտեմբեր 28-ին, ընկերները նրան գտնում են անշնչացած, մահացու դնդակն անցել էր ուղիղ սրտից եւ վերջ տւել նորա կեանքին: Ի՞նչը ստիպեց նրան ինքնասպանութիւն գործել. իր Ֆիզիքական պակասութի՞ւնը, որ հնարաւորութիւն չէր տալիս նրան աւելի եռանդուն մասնակցութիւն ունենալ յեղափոխական գործունէութեան մէջ, թէ կարօտ (նահատակւած Յանասօրայ արշաւանքում) ձերժումը սիրոյ մէջ, որովհետեւ իրեն հայրենիքի եւ ազգի սէրն էր աւելի քաշում — չյայտնի չէ, միայն Մարօն մի նամակ էր թողել իր սիրած չեղափոխականին, որից քաղում ենք հետեւեալը.

«Անձդ զոհ դի՛ր հայրենեաց սուրբ սեղանի վրայ. Բաբկէն Սիւնիի պէս լեցուիր Թունալից վրէժխընդրութեամբ եւ... կատարիր վերջին կտակս. զորանով ծիայն կը հանգստանայ ոսկորներս գերեզմանի մէջ: Ես այնքան քաջութիւն ունեցայ, որ կարողացայ կրակ տալ քո ետեւից բոլոր նաւերը: Այսուհետեւ դու բոլորովին ազատ ես, գործի՛ր: Ների՛ր ինձ, բիւր համբոյրներ: Վերջին բարեւներս բոլոր ընկերներին: ՄԱՐՕ»

Նամակի մէջ թագնուած է հերոսուհուն յաւուրկ այն վճռականութիւնը, որ չխանգարելու համար սիրած չեզոքախոհականի գործունէութեան՝ նա վճռում է ինքնասպան լինել: Այդ էլ մի առանձին ճարպկական ուժ է եւ ասելի դերազոյն ժամի, որ արտայայտւում է հայ աղջկայ մօտ:

Պարզ օր էր, ձիւնի հաստ շերտերը պատել էին երկիրը: Գիւղի զանգակները տխուր հնչում էին եւ գիւղացիներն ու իրենց ընտանիքները յուղարկաւորում էին մի կարմիր դագաղ, որ իրենց ուսերի վրայ տանում էին հայ հայդուկները: Սիրելի «Դադօի» դիակը հողին յանձնելու համար ամէն կողմից ներկայացուցիչներ էին եկել՝ հսկայ Արտօսից սկսած մինչեւ Կովկաս: Ցիղայինները տխուր եւ մըռայլ էին. նրանք կորցնում էին իրենց սիրած քրոջ, որ այնքան խնամքով էր նայում իրենց վրայ, հոգ տանում, ջղերը մաշում, ոգեւորում, կարկամում,

վէրքեր կապում եւ արցունքներ սրբում: Այժմ նա չկայ եւ Պարսկաստանի սահմանագլխայինն գիւղերից մէկի մօտ գտնւած հայդուկների գերեզմանոց կազմող բլուրներից մէկի վրայ, սառը հողի տակ հանգչում է նորա սիրող սիրտը: Հանգիստ ոսկորներիդ, պաշտելի Մարօ:



ԱՐՏԱՇԷՍ Մ. ԴԵՒԵԱՆ

## ԵԳԻՊՏԱՑԻ
## ԱՐՏԱՇԷՍ Մ. ԴԻՒԱՆ
1868–1897

Ամէն մէ յեղափոխական գործիչ մի տիպ, իւրայատուկ խառնուածք է ներկայացնում, հայ ժողովրդի հոգեկան յատկութիւնների մի խտացած մասն է երեւան հանում, եւ Եգիպտացին դրանցից մէկն էր: Ծօթ տարեան յեղափոխական կեանք ունեցաւ, որի իւրաքանչիւր ժամը ահագին ուժ պահանջից այդ խոհուն եւ եռանդուն յեղափոխականից: Մէջին եւ կորովի հասակ ունէր, լայն ուսերի վրայ գեղեցիկ գլուխ՝ առատ մազերով զարդարուած, խրոխտ դէմք ունէր, որը ծխծաղելու ժամանակ այնքան հաճոյալից էր լինում, իսկ բարկութեան եւ զայրոյթի արտայայտութեան ատեն՝ խրոխտ եւ ահարկու. խոշոր եւ բոցավառ աչքեր ունէր, որոնք հայելիի պէս պատկերացընում էին նորա խմացականութիւնն ու ընկերական անկեղծութիւնը: Նա հրացանը ձեռքին չմեռաւ, բայց իր գործունէութիւնը հերոսութիւնների եւ տանջանքների այնպիսի մի շարան է, որ իրաւամբ կարելի կը լինի հերոսների դասը դասել:

Եգիպտացին սերտ կապուած էր Պօլսոյ Դաշնակցական մարմինների գործունէութեան հետ: Պօլիս եկաւ նա Եգիպտոսի յեղափոխական մթնոլորտում երկու տարի չարաչար աշխատելուց յետոյ: 92 թուին նա արդէն տաճկական բռնակալութեան կենտրոնավայրումն էր եւ քարոզչի, յեղափոխական գործչի պաշտօնով: Նա գիտէր իր չափը, ուր պիտի խօսէր, նա գործ չունէր ուսեալների հետ, որոնք իրեն չէին կարող հասկանալ, նա բուն ժողովրդի զաւակ-

ների մէջ էր, իր պէս մաքուր եւ հաւատացող: 92–97 թուականի զէնքերու մեծ մասը ինքը գնեց, փոխադրեց եւ ոչ ոք չէր կարող այնքան ճարպիկօրէն՝ լրտեսների եւ ոստիկանների քթի տակ այդ պաշտօնը այնքան յաջողութեամբ կատարել, որքան Դեւեանը:

Տերօրիստական գործողութիւններ կատարելու մէջ նա աննման էր: Ոչ միայն ինք ամենայն սառնասըրտութեամբ կը կատարէր ահաբեկումներ, այլ եւ նորեկներին, աշակերտներին փորձնական դասեր կը տար, ապա նրանց քննութիւնների կ՚ենթարկէր, մինչեւ ապահովւէր նրանց ընդունակութիւնների մէջ: Ահաբեկիչների գլուխ անցած նա աստիճանաբար կը լրտեսէր իր զոհը, մատնիչին կամ լրտեսին, կը սովրեցնէր «կարգը կատարելու» (խփելու) եղանակը, ցոյց կը տար փախուստի ճամբաները, թագըստոցները եւ երբ կը տեսնէր որ աշակերտները «աղէկ գիտեն դասերնին» ինքը նշանը կը տար: Եգիպտացին կը մնար մինչեւ խփւէր մատնիչը, մինչեւ նա ընկնէր, մինչեւ «աշակերտները» փախնէին, ապա ինքը կը հեռանար իբրեւ հետաքրքիր մի անցորդ, որ «իբրեւ» այդ դէպքէն չշմած տուն կ՚երթայ:

Եգիպտացին մէկն եղաւ այն խիզախներից, որ առաջարկեց ու գործադրութեան ծրագիր ներկայացըրեց Պոլսի Կենտրոնական Կոմիտէին, 96–ի ռամազանի 15–ին, սատկեցնելու սուլթանին:

Եգիպտացին Պոլսոյ փողոցները գիտէր իր հինգ մատի պէս, նրան էին պարտական իրենց գոյութեամբ «վտանգաւոր» յեղափոխականները, որոնք թագստի պէտք ունէին:

*Երեք անգամ ոստիկանութեան ճանկն ընկաւ, բայց միշտ էլ յաջողւեց ազատւել: Նրան միշտ փնտռում էին, բայց ոչ մի դէպքում չէին գտնում: Զինավաճառները նրան կը ճանաչէին որպէս անգօրացի Մուստաֆա, տանտիկնոջ համար գէւզէկ հայ կաթոլիկ էր, ուրիշների համար՝ ղարամանցի յոյն: Լրտեսներից, ոստիկաններից շատերը նրան իրենց վերհսկող բարձր պաշտօն ունեցող լրտես են նկատել նայելով նորա նայւածքին, ֆէսին եւ քայլւածքին, որի պատճառով էլ զգուշացել են:*

*Նա Պոլսոյ Դաշնակցական սերնդի ուսուցիչներից եղաւ եւ նորա ամենափայլուն աշակերտներից մէկը՝ Բարկէն Սիւնին եղաւ: Աշխատեցաւ նա անդադար, հիւանդոտ դրութեամբ, հազը միշտ բերնին, թոքախտը իր կուրծքը մաշող, միշտ արիւն թքնելով. բայց չնայած այդ բոլորին, նա իր պարտականութիւնների վրայ էր, մինչեւ 94-ի ձմեռը ընկերները նրան բանի Եգիպտոս ուղարկեցին՝ հանգըստանալու եւ առողջանալու համար: Մի քանի ամսից յետոյ անհամբեր Արտաշէսը կը վերադառնայ Պոլիս եւ գործ կը պահանջէ եւ ամէն անգամ, երբ ընկերները յորդորում էին հեռու մնալ աշխատանքից, նա ժպտալով պատասխանում էր. «Գերեզմանիս մէջ հանգստանալու շատ ժամանակ պիտի ունենամ»: 96-ի ամառը գործի պատրւակի տակ իր ծննդավայրն ուղարկեցին, բայց լսելով օգոստոս 14-ի պատրաստութիւնները, առանց անցագրի կը մտնէ Պոլիս, կը գտնէ ընկերներին, Բանկայի գրաւումից երկու ժամ առաջ, կը համբուրի ռումբերն ու ատրճանակները եւ անմիջապէս գործի կը սկսի՝ 20*

քիլօնոց ռումբեր տեղափոխելով, բայց Բանկան չը հասած, արդէն գնդակները կը վզզային, ռումբերը կը տեղային եւ նա ամբողջ օրը լաց եղաւ, որ չկարողացաւ մասնակից լինել այդ մեծ գործին:

Դէպքից յետոյ վեց ամիս մնաց Պօլսում, աննկարագրելի ծառայութիւններ մատուցեց ընկերներին եւ ոչ մի անգամ չդողդջեց, արձակուրդ չխնդրեց, չնայած ոտերը կքած էին, ինքը՝ հիւծած... Պարտքի դաշտի վրայ որոշել էր մնալ մինչև վերջին չունչը եւ միայն ընկերները վերջին անգամ նորան Եգիպտոս փոխադրեցին, ուր 97 թ. յունիսի մէկին մեռաւ իր ամենէն աւելի առած մահովը՝ հիւանդութեան անկողնու մէջ:



ՍԱՂԱԹԷԼ ԽԱՆ ՋՕՀՐԱՊԵԱՆ

## ՍԱՂԱԹԻԼ ԽԱՆ ՉՕՀՐԱԲԵԱՆ

Ծնած է 1877 թուին Համատանի մէջ։ Լինելով բարեկեցիկ ընտանիքի զաւակ, նա իր ուսումն առնում է հայրենի քաղաքի ամենալաւ դպրոցներից մէկում, ապա անցնում է Թէհրան՝ մտնելով բողոքական մխիթարեանների դպրոցը, որն եւ աւարտում է երեք տարուայ ընթացքում։

Սաղաթիլը դպրոցական կեանքում ցոյց էր տալիս բազմակողմանի ընդունակութիւն, որի համար էլ ուսուցիչները խնդրում են ծնողներից թոյլ տալ նրան ուղարկելու աւելի բարձրագոյն դպրոցներ, բայց մերժում են ստանում, որովհետեւ սիրող սիրտերը չեն կարողանում զրկուել իրենց սիրելի զաւակից։

Ծնողները նրան իսկոյն յետ են կանչում եւ Համատանի մէջ տեղաւորում են պարսից կայսերական բանկը։ Իր աշխատանքի չնորհիւ նա շուտով տեղափոխուում է Թէհրան՝ նոյն հիմնարկութեան պաշտօնով։ Նման ապահովութիւններով եւ պաշտօններով նա քիչ էր հետաքրքրուում, նրան տանջում էր հեռաւոր արիւնակիցների վիճակը, տառապահայ եղբայրների սոսկական դրութիւնը եւ իր այդ հոգեկան պահանջներին դոհացում տալու համար ծանօթացաւ Դաշնակցութեան տեղական նորակազմ կոմիտէի հետ, ուսումնասիրեց մօտաւոր անցեալի գործունէութիւնն ու վարից այդ դրօշին՝ հանդիսանալով ամենաեռանդուն անդամներից մէկը։ Այդ խաղաղ կեանքն էլ նորան չի բաւականացնում, նա աւելի իրական քայլեր էր պահանջում, նա ցանկա-

նում էր աւելի մօտ զգալ տառապանքի երկրին, նա կամենում էր անմիջական օգնութեան հասնել եւ իր արիւնով ողողէր այն ճանապարհը, որով ազատ հայ ժողովուրդը պիտի քալէր: Այդ դիտաւորութեամբ նա դիմում է տեղական կոմիտէին եւ կամաւոր գրըւում:

Նրան բացատրում են ֆիդայական կեանքի դժւարութիւնները, յիշեցնում են որ ինքն անվարժ է այդ բոլորին, որ շատ անգամ անօթի, ծարաւ պիտի մնայ, մի այլ անգամ մերկ եւ ցրտահար, բայց ազնիւ երիտասարդը մնում է անդրդւելի: Ամբողջ մի ամիս նա հոգեկան տանջանքների է ենթարկւում. ծը նողների լացը, կսկիծը, ազգականների աղերսը, ընկերների խրատները, սիրած օրիորդի արտասուքները դադար չեն տալիս նրան: Նա հոգեկան այդ ալեկոծութեանը վերջ է տալիս շատ դիւրին կերպով. հազար վերստ ճանապարհ կտրելով նա անձամբ ներկայանում է Յանասօրայ արշաւանքը կազմակերպողներին, խնդրում, աղաչում է իրեն էլ վերցնել եւ մասնակից անել մեծ գործին, բայց մերժում է ստանում, որովհետեւ շատ երիտասարդ էր եւ չարքաշ կեանքին անծանօթ: Տեսնելով այդ անյաջողութիւնները, նա վերջին փորձն է անում՝ ապատնալով որ ինքնասպանութիւն կը գործէ, եթէ իրեն չտանեն:

Զիջանում են: Քսանամեայ երիտասարդ Սաղաթէլը, դինւորի ահագին բեռը շալակած, ընկերների հետ ուրախ-զւարթ խօսակցելով դէպի իր կէտ նպատակն է դիմում: Եւ Արաւլի բարձր փէչերի վրայ, երբ հայդուկները կատաղօրէն կռիւ էին մը-

ղում, երբ գնդակներն աջ ու ձախ մահ էին սփռում, Սաղաթէլը իր մի ընկերոջ օգնութեան է հասնում: Դիրքը վտանգի է ենթարկւում, կռիւը օրհասական բնոյթ է ստանում, երիտասարդ հերոսը՝ չնայած ոտքից եւ կողքից վիրաւորուած էր, շարունակում է կռուել, մինչեւ ընկերները օգնութեան են հասնում: Վիրաւոր Սաղաթէլին տեղափոխում են լեռան գագաթը, շատ են աշխատում նրան առողջացնել, բայց երկու ժամից յետոյ նա իր մաքուր հոգին աւանդում է՝ ընկերների տաք համբոյրների ներքոյ:

Սաղաթէլը պարսկահայ առաջին ինտելիգենտ նահատակն է, որով իր հայրենակիցները կարող են պարծենալ, որովհետեւ այդ անբիծ հոգին իր յետեւից քարշ տուեց բազմաթիւ յեղափոխական դէմքեր՝ յանուն Տաճկահայ պաշտելի Ազատագրութեան:



ԿԱՐԱՊԵՏ ԴԱԻԹԵԱՆ

## Խ Ա Ն
## ԿԱՐԱՊԵՏ ԴԱՒԹԵԱՆ

Ծնուել է 1870 թ. Ղազախի Թաւուզ գիւղում: Կեանքի դպրոցում նա զիջող էր իր ընկերների վերաբերմամբ, իսկ թշնամու վերաբերմամբ՝ վրէժխնդիր: Շատ մեծ կրթութիւն չստացաւ իր ծնողների աղքատութեան պատճառով. Նա իր ժամանակը գլխաւորապէս անց էր կացնում Հայրենի լեռներում եւ անտառներում: Ինչ որ խորհրդաւոր շշուկներ էին պտտում այդ ժամանակ, որ հեռու Հայրենիքում Հայ եղբայրներն են կոտորւում, մայրերն ու քոյրերը լլկւում եւ այդ պատմութիւնները նրա հոգին տակն ու վրայ էին անում: 96 թ. գարնան Ղազախում յայտնւեցաւ Դաշնակցութեան աւետիսներից մէկը՝ Լուսեցի Սաքօն, որ մարտիկ էր պատրաստում կռուի դաշտն ուղարկելու: Խանն առաջիններից եղաւ, որ իր համաձայնութիւնը տուեց, եւ չնայած իր ծերունի հօր աղաչանքներին՝ նա մնաց անսասան:

Մինչեւ յեղափոխական կռիւներին մասնակցելը, Խանը նուիրւեց փամփուշտ պատրաստելու, ապա մեծապէս նպաստեց զէնքեր փոխադրելու: Վանի կոտորածից յետոյ, Դաշնակցական ազատարար խումբը մտել էր Վան, կառավարութեան ցոյց տալու, որ յեղափոխութիւնը դեռ մեռած չէր: Առաջինին յաջորդեց երկրորդը, որին մասնակցում էր եւ Խանը: Շնորհիւ իր քաջութեան, համարձակութեան եւ ճանապարհներ լաւ ճանաչելու ընդունակութեան, անգին ծառայութիւններ մատոյց խմբին եւ շատ շուտով ընդհանուրի սէրը վայելեց:

Երբ յեղափոխական որոշ գործունէութիւնը դադրում էր, Յանը՝ կազմակերպութեան վրայ չըծանրանալով, արհեստով էր զբաղւում, կերակրելով շատ անգամ իր մօտիկ գաղափարակից ընկերներին:

97 թուականն էր, Յանասօրայ արշաւանքն էր պատրաստւում: Յանն անդադար վարժութիւններ էր անում հայդուկների հետ, վամփուշտներ էր բաժանում, աշխատում էր մեղւի նման եւ մի չտ կըրկնում. «Իմ զարդն էնա՝ ըստեղից մի էն սարն հասնենք, փթեցինք», ցոյց տալով Արաուլը:

Այդ օրն էլ հասաւ եւ նա առաջին շարքերում էր, որոնք յարձակւեցան վրանների վրայ եւ առաջին զոհերից էր, որոնք վրէժխնդրութեան կանչեցին մխւանների:

Յանը ժողովրդի զաւակ էր եւ նորա ցաւերն ապրում էր խորապէս: Նորա հոգին մաքուր էր, խօսքերն՝ անպաճոյճ, զգացմունքները՝ վեհ եւ հայրենիքի սէրը՝ պերապոյն:



ԱՐԻՍՏԱԿԷՍ ՋՕՐԵԱՆ

ԿԱՐՕ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՋՕՐԵԱՆ

Ծնուել է 1871 թ. Գողթնի Ցղնայ գիւղում: Դեռ մանուկ հասակում նրա մէջ նկատւում էր յանդգնութիւն, անկախութեան ոգի եւ միշտ հակառակ էր վախկոտներին եւ վհատողներին: Դպրոցական թէ դրսի կեանքում, նա միշտ պաշտպան էր հանդիսանում թոյլերին, որոնք առանձնապէս սիրում էին նրան այդ յատկութեան համար. իսկ զօրաւորները պատկառում էին նորա ուժի առաջ եւ չէին համարձակւում նորա կամքին հակառակ գնալ:

Դեռ մանկութիւնից նա սեփականութիւն չէր ճանաչում և իր ունեցած-չունեցածը տրամադրելի էր անում բոլոր ընկերներին:

Գիւղական ուսումնարանն աւարտելուց յետոյ, նա անցաւ Ջաքաթալայի ծխական դպրոցը, այդտեղից էլ փոխադրուեց Թիֆլիսի Նիկօլաեւսկիյ դպրոցը, յետոյ նոյն քաղաքի իգական միջնակարգ դպրոցը:

90-ական թուականների հայրենասիրական-յեղափոխական շարժումները, արշաւախմբերի գործունէութիւնն ու երիտասարդութեան մէջ տեղի ունեցող խմորումները ստիպեցին Կարօին, այդ գործի եւ իրական աշխատանքի մարդուն, նետուել փոթորկալից կեանքի մէջ եւ աւելի մօտիկից օգնութեան հասնել Թշւառ հայրենիքին՝ նրան մարդկային ամենատարրական իրաւունքները վերականգնելու:

Թողնելով իր ուսումը նա մտաւ նոր հիմնած

«Կովկաս» գինագործական արհեստանոցը, մէկուկէս տարուայ ընթացքում կատարելագործեց, ապա անցաւ *** քաղաքը եւ մտաւ Դաշնակցութեան նոր հաստատուած գինագործարանը:

1892 թ. խոլերայի պատճառով բոլոր ընկերները էլ հեռացան արհեստանոցից, բայց միայն Կարօն մնաց եւ անվեհերութեամբ իր գործը շարունակեց, չնայած ինքն էլ հիւանդացաւ:

Մանուկ տեղափոխութիւնն այնքան հիմնական փոփոխութիւն չէր առաջացրել հասարակական մըտածողութեան մէջ, արհեստանոցը նիւթական անձկալի վիճակի մէջ էր, միայն մի քանի «տաք» գլուխ ներ էին կպել եւ աշխատում էին ապագային համար:

93 թ. Կարօն մի քանի ընկերներով ստիպւած եղաւ պատել կովկասեան քաղաքները, արհեստանոցի համար նիւթեր եւ նպաստ հաւաքելու համար, բայց որովհետեւ անշարժութեան տարի էր, սառն ընդունելութիւն գտաւ ամէն տեղ: Կարօն միայնակ մնաց իր սիրած աստպարիզում, նրան ոչ ոք չէր յուսադրում: Նիւթապէս ընկճւած, հասարակութեան կողմից համակրութիւն չկար, բայց եւ այնպէս տոկուն Սրիսը որոշեց իր գործը շարունակել, որովհետեւ իրեն սկզբունք էր դրել «սկսել ենք մի անգամ, մինչեւ վերջը պիտի տանենք»:

1894 թւին Կարօն դրկւում է օրինական կեանքից, հետապնդւում է ոստիկանութեան կողմից եւ այնուհետեւ թափառական կեանք վարում: 95 թ. օտարի անցագրով քիչ էր մնում ձերբակալւէր, բայց շնորհիւ իր ճարպիկութեան ազատւում է եւ խուսա-

վում:

96 թուին նա արդէն գէնքերի փոխադրութեամբ էր զբաղւում եւ արդէն աշխատանքի ամենաեռուն ջրջանն էր անցկացնում, երբ նա ձերբակալւում է պարսիկ կառավարութիւնից, որը մտադրած էր յանձնել այդ «վտանգաւոր» յեղափոխականին ռուս կառավարութեան: Կէս գիշերին, երբ պահակները քնած են լինում իր բանտի դռան մօտ, Կարօն խոր-տակում է պատուհանը, դուրս է թռչում՝ իր հետ առնելով հրացանն ու կապոցը եւ անհետանում:

Կարօն նշանաւոր գինագործ էր. բոլոր յեղափոխականները, որոնք պարսկական սահմանն են անցել, գիտեն այդ տեղատու աշխատաւորին, որ բացի մուրճից եւ գէնքերից, ուրիշ ոչ մի սեփականութիւն չունէր:

— Գիշատակ ես ուզում, գրում է ընկերներից մէկը Կարօի եղբօրը, չգիտե՞ս մի թէ նա սեփականութիւն ունեցող չէր: Իր չինած մօսինները — ահա քեզ նրանից գիշատակ:

Ամէն անգամ, երբ հայդուկային խմբեր էին անցնում Հայաստան, Կարօն ապաչում էր իրեն էլ ուղարկել՝ գործի չահերի տեսակէտից:

Ղանասօրայ արշաւանքի պատրաստութիւնների ժամանակ նա որոշեց մասնակից լինել եւ ոչ մի խօսակցութիւն, պատճառաբանութիւն նորան չհամոզեց յետ մնալու, որովհետեւ ասում էր նա «մինչեւ օրս ես ուրիշների համար հրացան էի պատրաստում, այժմ ես ինքս պիտի գործ ածեմ»:

Եւ նա մասնակցեցաւ առաջին անգամ, կուեցաւ մոլեգնութեամբ եւ նահատակուեցաւ կուի դաշտում:

Նա ամէն տեղ էր, ուր կատաղի էր կռիւը, եւ աւելի շուտ՝ ուր գնում էր, մոլեգնոտ կռիւ էր առաջ բերում: Նա անդադար կռւում էր եւ ոչ մի դէպքում իր թիկունքը թշնամուն չէր ցոյց տալիս: Նա Հարիւրապետի օգնական էր եւ չնայած դրան նա միշտ իր զինուորների հետ էր, ոտով քայլելիս: Ամենայն սիրով կռիւների դադարից յետոյ, նա նստում էր մի քարի վրայ ու զինուորների հրացաններն էր շտկում: Նա զգում էր կատարելիք գործի մեծութիւնը եւ միշտ կրկնում էր ընկերներին «մենք ձեռնարկում ենք մի շատ վտանգաւոր քայլի, բայց ինչ որ լինի, թէպէտ զոհելու իսկ լինենք մեր ամբողջ ուժը, պէտք է դիմանանք եւ դիմադրենք մինչեւ վերջին րոպէն՝ կատարելով մի մեծ գործ»:

Առաջինն էր Կարօն վրանների վրայ գրոհ տը–ւողներից, որոնք Արտաւլի սարորտներում ուշանում էին: Կատաղի էր նա դէպի տիրապետողներն ու բռնակալները, վրէժխնդիր զօրաւորներից եւ ճընշողներից, բայց իր կրծքի տակ ունէր նա մի քընքոյշ, սիրող սիրտ, որ խնայում էր եւ իր պաշտպանութեան տակ էր առնում կենդանիներին եւ հորթերին:

Կարօն էր, որ նկատելով Փար–Հատի, Սաղաթէլի եւ ուրիշների վտանգաւոր կացութիւնը, անմիջապէս օգնութեան է հասնում եւ ազատում նրանց: Նա օրինակ էր անձնուիրութեան եւ քաջութեան, նա տիպար էր անվախ եւ երդուած հայդուկի, որ երդուել էր մինչեւ վերջին շունչը կռուել եւ ո՛չ մի դէպքում չհեռանալ դիրքերից, մինչեւ թշնամուն չհալածէ. եւ նա զոհ գնաց իր այդ պաշտելի եւ ան–

նըման յամառութեան: Նորա համար հանգիստ չը կար եւ նա ամէն տեղ էր: «Թշնամու եւ իր արիւնը կարմրացրել էին իր մոխրագոյն չէրքէզքին եւ քըրտինքն ու վաւօղի ծուխը սեւացրել էին նորա երեսն ու ձեռքերը: Զափազանց յոգնած էր, որովհետեւ նա թէ հրամայում էր, թէ կռւում եւ թէ իրեւ պինադործ սարքի էր բերում կռւի մէջ փչացած հրացանները»:

Մեռա՛ւ նա իր սիրած մահով եւ հայ ջեղափոխութեան պատմութեան ամենաարդիւնաւէտ հեւքերից մէկը եղաւ կարօն:



ԱՍՏՒԱԾԱՏՈՒՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ

### ԿՐԷՏԱՑԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՄԻՐԶԱՅԵԱՆ

*Ծնուել էր 1871 թուին Ղզլար քաղաքում: Իր ծնողները այգեգործութեամբ կ'զբաղէին, իրենց գոյութիւնը մի կերպ քարշ կը տային, բայց եւ այնպէս իրենց որդուն ուղարկեցին իրենց քաղաքի Երկդասեան դպրոցը: 1885 թուի մարտ ամսին, ռուսական հայակեր քաղաքականութեան որպէս անմիջական հետեւանք, փակեցան հայկական դպրոցները եւ դասի ժամանակ ոստիկանները ներս խուժելով բռնի հեռացրին աշակերտներին... Այդ օրն անջնջելի մնաց այն ժամանակուայ երեխաների յիշողութեան մէջ, որոնք արցունքն աչքերին իրենց տներն վերադարձան: Անէծքի եւ վրէժի այդ օրը չը մոռացաւ եւ Կրէտացին, որին ուսումից զրկելուց յետոյ, առանց բռպէ կորցնելու խանութպանի աշակերտ կարգեցին: Գրքից՝ գործիքներ, դպրոցից՝ խանութ, ընկերների խրախճալից կեանքից՝ մռայլ վարպետի հարուածներ...*

*1892 թուին նա զինւոր կ'երթայ: Կեանքի յանկարծակի այդ թռիչքն ու փոփոխութիւնը նրան աւելի վճռական եւ խրոխտ կը դարձնեն: Իր ընդունակութիւնների շնորհիւ եւ մանաւանդ իր ճշդապահութեամբ նա իր մեծաւորների ուշադրութիւնը կը գրաւէ և մի քանի ուրիշների հետ զինւորական կրթարան կ'ուղարկւի: Ինն ամսից յետոյ նա կ'աւարտէ դասընթացքն ու ենթասպայի աստիճան ստանալով կը վերադառնայ հայրենիք: Բոլոր նորա մեծաւորները մի կարծիք ունէին. «Ինչ գործ ալ որ յանձնենք անոր, վստահ ենք որ օրինակելի կերպով պի–*

*տէր կատարէ»: 96-ի դեկտեմբերին նա հրաժեշտ կը տայ ծնողներին եւ կ'ուղեւորուի Բագու քաղաքը՝ գործ փնտռելու պատրւակով:*

*Այժմ ազատ էր նա խանութից, զինւորական ծառայութիւնից: Նա իր խոհերի եւ յոյզերի հետ է, նա կուռել եւ մարտնչել կ'ուզէ: 96-ի վանի եւ Պօլսոյ դէպքերը ցնցել էին անկեղծ երիտասարդութեան, կրէտէի ապստամբութիւնը լայն համակրութիւն էր կրել բոլոր յեղափոխական տարրերի եւ ճնշւած ազգութիւնների կողմից: Բագուն, բանւորական այդ եռուն կենտրոնը, յեղափոխական խմբորումների վայրը, Դաշնակցական պրօպագանդայի լայն ասպարէզը, տանջւածների, զրկւածների եւ վրիժառուների այդ հնոցը, կերտում էր հերոսներ և առեղծում տիպեր:*

*Ընդհանուր խանդավառութեան մէջոցին այդ վաւրուն երիտասարդը դիմում է Դաշնակցականներին, մտնում է նրանց շարքերն ու փարում յեղափոխական դրօշին: Քիչ ժամանակից յետոյ նա գործ նական քայլն է դիմում և առաջարկում է. «Կուիւ եմ ուզում, կուիւ. եթէ Հայաստանում գործ չկայ ինձ համար, կ'երթամ Կրէտէ, այնտեղ էլ նոյն բանակալն է»: Այդ օրւանից նորա անունը մնում է Կրէտացի: Շուտով երեւան եկաւ Խանասօրայ արշաւանքի ծրագիրը, զանազան կողմից յեղափոխական տեմպերն իրենց երկրային հաշիւներն են մաքրում եւ Կրէտացին ամենաառաջին շարքումն է լինում, նա սիրով ընդունւում է եւ անմիջապէս ճանապարհւելով սահմանապլուխ, հաւաքման վայրը, ձեռնարկում է աշխատանքի: Ցերեկներն զբաղւում է ան-*

վարժ զինուորներին դասեր տալով, իսկ գիշերները՝ կուռի պատրաստութիւններով, փամփուշտներ լեցնելով:

Շուտով վրայ է հասնում եւ ցանկալի օրը: Բոլորն էլ տենդոտ անհամբերութեամբ սպասում էին յառաջխաղացման: Զինուորական պետերու ընտրութիւնները կը սկսուին եւ Կրէտացին տասնապետ կ'ընտրուի, որից յետոյ կ'առաջարկւի հարիւրապետի պաշտօն. «Ինչ անենք որ ենթասպայ եմ. հարիւր ոչխար արածացնելու շնորհքս գիտէ՞ք, որ հարիւր զինուորի պատասխանատուութիւնն ինձ էք յանձնում»: Ահագին դժուարութեամբ նա ընդունում է առաջին յիսնապետի օգնականի պաշտօնը:

Արշաւանքն սկսւում է: Մաղրիկցիների վրանները այրւում են, քրդերը սարսափահար փախչում են եւ յեղափոխականներն յաղթական՝ վճռում են Արտուլի բարձունքները գրաւել և Կրէտացին վերջին ընկերներից էր, որ բանակի թիկունքը պիտի պաշտպանէր՝ անմոռաց Կարօի հետ: Կռուեցին նրանք միասին, հալածեցին թշնամուն, վրէժը լուծեցին, իրենց պարտքը կատարեցին եւ երկուսով միասին՝ Կրէտացին ու Կարօն ընկան հերոսի մահով...

Նայեցէք մի րոպէ նրա պատկերին, այդ միջահասակ, սև չէրքէզգի հագած կրակոտ երիտասարդին: Նրա հեզ եւ կլորիկ դէմքը, որ իր վրայ ունի հաւասար շրջագծով միրուք և վերջինի միացած բեխեր. իրեն է գրաւում իւրաքանչիւր դիտողի, մանաւանդ նորա երկու լուսատու աստղերը՝ աչքերը, որոնցից, կարծէք, կրակ է թափւում եւ խոցում է՝

այնքան սուր: Ո՞վ չի յիշում որ նա աջ ձեռքի վրայ կռացած՝ հրացանն է բռնել եւ «ամէն րոպէ պատրաստ» պօզայի մէջ է գանուում: Ատրճանակը, խէնչարը եւ երեք փամփուշտակալները նորա արտայայտութեան աւելի զրաւչութիւն են տալիս, մանաւանդ երբ գիտես որ այդ բոլորը ո՛չ թէ արիւն թափելու համար է, այլ տանջուած ազգի իրաւունքները պաշտպանելու: Սիրելի Կրէտացին մի պարզ կտակ էր թողել ընկերներին, որ կտակը պիտի լինէր յեղափոխական բոլոր անձնուէր երիտասարդների համար: «Եթէ մեռնիմ, ասել էր ընկերներին, կուլից մի քանի օր առաջ, ասացէք այս մատանու տիրոջ (նշանուած էր) որ ես այն ճանապարհով եմ գնացել, որով պարտաւոր են գնալ մեր բոլոր հայ երիտասարդները»:



ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

## ՋԱՒԷՆ
## ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
(1873–1897)

Երիտասարդ եւ վառվռուն Յակոբն հանդիսանում է տիպար այն յեղափոխականների, որոնք խորապէս զգում են հայրենիքի տանջալից վիճակը, հոգիները տակն ու վրայ են լինում և խանդավառութեան սրբազան բոցերին՝ նետում են ամէն ինչ ու յեղափոխութեան նւիրում: 1899 Թ. Տրապիզոնի դպրոցական աշակերտների մէջ կազմւում է «Հայաստանի Ազատութեան» օգնելու նպատակով պատանիների մի խումբ: Նրանցից ուրաքանչիւրը գաղտագողի եւ բաւականին դժւարութեամբ շաբաթական տասըքան փարա է նետում գանձանակը, ուր հաւաքւում է վաթսուն դահեկանի չափ գումար: Շուտով ոգեւորւած պատանիների այդ շրջանը լուր է առնում, որ Սասունի մէջ ինչ որ պատրաստութիւններ են տեսնւում, ամէն կողմից Ֆիդայիներ են հաւաքւում, կատաղի, օրհասական կռիւ տեղի պիտի ունենայ եւ ահա դրանք, գաղափարական այդ մաքուր հոգիները վճռում են որ առաջ հասնիլ կռւի վայրը, մասնակցիլ այդ շարժման: Դրանք երեք հոգի են լինում, որոնց մէջ և Ջաւէնը: Փոքրիկ յեղափոխականները պայմանաւորւում են մի սայլապանի հետ, որ իրենց տեղափոխէ Էրզրում: Հասնում է դէպի Հայաստան ուղեւորւելու օրը: Բոլորն էլ անհամբեր սպասում են այդ ժամին. Մնացող ընկերներն արտասւում են եւ նախանձում, որ իրենք էլ չեն կարող մասնակցել այդ արշաւանքին. իսկ գնացող հերոսներն ուրախ են, որ վերջապէս պիտի տեսնեն

Հայաստանը, ծծեն նորա օդը, կուեն նորա ազատութեան համար. նրանք չէին մոռացել սպառազինուել... Ունէին ընդամէնը մի հին ռէվոլվէր եւ մի ժանգոտած դանակ:

Ծիծաղելի է այդ բոլորը, բայց ո՞վ մեզանից նման երազների մէջ չէ եղել, ո՞վ չի ցանկացել նոյն իսկ առանց զէնքի թռնել Հայաստան, ջարդել, փըշրել թշնամիներին, ազատել խեղճ հայերին եւ ապա վերադառնալ դպրոց ու... աշխարհագրութիւնից քննութիւն տալ: Այդ քայլերի մէջ էականը նոր սերունդի յեղափոխական դաստիարակութիւնն է ու նորա անձնազոհութեան պատրաստակամութիւնը:

Փոքրիկ հերոսները ճանապարհին մեծ դժուարութիւններ կրելով, շատ անգամ ոտով քալելով, մի կերպ կը հասնին «Ենիր-օղլու» կայարանը: Տրապիզոնում Զաւէնի ծնողները կը դիմեն կառավարութեան, կը պատմեն եղելութիւնն ու կը խնդրեն իրենց որդուն չետ գարձնել: Կառավարութիւնն անմիջապէս յետ կը դարձնի նրանց, հարցաքննութեան կ'ենթարկի եւ իմանալով որ իբր Սանասարեան դըպրոց պիտի գնան՝ ազատ կ'արձակէ:

Այդ դէպքերից յետոյ, Զաւէնն արդէն յեղափոխականացած էր, նա եռանդուն մասնակցութիւն ունեցաւ տեղական Դաշնակցական խմբերի մէջ: 94 թուին նա կ'ընտրուի կոմիտէի անդամ եւ կը վարէ քարտուղարութեան պաշտօնը:

95 թուին նա կը մասնակցի Բահրի փաշայի, Տրապիզոնի կուսակալի մահափորձին մէջ, ապա քանի օր այդ առթիւ կը բանտարկուի եւ որովհետեւ ինքը դեռ շատ երիտասարդ էր, ազատ կ'արձակուի:

Այդ դէպքից յետոյ նա կ'անցնի արտաքսահման եւ մի տարի վերջը նորից կը վերադառնայ հայրենիք՝ օգնելու Եգիպտացիին: Այնուհետեւ նա Պօլիս է եւ ռանդուն մասնակցութիւն ունի յեղափոխական գործերի մէջ:

97 թուականն է: Յանասօրեայ արշաւանքի հետ միասին Պօլսոյ փողոցներում՝ զանազան հիմնարկութիւնների մէջ միաժամանակ ռումբեր պիտի պայթեցնէին: Յեղափոխական շարքերը տենդոտ գործունէութեան մէջ են: Պէտք էր պատմական ցոյցը կազմակերպել, միշտ ահ ու դող մտցրել պալատականների եւ սուլթանի մէջ, պէտք էր Հայկական Հարցը վառ պահել եւ միաժամանակ կրթել ապագայ երիտասարդութիւնը: Այդ նպատակով արդէն որոշ պատրաստութիւններ տեսնուում են և Զաւէնը Պօլիս է մնում՝ ահաբեկչական գործողութիւններին մասնակցելու: Բազդը չի ժպտում այդ թարմ եւ վառվռուն երիտասարդին, որովհետեւ օգոստոս 13-ի առաւօտեան, նա չրջապատուում է զինուորներով եւ լրտեսներով, որոնք պահանջում են անձնուրաց յեղափոխականից՝ անձնատուր լինել: Զաւէնը կուռում է մինչեւ վերջին շունչ. եւ երբ արդէն փամփուշտն հատցնելու վրայ է լինում, վերջին գրնդակն էլ ուղղում է իր ճակատին՝ հերոսաբար ընկնելով իր սիրած Հանապարհի վրայ:

Զաւէնը ինտելիգենտ էր եւ յեղափոխական, նա իր իրաքանչիւր քայլը կշռադատած էր անում և իրեն որպէս սկզբունք ընդունել էր իր խակ խօսքերը.

«Թող իւրաքանչիւր հայ իր օգնութեան բաժինը հատուցանէ իր ազգին՝ կամ կեանքով, կամ խօսքով եւ կամ դրամով»:

Նա ընտրեց գիտակցաբար ամենադժուարինը եւ այդ պատճառով 24 տարեկան այդ երիտասարդը արժանի է խորը յարգանքի եւ անհուն սիրոյ:



ՏԻԳՐԱՆ ՏԷՐՕԵԱՆ

## ՎԱԶԳԷՆ, ՏԻԳՐԱՆ ՏԷՐՕԵԱՆ

98 թուականի անզուգական գոհերից է եւ Վանայ ինքնապաշտպանութեան սիւներից մէկը: Ցաւով ենք արձանագրում նորա մահը, բայց միշտ հպարտութեամբ պիտի յիշենք այդ անունը, որ իր ծննդեամբ կապւած է բուն աշխատաւոր ժողովրդի հետ, իսկ իր գործունէութեամբ՝ յեղափոխութեան: Ծնւել է 1873 թւին Վանի մէջ: Լինելով աղքատ ընտանիքի զաւակ, նա անկարող է լինում իր ուսումը շարունակել եւ ընկնում է աշխատանքի յետեւից: Դպրոցի մէջ նա աշակերտում է յայտնի յեղափոխական եւ առաջին նշանաւոր գործիչ Ազրիպասեանի: Նոր եւ թարմ հոսանքն էր մտել Վան եւ գրաւել էր երիտասարդների սիրտն ու ոգեւորութիւնը: Յեղափոխական սերմերն էին որ ցանւեցին եւ Վազգէնն եղաւ ամենաբերրի դաշտերից մէկը, որ ընդունեց այն եւ հաւատարմապէս մեծացրեց իր մէջ: Նորա հոգին կապւած էր հայրենիքի հետ, իսկ գործը՝ աւետի, եւ ղերձակի խանութի: Հօր ստիպմամբ նա պէտք է որոշ արհեստ սովորէր, որպէսզի կարողանար մի կտոր հացի տէր դառնալ ապագայում: Տիգրանը զժկամակում էր եւ բողոքում, բայց եւ այնպէս ստիպւած էր աշակերտել մի հայ-բողոքական ղերձակի մօտ: Մի օր չանկարծ նորա համար լոյս ծագեցաւ: Վանի հայ խանութպաններից մէկին ծեծում էին թուրք ոստիկանները, որովհետեւ փլաճ համարձակւել էր վերցրած ապրանքի գինը խնդրել: Ամբոխը լուռ եւ առանց միջամտութեան հետեւում էր այդ ողբերգական տեսարանին. ոչ ոքի բերանից

մի խօսք չէր ելնում, իսկ խեղճ հայը լալիս էր ու օգնութիւն հայցում. բայց ո՞վ էր լսողը. բոլորն էլ իրենց կաշուից էին վախենում:

Դերձակի խանութի առաջ նստած մի հայ պատանի դիտում էր այդ քաոմնելի տեսարանն ու աչքերը չռած սպասում էր ներքին որոշման: Յանկարծ նա ձեռքի հագուստները վար ձգեց, թռաւ նստած տեղից, վազեց դէպի կուի վայրն ու ուժեղ հարուած ներ տեղած թուրք զինուորների գլխին: Բազմութիւնն ապշահար մնաց: Մեծուղ հայն ազատուեց: Զինուորներն էլ ապուշ էին մնացել. նրանք չէին հաւատում եւ սպասում այսքան յանդգնութիւն մի հայի կողմից: Ժողովուրդը ամէն կողմից խռնուեց եւ հնարաւորութիւն տուեց Տիգրանին ազատուելու անընկատ՝ ու իր հետքը կորոնցնելու: Նա այլևս սովորական մարդկանց չարքին չէր պատկանում, նա վախստական էր եւ իր սիրած ճամբին վրայ:

Երկրորդ դէպքն եկաւ եւ նրան աւելի կտրեց աոօրեայ կեանքից եւ նետեց յեղափոխութեան գիրկը անվերադարձ: Առաջին գործնական հայրենասէրների նահատակութիւնն է՝ Ջուխա-Գեազուվի վրայ՝ Գօլօչեանի եւ Ազրիպասեանի: Այդ երկու գաղափարական մահերը ցնցեցին հայ երիտասարդութեան եւ մանաւանդ նրանց, որոնք աշակերտել էին Ազրիպաս եանին: Սա իր «վերջին դասը» կարդաց իր աշակերտներին, բացատրեց նրանց հայրենիքի եւ հայ ժողովրդի տառապանքները, չեչտեց որ պէտք են զոհեր, որոցմով մեր ազատութիւնը ձեռք պիտի ձգենք, ապա ջերմ գրկախառնութեամբ ու արտասուալից բաժնուեցաւ իր ապագայ գաղափարակիցնե-

*ըից: Հեռացա՛ւ եւ իր ապաբաղդ աշակերտները ա-նոր հերոսական մահը լսեցին, ու երդուեցին նոյն ճամբով ընթանալ ու վրէժխնդիր լինել իրենց պաշտելի ուսուցչի մահուան փոխարէն: Դրանց մէջն էր եւ Տէրօեանը, որ աւելի ղդայուն էր իր ապրեցումների մէջ եւ խոր իր արտայայտութիւններով: Եւ գրեց նա իր առաջին ոտանաւորը ու միշտ երգեց.*

«Դու, ով ցանկալի վաճ, իմ հայրենիք
Սիրոյդ կարօտով մաւում ես հերիք»:

*Հերի՛ք է որքան լռեցինք եւ աղի արցունք թափեցինք, պէտք է գործի ձեռնարկել եւ կուիլ բռնակալութեան դէմ: Եւ նա դերձակի աշակերտութիւնից թռաւ ուսուցչի յեղափոխական պրօպագանդիստի պաշտօնին: Նա անդադար ժողովներ էր գումարում եւ բացատրում հայրենիքի վիճակը, չարքերն աւելացնում եւ կայծերն բորբոքում. նա ամէն տեղ էր, ուր անարդարութիւն կար եւ կարիք գործելու. Նա միշտ թշւառների ու անպաշտպանների հետ էր եւ նա, այդ երիտասարդ յեղափոխականն իր կարճատեւ կեանքով ընկերների համակրութիւնը վայելեց եւ թուրք կառավարութեան սարսափ ազդեց:*

*95 թուից սկսած Վանից դէպի պարսկական սահմանը եղած կուիւների մէջ նա խոշոր եւ գործօն մասնակցութիւն է ունեցել: 95-ի հոկտեմբերին նա Սալմաստումն էր, որտեղ նա միացաւ վաթսուն հոգուց բաղկացած մի խմբի եւ անցաւ Երկիր: Սարայի կռւում նա իր տասնըհինգ հոգով կարողացաւ թագնւած մնալ մարագում և ապա ամենայն հմտու-*

թեամբ իր խումբը հասցնել նպատակակէտին: Վանի առաջին պատմական կուռից յետոյ նա Պետօի հետ քաշուած էր Վարագ, որտեղ նա չի համաձայնուեց դէպի Պարսկաստան գնալու, եւ վերադարձաւ Վան: Ապա մասնակցում է Վարդանի հետ միասին Վանի երկրորդ կուռին եւ չնայելով կառավարութեան ձեռք առած խստութիւններին, մնաց Հայրենի քաղաքում: Պետօի մահուանից յետոյ յեղափոխական գործի ղեկավարութիւնն անցնում է Վազգէնին՝ Վանի շրջանում, ուր ամենայն ճարպիկութեամբ շարունակում է:

Ռանասօրայ արշաւանքից առաջ նա նորից սալմաստն էր, որտեղից նա Միքօի հետ յետ պիտի դառնար Վան, արշաւանքից յետոյ առաջ եկած թրքական խժդժութիւններից պաշտպանելու քաղաքի հայ ազգաբնակութիւնը: Ճանապարհին նա մի հերոսական կռիւ է մղում Սպահան լճի մօտ եւ հալածելով թշնամիներին՝ իր խմբով յաջողութեամբ հասնում է Վան, ուր նա հինգ-վեց ամիս շարունակ մնում է քաղաքում եւ ամէն օր հալածում կառավարական պաշտօնեաներից եւ լրտեսներից:

Հայ մտաւորականներից Ամէնեան Կարապետն (Բաշօ) եւ Հայրապետ Թոնիրշինողեանը, իմանալով Վազգէնի ներկայութիւնը քաղաքում, իմաց են տալիս կառավարութեան այդ մասին. նոյն այդ ժամանակներն էր, որ Ատրպատականի օսմանեան հիւպատոսը հեռագրով հաղորդեց, որ հարիւր հոգուց բաղկացած Դաշնակցական խումբն անցաւ սահմանն ու դէպի Վան է արշաւում: Մոսկուան տիրեց կառավա-

րութեան եւ Թուրք խուժանին: Ցուրտ ձմեռ էր եւ ուրիշ տեղերից անկարող էին զօրք բերել տալ: Մի քանի հազար զօրք կար միայն եւ թնդանօթ էլ չունէին: Այդ ժամանակ վալիի օգնական Օհաննէս Ֆէրիտ կեղտոտ հայը, խորհուրդ է տալիս ձերբակալել Վաղգէնին, որի հրամանով էր խումբն անցել Երկիր: Սկսում են խուզարկութիւնները. Այգեստանը շղթայի մէջ են առնում, բոլոր կասկածելի մարդկանց բանտն են նետում, գաղթական հայերին վռնտում են քաղաքից, սպառնալիքներ են կարդում զանազան թաղերի բնակիչներին, թէ՝ «ո՛ր թաղում գտնուի Տէրօեանը, աւերենք պիտի այն շըրջանը», բայց Վաղգէնը չկար եւ կառավարութիւնն անզօր էր նրան գտնելու: Բոլոր տներից եւ թաղապետներից ստորագրութիւններ՝ առան, որ այդ վըտանգաւոր յեղափոխականին իրենց մօտ չեն պահի: Այդ էլ չօգնեց: Այն ժամանակ միրալայը կանչեց թաղապետներին ու փաղաքշական բառերով բացատրեց առեղծուած վտանգաւոր դրութիւնն ու վերջացրեց. «Մի՞թէ Տիգրանը սուլթանէն աւելի կը սիրէք, որ չէք ուզեր կառավարութեան յանձնել եւ այսչափ խնամով կը պահէք ու ձեր վստահութիւնը կը պակսեցնէք կառավարութեան քով»: Այդ միջոցին էլ չի օգնում եւ կատաղած վալին դիմում է օտար պետութիւններին՝ անգլիական եւ ֆրանսիական հիւպատոսներին, խնդրելով որ միջամտեն, Տէրօեանն յանձնեն, որին յետոյ ազատ կը կացուցանեն ու ո՛չ մի պատիժ չեն տայ: Հիւպատոսները միջամըտում են եւ խոստանում են ապահովել ազատութիւնը տարագիր յեղափոխականի, բայց նա անե-

րեւոյթ էր իր ընկերների հետ:

Այդ բոլորից յետոյ, պաշտօնեաները շրջապատում են հայ տները, խուզարկում, ձերբակալում անմեղներին ու բանտերը լցնում. առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետը բողոքում է այդ բոլորի դէմ. կառավարութիւնը մի առ ժամանակ դադրեցնում է խստութիւնները, բայց քիչ յետոյ վերսկսելու դիտաւորութեամբ: Երբ ժողովրդի տանջանքը ծաւալւեցաւ, երբ Թուրք կառավարութիւնն սկսեց անգթութիւններ եւ երբ եւրոպական հիւպատոսները պահանջեցին անձնատուր լինել, Վազգէնն իր երկու ընկերներով՝ խմբապետ Միքօի եւ վանեցի զինուոր Արշակի հետ դուրս է ելնում քաղաքից ու դէպի գիւղերը գնում: Այդ ժամանակ Թուրք բանակայութիւնն իր հին սովորութեան համաձայն, Կուռուբաշի դաշտում կը շրջապատէ երկու հարիւր կանոնաւոր զինուորներով: Հայդուկները կը կռւին հերոսաբար եւ այդ անհաւասար կռւին մէջ կը նահատակւեն...

Վազգէնն այլեւս չկայ. յեղափոխական սիւներից մէկն էլ ընկաւ անգութ փոթորիկի հարուածներից:



ՄԻՔԱՅԷԼ ԱԶԻԶ-ՄԵԼԻՔԵԱՆ

**ՄԻՔՕ**
**ՄԻՔԱՅԷԼ**
**ԱԶԻԶ — ՄԵԼԻՔԵԱՆ**

Աբհեստով նա հիւան էր եւ ապրում էր իր ընտանեկան յարկի տակ՝ երեխաներով շրջապատուած: Բանուքիւնը տանել չկարողացաւ նաեւ 91 թուին, երբ 35 տարեկան էր, նա ձգեց իր ընտանիքն ու քրդերի յարձակման ժամանակ իր ցոյց տուած հերոսական ընդհարումից յետոյ նա այլեւս իրեն չէր պատկանում, նա տանջուած հայրենիքի սեփականուքիւնն էր և նորա չարչարանքները բուժողներից մէկը:

Ինչ ցեղով նա արդէն յեղափոխական խմբապետ էր եւ անդադար մասնակից բոլոր կռիւներին: Նա պարզ, անպաճոյճ մի տիպ էր եւ նորա համար մի վսեմ նպատակ կար — ամէն միջոց գործադրել հայ ժողովրդին իր անտանելի դրուքիւնից ազատելու համար: Նա այդ բոլորն անում էր զգացմունքով եւ ինքնապաշտպանուքեան բնազդով, նա ապրում էր եւ մարմնացնում հայ ժողովրդի յատկուքիւնները՝ բռնկումների մէջ՝ բուռն, համբերուքեան մէջ՝ անօրինակ եւ վրէժխնդրուքեան ժամանակ՝ ահարկու: 94 թուին նա արդէն զինակիր խմբի մէջ է, տեղափոխուքիւններով է զբաղուած՝ իր նմաններին տակ կանգնեցնելու եւ բռնուքիւնը վերելու: Այդ նա զինուած խմբով շրջում է իր հայրենի գաւառն ու մի քանի հարուածներ տալով զանազան քիւրդ աշիրաթներին, հասկացնում, որ այդ անզէն ժողովուրդն իր պէս պաշտպաններ ունի եւ միաժամանակ կենդանի սրօրապահը լինում բոլոր երիտասարդներին, որոնք իրենց դլուխն էին միայն խոնարհում եւ համբերուքեամբ տանում հալածանքները:

96–ի գարնան Միքօն արխնահեղ ընդհարում–ների մէջ է քրդերի հետ: Նա երեք հոգով է եւ այդ փոքրիկ խումբը անվեհերութեամբ մի քանի ժամ դիմադրում է, երկու ընկերներն նահատակւում են, եւ ինքը միայնակ է շարունակում կռիւը: Յետով ընկերները նրան օգնութեան են հասնում եւ օգտը–ւելով գիշերւայ մութից՝ անյայտանում:

Նոյն թւի աշնանը, նա Վան է 24 հոգով, ուր նա տասը օր պահւում է եւ ապա օրհասական կռիւ մղում նոյնիսկ թնդանօթների դէմ:

97 թւին Միքօն մենք տեսնում ենք Արարայի կռիւներում, ապա նորից Վանի կռիւներում, որից յետոյ դարձեալ նա անցնում է գաւառներն ու անդէն ու աշխատաւոր հայ ժողովրդի պաշտպանութիւնն էստանձնում: Միքօն, այդ կոշտ և կոպիտ գիւղա-կանը, այդ մաքուր եւ զգայուն հոգին, այդ ջինջ եւ յստակ ոխպը չի հեռանում ժողովրդից եւ անդադար ու անվերջ կռիւներ է մղում, նրա իրաւունքները պաշտպանելու համար:

98 թւին նա Վազգէնի հետ պահւած է լինում Վանում եւ կառավարութեան սարսափներն աւելի չտարածելու եւ ժողովուրդն անասելի չարչարանք–ներից ազատելու դիտաւորութեամբ թողում է Վանն ու անցնում դաշտերը, ուր եւ շրջապատւելով բազմաթիւ զինւորներով, հերոսական կռւից յետոյ նահատակւում է՝ իր սիրած հրացանը գրկին:

ՄԻՔՕ ՎԱՋԳԷՆ ԱՐՇԱԿ

## ԱՐՇԱԿ ՉԱԼԿԱՏԱՐԵԱՆ

Հասարակ եւ հաւատարիմ յեղափոխական գինուորներից է, բնիկ վանեցի եւ 93 թուից նուիրուած յեղափոխական աշխատանքներին: Մերթ իբրեւ հասարակ մարտիկ, երբեմն խմբապետի օգնական, իսկ 96 թուից արդէն խմբապետ Միքօի գինակիր խմբի մէջ, նա մնում է անբաժան իր սիրած գործին ու մասնակցելով բազմաթիւ կռիւների, նա իր խմբապետի՝ Միքօի կողքին՝ հերոսաբար ընկնում է:

Երեք անզուգական զոհ: Մէկը գիտակից, ուսումնական, յեղափոխական դժուարութիւնները կշռած եւ գիտակցած՝ վազգէնն է այդ: Միւսը՝ հայ ժողովրդի բողոքի կենդանի ներկայացուցիչը, նորա պահապան հրեշտակը՝ զգացմունքով եւ բնազդով հասկացած յեղափոխութեան վեհ նշանակութիւնը՝ Միքօն է այդ: Իսկ երրորդը՝ ներկայացուցիչն է բոլոր այն հասարակ գինուորների, կըռուղ հերոսների, որոնք ունին իրենց առանձնայատուկ ներքնաշխարհն ու մաքրութիւնը. նա ներկայացուցիչն է բոլոր մեզ անյայտ Արշակների:

Ծնուած է 1875 թ.

ԹՕՓԱԼ ՏԷՐՏԷՐ ՅՈՎՍԷՓ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Տրապիզոնում: Հայ կաթոլիկ լինելով հանդերձ, նա պէն շպրտեց դաւանական տարբերութիւնները. ու անմիջապէս փարեց յեղափոխական ազգային դաշտափարին: Ազատագրական չարժումը շատ է վնասուել կրօնական հաւատածների հակընդդէմ դրութիւնից: Շատեր կարծել են թէ հայ եւ Հայաստան հոմանիշ են հայ լուսաւորչական հասկացողութեան եւ այդ պատճառով էլ հեռու են մնացել աշխատանքից եւ լոկ համակրանքից:

Պէտք էր վարպետը պատռել եւ ցոյց տալ ժողովրդին, որ կրօնը ազգութեան հիմքը չի կազմում, որ մենք մի հայրենիքի զաւակներ ենք, մի պատմութիւն ունենք եւ հոգեբանական մի ուղիով ենք ընթանում: Գործնական դասեր էին պէտք եւ անհատները, որոնց մխւանները հետեւէին: Դրանցից մէկն ու չիշատակելին ընկեր Աստուրեանն է, որ իր չրջապատի դէմ երկար մաքառելուց եւ հրաժարելուց յետոյ, մնում է Թաշնակցութեան դրօշի տակ 1895 թւին:

Մի անգամ նեռւած էր ասպարէզ եւ որոշած չամառութեամբ չարունակել իր գործը: Տրապիզոնի չրջանի գիւղական ասպարէզում իր ցոյց տւած ծառայութիւնները անգնահատելի են: 1896-ի ամառը սիրով առանձնեց մի դժւարին եւ պատասխանատու պաշտօն՝ ճանապարհորդել եւ ուսումնասիրել տեղափոխութեան զանազան գծեր եւ այլ հարցերի ուսումնասիրութիւն: Նա իր վրայ դրւած պար-

ատկանութիւնը ճշդութեամբ կատարեց եւ իր հետ ուսումնասիրական հսկայ նիւթ բերեց պարզաբանելով Կ. Կոմիտէին՝ ժողովրդի վերաբերմունքի փոփոխութիւնը դէպի գէնքը, որ կարճ ժամանակում ֆէդայական չարժումն ունեցել է իր խոշոր նշանակութիւնը եւ որ այժմ նոյնիսկ ծերունիները հաւատում են գէնքի միջոցով ձեռք բերուած ազատութեան: Ինք անձամբ ուսումնասիրած լինելով այդ անհրաժեշտ կարիքն ու նրա փոխադրութեան միջոցը, Ցուվաէվը հաւատաց եւ այնուհետեւ միայն գէնք փոխադրելով զբաղեցաւ մինչեւ իր մահը:

Գէնքի փոխադրութիւն: Երկու բառ է պարունակում իր մէջ, արտաքին կազմածքը բաւական թոյլ, աղղեցութիւն չթողնուր, բայց բաւական է խորը թափանցել, բաւական է զբաղել կամ վառ եւ բեւեռացել, այն ժամանակ միայն այդ դժոխային աշխատանքն իր ամբողջ ծանրութեամբ եւ վեհութեամբ մեր առաջ կը պատկերանայ: Ամէն րոպէ վտանգի մէջ, որ կարող են լրտեսների միջոցաւ ձերբակալել քեզ եւ պահեստը գտնել, իւրաքանչիւր փոխադրութեան առեն բազմաթիւ ընդհարումներ. մեծ զգուշութիւն է պէտք բոլոր աշխատանքների ժամանակ, այլապէս սխալները կարող են անդառնալիօրէն վտանգել թէ յեղափոխական գործին, թէ անհատներին, թէ հայ ժողովրդին եւ այդ բոլորի պատասխանատուութիւնը փոխադրողի վրայ է ընկնում: Ծանր է այդ պատասխանատուութիւնը եւ միա ժամանակ ցաւալի, որ նրանք պատմութեան մէջ անուն չեն թողնում, իրենց գործունէութիւնն անկարելի է լմանալ, որովհետեւ անյայտութեան մէջ

են գործել: Այդ ախպերից էր Թօփալ Տէրտէրը, որ իր կեանքն ու եռանդը նւիրել էր պաշտած գործին: Ահա 1896–ի դեկտեմբերին, նա նաւային ճամբորդութիւն է կատարում, ճանապարհները ուսումնասիրելու եւ դեռ Բիթլա չհասած՝ ձերբակալւում է ոստիկանների կողմից ու յետ վերադարձւում Տրապիզոն: Նրան մատնել են: Հարցաքննում են Ցուվախվին: Տրւում են բազմաթիւ հարցեր, բայց փորձւած յեղափոխականը կարողանում է նեղ րոպէին ազատւելու ելք մտածել: Տւած պատասխանները լինում են անկապ, անիմաստ եւ ծիծաղաշարժ, որ կարծում են թէ կամ դիւժ է եւ կամ շատ «բարձր լեզւով» է խօսում, իրենք չեն հասկանում, որի համար էլ ստիպւած են լինում ուղարկել Պօլիս՝ աւելի բարձր պաշտօնեաների քննութեան:

Այնտեղ էլ երեք ամիս մաշեցաւ. նրանից ոչինչ չկարողացան հասկանալ եւ ստիպւեցան նրան էլ մատնակից անել այն ժամանակւայ քաղաքական բանտարկեալների նեղման: Ցուվախվին ազատ էր եւ կրկին իր հայրենիքում: Բանտային կեանքն ու չարքաշ աշխատանքները նրան ուժասպառ էին արել: Նա թոքախտաւոր էր, ինչպէս շատ յեղափոխականներ. նա «պարտաւոր» էր շուտ գերեզման իջնել քան մինւ հազարաւոր մահկանացուները եւ նա այնքան էլ չէր սոսկում այն խոր վիհից, որ իրեն էր յատկացւած Մայր տիեզերքի կողմից, որքան որ դեռ երիտասարդ, թարմ հասակի մէջ, գործունէութեան ամենալաւ շրջանում, դիտակցութիւն ունի, բայց կորչում է, եռանդ ունի՝ անհետանում է, յոյսեր ունի՝ փշրւում են: Նա զղում էր որ կեանքը հիւծ–

ւում է, մոմի պէս հալւում է եւ ինչպէս բոլոր թոքախտաւորները, նոյնպէս եւ ինքը առանձին քնքշութեամբ գործ էր ուզում իր ընկերներից: Ընկերները ուշադրութիւն չէին դարձնում, այլ ամէն կերպ աշխատում էին նորան առողջացնել, ուժերը վերականգնել եւ ահագին դժւարութեամբ կարողանում են ուղարկել ծնողների մօտ՝ Խ. գիւղը: Ընտանեկան յարկն ու ծնողական գուրգուրանքը, հայրենի դաշտերն ու ձորերը նրան չէին հետաքրքրում եւ նա իր նամակների մէջ միշտ «գործ» էր խնդրում: «Գործ կ'ուզեմ», այսպէս էր սկսում նա իր նամակները եւ վերջացնում էր աւելի խիստ՝ «Գործ կ'ուզեմ, մի՛ թողուք որ շան պէս սատկիմ»: Մարդ ի՞նչ աստիճանի ծարաւ պիտի լինի յեղափոխական աշխատանքի, որ այդ աստիճան ծայրայեղ անձնուրանութեան հասնի: Նա արժանացաւ իր նպատակին, նորա թախանձանքներին զիջեցին ընկերներն ու գործ տւին, որից վերադարձաւ ուժասպառ ու պատրաստեցաւ անխռով ճամբայ ընկնելու դէպի իր պաշտած Եգիպտացու մօտ՝ յաւիտենականութեան գիրկը:



ԲԱՂՏԱՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ

**ԳՈՒՐԳԷՆ**
**ԲԱՂՏԱՍԱՐ ՄԱԼԵԱՆՑ**

*Ծնուել է 1873 թուին Վերին Ագուլիս քաղաքում: Դեռ պատանեկան հասակում վառ և եռանդուն էր. նա իր շրջապատի անիրաւութիւնները տանել չէր կարող եւ միշտ աշխատում էր սեփական ուժերով վերջ տալ նրանց, որքան այդ հնարաւոր էր: Ռուսական բանակի զինուոր էր նա եւ կը գտնուէր Նոր Բայազէտեան գնդի մէջ, ուր եւ նա կարդաց Հ. Յ. Դաշնակցութեան Վրէժ կոմիտէի թռուցիկը. իմացաւ Հայաստանի թշուառ վիճակն ու վճռեց իր ամբողջ ընդունակութիւնը զոհել հայրենիքի ազատութեան համար:*

*«Էլ ո՞ր օրւայ համար պիտի գործի հրացանս, երբ Մեծ Մարդասպանը կրակի ու արեան ծով է դարձրել Մայր Հայաստանը»: Այդ հայկական ընդհանուր կոտորածից յետոյ էր, երբ ամէն հայ երիտասարդ սրբազան պարտք էր համարում հայութեան նահատակների վրէժը լուծել: Եւ երիտասարդ Բաղտասարը իր մի քանի ընկերներով փախաւ ռուսական զինուորական շարքերից ու ներկայացաւ «Վրէժ»-ի կոմիտէին: Նրան սիրով ընդունեցին եւ իր սակաւախօսութեամբ ու վտանգաւոր գործերի ժամանակ ցոյց տուած անվեհերութեամբ շուտով դարձաւ բոլոր ընկերների սիրելին: 1896 թուին Բուլղարացու խմբին հետ մտաւ Վան, որտեղից էլ Հայոց Ձոր, ճանապարհին մի քանի ընդհարումներ ունենալով, որոնց մէջ նշանաւոր է «Կեմա-Մարագի» յայտնի կռիւը: Այդ տարւայ ծրագրուած արշաւանքը չիրագործուեցաւ. յետաձգուեցաւ աւելի յարմար*

պայմանների ներկայանալուն եւ հետեւապէս հայդուկներն ստիպուած էին իրենց իսկական աշխատանքին կառչել: Ամեն մէկը մի կողմ անցած իր արհեստներով կամ ընդունակութիւնների համապատասխան պաշտօն դանելով ապրում էր: Գուրգէնն էլ անդործ չմնալու եւ կազմակերպութեան վրայ աւելորդ բեռ չդառնալու դիտաւորութեամբ իսհարարի պաշտօն է ստանձնում Դաշնակցական գինապործների բնակարանում: Ընկերները չէին ցանկանայ այդ պաշտօնը նրան յանձնել եւ միշտ կրկնում էին. «Գուրգէն, ինչո՞ւ ես միշտ ամաչեցնում մեզ այդ դերովդ»: Բայց մաքուր եւ ազնիւ յեղափոխականը միշտ պատասխանում էր. «Դաշնակցութեան սկզբունքով՝ աշխատանքի հաւասարութիւն պէտք է լինի մեր մէջ. ես առ այժմ կարող եմ օգնել ձեզ իմ այս աշխատանքով՝ իսհարարութեամբ»: Գուրգէն այդ փոքրիկ պաշտօնի մէջ էլ ցոյց էր տալիս իր մաքրութիւնը եւ հաւատը դէպի յեղափոխական գործը, որ սուրբ է եւ վեհ: Մի քանի ամսւայ արած ծախսերը նա պահել էր ամենայն ճանրամասնութեամբ եւ չիշատակած նոյնիսկ կէս եւ մէկ չորրորդ կոպէկները եւ որոնք իրրեւ պատմական տօդումանտներ մնում են եւ պատիւ են բերում հայ հայդուկներին:

1897 թւի յունիսի 25-ին, նա անցաւ Կովկաս, ուր իր տպաւորութիւնները, կռիւների քաղցրութիւնն ու դաղտնարարական, յեղափոխականի կեանքը ներկայացնելով՝ «Թունաւորից» իր շրջապատն ու երբ դաբուռնը բացուեցաւ, նա անմիջապէս ձգեց ամէն ինչ եւ թռաւ «վրէժ» կենտրո-

նական Կոմիտէին, ուր այդ ժամանակ բազմաթիւ
յեղափոխականներ էին հաւաքւում, կենտրոնա–
նում, ուր աշխատանքն այնքան շատ էր եւ ոգեւո–
րութիւնը վառ: Գուրգէն դադար չունէր, նա չի–
տուն հոգու գլուխ անցած առաւօտից մինչեւ երե–
կոյ զինուորական վարժութիւններ էր անում եւ այդ
բոլորը հայկական բարբառով: Միաժամանակ նա
պարտաւոր էր զինուորական հագուստներ գտնել,
կերակրել յիսուն հոգու և զինել: Նա այդ բոլորը
կատարում էր բանաստեղծական դիմացկունու–
թեամբ եւ ուրախութեամբ: Հայրենիքի ազատու–
թեան համար կռուելու տենչն այնքան արտայայտիչ
էր նորա մէջ, որ չէր կարող համբերել մինչեւ աշխա–
տանքի ծանրակշիռ խնդրի լուծումը, նորա իրագոր–
ծումը, այդ պատճառով էլ նա միացաւ Վասպուրա–
կան մեկնող Տէրոեանի երեսուն հոգուց բաղկացած
խմբին: Գնալու ժամանակ նա սրտագին կերպով
բաժանուեց ընկերներից եւ նորա վերջին խօսքերն է–
ին. «Տղերք, ցտեսութիւն եմ ասում միայն, կը գաք
երկիր, եւ մենք այն տեղ, հայրենիքում կը տեսնը–
ւենք»: Այլեւս ընկերները Գողթան գաւառի այդ
համեստ, մաքուր եւ անբիծ Գուրգէնին չտեսան: Նա
գնաց եւ մնաց հայրենիքում:

Վանի լճի արեւելեան մասում Գուրգէնը տասը
ընկերներով բաժանւում է Վազգէնից ու ապահով
անցնելով Բաղէշ, միանում է Սերոբի, Ուրւականի
եւ միւս խմբերի հետ: Նա կռուող լինելուց զատ,
թղթակից էր, որ շատ ժողովրդական ոճով ներ–
կայացնում էր հարազատ ժողովրդի վիճակը: «Հա–
յըն այլեւս չի վախենում մեռնելուց, դանակը ու–

կորին է հասել. եղած–չեղածը պատրաստ է պէնքի տալու, և սակայն այստեղ բանական քանակութեամբ պէնք չի ճարուում: Զէ՛նք, պէ՛նք հասցրէք»: Այդ ուղղութեամբ էլ նա դարձեց Մուշի, Բաղէշի և Սասունի շրջաններում, կազմակերպեց ու պինեց ըստրուկ հային, եւ մի օր էլ, երբ նա այցելութեան էր եկել անձամբ տառապելու, իմանալու բոլորը, նա մատնում է կառավարութեան ձեռքը՝ հայ մտաւորականների կողմից ու քաջարար դիմադրելով թշնամուն՝ Յրօնք դիւղի կռւի մէջ, ընկնում է 26 տարեկան հասակում:*)

Մինչև այսօր էլ Տարօնի ժողովուրդը լալիս է «հեռից եկած» այդ մարդու ժողովրդական հերոսի մահը եւ միշտ էլ ուրախութեամբ կը վերյիշէ այդ անքոյր դերեզմանին մէջ թաղուած նահատակի կեանքն ու գործերը: Աւելի լաւ բնորոշել է հայ Գուսանը իր մի ոտանաւորով՝ նւիրուած՝ «Գուրգէնի անմահ յիշատակին»:

---

*) Նրա մահը առիթ է տւել տարածելու ժողովրդի մէջ, որ երբ Գուրգէնը նւիրւել է յեղափոխութեան, հայրը դիմել է նրան, խնդրել է չմասնակցել այդ չարժումներին, ասելով թէ՝ «քո մի կշռով ոսկի կը տամ յեղափոխութեան՝ մի գնա՛ դուն», որին Գուրգէնը պատասխանել է.— «ես պիտի գնամ իմ ազգի համար զոհւելու: Արիւն է պէտք, արիւն, եւ ո՛չ թէ ոսկի»:

Գլգլալով ջուրն է իջնում
Մշոյ մեռուց սարերէն.
Ծիծեռնները ձի՛ւ–ձի՛ւ եկան
Գարնան գալը երգելէն:

Գարուն չկայ հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն.
Գերեզմանս հողին հաւսար,
Թող փուշ բուսնի իմ վրէն...

Գնա՛, ծիծեռ, թո՛ղ ինձ մենակ՝
Վէրքը սրտիս՝ հողի տակ...

Բայց երբ տեսնես բնութեան դէմ
Հայ ժողովուրդ սարի պէս,
Ձէնքը ձեռին հպարտ կանգնած,
Հայե՛ր, լեռներ իրար պէս,

Ա՛խ, այդ օրը արի՛, ծուա՛,
Գարնան գալը նոր կանչէ:
Հայոց գարնան, որ բիւր բարեւ
Սիրտս խորն ղօղանջէ...



ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

**ԱՇՈՏ—ԹԱԹՈՒԼ**
**ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ**

Ծնուած է 1870 թւին Կարին քաղաքում: Նորա պատանեկան կեանքի մասին շատ քիչ տեղեկութիւններ կան եւ առ հասարակ կենսագրական նօթեր պակասում են: Սովորել է Սանասարեան դպրոցում, եւ աւարտելուց յետոյ Թաղական խորհրդի քարտուղար է եղել: Քաղաքական բռնութիւններն եւ հայ ժողովրդի անվերջ տառապանքները նորան նետեցին յեղափոխութեան գիրկն եւ նա 90-ական թւականներին յարեց Դաշնակցութեան, դեռ քսան տարեկան հասակում: Կարճ ժամանակուայ ընթացքում, նա ոչ միայն հանդիսացաւ շրջանի մտաւորականութեան ղեկավարը, այլ եւ իր գործնական մասնակցութեամբ ահաբեկման մէջ՝ աւելի սիրոյ եւ յարգանքի արժանացաւ: 91-ին նա սպանեց Խաչատուր Կերէկցեանին, որ յեղափոխական շարքերի ծաւալման խոչընդոտ էր հանդիսանում եւ այդ պատճառով էլ ստիպուեցաւ հեռանալ եւ անցնել Կովկաս:

1892 թւին նա նորից գործունէութեան մէջ էր եւ այս անգամ արդէն կուսակցութեան օրէնսդրական մարմնի՝ ընդհանուր ժողովի մէջ՝ իբրեւ ներկայացուցիչ: Այստեղ Արամեանն հանդէս եկաւ իբրեւ ուրոյն մտածող եւ պարզաբանեց իր այնքան պաշտած հաւատամքը՝ անհատական տեռօրի գաղափարը:

Նա դէմ էր ընդհանուր շարժումներին, ապըստամբութեան, որովհետեւ ժողովուրդը դեռ այդ գիտակցութեան չի հասել, ցրւած է եւ միաժամանակ վտանգաւոր, որովհետեւ կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ դորանով ամբողջ հայ

*ժողովրդի վրայ և խստութիւններն աւելի սիստէ-մաթիկ ու մտածուած կը լինեն։*

*— «Այդ բոլորի փոխարէն, պնդում էր նա, պէտք է ընդունիլ գործունէութեան մի այլ սիստէմ, այն է՝* անհատական տեռոր, *ուղղուած կառավարութեան կեղեքիչ պաշտօնեաների ու ամէն մի ճնշողի դէմ։ Թող տեռորիստի պարտքը լինի վերջ դնել բռնաւորի կեանքին եւ սպանութիւնը կատարելուց յետոյ երբէք փախուստ չտայ, այլ կանգնի տեղն ու տեղը և յայտարարէ, որ ինքն է կատարողը, առանց ուրիշների մասնակցութեան եւ դրդման, որպէսզի իր պատճառով չվնասուեն ուրիշներ, շատ անգամ ամբողջ գիւղեր եւ համայնքներ»։*

*Որպիսի գաղափարականութիւն եւ անձնազոհութիւն։ Ցանկանո՞ւմ ես զոհել ազգիդ եւ հայրենիքիդ, ասում է նա, պարտք համարիր ոչնչացնել բոլոր նրանց, որոնք խոչընդոտ են հանդիսանում ու անհատապէս զոհուէ՛, որպէսզի ուրիշներ զոհ չերթան։ Գնահատելի էին նորա այդ թափն ու մտածողութիւնը, բայց ընդունելութիւն չգտան, որովհետեւ եթէ տաճիկ կառավարութիւնը այնքան խելք ունենար, որ իսկական յանցաւորներին պատժէր ամէն մի քայլի մէջ, շատ աւելի տանելի պայմանների մէջ կը գտնուէր հայ ժողովուրդը։ Ընդհակառակը նա առիթներ է փնտռում հայ ցեղի բնաջնջման եւ անհատական տեռորները կարող են միշտ առիթ լինել։ Եւ վերջապէս անհատական բնոյթ ունեցող ձեռնարկները գնահատելի են և գովասանքի արժանի, բայց ան երբ միացած չէ կազմակերպութեան հետ, գործնական հետեւանքներ չի ունենայ։ Նորա այդ առա-*

*ջարկը մերժուում է և Աբամը անխախտ իր մտքին՝ հեռանում է կուսակցութեան գործնականից եւ ըզբաղուում ընդհանուր պրօպագանդայով: 94 թւի աշնան, հետեւելով մինչ այդ կուսակցութեան գործունէութեան, նա վերադառնում է ժողովրդեան մէջ եւ այս անգամ այն խոր հաւատքով, որ անհրաժեշտ է կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանական խմբեր եւ միաժամանակ ֆիդայական գնդեր, որոնք կարողանան մի կողմից դէմ դնել քրտական աւարառու յարձակումներին եւ միւս կողմից՝ ճանապարհը հարթել դէպի մեծ ծրագրի իրագործումը:*

*Եւ իրեն յատուկ եռանդով նա սպասարէգ նետուեցաւ, գործից անքուն գիշերներ, մխիթարեց հայ տառապեալ աշխատաւորին եւ մի կողմ նետելով իր ինտելիգենտութիւնը, նա գիւղացու հագուստների մէջ, տրեխներ հագած՝ իր սրբազան գործն էր տանում: Նորա այդ գիւղական աշխատանքների ժամանակ է լինում, երբ նա, 1896 թւի յուլիսի իններին ձերբակալուում է Քէօփրիւքէօյ գիւղում՝ գիւղական խրճիթի մէջ:*

*Նրա յեղափոխական տոկունութեան ու հաւատքի մասին դադափար կազմելու համար պէտք է որ քաղուածքներ անենք նորա վերջին նամակից, որ գրուած է յունիս 30-ին, սահմանադրի կօմիտէներից մէկին:*

*«Քէօփրիւքէօյում հանգիստ նստած... տանը ձեր հասցէին նամակներ էինք գրում: Յանկարծ լուր սին որ Ալայ-բէկը «ղըրսերտար»-ների խմբով, թուով 40-50 հոգի, եկել է գիւղը: Քիչ յետոյ եկաւ*

գայմագամը 8–10 հոգով: Ես ընդհատեցի գրութիւնս, նամակների ծրարը պահեցի եւ ինքս կամեցայ դուրս գալ փողոց, գոնէ այն տեղ բռնուելու համար»: Արժէ՞ արդեօք բացատրութիւններ տալ, մի՞թէ պէտք է յիշեցնել, որ գլուխ խոնարհենք այդ մեծ գաղափարականի առաջ, որ ցանկանում է փողոցում ձերբակալուել՝ տնեցիներին վնաս չհասցնելու համար: Եւ նորա այդ անսպառ սիրոյ փոխարէն ինքը ժողովուրդը նոյնպիսի դուրգուրանքով է վերաբերւում, որովհետեւ, ինչպէս ինքն է գրում. «տան տէրը եւ կանայք լալով աղաչում էին դուրս չգամ. ասում էին՝ տները չեն խուզարկելու, հանդերը պիտի խուզարկեն»:

Թաթուլը ձերբակալւում է շնորհիւ նամակատար սուրհանդակի անփորձութեան, որ իր բռնուելու ժամանակ նամակներն անմիջապէս յանձնում է կառավարական պաշտօնեաներին ու պարզապէս յայտնում թէ ումի՛ց է և որի՛ն պիտի յանձնի՝ հասցէներով միասին: Այդ այնքան էլ նշանակութիւն չէր ունենայ եւ կամ հնարաւորութիւն կը լինէր բանտից ազատուելու, եթէ հարցաքննութեան ժամանակ նորա դէմ չցցուէր իր երէկուայ ընկերը, խնուսցի դաւաճան Տիգրան Գէորգեանը՝ Աղբայէլ կեղծ անունով:

«Ես միշտ ուրանում էի Արամեան լինելս, բայց մի օր յանկարծ առաջս ցցուեց Աղբայէլը իր հարցումով. «դու Արամը չե՞ս, ինձ չե՞ս ճանաչում», ես խոստովանեցի Արամը լինելս: Ես համարեա ուշաթափ ընկայ մի աթոռի վրայ: Ինձ համար ծանր եւ ճնշող էր այն հանգամանքը, որ ես դաւանում էի իմ

երէկուայ ընկերոջ առաջ․ երէկուայ յեղափոխական Ազրայէլը, ոստիկան քոմիսէրի փայլուն համազգեստի մէջ, դաւաճանելով ամենահասարակ պարտականութիւններին, ամէն միջոց գործ էր դնում բանալու մեր բոլոր գաղտնիքները»:

Էրզրումի բանտում Արամեանը խիստ հսկողութեան տակ է առնւում, նրան շղթայում են եւ մի խուց նետում․ ահա ինչպէս է նկարագրում նա․ «Խցիկը, որի մէջ եմ, ոչ մի տեղից լոյս չի ընդունում, միայն դռան վրայ կայ մի փոքրիկ ծակ, որ բացւած է մի մութ միջանցքի մէջ․ խցի երկարութիւնը մէկ ու կէս մէտր է, լայնութիւնը մէկ, բարձրութիւնը՝ մէկ ու կէս․ խոնաւութիւնից օդը չափազանց ճնշող է․ խոտի մի փոքրիկ կտոր, ջրի մի աման, մի հատ թիթեղէ ճրագաման, ահա այն բոլորը, որոնցից կազմւած է խցիկիս կահ-կարասիքը: Դուռը միշտ փակ է: Բնական կարիքների համար 1–2 րոպէով դուրս են տանում 24 ժամում երկու անգամ, առանց թողնելու մէկի երեսը տեսնեմ»:

Երեք երկար ու ձիգ տարիներ այդ հերոս Նահատակը, այդպիսի դժոխային պայմանների մէջ է քարշ տալիս իր կեանքը եւ նոյնիսկ որոշ հրահանգներ ուղարկում դրսի ընկերներին: Բանտի կապանքները նրան չեն ընկճում, նա շատ անտարբեր է դէպի այդ բոլորն և աւելի ոգեւորուած է դրսի յեղափոխական աշխատանքներով: «Ի սէր Աստուծոյ, ըշտապեցէք Հանտակերտի եւ Խան-Արաղի համար մարդիկ ուղարկել, գործեր շատ կան անելիք: Մեր վիշտը, տառապանքը կը կրկնապատկւին, եթէ մեզնից յետոյ ոչ ոք լինի մեր տեղը բռնող: Ա՜խ,

որքան անբաղդ ենք. մի՞թէ անդութ երկինքը այսպիսի կրիտիկական, այսպիսի ծանր րոպէում մեզ պիտի պցէր թշնամու ճանկը»:

Աւելի յեղափոխական եւ աւելի համարձակ են լինում նորա պատասխանները հարցաքննութեան ժամանակ: Նա իր ով լինելը չի ուրանում, քննադատում է թուրք կառավարութեան վայրագութիւնները, խարազանում է պաշտօնեաներին, որոնք մի քանի ոսկու եաեւից ընկած՝ արդարութիւնն են ոտքի տակ տալիս. չի ուրանում որ ինքն Արամն է, կերեկեանի սպանողը, որ ինք անգամ է Հ. Ց. Դաշնակցութեան, որի կենտրոնը արտասահման է, հրատարակում է «Դրօշակ»թերթը, որ նրա ծրագրի հիմնական կէտերն են՝ տաճկական բռնակալութեան վերացում եւ հայ եւ այլ աշխատաւոր ժողովուրդների ազատագրում, որ կուսակցութիւնն իր բազմաթիւ հետեւորդներով կանգ չի առնելու եւ ոչ մի յեղափոխական միջոցի առաջ եւ որ ինքն էլ այդ կազմակերպութեան անունից գալիս է յեղափոխական գործերի համար:

Ոստիկանութիւնից նրան փոխադրում են նախնական դատարանը, ուր երկու անգամ հարցաքննում են, երբ եւ նա աւելի «համարձակ եւ կանոնաւոր դրեց յեղափոխական նպատակի, միջոցների եւ պատճառների վերաբերեալ խնդիրները»: Աշոտ-Թաթուլը դիտակցարար յեղափոխական էր եւ այդ պատճառով նա չի ժխտում իր անդամակցութիւնը Հ. Ց. Դաշնակցութեան եւ չի յուսահատւում ու վախենում մահից՝ չնայած հաւատացած էր որ իրեն «մահ կամ 101 տարուայ բանտարկութիւն» սպասում

էր: Այդ հաւատը նրան անմահացրեց եւ արժէր որ իր իսկ խօսքերով երեւան հանէր այն մեծ ու տոկուն հոգին, որ քիչ թէ շատ չափով, երկար կամ կարճ ժամանակով բնակւում է իւրաքանչիւր մի հայի մէջ:

«Իմ վիճակի ծանրութիւնը ինձ չի ընկճում միայն նրա համար, որ ես գիտակցաբար ընտրել էի հասարակական գործունէութեան այնպիսի ասպարէզ, որտեղ իւրաքանչիւր րոպէն սպասում էր ինձ բանտ կամ կախաղան և կամ մահաբեր սպանիչ գնդակը: Ես ցաւում եմ, սրտանց ցաւում, որ բաղդը շուտ զրկեց ինձ փշոտ ճանապարհներից, որոնց մէջ բոբիկ ոտներով ման գալ սիրելի էր ինձ, որի մէջ դեռ երկար, մինչեւ վերջին շունչս կամենում էի տանջւել քանի չարչարւող հայ ժողովրդի համար չի ծագել նոր կեանքի նոր առաւօտ: Մուրազս մնաց անկատար: Երկինքը զրկեց ինձ հրացանը ձեռքս կռւի դաշտում ընկնելու բաղդաւորութիւնից... Հաւանաբար երկու-երեք ամսից կուտան մեր վճիռը: Ենթադրում եմ որ ես կախաղանի կամ հարիւր մէկ տարւայ բանտարգելութեան կ'ենթարկւեմ: Ոչինչ: Կամք յեղափոխութեան օրհնեալ լինի»:

Եւ կատարւեց այն, ինչ որ գուշակեց ինքը: Օգոստոս 9-ին, 1899 թւի, երկուշաբթի առաւօտ արշալոյսին, մի վաշտ զօրքի հսկողութեան տակ, Արամ Արամեանը 29 տարեկան հասակում, դուրս հանւեցաւ բանտից եւ դէպի Կարնոյ հրապարակներից մէկը առաջնորդւեցաւ: Արամը առանց մէկի օգնութեան, հաստատ քայլերով պատւանդանի վըրայ բարձրացաւ եւ կարճ ու շանթահարող խօսքերով

դիմեց դէպի ժողովուրդը: Նա սուր քննադատութեան ենթարկեց կառավարութեան, դավաբանեց ազատագրական շարժումը, կոչ ըրաւ ժողովրդին՝ համախմբուել եւ դրոհ տալ՝ խորտակելու Թշնամու դահը. յայտնեց որ ինքը դահունակութեամբ է ընդառաջ գնում մահուան, որովհետեւ իր սիրելի ազգը պիտի փրկւի եւ իր ճառը վերջացրեց «կեցցէ Ցեղափոխութիւնը» բառերով, ապա ինքն իր ձեռքով չքաւոն անցկացրեց իր վիզը, ոտի մի հարուածով դէն շպրտեց սեղանն ու օդի մէջ մի քանի գերմարդկային պտոյտներ գործելուց յետոյ՝ հոգին աւանդեց...

Ձկայ նա, որ երկար տանջւեց եւ աշխատեց, չկայ նա, Հայ ժողովրդի պահապան հրեշտակներից ամենաարթունը, յեղափոխական գաղափարի կենդանի մարմնացումը, չկայ նա, որովհետեւ գիտակցաբար մահն է ընտրել, չկայ նորա դիակը, որ երեք օր չարունակ կախաղանի վրայ կախւած մնաց եւ թուրքերը մինչ թամաշա էին անում, իսկ հայ ժողովուրդը մինչ լացով եւ արցունքով էր ցնծում նորա մահը, իսկ անունը՝ հպարտութեամբ:

Նորա հոգին սակայն, կենդանի է եւ սաւառնում է այսօր հայրենի արիւնաներկ դաշտերում եւ նորա ցանած սերմերը այսօր առատ հունձք են տալու, որովհետեւ անհատների փոխարէն՝ հազարաւորներ են այժմ նոյն ճանապարհով գնում:

Վերջացնենք այս փառաւոր դրւագը իր իսկ վերջին բառերով — «Թանկագին ընկերներ եւ ընկերուհիներ, երեւի մեզ վիճակւած կը լինի չոփտով մեր գաղափարների համար կախաղանի վրայ տալ մեր

վերջին ունեցածը: Կը լինի՞ աւելի նորից դրելու— այդ չգիտեմ: Մնա՛ք բարով, աւել պակաս հալալ արէք: Կատակում ենք ձեզ մեր վրէժը եւ այն գործը, որի համար մենք պատրաստ ենք կուտել մինչեւ վերջը: Վատահ եղէք, ձեր ընկերները ունին բարոյական արիւթիւն համարձակ քայլերով դիմելու դէպի կախաղան, որը անկասկած վաղ թէ ուշ մեր հետեւորդներին կը բարձրացնի դէպի ցանկալի վերածընուէթիւն... Անցագ կարօտով համբուրում եմ բոլորիդ եւ ցանկանում յաջողութիւն ձեր գործին, ուժ ձեր բազուկներին: Եթէ մի օր երկինք բաց աչքերով նայիր ձեզ բաղդատութիւն՝ տեսնելու մեր գաղափարների յաղթանակը, կարմիր օրերում, դրատրթ արշալոյսին՝ մեզ էլ յիշեցէք... Մահկանացուների մէջ մեզ կը համարենք ամենաերջանիկը:

ԹԱԹՈՒԼ»

HAGOPIAN J.
7 Bd GUIZEL - LA VISTE
13015 MARSEILLE
Tél. 60.07.91



ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆԵԱՆ

## ԱՂԲԻՒՐ ՍԵՐՈԲ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Սերոբ Վարդանեան ծնուած է 1864 թւին, Ախլաթ գաւառի Սողորդ գիւղի մէջ: Նա Խչչէի տան զաւակներից էր, հարուստ եւ պատուաւոր ընտանիքի անդամ, որ իր կեանքի մէջ կարիք չի տեսել եւ միշտ էլ առատութեան մէջ է եղել:*

*Սերոբ, իր չորս եղբայրների մէջ ամենից պըզտիկն էր, որի համար էլ ապրում էր որոշ ազատութեան մէջ: Դեռ փոքր հասակից նա անհանգիստ տարր էր նկատւում գիւղում: Շատ էր սիրում ձի նստելը, սար ու ձոր պտտելը եւ որսորդութիւն անելը: Իր որսորդական փորձերը նա կատարում էր ծառերի, հաւերի վրայ՝ իր պարսատիկով եւ աղեղներով: Քիչ անգամ չէր պատահում, որ գիւղի հարսներն ու աղջիկները գանգատի էին գնում Սերոբի մօր՝ Բայազի մօտ:*

*Երբ մի քիչ չափահաս եղաւ, մեծ եղբայրը՝ գիւղի տանուտէր Միխէն, մի դաշոյն եւ հրացան նըւիրեց: Այդ օրը Սերոբի ուրախութեան օրն էր: Նա անմիջապէս վազեց անտառները՝ կենդանիներ որսալու և դրանից յետոյ ամէն օր: Նա շատ անգամ տուն էր վերադառնում՝ թռչուն, նապաստակ եւ կամ եղնիկ բերելով:*

*Իր այդ կեանքը շարունակւում է մինչեւ 21 տ. հասակը, երբ և նա հանդիպում է իր հօրեղբօր՝ Առաքելին, որ նոր էր վերադարձել Պոլսից՝ իր հետ ազգային-յեղափոխական գաղափարներ բերելով: Առաքելը մասնակցել էր Ներսէս պատրիարքի ժամանակ տեղի ունեցած ազգային եռ ու զեռին: Մի օր*

*համանալով իրենց Սերոբի քաջագործութիւնները, իր մօտ է կանչում նրան եւ ասում— «Սերոբ, իրաւ է, դուն լաւ, կորիճ որսորդ ես, նշան առած տեղդ կը դամես, բայց բաւական չէ վայրի գազաններ որսալ, չատ հեշտ է ատ. երբեմն էլ մարդ–գազաններ որսալու է»... Այս եւ նման քարոզները Սերոբի վրայ իսր տպաւորութիւն են թողել: Նա արդէն վարակուել էր ազգային–յեղափոխական գաղափարներով:*

*Սերոբը չատ անսանձ և յանդուգն քայլերի կը դիմէր չատ անգամ, որի համար էլ հօրեղբայրը վճռում է ամուսնացնել, որը, սակայն, չկարողացաւ արդելք հանդիսանալ նրա որսորդութեան: Մի օր էլ, երբ նա լեռն էր բարձացել, հանդիպում է երկու քիւրդի, որոնց հետ կռւի բռնւելով՝ ձեկին ըսպանում է, իսկ միւսը կարողանում է փախչել:*

*Այդ դէպքը Սերոբի կեանքի մէջ փոխանցման կէտ է հանդիսանում, որովհետեւ հօրեղբայրը՝ քիւրդերի վրէժխնդրութիւնից եւ կառավարութեան հետապնդումներից ազատելու համար, նրան ուղարկում է Պօլիս:*

*91 թուականն էր: Մի օր Ապրիլի մօտ են գալիս երկու ոստիկանները, աշխատելով որոշ գաղտնիքներ դուրս կորզել, որը կուահելով Սերոբը՝ խուսափողական պատասխան է տալիս:*

*— Սերոբ վարդանեանը դուք չէ՞ք, հարցնում են նրան:*

*— Չէ՛:*

*— Մի՛ վախեցաք, վատնգաւոր բան չկայ. եթէ դուք չէք, չնորհք ըրէք մեզի ցցնելու. կարելի է դուք ճանչցար էք անոր հետ: Ապահով եղէք, վնա–*

սակար բանի համար չէ վնտռելնիս, այլ մարդուն օգտակար բան մը ունինք ըսելիք:

Առաջին վտանգն է, որի մէջ Սերոբն է ընկնում եւ երբ կարողանում է ազատուել, վճռում է թողնել Պօլիսը: 92-ին նա մարդէն կարողացել էր անցնել Ռումանիոյ Սուլինա քաղաքը, ուր բաւական թուով հայ պանդուխտներ կային:

Նա շուտով իրեն աշխատանք է գտնում, որ շաբունակում է միայն մի քանի ամիս, որից յետոյ որոշում է սրճարան բաց անել՝ աւելի ազատ գործելու համար: Ինչ յետոյ այդ գործն էլ ձգեց եւ խոհարարութեամբ զբաղուեց, մինչեւ որ 1893-ի քօլերան եկաւ եւ նրան Կովկաս նետեց:

Քօլերայից վախչում էին բոլորը: Քաղաքի մէջ տխրում էր անասելի մի խուճապ: Հայերն էլ, դրլուխները կորցրած, հիւպատոսից անցագիր էին խնդրում՝ Պօլիս վերադառնալու համար: Սուլինայի հիւպատոսը, մի քանի անցագիրներ տալուց յետոյ, վճռում է դադրեցնել: Հայերն յուսահատ դրութեան մէջ էին, երբ Սերոբը վրայ է հասնում՝ գնում է հիւպատոսի մօտ, պահանջում է Երկիր անցնելու թոյլտուութիւն տալ, սպառնալով հակառակ դէպքում՝ հիւպատոսարանի դռները, պատուհանները կոտրատել: Այդ միջոցն իր նշանակութիւնն է ունենում եւ բոլոր հայերը կարողանում են ազատուել:

Ինքը, Սերոբը քաղաքը ձգում է 93-ի աշնան եւ անցնում է Պաթում՝ Տաճկահայաստան անցնելու համար:

Ինչ յետոյ նա անցնում է Կարին՝ Դաշնակցականների հրահանգի համաձայն գործերու հա-

մար։

Կարնոյ ընկերներն սկզբնական շրջանում այնքան էլ վստահաբար չեն վերաբերւում, չեշտելով թէ անկարող է այդ երիտասարդը Երկրի մէջ որեւէ գործ կատարել։ Այդ պատճառով նա վերադառնում է նորից Կովկաս, ուր եւ տեսակցելով նշանաւոր Դաշնակցականների հետ, կարողանում է համոզել եւ ցոյց տալ իր ընդունակութիւնները։ Նա ընդունւում է հայդուկային խմբերի մէջ՝ գլխաւորապէս զէնքեր տարածելու, փոխադրելու գործին նպաստելով։ Նա զէնքի անբաժան ընկերն էր եւ հաստատ հաւատացող։

— Տղա՛ք, կ՚ըսէր բոլորին, առանց հացի մնացէք, առանց զէնքի մի՛ մնաք։ «Զէնք եւ միութիւն»։

1893–94-ի ընթացքում նա կարողանում է մի քանի անգամ անցնել Երկիր, մտնել իր հայրենի գաւառը՝ առանց ճանաչւելու։

95-ին նա թողեց օտար հորիզոնները եւ անդադար թափառումները՝ վճռելով մնալ Ալաշկերտի, Բաղէշի շրջաններում, կազմակերպելու համար հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը։

Նա անմիջապէս ձեռնարկեց կազմակերպութեան։ Նորանոր խմբեր երեւան եկան շատ հայաբնակ գիւղերում։ Մուշը, Սասունը, Պուլանըխը եւ Բաղէշը նրա գործունէութեան կենտրոնավայրերն էին, ուր նա ոտով պտտում էր եւ յեղափոխական գաղափարները տարածում, ժողովրդական լեզւով հասկացնում թիւրք կառավարութեան հասցրած հարւածներն ու կուլի, ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը։ Եւ գիւղացիները նրան լսում է-

ին, որովհետեւ խօսքից գործի անցնելը անմիջապէս էր կատարւում:

Սերոբի անունը տարածւում էր շրջականները եւ քիւրդ ու թիւրք ահ ու սարսափի մէջ էին: Կառավարութիւնն յատուկ լրտեսներ էր նշանակել, որոնց պարտաւորութիւնն էր այդ վտանգաւոր ջեղափոխականի տեղը ճշդել, բայց անօգուտ:

Քիւրդերն արդէն լուրջ սարսափի մէջ էին, նրանք ամէն օր դիմում էին կառավարութեան կրկնելով թէ՝ «Սասուն կոտորող իրենց եղբայրներուն վրէժը լուծելու համար, Ռուսիայէն եկած Ջան-ֆիդայիները կը վխտան այս կողմերը, որոնց մէջ է այն քաջ մարդը, որ ժամանակ մը յայտնի էր ամենքին Սողոմոյ Սերոբ անունով»:

95-ի կոտորածների ժամանակ, երբ սուլթանական անարդ կառավարութիւնը իր արիւնալից թաթն էր տարածում ամէն կողմ, Սերոբն իր 27 ընկերներով պաշտպան հանդիսացաւ իր շրջանի հայութեան: Ախլաթի այն գիւղերը, որոնց մէջ մի քանի պինուած հայդուկներ էին պահւած, ազատւել են կոտորածներից եւ այդ է պատճառը, որ ժողովուրդը օրհնում է Սերոբին եւ նրա պինակից ընկերներին: Ամէն կողմ ուր մի վտանգ էր պատահում, որ գիւղի վրայ յարձակում էր լինում, միշտ դիմում էին ազատութեան եւ օգնութեան աղբիւրին, որի համար էլ անւանում էին Աղբիւր-Սերոբ:

Նրա մասին շրջակայքի հարսներն ու աղջիկները առասպելներ էին յօրինել, որ «Աղբիւր մէկ ձեռքով մէկ անգամէն եօթ քիւրդի գլուխ կտրեր է», որ «ուրիշ անգամ բօմինեբու (թիւրք զօրք) ձեռքէն ա-

պատւելու համար ծովը կը նետւի եւ երեք օր լողալէն ետքը Առտէր ու Լիմ անապատներ (կղզիներ) ցամաք կ՚ելլէ»։

Սերոբը բազմաթիւ կռիւներ, ընդհարումներ է ունեցել քիւրդերի, կանոնաւոր զօրքի հետ՝ Սողորդի, Թեղուտի, Բարչէնի շրջաններում։ Բարչէնի նըշանաւոր կռւից յետոյ, Թիւրքերը նրա փաշա տիտղոսը տւին։

Աղբիւրը ո՛չ միայն զինւորական մարդ էր, այլ եւ կազմակերպական։ Նա իր ազատ ժամանակները նւիրում էր պրօպագանդայի, բացատրութիւններ էր տալիս գիւղացիներին, խմբեր էր առաջ բերում, զինում էր աւելի յանդուգն եւ ճարպիկ երիտասարդներին եւ միաժամանակ քննում էր նրանց բոլոր վէճերի հարցերն ու հանդիսանում իբր բարձրագոյն դատարանի նախագահ։ Ախլաթի բոլոր գիւղերի մէջ, նա խելօք, անաչառ մարդկանցից յատուկ մարմիններ էր ընտրել տալիս, որոնք իրաւունք ունէին վըճիռներ տալու՝ յարաբերական եւ կամ քաղաքային գործերի վերաբերեալ։ Դրանց վճիռները պարտադիր էին գիւղացիների համար։ Շատ երկար ժամանակ գիւղացիները կառավարական դատարանի չէին դիմում։ Ծանր եւ կնճռոտ խնդիրների համար բողոքներն ուղղւում էին Թ... Բիւրօին կամ կենտրոնական Ժողովին, որի նախագահն էր ինքը, Սերոբը, եւ որի վճիռը անդառնալի, պարտադիր էր։ Սէր եւ միութիւն էր տիրում շրջակայքում եւ ժողովուրդն էլ աստիճանաբար վարժւում էր տեղական ինքնավարութեան։

Սերոբ իր յարաբերութիւնները գիւղացիների